Ս. ՄԵԼԻՔ-
ԲԱԽՇՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆ

## VII-IX ԴԱՐԵՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

9(47.925)
Մ — 48

Մ. Տ. ՄԵԼԻՔ-ԲԱԽՇՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԸ VII—IX ԴԱՐԵՐՈՒՄ

345

«ՄԻՏՔ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1968

Նվիրում եմ 1914—1918 թվականներին տեղաշարժության ու գործի ժամանակ զոհված նախիջևանցի հայրենակիցներիս հիշատակին:

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

*VII—IX դարերի արաբական տիրապետության ժամանակաշրջանի Հայաստանի պատմության հիմնական սկզբնաղբյուրները հայ և օտար հեղինակների պատմագիտական, աշխարհագրական, իրավագիտական ու դավանաբանական բնույթի աշխատություններն են։*

*Ժամանակագրական առումով ուսումնասիրվող շրջանի հայ պատմիչներից առաջինը VII դարի հեղինակ Սեբեոսն է, որից մեզ հասել է Պատմութիւն[1] կամ, ինչպես երբեմն կոչում են, «Պատմութիւն ի Հերակլն» աշխատությունը։ Սեբեոսն իր գրքի համար օգտագործել է ինչպես ժամանակակից, այնպես էլ անցյալի հայ և օտար հեղինակների գործերը, դուսանական երգերն ու այլ նյութեր։ Սեբեոսը թեև քաղկեդոնականության ամենահետևողական հակառակորդն էր, սակայն քաղաքական կոմնորոշումով ավելի հակված էր դեպի Բյուզանդիան և առում էր Պարսկաստանն ու Արաբական խալիֆայությունը։*

*Սեբեոսի գիրքն սկսվում է վաղ ժամանակներից և ավարտվում 661 թվականի դեպքերի շարադրանքով։ Դրա համար էլ նրա աշխատության տարբեր մասերն ունեն գիտական տարբեր արժեք։ Պարզ է, որ հեղինակի տեղեկությունները Հայկի և Բելի առասպելի, պարթևների և Սելևկյանների, Հայաստանի առաջին Արշակունի թագավորների, Պերոզի ժամանակաշրջանի և այլնի մասին չունեն այն արժեքը, ինչպիսին ունեն գրքի վերջին մասերը, որոնք ընդգրկում*

---

[1] *Տե՛ս «Սեբեոսի եպիսկոպոսի պատմութիւն, բաղդատութեամբ ձեռագրաց, հանգերձ առաջաբանիւ և ծանօթութեամբք ի ձեռն Մա. Մալխասեանց», Երևան, 1939։*

ԳՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

են VI դարի կեսերից սկսած մինչև 660-ական թվականների պատմությունը։ Եթե դրքի սկզբի բաժիններում պատմիչը լավագույն դեպքում կրկնում է իր նախորդներին, ապա վերջին մասերը նա շարադրում է որպես դեպքերին ականատես, ինքնուրույն, շատ բան անձամբ ստուգած ու ճշտած հեղինակ։ Սեբեոսի «Պատմության» վերջին մասը VI դարի 80—90-ական թվականներից մինչև VII դարի կեսերի Հայաստանի պատմության դրեթե միակ և վստահելի սկզբնաղբյուրն է։ Սեբեոսի գիրքը հայկական մատենագրության առաջին ժամանակակից աղբյուրն է, ուր խոսվում է արաբների հրդոռնալու, նրանց Հայաստան թափանցելու և Մերձավոր Արևելքում քաղաքական գերիշխանության հասնելու մասին։ Որպես հոգևորական, նա իր գրքում խոշոր տեղ է հատկացնում նաև եկեղեցական հարցերին, կրոնական աչքի ընկնող կենարոններին ու նրանց շինարարությանը։

Սեբեոսը բարեխիղճ է հատկապես իր ժամանակների թվականների ու դեպքերի հիշատակման նկատմամբ։ Նա երբեմն հաղորդում է նույնիսկ կարևոր իրադարձությունների ամսաթվերն ու օրերը։ Սեբեոսի «Պատմության» վերջին մասերի ժամանակագրության ուվյալները երբեմն հաստատվում են օտար աղբյուրների հիշատակություններով։ Հեղինակի ոճը թեթև ու աշխույժ է, բայց պատմելու եղանակով դիջում է իր նախորդներին։ Սեբեոսի աշխարհայացքը սահմանափակ է և կաշկանդված կրոնական մտածողության շրջանակներով։ Սեբեոսի աշխատությունը նախկինում թարգմանվել և հրատարակվել է ռուսերեն, գերմաներեն և ֆրանսերեն լեզուներով։

Գ. Վ. Աբգարյանը իր «Սեբեոսի պատմությունը» և Անանունի առեղծվածը» աշխատության մեջ առաջ է քաշում այն միտքը, որ Սեբեոսի դրքի իսկական հեղինակը VII դարից մի անձնավորություն է՝ Խոսրով անունով[1]։

Արաբական տիրապետության ժամանակաշրջանի հայկական սկզբնաղբյուրներից լավագույնը համարվում է Ղևոնդ վարդապետի «Պատմություն»-ը[2], որի մեջ ընդգրկված են համեմատաբար փոքր ժամանակաշրջանի դեպքերը՝ 620-ականից մինչև 780-ական թվականները։ Ղևոնդի մոտ բնորոշն այն է, որ նա, քաղաքական դեպքերին զուգընթաց, որոշ չափով ուշադրություն է դարձրել նաև Հայաստանի ներքին կյանքին։ Ղևոնդի աշխատության մեջ առանձնապես պատմական մեծ արժեք են ներկայացնում Արաբական խալիֆայության առաջացման ու հզորացման, դեպի Հայաստան կատարած արաբների արշավանքների և հայ ժողովրդի ցույց տված հերոսական դիմադրության, արաբների հարկային դաժան քաղաքականության, հայ ազնվականության ոչնչացման, Հայաստանում բռնվող ցեղերի բնակեցման և այլ հարցերին նվիրված հատվածները։

Ղևոնդի գիրքը շարադրված է պարզ ու անպաճուճ ոճով, իսկ նկարագրությունների մեջ հեղինակը երբեմն հասնում է դեղարվեստական խոսքի վարպետության։ Այդ նկատվում է հատկապես գրքի այն մասերում, որտեղ խոսվում է արաբների հարկային քաղաքականության և սիրողների դեմ բռնկված ժողովրդական-ազատագրական ապստամբությունների մասին։ Ղևոնդը, որպես հայրենասեր պատմիչ, զգայուն ու կարեկից է իր ժողովրդի ու հայրենիքի տառապանքների նկատմամբ։ Ու թեև այդ հողի վրա արաբների հանդեպ նրա մեջ կուտակված է անհուն ատելություն և ֆշնամանք, սակայն բռնակալական լծի դեմ պայքարի խնդրում նա ընդհանուր առմամբ ավելի զգուշավոր ու անհամարձակ է։ Սեբեոսի նման Ղևոնդը նույնպես որոշ երևույթներ բացատրում է մարդկանց մեղքերով կամ նախախնամության ուժով։ Ղևոնդի աշխատության հայերեն լավագույն հրատարակությունը կատարվել է Պետերբուրգում 1887 թվականին։ Կան նաև նրա ռուսերեն ու ֆրանսերեն թարգմանությունները։

Եթե Սեբեոսի ու Ղևոնդի գրքերը հիմնականում արտացոլում են Հայաստանի VI—VII դարերի քաղաքական պատմությունը, ապա իր բնույթով ու նպատակներով նրանցից միանգամայն տարբերվում է Հովհան Օձնեցու «Ընդդէմ պաւղիկեանց» աշխատությունը[1]։

Կաթողիկոս Հովհան Օձնեցին (717—728) և՛ իբրև պաշտոնեա, և՛ որպես հոգևորական իր ժամանակներում կարևոր դեր է կատարել պավլիկյանների դեմ պայքարի գործում։ Որպես պավլիկյանների դասակարգային հակառակորդ, Օձնեցին իր աշխատությամբ փաստորեն նրանց դեմ մղել է նաև գաղափարական անհաշտ պայքար։ Սակայն պետք է նշել, որ Հովհան Օձնեցին իր հակառակորդների

[1] Տե՛ս Գ. Վ. Աբգարյան, ««Սեբեոսի պատմությունը» և Անանունի առեղծվածը», Երևան, 1965։

[2] Տե՛ս «Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի վարդապետի Հայոց», Պետերբուրգ, 1887։

[1] Տե՛ս «Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ Մատենագրութիւնք», Վենետիկ, 1833։

յաղափարախոսության մասին կամ դիտավորյալ կերպով լռում է և կամ այնքան էլ հստակ ու ճիշտ պատկերացում չունի։ Դրա համար էլ միայն նրա աշխատության միջոցով հնարավոր չէ պավլիկյան շարժման մասին որոշակի դաղափար կազմել։ Օձնեցու աշխատությունը պավլիկյան շարժման պատմության ուսումնասիրության համար հետաքրքրություն է ներկայացնում միայն այնքանով, որ նրա խիստ թունոտ ու ծայրահեղ թշնամական բովանդակությունից կարելի է եզրակացնել, թե ինչպիսի շոշափելի վտանգ էր ներկայացնում պավլիկյանությունը ֆեոդալական հասարակարգի ու նրա գաղափարական հիմքը հանդիսացող հայկական եկեղեցու համար։ Քրիստոնեական եկեղեցու պատմությունն ուսումնասիրողների հետաքրքրության արդյունքը պետք է համարել Հովհան Օձնեցու հիշյալ աշխատության թարգմանությունն ու հրատարակությունը մի քանի օտար լեզուներով։

Ուսումնասիրվող թեմայի համար կարևոր նշանակություն ունի IX—X դարերի հեղինակ Թովմա Արծրունու «Պատմութիւն տանն Արծրունեաց» աշխատությունը[1]։

Միջնադարյան Հայաստանի քաղաքական ու տնտեսական ցրվածության պայմաններում առանձնահատուկ կարևոր խնդիր էր դառնում հայկական նախարարությունների և իշխանությունների պատմության ուսումնասիրությունը։ Նման մի աշխատանքի առաջին ձեռնարկողը, հայկական մատենագրության մեջ, հանդիսացել է Թովմա Արծրունին, որի պապերից են եղել Գրիգոր Արծրունին և նրա որդի Գագիկը՝ Վասպուրականի հայկական ֆեոդալական թագավորության հիմնադիրը։

Թովմայի աշխատության առաջին մասերը, որոնք ընդգրկում են Հայաստանի պատմությունն ամենահնագույն ժամանակներից մինչև IX դարի կեսերը, հիմնականում կրելով ոչ ինքնուրույն բնույթ, որպես պատմական աղբյուր ունեն երկրորդական նշանակություն։ Աշխատության 2-րդ դպրության 5-րդ գլխից սկսվում են Թովմայի Պատմության այն մասերը, որոնց նյութերը մոտ են հեղինակին և անմիջապես վերաբերում են նրա ժամանակներին։ Այս տեսակետից Թովմա Արծրունու Պատմության հիշյալ հատվածներն անհամեմատ հավաստի են ու վստահելի, մանավանդ որ այստեղ նրա կողմից շոշափված շատ հարցեր հաստատվում են նաև օտար սկզբնաղբյուրների տվյալներով։ Երկրորդ դպրության 5-րդ գլխից

[1] Տե՛ս «Պատմութիւն տանն Արծրունեաց ի Թովմայ վարդապետէ Արծրունւոյ», Կոստանդնուպոլիս, 1852։



ակսած, շարադրանքի մեջ մեզ համար առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում 840-ական թվականներից մինչև 860-ական թվականների դեպքերի՝ Աբուսաթի, Յուսուֆի և Բուղայի արշավանքների, արաբների վարած քաղաքականության, օտար պավլիչների դեմ հայ ժողովրդի մղած անհավասար ու հերոսական պայքարի, արաբական իշխանությունների թուլացման և հայկական ֆեոդալական մի քանի նախարարությունների հզորացման և այլ ու այլ հարցերի մանրամասն նկարագրությունները։

Թովմա Արծրունին, իբրև Արծրունյաց տոհմի ներկայացուցիչ, թեև ունի տոհմական որոշ անպարծություն, սակայն Արծրունիների հայրենասիրությունն ու քաջագործությունները դրվատելու հետ մեկտեղ նա երբեմն քննադատում և պախարակում է վախկոտներին, անհետամտներին ու դավաճաններին։ Թովմա Արծրունին եղել է հոգևորական, կրթված ու հայրենասեր պատմիչ։ Իր աշխատության համար նա օգտագործել է նախորդ հեղինակների գործերն ու պատմական դեպքերին անմիջապես մասնակցած անձնավորությունների հուշերը։ Շարադրում է գեղեցիկ ու պատկերավոր լեզվով։ Նրա կողմից հիշատակվող թվականները թեև սակավ են, բայց մեծ մասամբ ճիշտ են ու վստահելի։ «Պատմութիւն տանն Արծրունեաց»-ի հեղինակի վրա նույնպես ուժեղ է ժամանակի ազդեցությունը։ Նա իր նախորդների նման ամեն ինչ փորձում է բացատրել կրոնական տեսանկյունից ու ս. Գրքի սկզբունքներով։ Թովմայի աշխատությունը թարգմանվել է ֆրանսերեն՝ արևելագետ Բրոսեյի կողմից։

Արաբական տիրապետության ժամանակաշրջանի Հայաստանի քաղաքական պատմության, արաբների վարած հարկային քաղաքականության և հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի հարցերը որոշ չափով շոշափվել են նաև ուշ շրջանի հայ հեղինակներ Հովհաննես Դրասխանակերտցու (X դար)[1], Ստեփանոս Ասողիկ Տարոնեցու (X—XI դար)[2], Սամվել Անեցու (XII դար)[3], Կիրակոս Գանձակեցու (XIII դար)[4], Վարդան Արևելցու (XIII դար)[5], Ստե-

[1] Տե՛ս «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912։

[2] Տե՛ս «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», Պետերբուրգ, 1885։

[3] Տե՛ս «Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893։

[4] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի. Պատմութիւն Հայոց. աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, Կիրակոս Գանձակեցի. Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1909։

[5] Տե՛ս «Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն տիեզերական», Մոսկվա, 1861։

փանոս Օրբելյանի (XIII դար)[1] և մյուսների կողմից: Աշխատության մեջ օգտագործվել են թեմայի հետ առնչվող հիշյալ և մյուս հեղինակների շատ թե քիչ արժեք ներկայացնող և նախորդներին լրացնող գրեթե բոլոր վկայությունները:

VII—IX դարերի Հայաստանի պատմության սկզբնաղբյուրների ցանկը, սակայն, չի սահմանափակվում միմիայն հայ պատմիչների գործերով: Բարեբախտաբար հիշյալ ժամանակաշրջանի Հայաստանի պատմության շատ հարցերի մասին հարուստ տեղեկություններ են պահպանվել նաև արաբական, բյուզանդական և մասամբ ասորական սկզբնաղբյուրներում:

Ինչպես Արաբական խալիֆայության տիրապետության, այնպես էլ հետագա ժամանակներում ապրած արաբ կամ արաբերեն գրող համարյա բոլոր պատմիչները, աշխարհագիրներն ու ճանապարհորդներն իրենց երկերում այս կամ այն չափով անդրադարձել են նաև Հայաստանին ու հայ ժողովրդին: Սակայն քանի որ հիշյալ հեղինակները, մեծ մասամբ ծագելով բարձր խավերից կամ սերտ հարաբերությունների մեջ գտնվելով խալիֆայական իշխանության պալատական շրջանների հետ, իրենց ստեղծագործություններում հիմնականում հանդես են եկել որպես արաբական պետության շահերի ու հետաքրքրությունների պաշտպաններ, դրա համար էլ նրանց հաղորդած տեղեկությունները ինչպես հպատակ մյուս երկրների, այնպես էլ Հայաստանի մասին տոգորված են միակողմանիությամբ և տիրողներին հատուկ միտումով:

Արաբական տիրապետության ժամանակաշրջանի ժողովուրդների ներքին սոցիալ-տնտեսական հարաբերությունների, իրավական նորմերի և հարկային սիստեմի ուսումնասիրության, լավագույն սկզբնաղբյուր «Քիթաբ ալ-խարաջ» (Դիրք խարաջի մասին) աշխատությունն է[2]: Այս աշխատության հեղինակը Աբու-Յուսուֆ Յակուբ իբն-Իբրահիմ ալ-Անսարին է, որը գիտական գրականության մեջ հայտնի է ուղղակի Աբու-Յուսուֆ անունով: Նա ծնվել է 731 թվականին: 782—783 թվականներին Մուհամեդ էլ-Մեհդի (775—785)

[1] Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910:

[2] Տե՛ս Абу-Юсуф, Китаб ал-харадж, пер. А. Э. Шмидта, տե՛ս Архив Ленинградского отделения Института народов Азии АН СССР, разряд 1, опись 8, № 47, օգտագործված է նաև Абу-Юсуф, Китаб ал-харадж (Книга хараджа), տե՛ս «Православный палестинский сборник», т. 17, вып. 2 (4), СПб, 1897:



խալիֆի կողմից նշանակվելով Բաղդադի դատավոր, Աբու-Յուսուֆն սկսում է արագորեն վեր բարձրանալ և Հարուն ալ-Ռաշիդի ժամանակ (786—809) արդեն դառնում է խալիֆի ամենամտերիմ ու հարգված անձնավորությունը, որի ցանկությամբ ու հանձնարարությամբ էլ գրում է իր վերոհիշյալ աշխատությունը:

Աբու-Յուսուֆի գիրքը փաստորեն VIII—IX դարերում Արաբական խալիֆայության մեջ գործող օրենքների մի ժողովածու է, որի բազմաթիվ դրույթներով փորձ էր արվում երկրի ներսում կանոնավորելու առաջին հերթին հարկային, հողային և կրոնական հարաբերությունները, այն հաշվով, որպեսզի բոլոր դեպքերում և ամենուրեք ապահովվի արաբական պետության և իսլամի գերիշխանությունն ու առաջնությունը: Հեղինակն իր բոլոր դրույթները, որպես կանոն, աշխատում է հիմնավորել Ղուրանի, Մուհամեդի և նրա հետևորդների ասույթներով և, ի վերջո, գրքի ստեղծման շարժառիթները բացատրում նրանով, որ «Ուղղահավատների տիրակալի այդ պահանջը բացարձակապես առաջացել է իր հպատակներին ճնշումից ազատելու և նրանց բարեկեցությունը ապահովելու ցանկությունից»[1]: Սակայն այդ խոսքերը միայն հաճոյական արտահայտություններ էին գրքի պատվիրատուի հասցեին: «Քիթաբ ալ-խարաջը» փաստորեն կոչված էր իրավաբանորեն ձևակերպելու արաբական բռնակալական տիրապետության ճնշումը հպատակ ժողովուրդների վրա և բազմապատկելու խալիֆայության եկամուտները, որոնց նկատմամբ եղած պահանջներն օրավուր աճում էին:

VIII—IX դարերում Հայաստանում գործող հողային, հարկային և կրոնական հարաբերությունների հարցերը լուսաբանելիս մենք, քննադատաբար օգտագործելով նաև Աբու-Յուսուֆի տվյալները, աշխատել ենք ցույց տալ, որ վերոհիշյալ բնագավառներում Հայաստանում նույնպես լայնորեն կիրառվել են «Քիթաբ ալ-խարաջի» սկզբունքները:

Իրավունքի հարցերին և իրավական նորմերին արաբներն անդրադարձել են նաև հետագայում՝ նույնիսկ Արաբական խալիֆայության թուլացման ու անկման շրջանում: Աբու-Յուսուֆից հետո արաբական մատենագրության հիշյալ բնագավառի ոչ անհայտ հեղինակներից մեկն էլ Ալ-Մավերդին է (XI դար)[2]: Պատմագիտական առու-

[1] Абу-Юсуф, пер. А. Э. Шмидта, стр. 3.

[2] Տե՛ս Ал-Маверди, „Православный палестинский сборник", т. 17, вып. 2 (4), СПб, 1897:

մով արժեքավոր է նրա «Քիթաբ ալ-ահքամ աս-սուլթանիա» (Գիրք իշխանությունների օրենքների) աշխատությունը, որը վերաբերում է Արաբական խալիֆայության պետական կառուցվածքի տեսական հարցերին և հողային ու հարկային բնագավառներում գործող օրենքներին:

IX—X դարերից սկսած, պատմական դեպքերի մասին առանձին հեղինակների գործերում պահպանված հիշատակությունները միացվում, լրացվում և դարձվում են այսպես ասած համաշխարհային պատմություններ: Մատենագրության հիշյալ ճյուղի հիմնադիրը արաբական գրականության մեջ հանդիսացել է Աբուլ-Աբաս Ահմադ իբն-Յահյա իբն-Ջաբիր ալ-Բալաձորին[1]: Բալաձորին ծագումով պարսիկ է և ծնվել է Եգիպտոսում: Նրա ծննդյան թվականը հայտնի չէ: Մահացել է 892 թվականին: Նա եղել է Մուհամեդ ալ-Մութազ-Բիլլահ խալիֆի (866—869) որդու դաստիարակը, որի համար էլ, հավանաբար, իբրև դասագիրք, գրել է իր «Գիրք երկրների նվաճման»[2] հայտնի աշխատությունը, որը հանդիսանում է արաբական նվաճումների համառոտ տեսությունը սկզբից մինչև իր օրերը: Բալաձորիի հիշյալ աշխատության մի բաժինն էլ վերնագրված է «Արմենիայի նվաճումը», որտեղ հեղինակը խոսում է Արաբական խալիֆայության ձեռնարկած առաջին արշավանքների, Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի նվաճման, Արմենիայի ժողովուրդների ապստամբական շարժումների ու բմբոստությունների և այլ հարցերի մասին: Նա իր նյութերը դասավորել է խնամքով և ժամանակագրական հաջորդականությամբ: Բալաձորիի հիշատակությունների մեջ առանձնապես վստահելի են Հայաստանում կատարված պատմական կարևոր իրադարձությունների թվականները, որոնք երբեմն համընկնում են հայկական աղբյուրների տվյալներին: Հեղինակի աշխատությունը վստահություն է ներշնչում մանավանդ նրա համար, որ ինքն անձամբ եղել է Հայաստանում և շատ հարց ու փորձ արել ծերունիներին ու գրի առել նրանց պատմածները[3]: Հեղինակի վերոհիշյալ

[1] Տե՛ս *В. И. Беляев*, Арабские источники по истории туркмен и Турк мении 9-13 вв., Введение, տե՛ս «Материалы по истории туркмен и Туркмении», т. 1, М.—Л., 1939, էջ 13:

[2] Բալաձորի, *Հայաստանի նվաճումը, թարգմ. Բ. Թալաթյանցի, տե՛ս «Հանդես ամսօրյա», 1903, 1, 2, 4, 6, 8, Բալաձորի, Գիրք աշխարհակալության, թարգմ. Կ. Յուբյուճյանի, տեսր Ա. Կ. Պոլիս, 1874, Баладзори*, Книга завоевания стран, текст и перевод с арабского проф. П. К. Жузе, Баку, 1927:

[3] Տե՛ս *Баладзори*, Книга завоевания стран, էջ 11-12:



աշխատության բաժիններից մեկն էլ վերաբերում է Աբբասական խալիֆայության հողատիրության կարգին:

Բալաձորիի աշխատությունն արժեքավոր է նրանով, որ այնտեղ օգտագործված են այնպիսի աղբյուրներ, որոնք մեծ մասամբ չեն պահպանվել: Հեղինակն իր հավաքած նյութերի նկատմամբ ցուցաբերում է քննադատական մոտեցում և շարադրանքի ընթացքում չի սահմանափակվում գրքի վերնագրի շրջանակներով, այլ շոշափում է նաև տնտեսական, կուլտուրական և սոցիալական բնույթի հարցեր ու բոլոր դեպքերում էլ հանդես է գալիս որպես գիտակ ու կրթված անձնավորություն: Դրա համար էլ Բալաձորին հանդիսանում է մուսուլմանական աշխարհի առաջնակարգ հեղինակներից մեկը, որից օգտվել ու օգտվել են հետագայի շատ գրողներ: Կապված լինելով խալիֆայության բարձր խավերի հետ, Բալաձորին նվաճողի աչքերով է նայում հպատակեցված ժողովուրդներին և ամեն առիթով արդարացնում արաբների ծանր ու դաժան քաղաքականությունը նրանց նկատմամբ: Դրա համար էլ Բալաձորիի տեղեկությունները պետք է օգտագործվեն զգույշ ու քննադատաբար:

IX դարի արաբ պատմագիր-աշխարհագրագիրներից հայտնի է նաև Ալ-Յակուբին (Ահմեդ իբն արու-Յակուբ իբն-Ջաֆար իբն-Վահբ իբն-Վադիհ ալ-Աբասի ալ-Մասուդի ալ-Յակուբի), որի ծննդյան թվականը հայտնի չէ: Յակուբիի տոհմը անվանի էր դեռևս VIII դարում: Պատմիչի նախնիներից Վադիհը Աբու-Ջաֆար ալ-Մանսուրի խալիֆայության տարիներին (754—775) ոչ երկար ժամանակով վարել է Արմենիայի կառավարչի պաշտոնը: Երիտասարդական տարիներին Յակուբին շատ է ճանապարհորդել Արևելքում: Նա եղել է Պարսկաստանում, Հնդկաստանում, իսկ հետո հաստատվել Եգիպտոսում, որտեղ և վախճանվել է 897 թվականին: Յակուբիից պահպանվել են ինչպես պատմագրական, այնպես էլ աշխարհագրական բնույթի աշխատանքներ: Նրա «Քիթաբ ալ-բուլդան»-ը[1] (Գիրք երկրների) արաբական պատմա-աշխարհագրական գրականության մեջ պատկանում է ավելի շատ վիճակագրության ուղղության: Շարադրության ընթացքում արաբ ճանապարհորդների տեղեկություններից և պետական, պաշտոնական վավերագրերից բացի հեղինակը լայնորեն օգտագործել է նաև անձամբ ձեռք բերած նյութեր:

[1] Տե՛ս *Якуби*, История, текст и перевод проф. П. К. Жузе, Баку, 1927, «Յակուբի արաբ պատմագիրը և հայերը» բնագրից թարգմանեց Հ. Ադամյան, տե՛ս «Բազմավեպ», 1957 թ., № 9-10, 11-12, 1958 թ., № 3-5:

նա ինքնուրույն, արժանահավատ ու մեծ մասամբ վստահելի հեղինակ է: Արաբագետ Պ. Կ. Ժուկն ենթադրում է, որ Յակուբին ճեռքի տակ ունեցել է նաև իր տոհմական արխիվը[1]: Յակուբին թեև պատկանել է շիաների աղանդին, սակայն այդ բանը նրա ստեղծագործություններում չի շեշտվում և պատմիչն աշխատում է հանդես գալ որպես անաչառ ու անկողմնակալ հեղինակ:

Յակուբին իր ճանապարհորդությունների ընթացքում այցելել է նաև Հայաստան և մնացել այստեղ մինչև 873 թվականը: Հայաստանում նա հնարավորություն է ունենում ծանոթանալու երկրին, նրա տնտեսական ու քաղաքական վիճակին և հավաքելու նոր և թարմ նյութեր իր աշխատության համար: Յակուբին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում նաև Հայաստանի քաղաքական պատմության ու տնտեսական դրության մասին: Նկարագրում է քաղաքները, ճանապարհները, նշում արաբներին տրվող հարկերի չափը, խոսում առևտրի և արդյունագործության մասին: Յակուբին հիշատակում է, որ իր ժամանակ Հայաստանում կար 18 000 բնակավայր, որը, որքան էլ չափազանցություն լինի, այնուամենայնիվ վկայում է 860—870-ական թվականներին հայ ժողովրդի ձեռք բերած կիսանկախ դրության բարերար ազդեցության մասին:

Արաբական խալիֆայության տիրապետության ժամանակաշրջանի Արմենիայի վարչական սիստեմի, քաղաքական ու տնտեսական դրության, ճանապարհների, կարևոր քաղաքների ու բնակավայրերի և նրանց հեռավորությունների, հարկային սիստեմի ու հարկերի չափերի մասին հետաքրքիր ու արժեքավոր տեղեկություններ է հաղորդում նաև միջնադարյան արաբ հեղինակ Աբուլ-Կասըմ Ուբեյդուլլահ իբն-Աբդուլահ իբն-Խորդադբեհ (ծնված մոտավորապես 820-ական թվականներին, մահացած՝ 912—913 թվականներին): Խորդադբեհն ծագումով պարսիկ էր և բարձր պաշտոնյայի զավակ: Նա գրել է տարբեր բնույթի աշխատություններ, որոնցից համառոտ տարբերակով պահպանվել է «Քիթաբ ալ-մսալիհ վա-լ-մմալիք»-ը[2] (Գիրք ճանապարհների և թագավորությունների): Խորդադբեհի գիրքը հետագայում օգտագործվել է արաբական մյուս հեղինակների կողմից: Արաբական մատենագրության նշված հեղինակներից բացի, մենք մեր ուսումնասիրության բնագրում կանդրադառնանք նաև Ալ-Տաբարիի (IX—X դար)[3] Ալ-Մասուդիի (X դար)[4], Իստախրիի (X դար)[5], Կուդամայի (X դար)[6], Իբն-Հաուքալի (X դար)[7], Ալ-Մուկադասիի (X դար)[8], Իբն-Ռուստեի (X դար)[9], Իբն ալ-Ֆաքիհի (X դար)[10], Իբն ալ-Ասիրի (XIII դար)[11] և շատ ուրիշների համապատասխան հիշատակությունները ուսումնասիրվող ժամանակաշրջանի Հայաստանի պատմության տարբեր հարցերի համար: Ընդհանրապես պետք է նկատել, որ արաբական հեղինակները, որպես կանոն, իրենց երկերում կարևոր տեղ են հատկացնում Անդրկովկասի ու Հայաստանի աշխարհագրությանը, տնտեսությանն ու հարկերին, որից կարելի է հանգել այն եզրակացությանը, որ նվաճված երկրները նրանց համենից առաջ հետաքրքրել են իրենց հարստություններով և ունեցվածքով: Արաբական պատմիչները, աշխարհագիրներն ու ճանապարհորդները նույնպես Հայաստանը դիտել են որպես իրենց կողմից կողոպտվող ու հարստահարվող երկիր: Ահա թե ինչու նրանց տեղեկություննե-

[1] Տե՛ս Якуби, История, էջ 3-4:

[2] Տե՛ս Ибн-Хордадбэ, Книга путей и царств, տե՛ս «Сборник материалов для описания местностей и племён Кавказа», вып. 32, Тифлис, 1903:



[1] Տե՛ս Ал-Табари, Восстание в Палестине и Урдунне, տե՛ս «Право славный палестинский сборник», т. 17, вып. 2 (4), СПб, 1897, Տաբարի, տե՛ս «Հանդես ամսօրյա», 1905 թ., № 5, 8, 1906 թ., № 9, թարգմ. Բ. Խալաթյանցի, Табарн, пер. П. К. Жузе, տե՛ս Институт истории и философии АН Азерб. ССР, ֆոնդ 557:

[2] Տե՛ս Ал-Масуди, Книга сообщений и знаний, տե՛ս «Сборник материалов для описания местностей и племён Кавказа», вып. 38, Тифлис, 1908, Масуди, пер. П. К. Жузе, տե՛ս Институт истории и философии АН Азерб. ССР, ֆոնդ 578—579:

[3] Տե՛ս Истахри, Из книги путей царств, տե՛ս «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. 29, Тифлис, 1901:

[4] Տե՛ս Кудама, Сборник материалов . . ., вып. 32, Тифлис, 1903:

[5] Տե՛ս Ибн-Хаукал, Из книги путей и царств, տե՛ս «Сборник материалов для описания местностей и племён Кавказа», вып. 38, Тифлис, 1908:

[6] Տե՛ս Ал-Мукаддасий, Из книги „Лучшее из делений для познания климатов", տե՛ս Сборник материалов . . ., вып. 38, Тифлис, 1908:

[7] Տե՛ս Ибн-Рустэ, Из книги драгоценных камней, տե՛ս Сборник материалов . . ., вып. 32, Тифлис, 1903:

[8] Տե՛ս Ибн ал-Факих, Из книги о странах, տե՛ս Сборник материалов . . ., вып. 31, Тифлис, 1902:

[9] Տե՛ս Իբն ալ-Ասիր, տե՛ս Համառօտ պատմության Հայաստանի, քաղաքների հարաբացի պատմագրաց, թարգմ. Կ. Յուբերյանի, տետր Ա. Կ. Պոլեա, 1874, Իբն ալ-Ասիր, տե՛ս «Հանդես ամսօրյա», 1908 թ., № 2, 4, 1909 թ., № 3, թարգմ. Բ. Խալաթյանցի; Ибн ал-Асир, տե՛ս Православный палестинский сборник, т. 17, вып. 2 (4), СПб, 1897, Ибн ал-Аснр, Тарих ал-Кямиль, пер. П. К. Жузе, տե՛ս Институт истории и философии АН Азерб. ССР ֆոնդ 295:

րը ընդհանուր առմամբ տոգորված են Արաբական խալիֆայության նվաճողական քաղաքականությունն ամեն կերպ արդարացնելու ձգտումով:

Արաբական սկզբնաղբյուրների հայերեն և ռուսերեն թարգմանությունների հետ միասին մենք մեր ձեռքի տակ ունենք նաև նրանցից մի քանիսի բնագրերը, որոնք օգտագործել ենք գրող Ստեփան Ալաջաջյանի օգնությամբ: Սակայն գրքում մենք դրանք չենք հիշատակել՝ խուսափելով տպագրական դժվարություններից:

Եթե արաբ հեղինակները Հայաստանի մասին հիմնականում հաղորդում են աշխարհագրական, տնտեսական ու քաղաքական բնույթի տեղեկություններ, ապա բյուզանդական սկզբնաղբյուրների հեղինակներին ավելի շատ հետաքրքրել են կրոնա-դավանաբանական և գաղափարական պայքարի հարցերը:

Պավլիկյանների մասին բյուզանդական սկզբնաղբյուրներում եղած նյութերի հարստությունը բացատրվում է նրանով, որ VIII—IX դարերում պավլիկյանությունը, դուրս գալով հայկական շրջանակներից և դառնալով նաև բյուզանդական երևույթ, սկսել էր ցնցել հունական աշխարհիկ և հոգևոր իշխանությունների տնտեսական ու քաղաքական հիմքերը: Այդ պատճառով էլ բյուզանդացիները պավլիկյանների դեմ ձեռնարկած զինված արշավանքներից բացի հարկադրված էին մղել նաև գաղափարական պայքար:

Բյուզանդական մատենագրության մեջ պավլիկյան շարժման մասին տեղեկություններ հաղորդող ամենահին հեղինակներից մեկը Թեոֆան Խոստովանողն է (մահացած 817 թ.), որն իր «Ժամանակագրության» մեջ անդրադառնալով բյուզանդական կայսր Կոնստանդին V-ի (741—775) դեմ Հայաստան կատարած արշավանքներին, մատնանշում է, որ հատկապես Թեոդոսուպոլիսը գրավելու ժամանակ քաղաքի հայ բնակչությունը օգնում էր բյուզանդացիներին: Իսկ երբ քաղաքը կրկին թողնվեց, այն ժամանակ ահագին թվով հայեր, արաբների հետապնդումներից վախենալով, հույների հետ գաղթեցին դեպի արևմուտք: Թեոֆանն այնուհետև հաստատում է, որ Թրակիա գաղթած հայերը այնտեղ տարածում էին պավլիկյան գաղափարները[1]:

Պավլիկյանների քաղաքական պատմության և նրանց գաղափարական դրույթների մասին ամենաարժեքավոր տեղեկությունները

[1] *Տե՛ս Theophanis*, Chronographia, vol. I, Bonnae, 1839, *նաև* Продолжатель Феофана, *տե՛ս* «Сборник документов по социально-экономической истории Византии», Москва, 1951:



345

հաղորդող հեղինակը համարվում է Պետրոս Սիցիլացին[1]: Նա 868—869 թվականների ընթացքում, որպես Բարսեղ I-ի գնդապետության անդամներից մեկը, եղել է պավլիկյանների կենտրոն Տևրիկում, որտեղ, ինչպես ինքն է ասում, հաճախ զրուցելով պավլիկյանների հետ, կարողանում է որոշակի տեղեկություններ հավաքել նրանց մասին և դեռեղել իր գրքի համապատասխան բաժիններում[2]:

Պետրոս Սիցիլացու «Օգտակար պատմության» 21—43-րդ գլուխներում շատ թե քիչ հանգամանորեն խոսվում է պավլիկյանների քաղաքական պատմության և գաղափարախոսության մասին: Ենթադրվում է, որ պատմիչը Տևրիկում եղած ժամանակ, բանավոր հարցաղրույցից բացի, ծանոթացել է նաև պավլիկյանների գրավոր աշխատանքներին[3]: Սակայն որպես կայսեր վստահված անձնավորություն և նրա պատվերով գրող հեղինակ, նա խիստ ջշնամարար է տրամադրված իր հակառակորդների նկատմամբ և ամեն կերպ աշխատում է ծաղրել, պախարակել ու զրպարտել նրանց:

Պետրոս Սիցիլացու «Օգտակար պատմության»-ը որպես եղածների մեջ առավել արժանահավատ սկզբնաղբյուր, օգտագործվել է շատերի կողմից: Այդ գիրքը հիմք է ծառայել նաև Պետրոս Սիցիլացուն ժամանակակից Փոտի «Պատմություն մանիքեցիների կրկին վերաճման մասին» աշխատության համար[4]:

Փոտը ազգությամբ հայ էր: Նա իր քեռու՝ Արշավիր պատրիկի միջոցով շատ մոտ հարաբերությունների մեջ էր հայազգի կայսրուհի Թեոդորա Մամիկոնյանի եղբոր՝ Վարդ Մամիկոնյանի հետ, որն այն ժամանակ բյուզանդական արքունիքում գրավում էր պետության առաջին մինիստրի ու կեսարի բարձր պաշտոնները և հռչակված էր որպես հմուտ զորավար[5]: Ապագա պատմիչն ու եկեղեցական գործիչը, որ Բյուզանդիայի մայրաքաղաքում աշխարհիկ

[1] *Տե՛ս Petri Siculi*, Historia Manichaeorum seu Paulicianorum, Textum graecum matthaei raderi recognovit et de integro latine vertit. D. J. Lud. Gieseler, Gottingae, 1846, Полезная история Петра Сицилийского, *տե՛ս Р. Бартикян*, Источники для изучения истории павликианского движения, Ереван, 1961:

[2] *Տե՛ս* Petri Siculi, էջ 2:

[3] *Տե՛ս Р. Бартикян*, Источники для изучения . . ., էջ 87-88:

[4] *Տե՛ս* Его же святейшего Фотия повествование о вторичном произрастании манихеев, *տե՛ս Р. Бартикян*, Источники для изучения истории павликианского движения, Ереван, 1961:

[5] *Տե՛ս Ն. Ադոնց, Վարդ Մամիկոնյան, տե՛ս նրա Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948:*

ԳՐԱԴԱՐԱՆ

զրազմունքի տեր մարդ էր, 858 թվականին Վարդ Մամիկոնյանի աջակցությամբ նշանակվելով Պոլսի պատրիարք (858—867, երկրորդ անգամ՝ 878—886), անմիջապես ընդգրկվում է երկրի աշխարհիկ ու եկեղեցական գործերի թոհուրոհի մեջ և դառնում այդ ժամանակաշրջանի կայսրության ամենաեռանդուն գործիչներից մեկը։ Իզուր չէ, որ ֆրանսիացի պատմաբան Շ. Դիլը նրան անվանում է հիանալի գիտնական և համարձակ ու կարող խելքի տեր անձնավորություն[1]։

Փոտի վերոհիշյալ աշխատությունը բաղկացած է չորս գրքերից, որոնց մի մասի հարապատության նկատմամբ եղած կասկածները[2] այժմ հերքվում են[3]։ Հեղինակն իր գրքի սկզբի մասերում խոսում է պավլիկյանների պատմության և դաղափարախոսության մասին, իսկ ապա փորձում է քաղկեդոնականության սկզբունքներով հերքել իր հակառակորդների բոլոր դրույթները։ Որպես պաշտոնական եկեղեցու ներկայացուցիչ, Փոտը նույնպես, շարադրանքի ընթացքում խեղաթյուրելով իր հակառակորդների գաղափարները և ճգնելով նրանց ներկայացնել ամենամռայլ ու բացասական գույներով, նպատակ է ունեցել զրպարտելու և հեղինակազրկելու պավլիկյաններին։

Պավլիկյանների քաղաքական պատմության և IX դարի կնաերին տեղի ունեցող հայ-բյուզանդական կռիվների մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում նաև X դարի բյուզանդական պատմիչ Գեննեսիոսը, որը նույնպես հայկական ծագում ուներ[4]։ Գեննեսիոսն իր Պատմության մեջ[5] գրավոր սկզբնաղբյուրների հետ մեկտեղ մեծ չափով օգտագործել է նաև բանավոր հուշերը։ Որպես հայ, Գեննեսիոսը իր ազգակիցների նկատմամբ երբեմն ցուցաբերում է կողմնակալ վերաբերմունք։ Բյուզանդական մյուս հեղինակների նման, Գեննեսիոսը նույնպես հանդես է գալիս որպես պաշտոնական

[1] Տե՛ս Ш. Диль, История Византийской империи, Москва, 1948, էջ 89։

[2] Տե՛ս H. Cre'goire, Les Sources de lHistoire des Pauliciens. Pierre de Sicile est authentique et „Photius" un faux, „Bulletin de la Classe des Lettres", t. XXII, 1936-4, Bruxelles, 1936։

[3] Տե՛ս Р. Бартикян, Источники для . . ., էջ 73։

[4] Տե՛ս Ф. Успенский, Очерки по истории византийской образованности, СПб, 1892, էջ 17։ Ն. Ադոնց, Մամիկոնյան իշխանուհին բյուզանդական գահի վրա, նույնի Վասիլ Հայազն, տե՛ս Պատմական ուսումնասիրություններ, էջ 371, 469։

[5] Տե՛ս Genesius, Bonnae, 1834։



պատմագրության ներկայացուցիչ և կանգնած է պավլիկյանների հակառակորդների կողմում։

Միջնադարյան բյուզանդական սկզբնաղբյուրների համար, կրոնական սահմանափակվածությունից բացի, որպես ընդհանուր դիծ պետք է նշել նաև այն, որ այդ սկզբնաղբյուրների հեղինակները, լինելով քաղկեդոնական եկեղեցու ներկայացուցիչներ, իրենց ստեղծագործություններում հիմնականում անդրադարձել են պավլիկյանների կրոնա-աստվածաբանական դրույթներին և դիտակցաբար հրաժարվել նրանց սոցիալական ու քաղաքական պահանջներն արծարծելուց, որպեսզի այդ կարգի խնդիրները ընդհանրապես մասսաների մեջ չտարածվեն։ Սակայն պավլիկյանների նույնիսկ կրոնա-աստվածաբանական դրույթների մեջ աչքի է ընկնում պավլիկյան շարժման հակաեկեղեցական ու հակաֆեոդալական բովանդակությունը։ Դրա համար էլ բյուզանդական սկզբնաղբյուրները այս տեսակետից արժեքավոր ու առաջնային են։

Հայ և օտար մատենագրության մեջ Հայաստանի VII—IX դարերի պատմության վերաբերյալ պահպանված սկզբնաղբյուրները, անշուշտ, ավելի շատ են, բայց մենք նպատակահարմար գտանք անդրադառնալու նրանցից դլխավորներին ու կարևորներին։

Պատմագիտության մեջ VII—IX դարերի Հայաստանի արաբական տիրապետության ժամանակաշրջանի նկատմամբ հետաքրքրությունն սկսվում է դեռևս XVIII դարից։ Հիշյալ շրջանի ամբողջական ուսումնասիրության առաջին նախաձեռնողը Միքայել Չամչյանն է, որն իր «Պատմութիւն Հայոց» եռահատոր աշխատության 2-րդ հատորում[1] մի ամբողջական գլուխ հատկացրել է արաբական տիրապետությանը։ Բացի այդ, հեղինակն իր աշխատության 1-ին հատորում անդրադառնում է նաև պավլիկյանների պատմությանը[2]։ Մ. Չամչյանն իր շարադրության ընթացքում գերազանցապես օգտագործել է հայկական ու բյուզանդական սկզբնաղբյուրները։ Նրան ծանոթ չեն եղել արաբական աղբյուրները։ Մի կողմից աղբյուրների ոչ լրիվ օգտագործումը և մյուս կողմից հեղինակի կղերա-ֆեոդալական պատմագրության ուղղությանը պատկանելը հնարավորություն չեն տվել նրան բավարար չափով անդրադառնալու ուսումնասիրվող շրջանի Հայաստանի ներքին՝ տնտեսական և դասակարգային փոխհարաբերությունների

[1] Տե՛ս Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, հ. Բ, Վենետիկ, 1785։

[2] Տե՛ս նույն տեղը, հ. Ա, Վենետիկ, 1784։

հարցերին։ Չթափանցելով պավլիկյան շարժման բովանդակության մեջ, Մ. Չամչյանը նրա գնահատման հարցում կղերական պատմագրության նեղ շրջանակներից այն կողմ չի անցնում և պավլիկյաններին ներկայացնում է լոկ որպես հայոց եկեղեցու անդորրության խանգարողների։

Ժամանակագրական կարգով Մ. Չամչյանից հետո երկրորդ հեղինակը գերմանացի հայանի հայագետ Հ. Հյուբշմանն է, որն իր մի աշխատության մեջ Սեբեոսի Պատմության տվյալներով շարադրում է Հայաստանի քաղաքական անցուդարձը արաբական արշավանքների նախօրյակին և VII դարում։ Հյուբշմանի աշխատությունը Հայաստանի VII—IX դարերի պատմության ուսումնասիրության տեսակետից առանձին արժեք չի ներկայացնում[1]։

Թեև պավլիկյանների քաղաքական պատմության ամբողջականության տեսակետից Մխիթարյան միաբանության անդամ Բ. Սարգիսյանի «Ուսումնասիրություն մանիքեա-պավղիկյան-Թոնրակեցիներու ազանդին»[2] գիրքը այդ հարցի ուսումնասիրության բնագավառում Մ. Չամչյանից մի քայլ առաջ էր, բայց նրա հեղինակը նույնպես, ունենալով նեղ կրոնական աշխարհայացք, պավլիկյան շարժման մեջ ոչինչ սոցիալական չի տեսնում։

Պավլիկյան շարժման պատմության ուսումնասիրության բնագավառում բավական առաջ անցավ Կարապետ Տեր-Մկրտչյանը իր „Die Paulikianer im Byzantinischen Kaiserreiche und verwandte ketzerischen Erscheinungen in Armenien" աշխատությամբ[3]։ Կ. Տեր-Մկրտչյանի գիրքը համեմատաբար ավելի մշակված է և աչքի է ընկնում սկզբնաղբյուրների բազմակողմանի ու բանասիրական հետազոտությամբ։ Սակայն այն ևս ունի լուրջ թերություններ, որոնցից ամենակարևորը այն է, որ այստեղ ևս պավլիկյան շարժման հիմնական, սոցիալական ու դասակարգային կողմն ամբողջովին անտեսվում է, և այդ շարժումը հանգեցվում կրոնական ազանդավորության։

Արաբական տիրապետության ժամանակաշրջանի Հայաստանի շատ համառոտ պատմությանն է նվիրված Մկրտիչ Ղազարյանի

1 Տե՛ս H. Hübschmann, Zur Geschichte Armeniens und der ersten Kriege der Araber, Leipzig, 1875։

2 Բ. Սարգիսյան, Ուսումնասիրություն մանիքեա-պավղիկյան-Թոնրակեցիներու ազանդին, Վենետիկ, 1893։

3 Leipzig, 1893, նաև Կ. Տեր-Մկրտչյան, Պավղիկյանք Բյուզանդական կայսրության մեջ և մերձավոր հերձվածային երևույթները Հայաստանի մեջ, Երուսաղեմ, 1938։



«Armenien unter der arabischen Herrschaft» գերմաներեն լեզվով գրած գրքույկը[1]։ Այս աշխատության գրական արժանիքն այն է, որ նրա հեղինակը, հակառակ Մ. Չամչյանի, հայտնի հայ մատենագիրների աշխատությունների հետ մեկտեղ, հաջողությամբ օգտագործել է նաև արաբական հեղինակներին։ Մ. Ղազարյանն իր գրքույկի սկզբում շատ համառոտակի անդրադառնում է արաբական նվաճումներին նախորդած ժամանակներին, ապա նույն ձևով շարադրում արաբների առաջին ներխուժումների, հայ-արաբական պայմանագրի և արաբական տիրապետության պատմությունը Հայաստանում։ Այս աշխատության հեղինակը նույնպես իր հիմնական ուշադրությունը դարձրել է երկրի քաղաքական պատմությանը, դրա համար էլ Մ. Ղազարյանի աշխատությունը հեռու է տվյալ ժամանակաշրջանի մասին ամբողջական պատկերացում տալուց։

Հայոց եկեղեցու և եկեղեցականության պատմության ուսումնասիրության կապակցությամբ VII—IX դարերի Հայաստանի հիմնականում քաղաքական պատմության առանձին հարցերի շարադրանքին մենք հանդիպում ենք նաև Պոլսի պատրիարք Մաղաքիա Օրմանյանի եռահատոր «Ազգապատում» աշխատության 1-ին մասում[2]։ Մ. Օրմանյանը որպես հայկական եկեղեցական պատմագրության ներկայացուցիչ, իր ուսումնասիրության հիմնական կենտրոնը դարձնելով հայոց եկեղեցին, պատմության մյուս հարցերի նկատմամբ ցուցաբերել է մակերեսային մոտեցում։ Մ. Օրմանյանը, սակայն, որպես հմուտ տոմարագետ, մեծ աշխատանք է կատարել պատմական դեպքերի ժամանակագրության ճշտման և մշակման գործում։

Արաբական տիրապետության ժամանակաշրջանին զգալի տեղ է հատկացրել նաև պրոֆ. Լեոն իր «Հայոց պատմության» 2-րդ հատորում[3]։ Նախորդների համեմատությամբ Լեոյի աշխատությունը մի կողմից աչքի է ընկնում Հայաստանի քաղաքական պատմության ավելի ամբողջական ուսումնասիրությամբ, մյուս կողմից էլ տառապում է երկրի ներքին կյանքի, սոցիալ-տնտեսական հարաբերությունների և սոցիալական շարժումների պատմության հարցերի մակերեսայնությամբ։ Բացի այդ, Լեոն իր այդ աշխատության մեջ հիմնականում օգտվել է հայկական և, սահմանափակ քանակությամբ, օտար սկզբնաղբյուրներից։

1 Տե՛ս Marburg, 1903։

2 Տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, մաս Ա, Կ. Պոլիս, 1912։

3 Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, հ. 2, Երևան, 1947։

Արաբական շրջանի Հայաստանի պատմության նկատմամբ նոր հետաքրքրություններ են առաջանում սովետական կարգերի հաստատումից հետո: Այդ ժամանակաշրջանի երկրի ներքին կյանքի, հարկային սիստեմի, գյուղի ու քաղաքի փոխհարաբերությունների և ժողովրդա-ազատագրական պայքարի հարցերին նվիրված ուսումնասիրություններով հանդես են գալիս Հ. Զորյանը[1], ակադ. Հ. Մանանդյանը[2], պրոֆ. Բ. Առաքելյանը[3] և ուրիշներ:

1930-ական թվականներից արտասահմանյան բուրժուական պատմագրության մեջ սկսում են արծարծվել նաև պավլիկյան շարժման պատմության հետ կապված խնդիրները[4]: Արտասահմանյան բուրժուական պատմագրության ներկայացուցիչները, սակայն, հարցի ուսումնասիրության ընթացքում, անբավարար կերպով օգտագործելով համապատասխան սկզբնաղբյուրները, ոչ միայն աղավաղել են պավլիկյան շարժման պատմությունը, այլև այդ շարժման գնահատման հարցում համարյա ոչ մի քայլ առաջ չեն անցել եկեղեցական ու կղերական պատմագրությունից: Բուրժուական պատմագրության մեջ նույնպես մի կողմ է թողնվում պավլիկյանության սոցիալական ու դասակարգային բովանդակությունը և այն ներկայացվում է լոկ որպես աղանդավորական երևույթ: Պավլիկյան շարժման պատմության նմանօրինակ աղավաղումները արդարացի քննադատության են ենթարկվել ու ենթարկվում են սովետական բյուզանդագիտների կողմից[5]: Միջնադարյան Հայաստանի սոցիալական ամենախոշոր շարժումներից մեկի՝ պավլիկյան շարժման պատմության ամբողջական ու գիտական ուսումնասիրությունը սովետական պատմագրության մեջ այժմ, կարելի է ասել, հասցված է բավարար աստիճանի[1]:

Սովետահայ պատմագրության 1920—1940-ական թվականների ավանդույթներով, Հայաստանի VII—IX դարերի պատմության նկատմամբ հետաքրքրությունը շարունակվում է նաև հետագայում: Հիշյալ ժամանակաշրջանի Հայաստանի պատմության առանձին հարցերի մշակման և հրատարակության ուղղությամբ դրական աշխատանք են կատարել հատկապես պատմական գիտությունների թեկնածուներ Հ. Նալբանդյան[2], Ս. Շլեպչյանը[3] և Ա. Տեր-Ղևոնդյանը[4]:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանի գրականության համառոտ տեսությունը ցույց է տալիս, որ թեև VII—IX դարերի Հայաստանի պատմության հետազոտության ուղղությամբ որոշ գործ կատարվել է, բայց այն հեռու է ավյալ ժամանակաշրջանը խորն ու բազմակողմանիորեն արտահայտելուց:

Ներկայացվող աշխատությունը, գրված լինելով սկզբնաղբյուրների և եղած գիտական գրականության մանրակրկիտ ուսումնասիրության հիման վրա, նպատակ ունի տալու VII—IX դարերի Հայաստանի ամբողջական ու բազմակողմանի պատմությունը: Թե որքանով է մեզ հաջողվել հասնելու մեր նպատակին, այդ թողնում ենք ընթերցողներին ասելու:

---

[1] *Տե՛ս* Հ. Զորյան, Արաբների հարկային քաղաքականությունը ավատական Հայաստանում, *տե՛ս* ՀՍՍՀ Պետական համալսարանի գիտական տեղեկագիր, № 2—3, Երևան, 1927 թ., նույնի՝ Արաբական շրջանում ֆեոդալական Հայաստանի քաղաքի և գյուղի միջև ստեղծված հակադրությունը, *տե՛ս* Տեղեկագիր ՀՍՍՀ Գիտության և արվեստի ինստիտուտի, № 2, Երևան, 1927 թ.:

[2] *Տե՛ս* Հ. Մանանդյան, Արաբական արշավանքները Հայաստանում, *տե՛ս* նույնի Մանր հետազոտություններ, Երևան, 1932, նույնի՝ Ժողովրդական ապստամբությունները Հայաստանում՝ արաբական տիրապետության դեմ, Երևան, 1939:

[3] *Տե՛ս* Բ. Առաքելյան, Հայաստանը արաբական տիրապետության առաջին շրջանում և հայերի պայքարն անկախության համար, *տե՛ս* Գիտական ժողովածու, Երևան, 1941:

[4] *Տե՛ս* *H. Gre'goire*, Autour des Pauliciens. „Byzantion", t. XI (1936), Bruxelles, 1936, H. Gre'goire, Les Sources . . . „Bulletin de la Classa des Lettres", t. XXII, 1936-4, Bruxelles, 1936, H. Gre'goire, Sur lHistoire des Pauliciens, „Bulletin de la Classe des Lettres", t. XXII, 1936-6-9, Bruxelles, 1936, H. Cre'goire, Pour lHistoire des e'glises Pauliciennes, „Orientalia christiana pariodica", voi. XIII, Miscellanae quellaume de Jerphanion, t. II, Roma, 1947, *և այլն:*

[5] *Տե՛ս* *М. В. Левченко*, А. Грегуар и его работы по византиноведению, *տե՛ս* „Византийский временник", т. 3, 1950, *Е. Э. Лившиц*, Вопросы павликианского движения в освещении современной буржуазной историографии, *տե՛ս* „Византийский временник", т. 5, 1952, *Р. Бартикян*, Источники для изучения истории павликианского движения, Ереван, 1961, *և այլն:*



[1] *Տե՛ս* Ա. Մելիք-Բախշյան, Պավլիկյան շարժումը Հայաստանում, Երևան, 1953, *С. Мелик-Бахшян*, Павликианское движение в Армении, Ереван, 1955, Հ. Բարթիկյան, Պավլիկյան համայնքի կազմակերպության հարցի շուրջը *տե՛ս* «Պատմա-բանասիրական հանդես», № 3, 1958թ., *К. Юзбашян*, К истории павликианского движения в Византии в IX в., „Вопросы истории религии и атеизма", т. 4, Москва, 1956, *Р. Бартикян*, Источники для изучения истории павликианского движения, *և այլն:*

[2] *Տե՛ս* *А. Т. Налбандян*, Административная и налоговая политика арабов в Армении (с начала VIII до IX вв.), автореферат, Ереван, 1950, նույնի դիսերտացիան աշխատությունը ձեռագրի իրավունքով:

[3] *Տե՛ս* Ս. Շլեպչյան, Արաբների վարչական քաղաքականությունը Հայաստանում (դիսերտացիան աշխատանք, ձեռագրի իրավունքով), Երևան, 1955:

[4] *Տե՛ս* Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայություններ Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

## ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի առաջին բաժանումից և ապա Արշակունիների տիրապետության անկումից հետո հայ ժողովուրդը կորցրեց իր քաղաքական անկախությունը և ընկավ Պարսկաստանի ու Բյուզանդիայի տիրապետության տակ: Սակայն Հայաստանի մասնատումով երկու տերությունների միջև գոյություն ունեցող մրցակցությունը չվերացավ, որովհետև կողմերից յուրաքանչյուրը, ելնելով Հայկական բարձրավանդակի ռազմական նշանակությունից, ձգտում էր ամբողջությամբ տիրել Հայաստանին: Այսպիսի պայմաններում պարսկա-բյուզանդական մրցակցությունը փոփոխական հաջողություններով շարունակվեց մինչև VII դարի կեսերը: Ավելի քան երկու դար տևող պայքարն ու արյունահեղ կռիվները շատ հաճախ իրենց ոլորտների մեջ էին առնում նաև Հայաստանն ու հարկադրում հայ ժողովրդին, իր շահերին ու կամքին միանգամայն հակառակ, կրելու նրա ամբողջ ծանրությունն ու դառնությունը: Մրցակից տերությունների հսկայական բանակների պարբերական ներխուժումները, պատերազմները, ավերածությունները, մասսայական կոտորածներն ու գերեվարությունները երբեմն ուղեկցվում էին նաև տարերային աղետներով ու արհավիրքներով, որոնց հետևանքները հաճախ պատերազմներից էլ ծանր ու սոսկալի էին լինում[1]:

Պարսիկները, որ մինչև VI դարի վերջերը իշխում էին Հա-

[1] Տե՛ս Н. Пигулевская, Месопотамия на рубеже 5-6 вв. н. э. Сирийская хроника Иешу Стилита как исторический источник, М.-Л., 1940, էջ 143, 161: Хроника Захарии Ритора, տե՛ս Н. Пигулевская, Сирийские источники по истории народов СССР М.—Л., 1940, էջ 150, 152:



յաստանի մեծագույն մասում, Խոսրով Անուշիրվանի դահակալության տարիներին (531—576) նոր փոփոխություններ մացրեցին հատկապես հարկային քաղաքականության մեջ: Նրանք հարկերի տեսակներն ու չափերն ավելացնելուց առաջ, Հայաստանում անցկացրած հատուկ աշխարհագրի միջոցով, մանրամասն հաշվառման ենթարկեցին ագգաբնակչությանը, մշակելի հողերը, անասուններն ու արոտավայրերը: Ի տարբերություն նախկինի, այժմ ոչ միայն ավելացվեցին հարկերի չափերն ու տեսակները, այլև դրանք սկսեցին գանձել դրամով: Ժողովրդին հատկապես ընկճելու համար, Խոսրով I-ը վերսկսեց նաև կրոնական հալածանքները Հայաստանում:

Բնակչության շահագործման ուժեղացումը մի կողմից, իսկ մյուս կողմից նախարարական դասի ու ֆեոդալների իրավունքների ու արտոնությունների ատիճանական սահմանափակումը, երկրում հասարակական բոլոր խավերի մեջ առաջացրին խորը դժգոհություն, որը և հանգեցրեց 571 թվականի ժողովրդա-ազատագրական հուժկու ապստամբությանն ընդդեմ պարսկական լծի: Հայաստանում բռնկված ապստամբությունն իր արձագանքները գտավ նաև Վրաստանում ու Աղվանքում: Բյուզանդական կայսրությունը, որպես Պարսկաստանի մրցակից, փորձեց օգտագործել այդ հանգամանքը և իր հովանավորության տակ առավ հայ ապստամբներին: Հենց այդ էլ դարձավ պարսկա-բյուզանդական նոր պատերազմի առաջացման առիթներից մեկը: Այդ պատերազմն ընդհատումներով ու փոփոխական հաջողություններով շարունակվեց մինչև 591 թվականը և ավարտվեց Պարսկաստանի պարտությամբ: 591 թվականին երկու պետությունների միջև կնքված հաշտության նոր պայմանագրով Հայաստանը ենթարկվեց երկրորդ բաժանման: Այս անգամ արդեն Հայաստանի մեծագույն մասն անցավ Բյուզանդական կայսրությանը, որը օգտվելով իր հաղթանակներից, սկսեց կողոպտել ու բռնագաթել ժողովրդին, քայքայել երկրի տնտեսությունն ու ռազմական ուժերը և հայերին ուժասպառ անելու համար նրանց տոկուն ու կենսունակ հատվածներին բռնի կերպով գաղթեցնել դեպի արևմուտք:

Սակայն արաբների հզորանալն ու նրանց կողմից սպառնացող հարձակման վտանգը, VII դարի սկզբներից, հարկադրում էին Բյուզանդիային ու Պարսկաստանին փոխելու իրենց վերաբերմունքը հայերի նկատմամբ և գործադրելու համեմատաբար հանդուրժող քաղաքականություն: Նման քաղաքականության անմիջական հետևանքը պետք է համարել այն, որ այդ ժամանակներից սկսած

ինչպես Արևելյան, այնպես էլ Արևմտյան Հայաստանում տիրողները ոչ միայն հաշվի էին նստում հայ ազնվականների հետ, այլև նրանց գործունյա ու ձեռներեց ներկայացուցիչներին առաջ էին քաշում երկրի կարևոր պաշտոններում: Սակայն, անկախ այս իրավիճակից, երկրի մասնատվածությունը և ուրիշներին ենթարկված լինելու հանգամանքը, ապա նաև նախարարական դասի մեջ գոյություն ունեցող անհամաձայնությունները, առայժմ բացառում էին հայերի կողմից ռազմա-քաղաքական բնույթի որևէ կարևոր գործողության ծավալում: Թրա համար էլ գլխավոր պաշտոններում նշանակված հայ պաշտոնյաները առանց որևէ կարևոր ձեռնարկման կամ գոհ էին գնում ներքին կռիվներում, կամ ասպարեզից հեռացվում էին կայսրերի ու պարսից թագավորների նկատմամբ ցուցաբերած անհավատարմության համար: Այսպես՝ 630-ական թվականներին բյուզանդական իշխանությունները Արևմտյան Հայաստանի կառավարիչ նշանակեցին Մժեժ Գնունուն, որը շուտով սպանվեց Արևելյան Հայաստանի երբեմնի մարզպան Դավիթ Սահառունու կողմից: 635 թվականին կայսր Հերակլը Դավիթին շնորհում է կյուրապաղատի կոչում ու նշանակում Արևմտյան Հայաստանի կառավարիչ, որն իր պաշտոնում մնում է մինչև 638 թվականը:

Քաղաքական միանգամայն անկայուն վիճակ էր տիրում նաև Արևելյան Հայաստանում: 633 թվականին Արևելյան Հայաստանի մարզպան Վարազտիրոց Բագրատունին փախավ Բյուզանդիա, իրր իր դեմ պարսիկների կողմից պատրաստվող դավադրության պատճառով: Իրականում Ասպանյանների դիրքերի թուլացումն ու Բյուզանդիայի ուժեղացումն էր դրդում հայոց մարզպանին ընտրելու բյուզանդական կողմնորոշումը: Դեպքերին ժամանակակից պատմիչ Սեբեոսը հայ ազնվականության թուլության և անջատ-անջատ լինելու մասին ուղղակի գրում է. «Մեռաւ երակոս և թագաւորեաց որդի նորա Կոստանդին: Եւ ոչ ոք ընտրեցաւ զաւրավար յաշխարհին Հայոց. քանզի անմիաբան լեալ իշխանացն՝ մեկնեցան ի միմեանց»[1]: Նույն բանը վկայում է նաև ուշ շրջանի հեղինակ Հովհաննես Դրասխանակերտցին՝ ասելով. «Եւ վասն դի նախարարք աշխարհիս մերոյ անմիաբան լեալք և ոչ ոք էր որ սմա զօրավարէր. յայնժամ ազգականիչ զօրքն Հագարայ համարձակութիւն առեալ՝ յԱսորեստան կողմանէ ասպատակ ի Հայս սփռէին»[2]:

[1] «Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն», Երևան, 1939, էջ 109:

[2] «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 82:



Այսպիսով, արաբական արշավանքների նախօրյակին Հայաստանը շարունակում էր մնալ մասնատված, բաժան-բաժան եղած վիճակում: Երկրի մասնատվածությունն ու օտարների տիրապետության տակ գտնվելը խոշոր դժվարություններ էին ստեղծում հայ ժողովրդի ուժերի համախմբման և սեփական ջանքերով երկիրն արաբական հորդաների ներխուժումներից պաշտպանելու համար:

* * *

Արաբիան ասիական մայր ցամաքի ամենամեծ թերակղզին է: Նա զբաղեցնում է 3 միլիոն 144 հազար քառակուսի կիլոմետր տարածություն: Այս հսկայական տերիտորիայի մեծագույն մասը կազմում են անապատներն ու ավազուտները: Երկրի բնա-կլիմայական պայմանները, դեռ վաղ ժամանակներից սկսած, տեղացիների համար շատ թե քիչ նպաստավոր պայմաններ էին ստեղծել վաչկատուն անասնապահության և երկրագործության զարգացման համար: Անասնապահության հիմնական ճյուղերն էին ուղտապահությունը և ոչխարաբուծությունը, իսկ երկրագործության մեջ կարևոր տեղ էին գրավում գարու, փյունիկյան արմավենու, խաղողի և այլ կուլտուրաների ու պտուղների մշակությունը: Թերակղզու արաբական ցեղերն սկզբնապես հաստատվել էին նրա հարավային ծովափնյա և հյուսիսային շրջաններում, որտեղ բնակության համար կային առավել նպաստավոր պայմաններ:

Արաբիայի տարբեր մասերում սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացումը շատ վաղ ժամանակներից սկսած ընթացել է տարբեր ձևերով ու տեմպերով: Այսպես՝ եթե մինչև VII դարը հյուսիսային Արաբիայի ցեղերը, որոնք զբաղվում էին հիմնականում խաշնարածությամբ, գտնվում էին տոհմատիրական կարգերից դեպի դասակարգային հասարակություն անցման շրջանում, ապա երկրի հարավային լեռնահովիտներում երկրագործությամբ զբաղվող ցեղերի մոտ վաղուց առաջացել էր ստրկատիրությունը:

Արաբական ցեղերը մինչև VII դարն ունեին հեթանոսական կրոն և պաշտում էին բազմաթիվ կուռքերի: Արաբների կրոնական ընդհանուր կենտրոնը Հեջազի Մեքքա քաղաքն էր: Այստեղ, հրապարակի վրա կառուցված էր Քաաբի տաճարը (բառացի քաաբ նշանակում է խորանարդ, տաճարն ուներ խորանարդի ձև), որի պատի մեջ դրված էր արաբ ժողովրդի զգալի մասի գլխավոր սրբությունը համարվող «սև քարը» (երկնաքար):

Մինչև VII դարը անհրաժեշտ սոցիալ-տնտեսական նախադրյալների բացակայության պատճառով ոչ Քաաբի և ոչ էլ «սև քարի» պաշտամունքով հնարավոր չէր արաբական ցեղերին միավորել մեկ միասնական պետության մեջ: Միայն VII դարի սկզբներին երկրի սոցիալ-տնտեսական կյանքի զարգացումը համապատասխան նախադրյալներ ստեղծեց նաև նրա քաղաքական միավորման համար:

Արաբական ցաբուցրիվ ցեղերի քաղաքական միավորումը պայմանավորված էր նաև միջազգային իրադրություններով:

620-ական թվականներին բյուզանդացիները ներխուժելով Արաբիա և նրա հյուսիսային մասերում գրավելով Տարուկ գյուղը՝ արդեն սպառնում էին ամբողջ Արաբական թերակղզուն: Ուրեմն արաբական ցեղերն ավելի քան երբևէ շահագրգռված էին միավորվելու և իրենց սահմանները միացյալ ուժերով պաշտպանելու համար[1]:

VII դարից Արաբիայում դասակարգային հարաբերությունների զարգացման հետևանքով սկսում է խորանալ հասարակական շերտավորումն ու սոցիալական անհավասարությունը: Սնափակացնելով լավագույն հողերն ու արոտավայրերը, երկրի ռազմաֆեոդալական ավագանին իր ձեռքում էր կենտրոնացրել մեծ հարստություն և ընդգրկվել միջազգային առևտրի մեջ: Արդեն VII դարի սկզբներից արաբական ֆեոդալական հասարակության մեջ պարզորոշ կերպով գոյացել էին հասարակական երկու հակադիր բևեռներ՝ երկրի արտադրության միջոցների ու հարստության գգալի մասի սեփականատեր իշխող վերնախավը և ճնշվող ու հարստահարվող աշխատավորությունը՝ արար բեդուինը (բառացի՝ անապատի մարդ): Ներքին ու արտաքին հանդամանքները նպաստավոր նախադրյալներ էին ստեղծում արաբական ցաբուցրիվ ուժերը միավորելու և միասնական ու ամուր պետություն ստեղծելու համար, որը կոչված էր ոչ միայն պաշտպանելու արաբների հայրենիքը՝ այլև նվաճելու ուրիշների հողերն ու ստրկացնելու բազմաթիվ ժողովուրդների:

Նոր ձևավորվող արաբական ֆեոդալականացող հասարակության մեջ ստրկությունն ու ստրկական աշխատանքը նույնպես որոշակի տնտեսական դեր էր կատարում: Պետության կառավարման գործն ամբողջությամբ գտնվում էր խոշոր հողատերերի և հարուստ

[1] Տե՛ս В. В. Бартольд, Ислам, Петроград, 1918, էջ 38:



դասակարգի ներկայացուցիչների ձեռքին, որոնք ստեղծել էին կառավարման ուժեղ և խիստ կենտրոնացված սիստեմ[1]:

Հասարակական հարաբերությունների զարգացման արդյունք էր նաև արաբների շրջանում նոր գաղափարախոսության առաջացումն ու զարգացումը: Այդ գաղափարախոսությունը հանդիսացավ արաբների նոր կրոնը՝ իսլամը (բառացի՝ հավատացյալ), որը պատմության մեջ հայտնի է նաև նրա հիմնադիր Մուհամեդի անունով՝ մահմեդականություն ձևով: Արաբական ցեղերի միավորման և միասնական պետության ստեղծման ասպարեզում, VII դարից սկսած, իսլամը կատարեց խիստ վճռական դեր:

Իսլամի գաղափարական հիմնադիրը հանդիսացավ Մեքքայի խորհրդան առևտրական տոհմի ներկայացուցիչ Մուհամեդը (571—632), որն իր ուսմունքի սկզբունքները վերցնելով հին հրեական կրոնից, քրիստոնեությունից ու արաբական պաշտամունքից, զարգացնում էր միաստվածության գաղափարն ու անհաշտ պայքարի կոչ անում հին պաշտամունքի և նրա կուռքերի դեմ, հռչակելով, որ աստված մի է, իսկ ինքը՝ նրա ճշմարիտ առաքյալը: Մուհամեդը քարոզում էր բոլոր մուսուլմանների եղբայրությունը, անկախ ցեղային պատկանելությունից: Այս գաղափարը բավականին հզոր միտք էր Արաբիայի քաղաքական միավորման համար, մանավանդ որ արաբների առաջին առաջնորդներն իրենց կենցաղով և ապրելակերպով ոչնչով չէին տարբերվում մյուս հասարակ մարդկանցից: Այդ իսկ պատճառով մահմեդականությունը շատ շուտով ճաշակ դառնում է քաղաքական հզոր ուժ:

Արաբիան մեկ միասնական պետության մեջ միավորելու գաղափարը ծագել է Մեքքայից: Այստեղ, որպես հին ուխտատեղի, երկրի տարբեր մասերից պարբերաբար հավաքվում էին մեծ թվով ուխտավորներ, կազմակերպվում էին տոնավաճառներ, կնքվում ընդարձակ առևտրական գործարքներ և այլն: Մուհամեդն սկզբում դիմադրության հանդիպեց ու հալածվեց, բայց շուտով նա իր կողմնակիցներով հաղթանակ տարավ և նոր ուսմունքով մեծապես նպաստելով երկրի տնտեսական ու քաղաքական միավորման գործին՝ ստեղծեց նաև արաբական միավորված ու ընդարձակ պետությունը:

Մուհամեդի հակառակորդները շատ շուտ պարտվեցին, և մահմեդական ուսմունքը 630-ական թվականներից սկսած արաբական

[1] Տե՛ս А. Ю. Якубовский, Об испольных арендах в Ираке в VIII в., տե՛ս „Советское востоковедение", т. 4, М.-Л., 1947, էջ 179:

միրող դասակարգի ձեռքին դարձավ ամենահիմնական գաղափարախոսությունը, որը նրան հենց սկզբից մղեց դեպի նորանոր նվաճումների և ուրիշ ժողովուրդներին սարկացնելու ճանապարհը:

Մահմեդականությունն իր հետևորդների մեջ քարոզում էր ոչ միայն անհանդուրժողություն և ատելություն մյուս ժողովուրդների նկատմամբ, այլև նվաճողական ու կողոպտիչ պատերազմները արդարացնում ու հռչակում էր որպես հավատի համար մղվող սրբազան պատերազմներ[1]: Այս առումով միանգամայն տեղին է Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի այն դիտողությունը, թե՝ «Իսլամը նողովում է անհավատների ազգը («անհավատներ» այստեղ գործ է ածվում ոչ մահմեդականներ իմաստով—Ս. Մ.-Բ.) և մուսուլմանների ու անհավատների միջև ստեղծում անընդհատ թշնամանքի վիճակ»[2]:

Մուհամեդն ու նրա հետևորդները, ոգևորված իրենց առաջին հաջողություններով, պատերազմն այլազավանների դեմ և նրանց երկրների նվաճումը դարձնելով իրենց նոր գաղափարախոսության հիմնաքարը, պատմական ասպարեզ իջան քաղաքական ամենադարձակ պահանջներով ու ծրագրերով: Մուհամեդը հենց սկզբից իր հավատակիցների առաջ դնում էր մի քանի կարևոր պատվիրաններ, որոնց մեջ ամենահիմնականը Մուհամեդի, որպես աստծու միակ ու ճշմարիտ առաքյալի, ընդունումն ու նրա բոլոր պահանջների անվերապահ կատարումն էր: Այնուհետև, արաբների գաղափարական առաջնորդը կոչ էր անում իր հետևորդներին՝ նվաճել աշխարհն ու նրա ողջ բարիքները, որովհետև այն ի վերուստ միայն մուսուլմաններին է տրված վայելելու:

Մուհամեդը դրեց միավորված և ուժեղ արաբական պետության և նրա նոր գաղափարախոսության հիմքերը. մնում էր, որ նրա հաջորդները ամրացնեին նորաստեղծ այդ պետության դիրքերն ու բնդարձակեին նրա սահմանները:

Մուհամեդի մահից հետո (632 թ.), իշխանությանը տիրելու համար նրա հետևորդների, ընկերների ու բարեկամների միջև սկրսվում է ուժեղ պայքար, որից հաղթանակով դուրս եկավ Աբու-Բաքրը (632—634): Աբու-Բաքրից սկսած արաբական պետության առաջնորդներն սկսեցին կոչվել խալիֆներ (մարգարեի հաջորդներ), իսկ պետությունը՝ խալիֆայություն: Խալիֆն իր ձեռքում էր կենտրոնացնում երկրի հոգևոր ու աշխարհիկ գործերի գերագույն իշխանությունը:

Աբու-Բաքրի, իսկ ապա նաև Օմարի (634—644) օրոք, Արաբական թերակղզին միավորելուց բացի, խալիֆայության ռազմական ուժերն սկսեցին նաև կազմակերպված արշավանքներ ձեռնարկել Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդական կայսրության սահմանների վրա: Այդ արշավանքները հետապնդում էին ինչպես ավար ու գերիներ ձեռք բերելու, այնպես էլ առևտրական գլխավոր ճանապարհների վրա իշխելու նպատակ:

Բազմաթիվ հաղթական արշավանքներն ու պատերազմները Արաբական խալիֆայությանը կարճ ժամանակում դարձրին Առաջավոր Ասիայի ամենահզոր տերությունը:

Արաբական ռազմական ուժերի արագ հաղթանակները մեծ չափով պայմանավորվում էին նաև Արևելքում արաբների համար ստեղծված քաղաքական բարենպաստ պայմաններով և առաջին հերթին ժամանակի երկու հզոր տերությունների՝ Պարսկաստանի և Բյուզանդիայի ռազմատնտեսական թուլացումով:

635 թվականին արաբներն առաջին անգամ բախվեցին բյուզանդական ուժերի հետ Դամասկոսի մոտ: Քաղաքի համար մղվող կռիվներում հենց սկզբից ահաբեկվելով՝ բյուզանդացիներն նահանձնությունը զիջեցին հակառակորդին: Հերակլ կայսրը (610—641) ծանր դրությունից դուրս գալու համար արաբների դեմ դուրս բերեց նաև հայկական գնդերին, որոնց առաջնորդում էր Վահան Խոռխոռունին: Հայկական ստորաբաժանումների համարձակ գործողությունները թեև որոշ ժամանակ կասեցրին արաբների դրոհները, սակայն քաղաքը փրկել նրանք չկարողացան[1]: Հաջորդ տարին Յարմուկ գետի ափին տարած երկրորդ փայլուն հաղթանակով արաբները բաց արեցին իրենց ճանապարհը դեպի Պաղեստին, Միջագետք ու Ասորիքի մյուս շրջանները և իրար հետևից գրավեցին Անտիոքը, Հալեպը և ուրիշ քաղաքներ: Քիչ հետո նվաճվեց նաև Եդիպտոսը, Պարսկաստանը, Կրետեն և այլն: XII դարի ասորական հեղինակ Միխայել Ասորին վկայում է, որ կայսր Հերակլը նահանջելիս, ճանապարհին անխտիր կողոպտում էր նաև քրիստոնյաներին, ասելով՝ «լաւ է մեզ, քան Տաճկաց»[2]:

Արաբների ռազմական հաջողություններն ու առաջխաղացումը, մանավանդ սկզբնական շրջանում, որոշ չափով աջակցություն էր

[1] Տե՛ս Իբն ալ-Ասիր, «Հանդես ամսօրյա», 1908 թ., № 4, Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին, թարգմանությամբ Ե. Խալաթյանցի, էջ 106:

[2] К. Маркс и Ф. Энгельс, Объявление войны—мусульмане и христиане, Соч., т. 10, М., 1933, стр. 7.



[1] Տե՛ս A. Мюллер, История ислама, т. 1, СПб, 1895, էջ 282:

[2] «Ժամանակագրութիւն Տեառն Միխայէլի Ասորւոց պատրիարքի» երուսաղեմ, 1871, էջ 393:

պանում նաև այն ժողովուրդների կողմից, որոնք դարեր շարունակ կրում էին պարսկա-բյուզանդական պատերազմների արհավիրքներն ու ենթարկվում պարսիկների ու հույների ճնշումներին: VIII դարի հայ հեղինակ Ղևոնդը բերում է հրեաների մի կոչը՝ ուղղված արաբներին, որտեղ նրանք ասում էին. «...դուք եք զաւակք Աբրահամու և որդիք Նահապետին: Ելէք ընդ մեզ և փրկեցէք զմեզ ի ծառայութենէ արքային Յունաց, և ի միասին կալցուք զիշխանութիւնս մեր»[1]:

634 թվականից սկսած արաբներն արտակարգ հաջողություններով կռիվներ էին մղում նաև Պարսկաստանի դեմ: 637 թվականին Քադեսիայի ճակատամարտում արաբական բանակները գլխովին ջախջախեցին թվապես գերազանց պարսկական ուժերին, որից հետո նրանք, հետապնդելով նահանջող հակառակորդին, հասան մինչև Տիգրոն և լուրջ դիմադրության չհանդիպելով, համարձակ գրոհով վերցրին նաև պարսից հինավուրց մայրաքաղաքը: Քիչ հետո Տիգրոնը հիմնահատակ կործանվեց և նրանից ոչ հեռու, Եփրատի ափին հիմնադրվեց մի նոր քաղաք Կուֆե անունով: Ա. Մյուլլերի տվյալներով՝ Տիգրոնում արաբների ձեռքն ընկավ 900 միլիոն ռուբլու (հաշված ռուսական ոսկու 1914 թվականի արժեքով) հարստություն[2], որը ներկա սովետական փողով կազմում է 792 միլիոն ռուբլի: Սասանյանների երկարամյա տիրապետության վերջնական կործանումը տեղի ունեցավ 642 թվականին Նեհավենդի ճակատամարտում (Նեհավենդ գյուղը գտնվում էր Համադան քաղաքի մոտակայքում):

VII դարի կեսերին, Պարսկաստանը նվաճելուց հետո, արաբները իրենց համար ճանապարհ բացեցին նաև դեպի Հայաստան ու Անդրկովկաս:

Արաբական վտանգից ահաբեկված Սասանյանները VII դարի 30—40-ական թվականներին հիմնական ուժերը կենտրոնացրած լինելով հարավում, Արևելյան Հայաստանում համարյա կորցրել էին իրենց փաստական իշխանությունը: Իսկ նրանց պարտությունից և վերջնական անկումից հետո հայ ազնվականները, վերականգնելով իրենց իրավունքները, երկրի կառավարման ասպարեզում ձեռք էին բերել ընդարձակ իրավունքներ: Սակայն ներքին ու արտաքին միանգամայն անբարենպաստ հանգամանքների բերումով այդ ժամանակ հնարավոր չեղավ իրականացնել Հայաստանի քաղաքական միավորումն ու միասնական ամուր պետության ստեղծումը: Այդ է

[1] Ղևոնդ, Պատմութիւն, էջ 4:

[2] Տե՛ս А. Мюллер, История ислама, т. 1, էջ 269:



պատճառը, որ Եգիպտոսը, Պաղեստինը, Ասորիքը, Միջագետքն ու Պարսկաստանի մի մասը նվաճելուց հետո, երբ առաջին անգամ արաբական զորամասերը ներխուժեցին Հայաստան, այստեղ նրանք պրեթե լուրջ դիմադրության չհանդիպեցին:

Արաբների Հայաստան կատարած առաջին արշավանքների մասին մեզ տեղեկություններ են հաղորդում VII և հետագա դարերում ապրած հայ պատմիչներից շատերը, ինչպես և արաբական ու ասորական որոշ հեղինակներ: Սակայն մեկ տասնյակից ավելի հայ հեղինակներից միայն Սեբեոսին պետք է համարել այդ հարցի գիտակը, որովհետև նա անձամբ ապրել ու ճաշակել է արաբների ներխուժումների սարսափն ու դառնությունը: Դրա համար էլ կասկածից դուրս է, որ մեր այս պատմիչի տեղեկությունները, ավելի հավանական ու վստահելի են, մանավանդ որ հեղինակը հավաստում է, թե շատ բան ինքը ստուգել ու ճշտել է անմիջապես ականատեսների պատմածների հիման վրա. «Զայս լուաք յարանց գերելոց ի Խուժաստան Տաճկաստանէ, որոյ ինքեանք իսկ ականատես եղեալ պատմեցին մեզ զայս բան»[1]: Հայ և օտար մյուս հեղինակները թեև հիմնականում ապրել են Սեբեոսից հետո ու բնականաբար կրկնել նրան, այնուամենայնիվ նրանք երբեմն հաղորդում են այնպիսի փաստեր ու տեղեկություններ, որոնք լրացնում և ամբողջացնում են արաբների Հայաստան կատարած առաջին արշավանքների ու դրանց հետ կապված որոշ մանրամասնությունների պատմությունը:

Մեզ հասած տեղեկությունների հիման վրա ամենից առաջ հնարավոր է լինում որոշել արաբների հարձակման ուղղությունը, նրանց առաջին արշավանքների տարեթվերը, հայերի ցույց տված դիմադրության որոշ մանրամասնությունները, բնակավայրերի ավերածության, բնակչության կողոպտման, կոտորածների և գերեվարության, ինչպես նաև երկրի ընդհանուր քաղաքական դրության մանրամասնությունները և այլն:

Սկզբնաղբյուրների վկայություններից երևում է, որ արաբական հրոսակախմբերն առաջին անգամ Հայաստան են ներխուժել հարավից՝ Ասորիքից ու հյուսիսային Միջագետքից: Առաջինը Բզնունյաց հարձակմանը ենթարկվում է Տիգրանակերտի շրջանը, որն այն ժամանակ կոչվում էր Չորրորդ Հայք[2]: Այդ մասին արաբական հեղինակ Իբն ալ-Ասիրը պատմում է, որ Մծբինն ու Ամիդը գրավե-

[1] «Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն», Երևան, 1939, էջ 111:

[2] Չորրորդ Հայքը կազմվել էր բյուզանդական Մորիկ կայսեր օրոք (582—602), հիմնականում Հուստինիանոս I-ի (527—567) նույնանուն վարչական միավորի տերիտորիայից: VII դարում Չորրորդ Հայքը ենթարկվում էր Բյուզանդիային և

լուց հետո Օսման Աբուլ-Ասի զորամասերը մտնում են Չորրորդ Հայք, որտեղ նրանք, ընկճելով ժողովրդի դիմադրությունը, հաշտություն են կնքում՝ հայերից հարկ ստանալու պայմանով: Իբն ալ-Ասիրի մոտ կարդում ենք. «Իյադ ուղարկեց Աբու-Մուսային, որ հպատակեցավ, իսկ ինքն արշավեց Դարա և առավ քաղաքը: Ապա նա ուղարկեց Օսման իբն-Աբուլ-Ասին Չորրորդ Հայք, որի ժողովուրդը պատերազմեցավ նորա հետ (Սաֆֆան իբն-Մուաթթուլ նահատակեցավ կռվի մեջ), բայց հետո խաղաղություն հաստատեց նորա հետ՝ հարկ տալու պայմանով»[1]:

Չորրորդ Հայքը հպատակեցնելուց հետո արաբական զորամասերը շարժվում են դեպի Տարոն: Տարոնում և հարևան շրջաններում խորամանկորեն օգտագործելով հայ ազնվականների մեջ գոյություն ունեցող անհամաձայնությունն ու նրանց ուժերը բաժան-բաժան լինելու հանգամանքը, նրանք նույնիսկ կարողանում են իրենց կողմը գրավել մի քանի թույլ ու տատանվող նախարարների: Այսպես, օրինակ, հենց սկզբում արաբական զորքերի կողմն անցած Սահուռ Անձևացին սկսում է համագործակցել նրանց հետ, իսկ Վարդիկ կամ Ակնիկ Մոկացին արաբական հրոսակախմբերին ուղղակի առաջնորդում է դեպի Դվին: Հայկական ուժերի ցրվածության և անմիաբանության պատճառով Տարոնի ու հարևան շրջանների հայրենասիրական ուժերի ցույց տված հերոսական դիմադրությունը հաջողություն չի ունենում:

Թշնամու հրոսակախմբերի դեմ ամենալուրջ դիմադրությունը կազմակերպվում է Տարոնում իշխան Տիրան Մամիկոնյանի գլխավորությամբ: Հայերի ու արաբների միջև գլխավոր ճակատամարտը տեղի է ունենում Գրգուռ լեռան հարավային ստորոտներում, որտեղ հայերը 8 000 հոգով դուրս եկան արաբների 18 000-անոց բանակի դեմ: Չնայած թվական այսպիսի մեծ տարբերությանը, հայերը կըռվում էին արտակարգ եռանդով ու քաջությամբ: Շատերի մեջ առանձնապես աչքի էր ընկնում զորահրամանատար Տիրան Մամիկոնյանը: Կռվի ամենաթեժ պահին մենամարտի մեջ մտնելով դավաճան Սահուռ Անձևացու հետ, նա հաղթում է նրան ու գլխատում, սակայն կռվում ընկնում է և ինքը: Հերոսական դիմադրությունից

մոտավորապես համապատասխանում էր Տիգրանակերտի շրջանին (ուշ ժամանակների Դիարբեքիրի շրջան):

[1] Իբն ալ-Ասիր, «Հանդես ամսօրյա», 1908 թ., № 2, էջ 48 (Արաբացի մատենադրեր Հայաստանի մասին, թարգմ. Բ. Խալաթյանցի):



հետո հայկական զորքերը Գրգուռի մոտ ի վերջո պարտվում և ցիրուցան են լինում[1]:

Հայերի դեմ տարած առաջին հաղթանակից ոգևորված՝ արաբները իրենց առաջնորդի՝ Աբդուլ-Ռահիմի գլխավորությամբ ավերում ու կողոպտում են Տարոնը և արագությամբ շարժվելով առաջ, վանա լճի հյուսիսային ափերով թեքվում են դեպի հյուսիս-արևելք ու մտնում Բզնունիք, Աղիովիտ, Բերկրի ու Կոգովիտ և Հայկական պարի վրայով, Օրգովի կիրճից հանկարծակի ներխուժում Արարատյան դաշտը: Դեպքերին ժամանակակից Սեբեոսի մոտ այդ մասին կարդում ենք հետևյալը. «Եւ եկաւ զաւր ապականիչ յԱսորեստան կողմանէ ընդ ճանապարհս ձորոյ յաշխարհն Տարօնոյ. առին զնա և զԲզնունիս և զԱղիովիտ: Եւ ճանապարհ կալեալ ի Բերկրոյ ձորն ընդ Որդապոյ և ընդ Գոգովիտ՝ թափեցան յԱյրարատ»[2]: Պատմիչի քիչ հետո արած այն արտահայտությունը, թե «...Ոչ ոք կարաց ի զաւրացն Հայոց արկանել գոյժ ի Դուին ուան. բայց արք երեք իշխանացն»[3], իրավունք է տալիս մեզ ենթադրելու, որ արաբները Տարոնից հետո, իրենց անցած ճանապարհին, հայկական կռվող ուժերի կողմից այլևս ոչ մի լուրջ դիմադրության չհանդիպելով, սրընթաց կերպով անցել են ահագին տարածություն և միանգամայն անսպասելիորեն ներխուժել Արարատյան դաշտը: Արաբների արագ ու անդիմադիր կերպով Տարոնից մինչև Այրարատ հասնելու պատճառը ոչ թե հայկական ուժերի իսպառ բացակայությունն էր, այլ նրա հրամանատարության թույլ տված տակտիկական սխալն ու ոչ օպերատիվությունը, որը երևում է հետևյալից:

Արաբական ներխուժումներից առաջ, հայկական զորահրամանատարությունը և կառավարող շրջանները ուշադրությամբ հետևում էին քաղաքական իրադրության զարգացմանն ու արաբների գործողություններին հարևան երկրներում: Իսկ եթե հավատալու լինենք այս դեպքերից ուշ ապրած Ղևոնդ պատմիչին, ապա Հայոց սպարապետ Թեոդորոս Ռշտունին նույնիսկ տեղյակ էր արաբների մտադրություններին և դրա համար էլ նա, լուր ստանալով, որ Թըշնամին շարժվում է դեպի Հայաստան, իր զորքերով շտապում է կտրել նրա ճանապարհը, սակայն չի հասցնում, որովհետև արաբները կարողանում են ավելի շուտ առաջ անցնել այն վայրերից, դեպի ուր շարժվում էին նաև հայկական ուժերը: Այս մասին Ղևոնդի

[1] Տե՛ս Յովհան Մամիկոնեան. Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941, էջ 285—286, տե՛ս նաև Սոփերք Հայկականք, է, Վենետիկ, 1853, էջ 43—44:

[2] Սեբեոս, էջ 109:

[3] Նույն տեղում, էջ 109—110:

մոտ կարդում ենք հետևյալը. «...ազդ եղև առ իշխանն Թէոդորոս, եթէ հէն զարթուցեալ գայ ի վերայ աշխարհիս։ Իսկ նորա առեալ զզօրս իւր՝ կամէր ունել զկիրճս Ճանապարհին Զորայոյ[1], այլ ոչ կարաց ժամանել յառաջս նոցա. քանզի ըստ օգաթևն արագութեան յարձակեալք իրրև օձք թևաւորք յառաջեցին Թշնամիքն, և զկնի իւրեանց թողեալ զզօրսն Հայոց՝ դէմ եդեալ ընթացան ի մայրաքաղաքն Դուին»[2]։

Թշնամու առաջխաղացումը կանգնեցնել չկարողանալուց հետո Թեոդորոս Ռշտունուն մնում էր վերահաս վտանգի մասին գոնե լուր տալ Դվինի բնակիչներին և, եթե հնարավոր էր, տեղում կազմակերպել քաղաքի պաշտպանությունը, մինչև ինքը հիմնական ուժերով կկարողանար օգնության հասնել։ Եվ ահա, այս դժվար ու պատասխանատու առաջադրանքի կատարումը Հայոց զորահրամանատարը հանձնարարում է իշխաններ Թեոդորոս Վահևունուն, Խաչյան Առավղեղյանին և Շապուհ Ամատունուն, որոնք իրենց մարդկանցով առաջ անցնելով արաբներից, հետևում հապճեպորեն քանդում են Մեծամորի կամուրջն ու հասնելով քաղաք՝ ոտքի հանում բնակիչներին[3]։ Սակայն դեպքերի ընթացքն անսպասելիորեն փոխվում է։ Թեոդորոս Ռշտունին, որ արաբների հետ հանդիպելու առաջին հնարավորությունը ձեռքից բաց թողնելուց հետո, ըստ երևույթին, պետք է նրանց հետքերով շարժվեր և հարմար պահ ընտրելով՝ ճակատամարտ տար, անսպասելի կերպով, ինչպես վկայում է Սեբեոսը, հայտնվում է Նախիջևանի կողմերում[4]։ Մենք պատմիչի այս հիշատակությունը կասկածի տակ առնելու ոչ մի հիմք չունենք, որովհետև դեպքերի հետագա ընթացքին, գոնե այնքան ժամանակ, քանի նրանք առնչվում էին Դվինի հետ, Թեոդորոս Ռշտունու չմասնակցելը նույնպես հաստատում է մեր պատմիչի ճշտությունը։ Ինչ

[1] «Զորային» կամ «Զորայն կոյս»-ը, ինչպես հիշատակվում է աղբյուրներում, նույն կղեսուրի կամ կլեյսուրի լեռնանցքն է։ Այդ լեռնանցքը գտնվում է Սասունից արևմուտք, Հայկական Տավրոսի կենտրոնական հատվածում։ Այստեղով էր անցնում Արևմտյան Տիգրիսի ավազանը Արածանիի հովտի հետ կապող ճանապարհներից մեկը (տե՛ս H. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 225, ծան. 1, նաև Թ. Հակոբյան, Ուրվագծեր Հայաստանի պատմական աշխարհագրության, Երևան, 1960, էջ 238–239)։ Կլեյսուր բառը հունարեն է և հավանաբար ծագում է առոիկական klεis klειδός բարբառային ձևերից, որոնց մեջ կոնկրետ դեպքում անվան բնույթին համապատասխանում է բանալի իմաստը (տե՛ս «Древнегреческо-русский словарь», т. 1, Москва, 1958, էջ 951)։

[2] Ղևոնդ, էջ 9։

[3] Տե՛ս Սեբեոս, էջ 109—110։

[4] Տե՛ս նույն տեղում։



խոսք, հայոց սպարապետը Թշնամու հետ հաշվեհարդար տեսնելու և Դվինը փրկելու իր մտադրություններից հրաժարվել չէր կարող։ Ուրեմն մի այլ, բոլորովին չնախատեսնված պատճառ ոչ միայն հարկադրել էր նրան հենց մարտադաշտի ամենավճռական պահին փոխելու Թշնամուն հետապնդելու իր ծրագիրը, այլև հիմնական ուղղությունից շեղվելով, հեռանալու Դվինից։ Այս առեղծվածը այնպես էլ մնում է անհասկանալի՝ սկզբնաղբյուրների անբավարար տեղեկությունների պատճառով։ Դրա համար էլ առայժմ մենք նույնպես ստիպված ենք ենթադրելու, որ հյուսիսային Միջագետքից ու Ասորիքից Հայաստան մտած արաբների հետ միաժամանակ, հավանաբար, արաբական այլ զորամասեր սպառնում էին Հայաստանին նաև հարավ-արևելքից[1]։ Ահա արաբական այս նոր ներխուժումը կանխելու անհրաժեշտությունից ելնելով էր, որ Թեոդորոս Ռշտունին Դվինը թողել ու շարժվել էր դեպի Նախիջևան։ Թեոդորոս Ռշտունին հավանաբար կարծում էր, որ Դվինն իր ուղարկած զորականների ղեկավարությամբ, ապավինելով ամրություններին, կկարողանա դիմադրել գոնե այնքան ժամանակ, մինչև ինքը, ապահովելով երկրի հարավ-արևելյան սահմանները, ետ կվերադառնար։

Իմանալով, որ հայկական զորքերն այլևս իրենց չեն հետապնդում, Դվինի ուղղությամբ շարժվող արաբական զորամասերը ոչ միայն չեն թուլացնում հարձակման թափը, այլև ընդհակառակը, սկսում են ավելի արագ ու համարձակ գործել, նպատակ ունենալով ամեն ինչ վերջացնել նախքան հայկական բանակի վերադարձը։ Սակայն Ղևոնդի վկայությունից և դեպքերի ընթացքից պարզվում է, որ Դվինը պաշտպանվելու համար չուներ նույնիսկ ամենափոքր հնարավորությունները։ Քաղաքում փաստորեն մնացել էին միայն կանայք, երեխաները և շրջակա բնակավայրերից այստեղ փախած, ահաբեկված, անզեն ու անվարժ բնակչության մի մասը։ Ահա թե ինչ ենք կարդում Ղևոնդի մոտ այդ մասին. «Եւ վասն զի թափուր գտին (արաբները) զքաղաքն յարանց պատերազմողաց, զի ամենեքեան զհետ Թէոդորոսի իշխանին գնացեալ էին, բայց միայն զկանայս և զմանկտիս և զայլ խառնիճաղանճս, որք ոչ էին արք պատերազմի»[2]։ Պատմիչի այս խոսքերը հաստատվում են քիչ հետո, երբ Դվինի նման մեծ ու ամուր քաղաքը, չկարողանալով դիմադրել թշնամուն, առաջին իսկ օրը գրավվեց նրա կողմից։ Եվ այդպես, արաբական զորքերը սրընթաց կերպով հասնում են Մեծամորի գետին և

[1] Տե՛ս Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 495, ծան. 1, А. Шахназарян, Двин, Ереван, 1940, էջ 58։

[2] Ղևոնդ, էջ 9։

կամուրջը քանդված գտնելով, մի փոքր դանդաղելուց հետո, իրենց ուղեցույց Մոկաց Վարդիկ-Ակնիկ իշխանի ցուցմունքով մի այլ տեղից անցնում են գետը, այնուհետև Բուշայի[1] առաջնորդությամբ կոզոպտելով և ահ ու սարսափ տարածելով շրջակայքի բնակիչների վրա, գալիս բանակ են դնում Դվինի մոտ՝ Խոսրովակերտ անտառի եզրին: Այստեղ հանգստանալուց և քաղաքն ու նրա շրջակայքն ուշադիր կերպով զննելուց հետո նրանք հինգերորդ օրը միայն ամբողջ ուժով զրոհում են հայերի ամրությունների վրա, գործի դնելով նաև պարսպահար ու այլ մեքենաներ: Արաբները սկզբում քաղաքի պարիսպների տակ ուժեղ ծուխ են առաջացնում և, շփոթեցնելով պաշտպաններին, սկսում են նետերի տարափ տեղալ հայ զինվորների վրա ու կամաց-կամաց քշել նրանց իրենց դիրքերից: Հավանաբար կարճատև կռվից հետո արաբներին հաջողվում է պարիսպներին հենած սանդուղքներով վեր բարձրանալ, ներխուժել քաղաք և ներսից բաց անելով քաղաքի դռները՝ անարգել կերպով ճանապարհ տալ նաև մյուս զինվորներին: Սեբեոսի մոտ այդ մասին կարդում ենք. «Ապա անցեալ (արաբները) ընդ կամուրջն Մեծամաւրի՝ հարին ասպատակաւ զամենայն երկիրն, և ժողովեալ զաւար և զգերութիւն բազում յոյժ, և եկեալ բանակեցան ի յեզր մայրուղւն Խոսրովակերտի: Եւ եղև յաւուրն հինգերորդի դիմեցին ի վերայ քաղաքին. մատնեցաւ քաղաքն ի ձեռն նոցա. քանզի արկին մուխ շուրջանակի, մերժեցին ծխովն և նետաձգութեամբն զպահապանս պարսպին, և կանգնեալ սանդուխս՝ ելին ի պարիսպն և անկեալ ի ներքս բացին զդուռն քաղաքին: Եւ դիմեալ ի ներքս զաւրք թշնամեացն՝ սատակեցին սրով զբազմութիւն քաղաքին, և առեալ զաւար և զկապուտ քաղաքին՝ ելին և բնակեցան ի նմին բանակատեղն, որ աւր ի էր տրէ ամաոյն, յաւր ուրբաթի»[2]: Թե այնուհետև Դվինը գրավելուց հետո ինչ կատարվեց այնտեղ, թողնում ենք ասելու մեկ այլ հեղինակի. «Արդ ով արդեօք արժանաւորապէս ողբասցէ զթշուառութիւն աղետիցն, քանզի ամենայն ուստեք անհնարին էր վտանգն: Զի սուրբ եկեղեցիք, յորս ոչ էր արժան հեթանոսաց մտանել՝ քանդեալ և քայքայեալ կոխան ոտիւք ոտիցն անօրինաց լինէին, և քահանայք հանդերձ սարկաւագօք և պաշտօնէիւք խողխողեալ սրով ժայիրհ և անողորմ թշնամեացն. և բազում տիկնայք փափկասունք, որոց ոչ էր առեալ զփորձ նեղութեան՝ գնային ի բլոր թշնամեալք և քարշեալք ի հրապարակս՝ զկականումն ողորոյն բարձրացուցանէին վասն յեղակարծումն օրհասին: Այլ և աշխարհախռոմք ըմբռնեալք ուստերօք և դստերօք ի նոյն վտանգս՝ յաճախէին զհառաչանս և զհեծութիւնս. զի ոչ գիտէին՝ զոր առաւել ողբասցեն, զխողխողեալսն յանօրէնն սրոյն, եթէ զկենդանւոյն անջատեալսն զուստերս և զդստերս, օտարացուցանել ի հաւատոյն որ ի Քրիստոս և ի հոգևոր յաստուածային փառատրութեանցն: Եւ դմանս ողորմելի տեսլեամբ անկեալ զիակունս ի վերայ զիականց ընդ արիւն թաթաւեալք թէպէտ և ողբովք աշխարէին այլ ոչ էին ձեռնհաս ամփոփել զմարմինսն և տալ գերեզմանի»[1]:

Կոտորածներից ու խոշտանգումներից ամենից շատ տուժեցին կանայք, երեխաներն ու ծերունիները: Վիշտն ու տառապանքն այնքան մեծ էր ու սոսկալի, որ մարդիկ չգիտեին սպանվածների վրա ողբան, թե կենդանի մնացածների, որոնք բռնությամբ քշվում էին դեպի հեռավոր գերություն:

Սրանից հետո զգալով, որ քաղաքում մնալն իրենց համար վտանգավոր է, արաբները շուտով թողնում են այն և գերիներով ու մեծ ավարով կրկին քաշվում իրենց ճամբարը: Հայ և օտար մյուս հեղինակները արաբների կողմից Դվինի գրավման մասին իրենց հաղորդած տեղեկություններով համարյա ոչինչ նոր բան չեն ավելացնում Սեբեոսի և Ղևոնդի ասածների վրա[2]:

Մեզ ծանոթ սկզբնաղբյուրների հեղինակները համարյա միաբերան վկայում են, որ արաբների կողմից Դվինում սպանվածների ընդհանուր թիվը հասնում էր 12 000, իսկ գերի տարվածներինը՝ 35 000 մարդու[3]: Այս թվերն ընդհանրապես վկայում են աղետի մեծության մասին, բայց ճշգրիտ ու ստույգ լինել չեն կարող: Մեր

---

[1] Սեբեոսը իր աշխատության 11-րդ էջում արաբների առաջնորդին այսպես է անվանում, մինչդեռ, ինչպես տեսանք, Տարոնում նրան կոչում էին Աբդուլ-Ռահիմ: Պետք է ենթադրել, որ կամ վերջինս նույն Բուշան էր և կամ առաջինին ինչ-ինչ պատճառներով փոխարինել էր Բուշան:

[2] Սեբեոս, էջ 110:

[1] Ղևոնդ, էջ 9—10:

[2] Տե՛ս Անանիա Շիրակացի, ժամանակագրություն, (տե՛ս Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 398), Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 82, «Մովսես Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի», Մոսկվա, 1860, էջ 255, «Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի դրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 80—81, «Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն տիեզերական», Մոսկվա, 1861, էջ 93, Chronique siriaque De Denys de Tell-Mahre, „Bibliothe'que de lEcole des Hautes Etudes", Paris, 1895, էջ 6:

[3] Տե՛ս Սամվել Անեցի, էջ 80, De Denys de Tell-Mahre, էջ 6, Սեբեոս, էջ 110, Ղևոնդ, էջ 9, Ստ. Ասողիկ, էջ 120, Հովհ. Դրասխանակերտցի, էջ 82, Մովսես Կաղանկատվացի, էջ 255, Վարդան Արևելցին ցույց է տալիս 37 000 (տե՛ս Վարդան Բարձրբերդցի, էջ 93), Կիրակոս Գանձակեցի, Երևան, 1961, էջ 60—61:

կարծիքով դրանք լավագույն դեպքում կարող են վերաբերվել ոչ միայն քաղաքին, այլև նրա շրջակայքի բնակավայրերին, որոնք նույնպես պետք է ենթարկված լինեին այս արհավիրքներին: Հետագայում Ներսես III Տայեցի կաթողիկոսը (640—661) Դվինի գոհերի հիշատակին, նրանց թաղման վայրում կառուցել է տալիս մի եկեղեցի, որը Մաղաքիա Օրմանյանի կարծիքով՝ քաղաքի ս. Սարգիս եկեղեցին պետք է լիներ[1]:

Դվինը գրավելու, ինչպես նաև ընդհանրապես արաբների Հայաստան կատարած առաջին արշավանքի ժամանակի վերաբերյալ միջնադարյան հեղինակները միասնական տեղեկություններ չեն հաղորդում: Պատմիչների մեծ մասն այդ դեպքերի թվականները չի հիշատակում, իսկ մյուսներն էլ փորձում են դրանք որոշել այս կամ այն անհատի գահակալության և կամ մահվան ժամանակով: Բազմաթիվ հեղինակներից միայն Սամվել Անեցին, Իբն ալ-Ասիրը և Դիոնիսիոս Թել Մահարցին են որոշակիորեն հիշատակում վերոհիշյալ դեպքերի կոնկրետ թվականները: Այսպես, Իբն ալ-Ասիրն արաբների ներխուժումը Հայաստան (նա կոնկրետ հիշատակում է Չորրորդ Հայքը) Օսման Աբուլ-Ասի գլխավորությամբ և դրա հետ կապված դեպքերը շարադրում է հիջրայի տոմարով 19 թվականի տակ, որը համապատասխանում է մեր թվականության 640-ին[2], ասորական պատմիչ Դիոնիսիոս Թել Մահարցին Դվինի գրավումը և աղգաբնակչության կոտորածը վերագրում է 640—641 թվականներին[3], իսկ Սամվել Անեցին՝ 642 թվականին[4]: Սեբեոսը, Ստեփանոս Ասողիկը, Հովհաննես Դրասխանակերտցին և Վարդան Արևելցին հաստատում են, որ վերոհիշյալ դեպքերը տեղի են ունեցել Եղբի կաթողիկոսության ժամանակ, այսինքն՝ 640 թվականից ոչ ուշ, որովհետև Եղբի աթոռակալության վերջին թվականը 640-ն է: Հովհան Մամիկոնյանի և ուրիշների տվյալներով, արաբներն առաջին անգամ Հայաստան են ներխուժել Խոսրովի՝ այսինքն պարսից Խոսրով II Պարվեզի (590—628) մահվանից ութ տարի հետո[5], որը կլինի 636 թվականը: Եվ, վերջապես, Անանիա Շիրակացին և Մովսես Կաղանկատվացին ելակետ են ընդունում բյուզանդական կայսր Կոնստանս II-ին (642—668), ըստ որում առաջինն արաբների ար-

[1] Տե՛ս Մաղաքիա Օրմանյան, Ազգապատում, մասն Ա, Կոստանդնուպոլիս, 1913, էջ 708:

[2] Տե՛ս Իբն ալ-Ասիր, «Հանդես ամսօրյա», 1908 թ., № 2, էջ 48:

[3] Տե՛ս De Denys de Tell-Mahre, էջ 6:

[4] Տե՛ս Սամվել Անեցի, էջ 80:

[5] Տե՛ս Հովհան Մամիկոնյան, էջ 285, Սոփերք Հայկականք, էջ 43—44:



շավանքը դնում է Կոնստանսի թագավորության երկրորդ տարում, այն է՝ 643—644 թվականներին, իսկ վերջինը՝ վեցերորդ տարում՝ 647—648 թվականներին[1]: Այսպես, ուրեմն, ի մի բերելով վերևում ասածները, տեսնում ենք, որ արաբական արշավանքի և Դվինի գրավման համար տարբեր աղբյուրների կողմից մատնանշվում են տարբեր թվականներ՝ 636, 640, 640—641, 642, 643—644 և վերջապես՝ 647—648 թվականները:

Արաբական արշավանքի տարեթվի և Դվինը գրավելու ժամանակի որոշման հարցում գոյություն ունեն բազմաթիվ կարծիքներ ու բազմաթիվ ենթադրություններ, որոնք արվել են ինչպես հայ, այնպես էլ օտար ուսումնասիրողների կողմից: Այսպես, Մ. Չամչյանը, Բասմաճյանը և ուրիշներ արաբների առաջին արշավանքը Հայաստան վերագրում են 636 թվականին: Սրանց համար ելակետ է ծառայել Հովհան Մամիկոնյանի այն հիշատակությունը, ըստ որի արաբները Աբդուլ-Ռահիմի գլխավորությամբ Հայաստան են ներխուժել պարսից Խոսրով արքայի մահվանից (խոսքն այստեղ Խոսրով II Պարվեզի մասին է) ութ տարի հետո, այսինքն՝ 636 թվականին[2]: Սեն-Մարտենը[3], Տուռներիզը, Արսլան Գևորգը և Մորգանը, հավանարար հենվելով «Սոփերք Հայկականք»-ում[4] պահպանված հիշատակության վրա, որտեղ Աբդուլ-Ռահիմի ներխուժումը դրված է հայոց 88 թվականին, արաբների առաջին արշավանքի թվականը համարում են 639[5] (88+551=639 թ.): Իսկ Կ. Շահնազարյանը Դվինի Պատմության նախաբանում հայտնում է այն միտքը, թե Հայաստանը դեռևս 632 թվականից է ենթարկվել «անապատի որդիներ», այսինքն՝ արաբների հարվածներին[6]: Մեզ համար անհասկանալի է, թե հեղինակը ինչ փաստերի հիման վրա է նման պնդում անում:

Այս հարցում եղած տարակարծությունները, ճիշտ է, հիմնականում բխում են սկզբնաղբյուրների հակասական տեղեկություններից, բայց դրանց խճողման մեջ մեղավոր են նաև ուսումնասի-

[1] Տե՛ս Անանիա Շիրակացի, Ժամանակագրություն, էջ 398, Մովս. Կաղանկատվացի, էջ 255:

[2] Տե՛ս Հ. Մանանդյան, Արաբական արշավանքները Հայաստանում, տե՛ս նույնի՝ Մանր հետազոտություններ, Երևան, 1932, էջ 25:

[3] Տե՛ս M. J. Saint-Martin, Me'moires historiques et ge'ographiques sur l'Arme'nie, t. prior, Paris, 1818, էջ 336:

[4] Տե՛ս «Սոփերք Հայկականք», էջ 43-44:

[5] Տե՛ս Հ. Մանանդյան, Արաբական արշավանքները Հայաստանում, էջ 25:

[6] Տե՛ս «Արշաւանք արաբաց ի Հայս արարեալ Ղեւոնդ վարդապետի Հայոց», Փարիզ, 1857, էջ 11:

թողները։ Վերջիններս սկզբնաղբյուրների նկատմամբ, իրենց, կարելի է ասել, անտարբեր վերաբերմունքով, գլխավորի ու երկրորդականի միջ տարբերություն չդնելով և, որ ամենակարևորն է, տոմարական սխալ հաշվումներով կամ ուղղակի այդպիսի հաշվումներից խուսափելով, հարցի պատմությունը ծանրաբեռնել են միանգամայն ավելորդ ու անտեղի ենթադրություններով։

Առաջին անգամ Ղ. Ալիշանը և Համբարյանը, ուշադրություն դարձնելով Սեբեոսի այն վկայության վրա, որ Դվինի դրավումը տեղի է ունեցել Եղրի կաթողիկոսության ժամանակ, այն է՝ տրեհ ամսի 20-ին, ուրբաթ օրը, տոմարական հաշվումներով գտան, որ այն համապատասխանում է մեր, հուլյան տոմարով 640-ի հոկտեմբերի 6-ին[1]։

Ղ. Ալիշանի հաշվումներն ամենաճիշտն էին, դրա համար էլ նրա ցույց տված թվականն աստիճանաբար քաղաքացիություն ստացավ։ Հետագայում Ղ. Ալիշանի հետ անտարակուսելիորեն համաձայնվեցին նաև հիշյալ շրջանի պատմության հարցերով զբաղվող մասնագետները՝ ակադ. Հ. Մանանդյանը[2], պրոֆ. Լևոն[3], պրոֆ. Բ. Առաքելյանը[4], Աս. Շահնազարյանը[5] և ուրիշներ։ Ստորև կատարած մեր հաշվումները կրկին անգամ հաստատելով Ղ. Ալիշանի մատնանշած թվականի ճշտությունը, միաժամանակ հնարավորություն են տալիս մեզ որոշելու նաև այդ արշավանքի մոտավոր տևողությունը։

Հով. Դրասխանակերացին և Վարդան Արևելցին, լրացնելով Սեբեոսին և Ստ. Ասողիկին, մատնանշում են, որ Դվինի գրավումից անմիջապես հետո վախճանվեց Եղր կաթողիկոսը, որն աթոռակալեց տասը տարի[6]։ Մեզ հայտնի է, որ Եղրը կաթողիկոսական աթոռին բարձրացել է 630 թվականին, ուրեմն նրա պաշտոնավարության վերջին տարին կլինի 640-ը։ Եթե կարողանանք հաստատել, որ Եղրի մահվան թվականի, այսինքն հայոց 89 թվականի տրեհ 20-ը ուրբաթ օր է եղել, ուրեմն ինչպես Դվինի գրավման ժամանակը, այնպես էլ Եղրի մահվան թվականը կհաստատվի անվերապահ կերպով։

[1] Տե՛ս Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 407, 495։

[2] Տե՛ս Հ. Մանանդյան, Արաբական արշավանքները Հայաստանում, էջ 38—39։

[3] Տե՛ս Լևո, Հայոց պատմություն, հատ. 2-րդ, Երևան, 1947, էջ 314։

[4] Տե՛ս Բ. Առաքելյան, Հայաստանը արաբական տիրապետության առաջին շրջանում և հայերի պայքարն անկախության համար, էջ 66։

[5] Տե՛ս А. Шахназарян, Двин, էջ 64-65։

[6] Տե՛ս Հով. Դրասխանակերացի, էջ 82, Վարդան Բարձրբերդցի, էջ 93։



Հայտնի է, որ հայոց մեծ թվականի նավասարդի 2-ը համընկել է 552 թվականի հուլիսի 11-ին[1], որը հուլյան տոմարով եղել է հինգշաբթի օր[2]։ Նավասարդի մեկը նաև հինգշաբթի կլինի հայոց 8, 15, 22, 29, 36, 43 ...85 և այսպես յոթնական հաշված բոլոր մնացած թվականներին։ Հայոց 86 թվականին նավասարդի սկիզբը մեկ օրով արդեն առաջ ընկած կլինի, որովհետև տարին պարունակում է 365 օր կամ 52 շաբաթ և մեկ օր, այսինքն 86 թվականին կլինի ուրբաթ, 87 թվականին՝ շաբաթ, 88-ին՝ կիրակի և 89-ին՝ երկուշաբթի։ Եթե նավասարդի մեկից յոթնական հաշվենք դեպի առաջ, ապա երկուշաբթի կլինի նաև 89 թվականի տրեհ 16-ը, իսկ տրեհ 20-ը կլինի ուրբաթ օր[3], որը ներկա թվականով. կամ հուլյան տոմարով հաշված՝ ճիշտ և ճիշտ կհամապատասխանի 640 թվականի հոկտեմբերի 6-ին։ Այս նույն եղանակով հաշվելով, տրեհ 20-ը միշտ ուրբաթ է լինում նաև հայոց 89(640) թվականից և՛ դեպի ետ, և՛ դեպի առաջ հաշված յուրաքանչյուր յոթերորդ տարում, այսինքն՝ հայոց 75(625), 82 (633), 96(647), 103(654) թվականներին և այսպես շարունակ։ Հաշվումների այդ եղանակը, ինչպես տեսնում ենք, պիտական է, և նրա ու տվյալ դեպքում Սեբեոսի հիշատակության ճշտության նկատմամբ այլևս որևէ կասկած լինել չի կարող։ Ուրեմն, ինքնըստինքյան ամբողջովին մերժվում են արաբական առաջին արշավանքի համար առաջ քաշված մյուս բոլոր թվականներն ու ամսաթվերը[4]։

Դվինի գրավման մասին Սեբեոսի մատնանշած միանգամայն ստույգ և ճշգրիտ տարեթվով ու ամսաթվով կարելի է մոտավորապես որոշել նաև արաբների Հայաստան ներխուժելու սկիզբը։ Մեր կարծիքով արաբներն իրենց հարձակումը Հայաստանի վրա պետք է ձեռնարկած լինեին 640 թվականի գարնանը՝ ապրիլ-մայիս ա-

[1] Տե՛ս Ե. Այուրմեկյան, Տոմարագիտություն ընդհանուր եկեղեցական և քաղաքական, Վենետիկ, 1818, էջ 21։

[2] Տե՛ս Բ. Թումանյան, Հայ աստղագիտության պատմություն, Երևան, 1964, էջ 121։

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 118 և այլն։

[4] Այս հարցում հատկապես կոպիտ սխալ է կատարել արևելագետ էդ. Դյուլորիեն, որը, հակառակ աղբյուրների, արաբական առաջին արշավանքի տարեթիվը համարում է 642-ը և իր ասածը հաստատելու համար պնդում, որ այդ թվականի, այսինքն հայոց 91 թվականի տրեհ 20-ը ուրբաթ է, այնինչ այդ օրը կիրակի է (տե՛ս Բ. Թումանյան, Հայ աստղագիտության պատմություն, էջ 121), տե՛ս Edouard Duleurier, Recherches sur la Chronologie Arme'nienns technique et historique, t. I, Paris, 1959, էջ 230: Նույնանման սխալ թույլ է տրված նաև Ա. Մյուլլերի մոտ, տե՛ս նրա История ислама, т. 1, էջ 245, 274:

միսներին, որպեսզի մինչև աշուն կարողանային ետ վերադառնալ իրենց համար դեռևս անծանոթ երկրից։ Եվ ապրիլ-մայիս ամիսներից սկսած, հաղթահարելով հայերի կողմից այս ու այն տեղերում ցույց տված դիմադրությունը և տեղանքի դժվարությունները, նրանք հաղիվ կարող էին հոկտեմբերի սկզբներին հասնել Դվին։ Այլ կերպ ասած, արշավանքի ամբողջ տևողությունը 640 թվականի գարուն-աշունն էր։ Դրա համար էլ արաբների Չորրորդ Հայք ներխուժելու մասին վերևում բերված տեղեկությունները արար պատմիչ Իբն ալ-Ասիրը շարադրում է հիջրայի տոմարով 19 թվականի տակ[1], որն ընդգրկում է մեր թվականության 640-ի հունվարի 3-ից մինչև նույն թվականի դեկտեմբերի 20-ը[2]։ Ասորական պատմիչ Դիոնիսիոս Թել Մահարցու հիշատակությունը Սեբեոսից և Իբն ալ-Ասիրից տարբերվում է միայն նրանով, որ վերջինս հիշյալ դեպքերի ժամանակը վերագրում է 640—641 թվականներին[3]։

Այսպիսով, ամփոփելով վերևում մեր ասածները արաբների Հայաստան կատարած առաջին արշավանքի մասին, գալիս ենք այն եզրակացության, որ այդ արշավանքն սկսվել է 640 թվականի գարնանը Չորրորդ Հայք—Տարոն—Վանա լճի ավազան—Այրարատ ուղեգծով ապրիլ-մայիս ամիսներին։ Նույն թվականի հոկտեմբերի 2-ին արաբները հասնում են Դվին և, ինչպես Սեբեոսն է ասում, միայն հինգերորդ օրը, այսինքն հոկտեմբերի 6-ին գրոհելով քաղաքի վրա, գրավում են այն։ Վերևում կատարած մեր այս ճշգրիտ հաշվումներից հետո անհիմն պետք է համարել Մ. Օրմանյանի այն պնդումը, ըստ որի Դվինի պաշարումը տևել է, իբր, երեք ամիս՝ 640 թվականի հոկտեմբերի 6-ից մինչև 641 թվականի հունվարի 6-ը[4]։

Դվինը գրավելուց, կողոպտելուց և ավերելուց հետո արաբները Հայաստանում երկար չմնացին։ 640 թվականի աշնանը նրանք ահագին ավարով ու գերիների մեծ խմբով բռնեցին վերադարձի ճանապարհը, մոտավորապես այն ուղեգծով, որով եկել էին։ Եվ միայն այդ ժամանակ Թեոդորոս Ռշտունին փորձեց Կոգովիտում կըտրել նրանց ճանապարհը՝ ավարն ու գերիներին ազատելու համար, սակայն հաջողություն չունեցավ, որովհետև նրա փոքրաթիվ ուժե-

[1] *Տե՛ս* Իբն ալ-Ասիր, «Հանդես ամսօրյա», 1908 թ., № 2, էջ 48։

[2] *Տե՛ս* *И. Орбели*, Синхронические таблицы для перевода исторических дат по хиджре на европейское летосчисление, Ленинград, 1961, էջ 10։

[3] *Տե՛ս* *De Denys de Tell-Mahre*, էջ 6։

[4] *Տե՛ս* Մ. Օրմանյան, Ազգապատում, մասն Ա, էջ 704—705։



րը թշնամուց մեծ կորուստներ կրելով՝ պարտվեցին և մարտադաշտից հեռացան ձեռնունայն[1]։

Արաբական զորքերի Հայաստանից հեռանալուց հետո միայն Բյուզանդական կայսրությունը գործնական քայլերի դիմեց՝ իր դիրքերն այստեղ ամրացնելու համար։ Այդ նպատակով բյուզանդական իշխանություններն սկսեցին հովանավորել հայ աղնվականությանը և ընդարձակել նրա իրավունքները։ Այսպես, 641 թվականին Կոնստանդին III-ը (641) պաշտոնապես Հայաստանի սպարապետ հռչակեց Թեոդորոս Ռշտունուն, որը պարսկական իշխանության պայմաններում փաստորեն վարում էր նաև Արևելյան Հայաստանի զորքերի գլխավոր հրամանատարի պարտականությունները։ Թեոդորոս Ռշտունին այդ ժամանակ կայսրից ստացավ նաև թանկարժեք նվերներ ու պատրիկի բարձր տիտղոսը։ Իսկ 642 թվականին Կոնստանս II կայսրը իր գահակալությունը նշանավորեց նախկինում ուրիշների կողմից աքսորված հայ մեծամեծների նոր խմբին ազատություն շնորհելով, որոնց մեջ աղբյուրները հատկապես հիշատակում են վահան Խոռխոռունուն և վարազտիրոց Բագրատունուն ու նրա որդի Սմբատ Բագրատունուն[2]։ 642—643 թվականներին Թեոդորոս Ռշտունու և կաթողիկոս Ներսես Տայեցու խնդրանքով կայսրը կյուրապաղատության պաշտոնը Հայաստանում տվեց նույն Վարազտիրոցին, որը, սակայն, իր նշանակումն ստանալուց քիչ հետո վախճանվեց, իսկ նրա պարտականություններն սկսեց կատարել որդին՝ Սմբատը[3]։

Բյուզանդական կայսրության՝ այսպես ասած ուշադիր ու ընդառաջող վերաբերմունքը Հայաստանի ու հայերի նկատմամբ բխում էր ուժերի այն նոր փոխհարաբերություններից, որ առաջացել էր Մերձավոր Արևելքում՝ Արաբական խալիֆայության ասպարեզ գալուց սկսած։

Արաբական առաջին ներխուժումից հետո Հայաստանը դրվում էր ավելի մեծ վտանգի ու ամենօրյա սպառնալիքի տակ։

Ստեղծված այս նոր իրադրությունը ողջ բարդությամբ ավելի լավ էր պատկերացնում Թեոդորոս Ռշտունին՝ երկրի զինված ուժերի գլխավոր հրամանատարը։ Հայոց սպարապետն այս օրերին

[1] *Տե՛ս* Սեբեոս, էջ 110։

[2] *Տե՛ս* նույն տեղը, էջ 115—116։

[3] Վարազտիրոցը թաղվեց Դարույնքում, Բագրատունիների տոհմական գերեզմանոցում (Սեբեոս, էջ 117)։ Այստեղ էր թաղված նաև նրա հայրը՝ Սմբատ մարզպան Բագրատունին, վախճանված 616 թվականին (*տե՛ս* Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 495)։

դեռ որոշ հույսեր կապում էր Բյուզանդիայի և արևելյան պրովինցիաներում նրա ունեցած դինված ուժերի հետ: Սակայն անկախ Բյուզանդացիներից ակնկալվող օգնությունից, ելնելով 640 թվականի փորձից, Թեոդորոս Ռշտունին իր հույսը առաջին հերթին դնում էր սեփական ուժերի վրա: 640 թվականի արաբների պատճառած դառնությունները ասես է՛լ ավելի էին զգաստացրել քաջարի զորավարին, և նա այժմ գործադրում էր բոլոր հնարավոր միջոցները զանգի առաջն առնելու համար: Թեոդորոս Ռշտունու և նրա հավատարիմ զինակիցների ջանքերով կարճ ժամանակում Հայաստանի տարբեր մասերում կազմակերպվեցին զինվորական գնդեր ու ջոկատներ, որոնք եռանդուն կերպով վարժվում էին ռազմական արվեստի մեջ և իրենց հրամանատարների գլխավորությամբ հսկում Հայաստանի սահմանները:

642 թվականին Նեհավենդի ճակատամարտից և Սասանյանների պարտությունից հետո, երբ Պարսկաստանի տերիտորիայի զգալի մասն անմիջապես անցավ արաբների ձեռքը, խալիֆայության կողմից Հայաստանին սպառնացող վտանգն է՛լ ավելի մեծացավ: Արաբների արտակարգ հաջողությունները Պարսկաստանում անխուսափելի էին դարձնում նրանց զինված ուժերի նորանոր և սիստեմատիկ բնույթ կրող ներխուժումները նաև Հայաստան:

Արաբական երկրորդ արշավանքը Հայաստան տեղի ունեցավ հենց Պարսկաստանի մեծագույն մասն արաբների կողմից գրավելուց անմիջապես հետո:

Արաբական երկրորդ արշավանքի վերաբերյալ նույնպես սկզբնաղբյուրները հաղորդում են հակասական տեղեկություններ: Ըստ Սեբեոսի, այդ արշավանքը տեղի է ունեցել 643 թվականին, իսկ ըստ արաբական հեղինակների՝ 644—645 կամ 645—646 թվականներին: Միանգամայն տարբեր թվականներ են տալիս Ղևոնդն ու Ստեփանոս Ասողիկը: Ըստ առաջինի այդ արշավանքը տեղի է ունեցել Աբու-Բաքրի և Օմարի խալիֆայության 22-րդ տարում, այսինքն 653—654 թվականներին[1], իսկ ըստ երկրորդի՝ նրանց 36-րդ տարում՝ 667—668 թվականներին[2]: Թե ինչ աղբյուրների հիման վրա են Ղևոնդն ու Ասողիկը մատնանշում վերոհիշյալ թվականները, մեզ հայտնի չէ, սակայն մի բան պարզ է. նրանց ցույց տված թվականներն այնքան շատ են աղավաղված ու իրականությունից հեռացած, որ որևէ հիմնավոր եզրակացություն կազմելու համար նրանց վրա հենվել հնարավոր չէ: Դրա համար էլ այս հարցում, Սեբեոսից բացի, առանձին կարևորություն են ներկայացնում նաև արաբական հեղինակների ցուցմունքները: Սեբեոսի և արաբական հեղինակների տվյալների ուշադիր քննությունը, ինչպես կտեսնենք, մեզ բերում է այն համոզման, որ սրանց մեջ էական ու սկզբունքային տարբերություն չկա. Սեբեոսը խոսում է արշավանքի սկզբների մասին, իսկ արաբական հեղինակները՝ վերջին տարիների մասին, և փաստորեն Սեբեոսն ու օտար հեղինակներն իրար լրացնում են՝ ամբողջացնելով երկրորդ արշավանքի ժամանակագրությունը, որը, մեր համոզմամբ, ընդգրկում է 643—646 թվականները:

Վերևում մեր ասածները հաստատելու համար դիմենք սկզբնաղբյուրներին և քննենք նրանցից ամենակարևորների տեղեկություններն առանձին-առանձին:

Սեբեոսը, որ VII դարի պատմության ժամանակագրության հարցերում զուգակից չունի, իր Պատմության մեջ մի քանի անգամ, տարբեր առիթներով հիշատակում է արաբների երկրորդ արշավանքի ժամանակը: Ահա դրանցից առաջինը. խոսելով բյուզանդական կայսր Կոնստանս II-ի գահ բարձրանալու մանրամասնությունների և տուրիշների կողմից նախկինում աքսորված Մմբատ ասպետ Բագրատունու, Վահան Խոռխոռունու և մյուսների ազատության մասին, պատմիչն ասում է. «Եւ եղև ի գալ միւսում ամի եկն զաւրն Իսմայելի յԱտրպատական, և բաժանեցան յերիս: Առաջ մի յԱյրարատ, և առաջ մի ի Սեպհական գնդին կողմանս, և առաջ մի յԱղուանս»[1]: Ուրեմն պատմիչի ասած «Եւ եղև միւսում ամի...» արտահայտության տակ պետք է հասկանալ 643 թվականը, որովհետև հայտնի է, որ Կոնստանս II-ը գահ է բարձրացել 642 թվականին: Իսկ այս հիշատակության շարունակության մեջ, որտեղ մեր հեղինակը պատմում է արաբների կողմից Արծափ բերդի գրավման մասին, ուղղակի ասում է. «Եւ եղև յամին երկրորդի Կոստանդնի, յամսեանն հոռի, որ աւր ԻԳ էր ամսոյն, յաւուրն կիւրակէի ընդ առաւաւտս...»[2]: և այլն: Այսինքն այդ դեպքը տեղի է ունեցել Կոնստանս II-ի թագավորության երկրորդ տարում (նա թագավորել է 642—668 թվա-

[1] Տե՛ս Ղևոնդ, էջ 8:

[2] Տե՛ս Ստ. Ասողիկ, էջ 121—122:

[1] Սեբեոս, էջ 118:

[2] Սեբեոս, էջ 119, տե՛ս նաև Ղևոնդ, էջ 9: Արաբական երկրորդ արշավանքի սկիզբը որոշելու համար Սեբեոսից բերված այս միանգամայն վստահելի հիշատակությունների առնչությամբ միայն կարող է տարակուսանք առաջանալ այն պատճառով, որ Սեբեոսի գրքում Կոնստանս II-ի գահակալության և հայ գերիների ազատության մասին պատմելուց անմիջապես հետո, արաբների Ատրպատական մտնելու և Հայաստան ներխուժելու պատմությունը շարադրելու փոխարեն, հայոց պատկան կապն անջատվում է, որը, անշուշտ, արտագրող գրիչների սխալը պետք է լինի:

կաններին)՝ 643 թվականին, հոռի ամսի 23-ին, կիրակի օրը, վաղ առավոտյան: Այստեղ նույնպես, ինչպես Դվինի գրավման առիթով, անհրաժեշտ է տոմարական ճշգրիտ հաշվումներով ստուգել, թե 643 թվականի, այսինքն՝ հայոց 92 թվականի հոռի ամսի 23-ը իսկապե՞ս կիրակի է: Եվ միայն այդ ամսաթվի ստույգ լինելը կարող է հաստատել դեպքի՝ Կոնստանս II-ի թագավորության երկրորդ տարում, այսինքն՝ 643 թվականին կատարված լինելը: Այդ հաշվումը կատարելու համար նախ պետք է հուլյան 643 թվականը վերածել հայոց մեծ թվականի, ապա գտնել հայկական հիշյալ թվականի նոր տարվա սկիզբը, այսինքն՝ նավասարդի 1-ը և հետո ստուգել հոռի ամսի 23-ի ինչ օր լինելը: Այդ հաշվումները կատարելուց հետո արդեն հեշտ է հայոց թվականի ու ամսաթվի համապատասխանությունը հուլյան տոմարով որոշելը:

Մեր ստուգումները ցույց են տալիս, որ հայոց 89 թվականից (այսինքն՝ հուլյան 640-ից) մինչև 98 (հուլյան տոմարով 649) թվականը, տասը տարվա ընթացքում միայն 92 թվականի (հուլյան տոմարով 643-ի) հոռի ամսի 23-ն է կիրակի օր[1], իսկ 92 թվականի հոռիի 23-ը համապատասխանում է հուլյան տոմարով 643 թվականի օգոստոսի 10-ին[2]: Եթե այդպես է, ուրեմն դժվար չէ հետևցնել, որ արաբները Հայաստան պետք է ներխուժած լինեին Արծափը գրավելուց ամենաքիչը մի երկու ամիս առաջ, որպեսզի այդ ժամանակամիջոցում կարողանային հասնել մինչև Կոգովիտ, եթե նույնիսկ ճանապարհին հայերի կողմից որևէ լուրջ դիմադրության հանդիպած չլինեին: Այս դեպքում արաբների երկրորդ ներխուժումը Հայաստան կարող ենք մոտավորապես վերագրել հայոց 91 թվականի վերջերին կամ հուլյան տոմարով՝ 643 թվականի գարնանը, այսինքն՝ գրեթե այն նույն ժամանակը, երբ տեղի էր ունեցել նրանց առաջին արշավանքը, և միանգամայն հնարավոր է, որ արաբներն իրենց առաջին փորձից ելնելով էին ընտրել երկրորդ արշավանքի ժամանակը:

Արաբական պատմիչներ Ալ-Յակուբին ու Տաբարին վերոհիշյալ դեպքերը վերագրում են հիջրայի 24 թվականին, այսինքն՝ 644—645 թվականներին[3], իսկ Բալաձորին և Իբն ալ-Ասիրը՝ 25

[1] Տե՛ս Բ. Թումանյան, Հայ աստղագիտության պատմություն, էջ 118 և այլն:
[2] Տե՛ս նույն տեղը, էջ 121:
[3] Տե՛ս Ал-Якуби, Сборник материалов для описания местностей и племён Кавказа, т. 32, էջ 61, Տաբարի, «Հանդես ամսօրյա», 1905 թ., № 8, էջ 245:



թվականին, այսինքն՝ 645—646 թվականներին[1]: Այս վերջին թվականների մատնանշումը արաբական մի քանի հեղինակների կողմից ավելի է հաստատում այն հանգամանքը, որ դրանք սխալ կամ կասկածելի լինել չեն կարող: Մեր կարծիքով նրանց ու Սեբեոսի հիշատակությունների միջև ոչ թե հակասություն կա, այլ պարզապես երկու աղբյուրներն էլ ի նկատի ունեն միևնույն արշավանքը, միայն այն տարբերությամբ, որ հայ հեղինակը պատմում է արաբների երկրորդ արշավանքի սկզբնական շրջանի դեպքերի մասին, իսկ արաբները, ընդհակառակը, խոսում են նաև հետագա տարիների գործողությունների մասին:

Այսպիսով, արժանահավատ աղբյուրների տեղեկությունների հիման վրա մեր կատարած հաշվումներից հետո, երկրորդ արշավանքի ժամանակի վերաբերյալ կարելի է անել այսպիսի հետևություն. արաբները երկրորդ անգամ Հայաստան են ներխուժել 643 թվականի գարնանը և երեք ու կես տարի շարունակ երկիրն ասպատակելուց հետո ետ են քաշվել իրենց սերիտորիան 646 թվականի վերջերին:

Արաբական այս արշավանքի ժամանակի հարցում նույնպես ուսումնասիրողների միջև գոյություն ունի անհամաձայնություն[2]: Վերևում մեր կատարած հաշվումներից ու ստուգումներից հետո կարծում ենք, որ 643—646 թվականներն ավելի հիմնավոր են:

Արաբներն իրենց երկրորդ արշավանքը ևս սկսեցին Հայաստանի հարավային սահմաններից: Այս անգամ, ինչպես երևում է, նրանք իրենց տրամադրության տակ ավելի մեծ ուժեր ունեին, որովհետև Հայաստան մտնելուց հետո նրանց զորքերը բաժանվեցին մի քանի մասերի և սկսեցին առանձին-առանձին մարտական գործողություններ ծավալել Հայաստանի ու Անդրկովկասի տարբեր կողմերում: Արաբական զորամասերից մեկն անմիջապես շարժվեց դեպի Ազվանից աշխարհը, իսկ մեկ ուրիշը վաստուրականի վրայով մտավ Այրարատ: Սեբեոսն ու Ղևոնդը բավական մանրամասնությամբ նկարագրում են հատկապես այս վերջին զորամասի գործողություններն Այրարատում և հարևան շրջաններում:

[1] Տե՛ս Баладзори, Книга завоевания стран, էջ 25, Իբն Ալ-Ասիր, «Հանդես ամսօրյա», 1908 թ., № 2, էջ 48:
[2] Ղ. Ալիշանը երկրորդ արշավանքի տարեթիվը համարում է 646—647 թթ. (տե՛ս Այրարատ, էջ 408), Մ. Օրմանյանը՝ 643 թ. (տե՛ս Ազգապատում, մասն Ա, էջ 710), Հ. Մանանդյանը՝ 642—643 թթ. (տե՛ս Արաբական արշավանքները Հայաստանում, էջ 57): Վերջինիս հետևելով, այդ սխալը կրկնել ենք նաև մենք 1953—1963 թթ. հրատարակած մեր մի քանի աշխատություններում:



1287—4

Արաբական երկրորդ արշավանքի նախօրյակին Բյուզանդական կայսրությունը որոշ չափով հոգ էր տարել իր դիրքերը Հայաստանում ամրացնելու համար: Կոնստանս կայսրը հավանաբար 642 թվականին, Սմբատ Բագրատունու նշանակման ժամանակից սկսած, Հայաստան էր ուղարկել բավականաչափ ստվար մի բանակ, որի կազմը, Ղևոնդի չափազանցված վկայությամբ, հասնում էր 60 000 մարդու: Բյուզանդական զորքերը, որոնց առաջնորդում էր զորավար Պռոկոպիոսը, տեղավորվել էին Արտազից արևմուտք՝ Բաղուձորի և Մարդուցայքի շրջաններում[1]: Թվում էր, որ այսպիսի պատասխանատու պահին հայկական և բյուզանդական հրամանատարությունների միջև պետք է գոյություն ունենար համերաշխություն և գործողությունների միասնություն: Սակայն իրականում այդպես չէր: Բյուզանդական զորավար Պռոկոպիոսն այստեղ իրեն պահում էր խիստ գոռոզ ու մեծամիտ: Նա ոչ միայն հաշվի չէր առնում Թեոդորոս Ռշտունուն ու նրա կարծիքը, այլև, պարծենալով իր զորքերի թվական մեծությամբ, արհամարհում էր հայոց սպարապետին, դիմելով նույնիսկ անձնական վիրավորանքների ամենածայրահեղ ձևերին: Սակայն, անկախ դրանից, Թեոդորոս Ռշտունին իր անձնական նախաձեռնությամբ հսկայական միջոցներ ձեռնարկեց երկիրն ամրացնելու ուղղությամբ: Նա կարճ ժամանակամիջոցում կարգի բերեց ու ամրացրեց Հայաստանի բերդերն ու ամրոցները, դրանց պաշտպանությունը հանձնելով քաջ ու վրատահված զինվորականների, կազմակերպեց տեղական ուժերն ու նրանց դրեց մարտական դրության մեջ:

Այրարատ շարժվող արաբական զորամասերից մեկը, որի զինվորների թիվը, ինչպես Ղևոնդն է հաստատում, մոտ տասը հազարի էր հասնում, դիմում է ուղիղ դեպի բյուզանդական զորքերի ճամբարը: Եվ մինչդեռ պարծենկոտ Պռոկոպիոսն անհոգ ու հանգիստ նստած էր իր ճամբարում, Թեոդորոս Ռշտունին, իմանալով արաբների մտադրությունները, իր մարդկանց միջոցով այդ մասին անմիջապես տեղեկացնում է նրան: Սակայն վերջինս նախադուշական միջոցներ ձեռք առնելու և իր զորքերին մարտական վիճակի բերելու փոխարեն շարունակում է անտարբեր վերաբերվել իրադրությանը: Հայոց սպարապետը, հասկանալով, որ հույների անտարբերությունը կարող է շատ ծանր հետևանքներ ունենալ նախ և առաջ Հայաստանի ու հայ ժողովրդի համար, իր հաղորդած լուրը նորից է կրկնում, իսկ ապա անձամբ է գնում բյուզանդական զորակայանը: Այստեղ հույն զորավարը ոչ միայն հարկ չի համարում լսել նրան, այլև հանդգնում է իր մոտից հեռացնելու անվանի զորավարին:

Բյուզանդական զորակայանից հեռանալուց հետո Թեոդորոս Ռշտունին անմիջապես դիմում է վճռական գործողությունների: Նա իր զորագնդերով դարանակալում է Մարդուցայքից Կոգովիտ տանող ճանապարհին եղբարբ Սարակ[1] կոչվող փոքրիկ լեռան մոտ, որտեղով պետք է անցնեին արաբական զորքերը: Եվ երբ արաբներն ամբողջությամբ գտնվում էին մի կիրճի մեջ, հայերը, կտրելով նրա ելքն ու մուտքը, սկսեցին շեշտակի հարվածներ տեղալ թշնամու վրա: Անակնկալի եկած արաբները ձեռնամարտի մեջ այլևս չկարողացան իրենց տիրապետել և պարտվեցին, իսկ հայերը, վերցնելով ավարը, արագորեն քաշվեցին դեպի Գառնիի կողմերը:

Հայերի այս համարձակ գործողությունները կարծեք զրգռում են բյուզանդացիների ինքնասիրությունը: Շուտով նրանց զորամասերից մի քանիսը հարձակման են անցնում: Սակայն տեղի ունեցած ճակատամարտում նրանք պարտվում և ահագին զոհեր տալով, կրկին նահանջում են իրենց ճամբարը՝ Մարդուցայք: Ղևոնդը հետևյալ ձևով է նկարագրում այս դեպքերը. «Եւ գունդ մի հարեալ ասպատակէին ընդ գաւառն Արտազ ի վերայ զօրավարին Յունաց, որում անուն էր Պռոկոպ, որ էր բանակեալ ի գաւառին Կոգովտի ի սահմանս Բաղուձորոյ և Մարդուցայից. որում իրաւունք եղեալ իշխան Թէոդորոս, որ էր յազգէն Ռշտունեաց՝ ազդէր զօրավարին Պռոկոպայ, «եթէ զօր հինին Իսմայէլի զարթուցեալ գայ ի վերայ մեր»:

«Իսկ նա ի բազմութիւն զօրացն ապաստանեալ և ոչ յԱստուած, որ յաջողէ զպատերազմ, ոչ ինչ գթէր զբանս իշխանին Հայոց: Եւ նա մտմտեալ ընդ կորուստ աշխարհիս Հայոց և ընդ ծուլութիւն զօրավարին՝ ոչ ունէր ժոյժ, այլ մտեալ երկրորդէր և երրորդէր զբանն: Եւ բարկացեալ զօրավարին ի վերայ իշխանին՝ ձգէր զվարզն

[1] Մարդուցայքը, ըստ Ն. Ադոնցի, նույն Մարդաստան կամ Սեպհական դնդի երկիր կոչվող շրջանն է, որը գտնվում էր Վասպուրականի և Այրարատի սահմանում, Արտազից արևմուտք: 591 թվականի պայմանագրով Մարդուցայքը մտնում էր Արևմտյան Հայաստանի մեջ և կազմում նրա արևելյան սահմանամերձ շրջանը (տե՛ս Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 319, 417):

[1] Սարակ հայերենում նշանակում է փոքրիկ լեռ: Եղբարբ Սարակի ճկրիտ տեղադրությունն անորոշ է: Ք. Ավդալբեկյանը նույնացնում է Փավստոս Բյուզանդի հիշատակած եղջերք լեռան հետ, իսկ Հ. Մանանդյանը գտնում է, որ այդ լեռը պետք է գտնված լինի Մարդուցայք-Կոգովիտ ճանապարհների վրա (տե՛ս Հ. Մանանդյան, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, Երևան, 1936, էջ 161): Ակնհայտ է, որ Մանանդյանի տեսակետն ավելի հավանական է:

որ ի ձեռին գհետ նորա։ Եւ սրամտեալ Թէոդորոս՝ ելանէր յերեսաց նորա, և նոյնժամայն հրամայէր զօրացն, որ ընդ իւրով իշխանութեամբն էին, «վառեցարուք, ասէ, և ելէք ընդդեմ Իսմայելի»։ Եւ նոքա հեծեալ յերիվարս իւրեանց՝ դարանամուտ եղեն ի սարակն, որում Եղբարսն կոչէին. և կալեալ զառաջս կրճիցն՝ զբաղումս ի նոցանէ սատակէին. և առեալ զկապուտ անկելոցն՝ հատուածեալ ի ղօրավարէն գնացին ի գաւառն Դառնի։ Հրաման եւս ապա և Պոռկոպն իւրում զօրուն ելանել ի վերայ Թշնամեացն. յորոց վերայ հեղեալ զօրն Իսմայելի՝ հարկանէին՝ զմեծ մասն Յունաց, և զայլսն փախստական արարեալ անցուցանէին ընդ բանակն իւրեանց. և ինքեանք դարձեալ ի բանակն նոցա հանդչէին։ Եւ ասեն լինել զթիւ զօրացն Յունաց աւելի քան զվեց բիւր արանց, և զԻսմայելացիսն նուազ քան զբիւր մի արանց»[1]։ Ղևոնդի պատմածից պարզ կերպով երևում է, որ կռիվը Եղբարք Սարակ լեռան մոտ սկզբում տեղի է ունեցել հայերի ու արաբների միջև։ Հայերը, հանկարծակի հարձակմամբ լուրջ հարված հասցնելով Թշնամուն, իրարանցում են առաջացնում նրա շարքերում և ավարը վերցնելով՝ հեռանում։ Դրանից հետո կռիվը շարունակում են բյուզանդացիները, որոնք, սակայն, հաջողություն չեն ունենում և, ծանր պարտություն կրելով, հարկադրված են լինում կրկին քաշվելու իրենց զորակայանը։ Արաբական վերոհիշյալ զորաբանակը, ինչպես հաստատում է Ղևոնդը, այլևս Հայաստանում չի մնում և բավարարվելով մինչ այդ ձեռք բերած ավարով ու գերիներով, հեռանում է դեպի Արաբիա։ Այս բոլորը մենք, ելնելով Ղևոնդի վկայություններից, վերապատմեցինք ցույց տալու համար, որ ճիշտ կլինի այսուհետև այս ճակատամարտը կոչել Եղբարք Սարակի, ինչպես պատմիչն է անում, և ոչ Մարդուցայքի, որը սխալ կերպով մտել է գիտական գրականության մեջ։

Սեբեոսի և Ղևոնդի հետագա վկայություններից երևում է, որ Այրարատյան աշխարհում այդ ժամանակ գործում էին արաբական ուրիշ զորամասեր ևս, որոնց հետ հայերը դեռ պետք է գործ ունենային։ Արաբական հիշյալ զորքերը հարավից, Վասպուրականի վրայով հասել էին մինչև Արաքսի միջին հոսանքի շրջանը և Արտազի ու Մարդաստանի կամ, ինչպես Սեբեոսն է անվանում, Սեպհական գնդի երկրով ներխուժել Արարատյան հովիտը։ Սակայն Այրարատի ազգաբնակչությունը, որն առաջին արշավանքի ժամանակ ամենից շատ էր տուժել, այս անգամ ոչ միայն անակնկալի չեկավ, այլև, օգտագործելով իր բոլոր հնարավորությունները, պաշտպանվեց և պարտության մատնեց Թշնամուն։

[1] Ղևոնդ, էջ 7—8, տե՛ս նաև Ստ. Ասողիկ, էջ 119—120։



Արաբներն Այրարատում իրենց առաջին գործողությունները ձեռնարկում են Երևանի բերդի դեմ, որը, սակայն, գրավել չկարողանալով, հարկադրված ետ են քաշվում։ Հայկական մատենագրության մեջ Երևանի մասին առաջին հիշատակություններից մեկը այս է, որը և ավելորդ չենք համարում մեջ բերել նույնությամբ։ «Եւ եղև ի չալ միւսում ամի (643 թ.—Ս. Մ.-Բ.) եկն զաւրն Իսմայելի յԱտրպատական, և բաժանեցան յերիս։ Առաջ մի յԱյրարատ, և առաջ մի ի Սեպհական գնդին կողմանն, և առաջ մի յԱզուանս։ Արդ՝ որք ի կողմանս Սեպհական գնդին՝ արշաւեալ սփռեցան և հարեալ զամենայն կողմանն զայնոսիկ սրով սուսերի, առին զաւար և զգերութիւն։ Եւ եկին ժողովեցան ի յԵրևան, և մարտեան ընդ բերդին, և ոչ կարացին առնուլ»[1]։ Երևանում անհաջողության մատնվելուց հետո արաբական հրոսակախմբերը հարձակվում են Որդպուրի վրա[2], որտեղ նույնպես արժանի հակահարված ստանալով՝ ստիպված քաշվում են դեպի Կոգովիտ ու կանգ առնում Արծափ նշանավոր բերդի մոտ։ Արծափը Կոգովիտի կենտրոն Դարույնքի մատույցներում գտնվող հայտնի ամրություններից մեկն էր, և թեև հայերն այստեղ քիչ ուժեր ունեին, այնուամենայնիվ նրանք կարողանում են հերոսաբար ետ մղել արաբների բոլոր գրոհները և մեծ կորուստներ պատճառել նրանց։ Սակայն այս վիճակում հակառակորդի գերակշիռ ուժերին երկար դիմադրել հնարավոր չէր։ Դրա համար էլ բերդականներից մի քանի հոգի Կախանակատուց կոչվող բարձունքի կողմից աննկատելիորեն իջնում և գնում են Դարույնք՝ օգնություն բերելու համար։ Սմբատ Բագրատունին, որը գտնվում էր այդտեղ, նրանց տալիս է ընդամենը քառասուն մարդ։ Հայ զինվորականները գիշերով կրկին վերադառնում են Արծափ։ Սակայն, ինչպես երեվում է, նրանց վերելքը դեպի բերդը նկատվում է արաբների կողմից և վերջիններս, գտնելով գաղտնի մուտքի ճանապարհը, իրենք էլ են սկսում հայերի հետքերով գաղտագողի վեր բարձրանալ։ Գիշերով հասնելով բարձունքին, արաբները կարողանում են անաղ-

[1] Սեբեոս, էջ 118։

[2] Որդպուր բերդն ու բնակավայրը գտնվում էր Բերկրի-Կոգովիտ ճանապարհի վրա։ Ակադեմիկոս Հ. Մանանդյանի և պրոֆ. Ս. Երեմյանի կարծիքով այն կարելի է նույնացնել Պատմիգերյան քարտեզի Արտաշատ-Պարեսպակ ուղեգծում մատնանշվող Կատիպի ճանապարհային կայանի հետ։ Իսկ Կատիպին Հ. Մանանդյանը տեղադրում է այժմ Թուրքիայի Բայազետի շրջանի Տապարիզ (ավելի ճիշտ կլինի՝ Թափարիզ) գյուղի մոտ, որն ըստ ռուսական բանակի գլխավոր շտաբի տեղագրական քարտեզի՝ գտնվում է Բայազետից 12 կմ հարավ-արևմուտք։ Տե՛ս Հ. Մանանդյան, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 148—152, ինչպես նաև ռուսական բանակի գլխավոր շտաբի կազմած Թուրքիայի տեղագրական քարտեզը։

մուկ կերպով ոչնչացնել հայ ժամապահներից տասը հոգու և իրենց գրաված դիրքերը պահել մինչև առավոտ: Եվ այսպես, 643 թվականի օգոստոսի 10-ին[1], կիրակի օրը վաղ առավոտյան արաբական զորքերն աղմուկ-աղաղակով մի քանի ուղղություններով սկսում են դրոհել Արծափի վրա: Կարճատև ու արյունահեղ կռվից հետո արաբները, շնորհիվ միայն իրենց թվական գերակշռության, հաղթում են հայերին ու գրավում բերդը: Այնուհետև սկսվում է ավերածությունն ու կոտորածը: Արաբների ձեռքն են ընկնում բերդում ապաստանած մեծ թվով կանայք ու երեխաներ, որոնց անխուսափելիորեն սպառնում էր ոչնչացում կամ տաժանակիր աքսոր: Սակայն արաբները դեռ չէին վերջացրել իրենց հաղթանակի վայելքը, երբ հաջորդ առավոտյան անսպասելիորեն անձամբ Արծափ հասավ հայոց սպարապետ Թեոդորոս Ռշտունին իր 2000 խիզախ հեծյալներով: Հայ մարտիկները ուղղակի երթից գրոհ տվեցին սանձարձակ թշնամու վրա, որի թիվը երեք հազար էր: Թեոդորոս Ռշտունին շեշտակի հարվածով նույն օրը ևեթ կարողանում է գլխովին ջախջախել թշնամուն, խլել ավարն և ազատել բոլոր գերիներին: Արաբներից միայն շատ քչերին է հաջողվում փախչել ու թաքնվել մոտակա շամբուտներում: Սպանվածների մեջ էին նաև արաբական զորագնդի երկու հրամանատարները՝ Օթմանը և Ոգոման: Արծափի մոտ տեղի ունեցած կռիվներն այսպես է նկարագրում Սեբեոսը. «Եւ եղև յամին երկրորդի Կոստանդնի, յամսեանն Հոռի, որ աւր իԳ էր ամսոյն, յաւուր կիւրակէի քնդ առաւաւտս՝ ճչեցին Իսմայելացիքն ի բերդին վերջոյ և առաջոյ, և հարին զնոսա սրով սուսերի: Եւ բազումք գահավէժ լեալ սատակէին: Եւ զկանայս և զմանկունս իջուցին ի բերդէն, կամէին սատակել. և ոչ գոյր թիւ գերւոյն, և անասուն պաճարացն բազում յոյժ: Եւ եղև ի վաղիւ առաւաւտուն եկն եհաս ի վերայ նոցա զաւրավարն Հայոց, և եհար զնոսա անհուն կոտորածով: Եւ էին նոքա երեք հազար ընտիր սպառազէնս յամենայն զաւրացն Իսմայելի, և ոչ ոք վերծեալ ի նոցանէ. բայց սակաւ ճապաղելոք հետևվակք երթեալ ամրացան ի շամբին... և մեռան Բ իշխանքն Իսմա-

[1] Ըստ Սեբեոսի՝ հոռի ամսի 23-ին, կիրակի օրը, որը համապատասխանում է 643 թվականի օգոստոսի 10-ին (տե՛ս Բ. Թումանյան, Հայ աստղագիտության պատմություն, էջ 119, 121): Ըստ Մ. Օրմանյանի՝ տրեի 23-ին, որը հավանաբար տպագրական սխալ է (տե՛ս Ազգապատում, մասն Ա, էջ 710): Ըստ Հ. Մանանդյանի՝ 650 թվականի օգոստոսի 8-ին, որը թեև նույնպես կիրակի է, բայց Արծափի դեպքերի հետ ոչ մի կապ չունի (տե՛ս նրա Արաբական արշավանքները Հայաստանում, էջ 53):



յելի, Աւթման և Ոգոման»[1]: Այս իրադրությունը բավականին պատկերավոր ձևով է վերարտադրել նաև Ղևոնդը, որը ավելորդ չենք համարում մեջ բերել նույնությամբ. «...ամենատեսն Աստուած,— ասում է պատմիչը,—...առաքէր ի վրէժխնդրութիւն չարեացն զոր գործեցին՝ զիշխանն Թէոդորոս. որոյ երագաթեւ յարձակմամբ իբրև զխոյանալ արծուոյ հասեալ ի վերայ հինին եկելոյ, և ընդ նմա արք Ս վառեալք զինու, վաղվաղակի հասեալք՝ սատակէին զթշնամիսն իբրև արս Գ-ի, և զկապեալսն արձակէին. և զսակաւ մնացորդսն թշնամեաց փախստական արարեալ՝ դարձուցանէին զգերեալսն. և զաւար և զկապուտ թշնամեացն ժողովեալ՝ դարձան խնդութեամբ...»[2]: Ճակատամարտում հայերը թշնամուց խլեցին նաև սպառազին ռազմավար, պատերազմական հանդերձանք, զենքեր, ձիեր և այլն: Թեոդորոս Ռշտունին ձեռք բերված ավարից հարյուր ընտիր նժույգներ ուղարկեց Կոնստանս կայսրին որպես նվեր, որն ընդունվեց մեծ հաճությամբ:

643 թվականին Այրարատում գործող արաբական մյուս զորամասերը, որոնք ասպատակելով հասել էին նույնիսկ մինչև Տայոց աշխարհը, Վրաստան ու Աղվանք, հեռավոր արշավանքից վերադառնալուց հետո, շարժվեցին Նախիջևանի վրա, որը արաբական մի այլ զորաբանակ երկար ժամանակ պաշարել էր, բայց չէր կարողանում գրավել: Արաբական միացյալ ուժերի հարձակումն էլ ապարդյուն անցավ: Նախիջևանցիները հերոսաբար պաշտպանվում և հաջողությամբ ետ էին մղում արաբների բոլոր գրոհները: Նախիջևանը գրավել չկարողանալուց հետո արաբները, կատաղած, ամբողջ ուժով հարձակվեցին քաղաքից ոչ հեռու գտնվող Խրամ բերդի վրա: Այստեղ նրանք դժբախտաբար հաջողություն ունեցան: Խրամը գրավվեց: Դրանից հետո արաբները մեծ թվով կանանց ու երեխաների ոչնչացրեցին ու մնացածներին գերի տարան իրենց հետ[3]:

643 թվականի կռիվների ժամանակ բյուզանդական զորքերի կրած պարտությունն այն աստիճան ընկճեց ու գցեց առանց այն էլ այդ ժամանակ ընկած նրանց հեղինակությունը, որ մինչև 646 թվականը բյուզանդացիներն այլևս որևէ մասնակցություն չկարողացան ունենալ հայ-արաբական կռիվներին: Եվ թեև բյուզանդացիների հեռանալուց հետո պատերազմի ամբողջ ծանրությունն իրենց վրա վերցրեցին հայերը, այնուամենայնիվ նրանք կարողացան

[1] Սեբեոս, էջ 119:

[2] Ղևոնդ, էջ 11—12, տե՛ս նաև «Պատմութիւն Տաճկաց Բազրատունւոց», էջմիածին, 1921, էջ 29—30, Ստ. Ասողիկ, 121—122:

[3] Տե՛ս Սեբեոս, էջ 119—120:

միայնակ, առանց որևէ օգնության, մի քանի ճակատամարտերում հաղթանակ տանել ու արաբներին պարտության մատնել:

Արծափի մոտ տեղի ունեցած ճակատամարտից հետո դեպքերի հետագա ընթացքը Հայաստանի տերիտորիայում, կապված արաբական զորքերի գործողությունների հետ, դժբախտաբար ոչ բավարար չափով է արտացոլված ինչպես հայկական, այնպես էլ արաբական աղբյուրներում: Դրա համար էլ 643-ից մինչև 646 թվականի պատմական անցքերի պատկերն ու նրանց հաջորդականությունն այնքան էլ պարզ չէ: Արաբ հեղինակներ Ալ-Յակուբիի, Բալաձորիի, Տաբարիի և Իբն ալ-Ասիրի համարյա նույնանման տեղեկություններից պարզվում է, որ արաբական զորքերի ու զինված հրոսակախմբերի հարձակումներն ու ասպատակությունները Հայաստանում այնուհետև շարունակվել են նաև 643 թվականից հետո մի քանի տարի անընդհատ, մինչև 646 թվականը, և այդ գործողությունները պլանավորվել ու կազմակերպվել են արաբական իշխանությունների ու զորահրամանատարության գիտությամբ և առաջադրանքով: 643—646 թվականներին դեպի Հայաստան կատարված արշավանքները հիմնականում տեղի են ունենում Հայաստանի և՛ արևելյան, և՛ արևմտյան կողմերից և այդ արշավանքների մեջ կարևոր դեր էին կատարում Աղվանքի տերիտորիայում գտնվող արաբական ուժերը:

Բալաձորիի և Տաբարիի վկայություններից երևում է, որ 645—646 թվականներին Հայաստանն ու Աղվանքը գտնվում էին ապըստամբած վիճակում և չէին կատարում արաբների հետ կնքած խաղաղության ու հարկատվության պայմանագրերը: Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, Օսման խալիֆը Աղվանքից ետ է կանչում Ուտբային և նրա փոխարեն զորահրամանատար է նշանակում Վալիդ իբն-Ուկբային: Վերջինս իր ենթականերից Սալման իբն-Ռաբիա-Բահլիին 12 000 զինվորով ուղարկում է Հայաստան, իսկ ինքը հրամանատարներից մեկ ուրիշի՝ Աբդուլահի հետ միասին Մուղանից շարժվելով՝ ռազմական գործողություններ է ձեռնարկում Աղվանքի ապստամբների դեմ: Բալաձորին հետևյալն է պատմում հիշյալ դեպքերի մասին. «...երբ խալիֆ դարձավ Օսման իբն-Աֆֆանը... նա ետ կանչեց Ուտբային Աղվանքից և նշանակեց Վալիդ իբն-Ուկբա իբն-աբու-Մուայտին, որի ժամանակ Աղվանքի բնակիչները խախտեցին խաղաղության պայմանագիրը: Այդ բանն ստիպեց Վալիդին 25 թվականին (645—646) արշավանք ձեռնարկել նրանց դեմ, առաջապահ գնդերի գլուխ ունենալով Աբդուլահ իբն-Շիբլ ահմասիտին: Եվ հարձակվեց Վալիդը Մուղանի բնակիչների



վրա»[1]: Իսկ Տաբարին Բալաձորիին լրացնում է նրանով, որ Աղվանքի հետ հիշատակում է նաև Հայաստանը, որը նույնպես, արաբների հետ ունեցած պայմանագիրը չկատարելու համար, ենթարկվեց Վալիդի հարձակմանը: «Այդ թվականին (646),—ասում է Տաբարին,—Վալիդ իբն-Ուկբան արշավանք ձեռնարկեց Աղվանք ու Հայաստան, քանի որ նրանց բնակչությունը հրաժարվեց կատարել այն պայմանները, որ մուսուլմանները կնքել էին խաղաղությամբ»[2]: Արաբ հեղինակները այնուհետև հաստատում են, որ Սալման Բահլին կողոպտում, ավերում է Հայաստանը և նրա բնակիչների մի մասին սպանելուց ու գերելուց հետո ետ է վերադառնում Վալիդի մոտ: Տաբարիի վերջին հիշատակության մեջ ուշագրավ է նաև հայերի հետ նախկինում կնքված պայմանագրի ակնարկումը, որի չկատարումով էլ արաբ հեղինակը բացատրում է նոր ներխուժման շարժառիթները Հայաստան: Կարծում ենք, որ Տաբարիի ակնարկը վերաբերում է դեռևս առաջին արշավանքի ժամանակ հայերից հարկ ստանալու վերաբերյալ արաբների կնքած պայմանագրին, որի մասին կոնկրետ հիշատակություն ունի Իբն ալ-Ասիրը, և որը մենք մեջ ենք բերել առաջին արշավանքի կապակցությամբ:

643 թվականին Կոգովիտում բյուզանդական զորքերի կրած խայտառակ պարտությունից հետո, հասկանալի պատճառներով, Թեոդորոս Ռշտունու և բյուզանդական զորահրամանատար Պռոկոպիոսի փոխհարաբերությունները գնալով պետք է վատանային: Այս հանդամանքը երկու զինվորականների անձնական զգացմունքների ու փոխադարձ հակակրանքի արդյունքը չէր միայն: Բանն այն է, որ այդ ժամանակ արդեն Բյուզանդիան սկսել էր հայոց եկեղեցու և դավանանքի նկատմամբ ցուցաբերել բացահայտ անբարյացակամ վերաբերմունք: Կոնստանսը 646 թվականին Հայաստանի իշխան է նշանակում ոմն Թոմայի: Սա 646 թվականին գալով Հայաստան, նախ և առաջ փորձում է համերաշխություն հաստատել Պարսկաստանում գտնվող արաբների հետ: Դրա համար նա հավատարիմ մի քանի ազնվականների հետ միասին գնում է արաբների մոտ և նրանց հետ կնքում խաղաղության դաշն: Սեբեոսի հավաստի հիշա-

---

[1] Տե՛ս *Баладзори*, Книга завоевания стран, Баку, 1927, էջ 25:

[2] Տե՛ս *Табари*, Институт истории и философии АН Азерб. ССР, фонд № 577, էջ 14, թարգմ. պրոֆ. Պ. Կ. Ժուզեի: Տաբարի, «Հանդես ամսօրյա», 1905, № 8, էջ 245, Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին, թարգմ. Բ. Խալաթյանցի, տե՛ս նաև Ալ-Յակուբի, Сборник материалов для описания местностей и племён Кавказа, т. 32, էջ 61, Իբն ալ-Ասիր, «Հանդես ամսօրյա» 1908, № 2, էջ 48:

տակութիւնից երևում է, որ արաբների համար առանձնահատուկ հետաքրքրութիւն է ներկայացրել Թեոդորոս Ռշտունու անձնավորութիւնը, և նրանք կարողացել են կաշառքի ու ահադին նվերների միջոցով Թոմային տրամադրել հայոց սպարապետի դեմ: Ահա թե ինչ է պատմում այդ մասին Սեբեոսը. «...յամին հինգերորդի թագաւորութեան իւրոյ (Կոնստանս II-ի—Ս. Մ.-Բ.) ...արձակեաց ի Հայս այր ոմն իշխան, անուն Թոմա: Սա եկեալ ոչ կամէր եղծանել զուխտն, որ ի մէջ կայսէր և իշխանին Մարաց. միաբանեաց զամենայն ընդ ինքեամբ և զնաց առ իշխանն Մարաց և խաւսեցաւ ընդ նմա ի խաղաղութիւն: Եւ առ ի նմանէ ինչս բազումս և խոստացաւ նմա երդմամբ, զի տացէ տանել զԹէոդորոս կապանաւք ի պաղատն, զի նա էր իշխան աշխարհիս Հայոց»[1]: Նենգամիտ բյուզանդացին իր խոստումը կատարում է: Նրան հաջողվում է Կոստաքում դավադրաբար կալանավորել և կապանքների մեջ Կոնստանդնուպոլիս ուղարկել Թեոդորոս Ռշտունուն:

Վերոհիշյալ տեղեկության շարունակության մեջ մեր պատմիչի ասածներից պարզվում է, որ կայսրը, սակայն, Թեոդորոս Ռշտունու նկատմամբ իր զորավարի այդպես կտրուկ ու ծայրահեղ գործողությունից դժգոհ է մնում նախ նրա համար, «...զի ոչ էր ի հրամանէ կապելն. և հրամայեաց լուծանել զնա ի կապանացն...» և հետո, հայոց սպարապետի դեմ հարուցված մեղադրանքներն ուղղակի չէին ապացուցվում: Թեոդորոս Ռշտունու նման անձնավորության նկատմամբ այդօրինակ վարմունքը կարող էր ոչ միայն լուրջ ընդվզումներ առաջացնել Հայաստանում, այլև այդ բանը անհաճո կլիներ նաև հայ ռազմական ու քաղաքական այն գործիչների համար, որոնք այդ ժամանակ շրջապատում էին կայսրին ու զբաղում էին ազդեցիկ դիրքեր բյուզանդական արքունիքում և բանակում: Եվ ահա, կայսրը, իր արդարադատությունը ցուցադրելու և սատրապների շրջանում փայլ առաջացնելու դիտավորությամբ, զայրացավ Թոմայի վրա ու կարգադրեց նրան պատվազուրկ անել, իսկ Թեոդորոս Ռշտունուն կրկին հաստատեց իր պաշտոնում և մեծարանքով ուղարկեց Հայաստան: Նրա վերադարձը հավանաբար տեղի պետք է ունեցած լինի 646—647 թվականներին, երբ արաբական արշավանքները դեպի Հայաստան առժամանակ դադարել էին:

Թեոդորոս Ռշտունին և նրա համախոհները շատ գործ ունեին կատարելու. նրանք պետք է առաջին հերթին բուժեին արշավանքների ու պատերազմների հասցրած ծանր վերքերը և ապա նախապատրաստվեին նորանոր արհավիրքների առաջն առնելու: Սակայն Հայաստանում դեռ նոր էին սկսել պատերազմի ծանր հետևանքները վերացնել, երբ բյուզանդական արքունիքն ու եկեղեցին, կրկին ասպարեզ հանելով դավանաբանական խնդիրը, ամեն միջոց գործադրեցին հայերին քաղկեդոնականություն ընդունել տալու համար: Դրանով փաստորեն բյուզանդական կայսրությունը մեկ անգամ ևս ցույց էր տալիս Հայաստանի նկատմամբ իր փոփոխամիտ, անկայուն և երկդիմի վերաբերմունքը:

Թվում է, թե առանձին անհրաժեշտություն չկա հանգամանորեն խոսելու այն մասին, որ միջին դարերում Հայաստանում մըրցակցող խոշոր տերությունների համար դավանանքի խնդիրը, զուտ կրոնականից բացի, հետապնդել է նաև քաղաքական նպատակներ: Ինչպես մի ժամանակ Սասանյան Պարսկաստանը, այնպես էլ Բյուզանդիան VII դարի կեսերին իր դավանանքը պարտադրելով հայերին՝ ձգտում էր Հայաստանում ձեռք բերել կրոնական գերիշխանություն և այդ ճանապարհով ապահովել կայսրության դիրքերը Հայկական լեռնաշխարհում օրավուր հզորացող և անընդհատ առաջ շարժվող Արաբական խալիֆայության դեմ: Այս ուղղությամբ բյուզանդացիների ջանքերը, որ գործադրվեցին դեռևս Եզր I կաթողիկոսի օրոք (630—640), թեև առանձին արդյունք չտվեցին, սակայն այդ ժամանակվանից հայկական հորիզոնի վրա սկսեցին ուրվագծվել հակադիր քաղաքական երկու հոսանքներ կամ կուսակցություններ՝ իրենց որոշակի համոզմունքներով և գործունեության ու պայքարի առանձին ծրագրերով:

Բյուզանդիայի աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների կարծիքով 640-ական թվականների երկրորդ կեսերին առավել նպաստավոր պայմաններ կային Հայաստանում դավանաբանական խնդիրը նոր ուժով առաջ քաշելու և միանգամից վճռելու համար, որովհետև նախ՝ այդ ժամանակ արաբները, զբաղված լինելով իրենց գործերով, դադարեցրել էին հարձակումները Հայաստանի վրա, և հետո այս ձեռնարկմանը, նրանց դատողությամբ, պետք է աջակցեին Բյուզանդիայում կրթված, հունարեն լեզվին ու սովորույթներին քաջատեղյակ Ներսես II կաթողիկոսը և հենց քիչ առաջ կայսրից ներում ստանալուց հետո իր պաշտոնում վերահաստատված սպարապետ Թեոդորոս Ռշտունին՝ իրենց համախոհների և հետևորդների հետ միասին: Գուցե Կոնստանս II-ը Թեոդորոս Ռշտունուց քաղաքական այսպիսի փոխհատուցում ստանալու ակնկալություններով էլ նրան Կոնստանդնուպոլսում մեծարել և ետ էր ուղարկել Հայաստան: Բնական է, որ քաղաքական այսպիսի խիստ լարված իրա-

[1] Սեբեոս, էջ 116:

դրության պայմաններում տարբեր հոսանքների և ուղղությունների ներկայացուցիչների թե՛ աշխարհիկ և թե՛ հոգևոր գործիչների միջև մեկ միասնական կողմնորոշում գոյություն ունենալ չէր կարող։ Բանն այն էր, որ եթե բյուզանդացիների ակնկալությունները Ներսես կաթողիկոսի նկատմամբ ճիշտ դուրս եկան, ապա դրանք միանգամայն հակառակ արդյունքը տվեցին Թեոդորոս Ռշտունու նկատմամբ։

Ներսեսը, որ ծնվել էր Մեծ Հայքի Տայոց աշխարհի Իշխան գյուղում և մանկությունից ապրել ու կրթություն էր ստացել Բյուզանդիայում, գիտեր հունարեն լեզուն, մատենագրությունը և կատարել էր զինվորական ծառայություն, կրոնական և քաղաքական համոզմունքներով հակված էր դեպի Բյուզանդիան և իրեն կողմնակից հոգևորականների ու ազնվականների մի մասի հետ ձգտում էր Հայաստանը բաժանել իրարից անջատ, մաներ նախարարությունների և երկիրը դնել Բյուզանդական կայսրության հովանավորության տակ։ Սեբեոսը, որ Ներսեսի ժամանակակիցն է և իր քաղաքական սկզբունքներով կաթողիկոսի հակառակորդը, այսպես է բնութագրում նրան՝ «...զի էր նա բնակութեամբ ի Տայոց, ի գեղջէն, որում Իշխանն կոչեն։ Եւ սնեալ ի մանկութենէ յաշխարհին Յունաց և ուսեալ զլեզուս և զդպրութիւն Հռոմին, և շրջեալ ընդ աշխարհս զաւրու կարգաւք զինուորութեան. և հաստատեալ զմիտ իւր ի վերայ ժողովոյն Քաղկեդոնի և ի վերայ տումարին Լևոնի։ Եւ ոչ ումեք ի վեր հանէր զխորհուրդս ամբարշտութեանն, մինչև եհաս յեպիսկոպոսութիւն, և անտի կոչեցաւ յաթոռ կաթողիկոսութեան... Բայց ի սիրան իւրում ծածկեալ ունէր զիւնս դառնութեան, և խորհէր հաւանեցուցանել զՀայս Քաղկեդոնի ժողովոյն, բայց ի վեր հանել զբանն ոչ համարձակէր։ Մինչև եկն արքայ Կոստանդին և նստաւ ի տան կաթողիկոսին, և քարոզեցաւ յեկեղեցւոջն սրբոյն Գրիգորի ժողովն Քաղկեդոնի...»[1]։ Պատմիչի վերջին ասածներից երևում է, որ Ներսեսի մոտ հակումը դեպի քաղկեդոնական դավանանքն ու բյուզանդական կողմնորոշումը ընդհանրապես պատահական զգացմունքներ չէին, որ առաջացել էին իրերի հանկարծակի բերումով, այլ՝ երկար ժամանակվա ընթացքում ձևոք բերված խորը համոզմունք, որը նա խնամքով թաքցնում էր և բացեիբաց ցուցադրելու հնարավորություն ունեցավ միայն կայսրի ներկայությամբ, երբ վերջինս իր զորքերով ներխուժելով Հայաստան, եկել հասել էր Դվին մայրաքաղաքը։

[1] Սեբեոս, էջ 143—144։



Սկզբում, հավանաբար, Ներսեսի կողմնակիցներն ու համախոհները քիչ էին, բայց հետագայում Կոնստանս II-ի վճռական գործողությունները Հայաստանում կարողացան ներգործել հայ ազնվականների տատանվող, երկչոտ տարրերի վրա և ավելացնել կաթողիկոսի ու կայսեր կողմնակիցների թիվը[1]։ Ներսեսի համախոհների մեջ ավելի շատ գերակշռում էին Արևմտյան Հայաստանի նախարարներն ու հոգևորականները, որովհետև նրանք, աշխարհագրական տեսակետից մոտ գտնվելով Բյուզանդիային, ոչ միայն անմիջականորեն ենթակա էին վերջինիս բռնի հարկադրանքին, այլև տնտեսական և քաղաքական շահերով էլ որոշ չափով կապված էին հույների հետ։

Քաղաքական մյուս հոսանքը կամ կուսակցությունը ղեկավարում էր ժամանակի տաղանդավոր զորավար, դիվանագետ ու պետական գործիչ Թեոդորոս Ռշտունին։ Թեոդորոս Ռշտունին և նրա հետևորդներն ամենից առաջ ելնելով ժամանակի պահանջներից, գտնում էին, որ առայժմ հզորացող Արաբական խալիֆայությունն անարգել կերպով ընթանում է վերելքի ուղիով, իսկ Բյուզանդական կայսրությունը, ընդհակառակը՝ ապրում է իր թուլացումը։ Հետևաբար Հայաստանն իր փոքր ուժերով չի կարող միայնակ կանգնեցնել արաբների առաջխաղացումը և ոչ էլ ապավինել Ներսես կաթողիկոսի և մյուսների կողմից չերմորեն պաշտպանվող Բյուզանդիայի հովանավորությանը, որովհետև նախ՝ Բյուզանդիան այդ ժամանակ զգալիորեն թուլացել էր, և հետո՝ անցյալի փորձը ցույց էր տալիս, որ այդ հովանավորությունը կեղծ ու անվստահելի է։ Թեոդորոս Ռշտունու կուսակցությունը գտնում էր, որ պետք է ձգտել, որքան հնարավոր է, արաբների հետ վարել հաշտ ու ռազմական բախումից խուսափող քաղաքականություն, որպեսզի դրանով գոնե որոշ ժամանակ ժողովուրդը փրկվի անտեղի զոհերից, իսկ երկիրը՝ ավերվելուց։ Քաղաքական այս գիծն իր ժամանակին ամենաճիշտն էր և այն բխում էր ժողովրդի ու իշխող դասակարգի ներկայացուցիչների մեծամասնության շահերից։ Դրա համար էլ Թեոդորոս Ռշտունին և նրա կուսակցությունը փաստորեն գերիշխող էին երկրի քաղաքական կյանքում։

Սեբեոսի մի հիշատակությունից պարզորոշ կերպով երևում է, որ Թեոդորոս Ռշտունին իր քաղաքական կողմնորոշման ժամանակ չի սահմանափակվել միայն Հայաստանով։ Որպես լայնախոհ մի անձնավորություն, նա խոշոր չափով հաշվի էր առնում նաև այն

[1] Տե՛ս Սեբեոս, էջ 142։

ռեալ վիճակը, որ գոյություն ուներ ամբողջ Անդրկովկասում: Եվ որովհետև Թեոդորոս Ռշտունու քաղաքականությունը ելնում էր նաև Անդրկովկասի շահերից, դրա համար էլ հայ նախարարների մեծամասնությունից բացի նրան պաշտպանում ու նրա հետ դաշնակցել էին նաև Վրաստանի ու Աղվանից աշխարհի ազնվականները: Սեբեոսի հիշատակությունից երևում է, որ հայ, վրաց և աղվանից ֆեոդալների միջև արտաքին քաղաքականության բնագավառում միասնական ուժերով հանդես գալու վերոհիշյալ դաշինքը կամ բանավոր պայմանավորվածությունը ձեռք էր բերվել Թեոդորոս Ռշտունու գլխավորությամբ Հայաստանում գումարված հատուկ խորհրդակցության ժամանակ, որից հետո մասնակիցներից յուրաքանչյուրը վերադառնում է իր տեղը, ամրանում այնտեղ ու սպասում հայոց սպարապետի համապատասխան կարգադրությանը: Գիտական գրականության մեջ աչքաթող արված այս հանգամանքը շեշտելու համար անհրաժեշտ ենք համարում նույնությամբ մեջ բերել պատմիչի համապատասխան հիշատակությունը: Սեբեոսը, պատմելով Թեոդորոս Ռշտունու դինակիցների և դաշնակիցների մասին, ասում է. «Եւ են ընդ նմա միաբան Վրացին և Աղուանն և Սիւնիս, որ ըստ հրամանի նորա գնացին յիւրաքանչիւր աշխարհս և ամրացան ի նմին (ընդգծումը մերն է—Ս. Մ.-Բ.)»[1]:

Թեոդորոս Ռշտունին այնքան էր համոզված իր քաղաքականության ճիշտ լինելու մեջ, որ ձգտում էր այդ գիծը պահպանել տալ նաև իր հաջորդների օրոք: Ուշ շրջանի հեղինակ Շապուհ Բագրատունին պատմում է, որ, իբր, Թեոդորոս Ռշտունին մահից առաջ իր մոտ է կանչում որդուն՝ Վարդին և պատվիրում նրան խզել հարաբերությունները բյուզանդացիներից և մոտենալ արաբներին՝«...քանզի դրացիք են դոքա քեզ, եւ զհարկն զոր ի տունս Հոռոմոց է տալի, տուր տունըն Պարսից (ի նկատի ունի արաբներին—Ս. Մ.-Բ.) և նոցա հնազանդեաց և շինեսցի աշխարհն Հայոց»[2]: Թեոդորոս Ռշտունու անձնավորությունն ու նրա գործունեությունն այնքան մոտ է եղել ժողովրդի սրտին, որ նրա կերպարը, ինչպես գտնում են հայ վեպի ու բանահյուսության անվանի մասնագետները, վիպականացվել է ու դարձել «Սասնա ծռեր»-ի քեռի Թեվոս-Թորոսը, որն օժտված էր թռչելու չտեսնված հատկությամբ, «...նա մի օրում թրռչում է Հայաստանի զանազան կողմերն ու երկրի պաշտպանության

[1] Սեբեոս, էջ 142:
[2] Շապուհ Բագրատունի, էջ 30:



համար բերդեր հիմնում»: Քեռի Թորոսն երկար է ապրում և մնում է որպես Սասնա ծռերի իմաստուն խորհրդատուն[1]:

648 թվականին, երբ Բյուզանդիան Ասորիքի արաբ կառավարիչ Մոավիայի հետ կնքեց հաշտության եռամյա պայմանագիր, Հայաստանում քաղկեդոնականության տարածման հարցը կրկին մեջտեղ բերվեց: Այդ հարցում հայերին համոզելու համար բյուզանդական եկեղեցու և կայսրության հատուկ հանձնարարությամբ Հայաստան է ուղարկվում փիլիսոփա-աստվածաբան Դավիթ Բագավանեցին: Բյուզանդական կայսրության առաջարկությունը քննելու և պաշտոնական պատասխան տալու համար 648 թվականին Դվինում հրավիրվում է հատուկ եկեղեցական ժողով՝ բարձրաստիճան հոգևորականության և նախարարների ներկայացուցիչների մասնակցությամբ: Ժողովի աշխարհիկ մասնակիցներին հավանաբար գլխավորում էր Թեոդորոս Ռշտունին, իսկ կյուրապաղատ Սմբատ Բագրատունու անունն այս կապակցությամբ չի հիշատակվում՝ հավանաբար նրա Հայաստանից բացակայելու պատճառով:

Դվինի ժողովը հանգամանորեն քննում է Կոնստանս կայսեր գրավոր նամակը ու Դավիթ Բագավանեցու առաջարկությունները և մերժում դրանք:

Դվինի ժողովում Թեոդորոս Ռշտունին ու իր կողմնակիցներն այնպիսի գերակշռություն են ձեռք բերում, որ նույնիսկ կաթողիկոս Ներսեսը ոչ միայն չի կարողանում հակադրվել նրանց, այլև իր կողմնակիցներով ստիպված է լինում համաձայնվելու մյուսների հետ:

Ժողովի որոշմամբ կաթողիկոսի, Թեոդորոս Ռշտունու և մասնակից բոլոր եպիսկոպոսների ու մյուս մեծամեծների անունից կազմվում է մի պատասխան նամակ, որն ուղղված էր Կոնստանս կայսրին: Ժողովականներն իրենց պատասխան թղթում հասկացնում էին կայսրին, որ դավանափոխության ուղղությամբ նրա թափած ջանքերն անօգուտ են. «Զի յորժամ բարձին զթագաւորութիւնն և կորուսին զամենայն զաւրս աշխարհին Հայաստեանեայց, և ի գերութիւն վարեցին զաւրս և զկանայս, իսկ ի մնացեալսցն վերայ աւուր եղեալ և շողացուցեալ՝ ջանացան դարձուցանել ի մոլորութիւն, այլ ոչ կարացին շարժել...»[2]:

Ուսումնասիրողներից ոմանք, ելնելով այն փաստից, որ այդ նամակի բովանդակությունն ամբողջությամբ մեջ է բերվում Սեբեո-

[1] Տե՛ս Մ. Աբեղյան և Կ. Մելիք-Օհանջանյան, Ներածություն, տե՛ս «Սասնա ծռեր», Ա, Երևան, 1936, էջ 13—14:
[2] Սեբեոս, էջ 122:

սի կողմից, ենթադրում են, որ նրա շարադրմանն ակտիվորեն մասնակցել է նաև ինքը՝ պատմիչը[1]: Անվանի հայագետ Ստ. Մալխասյանցը, որ Սեբեոսի Պատմության գիտահամեմատական տեքստը կազմելու առնչությամբ հանգամանորեն ուսումնասիրել է այդ աշխատության, գտնում է, որ Սեբեոսի մեջ բերած վերոհիշյալ դավանության թուղթը վավերական գրվածք չէ, որովհետև այնտեղ կան դեպքերի աղավաղումներ, կրկնություններ և այլ կարգի շատ անճշտություններ: Եվ. որովհետև հայերի հոգևոր և աշխարհիկ ներկայացուցիչների անունից կազմված և կայսրին հասցեագրված մի այդպիսի գրություն չէր կարող այդ աստիճան անփույթ ու անշնորհ ձևով գրվել, ուստի այն, այսպես ասած, դավանության թղթի ոչ թե արդեն վերջնական և հղկված շարադրանքն է, այլ նախնականը, սևագիրը, որը Սեբեոսը որպես ժողովի մասնակից, շտապել էր նույնությամբ տեղավորել իր գրքում՝ առանց ուշադրություն դարձնելու նրա ձևին ու բովանդակությանը: Ի վերջո Ստ. Մալխասյանցն էլ, նախորդ ուսումնասիրողների նման, ելնելով Սեբեոսի մի հիշատակությունից, իրավացիորեն հանգում է այն ճիշտ եզրակացության, որ քաղաքական հանգամանքների արագ փոփոխվելու պատճառով այդ թուղթն այնպես էլ չի ուղարկվում հասցեատիրոջը, այլ մնում է տեղում, և նրա գոյության մասին Կոնստանտնը տեղեկանում է մի փոքր ուշ, երբ ինքն անձամբ գտնվում էր Դվինում[2]:

Օսմանի գահակալության տարիներին, երբ արաբները կրկին նվաճեցին Եգիպտոսը, Աֆրիկայի հյուսիսային մասը և մտան Իսպանիա, Ասորիք ու Կիլիկիա, 650-ական թվականների սկզբներին Բյուզանդիայի հետ նրանց բախումը դառնում էր անխուսափելի, մանավանդ որ այդ ժամանակ լրանում էր 648 թվականին կնքված արաբա-բյուզանդական հաշտյա դինադադարի ժամկետը: Ուրեմն պարզ է, որ նման իրադրության մեջ Բյուզանդիան չպետք է կարողանար շատ էլ հետևողական լինել՝ ստանալու համար իր կողմից հայերին առաջարկված դավանանքի միության պատասխանը:

Քաղաքական հանգամանքները հաշվի առնելով էլ հայերը ձգձգում, իսկ այնուհետև ընդհանրապես չեն ուղարկում կայսրին հասցեագրված իրենց պատասխանը: Սակայն, առանց այդ էլ, կարծում ենք, բյուզանդական իշխանությունները տեղյակ էին Դվինի ժողովի անց ու դարձին, բայց առայժմ հնարավորություններ չունեին ուրիշ քայլերի դիմելու:

Հայ-բյուզանդական փոխհարաբերությունների այսպիսի լարված մթնոլորտում Հայաստանի համար կարծես ավելի ձեռնտու էր Արաբական խալիֆայության հետ մերձենալը: Ելնելով Դվինի ժողովի կարուկ ու համարձակ ընթացքից, նույնիսկ հնարավոր է ենթադրել, որ հայ-արաբական քաղաքական մերձեցման առաջին ու պաշտոնական քայլերը ձեռնարկվել էին ժողովի նախօրյակին կամ նրա ընթացքի ժամանակ: Թեոդորոս Ռշտունին, որ 646—647 թվականներին ձերբակալվելուց և ազատվելուց հետո իր մաշկի վրա անձամբ զգացել էր բյուզանդացիների երկդիմի ու դավաճանական վերաբերմունքը, գուցե այդ հարցում նախօրոք արաբներից որոշակի երաշխիքներ էր ստացել: Այդ երաշխիքներն ավելի կոնկրետացան ու պաշտոնապես ձևակերպվեցին 652 թվականի հայ-արաբական հատուկ պայմանագրում, որով և Թեոդորոս Ռշտունու ու նրա կողմնակիցների հակաբյուզանդական կողմնորոշումն ստացավ բացահայտ ու պաշտոնական ձև: Իսկ այսպիսի պայմանագրի առկայությամբ փաստորեն Արաբական խալիֆայությունն զգալիորեն բարելավում էր իր դիրքերը Հայկական բարձրավանդակում՝ Բյուզանդական կայսրության դեմ իր կողմից հենց այդ ժամանակներում նախապատրաստվող արշավանքի նախօրյակին:

Այսպիսով, վերևում շարադրվածից տեսնում ենք, որ 648—652 թվականներին հայ-արաբական փոխհարաբերություններն ընթանում էին մերձեցման այնպիսի ուղիով, որը գոնե ժամանակավորապես բացառում էր արաբների նորանոր հարձակումներն ու արշավանքները դեպի Հայաստան:

Սակայն հայ ժողովրդի պատմության արաբական շրջանին վերաբերող համարյա բոլոր ուսումնասիրությունների մեջ արաբական առաջին և երկրորդ արշավանքներից հետո սխալ կերպով մատնանշվում է նաև մի երրորդ արշավանք, որն, իբր, տեղի է ունեցել 650 թվականին[1]: Երկրորդ արշավանքի ժամանակի հարցերը որոշելիս մենք, մեկ անգամ ևս ուշադիր կերպով քննելով եղած սկզբնաղբյուրները, եկանք այն հաստատ համոզման, որ 650 թվականին դեպի Հայաստան արաբական որևէ արշավանք տեղի չի ունեցել ոչ միայն նրա համար, որ 648—652 թվականներին նման

[1] Տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, մաս Ա, էջ 718—719:

[2] Տե՛ս «Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն, ի ձեռն Ստ. Մալխասեանց», Երևան, 1939, էջ 191—192, 196: Մ. Օրմանյան, Ազգապատում, մաս Ա, էջ 719:

[1] Տե՛ս Ս. Մելիք-Բախշյան, Պավլիկյան շարժումը Հայաստանում, էջ 82, նույնի ուսուերենը, էջ 95, Հայ ժողովրդի պատմություն, պրակ 3, Երևան, 1958, էջ 12, Հայ ժողովրդի պատմություն, հատ. 1-ին, Երևան, 1963, էջ 372:

գործողությունները արմատապես հակասում էին հայ-արաբական փոխհարաբերություններին ու շահերին, այլև սկզբնաղբյուրները պարզապես 650 թվականի արշավանքի մասին հիշատակություն չունեն: Այդ սխալը փաստորեն առաջացել է տոմարական ոչ ճիշտ հաշվումի պատճառով, երբ Սեբեոսի հիշատակած Արծափ բերդի գրավման ժամանակը 643 թվականի օգոստոսի 10-ի կիրակի օրվանից միանգամայն սխալ կերպով փոխադրվել է 650 թվականի օգոստոսի 8-ը[1], որը թեև նույնպես կիրակի է, բայց Արծափի դեպքերի հետ կապ չունի: Սեբեոսի երկու ուրիշ պարզ ու հասկանալի հիշատակություններով նույնպես անվերապահ կերպով հաստատվում է, որ Արծափի գրավումը տեղի է ունեցել «...ի գալ միւսում ամի (այսինքն՝ Կոնստանսի թագավորության հաջորդ տարին՝ 643 թվականին—Ս. Մ.-Բ.)», «եւ եղև յամին երկրորդի Կոստանդնի (այսինքն՝ դարձյալ 643 թվականին—Ս. Մ.-Բ.)», որոնց մասին մենք հանգամանորեն խոսել ենք նախորդ էջերում՝ արաբական երկրորդ արշավանքի կապակցությամբ:

Կոնստանս II-ի տված կտրուկ և մերժողական պատասխանից հետո Թեոդորոս Ռշտունուն մնում էր համախմբել և մարտական պատրաստ վիճակի մեջ դնել իր դաշնակիցների ուժերը Բյուզանդիայի հնարավոր հարձակումներից պաշտպանվելու համար: Տաղանդավոր զորավարը կարողացավ այս հարցում ոչ միայն համաձայնության գալ համախոհ հայ նախարարների հետ, այլև ստանալ Վրաստանի ու Աղվանից աշխարհի ֆեոդալների՝ իր հետ համագործակցելու համաձայնությունը: Եվ հայ ու հարևան ազնվականների վստահությունն ու լիազորությունն ստանալուց հետո Թեոդորոս Ռշտունին պաշտոնական բանակցությունների մեջ է մտնում Ասորիքի արաբական կառավարիչ Մոավիայի հետ: Այս բանակցություններն ավարտվեցին հաջողությամբ և նրանց արդյունքն ու կողմերի փոխադարձ պարտավորությունները հիմք դարձան նույն ժամանակ կնքված հայ-արաբական պայմանագրի համար: Սեբեոսը, որ հայ-արաբական բանակցությունների և կնքված պայմանագրի մասին տեղեկություններ հաղորդող ամենավստահելի հեղինակն է, այնուամենայնիվ դեպքերի հաջորդականությունն ու մանրամասնությունները որոշ չափով շփոթում է կամ ներկայացնում անորոշ կերպով: Այդ բանը հատկապես վերաբերում է պայմանագրի կնքման ժամանակին, որը նա վերագրում է Կոնստանս II-ի թագավորության 12-րդ տարվան, այսինքն՝ 653 թվականին: Հետագայում ուսումնասիրողներն առաջադրել են նաև 651[1], 652[2] և նույնիսկ 658[3] թվականները: Սակայն պետք է ասել, որ ուսումնասիրողների մեծ մասն ընդունում է 652 կամ 653 թվականները: Պրոֆ. Բ. Առաքելյանն իր «ժամանակագրական դիտողություններ» ուշագրավ հոդվածում համոզիչ կերպով ցույց է տալիս, որ Թեոդորոս Ռշտունու և Մոավիայի կողմից կնքված հայ-արաբական պայմանագիրն օրինականություն է ստացել 652 թվականին[4]: Մենք նույնպես, լիովին ընդունելով պրոֆ. Բ. Առաքելյանի ճշտումը, ավելորդ ենք համարում այդ մասին ուրիշ մեկնաբանություններ տալ:

Այս կապակցությամբ հետաքրքիր է նաև այն հարցը, թե Մոավիայի հետ ովքեր էին անմիջապես բանակցությունները վարում, և արդյոք այդ բանակցությունների համար անձամբ Թեոդորոս Ռշտունին Դամասկոս մեկնել էր, թե՞ իր ներկայացուցիչն էր ուղարկել այնտեղ: Այս հարցի մասին եղած գիտական գրականության համար-յա մեծ մասում անց է կացվում այն միտքը, որ հայ-արաբական պայմանագիրը կնքելու համար Թեոդորոս Ռշտունին անձամբ մեկնել էր Մոավիայի մոտ[5]: Սակայն հանգամանորեն վերլուծելով այդ պայմանագրի կնքման հետ կապված իրադրությունը և ուշադրությամբ քննելով սկզբնաղբյուրների տեղեկությունները, մենք գալիս ենք այն եզրակացության, որ 652 թվականին Թեոդորոս Ռշտունին պայմանագիր կնքելու համար Դամասկոս չի մեկնել: Սեբեոսի և նրանից այս հարցում մեծ չափով օգտված Հովհաննես Դրասխանակերտցու հիշատակություններից ամենևին էլ չի երևում, որ բանակցություններն Ասորիքում անձամբ վարում էր այնտեղ գըտնվող հայոց սպարապետը: Պարզության համար, ստորև բերում ենք երկու պատմիչների վկայությունները.

| | |
|---|---|
| «եւ ի նմին ամի ապստամբեցին Հայք և ի բաց կացին ի թագաւորութենէն Յունաց և | «...զոր տեսեալ Թեոդորոսի (այն, որ արաբները հակայական նվաճումներ են կատա- |

[1] Տե՛ս Ա. Մելիք-Բախշյան, Դիտողություններ արաբների՝ Հայաստան կատարած առաջին արշավանքների մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1964 թ., № 3, էջ 89:

[1] Տե՛ս Հ. Հարությունյան, «Սասունցի Դավիթ» էպոսի դարաշրջանը, Սասունցի Դավիթ հոբելյանական ժողովածու՝ նվիրված էպոսի 1000-ամյակին, Երևան, 1939, էջ 238—239:

[2] Տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, մասն Ա, էջ 730:

[3] Տե՛ս A. Мюллер, История ислама, т. 2-ой, էջ 20:

[4] Տե՛ս Բ. Առաքելյան, Ժամանակագրական դիտողություններ, Տեղեկագիր ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի, Երևան, 1941 թ., № 1(6), էջ 62:

[5] Տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, մասն Ա, էջ 730—731:

հնազանդեցան ի ծառայութիւն արքային Իսմայելի, եդին ուխտ ընդ մահու, և ընդ դժոխոց դաշինս կռեցին Թէոդորոս Ռշտունեաց տէր ամենայն իշխանաւքն Հայոց ի բաց ընկեցեալ զաստուածային դաշնաւորութիւնն: Արդ՝ խաւսէր ընդ նոսա իշխանն Իսմայելի և ասէր»[1]. ապա բերում է պայմանագրի բովանդակութիւնը:

Եթե ի նկատի ունենանք, որ հետագայում, ինչպես կտեսնենք այլ առիթով, Թեոդորոս Ռշտունու մեկնումը Դամասկոս՝ Մոավիայի մոտ ամենայն բարեխղճութեամբ հիշատակվում է մեր այս հեղինակների կողմից, ապա, ուրեմն, նրանց ուշադրութիւնից չէր կարող վրիպել պայմանագրի կնքման առիթով հայոց զորավարի մեկնելն արաբների մոտ, մանավանդ որ հայ-արաբական նոր սկսվող քաղաքական փոխհարաբերութիւնների ընթացքում այդ դեպքը տեղի էր ունենում առաջին անգամ: Այս բոլորից հետո առաջիմ կարելի է անել մի հետևութիւն. 652 թվականին հայ-արաբական բանակցութիւններին և պայմանագրի կնքմանը Թեոդորոս Ռշտունին անձամբ չէր մասնակցում, այդ պարտականութիւնները կատարում էին նրա կողմից լիազորված հատուկ պաշտոնական անձինք, որոնց մասին, սակայն, աղբյուրները հիշատակութիւն չունեն:

Թեոդորոս Ռշտունու Դամասկոս չգնալը որոշ չափով էլ պատճառաբանվում էր Բյուզանդիայի կողմից Հայաստանի վրա օրավուր սպասվող հարձակման վտանգով: Պարզ է, որ այս պայմաններում տեղում մնալն ավելի կարևոր էր, քան Դամասկոս մեկնելը, որը նրանից կխլեր երկար ժամանակ:

Հայ-արաբական վերոհիշյալ պայմանագրի բովանդակութիւնը շատ թե քիչ ամփոփ ձևով պահպանել է միայն Սեբեոսը, իսկ ուշ շրջանի հեղինակները լավագույն դեպքում միայն ակնարկում են այն: Ահա թե ինչ էր իրենից ներկայացնում այդ պայմանագիրը և ինչպիսի պարտավորութիւններ էր այն դնում կողմերից յուրաքանչյուրի վրա.

[1] Սեբեոս, էջ 140:
[2] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 85—86:



«Եւ ի նմին ամի (Կոնստանսի թագավորութեան 12-րդ տարում— Ս. Մ.-Բ.) ապստամբեցին Հայք և ի բաց կացին ի թագաւորութենէն Յունաց և հնազանդեցան ի ծառայութիւն արքային Իսմայելի, եդին ուխտ ընդ մահու, և ընդ դժոխոց դաշինս կռեցին Թէոդորոս Ռշտունեաց տէր ամենայն իշխանաւքն Հայոց, ի բաց ընկեցեալ զաստուածային դաշնաւորութիւնն: Արդ՝ խաւսէր ընդ նոսա իշխանն Իսմայելի և ասէր. «Այս լիցի ուխտ հաշտութեան իմով ընդ իս և ընդ ձեզ՝ որչափ ամաց և դուք կամիջիք. և ոչ առնում ի ձէնջ սակ դերեամ մի. ապա յորժամ տաջիք երդմամբ, որչափ դուք կամիջիք: Եւ հեծեալ կալէք յաշխարհիդ ժե հազար, և հաց յաշխարհէն տուք, և ես ի սակն արքունի անգարեմ. և զհեծեալսն յԱսորիս ոչ խնդրեմ. բայց այլ ուր և հրամայեմ՝ պատրաստ լիցին ի գործ. և ոչ արձակեմ ի բերդորայն ամիրայս, և ոչ տաճիկ սպայ՝ ի բազմաց մինչև ցմի հեծեալ: Թշնամի մի մտցէ ի Հայս. և եթէ գայ Հոռոմ ի վերայ ձեր՝ արձակեմ ձեզ զաւրս յաւգնականութիւն՝ որչափ և դուք կամիցիք: Եւ երդնում ի մեծն աստուած՝ եթէ ոչ ստեմ»[1]:

Պայմանագրով, ինչպես տեսնում ենք.

1. Հայաստանը թոթափում էր բյուզանդական տիրապետությունը և ընդունում Արաբական խալիֆայության հովանավորությունը:

2. Հայաստանը երեք տարի ազատվում էր խալիֆայության նկատմամբ հարկային որևէ պարտավորություն կատարելուց, իսկ սահմանված ժամկետն անցնելուց հետո հայերը պետք է վճարեին արքունի հարկը և «սակը», որի չափն ու քանակը որոշվելու էր հայերի հայեցողությամբ:

3. Սակայն այս կետի նկատմամբ արվում էր մի վերապահություն: Այդ այն էր, որ Հայաստանը պետք է Արաբական խալիֆայությանը հացահատիկ տար, որը ինչպես հավաստում էր Մոավիան՝ «...ես ի սակն արքունի անգարեմ», այսինքն՝ արաբներին տրվելիք հացահատիկը ոչ թե վերցվելու էր ձրիաբար, այլ նրա արժեքը հաշվելու էին երեք տարի հետո գանձվող հարկի դիմաց: «Անգարելը», ինչպես ցույց է տրվում հայոց լեզվի բառարաններում, կոնկրետ դեպքում ունի միայն սեպել-համարել-հաշվել իմաստը:

4. Արաբական խալիֆայության համաձայնությամբ և թուլատրվելիքի համեմատ հայերը կարող էին ունենալ 15 000-անոց հեծելազոր, որը արաբների հայեցողությամբ պարտավոր էր կռվի գնալ ամեն տեղ, բացառությամբ Ասորիքի: Հատկապես Ասորիքի շեշտումը

[1] Սեբեոս, էջ 140—141:

մեր կարծիքով նշանակում էր, որ արաբներն իրենց տիրապետության կենտրոնական շրջաններում հայկական ուժերի կարիքը չէին զգում, այլ դրանց օգտագործումը նրանք նախատեսնում էին հիմնականում Բյուզանդիայի դեմ, մանավանդ որ հաջորդ կետով արաբները պարտավորվում էին Հայաստանը հատկապես պաշտպանել Բյուզանդական կայսրության հարձակումներից:

5. Այնուհետև, օտարերկրյա հարձակումների դեպքում Արաբական խալիֆայությունը պարտավորվում էր Հայաստան ուղարկել այնքան զորք, որքան կպահանջվեր հայերի կողմից: Եվ վերջապես՝

6. Պայմանագրով խալիֆայությունը խոստանում էր չմիջամտել Հայաստանի ներքին գործերին և որպես դրա լավագույն երաշխիք, հատուկ կետով պարտավորություն էր ստանձնում ոչ միայն զորք չմտցնել Հայաստան, այլև երկրի բերդերում չտեղավորել ոչ մի պաշտոնյա, արաբական սպա կամ թեկուզ մեկ հեծյալ զինվոր: Պայմանագրի համար, ինչպես տեսանք, որոշակի ժամկետ չէր սահմանվում: Այն կարող էր ուժի մեջ մնալ այնքան ժամանակ, որքան կկամենային իրենք՝ հայերը: Պայմանագիրը կնքել էր «...Թէոդորոս Ռշտունեաց տէր ամենայն իշխանաւքն Հայոց», այսինքն այն արտահայտում էր եթե ոչ ամբողջ հայ ազնվականության, ապա գոնե նրա մեծամասնության կամքը:

Ղևոնդի մի վկայությունից պարզվում է, որ հայկական հեծելազորի անդամների վարձը վճարելիս են եղել իրենք՝ արաբները: Եվ դա հասկանալի է, որովհետև, ինչպես կտեսնենք քիչ հետո, Արաբական խալիֆայությունը նմանօրինակ պարտավորություններ ստանձնել է նաև այլ առիթներով: Այսպիսի քաղաքականությամբ արաբներն աշխատում էին, որքան հնարավոր է, իրենց ռազմական ուժերը պահել կենտրոնացված վիճակում, և ոչ թե ցրել: Եվ արաբներն ինչպես այժմ, այնպես էլ հետագայում առիթը բաց չէին թողնում իրենց ռազմական ուժերի պարտականությունների մի մասը դնելու տեղական ժողովուրդների զորքերի վրա, թեկուզ այդ զորքերը ստեղծվելու լինեին խալիֆայության հաշվին: Ղևոնդը հիշատակում է, որ Աշոտ Բագրատունին իր պատրիկության տարիներին, մասնավորապես VIII դարի առաջին կեսերին, մեկնում է Հիշամ խալիֆի մոտ (724—743) «...վասն բռնութեան աշխարհիս. զի յերից ամաց և անդր արգելեալ էր զնախարարացն Հայոց և նոցին հեծելոցն զխածիթիայսըն...»[1]: Խալիֆը հարգում է Աշոտի խնդրան-

[1] Ղևոնդ, էջ 113: «Զխածիթիայ» Հ. Աճառյանն ստուգաբանում է «ոռճիկ», «թո-



քը և կարգադրում անմիջապես վճարել անցած երեք տարիների վարձը՝ ամեն տարվա համար 100 հազար արծաթի հաշվով, իսկ այնուհետև Հիշամի գահակալության շրջանում հայերն այդ վարձն ստանում էին անխափան ձևով: Շատ հնարավոր է, որ այս պարտավորության սկիզբը դրված լիներ հենց Թեոդորոս Ռշտունու կնքած պայմանագրով, որը երբեմն իրագործվում էր նաև հետագայում: Որ նման սովորություն արաբների մոտ հաճախակի է գործադրվել, հաստատվում է նաև VIII դարի արաբական հեղինակ Աբու-Յուսուֆի մի վկայությամբ, որտեղ ուղղակի ասվում է, որ պատերազմի ժամանակ արաբները երբեմն հպատակ քրիստոնյաներին (զիմմիներին) էին վերադարձնում նույնիսկ նրանցից հավաքած հարկերը, որպեսզի նրանք իրենք հոգան իրենց պաշտպանությունը և արաբներն ազատ մնան այդ պարտականությունների կատարումից[1]:

Ինչպես տեսնում ենք, հայ-արաբական պայմանագիրն իր բնույթով ու բովանդակությամբ ոչ միայն, գոնե առժամանակ, ապահովում էր երկրի անվտանգությունը, այլև առայժմ որոշ չափով երաշխավորում էր նաև Հայաստանի ներքին ինքնուրույնությունը:

Ըստ երևույթին հայ նախարարները թեև այսուհետև համարվելու էին խալիֆի վասալներն ու հնթակաները, այնուամենայնիվ նրանք պահպանելու էին իրենց ինքնուրույնությունը և սեփականատիրական, ժառանգական ու այլ կարգի իրավունքներն ու արտոնությունները: Այլ կերպ ասած, վերոհիշյալ պայմանագիրը չէր խախտում հայկական նախարարական ֆեոդալական սիստեմն ընդհանրապես:

Մոավիայի հետ Թեոդորոս Ռշտունու կնքած պայմանագրում որոշակիորեն արտահայտված է հայերի նկատմամբ խալիֆայության բռնած մեղմ ու զիջող դիրքը: Եվ դա հասկանալի է, որովհետև արաբա-բյուզանդական մրցակցության պայմաններում Հայաստանն իր դիրքով և ռազմական ուժով, երկու կողմերի համար էլ ներկայացնում էր որոշակի կարևորություն, և արաբները, որոնք VII դարի կեսերին արտաքին նվաճումների հետ մեկտեղ պայքար էին մղում նաև ներքին խլրտումների դեմ, չէին կարող Հայաստանի նկատմամբ այլ կերպ վարվել: Հայերի նկատմամբ ցուցաբերած

շակ» իմաստով, տե՛ս նրա Հայերեն արմատական բառարանը, հատոր Գ, Երևան, 1930, էջ 334:

[1] Տե՛ս Абу-Юсуф, Китаб ал-харадж, Православный палестинский сборник, т. 17, вып. 2 (4), СПб, 1897, էջ 1321:

մեղմությամբ արաբները ցանկանում էին թուլացնել Բյուզանդական կայսրության ազդեցությունը Հայաստանում և ձեռք բերել հայերի աջակցությունն ու ռազմական օգնությունը ինչպես Բյուզանդիայից, այսպես էլ Հյուսիսային Կովկասից սպառնացող խազարական վտանգի դեմ: Բնական է, որ արաբների այս վերաբերմունքը պետք է շարունակվեր այնքան ժամանակ, քանի դեռ չէին դադարել խալիֆայության ներսում տեղի ունեցող գահակալական կռիվները և քանի դեռ արաբները չէին ամրացրել իրենց դիրքերը նորանվաճ երկրներում:

652 թվականի պայմանագրով սկսված հայ-արաբական քաղաքական մերձեցումը մեծ ջայրույթով ընդունվեց Բյուզանդիայում, և կայսր Կոնստանս II-ը, ուշադրությամբ հետևելով իրադարձությունների ընթացքին, եռանդագին կերպով պատրաստվում էր դիվանագիտության ասպարեզում կրած իր պարտությունը հատուցել հաղթական պատերազմով ու Հայաստանի ամբողջական նվաճումով:

652 թվականի աշնանը կայսր Կոնստանս II-ը, Սեբեոսի չափազանցված տվյալների համաձայն, 100 000-անոց բանակով անցավ սահմանը և հարձակվեց Հայաստանի վրա: Դերջանում բյուզանդացիներին ներկայացան արաբական իշխանությունների ներկայացուցիչները և կայսրին հանձնեցին հավանաբար Մոավիայի պաշտոնական գրությունը, որտեղ ասվում էր, թե «Հայք իմ են, անդ մի երթար. ապա թէ երթաս՝ ես գամ ի վերայ քոյ, և առնեմ զքեզ որ անդրէն փախչել ոչ կարաս»: Դրան Կոնստանսը պատասխանում է. «Աշխարհն իմ, և ես երթամ. դու նէթ գաս ի վերայ իմ՝ Աստուած արդարութեան դատաւոր է»[1]: Դրանից հետո կայսրը շարունակում է իր արշավանքը և գալիս կանգ է առնում Կարինում: Մերացած Օսման խալիֆը, զբաղված լինելով ներքին խռովություններով, չկարողացավ անմիջապես և գործնական միջամտություն ցույց տալ Հայաստանի գործերին: Իսկ հայ ազնվականների մի քանի տատանվող և թուլամորթ տարրեր բացահայտորեն լքելով Թեոդորոս Ռշտունուն, իրենց զորքերով անցան Բյուզանդիայի կողմը և, կաթողիկոս Ներսեսի հետ միասին ընդառաջ գնալով կայսրին, ներկայացան նրան Կարինում:

Բյուզանդական արշավանքի ժամանակ Թեոդորոս Ռշտունին, տեսնելով, որ թշնամու հսկայական ուժերի դեմ ճակատ առ ճակատ կռվելը վտանգավոր է, առայժմ ընտրեց պարտիզանական պայքարի տակտիկան և իր մոտ գտնվող հայ, վրացի ու աղվանից ազնվականներին անհրաժեշտ ցուցումներ ու խորհուրդներ տալով՝ ուղարկեց իրենց տեղերը, իսկ ինքն ամրացավ Ախթամար կղզում՝ սպասելով արաբների օգնությանն ու հարձակման անցնելու առավել նպաստավոր առիթի: Քառասուն խոշոր նախարարներով, Թեոդորոս ու Գրիգոր Վահևունիների, Վարազներսեհ Դաշտկարի, Ըշտունյաց ու Մարդպետական իշխանների և Սյունիքի, Վրաստանի ու Աղվանքի ազնվականների հետ հավատարիմ մնալով իր ընտրած քաղաքականությանը, նա եռանդուն կերպով կազմակերպեց երկրի պաշտպանության ու բյուզանդական զավթիչներին արտաքսելու գործը[1]:

Կարինում կաթողիկոսն ու նրա հետ եկած հայ ազնվականները սկսեցին ամբաստանել Թեոդորոս Ռշտունուն և կայսրին գրգռել նրա դեմ: Վերջինս, զայրացած, հայոց սպարապետին հայտարարում է իր բոլոր պաշտոններից ու պարտականություններից զրկված ու սկսում է հալածել նրա կողմնակից նախարարներին՝ ավերելով ու կողոպտելով նրանց տիրույթները: Սեբեոսը վկայում է, որ կայսրը պատրաստվում էր ավելի վատ բաներ անելու, սակայն, կաթողիկոսի և Մուշեղ Մամիկոնյանի խնդրանքներին ընդառաջելով, առայժմ դադարեցնում է բռնություններն ու հալածանքները և 20 000-անոց զորքով գալիս հաստատվում է Դվինում՝ ձմեռն այստեղ անցկացնելու դիտավորությամբ: Կոնստանսը Հայաստանի հեծելազորի հրամանատար է նշանակում Մուշեղ Մամիկոնյանին և նրան 3000 հոգով ուղարկում է հատկապես Սեպհական գնդի կողմերը: Հատուկ զորագնդեր են ուղարկվում նաև Վրաստան, Աղվանք ու Սյունիք՝ Թեոդորոս Ռշտունու կողմնակիցներին հարվածելու և նրանց դաշինքը խափանելու համար: Սակայն իր այս ձեռնարկումների մեջ կայսրը հաջողություն չունեցավ, որովհետև՝ «...Աղուանն և Սիւնին և գունդն Սեպհական ոչ հնազանդեցան և զորոց զերկիրն աւար առեալ տարան զինչ և գտին, և դարձան անդրէն առ արքայ»[2]: Հանդիպելով հայ հայրենասերների ուժեղ դիմադրությանը և հավանաբար մեծ կորուստներ կրելով նրանցից, բյուզանդական զավթիչները ստիպված են լինում բավարարվել միայն բնակիչներին կողոպտելով ու ետ են վերադառնում Դվին: Սա փաստորեն առաջին լուրջ հարվածն էր, որ հասցվում էր բյուզանդացիներին Թեոդորոս Ռշտունու համախոհների կողմից:

[1] Սեբեոս, էջ 141:

[1] Տե՛ս Սեբեոս, էջ 142—143:

[2] Նույն տեղում:

652—653 թվականի ձմեռը բյուզանդական կայսրն իր շքախմբով և զորքերով անցկացրեց Դվինում, մեկ անգամ ևս փորձելով քաղկեդոնականությունը պարտադրել հայերին: Դրա համար նա Դվինի ս. Գրիգոր եկեղեցում կազմակերպեց կիրակնօրյա շքեղ մի պատարագ հույն հոգևորականի գլխավորությամբ, որի ժամանակ, ինչպես հաստատում է Սեբեոսը, «...հաղորդեցաւ թագաւորն և կաթողիկոսն և ամէն եպիսկոպոսունքն, որ կամաւ և որ ակամայ...»[1]: Պատարագի կազմակերպման և հատկապես հայ բարձրաստիճան հոգևորականությանը հարկադրական ձևով հաղորդություն տալու գործում խիստ ակտիվ դեր էր կատարում կաթողիկոս Ներսեսը: Նա միայն ահաբեկման և մահվան սպառնալիքի տակ կարողացավ հայ եպիսկոպոսներին ընդունել տալ հունական հաղորդությունը: Սեբեոսն ուղղակի ասում է, որ կաթողիկոսը «...մատնէր զմի մի յեպիսկոպոսացն, և բեկանէր ահիւ: Մինչ զի առ մահուն երկիւղիւ ամենեքեան զհրամանսն հաղորդութեանն կատարէին..»[2]: Այս ծիսակատարության ժամանակ եպիսկոպոսներից միայն մեկը համարձակվեց չենթարկվելու հարկադրանքին և, առանց հաղորդությունն ընդունելու, ցուցադրաբար վայր իջավ եկեղեցու բեմից ու խառնվեց ամբոխին: Պատարագից հետո զայրացած կայսրն իր մոտ է բերել տալիս հայ եպիսկոպոսին ու բացատրություն պահանջում իրեն ու կաթողիկոսին վիրավորելու համար: Այն ժամանակ այդ հոգևորականն ասում է, որ չորս տարի առաջ, այսինքն՝ 648 թվականին, նույն հայոց կաթողիկոսի գլխավորությամբ Դվինում հրավիրված ժողովում կազմվեց մի հատուկ գրություն քաղկեդոնական դավանանքը մերժելու մասին, որը կնքվեց նախ կաթողիկոսի, ապա մյուս հոգևորականների և իշխանների մատանիներով: Այդ գրությունը այժմ էլ կաթողիկոսի մոտ է, հրամայեցեք թող ցույց տա[3]: Նա ուղում էր ասել, որ Ներսեսն իր համար հեղինակություն լինել չէր կարող, որովհետև նա փոփոխամիտ է և այլն: Մաղաքիա Օրմանյանի կարծիքով հիշյալ եպիսկոպոսը եղել է հենց ինքը՝ Սեբեոս պատմիչը[4]:

[1] Սեբեոս, էջ 144:

[2] Նույն տեղում:

[3] Դվինի 648 թվականի եկեղեցական ժողովի մասին խոսելիս մենք նույնպես ընդունել ենք Ստ. Մալխասյանցի կարծիքը, որ կայսրին ուղղված հայերի մերժողական գրությունը չի ուղարկվել հասցեատիրոջը: Ստ. Մալխասյանցը ճիշտ կերպով այս կարծիքին է հանգել նաև ի նկատի ունենալով վերոհիշյալ եպիսկոպոսի ակնարկը, թե այժմ էլ գրությունը գտնվում է կաթողիկոսի մոտ (տե՛ս Սեբեոս, ծանոթ. 72, էջ 196):

[4] Տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, մասն Ա, էջ 725:



652—653 թվականի ձմռանը Կոնստանսը շտապ վերադարձավ Կոնստանդնուպոլիս՝ պետական կարևոր գործերը կարգավորելու և երկրի արևմտյան սահմանները պաշտպանելու: Գնալուց առաջ նա հայոց իշխանի պաշտոնում նշանակեց ոմն Մավրիանոսի և երկրի փաստական ղեկավարությունը հանձնեց նրան:

Թեոդորոս Ռշտունին, որ իր փեսայի՝ Համազասպ Մամիկոնյանի հետ ամրացել էր Ախթամարում, կայսեր գնալուց հետո օգնություն խնդրեց արաբներից և սկսեց հարձակման պատրաստություններ տեսնել: 653 թվականի գարնանը արաբական յոթ հազարանոց զորաբանակը հասավ Հայաստան: Թեոդորոս Ռշտունին նրանց առաջնորդեց դեպի Աղիովիտ ու Բզնունիք գավառները: Սեբեոսի մոտ այդ մասին կարդում ենք. «Իսկ Թէոդորոս Ռշտունեաց տէր դարանակալ եղև յԱղիւամար կղզի, ինքն և փեսայ իւր Համազասպ Մամիկոնէից տէր. և խնդրեաց յիւր զաւրս ի յիսմայէլացւոցն, և եկն է հազար այր յաւգնականութիւն նմա, և նոսաւոյց զնոսա յԱղիովիտ և ի Բզնունիս, և ինքն առ նոսա ելեալ, կայր ի մէջ նոցա»[1]: Սեբեոսի վկայություններից երևում է, որ կայսրի հեռանալուց հետո միայն, մեծ զատկի նախօրեին սկսվում է նաև բյուզանդական զորքերի ևս քաշվելը Հայաստանից:

Քանի որ 653 թվականի վերադիրը եղել է 27-ը, լուսնի ավագ (պատկական) լրումն ընկնում է ապրիլի 18-ին, որը, ըստ Բ. Թումանյանի «Հայ աստղագիտության պատմություն» աշխատության համապատասխան աղյուսակի, հինգշաբթի է, ուրեմն զատիկը պետք է լիներ դրանից հետո առաջին կիրակի օրը՝ այսինքն ապրիլի 21-ին, ինչպես ճիշտ կերպով գտնում է նաև Մ. Օրմանյանը[2]: Սեբեոսն այդ մասին ասում է հետևյալը. «Եւ իբրև անցին աւուրք ձմերայնոյն, մերձ ի զատիկն մեծ՝ փախեաւ Հոռոմ և անկաւ ի Տայս...»[3]: Ուրեմն բյուզանդական զորքերի նահանջի ճշգրիտ ժամանակն ընկնում է 653 թվականի ապրիլի կեսերին, որը միանգամայն հարմար էր զորական խոշոր միավորների տեղաշարժի համար:

Նահանջող բյուզանդական զորքերը գտնվում էին Թեոդորոս Ռշտունու և արաբական աստրաբաժանումների մշտական հետապնդումների ու հարձակումների սպառնալիքի տակ, որի հետևան-

[1] Սեբեոս, էջ 144:

[2] Տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, մասն Ա, էջ 729: Միանգամայն սխալվում է Մ. Ղազարյանը, երբ այդ դեպքը գնում է 654 թվականի տակ, տե՛ս M. Ghazarian, Armenien unter der arabischen Herrschaft, էջ 32:

[3] Սեբեոս, էջ 146:

քով նրանք, ահագին կորուստներ կրելով, մի կերպ քաշվում ու հաստատվում են Տայոց աշխարհում: Սակայն շուտով վրա հասած հայ-արաբական զորքերը նրանց այստեղից էլ են արտաքսում և այնուհետև քշում տանում են մինչև ծովափնյա Տրապիզոն քաղաքը, որը հաղթողների կողմից գրավվում և կողոպտվում է: Սեբեոսն ասում է, որ հայկական զորքերը փախչող բյուզանդացիների ետևից «...աւերեցին զամենայն երկիրն. առին և զՏրապիզոն քաղաք, և խաղացուցին առ և աւար և գերութիւն բազում յոյժ»[1]:

Շապուհ Բագրատունին և Վարդան Արևելցին հաղորդում են, որ այս կռիվների ընթացքում հատկապես ակտիվ էր գործում Թեոդորոս Ռշտունու որդին՝ Վարդը: Նա Կոլոնիա քաղաքի մոտ հնարամտությամբ կարողանում է Կոնստանս կայսրի 30 000-անոց բանակն անցկացնել տալ գետի այն ափը, որտեղ գտնվում էր արաբական բանակը՝ Սահակ զորավարի առաջնորդությամբ: Արաբները ըստ կրղբում սուտ փախուստ են տալիս, իսկ այնուհետև կորուկ ետ են դառնում ու հարձակման անցնում: Հանկարծակիի եկած բյուզանդացիները այլևս չեն կարողանում պաշտպանվել և ջախջախվում են ու փախչում: Սակայն կամուրջը, որով բյուզանդացիները պետք է կրկին անցնեին գետի մյուս ափը, Վարդի կողմից քանդվում է, և բյուզանդական ահաբեկված զինվորները, ամբողջությամբ ընկնելով էլ ավելի ծանր կացության մեջ, ոչնչանում են[2]:

Կայսեր և նրա զորքերի Հայաստանից արտաքսվելուց հետո խիստ անկայուն և վտանգավոր վիճակ էր ստեղծվում բյուզանդական շերների և առաջին հերթին կաթողիկոս Ներսեսի ու նրա կողմնակից հոգևորականների ու աշխարհիկ ֆեոդալների համար: Այդ է պատճառը, որ «Իբրև գնաց արքայ Կոստանդին ի Դմնայ՝ գնաց և կաթողիկոսն ընդ նմա: Եւ երթեալ դադարեաց ի Տայս, և այլ ոչ դարձաւ ի տեղի իւր. զի իշխանն Ռշտունեաց և այլ իշխանքն որ ընդ նմա՝ անհնարին ցասմամբ փոքացեալ էին ի վերայ նորա»[3]: Հասկանալի է, որ կաթողիկոսի հետ միասին հեռացել էին նաև նրա համախոհները: Հայոց կաթողիկոսը Տայքում երկար չի մնում, այստեղից անցնում է Կոնստանդնուպոլիս, որտեղ նրան ընդունում են մեծ պատվով և հետո կրկին ետ են ուղարկում Տայք, որտեղ նա մնում է մինչև Թեոդորոս Ռշտունու մահը, որից հետո միայն գալիս

[1] Սեբեոս, էջ 146:

[2] Տե՛ս «Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ», էջմիածին, 1921, էջ 21—32, Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ, Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 95:

[3] Սեբեոս, էջ 146:



է Դվին և կրկին իր ձեռքը վերցնում կաթողիկոսական իշխանությունը: Հիշյալ իրադարձություններն այսպես է նկարագրում Սեբեոսը. «Իսկ կաթողիկոսն Հայոց Ներսէս գնաց ընդ Թագաւորին, որպէս վերագոյն ասացի, և չուեաց ընդ նմա ի Կոստանդնուպաւլիս: Եւ ընկալաւ զնա անդ պատուով. և եառն նմա ինչս և արձակեցին անդրէն ի տեղի իւր, և եկն դադարեաց ի Տայս մինչև մեռաւ Ռշտունեաց տէրն, դադարեաց ասպատակ տաճկին. և ապա յետ վեցերորդի ամի հալածանացն դարձաւ անդրէն ի տեղիս իւր. և հաստատեցաւ յաթոռ կաթողիկոսութեան»[1]: Գրեթե նույնն է ասում նաև ուշ շրջանի պատմիչ Վարդան Արևելցին[2]:

Հայ-արաբական պայմանագրի գործնական լինելը հաստատվեց փաստորեն նրա կնքումից անմիջապես հետո, երբ դաշնակիցները միացյալ ուժերով ջախջախեցին և Հայաստանից դուրս քշեցին բյուզանդական զավթիչներին: Բյուզանդացիների դեմ տարած հաղթանակից հետո միայն Թեոդորոս Ռշտունին մեծամեծ նվերներով մեկնեց Դամասկոս, Մուավիայի հետ անձամբ տեսակցելու համար: Դամասկոսում հայոց սպարապետին ցույց է տրվում արտակարգ ու փառավոր ընդունելություն: Արաբական իշխանավորը ոսկեղեն ու ոսկեթել հագուստներից և այլ թանկարժեք նվերներից բացի, Թեոդորոս Ռշտունուն տալիս է նաև Հայաստանում, Վրաստանում, Աղվանքում և մինչև Ճորա պահակը իշխելու իրավունքը: Ահա թե ինչպես է նկարագրում Սեբեոսը Թեոդորոս Ռշտունու մեկնումը Դամասկոս. «Յետ այնորիկ գնաց Թէոդորոս Ռշտունեաց տէրն առ Մաւիաս իշխանն Իսմայելի ի Դամասկոս և եառս զնա մեծամեծ ընծայիւք: Եւ ետ իշխանն Իսմայելի հանդերձս ոսկեղէնս և ոսկեթել, և վառ մի նորին աւրինակաւն: Եւ իշխանութիւն ետ նմա դՀայս և զՎիրս և զԱղուանս և զՍիւնիս, մինչև ցԿապկոհ և զպահակն Ճորայ, և արձակեաց զնա պատուով: Եւ նորա պայման էր եդեալ նմա՝ ածել զերկիրն զայլն ի ծառայութիւն»[3]:

Դամասկոսից վերադառնալուց հետո անսպասելիորեն հիվանդանալով, Թեոդորոս Ռշտունին, ստիպված, ժամանակավորապես հեռանում է քաղաքական ասպարեզից ու գնում Ախթամար կղզին: Այդ նույն թվականին լրանում էր արաբա-բյուզանդական զինադադարի ժամկետը, և արաբները եռանդուն կերպով նախապատրաստվում էին հարձակվելու Բյուզանդիայի վրա: Եվ քանի որ այդ արշա-

[1] Սեբեոս, էջ 153—154:

[2] Տե՛ս Վարդան Բարձրբերդցի, էջ 96:

[3] Սեբեոս, էջ 146:

վանքը գլխավորելու էր անձամբ Ասորիքի կառավարիչ Մոավիան, դրա համար էլ Պարսկաստանից, Խուժաստանից, Հնդկաստանից, Ասորիքից, Եգիպտոսից և այլ վայրերից նույնպես արաբական ամենաընտիր զորագնդերը կուտակվում էին Դամասկոսում, իսկ Ալեքսանդրիայում և մյուս նավահանգստային քաղաքներում պատրաստ վիճակի մեջ էին դրվում Արաբական խալիֆայության ծովային ուժերը[1]։

Եվ այսպես, հավանաբար 653 թվականի կեսերին արաբներն սկսում են պատերազմը Բյուզանդիայի դեմ։ Սրընթաց հարձակումով Մոավիան կարողանում է կարճ ժամանակամիջոցում հասնել մինչև Կոնստանդնուպոլիս և ծովից ու ցամաքից շրջապատել քաղաքը։ Սակայն հույների կատաղի դիմադրությունը և ահեղ փոթորիկը ոչ միայն խափանում են վերահաս վտանգը, այլև պարտության մատնում հակառակորդին։ Սեբեոսը պատմում է, որ Կոնստանդնուպոլսի և Քաղկեդոնի մոտ կրած պարտությունից հետո, 653 թվականի աշնանը, արաբական զորքերի մի մասը նահանջելիս կանգ է առնում Դվինում։ Այստեղից նրանք փորձում են հարձակվել Վրաստանի վրա, սակայն ձյան և ցրտերի պատճառով անհաջողության մատնվելով, ետ են գնում Ասորիք՝ առանց Հայաստանում որևէ անիրավություն կատարելու[2]։

Արաբների Անդրկովկասից շտապ կերպով հեռանալու դրդապատճառներից մեկն էլ, մեր կարծիքով, այն էր, որ այդ ժամանակ Պարսկաստանի որոշ մասերում բռնկվել էին հուժկու ապստամբություններ։ Լեռնային քաջարի ժողովուրդները, սպանելով խալիֆի հարկահավաքներին, ապավինել էին իրենց հայրենիքի ամրություններին և շարունակում էին հերոսական պայքար մղել հարստահարիչների դեմ[3]։

Արաբների ղրաղվածությունից և Թեոդորոս Ռշտունու հիվանդությունից փորձում են օգուտ քաղել Արևելյան և Արևմտյան Հայաստանի ֆեոդալների անկայուն և կենտրոնախույս տրամադրություններ ունեցող տարրերը։ Նրանք Մուշեղ և Համազասպ Մամիկոնյանների գլխավորությամբ միանգամայն ինքնագլուխ կերպով «...բաժանեցին զերկիրն ըստ թուոյ իւրաքանչիւր հնծելոց, և կարգեցին հարկապահանջս ոսկւոյ և արծաթոյ»[4], այսինքն, ինչպես

[1] Տե՛ս Սեբեոս, էջ 147—148, տե՛ս նաև Ստ. Ասողիկ, էջ 120—121, Վարդան Բաբերդեցի, էջ 98։

[2] Տե՛ս Սեբեոս, էջ 149։

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 150։

[4] Նույն տեղում։



ճիշտ կերպով մեկնաբանում է պրոֆ. Բ. Առաքելյանը, ելնելով յուրաքանչյուրի հնծելազորի թվից, նրանք կատարում են տիրույթների նոր վերաբաժանում, ընդարձակում իրենց կալվածքները և մեծ չափով ավելացնում ժողովրդից գանձվող դրամական հարկերը[1]։ Այդ կամայականության պատճառով առաջին հերթին տուժում էին աշխատավորական խավերը, որոնց վիճակը Սեբեոսի պատկերավոր արտահայտությամբ՝ նման էր սոսկալի ցավերից խոսելու ընդունակությունը կորցրած հիվանդի վիճակի, երբ «...ոչ զոյր մարդկան տեղի փախստի և թագստեան, և ոչ խնայել ի ներքուստ, այլ որպէս ոք զի անկցի ի ծով՝ և ելս ոչ կարիցէ գտանել»[2]։ Այս բոլորը երկրում առաջ են բերում խիստ դժգոհություններ, իսկ Թեոդորոս Ռշտունին, վրդովված, օգնություն է խնդրում արաբներից հանցագործ ու սանձարձակ տարրերին պատժելու համար։

Արաբական խալիֆայությունը, որն արդեն փոխել էր իր վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ և ձգտում էր նվաճել ու վերջնականապես տիրել այն, այս առիթն օգտագործելով, 654 թվականին մի ստվար բանակ է ուղարկում Հայաստան Հաբիբ իբն-Մասլամայի գլխավորությամբ։ Արաբական պատմիչ Բալաձորին, որ մանրամասնությամբ նկարագրում է այդ դեպքերը, իր գրքի «Հայաստանի նվաճումը» բաժնում, պատմում է, որ Իրաքի կառավարիչ Հաբիբ իբն-Մասլամային անձամբ Հայաստան էր ուղարկել Օսման խալիֆը (644—656) որպես Բյուզանդիայի դեմ մղված կռիվներում աչքի ընկած զորավարի։

Խալիֆի գրավոր հրամանն ստանալուց անմիջապես հետո Հաբիբը 6000—8000 զինվորներով, որոնք հիմնականում հավաքագրվել էին Ասորիքից ու Միջագետքից, շարժվում է Հայաստան։ Արաբները Հայաստան են ներխուժում նախկինից իրենց ծանոթ հարավային սահմաններից և, անցնելով Բարձր Հայքով, շրջապատում են Կարին քաղաքը[3]։ Պարզ է, որ արաբական զորավարն ակնհայտորեն ցանկանում էր նախ ձեռք գցել Բյուզանդական կայսրության սահմանագլխին գտնվող այդ ամուր և ռազմական տեսակետից կարևորագույն նշանակություն ունեցող քաղաքը և հետո միայն շարժվել երկրի խորքերը։

Արաբների անակնկալ հարձակումը թեև ահաբեկում է Կարինի

[1] Տե՛ս Բ. Առաքելյան, Հայաստանը արաբական տիրապետության առաջին շրջանում և հայերի պայքարն անկախության համար, էջ 78։

[2] Սեբեոս, էջ 150։

[3] Տե՛ս Баладзори, Книга завоевания стран, текст и перевод с арабского проф. П. К. Жузе, Баку, 1927, էջ 8-9: Տե՛ս նաև Սեբեոս, էջ 153։

բնակիչներին, սակայն նրանք այնուամենայնիվ կարողանում են որոշ դիմադրություն ցույց տալ թշնամուն։ Բայց այդ դիմադրությունը շատ թույլ էր, արաբներն այն հեշտությամբ ընկճում են և կարճատև կռիվներից հետո գրավում քաղաքը։ Այնուհետև արաբները Կարինի բնակիչներին պարտադրում են գլխահարկ վճարել։ Արաբական հրոսակախմբերն այստեղ մնացին մի քանի ամիս և այդ համեմատաբար կարճ ժամանակամիջոցում նրանք իրենց ապստամբություններով, կամայականություններով ու բռնություններով ընդհանուր զայրույթ ու վրդովմունք առաջացրին ոչ միայն Կարինում ու նրա շրջակայքում, այլև Եփրատի ավազանի մյուս հայկական գավառներում։ Բալաձորին վկայում է, որ հենց այդ ժամանակ Կարինի և Մելիտինեի շրջաններում բորբոքվում են ապստամբական շարժումներ և ժողովրդական վրիժառուների խմբերը, հարձակվելով իրենց հարստահարողների վրա, անխնա կերպով ոչընչացնում են նրանցից շատերին։ Արաբների ակտիվությունը Հայաստանի արևմտյան շրջաններում լուրջ անհանգստություն է պատճառում նաև բյուզանդական իշխանություններին։ Բալաձորին պարզ կերպով ասում է, որ արաբների դեմ բռնկված ապստամբության մեջ նախաձեռնությունը պատկանում էր Արևմտյան Հայաստանի Արմենիակոն թեմի պատրիկին, որը հայերից բացի իրեն էր միացրել նաև ալաններին, աբխազներին և մյուս ժողովուրդներին[1]։ Արաբների դեմ պայքարողներից բացի, կային նաև այնպիսիները, որոնք վտանգից հեռու մնալու համար թողնում-հեռանում էին դեպի Բյուզանդական կայսրության խորքերը[2]։ Հաբիբ իբն-Մասլաման տեսնելով, որ իր վիճակը գնալով վատանում է, շտապ կարգով խալիֆից խնդրում է օգնություն։ Վերջինս Ասորիքի կառավարիչ Մոավիայից պահանջում է անհապաղ Հայաստան ուղարկել Ասորիքի և Միջագետքի հատկապես այն տարրերին, «...որոնք ցանկանում են մասնակցել սրբազան պատերազմին և ավարառությանը»[3]։ Այս հրամանն ստանալուն պես Մոավիան Հայաստան է ուղարկում 2000 հոգուց բաղկացած մի զորաբանակ, որոնց Հաբիբն անմիջապես

[1] Տե՛ս Баладзори, Книга завоевания стран, էջ 8–9, նաև П. К. Жузе, Арабские племена в Закавказье, Институт истории и философии АН Азерб. ССР, фонд 507, էջ 9–10։

[2] Տե՛ս Баладзори, Книга завоевания стран, էջ 8–9, նույնը տե՛ս Գիրք աշխարհակալության, տե՛ս Հատվածք պատմության Հայաստանի, քաղված հարթացի պատմագրից, թարգմ. Կ. Յուջյուճյանի, տետր Ա, Կ. Պոլիս, 1874, էջ 11, Իբն ալ-Ասիր, «Հանդես ամսօրյա», 1908, № 2, էջ 48։

[3] Баладзори, Книга завоевания стран, стр. 8—9.



տեղավորում է Կարինում՝ որպես քաղաքը պաշտպանող կայազորային զորքեր և հատկացնում հողային կալվածքներ։ Սա Արաբական խալիֆայության առաջին փորձն էր Հայաստանում արաբական ցեղերի վերաբնակեցման ուղղությամբ։ Առաջին օգնական ուժերին շուտով հաջորդում են նաև նորերը։ Այս անգամ Հայաստան է շարժվում արաբական մի նոր զորաբանակ՝ կազմված 6000 հոգուց, որին առաջնորդում էր Կուֆ քաղաքից Սալման իբն-Ռաբիան։ Սակայն մինչև վերջիններիս տեղ հասնելը Հաբիբ իբն-Մասլամայի և արաբների դեմ միավորված հայկական և բյուզանդական ուժերը հարձակման են անցնում, որոնք, սակայն, Եփրատի մոտ ենթարկվելով Հաբիբի գիշերային անակնկալ հարձակմանը, պարտվում են։ Կռիվներում սպանվում է նաև Արմենիակոն թեմի կառավարիչը։ Հայերի ու արաբների այս ընդհարումները վերջանալուց հետո միայն տեղ են հասնում նաև Սալման իբն-Ռաբիայի գնդերը, որոնք Հաբիբի մարդկանցից պահանջում են վերցված ավարից իրենց ևս բաժին հանել։ Երբ Հաբիբի զինվորները մերժում են կուֆացիների պահանջը, այն ժամանակ նրանք զայրանում են իրենց զորավարի վրա ու քիչ է մնում սպանեն նրան։ Այս անկարգությունների լուրը շուտով հասնում է խալիֆին և նա կարգադրում է Սալման իբն-Ռաբիային արշավել Աղվանքի վրա և իր զինվորներին բավարարել նրա կողոպուտով։ Սալմանի իրաքյան զորքերը կատարելով խալիֆի հրամանը, ճանապարհին կողոպտում են նաև Հայաստանի շրջանները և իրենց հետ տանում շատ գերիների[1]։ Աղվանք ներխուժած զորքերը կարճ ժամանակում գրավում են Բայլականը, Պարտավը, Շիրվանշահերի երկիրը և հասնում մինչև Դերբենդ։ Իսկ Հաբիբ իբն-Մասլաման, կոտրելով Մելիտինեի և Կարինի հայերի դիմադրությունը, անարգել կերպով շարունակում է նորանոր նվաճումներ կատարել Հայաստանում։ Նրա զորքերը նախ շարժվելով դեպի Վանա լճի հյուսիսային կողմերը, գրավում են Խլաթ քաղաքը, որի իշխանը հպատակություն է հայտնում արաբներին և խոստանում է հարկ տալ։ Արաբ զորավարը դրա փոխարեն երաշխավորում է նրա անձն ու գույքը և թողնում կառավարելու իր իշխանությունը[2]։ Դրանից հետո գրավելով Արճեշը, Բագրևանդի, Բզնունիքի և Մոկսի որոշ մասերը, տեղական ազնվականների հետ Հաբիբ իբն-Մասլաման կնքում է հատուկ պայմանագրեր՝ նրանցից խարաջ (հողահարկ) ըստանալու սկզբունքով[3]։ Այսուհետև արաբները ներխուժում են Այրա-

[1] Տե՛ս Баладзори, Книга завоевания стран, էջ 8—9։

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 10։

[3] Տե՛ս նույն տեղը։



1287—6

թատ և գրավում Արտաշատը[1], որը, ինչպես Բալաձորին է ասում, «...նույն կրմըզ ավանն էր»[2]: Այդրարատյան հովտի որոշ մասերը գրավելուց հետո արաբները միահամուռ ուժերով հարձակվում են Դվինի վրա:

Դվինի դեմ առաջին ռազմական գործողությունները ձեռնարկում են արաբական հեծելազորային գնդերը, իսկ այնուհետև քաղաքին են մոտենում նաև բանակի մյուս առորաբաժանումները: «Քաղաքի բնակիչները,— ասում է Բալաձորին,— ամրանալով սկսեցին նրա (Հաբիբ իբն-Մասլամայի—Ս. Մ.-Բ.) վրա տեղալ նետերի տարափ: Այն ժամանակ նա (քաղաքի պարիսպներին մոտեցրեց քարընկեց մեքենաներ և սկսեց քարեր տեղալ բնակիչների վրա այնքան ժամանակ, մինչև նրանք հաշտություն և ողորմածություն խնդրեցին»[3]: Այն ժամանակ արաբական զորավարը դադարեցրեց կռիվը և քաղաքի բնակիչների հետ կնքեց հատուկ պայմանագիր, որի բովանդակությունը, ըստ Բալաձորիի, հետևյալն էր. «Հանուն ողորմած և գթասիրտ աստծո, Հաբիբ իբն-Մասլամայի կողմից այս գիրը տրվում է Դվին քաղաքի քրիստոնյաներին, նրա մոգերին և հրեաներին, ինչպես ներկաներին այնպես էլ բացականերին, առ այն, որ ես երաշխավորում եմ ձեր անձը և գույքը, ձեր եկեղեցիները և վանքերը և ձեր քաղաքի պարիսպը: Դուք գտնվում եք անվտանգության մեջ և մենք պարտավորվում ենք պայմանը կատարել, ձեզ հետ միասին, այնքան ժամանակ՝ որքան և դուք կկատարեք այն և կվճարեք ջիզյաթ և խարաջ (գլխահարկ և հողահարկ)... Այս գիրը վավերացնում է Հաբիբ իբն-Մասլաման իր կնիքով»[4]:

Դվինը գրավելուց և հպատակեցնելուց հետո արաբական զորքերը գրավում են նաև շրջակայքի մյուս բնակավայրերը և արշավում դեպի ավելի հեռավոր վայրեր: Արաբական մեկ ուրիշ պատմիչ՝ Իբն-Ֆաքիհը վկայում է, որ արաբներին այս անգամ հաջողվում է հայերին խաղաղ ճանապարհով հպատակեցնել նրանցից գլխահարկ ու հողահարկ ստանալու պայմանով[5]:

Հաջորդ տարվա գարնանը Հաբիբ իբն-Մասլաման հարձակվում

[1] Բալաձորիի մոտ բառացի նշանակված է ազդիսատ՝ Ascidischad, որը, մեր կարծիքով, միանգամայն իրավացի կերպով Աս. Շահնազարյանն ու պրոֆ. Բ. Առաքելյանն ուղղում են Արտաշատ ձևով (տե՛ս Բ. Առաքելյան, Հայաստանը արաբական տիրապետության առաջին շրջանում..., էջ 79, ծան. 1):

[2] *Баладзори*, Книга завоевания стран, стр. 10:

[3] Նույն տեղում, էջ 11:

[4] Նույն տեղում:

[5] Տե՛ս *Ибн ал-Факих ал-Хамадани*, Сборник материалов для описания местностей и племён Кавказа, вып. 31, էջ 27:



է Նախիջևանի վրա, որտեղ գտնվում էր բյուզանդական ոչ մեծ զորաբանակը Մավրիանոսի հրամանատարությամբ: Սեբեոսի և Բալաձորիի նույնանման վկայություններով՝ բյուզանդացիներն այս կռվում ջախջախվում և պարտություն են կրում, իսկ արաբները, գրավելով քաղաքը, վերցնում են հարուստ ավար ու գերիներ[1]:

Դվինի և Նախիջևանի անկումը լուրջ կերպով ահաբեկում է նաև Վասպուրականի նախարարներին, որոնց ներկայացուցչի հետ արաբները Նախիջևանում պայմանագիր են կնքում և պարտադրում, որպեսզի հայերը, հարկ և զորք տալուց բացի, հոգան նաև արաբական ռազմական ուժերի պարենային պահանջները[2]: Նախիջևանից հետո արաբները ներխուժում են Վայոց ձոր և Սյունիք, հեշտությամբ ընկճելով տեղ-տեղ հայերի կողմից ցույց տրվող դիմադրությունը, գրավում են նաև այդ երկրամասերը և բնակիչների վրա հարկեր դնում[3]:

Հայաստանից Հաբիբ իբն-Մասլաման մտնում է Վրաստան և կարճատև կռիվներից հետո հպատակեցնում է Թիֆլիսը, ապա գրավում Շավշեթի, Խունանի, Թրիալեթի, Կախեթի շրջանները[4]: Արաբական հրոսակախմբերը, ավարից բացի, իրենց հետ տանում են նաև 1800 պատանդներ, Հայաստանի անվանի մարդկանցից, նրանց դուստրերից ու որդիներից[5]: Այս գերիների և պատանդների խմբերին, հավանաբար ինքնակամ կերպով, միանում է նաև Թեոդորոս Ռշտունին՝ Դամասկոս գնալու և հայ-արաբական հարաբերությունները կարգավորելու հույսով: Սակայն նրա առողջական վիճակն ու վերջին ժամանակներում կրած հոգեկան տառապանքներն անկատար են թողնում մեծ զորավարի հույսերը և նա «Անդ մեռաւ... և մարմին նորա բերաւ ի գաւառ իւր և թաղեցաւ ի գերեզմանի հարց իւրոց»[6]: Թեոդորոս Ռշտունու մահը հավանաբար տեղի է ունեցել 656 թվականին[7]:

[1] Տե՛ս Սեբեոս, էջ 153, Բալաձորի, «Հանդես ամսօրյա», 1903, № 6, էջ 179:

[2] Տե՛ս *Баладзори*, Книга завоевания стран, էջ 11:

[3] Տե՛ս Բալաձորի, «Հանդես ամսօրյա», 1903, № 8, էջ 252—253, նաև *Баладзори*, Книга завоевания стран, էջ 11:

[4] Տե՛ս նույն տեղը, էջ 13:

[5] Տե՛ս Սեբեոս, էջ 153, 155:

[6] Նույն տեղում, էջ 153, Հովհ. Դրասխանակերտցի, էջ 87—88:

[7] 656 թվականը ընդունվել է դեռևս Կ. Եզյանի և Մ. Ղազարյանի կողմից, տե՛ս «Պատմութիւն Դաւնդակայ Մեծի վարդապետի Հայոց», ս. Պետերբուրգ, 1887, Ստեփանոս, էջ 66, M. Chazarian, Armenien unter der arabischen Herrshait, էջ 32: Այլ կարծիքի է Մ. Օրմանյանը: Նա Թ. Ռշտունու մահը վերագրում է 658, իսկ սպարապետության սկիզբը՝ 631 թվականներին, տե՛ս նրա Ազգապատում, մասն Ա, էջ 731:

Օսման խալիֆը սկզբում ուղում էր Հաբիբ իբն-Մասլամային Հայաստանի կառավարիչ նշանակել, սակայն հետո նա փոխում է իր մտադրությունը և նրան Հայաստանից ետ կանչելով՝ նշանակում է Ասորիքի զորքերի հրամանատար[1]: Դրանից հետո, ինչպես հիշատակվում է Բալաձորիի ռուսերեն թարգմանության տեքստում, Հայաստանի կառավարիչ է նշանակվում Հուզեյֆ իբն-Յամանը[2]:

Ամփոփելով Հաբիբ իբն-Մասլամայի և արաբական մյուս ուժերի կողմից դեպի Հայաստան կատարած արշավանքների և ասպատակությունների մասին վերևում մեր ասածները, կարելի է անել այսպիսի եզրակացություններ. արաբների այս նոր ներխուժումը տեղի ունեցավ Հայաստանի համար քաղաքական տեսակետից միանգամայն անբարենպաստ պայմաններում: Օգտվելով Թեոդորոս Ռշտունու հիվանդությունից և քաղաքական ասպարեզից նրա բացակայությունից, հայ ֆեոդալների և նախարարների մի որոշ մասը, երկրի անվտանգությունն ապահովելու և իրենց ուժերը միավորելու փոխարեն, բռնեցին պառակտման և անջատման ուղին: Այդ իսկ պատճառով արաբներին հաջողվեց իրենց ունեցած ոչ ավելի քան 15000-անոց զորքով, համեմատաբար կարճատև ժամանակամիջոցում, խաղաղ ճանապարհով կամ եղած թույլ ու անկազմակերպ դիմադրությունները հեշտությամբ հաղթահարելով, խալիֆայության իշխանությանը ենթարկել բազմաթիվ հայ ֆեոդալների՝ Բարձր Հայքից սկսած մինչև Այրարատի կենտրոնական շրջանները, մինչև Վայոց ձոր, Սյունիք ու Նախիջևան ձգվող ողջ տերիտորիան: Ֆեոդալական ցրվածությունը, ներքին անհամաձայնությունն ու թշնամական բանակների ներխուժումից առաջացած խուճապն ու աճաբեկումն այնքան ուժեղ էին հայ աղնվականների շարքերում, որ Թեոդորոս Ռշտունու նման ռազմական գործիչն ու քաղաքագետն անգամ, այլևս ի վիճակի չլինելով որևէ ելք գտնել, դիմեց անձնա-

[1] Բալաձորիի վկայությամբ Հաբիբ իբն-Մասլաման սկզբում հաստատվում է Հոմս քաղաքում, իսկ հետո Մոավիան նրան տեղափոխում է Դամասկոս, որտեղ նա մահանում է հիջրայի 42 թվականին, այսինքն՝ 662—663 թվականներին, 35 տարեկան հասակում (տե՛ս Баладзори, Книга завоевания стран, էջ 15):

[2] Տե՛ս Баладзори, Книга завоевания стран, էջ 14: Բալաձորիի բնույթի 1866 թվականի արաբերեն բնագրում Հաբիբ իբն-Մասլամայից հետո Հայաստանի և Ադրբանի կառավարիչներ են հիշատակվում հետևյալ անձինք՝ Կասըմ իբն-Իբարհ Սագաֆի, Ակիլի, Աղաս իբն-Կեյս, Աբդուլահ իբն-Հաթիմ իբն-Նայման իբն-Ամր Բահիլի, Աբդուլ-Ազիզ իբն-Հաթիմ իբն-Նայման, Մոհամեդ իբն-Մրվան, ապա սրա եղբայրը՝ Աբդուլ-Մելիք իբն-Մրվան, Եզիդ իբն-Աբդուլ-Մելիք Բոհրանի, Հաբս իբն-Ամր-Թային, Ջառահ իբն-Աբդուլահ Հաքամի, Հոշամ Մելիք, Մասլամա իբն-Աբդուլ Մելիք (էջ 205—206):



պոհության վերջին քայլին, մեկնեց Դամասկոս բայց այնտեղ էլ վախճանվեց՝ չկարողանալով բարելավել իր հայրենիքի ծանր դրությունը:

Հաբիբ իբն-Մասլամայի արշավանքով վերջնականապես բացահայտվեցին Արաբական խալիֆայության իսկական դեմքն ու նրա ունեցած բացահայտ նվաճողական դիտավորությունները Հայաստանի նկատմամբ: Այդ արշավանքները, սկսվելով 654 թվականին, հավանաբար շարունակվել են մինչև 656 թվականը[1]:

654—656 թվականների արշավանքներն ու ասպատակությունները Հայաստանում ժողովրդական լայն խավերի մեջ առաջացրին խոր դժգոհություն և ատելություն Արաբական խալիֆայության հանդեպ: Նույնիսկ նրանք, ովքեր այս կամ այն շարժառիթից դրդված հաշտվել էին արաբների հետ ու որոշակի պարտավորություններ ստանձնել նրանց հանդեպ, այժմ հարմար առիթի էին սպասում արաբներից երես թեքելու համար: Եվ այդ առիթը ներկայացավ 656 թվականին, երբ ներքին պայքարում սպանվեց Օսման խալիֆը: Նրան հաջորդած Ալիի դեմ գահակալական արյունահեղ կռիվները շարունակվեցին մինչև 661 թվականը և ավարտվեցին Ալիի սպանությամբ ու Ասորիքի կառավարիչ Մոավիայի գահակալումով (661—680): Մոավիան հանդիսացավ խալիֆայական նոր՝ Օմայան դինաստիայի հիմնադիրը:

Հայաստանից հետու, արաբական տիրապետության ներսում տեղի ունեցող այդ խլրտումները կարծեք բավականություն են պատճառել ժամանակի դառնությունն ամբողջովին ճաշակած Սեբեոսին, որն իր գրքի վերջում գոհունակությամբ արձանագրում է. «Արդ՝ առաքեաց Աստուած խռովութիւն ի մէջ բանակացն որդւոցն Իսմայելի, և պատառեցաւ միաբանութիւն նոցա, և խառնեցան ընդ միմեանս, և բաժանեցան ի չորս մասունս: ...Եւ սաստկացաւ արիւն կոտորածին անհուն բազմութեանց ի մէջ բանակացն Իսմայելի. և գործ պատերազմին տագնապէր՝ զմիմեանս սատակելով: Եւ ոչ կարէին դադարել փոքր մի ի սրոյն և ի գերութենէն և ի սաստիկ պատերազմացն՝ որ ի ծովու և ի ցամաքի, մինչև զաւրացաւ Մաւիաս և յաղթեաց ամենեցունն»[2]:

Եվ այսպես, 656 թվականից սկսած մի քանի տարի շարունակ օգտվելով խալիֆայության ներսում տիրող դրությունից, հայերն

[1] Մ. Դազարյանը բոլորովին անհիմն կերպով Հաբիբ իբն-Մասլամայի արշավանքը վերագրում է 643 թվականին, տե՛ս նրա Armenien unter der arabischen Herrschaft, էջ 17:

[2] Սեբեոս, էջ 155—156:

իրենց ազատ համարելին նրա հանդեպ ունեցած պարտավորությունների կատարումից: Սակայն գալիք դժվարությունների դեմ կանգնելու համար հայերն անպայման դաշնակցի կարիք էին ղգում: Ահա հենց այդ ժամանակ կրկին իր պաշտոնին վերադարձավ Ներսես կաթողիկոսը և անմիջապես սկսեց բանակցել Կոնստանս կայսեր հետ՝ նրա հովանավորությունը ձեռք բերելու համար: Կաթողիկոսը փոխարենը խոստանում էր Հայաստանում ընդունել տալ քաղկեդոնական դավանանքը: Կայսրը հայերի այս առաջարկն ընդունեց ուրախությամբ և, ընդառաջելով Ներսեսին, Հայաստանի կառավարիչ ճանաչեց Թեոդորոս Ռշտունու փեսային՝ Համազասպ Մամիկոնյանին, որը ինչպես Սեբեոսն է ասում, «...ընդանուն և ընթերցասէր և ուսումնասէր, և ոչ ըստ հայրենի ազգին վարժ և կիրթ հրահանգաւք, ոչ մտեալ ի ճակատ և ոչ տեսեալ զդէմս թշնամեաց»[1]: Համազասպ Մամիկոնյանի իշխանությունը ըստ Կիրակոս Գանձակեցու տևել է յոթը տարի[2]: Քանի որ Թեոդորոս Ռշտունու մահվան ամենահավանական թվականը մեր կողմից նույնպես ընդունվել է 656-ը, ուստի Գանձակեցու հիշատակությամբ Համազասպի իշխանության ժամանակը պետք է ընդգրկած լինի 656—662/663 թվականները: Եվ իսկապես այդպես է, որովհետև այդ թվականը ճշտվում և հաստատվում է Ղևոնդի այն հիշատակությամբ, երբ նա, խոսելով Մոավիայի կողմից Հայաստանի իշխանությունը Գրիգոր Մամիկոնյանին տալու մասին, վկայում է, որ այդ բանը տեղի ունեցավ «...յերկրորդում ամի իշխանութեանն» Մոավիայի[3], այսինքն՝ 662/663 թվականին: Անշուշտ այդ նշանակումը կատարվել էր Համազասպ Մամիկոնյանից հետո միայն: Ուղղակի և անուղղակի հիշատակությունների հիման վրա մեր կատարած այդ հաշվումներով ճշտվում են երեք թվականներ՝ Թեոդորոս Ռշտունու մահվան, Համազասպ Մամիկոնյանի իշխանության և Գրիգոր Մամիկոնյանի հայոց իշխան դառնալու թվականները:

Բյուզանդացիները, ինչպես վկայում է Սեբեոսը, Հայաստանի նոր կառավարչին շնորհեցին ոչ միայն կյուրապաղատության կոչում, «զզահոյս արծաթիս», այլև տվեցին «գանձս զաւրացն»[4]: Վերջին հանգամանքը հատկապես կարևոր նշանակություն ուներ, որովհետև այդ արտոնությունով հայերը ոչ միայն պահպանում էին զորք

[1] Սեբեոս, էջ 153:

[2] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 59:

[3] Տե՛ս Ղևոնդ, էջ 14:

[4] Սեբեոս, էջ 154—155: Տե՛ս նաև Հովհ. Դրասխանակերտցի, էջ 88—89:



ունենալու իրենց նախկին իրավունքը, այլև այդ զորքերի ծախսերը այժմ հոգալու էր Բյուզանդական կայսրությունը:

Քանի դեռ Արաբական խալիֆայության ներսում ներքին կռիվները շարունակվում էին, Հայաստանի համար առանձին վտանգ չկար, և առայժմ Համազասպ Մամիկոնյանը շարունակում էր երկիրը կառավարել խաղաղությամբ: Սակայն 661 թվականին, երբ Միջագետքի և Ասորիքի արաբների պայքարն ավարտվեց Հաղիթանակով և գահն անցավ Օմայան դինաստիայի հիմնադիր Մոավիա I-ին, ներքին խլրտումներն առայժմ դադարեցին և խալիֆայության ղիրքերն արևելքում կրկին ամրապնդվեցին: Օմայանները, որոնք նոր էին վերջացրել երկարատև և այրունահեղ պայքարն իրենց տիրապետության հիմքերի ամրապնդման համար, շահագրգռված էին դոնե առայժմ մեղմ վերաբերմունք ցույց տալու հարևան ու հպատակ ժողովուրդների նկատմամբ:

Միանգամայն հասկանալի է, որ նման պայմաններում Հայաստանի իշխող շրջանները չէին կարող հաշվի չառնել այս նոր իրադրությունը: Եվ հայերը, օգտագործելով կյուրապաղատ Համազասպ Մամիկոնյանի մահվան առիթը, 662—663 թվականներին դիմում են Մոավիային ու խնդրում վերականգնել հայ-արաբական խաղաղ փոխհարաբերությունները գոյություն ունեցող պայմանագրի սահմաններում ու Հայաստանի կառավարչի պաշտոնը հանձնել Համազասպի եղբորը՝ Գրիգոր Մամիկոնյանին, որը որպես պատանդ գտնվում էր արաբների մոտ:

Նոր խալիֆը հայերին սիրաշահելու համար կատարում է նրանց խնդրանքը և նույն թվականին կրկին կյանքի է կոչվում հայ-արաբական նախկին պայմանագիրը՝ մի փոփոխությամբ միայն, որ հայերը տարեկան 500 դահեկան հարկ վճարեն խալիֆայությանը, որը սովետական փողով հավասար կլինի 1320 ռուբլու[1]: Մոա-

[1] Տե՛ս Ղևոնդ, էջ 14, Ստ. Ասողիկ, էջ 122, Վարդան Բարձրբերդցի, էջ 95: Քանի որ այսուհետև շատ առիթներով ենք խոսելու արաբական դրամների մասին, ուստի անհրաժեշտ համարեցինք այդ շրջանում առավել գործածական դրամական միավորները վերածել մեր ներկա ռուբլուն: Այդ հաշվումները կատարելու համար մենք ելակետ ենք ընդունել նախ արաբական դրամական միավորներից մի քանիսի արդեն հայտնի հարաբերակցությունը ոսկե ռուբլու հետ (նախահեղափոխական շրջանի) և ապա վերջինիս միջոցով որոշել ենք նաև արաբական դրամների և սովետական ռուբլու փոխհարաբերությունը՝ հիմք ընդունելով սովետական ռուբլու պարունակած զուտ ոսկու քանակությունը 1961 թվականի դրությամբ, որը հավասար է 0,987412 կամ կլորացրած՝ 1 դրամի (տե՛ս Քաղաքատնտեսության դասագիրք, Երևան, 1963, էջ 637): Պարզության համար կատարենք այսպիսի հաշվում.

վիան կատարեց նաև հայերի մյուս խնդրանքը և Հայաստանի կառավարիչ նշանակեց Գրիգոր Մամիկոնյանին: Այդ նույն ժամանակ արաբների կողմն անցավ նաև Փոքր Հայքի կառավարիչ Շապուհը:

Ստեփանոս Ասողիկի այն վկայությունը, թե «...Մուսա զԳրիգոր՝ իշխան հաստատեաց Հայոց և Վրաց»[1], հաստատում է այն հանգամանքը, որ հայոց նոր իշխանին տրվել էին հավանաբար նույնպիսի լիազորություններ, որպիսիք ուներ իր ժամանակին Թեոդորոս Ռշտունին ամբողջ Անդրկովկասի նկատմամբ:

Այսպիսով վեցամյա ընդհատումից հետո (656—661), Հայաստանը հարկադրված եղավ կրկին ընտրելու Արաբական խալիֆայության այսպես ասած հովանավորությունը[2]:

---

ռուսական ոսկով՝

1 կոպեկը պարունակում է 0,0088 գրամ ոսկի,
1 ռուբլին պարունակում է 0,88 գրամ ոսկի,
10 ռուբլին պարունակում է 8,8 գրամ ոսկի:

Սովետական փողով՝

1 կոպեկը պարունակում է 0,01 գրամ ոսկի,
1 ռուբլին պարունակում է 1 գրամ ոսկի,
10 ռուբլին պարունակում է 8,8 գրամ ոսկի:

Ուրեմն ռուսական ոսկով 1 ռուբլին հավասար կլինի մեր ներկա փողով 88 կոպեկի: Այս տվյալներն ունենալուց հետո արդեն հեշտ է որոշել արաբական դինարի (դահեկան), դրամի և դիրհեմի համարժեքները սովետական ռուբլով, երբ հայտնի է, որ

1 դինարը (դահեկանը) հավասար է ռուսական ոսկով 3 ռ.,
1 դրամը հավասար է 50 կ. (ռուսական ոսկով),
1 դիրհեմը հավասար է ռուսական ոսկով 15 կ.,

Ուրեմն մեր փողով հաշված՝

1 դինարը (դահեկանը) հավասար կլինի 2 ռ. 64 կ.,
1 դրամը՝ 44 կ.,
1 դիրհեմը՝ 13 կ.,

Դիրհեմը արծաթե դրամի միավոր էր, որը Պարսկաստանում մտցվել էր դեռևս III դարում Արտաշիր I-ի կողմից և կշռում էր 4,25 գրամ: Ծագում է հավանաբար հունարեն δραχμή՝ բառից: Արաբները դիրհեմը փոխ առան պարսիկներից: Դիրհեմը հավասար էր ոսկի դինարի $^7/_{10}$ մասին: Եվ քանի որ այն ժամանակ ոսկու և արծաթի փոխհարաբերությունը 1:14 էր, ուրեմն 20 արծաթ դիրհեմը հավասար էր 1 ոսկի դինարի (տե՛ս Абу-Юсуф, перевод, А. Э. Шмидта Ծան., էջ 36-37):

[1] Ստ. Ասողիկ, էջ 122:

[2] Արևելագետ Սեն-Մարտենը սխալվում է, երբ այդ ընդհատումը համարում է մեկ տարի, տե՛ս M. Saint-Martin, էջ 337-338:



Գրիգոր Մամիկոնյանի իշխանության ժամանակաշրջանը, որը տևեց 22—23 տարի, մինչև 685 թվականը, համարյա նույնպես խաղաղ ընթացավ: Այդ հանգամանքը բավականին դրականորեն անդրադարձավ ինչպես երկրի տնտեսական կյանքի, այնպես էլ նրա կուլտուրական զարգացման վրա, որի մեջ անձնական նախաձեռնությամբ աչքի էր ընկնում հատկապես ինքը՝ Գրիգոր Մամիկոնյանը:

Հայաստանի քաղաքական անդորրությանը նպաստում էր նաև այն, որ հիշյալ ժամանակաշրջանում արաբա-բյուզանդական պատերազմները տեղի էին ունենում մեծ մասամբ Հայաստանի սահմաններից դուրս և Հայաստանը ավերածության ու կոտորածի չէր ենթարկվում: Սակայն մի քանի տարի շարունակ Մոավիայի ձեռնարկած ծովային ու ցամաքային հարձակումները Կոնստանդնուպոլսի վրա ոչ մի դրական արդյունք չտվեցին: Ընդհակառակը, բյուզանդական մայրաքաղաքի պաշարումը, որը տևեց 673 թվականի ապրիլից մինչև սեպտեմբեր, վերջացավ նրանով, որ հույները, տոկուն կերպով պաշտպանվելով, անցան հակահարձակման և Կալլինիկոսի գտած «հունական կրակով» ծովի վրա այրելով ու ոչընչացնելով արաբական նավատորմիղի մեծ մասը՝ հաղթանակ տարան[1]: Դրանից հետո Մոավիան նույնիսկ հարկադրված եղավ 30 տարի ժամանակով հարկատվության պարտավորություն ստանձնելու Բյուզանդիայի հանդեպ:

680 թվականին մահացավ խալիֆ Մոավիա I-ը: Նրա մահը և օմայանների Բյուզանդիայից կրած խայտառակ պարտությունը, ոչ միայն զսպեցին Արաբական խալիֆայության հեղինակությունը, այլև երկրի ներսում ոտքի հանեցին հակաօմայան ուժերին:

Խալիֆայության ներսում սկսված ներքին կռիվների շրջանը, որը փոփոխական հաջողություններով շարունակվեց մինչև VII դարի վերջերը, պատմագիտության մեջ ընդունված է կոչել քաղաքացիական կռիվների երկրորդ շրջան[2]: Այդ պայքարի ժամանակ Հյուսիսային Արաբիայի ու Ասորիքի արաբների դեմ, որոնց շահերի արտահայտիչները հանդիսանում էին Օմայանները, միավորվել էին հարավի՝ Մեքքայի և Մեդինայի բնակիչները, որոնց առաջնորդում էին Հուսեինը և Աբդըլա իբն-ազ-Զուբեյրը: Վերջիններս խրախուսում ու գլխավորում էին նաև Միջագետքի, Բասրայի և մյուս շրջանների իրանական շիա տարրերի Օմայանների դեմ ուղղված պայքա-

[1] Տե՛ս J. Zonarae, Epitome Historiarum, voi. III, Lipsiae, 1870, էջ 317-318:

[2] Տե՛ս А. Мюллер, История ислама, т. 1-ый, СПб, 1895, էջ 243:

րը: Հակաօմայան շարժումը շուտով վերածվեց կատարյալ ապըստամբության, որը բռնկվեց Մեդինայում 682 թվականին, Աբդըլա իբն-ազ-Զուբեյրի անմիջական նախաձեռնությամբ: Ապստամբությունն անմիջականորեն ուղղված էր Դամասկոսում գահ բարձրացած Մոավիա I-ի որդու՝ Եզիդ I-ի դեմ (680—683): 680 թվականից հետո սկսված ներքին կռիվների մեջ Զուբեյրի այս ապստամբությունը պայքարի ծայրահեղ ու կարևորագույն փուլերից մեկն էր, որից փորձեցին օգտվել նաև հայերը:

VIII դարի պատմիչ Ղևոնդը, խոսելով խալիֆայության ներսում ծագած ներքին կռիվների մասին, ասում էր, որ «...դադարեցին ի հարկատուրեւենէ նոցա Հայք, Վիրք, Աղուանք ծառայեալ նոցա ամս է»[1]: Պատմիչի վերջին խոսքերը, թե ապստամբները դադրեցնում են հարկատվությունը արաբներին երեսուն տարի նրանց ծառայելուց հետո, վերաբերում են 652 թվականի պայմանագրով ստանձնած պարտավորություններին, իսկ 652 թվականից հաշված 30 տարի՝ ճիշտ և ճիշտ կլինի 682 թվականը: Հենվելով Ղևոնդի վերոհիշյալ խիստ արժեքավոր հիշատակության վրա, դիտական գրականության մեջ ցույց է տրված, որ ապստամբությունն սկսվել է այդ նույն թվականի ամռանը[2], երբ հայերը, թոթափելով արաբական լուծը, հրաժարվել են խալիֆայության հանդեպ ունեցած իրենց պարտականություններից: Հայերի ապստամբությունը դրական խոշոր ազդեցություն ունեցավ նաև Անդրկովկասի մյուս բախտակից ժողովուրդների ազատագրական շարժումների վրա: Այդ նույն ժամանակներում արաբների դեմ ելան նաև վրացիներն ու աղվանից ժողովուրդը[3]: Հակաարաբական ապստամբությունը Վրաստանում այդ ժամանակ հաջողությամբ դլխավորում էր Հարթլիխայի թագավոր Ներսեհը[4]:

Բալաձորիի Կ. Յուբյուճյանի թարգմանության մեջ Հայաստանում բռնկված վերոհիշյալ ապստամբության մասին ասված է, որ 680-ական թվականների կեսերին «...Հայաստան ապստամբեցավ իր նախարարաց գրգռությամբ. բայց Մերվանի որդի Մուհամեդ ոստիկանն անոնց հաղթելով, զոմանս սպանեց, զոմանս գերի բռնեց և երկիրը նվաճելով, ըսկ տվավ ողջ մնացողներուն, թե հասարակ դինվորներու թոշակին բարձր թոշակ իրենց վճարելու միտք ուներ»[5]:

[1] Ղևոնդ, էջ 15:

[2] Տե՛ս Բ. Առաքելյան, Հայաստանը արաբական տիրապետության առաջին շրջանում..., էջ 93—94:

[3] Տե՛ս „История Азербайджана", т. 1-ый, Баку, 1958, էջ 107:

[4] Տե՛ս „История Грузии", ч. 1-ый, Тбилиси, 1950, էջ 145:

[5] Բալաձորի, Կ. Յուբյուճյանի թարգմանութ., էջ 29:



Այս հաղորդման վերջին տողերից պարզ երևում է, որ արաբներին ոչ միայն չի հաջողվել վերջնականապես ճնշել և իրենց ենթարկել հայ ապստամբներին, այլև նրանք աշխատել են ապստամբների հետ ընդհանուր լեզու գտնել, խոստանալով նույնիսկ նրանց վճարել բարձր թոշակ: Սակայն, ինչպես հետո շարունակում է պատմիչը, Ալաթի շրջանի հայերը մերժում են արաբների առաջարկը և շարունակում են իրենց գործը: Իսկ արաբներն առայժմ ի վիճակի չէին այլ միջոցների դիմելու, որովհետև 683 թվականին, Եզիդ I մահից հետո, Օմայանների իրավասության տակից դուրս եկան Միջագետքը, Եդեսիայի շրջանը, Խորասանը, Խուզիստանը և այլ շրջաններ: Ներքին կռիվները սանձահարելու գործում էական դեր չկարողացավ խաղալ նաև Մրվան I-ը, որը հաղիվ իշխեց 684—685 թվականներին և խեղդամահ եղավ մի կնոջ ձեռքով, իսկ նրան հաջորդած Աբդըլ-Մելիքի ժամանակ (685—705) հյուսիս-արևմուտքում, բյուզանդական սահմանների մոտ բռնկվեց մարդայիտների խոշոր շարժումը: Եվ, վերջապես, այդ բոլորից օգտվելով, Անդրկովկասում բավականին ակտիվ գործողություններ սկսեց ձեռնարկել նոր գահ բարձրացած բյուզանդական կայսր Հուստինիանոս II-ը (685—695):

Մինչև 680-ական թվականների կեսերը արաբական լուծը թոթափած Անդրկովկասի ժողովուրդներին, բյուզանդացիներից բացի, լուրջ կերպով սպառնում էին նաև Հյուսիսային Կովկասի խազարները, որոնք խոշոր ուժերով պարբերաբար ներխուժում էին Անդրկովկաս և մեծ վնասներ հասցնում տեղի ժողովուրդներին: Խազարական արշավանքների դեմ շատ հաճախ իրենց ուժերը միավորում էին հայերը, վրացիները և աղվանները: Այդպիսի արշավանքներից մեկի ժամանակ հայերին, վրացիներին ու աղվանից ժողովրդին թեև հաջողվեց ջախջախել խազարական ուժերին, բայց իրենք էլ ծանր կորուստներ կրեցին: Այս դեպքերի ժամանակակից խոշոր գիտնական Անանիա Շիրակացին իր «Ժամանակագրութեան» մեջ հետևյալ կերպ է նկարագրում խազարների ջախջախումը. «Ի սոյա, (Հուստինիանոս II-ի—Ս. Մ.-Բ.) առաջին ամին սիրեցին հիւսիսային ազգն, որ ասին Հաղիրք՝ Հայոց, Վրաց և Աղուանից. եւ սպանին ի պատերազմի զիշխանս Հայոց, Վրաց եւ Աղուանից, յամսեանն սահմի, որ աւր տասն էր ամսոյն, ի ՃԼԴ (134+551=685) թուականին Հայոց»[1]: Այս կռիվները, ինչպես նկարագրում է Շիրա-

[1] «Անանիայի Շիրակայնւոյ Համարովղի Մատենագրութիւնք», տեքստը մշակեց և հրատարակության համար պատրաստեց Ա. Աբրահամյան, տե՛ս վերջինիս «Անանիա Շիրակացու մատենագրությունը», Երևան, 1944, էջ 339:

կացին, տեղի են ունեցել Հուստինիանոս II-ի թագավորության առաջին տարում կամ հայկական թվականության ՃԼԴ-ին (134), այսինքն՝ մեր թվարկության 685-ին: Իսկ սահմի ամսի 10-ը համապատասխանում է օգոստոսի 15-ին: Գերմանացի հայագետ Հ. Մարկվարտը հավանաբար ծանոթ չլինելով Անանիա Շիրակացու վերոհիշյալ միանգամայն հավաստի հիշատակությանը՝ խաղարների արշավանքը վերագրում է 689 թվականին[1]:

Խաղարների դեմ մղված կռիվներում 685 թվականին շատերի հետ քաջաբար զոհվում է նաև Հայաստանի կառավարիչ Գրիգոր Մամիկոնյանը: Հիշյալ դեպքերը գրեթե միևնույն ձևով են նկարագրում նաև Ղևոնդը, Ստ. Ասողիկը, Վարդան Արևելցին և Կիրակոս Գանձակեցին[2]: Այս հեղինակներից առանձնապես հետաքրքիր է Ղևոնդի վկայությունը: Ապստամբության սկզբի մասին վերևում մեր կողմից բերված Ղևոնդի հիշատակության շարունակության մեջ պատմիչն ասում է. «Եւ եղեն աւուրք ապստամբութեան նոցա ամք Գ: Եւ ի չորրորդում ամին տիրեցին ի վերայ աշխարհիս Հայոց հիւսիսային ազգն, որ ասին Խազիրք, և սպանին ի սրատերազմին զիշխանն Գրիգոր, և զրազումս ի նախարարացն և զիշխանսն Վրաց և Աղուանից»[3]: Այստեղից պարզվում է, որ հայկական ապստամբությունը տևել է երեք տարի, այսինքն մինչև 684—685 թվականները, կամ գուցե մի քիչ ավելի, իսկ խաղարների արշավանքը տեղի է ունեցել ապստամբության չորրորդ տարում՝ 685 թվականին (եթե ապստամբության սկիզբը հաշվենք 682 թվականը):

685 թվականին խաղարների դեմ մղված կռիվներում զոհված Գրիգոր Մամիկոնյանին հաջորդում է Աշոտ Բագրատունի պատրիկը, որի մասին գովեստով են արտահայտվում Ղևոնդն ու Ստ. Ասողիկը[4]:

Արաբական խալիֆայության երերուն դրությունը, ինչպես նաև խազարական արշավանքները դեպի Անդրկովկաս ու Անդրկովկասի ժողովուրդների ապստամբական շարժումները արաբների դեմ մեծապես նպաստում էին խալիֆայության հիմնական ախոյանի՝ Բյուզանդական կայսրության քաղաքականության ակտիվացմանը ինչպես Հայաստանում, այնպես էլ սահմանակից մյուս շրջաններում: Արդեն 686 թվականին կայսր Հուստինիանոս II-ը իր զորքերը

[1] Տե՛ս Հ. Մարկվարտ, *Բագրատունյաց ճյուղագրությունը*, Վիեննա, 1913, էջ 12:

[2] Տե՛ս Ղևոնդ, էջ 15—16, Ստ. Ասողիկ, էջ 100, Վարդան Բաբերեցի, էջ 98, Կիրակոս Գանձակեցի, էջ 60:

[3] Ղևոնդ, էջ 15—16:

[4] Տե՛ս նույն տեղը, էջ 16, Ստ. Ասողիկ, էջ 122—123:



շարժում է դեպի Հայաստան, իսկ Ասորիքի ուղղությամբ կռվող Լեոնտիոս զորավարը, հաղթելով արաբներին, նվաճում է Կիպրոս կղզու մի մասը:

Բյուզանդական զորքերի հարձակումներն ու հաջողությունները կարծեք նոր ուժ ու եռանդ են ներշնչում Օմայանների ներքին հակառակորդներին: 686 թվականին Կուֆ քաղաքում ծագած ապստամբությունը շուտով ընդգրկում է ամբողջ Միջագետքը: Այսպիսի պայմաններում Դամասկոսի իշխանավորները հաղիվ իրենց գլուխն էին պահում և ի վիճակի չէին որևէ ձևով օգնելու Հայաստանին կամ պաշտպանելու նրան բյուզանդացիների հարձակումներից: Եվ այսպես, 686 և հետագա մի քանի տարիներին Հայաստանը ենթարկվեց Բյուզանդիայի հարձակումներին ու կրեց նորանոր տակնուվրայություններ: Այս դեպքերից ոչ շատ ուշ ապրած Ղևոնդն այսպես է նկարագրում բյուզանդական զորքերի ներխուժումը Հայաստան. «Եւ յերկրորդում ամի թագաւորութեանն Յուստինոսի (Հուստինիանոս II (685—696), որի երկրորդ տարին կլինի 686 թվականը—Ս. Մ.-Բ.), և յիշխանութեանն Աշոտի պատրկի առաքէ զօր բազում ի վերայ աշխարհիս Հայոց. որք եկեալ աւերեցին զաշխարհս աւարառութեամբ և զրազում գեղեցկայարմար շինուածս հրձիգ արարին յաւեր դարձուցանելով, և ինքեանք դառնային յաշխարհն իւրեանց»[1]: Բյուզանդական զորքերի ներխուժումը Հայաստան այս անգամ էլ պատճառաբանվում էր հայերի կողմից քաղկեդոնականությունը մերժելով[2]: Դրա համար էլ նրանց կարգադրված էր հայերի հետ վարվել որպես քշնամիների հպատակությունն ընդունած և քաղկեդոնական եկեղեցու սկզբունքներն արհամարհող ժողովրդի: Սա նշանակում էր, որ բյուզանդացիները Հայաստանում կանգ չէին առնելու բռնության ու ահաբեկման ոչ մի միջոցի առաջ: Եվ ինչպես քիչ առաջ Ղևոնդի վկայությունից տեսանք, բյուզանդացիներն անխնա կոտորում էին բնակչությանը, կողոպտում նրա ունեցվածքը և ավերում բնակավայրերը: Հույների ոչնչացնող ձեռքից չէին ազատվում նույնիսկ ճարտարապետական արժեքավոր հուշարձաններն ու կոթողները: Ստեփանոս Ասողիկի վկայությամբ՝ բյուզանդացիներն այս կռիվների ընթացքում Հայաստանում քարուքանդ են անում 25 գավառ և գերի տանում 8 000 մարդ[3]: Դրանից հետո բյուզանդական զորքերն արագ ետ են քաշվում կրկին իրենց տերիտորիան: Սակայն

[1] Ղևոնդ, էջ 17:

[2] Տե՛ս Մ. Զամչյան, *Պատմութիւն Հայոց*, հ. 2-րդ, էջ 372:

[3] Տե՛ս Ստ. Ասողիկ, էջ 100:

687 թվականին նրանք նորից են հարձակվում Հայաստանի վրա։ Այս անգամ արշավանքին մասնակցում էր 40 000 զինվոր[1]։

689 թվականին տեղի ունեցավ բյուզանդական զորքերի երրորդ արշավանքը դեպի Հայաստան՝ անձամբ Հուստինիանոսի գլխավորությամբ։ Վերջինս, գալով Հայաստան, իր մոտ հրավիրեց Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի մեծամեծներին ու նրանցից հավատարիմներին նշանակեց կարևոր պաշտոններում։ Բյուզանդական կայսրի անձնական միջամտությունն Անդրկովկասի և Հայաստանի ներքին գործերին արդյունք էր այն պայմանագրի, որը կնքվել էր դեռևս 687 թվականին կայսրության և Արաբական խալիֆայության միջև և որով արաբները, հրաժարվելով Հայաստանի ներքին գործերին միջամտելուց, միաժամանակ պարտավորվել էին ավելացնել Բյուզանդիային իրենց կողմից տրվող հարկը։ Սակայն վերոհիշյալ պայմաններն ամենևին էլ չէին նշանակում, թե Արաբական խալիֆայությունը Հայաստանից և Անդրկովկասից ընդհանրապես հրաժարվելու էր։ Այնպես որ 689 թվականի բյուզանդացիների Հայաստան ներխուժելուն գրեթե զուգընթաց արաբական ոչ մեծ զորամասերը հարավ-արևելքից մտան Հայաստան։ Արաբների առաջադրանքը բավականին որոշակի էր. նրանք պետք է ուսումնասիրեին հիմնականում բյուզանդական զորքերի վիճակը և կողոպտեին ու ահաբեկեին բնակիչներին։ Ղևոնդը, որ մյուսներից ավելի տեղյակ է վերոհիշյալ եղելություններին, այն ներկարագրում է այսպես. «Իսկ Աշոտոյ կալեալ զիշխանութիւնն Դ և ի չորրորդ ամի իշխանութեան նորա գունդ մի ասպատակութեամբ յորդւոցն Իսմայելի յարձակեալ ի վերայ աշխարհիս Հայոց, որ էին որդիք յանցանաց և պատակք անօրէնութեան, գործէին զանօրէնութիւն յատանն Մարաց ի Խրամի, ի Ջուղայ և ի Խոշակունիս, զի զարսն հարկապահանջութեամբ խոշտանդէին, և զկանայսն զազրալից պղծութեամբ խորհէին խայտառակել ըստ անօրէնութեանն իրեանց»[2]։ Այնուհետև պատմում է, թե ինչպես Աշոտ Բագրատունին, լսելով Թշնամու չարագործությունների մասին, անմիջապես ընդառաջ է ելնում նրան, ջախջախում ու ետ է շպրտում Հայաստանի սահմաններից այն կողմ, սակայն այս կռիվներում ծանր կերպով վիրավորվում է նաև քաջարի պատերիկը և մահանում Դարույնքում, ուր փոխադրել էին նրան։

Ղևոնդի վերոհիշյալ վկայությունից մենք նախ տեղեկանում ենք արաբական ներխուժման թվականի մասին։ Այդ ներխուժումը պատմիչը վերագրում է Աշոտ Բագրատունու իշխանության 4-րդ տարվան, այսինքն՝ 689 թվականին։ Այնուհետև պարզվում է, որ

[1] Տե՛ս Ստ. Ասողիկ, էջ 100։

[2] Ղևոնդ, էջ 17—18։



արաբները Հայաստան էին ներխուժել նրա հարավ-արևելյան կողմից և սփռվել էին Ջուղայի, Խրամի ու Խոշակունիքի շրջաններում, ընդգրկելով համեմատաբար փոքր տերիտորիա։ Եվ, վերջապես, Թշնամու հրոսակախմբերը ժամանակ չունեցան ավելի տարածվելու, որովհետև հայերը, վրա հասնելով, ջախջախեցին նրանց և ետ շպրտեցին դեպի իրենց սահմանները։

689 թվականին պատերազմում զոհված Աշոտ Բագրատունուց հետո հենց նույն թվականին կայսր Հուստինիանոս II-ը Հայաստանի կառավարիչ է նշանակում Ներսեհ Կամսարականին[1]։ Դրանից հետո կայսրը, Հայաստանում թողնելով 30 000-անոց բանակ, ինքը շտապ վերադառնում է Բյուզանդիա։

Այսպիսով, հակառակ Անդրկովկասի ու Հայաստանի ժողովուրդների ցանկությանը, Բյուզանդիային հաջողվեց 689 թվականին իրեն ենթարկել Հայաստանն ու Անդրկովկասը։ Բյուզանդացիները իրենց դիրքերն այստեղ հաղիվ կարողացան պահպանել մինչև 690-ական թվականների կեսերը, որովհետև այդ ժամանակ ոչ միայն ներքին գահակալական կռիվներ են սկսվում Կոնստանդնուպոլսում, այլև արաբներն ամբողջ ճակատով հարձակման են անցնում բյուզանդացիների դեմ։

695 թվականին զորավար Լեոնտիոսը տապալում է Հուստինիանոս II-ին և իրեն կայսր հռչակում։ Սակայն նա հազիվ կարողանում է իշխել մինչև 698 թվականը, երբ նրան փոխարինում է Տիբերիոս III Ապսիմարոսը (698—705)։ Հայերը, օգտվելով բյուզանդիայում տեղի ունեցող գահակալական կռիվներից, տապալել էին բյուզանդացիների տիրապետությունը և անկախություն ձեռք բերել, որովհետև Տիբերիոսը գահ բարձրանալուց անմիջապես հետո, ինչպես վկայում է Ղևոնդը, զորքեր է ուղարկում Հայաստան՝ երկիրը կրկին նվաճելու համար։ Բյուզանդական ուժերին հաջողվում է Պայիկա դաշտում պարտության մատնել Ներսեհ Կամսարականին փոխարինած Հայաստանի նոր կառավարիչ Սմբատ Բագրատունուն, թեև ճակատամարտում «Անկան զօրուէն Յունաց յոլովք»։ Հայկական ուժերի պարտության պատճառը իրենց զորքերի սակավությունն էր հակառակորդի համեմատությամբ։ Սմբատ Բագրատունին դրանից հետո նոր ընդհարումներից խուսափելու համար հեռանում է ճակատամարտի վայրից։ Սակայն Պայիկա դաշտում

[1] Ըստ Մ. Օրմանյանի, Ներսեհ Կամսարականն իշխել է 692—695 թվականներին, տե՛ս նրա «Ազգապատում», մաս Ա, էջ 771։

հաղթանակ տանելուց հետո բյուզանդացիները կրկին ետ են քաշվում Հայաստանից՝ իրենց թիկունքն ամրացնելու համար[1]:

VII դարի վերջերին վերսկսված արաբա-բյուզանդական պատերազմների ժամանակ Բյուզանդական կայսրության գործերը դրնալով սկսեցին վատանալ: Կռիվների ընթացքում արաբական զորքերի հրամանատարը՝ արքաեղբայր Մուհամեդ իբն-Մրվանը 694 թվականին կարողացավ իր կողմը գրավել Անտիոքի շրջանում գտնվող 30 000 սլավոններին և պարտություն պարտության ետևից հասցնել բյուզանդացիներին՝ հարկադրելով նրանց նահանջել[2]: Արաբների հաջողություններին որոշակիորեն նպաստում էին նաև Բյուզանդիայում 690-ական թվականներին ծագած գահակալական կռիվները:

690-ական թվականների կեսերին խալիֆ Աբդըլ-Մելիքը, իրար ետևից ճնշելով Կուֆում, Մեքքայում, Պարսկաստանում և այլ վայրերում ծագած ներքին ապստամբությունները և կռիվներում լուրջ պարտության մատնելով Բյուզանդիային, դգալիորեն ամրապնդեց խալիֆայության հիմքերն ու բարձրացրեց նրա հեղինակությունը: Արաբներն այդ ժամանակ գործնական քայլեր կատարեցին նաև Հայաստանը վերջնականապես նվաճելու ուղղությամբ:

696 թվականին խալիֆի հրամանով Մուհամեդ իբն-Մրվանը մի ստվար զորաբանակի գլուխն անցած՝ ներխուժեց Հայաստան ու գրավեց նրա կենտրոնական շրջանները: Արաբական զորավարն իր հիմնական ուժերով եկավ Դվին, սակայն նա այստեղ երկար չմնաց և իր ուժերի մի մասը թողնելով Դվինում՝ արշավեց Աղվանք ու Դերբենդ: Օգտվելով հանգամանքից, հայերն անմիջապես համախմբեցին իրենց ուժերը և զենքը ձեռքներին ոտքի ելան զավթիչների դեմ: Հայերը շեշտակի հարվածներով ջարդ ու փշուր արեցին Դվինում մնացած արաբական զորքերին, որոնց թիվը, ինչպես խիստ չափազանցված ձևով ներկայացնում է հայ պատմիչ Մովսես Կաղանկատվացին, 62 000-ի էր հասնում: Դվինի օրինակին շուտով հետևում

[1] Տե՛ս Ղևոնդ, էջ 19: Ք. Պատկանյանը միանգամայն արդարացի կերպով սխալ է համարում Ղևոնդի այն պնդումը, թե Սմբատ Բագրատունին Վարազտիրոց Բագրատունու որդին էր (տե՛ս Ղևոնդ, էջ 101—102, ծան. 24): Սակայն անվանի հայագետը սխալվում է, երբ նրա իշխանության սկիզբը համարում է 695 թվականը: Մեզ թվում է այդ հարցում ավելի ճիշտ է պրոֆ. Բ. Առաքելյանի առաջարկած թվականը: Հավանաբար հենվելով Ս. Անեցու հիշատակության վրա թե՝ «ՈՁԲ (689) Հայոց՝ Ներսեհ Կամսարական ամս Գ» (տե՛ս Ս. Անեցի, էջ 84), Ներսեհ Կամսարականի մահվան, հետևաբար նաև Սմբատ Բագրատունու իշխանության թվականը նա համարում է 691-ը (տե՛ս Բ. Առաքելյան, Հայաստանը արաբական տիրապետության առաջին..., էջ 99):

[2] Տե՛ս A. Мюллер, История ислама, т. 1-ый, էջ 91:



են նաև ուրիշ վայրերի բնակիչները: Մովսես Կաղանկատվացու պատմելով՝ հայերի այս ապստամբությանն ակտիվորեն աջակցել են նաև բյուզանդական զորքերը: Թե որքան ժամանակ է տևել ապստամբությունը, մենք այդ մասին որոշակի ոչինչ չգիտենք: Միայն հայտնի է, որ երբ Մրվանն իմանում է այդ մասին, անմիջապես ետ է վերադառնում և նախքան Դվին հասնելը ճանապարհին շրջապատում է Սևանա բերդը: Սևանա բերդի յուրահատուկ ամուր դիրքի և շրջապատվածների անհողդողդ կամքի շնորհիվ արաբներն այն կարողանում են գրավել միայն երեք տարվա շրջապատումից հետո: Մովսես Կաղանկատվացու մոտ այդ մասին կարդում ենք հետևյալը. «Ի հարիւր քառասուն և հինգ թուականութեանն Հայոց եկն Մահմէտն երկրորդ ի Հայք. և աճապարեալ ընդ աշխարհն Աղուանից՝ մտանէ ի Ջողայ: Իսկ ապստամբեալ Հայոց՝ արդելին զՏաճիկս, և զվաթսուն և երկու հազարս ի Տաճկաց սպանին՝ ածեալ զօր բազում ի Հոռոմոց: ...Եւ դարձաւ Մահմէտն ի Ջորայու, զայ պաշարէ զՍևան ծովապատն բերդ կղզի ամս երեք, և ապա առեալ զայն ի սուր սուսերի արկանէ, զորս գտանէ ի նմա. և անտի անցեալ ի Հայս՝ հար զՀոռոմ սպայն և զՀայն»[1]: Կաղանկատվացու ակնարկն այն մասին, թե Մրվանը Սևանա կղզին ու բերդը կարողացավ գրավել միայն երեք տարվա շրջապատումից հետո, թվում է, ճիշտ է, որովհետև Սամվել Անեցու մոտ այդ մասին ասված է, որ «Մահմետ զծովն Գեղամայ արձակեաց՝ և էառ զՍաւան կղզի»[2], այսինքն՝ արաբները կարողացել են հաղթանակի հասնել միայն հնարամտությամբ՝ այն է լճի ջրերը բաց թողնելով և կղզին ցամաքի հետ կապող պարանոցին տիրելուց հետո, մի բան, որ եթե ոչ երեք տարի, համենայն դեպս երկար ժամանակ էր պահանջում[3]: Ինչպես վերևում տեսանք, ըստ Մովսես Կաղանկատվացու, Մրվանի արշավանքի թվականը հայոց թվականով 145-ն է, այսինքն մեր ներկա թվականությամբ՝ 696-ը: Հիշյալ դեպքերին ժամանակագրական առումով ավելի մոտ ապրած Ղևոնդ պատմիչը նույնպես անդրադառնում է Մրվանի արշավանքների պատմությանը: Սակայն նա այդ դեպքերը շարադրում է Աբդըլ-Մելիքի գահակալության 16-րդ տարվա տակ, որը հավասար է ներկա թվականության 701-ին, քանի որ Աբդըլ-Մելիքի գահակալության սկիզբը 685 թվականն է: Եթե ենթադրելու լինենք, որ Ղևոն-

[1] Մովսես Կաղանկատվացի, էջ 257:

[2] Սամվել Անեցի, էջ 85:

[3] Այժմ Սևանի կղզին ցամաքի հետ կապող պարանոցի հնագիտական մանրազնին ուսումնասիրությունը գուցե հնարավոր գտնի հաստատելու կամ ժխտելու հնարավոր անցյալում Սևանա լճի ջրերի արձակման մասին հիշատակությունը:



12 87 —7

դի «Զի յետ ԺԶ (16) ամի իշխանութեանն Աբդըլ-Մելիքի...» և այլն, սկզբնապես կարող էր լինել՝ «Զի յետ Ժ (10) ամի իշխանութեանն Աբդըլ-Մելիքի...»[1], այսինքն՝ 695—696 թվականներին, այն ժամանակ Մրվանի արշավանքների թվականի վերաբերյալ երկու պատմիչների մոտ եղած հակասությունը կվերանա։

698—699 թվականներին Մրվանն ասպատակներ է սփռում երկրի տարբեր կողմերը և ամենուրեք ահ ու սարսափ տարածելով՝ բռնությամբ ու խաբեությամբ գրավում է այն բոլոր բերդերն ու ամրոցները, որտեղ ժողովուրդն ամրացել ու շարունակում էր իր պայքարն արաբների դեմ։ Արաբական նվաճողները նույնիսկ չէին խնայում կամավոր կերպով անձնատուր եղած կանանց ու երեխաներին։ Մրվանի այս անմարդկային գործողությունների մասին Ղևոնդն ուղղակի գրում է, որ նա՝ «Առնոյր և բազում ամրոցս խաբէութեամբ. քանզի պատիր բանիւ կոչէր ի խաղաղութիւն։ Եւ իբրև վստահացեալք իջանէին յամրոցացն՝ սուր ի գործ արարեալ կոտորէր զարան և զկանայս, և զմանկունսն վարէր ի դերութիւն»[2]։

Երկու-երեք տարի շարունակ անպատիժ կերպով երկիրը տակն ու վրա անելուց հետո Մրվանը տեղում Հայաստանի կառավարիչ է նշանակում ոմն Աբդուլայի և ինքը 698—699 թվականներին վերադառնում է Ասորիք[3]։

Մուհամեդ-Մրվանի արշավանքից հետո նվաճված Հայաստանն սկսեցին կառավարել արաբ իշխանավորները։ Թե ինչպիսի ծանր հետևանքներ ունեցան Մրվանի արշավանքները Հայաստանի և հայ ժողովրդի համար, համառոտ, սակայն խիստ պատկերավոր ձևով, այսպես է արտահայտում Ղևոնդը. «Իսկ բնակիչք աշխարհիս մնային իբրև ղխանձող ծխեալ ի հրոյ և իբրև զօրան վանակ փխրեալ, զոր առ ոտն կոխեալ խորհի»[4]։

Հայաստանը գրավելուց հետո արաբներն անմիջապես ձեռնամուխ եղան նաև նորանվաճ երկրի քաղաքական, վարչական և ռազմական բնագավառների ու նրանց կառավարման նախկին ձևերի ու եղանակների հիմնովին վերափոխմանն ու վերակառուցմանը, այն հաշվով, որպեսզի ամեն ինչ համապատասխանեցվի Արաբական խալիֆայության շահերին։

[1] Ղևոնդ, էջ 19։

[2] Նույն տեղում, էջ 20։

[3] Սեն-Մարտենը և Ղ. Ալիշանը սխալ կերպով Աբդուլայի իշխանության սկիզբը համարում են 693 թվականը (տե՛ս M. Saint-Martin, էջ 340, Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 408—409)։

[4] Ղևոնդ, էջ 122։



Արաբական խալիֆայության սկզբնական վերափոխումները վերաբերում էին Հայաստանի վարչական բնագավառին։ Արաբական խալիֆայության ժամանակակից կամ ուշ շրջանի հայ պատմիչներին հակառակ, ինչպես խալիֆայության տիրապետության, այնպես էլ հետագա ժամանակներում ապրած արաբ կամ արաբերեն գրող համարյա բոլոր պատմիչները, աշխարհագիրներն ու ճանապարհորդները բարերախտաբար այս կամ այն չափով անդրադարձել են Հայաստանի աշխարհագրությանը և երբեմն մանրամասնորեն նկարագրել քաղաքները, նրանց դիրքը, ամրությունները, քաղաքների և գլխավոր բնակավայրերի ճանապարհներն ու տարածությունները, բնակավայրերի ազգային կազմը, բնակիչների զբաղմունքը և այլն։ Այս բոլորից կարելի է անել մի եզրակացություն՝ Հայաստանին նայելով որպես իրենց կողմից կողոպտվող ու հարստահարվող երկրի, արաբներն առաջին հերթին հետաքրքրվում էին նրա աշխարհագրությամբ, ճանապարհներով, բնակավայրերով, վերջիններիս ազգային կազմով և նման բազմաթիվ այլ հարցերով։ Արաբական հեղինակներից ու պատմիչներից, սակայն, Հայաստանի աշխարհագրության ու նրա վարչական բաժանման մասին ամենից հարուստ ու համեմատաբար հաստատուն տեղեկություններ հաղորդում են IX—X դարերի հեղինակներ Իբն-Խորդադբեհն, Բալաձորին, Ալ-Յակուբին, Իբն-Ֆաքիհը, Կուդաման, Իբն-Հաուքալը, Իբն-Ռուստան, Ալ-Իսթախրին և ուրիշներ։ Հիշյալ հեղինակների վկայությամբ VII դարի կեսերին, Մուավիայի ժամանակ ողջ խալիֆայությունը բաժանված էր տասը խոշոր նահանգների, որոնցից Ջեզիրեի (Միջագետքի) մեջ մտնում էր նաև Հայաստանը, իսկ VIII դարի առաջին տասնամյակում արաբներն իրենց նվաճած հայկական ու անդրկովկասյան երկրամասերից ստեղծեցին վարչական մեկ միավոր՝ Արմենիա կամ էրմենիա անունով, որի սահմանները հյուսիսում կազմում էին Դերբենդն ու Կովկասյան լեռները, արևմուտքում՝ Եփրատի միջին հոսանքը, Ճորոխի հովիտն ու Սև ծովը, հարավում՝ Վանա լճի հարավ-արևմտյան ափերն ու Տուրուբերան աշխարհը, իսկ արևելքում Կասպից ծովն ու Պարսկաստանը։

Արմենիան, այսպիսով, փաստորեն միավորում էր Կովկասի հարավ-արևելյան մասը, Արևելյան Վրաստանի և Աղվանից աշխարհի հետ միասին և պատմական Հայաստանի արևելյան ընդարձակ շրջանները։

Սակայն վարչական այս սիստեմը, պետք է ասել, գնալով ավելի ձևական բնույթ էր ընդունում, որովհետև արաբական ֆեոդալականացող պետության մեջ, ծայրամասային արաբ տիրակալների ու

իշխանավորների անջատողական ձգտումների մեծացման և ներքին կառավարման բնագավառում նրանց իրավունքների ընդարձակման պայմաններում Արմենիան թեև այլևս չկարողացավ իր ամբողջությունը պահպանել, սակայն սովորության ուժով, արաբական աղբյուրներում այն երկար ժամանակ շարունակվում էր այդպես կոչվել՝ որպես անդրկովկասյան և հայկական շրջանները ներկայացնող վարչական մեկ ամբողջություն։

Արմենիայի կազմավորման հետ գրեթե միաժամանակ, հավանաբար VIII դարի սկզբներին, նրա վարչական կենտրոնը դարձավ Դվինը։ 789 թվականին Դվինի մայրաքաղաքային դերն անցավ Պարտավին՝ Աղվանքում։

Վերևում մեր մատնանշած արաբական հեղինակները գրեթե միաբերան վկայում են, որ Արմենիայի մեջ մտնում էին հայկական տերիտորիաներից բացի, Վրաստանը (խոսքը Արևելյան Վրաստանի մասին է), Աղվանքն ու Ատրպատականը։ Ստորև բերում ենք արաբական հեղինակներից մի քանի առավել բնորոշ վկայություններն Արմենիայի ընդհանուր սահմանների և նրա ընդգրկած տերիտորիաների վերաբերյալ։

X դարի հեղինակ Իբն-Ռուստեի վկայությամբ Արմենիայի մեջ մտնում էին «...Արրանը, Ջուրզանը, Նաշավան, Խլաթը, Դվինը, Սիրաջը, Սուգդաբիլը, Բաջունայսը, Արճեշը, Սիսաջանը և Բաբ-վալ-Աբվաբ քաղաքը»[1], իսկ Ալ-Իստախրին ուղղակի ասում է, որ «...Հայաստանը և Աղվանից աշխարհն ընդհանրապես մի տեսք ունեն և կազմում են մեկ աշխարհ, որը շրջապատված է արևելքից լեռներով, արևմուտքից Սև ծովով, հյուսիսից Կասպից ծովով ու Ղրպչախի լեռնաշղթայով և հարավից Միջագետքով»[2]։ Հայաստանը, Աղվանքը և Ատրպատականը մեկ երկրամաս է համարում նաև Իբն-Հաուքալը, նրա սահմանները հատցնելով՝ «արևելքից՝ մինչև Պարտավ, արևմուտքից՝ Ջազիրա (Հյուսիսային Միջագետք—Ս. Մ.-Բ.), հարավից՝ Աղվանք, իսկ հյուսիսից՝ մինչև Ռումի պետությունը (այսինքն՝ Բյուզանդիա, Ս. Մ.-Բ.)»[3]։ Իբն-Ֆաքիհը նույնպես նշում է, որ «Հայաստանի տերիտորիան ձգվում է հարավից մինչև Բաբ

[1] *Ибн-Рустэ*, Из книги драгоценных камней, Сборник материалов для описания местностей и племён Кавказа, вып. 32, Тифлис, 1903, стр. 43. *Աշխատության թարգմանիչը հայտնում է, որ ձեռագրի լուսանցքում Արրանի փոխարեն գրված է Իրավան, որ նրա ենթադրությամբ երևանն է։*

[2] *Ал-Истахри*, Из книги путей царств, Сборник материалов ..., вып. 29 Тифлис, 1901, стр. 3.

[3] *Ибн-Хаукал*, Сборник материалов ..., вып. 38, Тифлис, 1908, стр. 81–94.



ուլ-Աբվաբ և մինչև Բյուզանդիայի սահմանները»[1]։ Հայկական սկզբնաղբյուրների մի քանի միջանկյալ հիշատակություններից կարելի է ենթադրել, որ արաբները, դեռ նախքան Հայաստանում ու Անդրկովկասում հիմնավորապես հաստատվելը, Հայաստանն ու Անդրկովկասը դիտում էին որպես մեկ ամբողջական երկրամաս և այդ էր պատճառը, որ, ինչպես հիշատակվել է, 652 թվականի պայմանագրով Մոավիան Թեոդորոս Ռշտունուն «իշխանութիւն ետ... ղՀայս և զՎիրս և զԱղուանս և զԻբիւնիս մինչև ցԿապկոհ և զպահակն Ճորայ»[2]։

Արաբական տիրապետության ժամանակ Արմենիան իր հերթին բաժանվում էր չորս ենթաշրջանների, որոնց արաբական հեղինակներն ուղղակի անվանում են Առաջին, Երկրորդ, Երրորդ, Չորրորդ Հայքեր։ Արաբական աղբյուրները միաժամանակ հիշատակում են վարչական այս չորս միավորներից յուրաքանչյուրի ընդգրկած տերիտորիան։ Եվ թեև նման բաժանումը հիշատակող կարևոր հեղինակների՝ Իբն-Խորդադբեհի, Իբն-Ֆաքիհի և Բալաձորիի մոտ որոշ դեպքերում գոյություն ունի անհամաձայնություն, սակայն այնուամենայնիվ այդ հեղինակների վկայություններով հնարավոր է լինում որոշել Արմենիայի վերոհիշյալ չորս վարչա-տերիտորիալ միավորների ընդգրկած հիմնական տերիտորիան, որն իրենից ներկայացնում էր հետևյալ պատկերը.

Առաջին Հայքի մեջ մտնում էին Սյունիքը (Սիսաջանը), Աղվանքն ու Թիֆլիսն իր շրջակայքով։ Աղվանքի հետ հատկապես հիշատակվում են Պարտավը, Բայլականը և Շիրվանը։

Երկրորդ Հայքի մեջ մտնում էին Ջուրզանը, այսինքն Վրաստանը, Սուգդաբիլը, Բաբ-Ֆեյրուզը, Կուբադն ու Լակզը։ Ջուրզանի տակ արաբները հիմնականում ի նկատի ունեին Արևելյան Վրաստանը, իսկ Սուգդաբիլը, Բաբ-Ֆեյրուզն ու Կուբադը, Իբն-Խորդադբեհի վկայությամբ, նույնպես գտնվում էին Վրաստանում։ Լակզի մասին միայն կարելի է ենթադրել, որ այն հավանաբար Հյուսիսային Կովկասին մոտ գտնվող որևէ վայր էր, որի բնույթն ու ճշգրիտ տեղադրությունը որոշելը դժվարանում ենք։

Երրորդ Հայքի մեջ մտնում էին Վասպուրականը, Բագրևանդը, Դվինն ու Նախիջևանը, ապա նաև Սիրաջ-Քայրը, որը Բ. Խալաթյանցի կողմից ճիշտ կերպով նույնացվում է Կղարջքի ու Տայքի հետ[3]։

[1] *Ибн-Факих*, Сборник материалов ..., вып. 31, Тифлис, 1902, стр. 11.

[2] Սեբեոս, էջ 146։

[3] Տե՛ս «Հանդես ամսօրյա», 1903, № 4, էջ 124, ծան. Բ. Խալաթյանցի։

Ջորրորդ Հայքի մեջ մտնում էին Խլաթը, Կարինը, որ արաբները հիշատակում են մեծ մասամբ Կալիկալա ձևով, այնուհետև Արձեշը, Շիմշատ քաղաքները և Բղնունիքը[1]: Շիմշատը գիտական գրականության մեջ նույնացվում է Ջորրորդ Հայքի Արշամաշատ քաղաքի հետ: Արաբական հեղինակներից ոմանք Արմենիայի մեջ են մտցնում Պարսկահայքն ու Մարանդ և Մարաղա քաղաքները[2]:

Արմենիայի վարչական բաժանման մասին ընդհանուր ու ոչ լրիվ, իսկ որոշ դեպքերում ուղղակի սխալ տեղեկություններ են հաղորդում նաև Ալ-Յակուբին ու Կուդաման: Եվ քանի որ այդ տեղեկությունները ոչ մի նոր բան չեն ավելացնում նախորդ հեղինակների ասածների վրա, ուստի դրանք կոնկրետ այս հարցի կապակցությամբ առանձին արժեք ու հետաքրքրություն ներկայացնել չեն կարող:

Այսպիսով, արաբական սկզբնաղբյուրների տեղեկությունների հիման վրա կարելի է եզրակացնել, որ Արաբական խալիֆայության տիրապետության ժամանակ Արմենիա վարչա-տերիտորիալ միավորի մեջ բուն հայկական երկրամասերից հիմնականում մտնում էին Սյունիքը, Արցախը, Փայտակարանը, Վասպուրականը, Այրարատը, Գուգարքը, Տայքը, Տուրուբերանը, Կորճայքը, Մոկքը, Ջորրորդ Հայքը[3] և Բարձր Հայքի մի մասը, որոնց ընդհանուր տարածությունը, համաձայն պրոֆ. Ս. Երեմյանի «Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի աշխատության տվյալների, հավասար էր 258 706 քառակուսի կիլոմետրի, այսինքն մոտավորապես երկու անգամ ավելի մարզպանական Հայաստանից, որի տերիտորիան, դարձյալ վերոհիշյալ աշխատության տվյալներով, հավասար էր 134 161 քառակուսի կիլոմետրի[4]: Այսպիսով, փաստորեն արաբական շրջանի Արմենիայի բուն հայկական տերիտորիան ոչ միայն ընդհանրապես

[1] Արաբական աղբյուրներում հիշատակվում է Բաջունայս, Բաջուննայս ձևով: Վ. Տիզենհաուզենն այն տեղադրում է Եփրատի վերին մասերում՝ Ամիդի ու Մելիտինեի մոտ (տե՛ս B. Тизенгаузен, Монеты восточного Халифата, СПб 1873, էջ 30): Մենք կարծում ենք, որ Բաջունայսը Բղնունիքի արաբական արտասանձևն է:

[2] Տե՛ս Ибн-Хордадбег, Сборник . . ., вып. 32, էջ 13, Ибн-Факих, տե՛ս նույնը տեղը, հատ. 31, էջ 11, 13, Баладзори, Книга завоевания стран, էջ 5:

[3] Տե՛ս М. Левченко, История Византии, краткий очерк, М.-Л., 1940, էջ 118, նաև Լ. Մելիքսեթ-Բեկ, Ջորրորդ Հայքի 774–775 թթ. դյուցազնական ապստամբության պատմության շուրջը, տե՛ս Հայկ. ՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, 1948, № 2, էջ 49:

[4] Տե՛ս Ս. Երեմյան, Հայաստանն ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 116—117:



մեծ էր նաև նրա մեջ մտնող ոչ հայկական տերիտորիաներից միասին վերցրած, այլև իր ռազմա-տնտեսական հզորությամբ Արմենիայի հասարակական ու քաղաքական կյանքում առաջնակարգ դեր էր կատարում և հենց դրա համար էլ արաբները, իրենց հայկական և անդրկովկասյան տիրապետություններն ընդգրկելով վարչա-տերիտորիալ մեկ միավորի մեջ, նրան տվել էին Արմենիա անունը, որը որպես այդպիսին Սկյութիայի, այսինքն ողջ հողագնդի բնակելի տարածության չորրորդ մասի մեջ հիշատակվում է առաջին տեղում, ապա նոր գալիս են Խորասանը, Թուրքերի և Խազարների երկիրը և այլն[1]:

Արաբական խալիֆայության վարչական այս փոփոխությունները ելնում էին նաև նրա վարած այն ընդհանուր քաղաքականությունից, որն իր հիմնական մասով ուղղված էր տեղական ֆեոդալների դեմ և հետապնդում էր հայ ազնվականության տերիտորիալ իրավունքների անձեռնմխելիության սահմանափակման նպատակը: Վարչական այսպիսի բաժանման հետևանքով ոչ միայն հայ նախարարներից ոմանք հեռացան դեպի Բյուզանդիա և այլ կողմեր, այլև որոշ տոհմեր ուղղակի դուրս եկան պատմական ասպարեզից: Արաբական իշխանություններն իրենց վարչական փոփոխություններով նախապատրաստում էին ասպարեզից դուրս եկած կամ թուլացած հայկական նախարարությունների տերիտորիաներում այլազգիների մասսայական վերաբնակեցումը:

Ինչպես տեսնում ենք, Արմենիան իրենից ներկայացնում էր բազմազգ ու բազմալեզու մի ընդարձակ երկրամաս, որի կառավարման ասպարեզում տիրողների համար մշտապես պետք է ծագեին լուրջ խոչընդոտներ ու դժվարություններ, մանավանդ որ նման խոչընդոտների ու դժվարությունների ստեղծման ու հրահրման մեջ իր որոշակի դերն էր կատարում նաև Արմենիային սահմանակից և Արաբական խալիֆայության հիմնական ախոյան Բյուզանդական կայսրությունը: Եվ Արաբական խալիֆայությունը, ելնելով այս հանգամանքից, Արմենիան հպատակեցնելու և այն վերջնականապես յուրացնելու համար նրա կառավարումը հենց սկզբից փորձեց դնել կազմակերպական տեսակետից ամուր և կենսունակ հիմքերի վրա: Սակայն մինչև Արաբական խալիֆայության տիրապետության փաստական հաստատումը Հայաստանում, այսինքն մինչև VII դարի վերջերը, երբ արաբներին հաջողվում էր Հայաստանում այս կամ այն ձևով ձեռք բերել կարճատև իշխանություն, նրանք, հարկադրված, երկրի կառավարումը հանձնում էին տեղի ազնվականներին:

[1] Տե՛ս Ибн-Хордадбег, Сборник . . ., вып. 32, էջ 17:

Խալիֆ Աբդել-Մելիքի ժամանակներում միայն (685—705) Հայաստանում սկսում են նշանակվել արաբ պաշտոնյաներ, որոնք կոչվում էին վալի կամ էմիր: Հայկական սկզբնաղբյուրներում այդ պաշտոնյան անվանվում է ոստիկան[1]: Ոստիկանի իշխանությունը տարածվում էր կամ Հայաստանի և կամ Արմենիայի վրա: Ոստիկանը համարվում էր Արաբական խալիֆայության գերագույն իշխանավորն Արմենիայում: Ոստիկանները նշանակվում էին անձամբ խալիֆի կամ տվյալ երկրամասի անօրինության առանձնաձ գահաժառանգի կողմից և դրա համար էլ ոստիկաններն անմիջապես ենթարկվում ու իրենց գործունեության համար պատասխանատվություն էին կրում նախ և առաջ սրանց մոտ:

Ոստիկանները, որոնք իրականացնում էին խալիֆայության քաղաքականությունը, իրենց ենթակա տերիտորիայի շրջանակներում իրականում կատարում էին այն ֆունկցիաներն ու պարտականությունները, որոնք կատարում էին պարսկական սատրապության ժամանակ մարզպանները: Ոստիկանների պաշտոնավարության ժամկետը որոշակի չէր: Որպես կանոն նրանք իրենց տեղերում երկար չէին մնում և արագ փոփոխվում էին: Դրա համար էլ հայկական ժողովրդական ասացվածքների ու առածների մեջ ասվում էր՝ «Ալին գնաց, Մուսան եկավ», «Շեխը գնաց, Մահմադը եկավ»[2] և այլն: Այս առածները, որոնց մեջ գործածվող անունները կասկած չեն թողնում, որ նրանց ծագումը գալիս է արաբական շրջանից, ցույց են տալիս, թե որքան հաճախակի են փոփոխվել Հայաստանի կառավարիչները և որքան նման են եղել նրանք իրար, որ ժողովուրդը նրանց գալու և գնալու նկատմամբ վերաբերվել է միանգամայն անտարբեր ձևով, համոզված լինելով, որ նրանցից և ոչ մեկը որևէ չափով չի բարելավելու իր վիճակը:

Ոստիկանի հիմնական պարտականությունների մեջ մտնում էին՝ հսկողությունը երկրի ընդհանուր դրության, հարկահավաքության գործի կազմակերպումը և հարկերը սահմանված չափով ու ժամանակին հավաքելն ապահովելը, երկրի անդորրության ապահովումն ու ապստամբությունների և խլրտումների կանխումը, Արմենիայի պաշտպանության կազմակերպումը առաջին հերթին Բյուզանդիայից և Հյուսիսային Կովկասի խազարներից և այլն: Ոստի-

[1] Հ. Աճառյանի բացատրությամբ «ոստիկան» նշանակում է վերակացու, հրամանատար, իշխան, կուսակալ: Ունի պահլավական ծագում: Տե՛ս նրա «Արմատական բառարան», հատ. Ա, էջ 541—543: Նույնանման բացատրություն է արվում նաև «Հայկազեան բառարանում»:

[2] Ա. Դանիելյան, Հայկական առածանի, Երևան, 1951, էջ 32:



կանի վերոհիշյալ պարտականությունների վրա VIII դարից սկսած ավելացավ նաև Արմենիայում և Հայաստանում արաբական ու մահմեդական ցեղերի վերաբնակեցման գործի կազմակերպումը:

Արաբական խալիֆայության մեջ, սկսած Եզիդ I-ի ժամանակներից (VII դար), բարձր պաշտոնները տրվում էին կաշառքով, իսկ հետագայում պաշտոններն ուղղակի վաճառվում էին: Պաշտոն գնողը պարտավոր էր հենց սկզբից պահանջվող գումարը վճարել խալիֆին և հետո միայն ստանալ իր լիազորությունները: Հասկանալի է, որ պաշտոնավարության այսպիսի կարգը խիստ ծանր կերպով պետք է անդրադառնար առաջին հերթին հպատակ ու ենթակա ժողովուրդների վրա: Ոստիկանը պարտավոր էր հաճախակի և այն էլ երկար ժամանակով մնալ խալիֆի մոտ մայրաքաղաքում որպես, այսպես ասած, նրա շքախմբի անդամը, բայց իրականում՝ հսկողության տակ լինելու համար:

Արաբական խալիֆայության մասնատման ու թուլացման հետ մեկտեղ ծայրամասային իշխանությունների և ոստիկանությունների իրավունքները գնալով մեծանում և ընդարձակվում էին: Միաժամանակ համարվելով նաև երկրի ռազմական ուժերի գլխավոր հրամանատար, ոստիկանը փաստորեն իր ձեռքում էր կենտրոնացնում ամբողջ Արմենիայի կամ Հայաստանի ռազմական ու քաղաքացիական իշխանությունը: Հասկանալի է, որ ոստիկանը միայնակ չէր կառավարում երկիրը: Նա ուներ իր սատրապությունները, հատուկ պաշտոնեությունները ու պաշտոնյաները, որոնք միասին վերցրած ներկայացնում էին Արաբական խալիֆայության վարչական ու ռազմական ապարատը ամբողջ Արմենիայում:

Արմենիայի մեջ մտնող Աղվանքի, Ատրպատականի, Արևելյան Վրաստանի ու մայրաքաղաքներ Արդաբիլից, Թիֆլիսից ու Պարտավից բացի ռազմական ու տնտեսական տեսակետից կարևոր նշանակություն ունեցող քաղաքներում, խոշոր ու հանգուցակետային բնակավայրերում, ինչպես նաև բերդերում ու ամրոցներում նստում էին հատուկ վերակացուներ ու կառավարիչներ, որոնք նույնպես արաբական աղբյուրներում անվանվում են էմիրներ: Այս կարգի պաշտոնյաներն անմիջապես ենթարկվում էին ոստիկանին և կատարում նրա կարգադրությունները: Ինչ խոսք, վերոհիշյալ էմիրները բոլորը հավասար իրավունքներ և արտոնություններ չունեին: Արմենիայի կառավարման գործում և ոստիկանի մոտ առաջնային դեր կատարում էին ավելի մեծ ու կարևոր երկրամասերի ու բերդերի կառավարիչները, որոնց հետ, կամա թե ակամա, ոստիկանն անգամ հաշվի էր նստում: Այս պաշտոնյանները որոշ

իմաստով համարվում էին նաև ոստիկանի տեղապահները և վերջինիս բացակայության ժամանակ փոխարինում էին նրան։

Ոստիկանից ու նրան ենթակա տեղական կառավարիչներից հետո կարևոր պաշտոն էր համարվում փոստի և սուրհանդակության տնօրինության պաշտոնը, որին արաբներն անվանում էին սահիբ ալ-բարիդ։ Այս պաշտոնն ստեղծվել էր VII դարում՝ Մուավիայի ժամանակ։ Հետագայում հասարակ մարդիկ նույնպես կարող էին օգտվել հիշյալ պաշտոնեության ծառայություններից։ Արաբները կապի մեջ այլևայլ միջոցների հետ մեկտեղ օգտագործում էին նաև թղթատար աղավնիներ։ Սահիբ ալ-բարիդը, կապի աշխատանքները ղեկավարելուց բացի, կատարում էր նաև հատուկ հանձնարարություն՝ նա հսկում էր երկրի ընդհանուր դրությանը և նույնիսկ ոստիկանին ու մյուս պաշտոնյաներին և անհրաժեշտ տեղեկությունները գաղտնի կերպով հաղորդում անձամբ խալիֆին։ Դրանից էլ բխում էր նրա կարևոր տեղը մյուս պաշտոնյաների շարքում։ Սահիբ ալ-բարիդը փաստորեն արտոնյալ էր, որովհետև չէր հանդիպում տեղական իշխանություններին։

Օմարի ժամանակ տեղ-տեղ Արաբական խալիֆայության մեջ նշանակվում էին նաև հատուկ հարկահավաքներ կամ հարկահավաքության գործին հսկող անձինք, որոնք կոչվում էին զադի։ Զադիները նույնպես, ինչպես սահիբ ալ-բարդիները անկախ էին տեղական իշխանություններից։ Եվ քանի որ նրանք անմիջապես գործ ունեին պետական եկամուտների հետ և կոչված էին հսկելու, որպեսզի դրանք անխափան ձևով և անմիջապես մուտք արվեն խալիֆայության գանձարանը, դրա համար էլ զադիների նկատմամբ ոստիկանները և տեղական մյուս իշխանավորները մեծ մասամբ ցուցաբերում էին անհանդուրժողական վերաբերմունք։

Արաբներն ընդարձակ ու բազմաճիղ պետություն կառավարելու փորձ ու հմտություն չունենալու պատճառով սկզբնական շրջանում իրենց տիրապետության մեջ ֆինանսական ու հարկային գործերը մեծ մասամբ հանձնարարում էին հույն, հրեա կամ պարսիկ մասնագետների, որոնք անհրաժեշտ գրագրությունները վարում էին իրենց, ապա նաև արաբերեն կամ տեղական լեզուներով։

Արաբական տիրապետության ընթացքում աստիճանաբար ստեղծվում էին նաև նորանոր պաշտոններ, որոնցից, ինչպես երևում է, կարևոր էր հատկապես հողաչափի կամ երկրաչափի պաշտոնը։ Այս պաշտոնը, աղբյուրների վկայությամբ, Հայաստանում ստեղծվել էր Արմենիայի ոստիկան Խուզեյմայի ժամանակ (785—



787)[1]։ Հողաչափը պարտավոր էր խիստ հաշվառման ենթարկել հողային տարածությունները ըստ նրանց տեսակների և եկամտաբերության, կարգավորել ըստ էության ամենաբարդ խնդիրը՝ հողաբաժանումը։ Հողաչափի պաշտոնի ստեղծումից հետո, հողային տարածություններին ու նրանցից ստացվող եկամուտներին վերաբերող անհրաժեշտ տվյալներն արաբներն օգտագործում էին հարկահավաքության ժամանակ։ Ուստի հասկանալի է, որ այդ պաշտոնի ստեղծումով հարկերը պետք է ծանրանային, իսկ հարկատուների դրությունը է՛լ ավելի վատանար։

Արաբները, թեև տիրողներ էին, բայց նրանք հարկադրված էին հաշվի առնել նաև տեղական ազնվականությանը, քանի որ առանց տեղական ֆեոդալների վրա հենվելու նրանք չէին կարող իրենց քաղաքականությունն անցկացնել հպատակ երկիրներում։ Դրա համար էլ արաբները, հիմնականում պահպանելով հայկական ֆեոդալական սիստեմը, պահպանեցին նաև հայ ազնվականության որոշ իրավունքները երկրի ներքին կառավարման բնագավառում։ Այսպես, արաբական իշխանությունները հայոց իշխանի և հայոց սպարապետի պաշտոնները հիմնականում մինչև վերջ էլ թողեցին հայերի ձեռքին։ Ըստ էության հայոց իշխանի պարտականությունը խիստ կարևոր պարտականություն էր, որովհետև արաբները փաստորեն նրա միջոցով էին հավաքել տալիս հարկերն ու հանձնում իշխանություններին։ Հայոց իշխանը միաժամանակ վերին աստիճանի պատասխանատու անձ էր համարվում արաբական իշխանությունների առաջ։ Հայոց իշխանը որպես արաբների ամենավստահված և ամենապատասխանատու անձնավորություն, պարտավոր էր նաև ապահովել հայ ազնվականների հավատարմությունն ու հպատակությունը Արաբական խալիֆայության հանդեպ։ Այս պաշտոնը նշանակովի էր և ոչ ժառանգական։ Ժառանգական չէր նաև հայոց սպարապետի պաշտոնը։ Հայոց սպարապետը, ինչպես նախկին ժամանակներում, առաջնորդում էր հայկական զինված ուժերին և, որպես նրա գլխավոր հրամանատարը, պարտավոր էր իր գործողությունները համաձայնեցնել արաբական իշխանությունների հետ։ Սպարապետը պատասխանատվություն էր կրում ինչպես հայոց իշխանի, այնպես էլ արաբական ոստիկանի առաջ։ Այս երկու պաշտոններում էլ նշանակումները կատարում էր անձամբ խալիֆը կամ

1 Տե՛ս Բալաձուրի, «Հանդես ամսօրյա», 1904, № 2, էջ 55, տե՛ս նաև *Баладзори*, Книга завоевания стран, էջ 21, *Ибн-Факих*, Сборник материалов . . . , т. 31, էջ 31։

նրան ենթակա խոշոր պաշտոնյաներից որևէ մեկը՝ իր անձնական հայեցողությամբ։

Արաբներն ընդհանուր առմամբ սկզբնական շրջանում չէին միջամտում քրիստոնյաների կրոնական գործերին։ Նրանք չէին հետապնդում այլադավաններին ու չէին վարում բռնի կրոնափոխության քաղաքականություն։ Այս առումով էլ սկզբում, որոշ իմաստով, արտոնյալ էր նաև հայկական եկեղեցին։ Դրա համար էլ Հայաստանի կառավարման կարևորագույն բնագավառներից մեկը՝ օրենսդրության և դատավարության բնագավառը նույնպես գտնվում էր հայերի ձեռքին։ Այս բնագավառը, ինչպես միշտ, այժմ նույնպես տնօրինում էր հայոց եկեղեցին։ Երկրի գլխավոր դատավորը համարվում էր հայոց կաթողիկոսը, իսկ օրենքներն ու կանոնները քաղաքացիություն էին ստանում միայն եկեղեցական ժողովներում քննվելուց ու հաստատվելուց հետո։ Եկեղեցին իր ձեռքում էր պահում նաև ամուսնության վավերացման իրավունքը։

Սակայն ժամանակների փոփոխման հետ փոխվում էին նաև Արաբական խալիֆայության վերաբերմունքն ու պահանջները հպատակ ժողովուրդների վերաբերյալ և նախկին քիչ թե շատ հանդուրժողությունը կամաց-կամաց տեղի էր տալիս բռնի ուժին ու սանձարձակ կամայականությանը։

Այսպիսով, «Արաբական խալիֆայության տիրապետության հաստատումը Հայաստանում» գլխում հիմնական հարցերի մասին մեր արած հետևություններից ելնելով՝ հանգնում ենք հետևյալ եզրակացություններին.

1. Տնտեսապես և ռազմապես թուլացած Հայաստանը V դարի սկզբներին, կորցնելով իր քաղաքական անկախությունը, ամբողջապես ընկավ Բյուզանդիայի և Պարսկաստանի տիրապետության տակ։ Սակայն Հայկական բարձրավանդակին տիրելու համար պարսիկների ու բյուզանդացիների կատաղի մրցակցությունը շարունակվեց նաև Հայաստանի մասնատումից ու նրա անկախության ոչնչացումից հետո էլ։ Գրավելով Հայաստանը, պարսիկները և բյուզանդացիները երկիրը կողոպտելուց և ավերելուց բացի ժամանակի ընթացքում սիստեմատիկաբար քայքայում էին նաև հայկական դինված ուժերն ու տարբեր եղանակներով նրանց դուրս տանում Հայաստանից։ Այդ է պատճառը, որ արաբական արշավանքների ու ներխուժումների նախօրեին, հատկապես բյուզանդական իշխանությունների գործադրած ջանքերն այդ ուժերը վերստին համախմբելու, միավորելու և հայ դինվորական ու քաղաքական գործիչներին սիրաշահելու ուղղությամբ՝ գործին ոչնչով չօգնեցին։ Իսկ



Հայաստանը, որը երկար ժամանակ հանդիսանում էր երկու հզոր տերությունների ռազմական բախումների հիմնական թատերաբեմերից մեկը, պատերազմներից ու արշավանքներից կրած նյութական ու մարդկային հսկայական կորուստների պատճառով այնքան էր թուլացել, որ ի վիճակի չէր միայնակ կանգնեցնելու արաբական հրոսակախմբերի առաջին ներխուժումները։

2. Բյուզանդիային ու Պարսկաստանին խորտակիչ հարվածներ հասցնելուց հետո արաբական հրոսակախմբերը, օգտվելով նաև իրենց համար ստեղծված ընդհանուր նպաստավոր պայմաններից, 640 և 643—646 թվականների ընթացքում ներխուժելով Հայաստան և հեշտությամբ ընկճելով հայերի կողմից ցույց տրված թույլ ու անկազմակերպ դիմադրությունը, կողոպտում ու ավերում են շատ բնակավայրեր ու գավառներ։ Արաբական խալիֆայության հզորացման ու նրա քաղաքական ակտիվացման, ապա նաև Բյուզանդիայի կողմից հայերի նկատմամբ վարած երկդիմի ու կեղծավոր քաղաքականության պայմաններում VII դարի կեսերին Հայաստանում ակված ներքին քաղաքական պայքարում հաղթում է Թեոդորոս Ռշտունու գլխավորած ուղղությունը, որը, ելնելով Բյուզանդիայի և Արաբական խալիֆայության ուժերի իրական փոխհարաբերություններից, կողմնորոշվում է դեպի արաբները և փորձում նրանց հետ լեզու գտնել ու երկիրը հետու պահել արհավիրքներից։ Քաղաքական այսպիսի կողմնորոշում էին ընտրել նաև Վրաստանն ու Աղվանքը, որտեղ իշխող շերտերի ներկայացուցիչների մեծ մասը նույնպես համամիտ էր Թեոդորոս Ռշտունուն և գործում էր նրա հետ միասին։

3. Թեոդորոս Ռշտունու գլխավորած քաղաքական ուղղության հաղթանակի արդյունքը 652 թվականին կնքված հայ-արաբական պայմանագիրն էր, որով հայերը, ընդունելով Արաբական խալիֆայության հովանավորությունը և ստանձնելով հարկատվության ոչ ծանր պարտավորություններ, առայժմ հասան երկրի ներքին ինքնուրույնության և սեփական զորք ունենալու իրավունքների պահպանմանը։ Պայմանագրում խալիֆայության կողմից Հայաստանի նկատմամբ որոշակիորեն արտահայտված մեղմությունն ու զիջող լինելը բխում էր ամենից առաջ գրաված երկրներում Արաբական խալիֆայության դեռևս թույլ հիմքերից, խալիֆայության նկատմամբ գոյություն ունեցող ներքին կռիվներից և, վերջապես, արաբա-բյուզանդական մրցակցությունից և այդ մրցակցության մեջ Հայաստանի դիրքն ու հայ ժողովրդի զինական ուժերը դնահատելուց։

4. Երբ հայ-արաբական պայմանագիրը խափանելու և Հայաստանն ամբողջությամբ իրեն ենթարկելու նպատակով բյուզանդա-

ցիների ձեռնարկած արշավանքը դեպի Հայաստան որևէ արդյունք չտվեց, և հայերի ու արաբների միացյալ ուժերը նրանց չախչախելով դուրս քշեցին Հայաստանի սահմաններից, արաբները փոխեցին նաև իրենց վերաբերմունքը հայերի նկատմամբ: Զսպած լինելով երկրի ներսում ծագած խլրտումները և առայժմ հեռացած համարելով բյուզանդական սպառնալիքը, նրանք ոտնատակ տվեցին 652 թվականի պայմանագիրը և 654—656 թվականներին սկսեցին կրկին ասպատակել ու կողոպտել Հայաստանը: Այս բանում արաբներին օգնեց նաև հայ ազնվականության մեջ սկսված անհամաձայնությունը, որի վերացման համար արդյունք չտվեց նույնիսկ Թեոդորոս Ռշտունու միջամտությունը:

5. VII դարի 40-ական թվականների կեսերից սկսված և մինչև նույն դարի վերջը շարունակվող արաբա-բյուզանդական պայքարի և մրցակցության շրջանում ո՛չ մեկին և ո՛չ էլ մյուսին չհաջողվեց վերջնականապես ու տևականորեն հաստատվել Հայաստանում ու Անդրկովկասում: Ընդհակառակը, այդ մրցակցության ժամանակ հայերն ու Անդրկովկասի մյուս ժողովուրդները երբեմն օգտագործելով հարմար առիթները, ոտքի էին ելնում օտարերկրյա գավթիչների դեմ, տապալում նրանց լուծն ու կրկին ձեռք բերում իրենց կորցրած անկախությունը: Այդպիսի պայքարի փայլուն ժամանակները հատկապես 682—685 թվականներն էին:

6. VII դարի 40-ական թվականներից սկսած Արաբական խալիֆայության դեպի Հայաստան ձեռնարկած բոլոր արշավանքներն էլ կրում էին ավարառուական ու հետախուզական բնույթ: Դրա համար էլ արաբական հրոսակախմբերն իրենց արշավանքների ժամանակ մեծ մասամբ սահմանափակվում էին բնակչությանն ահաբեկելով, կողոպտելով և գերեվարելով:

7. Հայաստանը վերջնականապես նվաճելու ուղղությամբ գործնական քայլեր կատարվեցին միայն VII դարի վերջին, խալիֆ Աբդել-Մելիքի գահակալության ժամանակ, երբ վերջինս, իրար հետևից ճնշելով ներքին ապստամբություններն ու լուրջ պարտության մատնելով նաև Բյուզանդիային, զգալիորեն ամրապնդեց Արաբական խալիֆայության ռազմա-քաղաքական հիմքերն ու բարձրացրեց նրա հեղինակությունը:

696 թվականին խալիֆի հրամանով Հայաստան ներխուժած Մուհամեդ իբն-Մրվանը արաբական թարմ ու մեծաքանակ ուժերով իրար հետևից գրավեց և այժմ արդեն հաստատուն կերպով խալիֆայության տիրապետությանը ենթարկեց Հայաստանի կենտրոնական շրջանները, Վրաստանի մի մասն ու Աղվանից աշխարհը: Մուհամեդ Մրվանի գործողությունները Հայաստանում և Անդրկովկասում շարունակվեցին մինչև 698—699 թվականները: Հայաստանի նվաճումից և հպատակեցումից հետո Մուհամեդ իբն-Մրվանը տեղում կառավարիչ նշանակեց Աբդուլային և ինքը վերադարձավ Ասորիք:

8. VIII դարի սկզբներին Արաբական խալիֆայությունն իրեն ենթակա հայկական և անդրկովկասյան երկրամասերից կազմեց մի նոր վարչական միավոր, որին տրվեց Արմենիա կամ Էրմենիա անունը: Արմենիայի մեջ Աղվանքի և Վրաստանի համեմատությամբ, բուն հայկական տերիտորիաները զբաղում էին ավելի մեծ տարածություն, իսկ Հայաստանն Արմենիայի ռազմա-տնտեսական կյանքում անվերապահ կերպով կատարում էր առաջնային դեր: Արաբների կատարած վարչական բաժանումը ոչ միայն վնասում էր հայ ազնվականության տերիտորիալ-սեփականատիրական իրավունքներին, այլև զգալիորեն թուլացնում էր նրանց տնտեսական հիմքերը: Արաբներն իրենց վարչական փոփոխություններով փաստորեն նախապատրաստում էին արաբական ցեղերի մասսայական վերաբնակեցումը Հայաստանի և Անդրկովկասի բարեբեր ու արգավանդ շրջաններում:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ VII—IX ԴԱՐԵՐՈՒՄ

Գրավոր աղբյուրների և նյութական մշակույթի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արաբական նվաճումների նախօրյակին Հայաստանում բավականին զարգացած է եղել տնտեսությունը, իսկ հայ Արշակունիների տիրապետության ժամանակվանից ձևավորվող ֆեոդալական հասարակական-տնտեսական հարաբերությունները կամաց-կամաց յուրացնելով ֆեոդալիզմի հատկանիշները՝ արդեն IV—V դարերում դարձել էին գերիշխող հարաբերություններ:

Հայաստանում նույնպես արտադրության ֆեոդալական եղանակի հիմքը կազմում էր բնատնտեսությունը՝ սպառողական արժեքների արտադրության և առաջին հերթին հողատիրոջ կարիքների բավարարման համար:

Սակայն դրամական հարաբերությունների զարգացման և վաշխառության ընդլայնման հետ միասին բնատնտեսությունը Հայաստանում արագորեն սկսում էր ճեղքվածքներ տալ: Եթե Հայաստանում ֆեոդալական հարաբերությունների հետագա առաջընթացի համար առկա էին բոլոր անհրաժեշտ նախադրյալները, հայկական ֆեոդալիզմն այնուամենայնիվ իր զարգացման կանոնավոր ընթացքը չունեցավ, որովհետև օտարների տիրապետության ծանր լուծը որոշակիորեն ներգործելով Հայաստանի հասարակական-տնտեսական հարաբերությունների վրա՝ նկատելիորեն կասեցրեց ու արգելակեց նաև նրա առաջընթացը:

Արտադրության ֆեոդալական եղանակի գերիշխանության պայմաններում Հայաստանում նույնպես հասարակությունը բաժանված էր հիմնականում երկու հակադիր դասակարգերի՝ շահագործվող գյուղացիության և շահագործող ֆեոդալական դասակարգերի: Ֆեոդալական աստիճանականության ամենաբարձր կետում գտնվում էր թագավորը, որին այնուհետև հաջորդում էին բդեշխները, ավագ ու կրտսեր նախարարները, սեպուհները և մանր ազնվականները, որոնք հայկական սկզբնաղբյուրներում կոչվում են ազատներ և ոստանիկներ:

Արշակունիների թագավորության վերացումից հետո ինչպես պարսկա-բյուզանդական, այնպես էլ արաբական տիրապետության ժամանակ տիրողները հայկական նախարարությունների նկատմամբ վարում էին քայքայման, թուլացման և ոչնչացման քաղաքականություն: Օտար նվաճողների կողմից ստեղծված նման պայմաններում Հայաստանում նախարարական տներն սկսում էին ներսից քայքայվել ու բաժանվել ավելի փոքր մասերի: Նախարարություններից անջատվում էին ավագության իրավունք չունեցող սեպուհները, որոնք, ստանալով իրենց հասանելիք կալվածքը, ստեղծում էին ինքնուրույն՝ «սեպուհական» տնտեսություններ: Արաբական իշխանություններին միանգամայն ձեռնտու էր հայկական ֆեոդալական միավորների մանրատվելը, որովհետև այդ ճանապարհով քայքայվում, թուլանում էր նաև նրանց տնտեսական ուժը: Դրա համար էլ նրանք ոչ թե խանգարում, այլ հիմնականում նպաստում էին այդ երևույթի զարգացմանը:

Իշխող դասակարգի շարքերում իր հատուկ տեղն էր գրավում նաև հայկական եկեղեցական դասը: Հայկական բարձրաստիճան հոգևորականության ներկայացուցիչները կամ ինքնուրույն և կամ այլ իշխանի հովանու տակ գտնվող ֆեոդալներ էին, որովհետև նրանք նույնպես ունեին հողային կալվածքներ և այլ կարգի հարըստություններ: Հայկական եկեղեցին և եկեղեցական դասի ներկայացուցիչներն իրենց կալվածքներն ընդարձակում էին նվիրատվությունների, գնումների և այլ ճանապարհով: Ինչպես աշխարհիկ, այնպես էլ հոգևոր խոշոր ֆեոդալների շրջանում ուժեղ պայքար էր գնում հողային կալվածքները բաժան-բաժան անելու դեմ: Այդ խնդրին ժամանակ առ ժամանակ անդրադառնում էին նաև հայկական եկեղեցական ժողովները: Այսպես, Դվինի 645 թվականի եկեղեցական ժողովի կողմից ընդունված կանոնն արգելում էր անժառանգ հոգևորականի կալվածքի կտակումը բարեկամին: «Եթե ոք այր կամ կին ի ժառանգաւորաց սրբոյ եկեղեցւոյ անորդի իցէ, ի կենդանութեան իւրում իշխան լիցի ինքն ունել զամենայն և անցեալ ըստ ինքն ի մերձաւորացն մի իշխեսցէ հեռացուցանել զհող և զջուր և





1287—8

*ղամհնայն շնորհս եկեղեցւոյ»,— ասված է վերոհիշյալ կանոնում*[1]: *Հայկական իրականության մեջ եկեղեցական հողատիրության օրենքները գնալով ավելի էին ամրապնդվում: Հետագայում, օրինակ, արգելվում էր եկեղեցու կամ հոգևորականի հատկապես հողային ունեցվածքն ուրիշներին կտակելը կամ վաճառելը*[2]: *Հոգևորականներն աշխարհիկ ֆեոդալների նման համարվում էին արտոնյալ: «Իբրև սոցիալական անջատ մի խմբակցություն,— գրում է ակադ. Հ. Մանանդյանը,— հոգևորականությունը դասված է եղել ազնվականների շարքում և իր ապահովությամբ հավասարված է համարվել «ազատ»-ների դասին»*[3]: *Ակադեմիկոս Հ. Մանանդյանն այնուհետև, հենվելով սկզբնաղբյուրների վրա, անում է միանգամայն ճիշտ հետևություն՝ հոգևորական դասի և եկեղեցու ազատությունն արտահայտվում էր նրանով, որ նրանք հարկատու չէին: Եկեղեցականների՝ հարկերից ազատված լինելու օգտին է խոսում նաև Դվինի 645 թվականի եկեղեցական ժողովի IX կանոնը, որի մեջ ասված է, թե եկեղեցականներին ծառայության տակ գցելը նշանակում է քրիստոնեական հավատքից շեղվել, որովհետև Գրիգոր Լուսավորիչն ու Տրդատը հոգևորականությանը դասել են ազատների շարքը: Ահա թե ինչ է ասվում վերոհիշյալ կանոնում. «Յորժամ ազատք դիւրեանց զերդ և զմարդ բաժանեն՝ յոլովք չարակնութեան առնեն զծառանդատուրս եկեղեցւոյ ջանան ի ծառայութիւն և ի սարկութիւն արկանել, մոլեալք և մոլորեալք քրիստոնէական հաւատոյս. զի երանելոյն Գրիգորի և սրբոյն Տրդատայ զսուրբ եկեղեցւոյն մանկունս ընդ ազատաց տոհմին են կարգեալ, և ազատ էին սրբոյ եկեղեցւոյ հող և ջուր... Արդ եթէ որ ազատութեան ակամբ հայեցցի զազատ մանկունս եկեղեցւոյ ի բաժին և ի վիճակ ծառայութեան արկցեն, այնպիսիքն ի սուրբ Լուսաւորչի օրհնութենէն և մերմէ ժողովոյս հեռի եղիցին և մի եղիցի իշխանութիւն վարդապետի և քահանայից զայնպիսեաց պատարագն օրհնել»*[4]:

*Եկեղեցին ու հոգևորականությունը, ապահարկ լինելով, իրենք էին հարկեր հավաքում: Հայկական եկեղեցին ու եկեղեցական դասը, տիրելով հսկայական հարստությունների, երկրի ներքին կյանքում խաղում էին բավականին ծանրակշիռ դեր: Հենվելով իրենց տնտեսական ուժի վրա, եկեղեցականները չէին հանդուրժում, որ-*

[1] *Տե՛ս «Կանոնագիրք Հայոց», Թիֆլիս, 1913, էջ 124—125:*

[2] *Տե՛ս Ս. Մելիք-Բախշյան, Պավլիկյան շարժումը Հայաստանում, Երևան, 1953, էջ 117:*

[3] *Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 129:*

[4] *«Կանոնագիրք Հայոց», էջ 126—127:*



*պեսզի «Ոմանք յազատաց ի վերայ վանաց իշխանութիւն առնեն և զվանականս՝ զոր կամին հանեն և հարկանեն, զոր չէ արժան և օրէն»*[1]: *Այդ օրենքը հետագայում ոչ միայն ուժի մեջ է մնում, այլև ավելի է ամրապնդվում*[2]:

*Հայոց եկեղեցու և հայ հոգևորականության տնտեսապես հզորանալը, որպես կանոն, սրում էր աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների ներդասային պայքարը, որը երբեմն հասնում էր ծայրահեղ ուժգնության: Իրենց կարողությունները բազմապատկելու նպատակով հայկական եկեղեցին և եկեղեցականներն զբաղվում էին նաև վաշխառությամբ, որը զարգանալով ավելի մեծ ասպարեզ ստացավ Արաբական խալիֆայության ժամանակաշրջանում:*

*Հայաստանում Արաբական խալիֆայության տիրապետության ժամանակաշրջանում նույնպես ֆեոդալական աստիճանականությունն իր մեջ բովանդակում էր կախվածության վասալական սիստեմը: Ֆեոդալական սանդուղքի յուրաքանչյուր աստիճանի վրա գտնվողը իրենից բարձրի նկատմամբ հարկադրված էր կատարելու հարկային և զինվորական որոշակի պարտավորություններ, այնպես, ինչպես նրանից ցածրում գտնվողն էր նույնանման պարտավորություններ կատարում իր հանդեպ: Հենց յուրաքանչյուր վասալի՝ իր տիրոջ նկատմամբ ստանձնած այս որոշակի ծառայությունների ու պարտավորությունների գոյությամբ էլ պայմանավորվում էր հայկական ֆեոդալական-նախարարական սիստեմը:*

*Հայաստանում հասարակության հակառակ բևեռը կազմում էր հողատեր ֆեոդալների կողմից շահագործվող գյուղացիական դասակարգը, քաղաքի ու գյուղի հասարակ ու բնավ ոչ հարուստ մարդիկ, գյուղական համայնքի շուրջը համախմբված աշխատավորները, չինականները, ստրուկները և մյուսները, որոնց սոցիալական և իրավական վիճակի վերլուծությունը հայագիտության մեջ բավական մանրամասնորեն տվել են մի շարք հետազոտողներ*[3]:

*Հայաստանում ինչպես ֆեոդալական փոխհարաբերությունների, այնպես էլ շահագործվող դասակարգերի ու դասերի սոցիալական և իրավական դրության մեջ արաբական տիրապետությունն*

[1] *«Կանոնագիրք Հայոց», էջ 126—127:*

[2] *Տե՛ս Մխիթար Գոշ, Դատաստանագիրք Հայոց, Վաղարշապատ, 1880, էջ 87:*

[3] *Տե՛ս Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, Ե. Սամվելյան, Հին Հայ իրավունքի պատմությունը, Երևան, 1939, Ս. Պողոսյան, Գյուղացիների հարատացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում 9—13-րդ դարերում, Երևան, 1956, Ս. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, հ. 1-ին, Երևան, 1957, Հ. Ուրմազյան, Մյունիքը 9—10-րդ դարերում, Երևան, 1958, և այլն:*

էական փոփոխություններ չմտցրեց բացի նրանից, որ աշխատավորության վիճակը VII—IX դարերում ընդհանրապես ծանրացրեց։ Արաբների կողմից բռնագրավված հողերի վրա ապրող գյուղացիներն այնուհետև, որպես արաբների հպատակներ, մշակում էին այդ հողերը իրենց նոր տերերի համար[1]։ Տեղական աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալների հանդեպ հայ գյուղացու ունեցած պարտավորությունների վրա այժմ արդեն ավելանում էր նաև արաբական կեղեքիչների ծանր ու դաժան լուծը։

Որպես ֆեոդալական երկիր, Հայաստանում նույնպես սեփականության գլխավոր ձևը հանդիսանում էր հողային սեփականությունը։ Երկրում հողային ամբողջ ֆոնդի սեփականատերը թեև համարվում էր թագավորը, սակայն նրա հողատիրական գերագույն սեփականության իրավունքն ուներ միայն ձևական բնույթ, իսկ հողի փաստական տերերը իրենք՝ հողատեր նախարարներն էին։ Հողային իրավունքի նմանօրինակ պայմաններում Հայաստանում Արշակունիների և մարզպանության շրջանում ձևավորվել էին նաև մանանավոր հողատիրության հիմնական ձևերը՝ արքունական-թագավորական և նախարարական-ֆեոդալական հողատիրությունը։ Վերջինս իր հերթին բաժանվում էր «հայրենիք», «պարգևականք» և «քսակագինք» կատեգորիաների[2]։

Արաբները, որոնք հասարակական ու տնտեսական փոխհարաբերությունների տեսակետից սկզբնական շրջանում գտնվում էին զարգացման շատ ցածր մակարդակի վրա, թեև հիմնականում չկարողացան խախտել հայկական ազնվականական դասի փոխհարաբերությունները, բայց իրենց տիրապետության ընթացքում պահպանելով հայկական ֆեոդալական սիստեմի կարևոր գծերը, նրա մեջ մտցրեցին որոշ փոփոխություններ։ Այս տեսակետից հիմնականում ճիշտ պետք է համարել Ա. Սամվելյանի այն դիտողությունը, թե «Արաբների նվաճումը չէր բերում հպատակեցրած Հայաստանում արտադրության նոր եղանակ։ Թե՛ նվաճող արաբները և թե՛ նվաճված Հայաստանը գտնվում էին միևնույն սոցիալ-տնտեսական ֆորմացիայի շրջանակներում, բայց զարգացման տարբեր աստիճաններում։ Տարբերությունը առևտրա-վաշխառուական կապիտալն էր, որ մինչև այդ բացակայում էր Հայաստանում։ Վերջինս մուտք է գործում Հայաստան արաբ նվաճողների հետևից և տիրապետող բնատնտեսության մեջ ճանապարհ հարթում դրամական շրջանառության համար»[1]։ Ա. Սամվելյանն այնուհետև նշում է, որ թեև դրամական շրջանառությունը Հայաստանում գոյություն ուներ նաև նախաարաբական շրջանում, «սակայն նա ազդեցիկ դեր չէր խաղում ժողովրդական տնտեսության մեջ, որովհետև ֆեոդալական շահագործման ձևերում տիրում էր արդյունավճար ռենտան, իսկ դրամական ռենտան աննշան գործոն էր և օժանդակ նշանակություն ուներ։ Արաբական նվաճումն իր հետ բերեց դրամական ռենտա, որ բնականաբար փողի ահագին պահանջ առաջացրեց շահագործվող մասանների մեջ, որոնք ստիպված էին մեծաղյա դրամանիշներ ձեռք բերելու համար իրենց արտադրած արգասիքները շուկա հանել»[2]։

VIII դարի սկզբներին Արաբական խալիֆայության տիրապետության հիմքերի ամրապնդումից հետո, երբ արաբները հնարավորություն ունեցան գործադրելու նաև կայուն հարկային քաղաքականություն, այդ ժամանակ միայն նրանք սկսեցին խախտել նաև հայկական կալվածատիրական իրավական կառուցվածքն ու տեղական հողային սեփականատիրության գերագույն սկզբունքները[3]։

Արաբական ֆեոդալական պետության առաջացման սկզբնական ժամանակներում Օմար խալիֆի սահմանած հատուկ օրենքով նոր ձևավորվող մուսուլմանական ֆեոդալական վերնախավի ներկայացուցիչներն Արաբիայի սահմաններից դուրս հողեր ձեռք բերելու և հողագործությամբ զբաղվելու իրավունք չունեին։ Այս օրենքով խալիֆայական իշխանությունն առաջին հերթին ցանկանում էր, որպեսզի արաբական վերնախավը, որպես պետության հիմքն ու նեցուկը, չչլացած իր ուժերը, ցրիվ չգա և առայժմ միավորված ու կենտրոնացված լինի սեփական երկրի տերիտորիայում։ Հիշյալ կենտրոնացված լինի սեփական երկրի տերիտորիայում։ Հիշյալ օրենքով, անշուշտ, արաբական խալիֆներն զգուշանում էին նաև ծայրամասերում և նվաճված երկներում արաբական ֆեոդալական կայուն միավորների ստեղծումից, որոնք ուժեղանալով ոչ միայն կթուլացնեին արաբական կենտրոնացված պետությունը, այլև խոշոր չափով կնպաստեին միջֆեոդալական պայքարին երկրի ներսում։ Սակայն ֆեոդալական հարաբերությունները և դրանց հետ միաժամանակ առաջացող նորանոր հասարակական ու տնտեսական երևույթները շատ շուտով քանդեցին իրենց ճանապարհին եղած բոլոր արգելքները և խալիֆայության ընդարձակածավալ սահմանների շրջանակներում նոր հեռանկարներ բաց արեցին նաև արաբական ֆեոդալիզմի բազմակողմանի զարգացման համար։

[1] Տե՛ս *Баладзори*, Книга завоевания стран, էջ 26-27։

[2] Տե՛ս Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, Ս. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, հատ. 1-ին և այլն։

[1] Ա. Սամվելյան, Հին հայ իրավունքի պատմությունը, էջ 127—128։

[2] Նույն տեղում։

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 175։

Արաբական տիրապետության շրջանում Հայաստանում գործող հողօգտագործման և հողային սեփականատիրության օրենքների ու կարգի մասին դժբախտաբար հայկական սկզբնաղբյուրները համարյա ոչինչ չեն հաղորդում, դրա համար էլ այդ հարցի հիմնական և անզուգակից տեղեկատուները մնում են միմիայն արաբական հեղինակները։

Իրավական շատ նորմերի հետ մեկտեղ հողային իրավունքը նույնպես հանգամանորեն մշակել է Հարուն ալ-Ռաշիդ խալիֆի մերձավորը՝ հայտնի օրենսգետ Աբու-Յուսուֆը։ Նա իր «Քիթաբ ալ-խարաջ» գրքում ասում է, որ «Այն հողերը, որոնք հաշտության պայմանագրով թողնվում են բնակիչներին, ենթակա են (հարկադրման) պայմանագրի կետերին համաձայն...»[1]։ Այդ նշանակում է, որ այստեղ խոսքը վերաբերում է արաբների կողմից դեռևս վերջնականապես չնվաճված, հետևաբար նաև դրանց նկատմամբ լիակատար իրավունքներ չունեցող հողային կալվածքներին, որոնց տերերը թեև պահպանում էին իրենց հողային սեփականատիրական նախկին իրավունքները, բայց թշնամուց ռազմական պարտություն կրելով՝ հարկադրաբար հանձն էին առնում որոշակի քանակությամբ հարկ տալու հաղթողներին։ Հողատիրության այս ձևը, ինչպես տեսնում ենք, պայմանական է, որը իրականացվում էր արաբների ձեռք բերած լոկ ժամանակավոր ռազմական հաջողությունների ժամանակ և ավելի շատ այն կիրառելի էր միայն արաբական ներխուժումների և նվաճումների սկզբնական ժամանակներում։ Քանի դեռ արաբների տիրապետությունը Հայաստանում հաստատուն հիմքեր չուներ, նրանք չէին կարող ո՛չ մանրամասնորեն հաշվառման ենթարկել հպատակեցված երկրամասերի հողատարածությունները և ո՛չ էլ իրականացնել հողօգտագործման ուրիշ և ավելի բարդ ձևեր։ Դրա հետևանքով էլ այս դեպքում պայմանական հողատիրության համար կայուն և հաստատուն սկզբունքների փոխարեն ավելի շուտ պետք է գործեին պատահական և հաղթողի ու պարտվողի փոխադարձ համաձայնության հասնելու ճանապարհով հաստատված նորմերը, որոնք արաբական տիրապետության հաստատումից հետո իրենց տեղն անխուսափելիորեն պետք է զիջեին հողօգտագործման ավելի կայուն ձևերին։

[1] *Абу-Юсуф*, Китаб ал-харадж, пер. А. Э. Шмидта, Архив Ленинградского отделения Института народов Азии АН СССР, разряд 1-ый опись 8, № 47, էջ 4։



Արաբները, նվաճելով Հայաստանը, այն հողով, ջրով և ընդերքով հայտարարեցին խալիֆայական սեփականություն։ Բոլոր նվաճողների և տիրողների նման նրանք նույնպես ձգտում էին Հայաստանը ենթարկել իրենց նաև տնտեսապես։ Դրա համար էլ արաբական տիրապետության ժամանակաշրջանում Հայաստանում վարչական, ռազմական, հողային և հարկային քաղաքականության բնագավառներում անցկացված բոլոր միջոցառումները գործադրվում էին միմիայն այդ նպատակի իրագործման համար։

Խալիֆայության մեջ գործող օրենքներով արաբների կողմից նվաճված բոլոր երկրներն ու հողային տարածությունները նույնպես դիտվում էին որպես պատերազմական ավար, որոնց տնօրինությունը, ըստ օրենքի, կարող էր կատարվել այնպես, ինչպես տոլորական ավարի տնօրինումը։ Աբու-Յուսուֆն այդ մասին ուղղակի գրում է հետևյալը. «Ամեն մի կալվածք, որ իմամը կգրավի զինված ուժով, նա, եթե այդ նախընտրելի կգտնի, կարող է բաժանել որպես պատերազմական ավար նրանց միջև, ովքեր այն նվաճել են, քանի որ նա այդ խնդրում օգտվում է գործողությունների լիակատար ազատությունից...»[1]։ Սակայն այս օրենքը գործնական նշանակություն չուներ, որովհետև արաբ պաշտոնյաներն ու զինվորականները իրենց գրաված երկրներում աստիճանաբար զավթելով հողային ընդարձակ տարածություններ, դառնում էին դրանց իրական տերերը։ Այստեղ, ինչպես ճիշտ կերպով նշում է Ա. Սամվելյանը, «...հանդես էր գալիս ասիական դեսպոտական պետության համար այնքան բնորոշ՝ հողերի պետական սեփականության իրավունքը»[2]։ Ա. Սամվելյանի այս եզրակացությունը բխում է Կ. Մարքսի այն հայտնի դրույթից, որ Արևելքում «...գոյություն չունի հողի մասնավոր սեփականատիրություն»[3], նրան հատուկ կլիմայական և աշխարհագրական պայմանների պատճառով, երբ երկրագործության գլխավոր նախապայմանը հանդիսանում էր արհեստական ոռոգումը, որը անհատների գործը չէր և իրականացվում էր միմիայն համայնքների և կամ իշխանության մարմինների կողմից կոլեկտիվ աշխատանքի միջոցով[4]։

Այսպիսով, արաբական հասարակությունում պետությունը գլխավորում էր խոշոր հողատեր-սեփականատերերի դասակարգը՝

[1] *Абу-Юсуф*, пер. А. Э. Шмидта, стр. 90.

[2] Ա. Սամվելյան, *Հին հայ իրավունքի պատմություն*, հ. 1-ին, էջ 175։

[3] *К. Маркс и Ф. Энгельс*, Сочинения, т. 21, М., 1932, стр. 488-490.

[4] *Տե՛ս* Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, *Հատընտիր նամականի*, հ. I, Երևան, 1936, էջ 91։

տերության որոշ մասերում տակավին պահպանելով նաև շահագործման ստրկատիրական եղանակը։

Արաբական պետությունը, ձևավորված լինելով կենտրոնացված և հզոր ապարատի մեջ, տիրում էր հողային հսկայական հարստության, որտեղ ապրող ֆեոդալներն ու գյուղացիները սովորականի նման պարտավոր էին պետության հանդեպ կատարելու որոշակի պարտավորություններ։ Նվաճված երկրների ու հողերի մասին Աբու-Յուսուֆն ասում է, որ եթե խալիֆը «...լավ համարի (այդ հողերը) թողնել նրանց ձեռքին, ովքեր տիրում են դրանց, ինչպես Օմար իբն ալ-Խաթիբը վարվեց Սավադի հետ, ապա նա այդ բանն անելու իրավունքն ունի և այդ հողերը նման դեպքում են՛թարկվում են խարաջի»[1]։ Նույն տեղում մեր հեղինակը ավելի պարզեցնելով իր միտքը, շարունակում է. «Բոլոր մարդիկ, անհավատներից, որոնց հետ իմամը խաղաղության դաշն կկնքի, պայմանով, որ նրանք ընդունեն իր իշխանությունը և ապավինեն նրա երդումի հավաստիքին ու խարաջ վճարեն, (այդպիսիները) համարվում են զիմմիներ և նրանց հողերը դառնում են խարաջի ենթակա հողեր»[2]։ Այս պարզ ու հասկանալի դրույթից կարելի է անել այն հետևությունը, որ եթե նվաճված ժողովուրդները առանց դիմադրության հպատակություն էին հայտնում արաբներին և նրանց հետ կնքում էին խաղաղության դաշինք, ապա արաբական իշխանությունները կարող էին նրանց հողերն իրենց թողնել, պայմանով, որ նրանք հողահարկ, այսինքն խարաջ վճարեն տիրողներին։ Այս դեպքում հողատերն արաբական իշխանություններից ստանում էր հողօգտագործման տնօրինությունը և դառնում էր իր կալվածքի տերը սեփականատիրական ոչ լիակատար իրավունքով, որովհետև հողի իրավական սեփականատերը դարձյալ մնում էր խալիֆը, կամ ավելի ճիշտ՝ պետությունը։ Հողատիրության այս ձևը ոչ այլ ինչ էր, քան նույն պայմանականը, որին, ի միջի այլոց, հողահարկի անունով, այն ժամանակ ընդունված էր անվանել խարաջային հողատիրություն։ Այստեղից կարելի է նաև եզրակացնել, որ եթե խարաջային սկզբունքներով հող ստացողը կանոնավորապես կատարեր խարաջի պարտավորությունը, ապա արաբական իշխանություններն իրավական տեսակետից չպետք է առարկեին, որ հողի նկատմամբ եղած այդօրինակ իրավունքն անցներ նաև հողատիրոջ ժառանգներին։ Եվ քանի որ արաբական տիրապետության ամբողջ ժամանակաշրջանում, չնայած հայ ֆեոդալական վերնախավի նկատմամբ գործադրվող հալածանքներին ու ոչնչացման քաղաքականությանը, հայկական նախարարական կարգն այնուամենայնիվ իր գոյությունը պահպանեց։ Ուրեմն կարելի է համոզված կերպով ասել, որ հայ ֆեոդալներն արաբների օրոք իրենց հողերին տիրում էին խարաջային հիմունքներով, որը հողի նկատմամբ նրանց սեփականատիրական տնօրինության իրավունք տալու հետ միասին ընձեռում էր նաև հողի ժառանգական իրավունք։ Պայմանական հողատիրության այս ձևն իր դրությամբ հնարավորություն էր տալիս նաև հողի առուծախի, ինչպես նաև նվիրատվության։ Չէր բացառվում, որ հողատերն իր կալվածքը վաճառեր կամ նվիրեր որևէ մեկին։ Այս դեպքում վաճառքը և նվիրատվությունը կարող էր իշխանությունների կողմից օրինական ճանաչվել, եթե հողի նոր տերը հանձն առներ կատարելու խարաջի պարտավորությունները։ Առուծախի ենթակա հողերը մենք կարող ենք դարձյալ «քսակագինք» անվանել, ինչպես կոչվում էին դրանք Արշակունիների և մարզպանության ժամանակներում, իսկ նվիրվողը՝ «պարգևականք»։

Ինչպես տեսնում ենք, արաբական տիրապետության շրջանում Հայաստանում ստեղծված հողատիրական իրավունքներն ըստ էության չէին բացառում նախկին «քսակագինք» և «պարգևականք» հողատիրության ձևերի առկայությունը։

Աբու-Յուսուֆն իր գրքում այնուհետև նշում է, որ խարաջի ենթակա հողեր կարող էին դառնալ միմիայն այն հողերը, որոնք նվաճվում էին ռազմական ուժով ու բռնությամբ[1]։ Իսկ ուշ շրջանի հեղինակ Բալաձորին, վկայակոչելով նշանավոր իրավագետներ Մալիք իբն-Անասին և Իբն արու-Դիբրին, խարաջային իրավունքի նախապայման է համարում նաև իսլամի ընդունումը[2]։ Այստեղից պետք է ենթադրել, որ խալիֆայության որոշ մասերում, երբեմն խարաջի հարկային պարտականությունից բացի, հող ստացողի վրա դրվում էր նաև կրոնափոխության նախապայմանը։

Պայմանական հողատիրության պայմանադրային ու խարաջային սկզբունքներից բացի կար նաև մեկ ուրիշը, որին կարելի է տալ տաասանորդային անունը։ Տասանորդային էին այն հողերը, որոնք ենթակա էին միայն տասանորդ հարկի գանձմանը։ Աբու-Յուսուֆը, խոսելով արաբական ցեղերի մասին, նշում է, որ «...նրան-

[1] *Абу-Юсуф*, пер. А. Э. Шмидта, стр. 90.
[2] Նույն տեղում։

[1] *Տե՛ս Абу-Юсуф*, пер. А. Э. Шмидта, էջ 83։
[2] *Տե՛ս Баладзори*, Книга завоевания стран, էջ 30։

ցից պահանջվում էր միայն իսլամի ընդունումը և եթե նրանց հողը բողնվում էր իրենց, ապա դառնում էր հուշրի (այսինքն՝ տասանորդի—Ս. Մ.-Բ.) ենթակա կալվածք»[1]:

Արաբական խալիֆայության առաջացման սկզբնական ժամանակներում արաբական ցեղերին նոր գաղափարախոսության դրոշի տակ համախմբելու, հետևաբար նաև բոլոր արաբներին զաղափարապես և պետականորեն միավորելու համար խալիֆայական իշխանությունները որոշակի պայմաններ էին դնում այդ ցեղերի առջև: Այդ պայմաններից առաջինն իսլամի ընդունումն էր, որից հետո պետության նոր՝ այսպես ասած լիիրավ քաղաքացիներին տրվում էր նաև հողային կալվածք, որի ստացողը պարտավոր էր պետությանը վճարել տասանորդ հարկը: Եթե այդպես է, ապա ուրեմն Արաբական խալիֆայությունը նախ իր համար պետք է ստեղծեր հողային ֆոնդ: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ իրոք նվաճված երկրների հողային տարածությունների մի մասն արաբները պետականացնում էին և դարձնում պետական հողեր, որոնք կոչվում էին կատայյի: Այս հողերի հաշվին էլ կատարվում էին տասանորդի սկզբունքով հատկացումները:

Արաբական ցեղերին իսլամի ընդունման մեջ, իսկ որ ամենադյուսավորն է՝ նրանց նվաճված երկրներում տեղավորել կարողանալու համար, իշխանությունները տասանորդի ենթակա հողերի համար ավելի քիչ հարկ էին նշանակում, քան խարաջային հողերի նկատմամբ: Այդ հանգամանքը պարզ կերպով երևում է հենց Աբու-Յուսուֆի մի հիշատակությունից, որտեղ հեղինակը, խոսելով Միջագետքի մասին, ասում է, որ Օմար խալիֆի ժամանակ, եթե այնտեղի պետական հողերի տարեկան եկամուտը կազմում էր շուրջ միլիոն դիրհեմ (մեր փողով՝ 520000 ռուբլի), ապա խարաջի ենթակա հողերինը համարյա կրկնակի էր՝ յոթ միլիոն դիրհեմ, այսինքն մեր փողով՝ 910000 ռուբլի[2]:

Արաբական թերակղզին միավորելուց և իր ռազմա-տնտեսական հիմքերն ամրապնդելուց հետո խալիֆայությունը, ինչպես հայտնի է, ձեռնամուխ եղավ նաև ուրիշ երկրներ նվաճելու ընդարձակ ծրագրերի իրագործմանը և կարճ ժամանակում հասավ աննախընթաց հաջողությունների: Արաբական խալիֆայության համար ստեղծված պատմական այս նոր պայմանների համաձայն պետք է մշակվեին նաև քաղաքական ու տնտեսական նոր սկզբունքներ: Այդ սկզբունքներից առաջինը նվաճված երկրներում խալիֆայության իշխանության հիմքերի ամրապնդումն էր, որին ղեկավարեն խանգարում էին առաջին հերթին այդ երկրներում թույլ կամ ուժեղ ձևով դեռևս պահպանվող ֆեոդալական վերնախավերը, որոնք երկրի ռազմա-տնտեսական կյանքում կատարում էին որոշակի դեր: Եվ ահա, տեղական ֆեոդալական սիստեմը քայքայելու և նրա ուժը վերջնականապես թուլացնելու նպատակով արաբները ոչ միայն կիրառում էին ֆիզիկական բնաջնջման, ահաբեկման, տնտեսական հալածանքների ու սահմանափակումների ձևերը, այլև նվաճված երկրներում մասսայական վերաբնակեցումների միջոցով, ի հակակշիռ տեղական ֆեոդալական իշխանությունների, ստեղծում էին մուսուլմանական, իր բնույթով դարձյալ ֆեոդալական-վասալական իշխանություններ, որոնք սովորաբար կոչվում էին էմիրություններ: Սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս քաղաքականությունը Հայաստանում արաբները թեև սկսել էին կիրառել դեռևս իրենց արշավանքների սկզբնական ժամանակներում, սակայն մասսայական վերաբնակեցումները փաստորեն կատարվում են խալիֆայության իշխանության հաստատումից հետո, այսինքն՝ VIII դարից:

Հայաստանի և Անդրկովկասի առաջին վերաբնակիչները մեծ մասամբ պատերազմի վետերաններ և պետական նպաստ կամ թոշակ ստացող արտոնյալ մարդիկ էին, որոնց իշխանությունները հանձնարարում էին նաև ճանապարհների, գյուղերի և բնակավայրերի հսկողությունն ու պաշտպանությունը[1]:

Արաբական ցեղերին Հայաստանում բնակեցնելու մասին առաջին տեղեկությունը վերաբերում է դեռևս VII դարի կեսերին և անմիջականորեն կապվում է 654—656 թվականների Հաբիբ իբն-Մասլամայի արշավանքների հետ: Առաջին այդ վերաբնակեցումը, ինչպես պատմում է Բալաձորին, կատարվել է Կարինում 654 թվականին: Այդ վերաբնակիչները թվով 2000 արաբներ էին, որոնք, ինչպես արդեն ասվել է, շտապ կարգով հավաքագրվել էին Ասորիքից ու Միջագետքից և Մոավիայի կողմից ուղարկվել Հայաստան՝ Հաբիբ իբն-Մասլամային օգնելու համար: Եկվորներին, ասում է պատմիչը, «(Հաբիբը) տեղավորեց Կալիկալայում և հողեր բաժանեց»[2]: Հետագայում Կարինում և մյուս քաղաքներում արաբների թիվը գնալով աճում է, այնպես որ 751—752 թվականների կոնս-

[1] *Абу-Юсуф*, пер. А. Э. Шмидта, стр. 96.

[2] *Տե՛ս* նույն տեղը, էջ 79—80:



[1] *Տե՛ս Պ. Կ. Жузе*, Арабские племена в Закавказье, Институт истории и философии АН Азерб. ССР, фонд № 507, էջ 7-8, *Баладзори*, Книга завоевания стран, էջ 26-27:

[2] Նույն տեղում, էջ 8-9:

տանդին V Կոպրոնիմ կայսեր արշավանքների ժամանակ բյուզանդացիների կողմից այս վայրերից դեպի Բյուզանդիա բռնագաղթեցված ժողովուրդների մեջ արաբները հիշատակվում են առաջին տեղում[1]։

VII դարից հետո և մինչև IX դարի կեսերը արաբական իշխանությունները սիստեմատիկ ձևով շարունակում են Հայաստանի վերաբնակեցումն արաբական ցեղերի կողմից։ Արաբների հետ մեկտեղ երբեմն Անդրկովկաս ու Հայաստան էին բերվում նաև հրեաներ և նույնիսկ Հյուսիսային Կովկասի խազարներ, որի մասին որոշակի տեղեկություններ են հաղորդում Բալաձորին[2], Յակուբին[3] և ուրիշներ։ Հասկանալի է, որ Հայաստանում տեղավորվող օտարազգի վերաբնակիչները նույնպես հողաբաժիններ էին ստանում, ուրեմն այստեղ ևս արաբական իշխանություններն իրենց տրամադրության տակ ունեին պետական հողային ֆոնդեր և եկվորներին առաջին հերթին հատկացումներ էին կատարում այդ հողերից։

Քանի որ հողատիրության նոր եղանակները և նոր ձևերը գործնական կիրառության ընթացքում պետք է ստեղծեին նաև յուրահատուկ դժվարություններ ու տեսակ-տեսակ բարդություններ, դրա համար էլ այդ խնդրով հատկապես զբաղվում էր հողաչափը իր ձեռքի տակ եղած այլևայլ պաշտոնյաների հետ միասին։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ արաբների կողմից ստեղծված պետական հողային ֆոնդը և եկվոր ցեղերին հատկացվող կալվածքները վերջ ի վերջո կատարվում էին հայերի հաշվին և ի վնաս նրանց։ Արաբների հիշյալ քաղաքականությունը թեև առավել զգալի պետք է լիներ հայ աշխատավորական խավերի համար, սակայն նրանից մեծ չափով տուժում էին նաև աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալները։ Նույնիսկ արաբներն իրենք խոստովանում են, որ ոստիկան Խուզեյմայի իշխանության ժամանակ հայ ֆեոդալների և գյուղացիության դրությունը ծանր էր[4]։

VII դարից սկսած Հայաստանի այնպիսի բերդերում ու քաղաքներում, ինչպիսիք էին Դվինը, Նախիջևանը, Մանազկերտը, Արճեշը,

[1] Տե՛ս Ղևոնդ, էջ 129, *D. Tell-Mahre*, էջ 55-56, *Theophanis*, Chronographia, vol. I, Bonnae, 1839, էջ 662, Ստ. Ասողիկ, էջ 132։

[2] Տե՛ս Բալաձորի, «Հանդես ամսօրյա», 1903, № 8, էջ 254, *Баладзори*, Книга завоевания стран, էջ 20։

[3] Տե՛ս Յակուբի, «Հանդես ամսօրյա», 1906, № 12, էջ 361։

[4] Տե՛ս Բալաձորի, թարգմ. Կ. Յուբելյանի, էջ 39-40, *Баладзори*, Книга завоевания стран, էջ 21, *Ибн-Факих*, Сборник материалов . . ., т. 31, էջ 31։



Բաղևշը, Կարինը, Բերկրին ու Ամյուկը, արաբական տարրերն զգալի տոկոս էին կազմում։ Արաբների ձեռքն անցած հիշյալ կարևորագույն կենտրոններն այնուհետև վեր էին ածվում արաբական իշխանությունների ռազմա-վարչական հենակետերի, ուր վերաբնակիչներից և պաշտոնյաներից բացի տեղավորվում էին նաև զորային միավորումներ։ Քաղաքների, բերդերի և խոշոր բնակավայրերի շուրջը կարճ ժամանակում կենտրոնանում էին Պաղեստինի, Եմենի, Խորասանի և մյուս վայրերի մուսուլմանական վերաբնակիչները, որոնց իշխանությունների կողմից անմիջապես հատկացվում էին ամենաարգավանդ և ամենալավագույն հողերն ու արոտավայրերը։

Արաբները, այնուհետև, քանի դեռ պահպանում էին իրենց տիրապետությունը Հայաստանում, միշտ էլ հարկադրված էին զբաղվելու հողաբաժանության խնդրով, որովհետև արաբական տիրապետության հարատևության հետ մեկտեղ արաբական ցեղերի հոսքը դեպի Հայաստան շարունակվում էր։ Թովմա Արծրունին, օրինակ, խոսելով 851—855 թվականների Վասպուրականում Բուղայի արշավանքների մասին, վկայում է, որ արաբները, հայ նախարարներին պարտության մատնելուց հետո, բաժան-բաժան էին արաբ

այլ լիցի...»[1]: Թովմա Արծրունու հիշատակությունը հետաքրքիր է նաև նրանով, որ այնտեղ ցույց է տրվում, թե ինչպես էին արաբները հողաբաժանությունը լարի կամ վիճակ դնելու միջոցով կատարում: Այն, որ նրանք հողերի վրա հաստատվում էին իրենց բնակավայրերով, դուրս հնարավորություն տա եզրակացնելու, որ հողաբաժանումը կատարվում էր ըստ շնչերի: Այդ ժամանակներին է վերաբերում նաև արաբ պատմիչ Բալաձորիի վկայությունը Հայաստանի հյուսիսային շրջանները արաբներով վերաբնակեցնելու մասին: Արաբները նույն ձևով էին վարվում նաև հարևան երկրների բնակիչների հետ: Բալաձորին, օրինակ, պատմում է, որ «երբ արաբները հաստատապես գրավեցին Աղվանքը, դեպի այնտեղ էին ձգտում նրանց ցեղերը՝ երկու երկրամասերից (Բասրայից ու Կուֆից) և Ասորիքից, ըստ որում նրանցից յուրաքանչյուրը զավթում էր այն, ինչ կարող էր զավթել...»[2]: Այդ բանը հաստատում է նաև Իբն-Ֆաքիհը[3]:

Հայ նախարար-ֆեոդալների կալվածքների նկատմամբ արաբների ապառնալիքի պայմաններում տեղի էր ունենում նաև մեկ այլ երևույթ՝ խոշոր ֆեոդալական տնտեսությունների այսպես ասած կամովին մասնատում և հողային կալվածքների բաժանում ֆեոդալական տոհմի ներկայացուցիչների վրա, մի բան, որ խստորեն թուլացնում էր հայկական նախարարությունների նաև տնտեսապես: Հասկանալի է, որ այս երևույթը, ձեռնտու լինելով արաբական իշխանություններին, նրանց կողմից ոչ միայն չէր արգելակվում, այլև ընդհակառակը՝ խրախուսվում էր: Նախարարական կալվածքները բաժան-բաժան անելու կապակցությամբ ծագած միջֆեոդալական վեճերին ու կռիվներին ակտիվորեն միջամտում էին նաև արաբները և ձգտում, որպեսզի այդ անհամաձայնություններն ավելի սուր բնույթ ստանան: Այսպիսով, արաբական ցեղերի բնակեցումը Հայաստանում խիստ կերպով քայքայում էր երկրի էթնիկական և տերիտորիալ ամբողջությունը ու ճանապարհ հարթում Հայաստանում արաբական մեծ ու փոքր էմիրությունների առաջացման համար, էմիրություններ, որոնք արդեն VIII—IX դարերում երկրի

[1] Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Կոստանդնուպոլիս, 1852, էջ 170:

[2] *Баладзори*, П. К. Жузе, Арабские племена в Закавказье, Институт истории и философии АН Азерб. ССР, фонд № 507, стр. 7-8, *Баладзори*, Книга завоевания стран, стр. 27.

[3] *Տե՛ս Ибн-Факих*, Сборник материалов . . . , т. 31, էջ 5:



տնտեսական ու քաղաքական կյանքում սկսել էին որոշակի դեր կատարել:

Այդ ժամանակներում Հայաստանում գոյացած շատ թե քիչ ազդեցիկ արաբական էմիրությունները հետևյալներն էին. Դվինում և նրա շրջակայքում ստեղծվել էր Ջահաբիանների էմիրությունը, Կայսիկներն իշխում էին Ապահունիքում, որի կենտրոնը Մանազկերտն էր, Ութմանիկները սեփականացրել էին Առբերանը Բերկրի կենտրոնով, Աղձնիքն անցել էր Մուսա իբն-Զուրարին, որը նստում էր Բաղեշում, Ամիդում իշխում էին Շայբանիանները, այնուհետև գալիս էին Նախիջևանի, Գողթնի, Վասպուրականի, Սյունիքի, Կարսի, Լոռվա արաբական իշխանությունները և այլն: Անշուշտ, արաբական տարրերի աճելու պատճառով է, որ արաբական հեղինակներն, օրինակ, Արճեշ, Խլաթ, Մանազկերտ, Կարին և մի քանի ուրիշ քաղաքներ համարում են մուսուլմաններով բնակեցված կենտրոններ[1]: Արաբական նորաստեղծ էմիրությունները, ժամանակի ընթացքում ձեռք բերելով նաև զորք պահելու, հարկեր հավաքելու իրավունք և ընթանալով ֆեոդալականացման ճանապարհով, դառնում էին առանձին-առանձին ինքնուրույն ու ինքնամփոփ իշխանություններ, որոնք երբեմն փորձում էին նույնիսկ աղատվել խալիֆայության նկատմամբ իրենց ունեցած պարտականությունների կատարումից և ակտիվորեն մասնակցում էին պետության ներսում մղվող ներքին միջֆեոդալական կռիվներին:

Արաբները, հաստատվելով Հայաստանում, շատ շուտով համոզվեցին, որ քանի դեռ հայերն օգտվում են սեփական զինված ուժեր ունենալու իրավունքից, արաբական տիրապետությունը Հայաստանում ապահով լինել չի կարող: Հենց այս հանգամանքն էլ հաշվի առնելով, նրանք VII դարի վերջերից և VIII դարի սկզբներից սկսեցին կանոնավոր կերպով ջլատել ու ոչնչացնել հայերի զինվորական ուժերը: Արաբների առաջին զոհերը դարձան հայ զինվորականները, որոնք երկրի ռազմական ուժերի հիմնական կորիզն էին կազմում:

Անհրաժեշտ է շեշտել, որ VII դարի վերջերին և VIII դարի սկզբներին արաբների կողմից կիրառվող նման ահաբեկման քաղաքականության համար ստեղծվել էին նաև բավականին նպաստավոր պայմաններ: Այդ ժամանակ Մուհամեդ բեն-Օքբայի հրոսակախմբերը խալիֆ Աբդ էլ-Մելիքի (685—705) կարգադրությամբ արդեն շարժվում էին Հայաստանի վրա: Հայերի համար սպասվում

[1] *Տե՛ս Ибн-Хаукал*, Сборник материалов..., т. 38, էջ 93—94:

էին ծանր օրեր։ Վերահաս վտանգը կանխելու համար Հայաստանից շուտափույթ կերպով մի պատգամավորություն է ուղարկվում Դամասկոս՝ Սահակ Ձորափորեցի կաթողիկոսի (677—703) գըլխավորությամբ։ Սակայն Ճանապարհին կաթողիկոսի հանկարծամահ լինելու պատճառով բանակցությունների գործը մնում է անկատար։ Դրանից հետո, այսինքն՝ 703 կամ 704 թվականներին արաբական զորքերը, ներխուժելով Հայաստան, կարողանում են ճնշել երկրի այս ու այն կողմերում տեղի ունեցող ելույթները և կրկին ամրապնդել իրենց տիրապետությունը այստեղ։

Մի կողմից արաբների ռազմական հաջողությունները Հայաստանում և մյուս կողմից վրա հասած արաբա-բյուզանդական պատերազմը, կարծեք ավելի էին նպաստում, որպեսզի արաբները հայերի դեմ է՛լ ավելի ազատ գործեն։ Հայ-արաբական հակամարտությունը սրելու համար արաբներն օգտագործում էին նաև այն հանգամանքը, որ այդ ժամանակ հայ ազնվականների ու զինվորականների մի մասը, Արևելյան Հայաստանից անցնելով արևմուտք, միացել էր բյուզանդական զորքերին ու մասնակցում էր արաբա-բյուզանդական պատերազմին։

Արաբները, դեռևս 698 թվականի Մուհամեդ իբն-Մրվանի արշավանքների ժամանակ, փորձեցին ջլատել ու թուլացնել հայերի ռազմական ուժերը։ Ըստ որում նրանք իրենց նպատակին հասնելու համար գործադրում էին ամենանենգամիտ ու դաժան միջոցները։ Հայկական ավագանու և զինվորականության դեմ սկսած այդ գործողությունների մասին անկեղծ խոստովանություններ ունի նույնիսկ արաբական պատմիչ Յակուբին, որի մոտ կարդում ենք հետևյալը. «Մուհամեդ իբն-Մրվանը արշավեց Հայաստան, որովհետև քնակիչք ապստամբել էին, (ոմանց) սպանեց, (ոմանց) գերեց։ Երկրի իշխանք և ազատանիք աղերսանոք դիմեցին, և նա ներեց նոցա, խոստանալով նոցա (շնորհել) իշխանական աստիճան։ Երբ այս առթիվ նոքա ժողովեցան Խլաթա գավառի եկեղեցիներում, նա հրամայեց փայտ կուտել եկեղեցիների շուրջը, փակել դռները և այրել եկեղեցիք, հրո ճարակ առնելով բոլոր բազմությանն»[1]։ Մուհամեդ իբն-Մրվանի այս գործողությունների մասին հիշատակություններ ունեն նաև Մովսես Կաղանկատվացին և Մխիթար Ասորին։ Սրանցից առաջինը, ի տարբերություն Յակուբիի, դեպքերի հիմնական թատերաբեմը համարում է Նախիջևան քաղաքն ու նրա գյուղը, իսկ Մխիթար Ասորին մասնանշում է միայն Նախիջևանը։

[1] Յակուբի, «Հանդես ամսօրյա», 1906, № 2, էջ 359, Յակուբի, «Բազմավեպ», 1957, № 9—10, էջ 209։



Մենք կարծում ենք, որ արաբական պատմիչի մոտ հիշատակվող Խլաթը Խրամի աղավաղումն է և այն հենց վերջին խմաստով էլ պետք է հասկանալ։ Մովսես Կաղանկատվացին այդ դեպքերը հիշատակում է հայոց 145, այսինքն մեր թվականության 696-ի տակ, իսկ Մխիթար Ասորին ժամանակը չի հիշատակում։ Քանի որ այս երկու հեղինակների հիշատակություններն էլ ըստ էության մերկացնում են արաբների նենգամիտ ու արյունոտ քաղաքականությունը, ուստի ավելորդ չենք համարում դրանք ամբողջությամբ մեջ բերելու այստեղ։ «...Դարան գործեալ (Մուհամեդ իբն-Մրվանը—Ս. Մ.-Բ.) մեծապէս երդմամբ, դաւով և խաբէութեամբ առ ինքն ժողովեաց զամենայն գլխաւորս Հայոց, և տարեալ ի Նախիջեւան քաղաք ուր հարիւր այր յեկեղեցիսն արկեալ կենդանւոյն այրեաց, և չորս հարիւր այր ի Խրամ նոյնպէս այրեաց և զսինէլբորս նոցա սրահար սատակեաց»[1]։ Իսկ Մխիթար Ասորին գրում է, որ Մուհամեդ իբն-Մրվանը «...նենգիւ ժողովեաց զարքայազունսն Հայոց ի Նախջաւան, և ջանաց դարձուցանել ի կրօնն իւր, և յոչ հաւանելն նոցա, ածեալ ի մեծ եկեղեցին՝ հրով այրեաց զնոսա»[2]։ Ինչպես տեսնում ենք, արաբները հայերին հետապնդելիս և նրանց ակտիվ տարրերին ոչնչացնելիս որպես պատրվակ օգտագործում էին կրոնական հանդամանքը և իրենց զոհերի հետ դատաստան տեսնելուց առաջ նրանց առաջարկում էին կրոնափոխ լինել։

705 թվականին, երբ խալիֆայական գահն անցավ Վալիդ I-ին (հայկական աղբյուրներում՝ Վիղդ, Վլիթ, իշխել է 705—715 թթ.), և բռնկվեց արաբա-բյուզանդական պատերազմը, նոր խալիֆը, Ադրբաբների դիրքերի ապահովության համար, հանձնարարեց Հայաստան ներխուժած Մուհամեդ իբն-Օբրային որևէ եղանակով մեջտեղից վերացնել հայ նախարարների ու զինվորականների աչքի ընկնող դեմքերին։ Մուհամեդ իբն-Օբրան այդ առթիվ իր հերթին որոշակի ցուցումներ է տալիս Նախիջևանի արաբական զորքերի հրամանատար Կասըմին։ Իսկ վերջինս, օգտագործելով մի քանի տարի առաջ արաբների ունեցած փորձը, դարձյալ դիմում է խորամանկության։ Նա նախ հաշվառման և ռոճիկ բաժանելու պատրվակով իր մոտ է հրավիրում հայոց մեծամեծներին ու զինվորականներին։ Շատերը, գործի էությանը միանգամայն անտեղյակ, միամտաբար ընդունում են այդ հրավերը և իրենց մարդկանցով մեկնում Նախիջևան։ Այստեղ նրանց բոլորին անսպասելիորեն կալանավորում և քշում են քաղաքի ու նրանից ոչ հեռու գտնվող Խրամ գյուղի եկեղե-

[1] Մովսես Կաղանկատվացի, էջ 257։

[2] Մխիթար Ասորի, էջ 329։

ցիները: Հետո դավադիրները զինաթափ են անում և խլում իրենց պոհերի ձիերն ու թանկարժեք իրերը: Բայց դրանով էլ չբավարարվելով, ավելի հարուստ ու անվանի մարդկանցից փրկագին են պահանջում և երբ այդ էլ են ստանում, եկեղեցիների դռներն ու լուսամուտները շարել են տալիս և շենքերը հրդեհելով, բոլորին անխղճաբար ոչնչացնում են: Այս դեպքերի մասին տեղեկություններ են հաղորդում ինչպես ժամանակակից, այնպես էլ ուշ շրջանի հայ և օտար հեղինակները: Ղևոնդի մոտ, օրինակ, կարդում ենք հետևյալը. «Եւ Մահմետի առեալ զհրամանն անիրաւ՝ հրամայէր Կասմոյ ումեմն, որ էր հրամանատար նորուն ի կողմանսն Նախճաւանի քաղաքի՝ կոչեալ առ ինքն զնախարարս Հայոց նոցին հեծելովք իբրև պատճառանօք՝ եթէ անցուցանել ի համարու արքունի և առնուլ հռոգ և դառնալ: Եւ նոքա ըստ օրինի պարզամտութեան իւրեանց հաւատարիմ համարեալ զննդութիւն գաղտասոյր որսողացն՝ վաղվաղակի անդր հասանէին: Իբրև ժողովեցան անդր՝ հրամայէցին յերկուս բաժանել զնոսա, զոմանս հաւաքեցին յեկեղեցին Նախճաւանու, և զկէսն յուղարկեցին յաւանն Խրամ, արկանէին յեկեղեցի նորա, կարգեալ ի վերայ պահպանս. և խորհէին, թէ որպէս կորուսցեն զնոսա: Եւ միաբանեալ առհասարակ ամենեքին՝ հանին արտաքս զազատատոհմն յարգելանէն, և զորս ի սրբարանն արգելեալ էին՝ հրկէզ արարին և տոչորէին ի յարկս աստուածային խորանին,...

Իսկ զնախարարս աղատացն եղին ի կապանս բանտի, յանհանդուրժելի տանջանս խոշտանգէին, և պահանջէին ի նոցանէ բազում ոսկի և կշիռ արծաթոյ. և խոստացան նոցա, թէ յորժամ հատուսցեն նոցա զսակ արծաթոյն՝ արձակեսցեն զնոսա կենդանիս. վասն որոյ և երդմամբ դաշինս արարեալ հաւատարմացուցանէին զերդումն ստութեան: Եւ նոքա առ վստանդի նեղութեանն՝ զրպղում մթերս դանձուցն իւրեանց, զորս ի պահեստի եդեալ էին յերեսաց նեղչացն ի ծովու և ի ցամաքի՝ տային ի ձեռս թշնամեացն, զի թերևս ապրեցուսցեն զանձինս իւրեանց: Եւ իբրև ունայնացեալք ի գանձուցն եղեն՝ ձեռնամուխ եղեալ անօրինացն՝ բառնային զկենդանութիւնն նոցա, և զփայտէ կախեալ դատապարտէին զնոսա»[1]: Որ այս դեպքը տեղի է ունեցել Վալիդ I-ի օրոք, հաստատում է նաև Թովմա Արծրունին: «Վիդդ որդի Աբդըլ Մէլիքի ամս տասն,—ասում է նա,—սա եւս աւելի խորհեցաւ չար, եւ պատրանօք խաբէութեան որսացեալ զնախարարս աշխարհիս Հայոց, արար հրկէզ զամենեսեան ի քաղաքին Նախճաւան եւ յաւանին Խրամի որ է ի ներքոյ Աստապատոյ

[1] Ղևոնդ, էջ 32—34:



վանացն յեղր Երասխայ. եւ զաշխարհս ապականեաց գերութեամբ»[1]: Միխայել Ասորին նույնպես, Թովմա Արծրունու նման, այս դեպքերի պատասխանատուն համարում է Վալիդին[2], իսկ Սամվել Անեցին[3], Մխիթար Այրիվանեցին[4] և Կիրակոս Գանձակեցին[5] ոչինչ նոր բան չեն ավելացնում եղածի վրա: Ինչպես տեսնում ենք, մեջբերված հատվածներում արաբների կողմից հայ աղնվականության ոչնչացման դեպքը հեղինակների մոտ գրեթե միևնույն ձևով է ներկարագրվում: Մնում է միայն որոշել, թե երբ է տեղի ունեցել հիշյալ դեպքը: Ղևոնդը, Թովմա Արծրունին և Միխայել Ասորին միաբերան հաստատում են, որ այդ իրադարձությունը տեղի է ունեցել Վալիդ I-ի գահակալության ժամանակ և նրա հրամանով: Իսկ մեզ հայտնի է, որ Վալիդը իշխել է 705—715 թվականներին, այսինքն տասը տարի, որը հաստատում են նաև Ղևոնդն ու Թովմա Արծրունին: Պարզ է, որ նշված դեպքերն էլ պետք է կատարված լինեին 705—715 թվականների ընթացքում: Եվ քանի որ Ղևոնդն իր գրքի համապատասխան հատվածում որոշակիորեն ասում է, որ Վալիդը «...յառաջնում ամի իշխանութեան իւրոյ խորհեցաւ բառնալ յաշխարհէս Հայոց զտոհմ նախարարաց նոցին հեծելովք»[6], ուրեմն կասկած չի մնում, որ Նախիջևանի եղեռնը պետք է տեղի ունենար հենց 705 թվականին, մանավանդ որ, ինչպես մեկ անգամ էլ ենք նշել, արաբները հայ աղնվականության և զինվորականության դեմ արյունալի դատաստան տեսնելու մեծ հնարավորություններ ստացան Մուհամեդ իբն-Օքբայի Հայաստանում ձեռք բերած ռազմական հաջողությունների և 705 թվականին վերսկսված արաբա-բյուզանդական պատերազմի շնորհիվ: Պարզ է, որ հենց պատերազմի սկզբում, այսինքն 705 թվականին, արաբներն իրենց թիկունքն ապահովելու և հայերի հետ դաժան հաշվեհարդար տեսնելու ավելի մեծ հնարավորություններ ունեին: «Սուրբ Հայկականքում» պահպանված մի վկայությունից երևում է, որ Նախիջևանից ու Խրամից բացի նույնանման դեպքեր տեղի են ունեցել նաև Դվինում[7]:

Հայ նախարարներին ու մեծամեծներին ննջգամիտ ձևով ոչըն-

[1] Թովմա Արծրունի, էջ 115—116:
[2] Տե՛ս Միխայել Ասորի, էջ 333:
[3] Տե՛ս Սամվել Անեցի, էջ 85:
[4] Տե՛ս Մխիթար Այրիվանեցի, էջ 51:
[5] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 72:
[6] Ղևոնդ, էջ 31:
[7] Տե՛ս А. Шахназарян, Двин, էջ 80:

չացնելուց հետո արաբներն սկսեցին անբարտավան կերպով շարչարել ու տանջել նաև նրանց ընտանիքի անդամներին՝ կանանց, դուստրերին և որդիներին: Անպաշտպան մնացած իշխանազունների մի մասին նրանք քշեցին գերության[1]:

Նախիջևանում և Խրամում հայերի կրած զոհերի թիվը կազմում էր 1200 հոգի: Առանձնապես շատ էին տուժել Բագրատունի, Արծրունի, Ամատունի և երկրի ներքին կյանքում ակտիվ դեր կատարող մյուս նախարարությունները: Արաբա-բյուզանդական ավերիչ պատերազմների և արաբական արշավանքների ու ասպատակությունների պատճառով առանց այն էլ բավականին տուժած Հայաստանի համար արաբների հասցրած այս հարվածն առանձնապես ծանր ու զգալի եղավ: Պատկերավոր ձևով է ասում Ղևոնդը, թե՝ «Յայնմ ժամանակի թափուր եղեալ աշխարհս Հայոց ի տոհմէ նախարարաց՝ մատնէին որպէս զղչխարս ի մէջ գայլոց»[2]:

705 թվականից հետո հետապնդումներն ու հալածանքները երկրում շարունակվեցին է՛լ ավելի ուժեղանալ:

Արաբները որոշակիորեն վարում էին նաև կրոնական խտրականության և ազգային անհանդուրժողության քաղաքականություն, մի բան, որ, ինչպես ցույց է տալիս պատմությունը, առաջին գծի վրա էր մղվում դեռևս արաբական միասնական պետության ձևավորման սկզբնական ժամանակներում:

Իշխանությունն իրենց ձեռքը վերցրած իսլամի հետևորդ արաբական մեծամեծներն ամեն կերպ ձգտում էին, որքան կարելի է, նոր գաղափարախոսության ոլորտներն ընդարձակել նախ և առաջ Արաբիայում ապրող արաբական ցեղերի շրջանում: Եվ դա հասկանալի էր: Արաբական պետական գործիչներն ու կրոնական առաջնորդները հասկանում էին, որ համեմատաբար պատմական կարճատև ժամանակամիջոցում իրենց ձեռք բերած խոշոր հաղթանակները հնարավոր կլիներ երկար ժամանակ պահպանել նաև նոր գաղափարախոսության հետևորդների թիվը բազմապատկելու, ուրեմն և խալիֆայության վինված ուժերն ավելացնելու ճանապարհով: Հիշյալ քաղաքականությունն ամենայն որոշակիությամբ սկսեց կիրառել դեռևս Օմար խալիֆը, որը, ինչպես միանգամայն տեղին նկատել է արևելագետ Վ. Բարտոլդը, «...ցանկանում էր Արաբիան դարձնել զուտ մուսուլմանական երկիր և հալածանքի էր

[1] Տե՛ս Հովհ. Դրասխանակերտցի, էջ 97—98, Վարդան Բարձրբերդցի, էջ 99—100:

[2] Ղևոնդ, էջ 35:



ենթարկում բոլորին, ով չէր ուզում իսլամն ընդունել»[1]: Ինչպես տեսնում ենք, կրոնի ու դավանանքի խտրականության հանգամանքը արաբներին հետաքրքրել է դեռևս 630—640-ական թվականներին: Սակայն այդ դրույթը որոշ չափով հակասում էր այլադավանների նկատմամբ Ղուրանի ունեցած այսպես ասած հանդուրժողական ոգուն: Եվ որպեսզի պրակտիկայում գործող վերոհիշյալ սկզբունքը զաղափարապես չհակասեր մահմեդական սուրբ գրքին, հենց Օմարի հաջորդների ժամանակ կատարվեց նաև Ղուրանի պաշտոնական խմբագրումը, երբ նրանից դուրս հանվեցին արդեն ոչ պիտանի մի քանի դրույթներ[2]:

Օմար խալիֆի սկսած կրոնական խտրականության քաղաքականությունը խիստ ընդգծված ձևով է արտահայտված նվաճված վայրերի քրիստոնյա ազգաբնակչության հետ արաբների կնքած առաջին պայմանագրերում: Պատկերացնելու համար, թե ինչպես էին վերաբերվում իսլամի հետևորդները այլադավան ժողովուրդների հետ, երևում է Օմարի ժամանակ արաբների հետ Ասորիքի քրիստոնյաների կնքած պայմանագրից, որը մենք որոշ կրճատումներով մեջ ենք բերում արևելագետ Վ. Գիրգասի «Права христиан на Востоке по мусульманским законам» աշխատությունից. «Այս գիրը,— ասված է այնտեղ,—հանդիսանում է այս ու այս քաղաքների քրիստոնյաների ուղերձը Աբդուլահ-Օմարին՝ ուղղափառների տիրոջը: Երբ դուք հարձակվեցիք մեզ վրա, ապա մենք ձեղանից խնդրեցինք աման՝ (ներումն) մեզ, մեր ընտանիքների և մեր գավանակիցների համար: Մենք պարտավորվում ենք մեր քաղաքներում և նրանց արվարձաններում վանքեր, եկեղեցիներ, մատուռներ և ճգնարաններ չկառուցել: Մենք նրանցից քանդվածները չենք վերականգնի, չենք վերականգնի (նաև) այնպիսիները, որոնք գտնվում են մուսուլմանների թաղամասերում: Մենք չենք արգելում մուսուլմանների մուտքը մեր եկեղեցիները, ինչպես ցերեկը, այնպես էլ գիշերը: Մենք մեր եկեղեցիների դռները բաց կանենք անցորդների ու ճանապարհորդների առաջ: ...Մենք եկեղեցիներում ու մեր տներում լրտեսներ չենք թաքցնի,... չենք արգելի մեր ցեղակիցներից որևէ մեկին իսլամի ընդունումը, եթե նա կցանկանա: Մենք պարտավորվում ենք հարգել մուսուլմաններին և նրանց առաջ ոտքի կանգնել,... Մենք հագուստներով էլ չենք նմանվի մուսուլմաններին,...չենք գործածի նրանց արտահայտությունները (ինչպես ասլամ ալեյքումը...)... չենք կոչի մեզ նրանց տիտղոսներով: Մենք թամբած ձի չենք հեծնի

[1] *В. Бартольд*, Ислам, Петроград, 1918, стр. 41.

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 42:

և սրեր չենք կրի, չենք օգտագործի և չենք կրի նաև որևէ այլ զենք։ Մենք մեր կնիքների վրա արաբերեն չենք գրի և չենք վաճառի հարբեցնող խմիչքներ։

Մենք պարտավորվում ենք...մեր եկեղեցիների վրա խաչեր չկանգնեցնել և դրանք ու սուրբ գրքերը չպատեցնել մուսուլմանների փողոցներում և շուկաներում։ Մենք հավասարապես...ընթերցանության ժամանակ, մուսուլմանների ներկայությամբ, չենք բարձրացնի մեր ձայնը եկեղեցիներում։ ...Մենք չենք բարձրացնի մեր ձայնը նաև ննջեցյալներին ուղեկցելիս, նրանց հետ մուսուլմանների փողոցներով մոմեր չենք տանի, չենք թաղի մեր մեռելներին մուսուլմանական գերեզմանոցների մոտ...»[1] և այլն, և այլն։

Խտրականության օրենքով մուսուլմաններին իրավունք էր տրվում քանդելու քրիստոնյայի տունը, եթե այն մահմեդականի ունեցածից ավելի բարձր, մեծ ու շքեղ էր կառուցված։ Անգամ փողոցով քայլելիս քրիստոնյան իրավունք չուներ մահմեդականից առաջ անցնելու։ Այլադավաններն իրավունք չունեին օգտվելու իսլամի հետևորդների բաղնիքներից կամ նրանց հետ միևնույն աղբյուրներից։ Եվ, վերջապես, քրիստոնյային սպանելու դեպքում իսլամ քաղաքացին օրենքով ազատվում էր արյան վրեժից և տուժող կողմը լավագույն դեպքում ստանում էր միայն սպանվողի արյան գինը։ Քրիստոնյան իրավունք չուներ իսլամ հպատակի դեմ վկայություն տալու և այլն։ Այսպես կարելի է դեռ էլի շարունակել, սակայն, կարծում ենք, այսքանն էլ բավական է համոզվելու համար, որ Արաբական խալիֆայությունը ոչ իսլամ հպատակների նկատմամբ կիրառում էր ծայրահեղ մոլեռանդ ու ազգահալած քաղաքականություն։

VII դարից սկսած արաբները հատուկ օրենքներով արգելում էին ոչ իսլամական դավանանքին պատկանողներին պետական պաշտոններ զբաղեցնել։ Այդ օրենքը ժամանակ առ ժամանակ թարմացվում էր, և պետական օրգանները մաքրվում էին այլազգիներից։ Այսպես, Ալ-Մութավաքիլ խալիֆը (847—861) իր գահակալության տարիներին «հրամայեց, որ ոչ մահմեդական հպատակներուն պաշտոն չտրվի խալիֆայի պետության գործերուն մեջ, որ շինված եկեղեցիները կործանվին, նորերի շինությունը արգելվի...»[2] և

[1] *B. Гиргас*, Права христиан на Востоке по мусульманским законам, СПб, 1865, стр. 67-69։ *Այս պայմանագիրը որոշ փոփոխություններով բերում է նաև* XIV *դարի արաբ հեղինակ Իբն ան-Նակաշը, ապա նաև* XV *դարի եգիպտական գիտնական Շեմս ադ-դին աս-Սույուտին (տե՛ս* „Православный палестинский сборник", т. 17, вып. 2/4/, СПб, 1897).

[2] «*Յագուպի արաբ պատմագիրը և հայերը*», *բնագրից թարգմանեց Հ. Ադամյան*, «*Բազմավեպ*», *1958, № 3—5, էջ 102։*



*այլն։ Այս կարգի գործողություններով արաբները ձգտում էին ապահովել արաբական տարրերի առաջնությունը պետական և կառավարական ասպարեզներում։*

*Օմարի հաջորդների ժամանակ արաբների մոտ կրոնական և ազգային խտրականությունը գնալով սկսեց ավելի սրվել։ Արդեն VIII դարում հարկահավաքության սկզբունքների մասին խոսելու կապակցությամբ Աբու-Յուսուֆը որոշակիորեն ընդգծում է կրոնական և ազգային հանգամանքը, ասելով, որ «Արաբների նկատմամբ կիրառվող (հարկային) նորմերը նման չեն այն նորմերին, որոնք կիրառվում են ոչ արաբների նկատմամբ, քանի որ կռիվը ոչ արաբների հետ մղվում է, որպեսզի հարկադրենք նրանց կամ իսլամը ընդունել, կամ գլխահարկ վճարել»[1]։ Իսկ արաբների համար, ինչպես նշում է նույն հեղինակը, կար երկու պայման՝ իսլամի ընդունում, կամ մահ[2]։ Մինչդեռ ոչ իսլամական ժողովուրդներն իրենց դավանանքը կարող էին պահպանել գլխահարկ վճարելու պարտավորության ստանձնումով։ Արաբներն այդ ևս անել չէին կարող, որովհետև խալիֆայությունը նրանց առաջ այդպիսի պահանջ չէր դնում։ Ուրեմն այստեղ առավել ևս շեշտվում էր արաբական ցեղերին իսլամի կրոնն ընդունել տալու մեջ Արաբական խալիֆայության հետևողական ձգտումը։ Իսլամի տարածմանը լայն ասպարեզ տալու նպատակից էլ բխում էր արաբական կրոնն ընդունողներին գլխահարկից ազատելու օրենքի գոյությունը, որը թեև պաշտոնապես ձևակերպվել է Աբու-Յուսուֆի կողմից VIII դարում, բայց գործնականում այն կիրառվում էր դեռևս 650-ական թվականներից սկսած։*

*Եթե Հայաստանում, ինչպես արդեն ասվել է, արաբներն իրենց տիրապետության հաստատման սկզբնական ժամանակներում հասկանալի պատճառներով ոչ միայն խտրական խիստ վերաբերմունք չէին ցույց տալիս քրիստոնեության նկատմամբ ու բացահայտորեն չէին հալածում այլադավաններին, այլև ապահարկ էին ճանաչել եկեղեցականներին և պահպանում էին նրանց արտոնությունները, ապա հետագայում նրանք իրենց քաղաքականությունն ամբողջապես փոխեցին։*

*Պետական և անձնական պահանջները անհագուրդ կերպով ա-*

[1] *Абу-Юсуф*, пер. А. Э. Шмидта, стр. 96-97.

[2] *Տե՛ս նույն տեղը, նաև Абу-Юсуф, տե՛ս* Православный палестинский сборник, *էջ* 1309, *նաև Ал-Мавердий, տե՛ս նույն տեղը, էջ* 1330։

ճելու պայմաններում արաբներն այլևս չէին կարողանում անտարբեր վերաբերվել ոչ մահմեդական հոգևորականության և հոգևոր հաստատությունների ունեցվածքի նկատմամբ։

VIII դարից սկսած նախաբարբարական և դյուղացիական հողերի հետ միասին արաբներն սկսում են բռնագրավել և յուրացնել նաև հայկական եկեղեցական և հոգևոր դասին պատկանող կալվածքներն ու հարստությունները։ Այս դեպքում արդեն ոչինչ չարժեր հենց արաբների կողմից 652 թվականի հայ-արաբական պայմանագրով հայոց եկեղեցուն և հոգևորականությանը տված ապահարկության երաշխիքը։

Նախկինում քրիստոնեական հոգևորականությանը տրված արտոնությունների աստիճանական սահմանափակման, հայոց եկեղեցու և եկեղեցական դասի ներկայացուցիչներին ծաղր ու ծանակի, խոշտանգումների, բռնությունների և կողոպուտի ենթարկելու մասին բավականին հարուստ տեղեկություններ են հաղորդում հայկական աղբյուրները։

Որ իսկապես հայ հոգևորականության իրավունքներն արդեն VIII դարի սկզբներին զգալիորեն սահմանափակվել էին, այդ երևում է հայոց կաթողիկոս Հովհան Օձնեցու զրույցից (717—728) Դամասկոսում, որը հավանաբար տեղի է ունեցել 719 թվականին։ Կիրակոս Գանձակեցին, որ հանգամանորեն նկարագրում է հիշյալ հանդիպումը, վկայում է, որ, երբ հայոց կաթողիկոսի թողած դրական տպավորության աղդեցության տակ արաբական խալիֆը պահանջում է նրանից «Խնդրեա, զինչ և կամիս, և արարից քեզ», կաթողիկոսը պատասխանում է. «Երիս իրս խնդրեմ ի քէն, որ քեզ զիւրին է տալ։ Առաջինն այս՝ ի քրիստոնէից զոք մի բռնադատես քողուլ զհաւատս իւր, այլ յիւրաքանչիւր կամս թողես. և երկրորդ՝ զաղատութիւն եկեղեցւոյ ընդ հարկաւ մի դնիցես և մի ինչ առնուցուս յերիցանց և ի սարկաւագաց...»[1] և այլն։ Այստեղից պարզ կերպով երևում է, որ արդեն այդ ժամանակ քրիստոնյաներն իրենց դավանանքի համար արաբների կողմից հալածանքի էին ենթարկվում և հայկական եկեղեցին կորցրել կամ կորցնելու վրա էր իր երբեմնի աղատությունը, իսկ հոգևոր դասը ենթարկվում էր հարկադրման։ Հայոց եկեղեցու առաջնորդի խնդրանքը թեև խալիֆը կատարում է և անում համապատասխան կարգադրություն, բայց, ինչպես երևում է, այդ կարգադրության կենսագործումը շատ կարճ է տևում, որովհետև Հովհան Օձնեցուց հետո եկեղեցին կրկին խիստ

[1] Կիրակոս Գանձակեցի, էջ 68։



հալածանքների է ենթարկվում[1]։ Եվ Դավիթ Արամոնեցի կաթողիկոսը (728—741) այլևս տանել չկարողանալով արաբների բռնություններն, հարկադրված կաթողիկոսությունը Դվինից տեղափոխում է Կոտայքի իր հայրենի Արամոնք գյուղը[2]։

VIII դարի վերջերին Հայաստանում հարկահավաքի պարտականությունները կատարող Իբն-Դոկի ու նրա մարդկանց սանձարձակություններն հասան այն աստիճանին, որ նրանք կաթողիկոսի մահվանից հետո հարձակվեցին Դվինի կաթողիկոսարանի վրա ու կողոպտեցին նրա հարստությունները և երբ դրանով էլ չբավարարվեցին, այն ժամանակ սկսեցին մանրամասն կերպով քննել եկեղեցու և հոգևորականության եկամուտները և բռնությամբ խլել դրանք։ Ստեփանոս II Դվնեցին (788—790), որ այդ ծանր օրերին հաջորդել էր Եսայի I-ին, մեծ զոհողությունների գնով միայն կարողացավ որոշ ժամանակ ապահովել եկեղեցու և հոգևորականության վիճակն ու ազգաբնակչությանն ազատել անօրինական պարտքերից։

Եկեղեցիների ու վանքերի մասսայական կողոպտումը շարունակվեց նաև հաջորդ տարիներին[3]։ 790 թվականին, օրինակ, միայն Բագրեւանդ գյուղի ս. Գրիգոր վանքը կողոպտելու ժամանակ արաբները կոտորեցին 40 մարդ[4]։ Հովհաննես Դրասխանակերտցին պատմում է, թե ինչպիսի խարդախ ու դաժան միջոցներով ոստիկան Խուզեյման կարողացավ ձեռք գցել Աշտարակ, Կավակերտ և Հոռոմոց մարգ գյուղերում գտնվող կաթողիկոսական կալվածքները։ Կաթողիկոս Հովսեփ II Եղիպատրուշեցին (795—806), որը եռանդով դիմադրում էր արաբական իշխանությունների ոտնձգություններին, բանտ նետվեց, իսկ կաթողիկոսի եղբորը շարագործները սպանեցին[5]։ Եկեղեցու և հոգևորականության հալածանքների ու հետապնդումների մասին պատմում է նաև Մովսես Կաղանկատվացին՝ 830-ական թվականների պատմությունը շարադրելիս[6]։

Արաբների կողմից Հայոց եկեղեցու և հոգևորականության դեմ սկսված բռնությունների ու հալածանքների հիմնական նպատակը ոչ թե հրով ու սրով հայերի մեջ անպայման իսլամի կրոնի տարածումն էր, այլ՝ երկրի կողոպուտը։ Այս դեպքում արաբների համար

[1] Տե՛ս Վարդան Բարձրբերդցի, էջ 102։
[2] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 66—67։
[3] Տե՛ս Մխիթար Այրիվանեցի, էջ 53։
[4] Տե՛ս Վարդան Բարձրբերդցի, էջ 104։
[5] Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 112—113։
[6] Տե՛ս Մովսես Կաղանկատվացի, էջ 265—266։

կրոնական հալածանքները հանդիսանում էին որպես միջոց իրենց հիմնական նպատակի իրագործման համար։

Մեծագույն արագությամբ հզորացող Արաբական խալիֆայությունն արդեն VIII դարում այնքան էր ընդարձակվել ու մեծացել, որ նրա տիրապետության սահմաններն այժմ ձգվում էին Իսպանիայից ու Հյուսիսային Աֆրիկայից Միջագետքի, Հայաստանի ու Պարսկաստանի վրայով մինչև Միջին Ասիա ու Հնդկաստանի սահմանը։ Արաբները զենքի ուժով հպատակեցրել և իրենց էին ենթարկել տասնյակ ժողովուրդներ ու երկրներ։ Նրանք իրենց լայնածավալ տիրապետությունը պահպանելու և արաբական տարրերի առաջնությունն ամենուրեք ապահովելու համար հարկադրված էին անընդհատ ավելացնել զինված ուժերը, ռազմական ու տնտեսական անհրաժեշտություններից ելնելով՝ կառուցել և վերանորոգել ճանապարհները, կամուրջները, զորակայանները, ամրոցներն ու բերդերը, ստեղծել նավատորմիղ, զենքի ու զինամթերքի հսկայական պաշարներ և այլն։

Պատերազմական արվեստի շատ կողմերն ընդօրինակելով հույներից ու պարսիկներից, արաբները կարճ ժամանակում ստեղծեցին ճկուն, մարտունակ և ուժեղ բանակ, որի զորամասերը կազմվում էին ըստ առանձին ցեղերի։ Զորքի տեսակները երկուսն էին՝ հետևակային և հեծելազորային, որոնք զինվում էին ժամանակի անհրաժեշտ զենքի բոլոր տեսակներով և պաշարողական հարմարանքներով։

Հայտնի է, որ արաբական բանակների սպառազինության միայն մի որոշ մասն էր պետությունը տալիս, որովհետև զենքն ընդհանրապես արաբների մոտ, մանավանդ սկզբնական շրջանում, բավականին թանկ արժեր, քանի որ դրա արտադրությունը կապված էր զինագործության արհեստի հետ, իսկ արաբներն առայժմ արհեստներով քիչ էին զբաղվում։ Այսպես, օրինակ, ըստ տեղեկությունների, դեռևս Մուհամեդի ժամանակ մեկ վահանն արժեր մեկ դինար, որը հավասար է մեր փողով 2ռ. 60 կոպեկի։ Հասկանալի է, որ զենքի հիմնական տեսակները պարտավոր էր ձեռք բերել ինքը՝ ռազմիկը կոիվների ու արշավանքների ընթացքում։

Սկզբում պատերազմի ընդունակ մահմեդական բոլոր տղամարդիկ պարտադիր կարգով կազմում էին զինվորական դասը և վարձատրվում էին հավասարապես։ Զինվորությունը ոչ միայն խրախուսվում էր մահմեդական կրոնի սկզբունքներով, այլև արաբների մոտ համարվում էր բավականին եկամտաբեր մի զբաղմունք։



Աբու-Յուսուֆի վկայությամբ Օմար խալիֆի ժամանակ զորահրամանատարները և էմիրները տարեկան ստանում էին 7000—9000 դիրհեմ, կամ մեր փողով՝ 940—1170 ռուբլի[1]։ Հետևակային զինվորներն ստանում էին 500—600 դրամ, մեր փողով՝ 220—264 ռուբլի։ Աբասյանների ժամանակ այդ գումարը հետևակայինների համար հասավ 960 դրամի, մեր փողով՝ 4224 ռուբլու, իսկ հեծյալների համար՝ դրա կրկնակին, այսինքն՝ 8448 ռուբլի։ Որպես կանոն, ձեռք բերված ավարի ու կողոպուտի $^4/_5$ մասը նույնպես բաժանվում էր զինվորներին։ Արաբ զինվորները դիմացկուն էին և դժվարություններն ու նեղությունները հեշտ տանող։

Օմայանների տիրապետության ժամանակ խալիֆայության զորքի ընդհանուր թիվը շատ մեծ չէր՝ այն հասնում էր 60000-ի, որի վրա տարեկան ծախսվում էր 60 միլիոն դրամ, մեր փողով՝ 264 միլիոն ռուբլի։ Գնալով արաբական բանակն ու նրա սպառազինությունը մեծանում էր և արդեն IX դարի սկզբներին միայն Պարսկաստանում պահվող արաբական զորքերի թիվը հասնում էր 125000 մարդու։ Պարզ է, որ զորքի ավելացմամբ ավելանում էին նաև ռազմական ծախսերը։ Սակայն խալիֆայության տիրապետության ընդարձակումը և նրա կողմից բազմաթիվ երկներին ու ժողովուրդներին բռնությամբ մեկ պետության մեջ միավորելը, անշուշտ, կավելացնեին խալիֆայության ընդհանուր եկամուտները, եթե գրավված բոլոր երկրները մշտապես մնային կենտրոնական իշխանության իրավասության տակ և կանոնավոր կերպով շարունակեին նրա գանձարանը մուծել իրենց եկամուտների մի մասը և ապա՝ գոյացած եկամուտները ծախսվեին տեղին ու մտածված ձևով։

Խալիֆայության ներսում ֆեոդալական հարաբերությունների զարգացման հետևանքով, հատկապես VIII դարի երկրորդ կեսերից սկսած, շատ երկրամասեր արդեն այնքան էին ուժեղացել, որ այլևս չէին ենթարկվում խալիֆների իշխանությանը և դադարեցրել էին հարկատվությունը։ Այդ և ուրիշ պատճառներով էլ, օրինակ, եթե մինչև 780-ական թվականները խալիֆայության տարեկան եկամուտները կազմում էին 411 միլիոն դիրհեմ, որը մեր փողով հավասար է 53430000 ռուբլու, ապա 780-ական թվականներին այդ գումարն իջավ մեր փողով 48 360000 ռուբլու[2]։ Եվ ինչպես կարող էին խալիֆայության եկամուտները չպակասել, երբ հենց նույն ժամանակներում խալիֆներից մեկը միայն Ճաշի համար օրական

[1] *Տե՛ս Աբու-Յուսուֆ*, пер. А. Э. Шмидта, էջ 62։

[2] *Տե՛ս М. Томара*, Бабек, Москва, 1936, էջ 55։ *Իսկ X դարի առաջին կեսերին այդ գումարն իջավ 24 միլիոն դիրհեմի, մեր փողով՝ 3 միլիոն 120 հազար ռուբլի, տե՛ս նույն տեղը, էջ 170։*

ծախսում էր 10000 դիրհեմ, մեր փողով՝ 1300 ռուբլի, իսկ մի երգի համար պարգևատրում 300000 դիրհեմ, մեր փողով՝ 39000 ռուբլի: Էլ չենք խոսում համարյա չընդհատվող բազմապիսի կերուխումների ու հարսանյաց և այլ կարգի հանդեսների վրա ծախսվող հսկայական գումարների մասին: Պետական գումարների այսպիսի անխնա ու անհաշիվ շռայլումները գնալով ավելի էին մեծանում և ընդունում կատարյալ սանձարձակ ձևեր: Այսպես, Հարուն ալ-Ռաշիդը (786—809) իր գանձարանի փողերը, որ կազմում էին վեց միլիոն դիրհեմ կամ մեր փողով 780 հազար ռուբլի, միանգամից շաղ էր տվել իր հարճի վրա, նրա մի պարի համար: Սակայն որքան ծախսվում, որքան շռայլվում էին պետական և անձնական եկամուտները, դրանց տեղը դեռևս շարունակվում էին լցվել նորանոր հարստություններ ու գանձեր ի հաշիվ բազմաթիվ ժողովուրդների արյուն-քրտինքով ստեղծված բարիքների: Դրա համար էլ նման շռայլումների հետ միասին, այնուամենայնիվ, խալիֆների ունեցած գանձերի մասին առասպելական ճշմարտություններ էին պատմվում: Ասում էին, օրինակ, որ Աբու-Ջաֆար ալ-Մանսուրի (754—775) գանձարանում մնացած ամբողջ կարողությունը հավասար էր 960 միլիոն դիրհեմի, մեր փողով՝ 124 միլիոն 800 հազար ռուբլի, որը կարող էր բավարարել խալիֆայության շատ պահանջները մի քանի տարի անընդհատ[1]: Այսպես կարելի է շատ փաստեր և օրինակներ բերել, սակայն, կարծում ենք, այդքանն էլ բավական է Արաբական խալիֆայության պետական և այլ ծախսերի չափերը պատկերացնելու համար: Հասկանալի է, որ համաշխարհային տիրապետության հասած արաբական պետության այդ հսկայական ծախսերի մեծագույն մասը բաժին էր ընկնում հպատակ երկրներին ու ժողովուրդներին: Եվ այդ միջոցները կորզվում էին հիմնականում հարկերի ձևով:

Արաբական խալիֆայության տնտեսական քաղաքականության մեջ հիմնական տեղը գրավում էր նրա հարկային քաղաքականությունը, որովհետև խալիֆայության անծայրածիր տիրապետության մեջ անհրաժեշտ հսկայական ծախսերը բավարարվում էին մեծ մասամբ հարկային եկամուտների շնորհիվ: Այս առումով Արաբական խալիֆայության համար նույնպես տեղին ու կիրառելի է Կ. Մարքսի այն բնորոշումը, թե «Հարկերի մեջ է կայանում պետության տնտեսապես արտահայտված գոյությունը: ...Պետության տնտեսական հիմքը կազմում են հարկերը»[2]: Ուրեմն, դժվար չէ հասկանալ, որ

[1] Տե՛ս M. Томара, Бабек, էջ 49-50:
[2] К. Маркс, Морализирующая критика и критизирующая мораль, Сочинения, т. 5, М.-Л., 1929, стр. 215.



Արաբական խալիֆայությունն իր հարկային քաղաքականությամբ փաստորեն ի կատար էր ածում արևելյան կառավարություններին հատուկ երեք վարչություններից հենց առաջինը՝ ֆինանսականը, որը, Ֆրիդրիխ Էնգելսի խոսքերով, նշանակում էր «կեղեքում երկրի ներսում»[1]:

Եվ իսկապես, Արաբական խալիֆայության ստեղծման օրվանից ի վեր պետական եկամուտները հիմնականում գոյանում էին հարկերից: Խալիֆայության համար նույնպես ամենակարևոր հարցերից մեկը պետական գանձարանին դրամ մատակարարելն էր, իսկ դա ամենադժվարին խնդիրն էր, որովհետև պետության եկամուտների ու նրա ծախսերի մեջ ոչ մի համաձայնեցում գոյություն չուներ և այդ անհամաձայնությունն ու ֆինանսական դեֆիցիտը գնալով է՛լ ավելի մեծ չափեր էր ընդունում: Դրա համար էլ պատահական չէ, որ Արաբական խալիֆայության մեջ, նրա գոյության ողջ ժամանակաշրջանում, գործում էին հարկերի ու տուրքերի բազմաթիվ ու բազմապիսի տեսակներ, որոնց թիվը երբեմն տասնյակների էր հասնում[2] և որոնք մտցվում էին գատարկված գանձարանները լցնելու համար: Իհարկե հարկերի բոլոր տեսակները Արաբական խալիֆայության սահմաններում և բոլոր ժամանակներում հավասարապես պարտադիր կարգով գոյություն չեն ունեցել: Կոնկրետ դեպքում Հայաստանի վերաբերյալ եղած սկզբնաղբյուրներում արաբական հարկատեսակներից հիշատակվում են ծախահարկը, գըլխահարկը, որ արաբները կոչում էին ջիզե կամ ջիզյաթ և հողահարկը կամ խարաջը: Ինչպես այլ երկրներում, Հայաստանում նույնպես, արաբական հարկատեսակները հաստատուն չափեր չեն ունեցել և միշտ նույն ձևով ու եղանակներով չեն գանձվել:

Արաբական խալիֆայությանը Հայաստանը հետաքրքրում էր ոչ միայն ռազմական, այլև տնտեսական տեսակետից, որովհետև նա խալիֆայությանը տալիս էր հսկայական եկամուտներ: Հենց դրանից էլ բխում էր Հայաստանում արաբների վարած տնտեսական ռըոշակի քաղաքականությունը, որը հանգում էր երկիրը առավել չափերով կողոպտելուն և նրա նյութական բարիքներն ու միջոցներն է՛լ ավելի մեծ քանակով դուրս տանելուն:

[1] Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Հատընտիր նամակներ, հ. I, Երևան, 1936, էջ 91:
[2] Տե՛ս Հ. Զորյան, Արաբների հարկային քաղաքականությունը ավատական Հայաստանում, ՀՍԽՀ Պետական համալսարանի գիտական տեղեկագիր, № № 2—3, Երևան, 1927, էջ 343—345:

Թեև հարկային քաղաքականությունն արաբական տիրապետության ամբողջ ժամանակաշրջանում Հայաստանում հետապնդել է միևնույն որոշակի նպատակը, բայց, այնուամենայնիվ, նա այդ տիրապետության տարբեր ժամանակներում արտահայտվել է տարբեր եղանակներով ու ձևերով: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հարկահավաքությունը համարելով իրենց քաղաքականության ամենահիմնական ու ամենակարևոր կողմը, արաբները հարկային սիստեմը միշտ հարմարեցրել են ժամանակի ու պայմանների պահանջներին: Դրա համար էլ ինչպես հարկերի տեսակներն ու չափերը, այնպես էլ նրանց հավաքման եղանակները տարբեր ժամանակներում եղել են տարբեր: Հենց այդ տարբերություններից էլ ելնելով՝ ուսումնասիրողներն իրավացիորեն արաբական տիրապետության ողջ ժամանակաշրջանի հարկային քաղաքականությունը բաժանում են որոշակի էտապների[1], որոնք, սկզբունքորեն ճիշտ լինելով հանդերձ, այնուամենայնիվ ունեն նաև որոշ պակասավոր կողմեր ու անճշտություններ:

Արաբական խալիֆայության տիրապետության ընթացքում հարկային քաղաքականությունը Հայաստանում, մեր կարծիքով, պետք է բաժանել հետևյալ չորս հիմնական շրջանների. 652—699 թթ., 700—725 թթ., 725—750 թթ. և 750—862 թթ.: Այսպիսի բաժանման համար մենք հիմք ենք ընդունում հետևյալ հանգամանքները:

652 թվականն այն շրջադարձային ժամանակն էր, որից սկսվում է Հայաստանի կողմից Արաբական խալիֆայության տիրապետության պաշտոնական ընդունումը և հայերի՝ արաբների հանդեպ որոշակի պարտավորությունների ստանձնումը: Սակայն պատմական իրադարձությունների բերումով, ինչպես այդ տեսանք նախորդ գլխում, հայերն իրենց հարկային պարտավորություններն անընդմեջ կերպով չէին կատարում: Առաջին շրջանում արաբների հարկային քաղաքականությունը Հայաստանում ավելի շատ կրել է պատահական բնույթ և արտահայտվել համեմատաբար թեթև ձևով: Եվ սա ոչ միայն Հայաստանում արաբական տիրապետության անկայունության, արաբների կողմից ընդդեմ Բյուզանդիայի հայերին ամրաշահելու, այլև խալիֆայության ներսում առաջացած կռիվների հետևանքն էր:

Երկրորդ շրջանը, որն ընդգրկում էր արաբական տիրապետության վերջնական հաստատումից մինչև 725 թվականի Հերթի աշխարհագիրն ընկած ժամանակաշրջանը, տարբերվում էր առաջինից նրանով, որ այժմ արաբները, ելնելով իրենց դիրքերը համեմատաբար ամուր լինելուց, հնարավորություն ունեցան նաև հարկային քաղաքականության մեջ մտցնելու որոշակիություն և կայունություն:

725—750 թվականներին արաբներն ընդհանրապես ծանրացնում են հարկային լուծը, ծախահարկի փոխարեն մտցնում են գլխահարկը, հարկերի մեջ առավելությունն սկսում են տալ դրամական rենտային և այլն:

Չորրորդ շրջանն ամբողջությամբ ընդգրկում է Աբասյանների փաստական տիրապետության ժամանակաշրջանը Հայաստանում, երբ արաբների հարկային քաղաքականությունն ընդունում է ծայրահեղ կամայական և բացահայտ կողոպուտի բնույթ: Ըստ էության հարկային լուծն այս շրջանում ամենից ծանր ու ամենից անտանելին է եղել սոցիալական բոլոր խավերի համար և ուղեկցվել է կրոնական, իրավական, սոցիալական և այլ կարգի բռնություններով, հալածանքներով ու հարկադրանքներով:

Սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանում և Անդրկովկասում արաբները հարկերին կարևոր նշանակություն են տվել դեռևս իրենց առաջին արշավանքների ու ներխուժումների ժամանակ: Ամենուրեք, ուր մտնում էին արաբական հրոսակախմբերը, նվաճված ու հպատակեցված վայրերի աղբանակչությանը պարտադրում էին առաջին հերթին ստանձնելու հարկատվության պարտավորությունը: Արաբական առաջին արշավանքի կապակցությամբ մենք արդեն հիշատակել ենք, թե ինչպես 640 թվականին Չորրորդ Հայքի հայերի դիմադրությունն ընկճելուց հետո արաբները հաշտության պայմանագիրն են կնքում և պարտադրում հայերին հարկ վճարել[1]: Հարկահավաքության կարևորությունը հատկապես շեշտված ձևով է դրսևորված նաև 652 թվականի

[1] Մենք ի նկատի ունենք պատմական գիտ. թեկնածու Հ. Նալբանդյանի թեկնածուական և իրավաբանական գիտ. դոկտոր Ա. Սուքիասյանի դոկտորական դիսերտացիաներում տրված բաժանումները: Ըստ Հ. Նալբանդյանի տրվում է հարկային քաղաքականության հինգ շրջան՝ 640—652, 652—698, 698—724, 724—750 և 750—862 թվականները, իսկ Ա. Սուքիասյանի, երեք՝ 650—720, որը բաժանվում է նաև մեկ ենթաշրջանի՝ 700—720 թթ. այնուհետև երկրորդ շրջանն ընդգրկում է 720—750 թթ., իսկ երրորդը՝ 750—787 (վերջինը հավանաբար պետք է լինի 887 թ., այսինքն արաբների կողմից Հայաստանի քաղաքական անկախության ճանաչման թվականը): Տե՛ս А. Т. Налбандян, Административная и налоговая политика арабов в Армении (с начала 8-го в. до середины 9-го в.), автореферат, Ереван, 1950. А. Г. Сукиасян, Общественно-политический строй и права Армении в эпоху раннего феодализма, Ереван, 1963.

[1] Տե՛ս Յակուբի, «Հանդես ամսօրյա», 1906, № 12, էջ 359, Իբն ալ-Ասիր, «Հանդես ամսօրյա», 1908, № 2, էջ 48:

հայ-արաբական պայմանագրում և Հաբիբ իբն-Մասլամայի արշավանքների ընթացքում՝ 654—656 թվականներին։

Բալաձորին, որ այս հարցում համարվում է լավագույն սկզբնաղբյուրը, հաստատում է, որ Հայաստանում և Անդրկովկասում նվաճված Կարինի, Դվինի, Նախիջևանի, Թիֆլիսի, ապա նաև Բագրևանդի, Վասպուրականի, Սյունիքի և հայկական ու ոչ հայկական այլ քաղաքների ու շրջանների ազգաբնակչության ու անհատ կառավարիչների հետ Հաբիբ իբն-Մասլամայի կնքած գրավոր պայմանագրի մեջ պարտվող կողմին առաջին հերթին պարտադրվում էր հարկատվությունը, իսկ հետո՝ մահմեդականների նկատմամբ համերաշխություն, նրանց սննդամթերքներով ապահովելու և պատերազմում զորքով օգնելու պարտականություններ[1]։ Ցավոք, հեղինակի մոտ մեծ մասամբ ընդհանուր ձևով է նշվում, որ այս ու այն քաղաքը կամ շրջանը պարտավորվում է հարկ տալ արաբներին և քիչ դեպքում է միայն կոնկրետ հիշատակվում հարկի չափն ու անունը։ Երևում է, որ թեև Մասլաման հարկերի հավաքմանը խիստ հետամուտ է եղել, բայց և այնպես նա հարկահավաքության հաստատուն սկզբունք չի ունեցել և գանձել է ինչ որ կարողացել է։

Արաբների հարկային քաղաքականության առաջին շրջանին վերաբերող վկայություններից երևում է, որ ամբողջ VII դարի ընթացքում արաբներին չի հաջողվել Հայաստանում ու Անդրկովկասում վարել կայուն հարկային քաղաքականություն, որովհետև այդ ժամանակաշրջանում արաբներն այստեղ դեռևս չէին կարողացել հաստատել իրենց ամուր քաղաքական իշխանությունը։ Այդ է պատճառը, որ ամբողջ VII դարի ընթացքում արաբները Հայաստանում ու Անդրկովկասում չունեին ոչ հարկերի որոշակի տեսակներ և ոչ էլ դրանց համար սահմանված կայուն չափեր։ Հարկային քաղաքականության մեջ գոյություն ունեցող անորոշության պատճառով սկզբնաղբյուրներում մեծ մասամբ գանձվող նույնիսկ հայտնի հարկատեսակները շփոթել են իրար հետ՝ ստեղծելով անվան և բովանդակության անհամապատասխանություն։ Դրա համար էլ թեև արաբական հեղինակները այդ ժամանակների համար հիշատակում են հողահարկը, գլխահարկը և ծխահարկը, փաստորեն դրանք հիմնականում ունեն Արաբական խալիֆայության տիրապետության մանավանդ սկզբնական շրջանում շատ տարածված ծխա-

[1] Տե՛ս *Баладзори*, Книга завоевания стран, էջ 10—11, Բալաձորի, «Հանդես ամսօրյա», 1903, № 8, էջ 252—253, Բալաձորի, Կ. Յուրյանի թարգմ., էջ 21։



հարկի իմաստն ու նշանակությունը և կամ ուղղակի հարկ կամ ուրբ իմաստը։ Այս խնդրում միանգամայն իրավացի է արևելագետ Պ. Շվարցը, երբ նշում է, որ սկզբնական շրջանում խարաջն ու գլխահարկն ունեցել են միևնույն նշանակությունը և ընդհանուր ձևով արտահայտել են հարկի իմաստ[1]։ Եվ քանի որ սկզբնաղբյուրներում համարյա արաբական բոլոր հեղինակների մոտ և բոլոր ժամանակների համար խարաջ տերմինն օգտագործվում է ինչպես հողահարկի, այնպես էլ ընդհանրապես հարկի իմաստով[2], ուստի կարծում ենք, որ խարաջ բառն այդ ժամանակներում արաբերենում արտահայտել է երկու իմաստ. նեղ իմաստով այն նշանակել է ուղղակի հողահարկ, իսկ լայն իմաստով՝ հարկ կամ տուրք ընդհանրապես։ Ուրեմն այդ շրջանի համար որոշ հեղինակների կողմից օգտագործվող վերոհիշյալ հարկատեսակները չպետք է տառացիորեն հասկանալ, որովհետև բոլոր դեպքերում չէ, որ նրանց անունն ու բովանդակությունը համապատասխանում են իրար։ Պետք է նկատի ունենալ, որ արաբական հեղինակների համար գուցե էականը հարկատեսակները չէին, այլ խալիֆայական գանձարանը մուտք արվող եկամուտներն ընդհանրապես, ինչ անունով էլ որ դրանք գոյանալու լինեին։ Դրա համար էլ նրանք այդ շրջանի հարկային քաղաքականության մանրամասնությունների մեջ չէին խորանում, իսկ երբեմն էլ դրանք շփոթում էին։ Դրությունն այլ էր հայ հեղինակների համար։ Վերջիններս, որպես տուժող կողմի ներկայացուցիչներ, եթե խոսում են հարկային քաղաքականության մասին, ապա որոշ դեպքերում նշում են դրանց տեսակները, չափերը և հարկերի ազդեցությունն ու հետևանքները հասարակական տարբեր խավերի վրա։ Այս առումով էլ շատ հետաքրքիր է Սամվել Անեցու հիշատակությունը։ Նա, իր տեղեկությունները քաղելով մեզ տակավին անծանոթ ավելի հին աղբյուրներից, հաստատում է, որ այս շրջանում արաբները Հայաստանում հարկերը գանձում էին «յամենայն տանէ», այսինքն՝ ըստ ծխերի կամ ընտանիքների։ Մեր ասածներից հետևում է, որ արաբների հարկահավաքությունն այս շրջանում կրում էր զուտ ռազմական հաջողությունների վրա հենված պատահական միջոցառման բնույթ։ Հարկերի գանձման պատահական բնույթը երևում է արաբների հենց առաջին ներխուժումների ժամանակ։ Այսպես, օրինակ, Կարինը գրավելուց հետո, նրա բնակիչները «...խընդրեցին իրենց խնայել և համաձայնվեցին թողնել (իրենց) երկիրն

[1] Տե՛ս *P. Schwarz*, Der Islam, vol. VI, 1916, էջ 97, ծանոթ.։

[2] Տե՛ս *Ал-Якуби*, Сборник..., т. 32, էջ 59, *Ибн-Факих*, տե՛ս նույն տեղը, հ. 31, էջ 11, *Ибн-Хордадбег*, նույն տեղում, հ. 32, էջ 11 և այլն։



1287—10

ու վճարել գլխահարկ»[1]։ Գլխահարկ է անվանում Բալաձորին նաև Թիֆլիսի բնակիչներից գանձվող հարկը։ Սակայն, քանի որ իրականում այդ հարկը գանձվում էր յուրաքանչյուր ծխից տարեկան մեկ դինարի չափով, ուրեմն այն իրականում ծխահարկ է, այլ ոչ գլխահարկ։ Հարցն ավելի ճիշտ է պատկերացնում Տաբարին, որը Ջորբորդ Հայքի բնակիչներից հավաքվող հարկն անվանում է յուրաքանչյուր ընտանիքից գանձվող հարկ, այսինքն ծխահարկ, որը նույնպես հավասար էր մեկ դինարի[2]։ Ծխահարկի գոյությունն այն ժամանակ հասկանալի էր, քանի որ նվաճողների համար ավելի հեշտ էր ծխերը որոշել, քան շնչերի ճշգրիտ թիվն իմանալ։ Այլ էր վիճակը շրջանների և գավառների նկատմամբ, որովհետև եթե քաղաքների ու բնակավայրերի ծխերի կամ ընտանիքների թիվն այսպես թե այնպես մի կերպ հնարավոր էր իմանալ, ապա գավառներինն ու շրջաններինն ընդհանրապես հնարավոր չէր։ Դրա համար էլ մենք կարծում ենք, որ Հաբիբ իբն-Մասլաման, ինչպես նաև սկզբնական շրջանում Հայաստան ներխուժած մյուս նվաճողները, վարչա-տերիտորիալ միավորների նկատմամբ կիրառել են ոչ թե ծխահարկի սկզբունքը, այլ, այդ միավորների առաջնորդների հետ փոխադարձ համաձայնության գալով, նրանց վրա պարզապես նշանակել են մի որոշակի գումար, որն իր բնույթով ավելի շատ նման է ռազմատուգանքի, քան հարկի որևէ տեսակի։

Քանի որ Արաբական խալիֆայության տիրապետությունը Հայաստանում փաստական և իրավական ձևով հաստատվել է միայն VII դարի վերջերին, ուստի մինչ այդ արաբների կարճատև տիրապետության կամ Հայաստանում ձևք բերած լոկ քաղաքական ազդեցության պայմաններում հարկային քաղաքականությունը պետք է արտահայտվեր թույլ ու համեմատաբար թեթև ձևով։ Այս հանգամանքը բավականին շեշտված ձևով է ըդգծվում մեզ արդեն ծանոթ 652 թվականի հայ-արաբական պայմանագրում, երբ արաբները նույնիսկ Հայաստանից գանձվող հարկի քանակը թողնում էին որոշելու հայերին՝ այն էլ պայմանագրի կնքումից երեք տարի անցնելուց հետո, իսկ 15000 հոգուց բաղկացած հայկական հեծելազորի ծախսերն ամբողջությամբ հոգում էին արաբները, որը տարեկան կազմում էր 100000 դահեկան[3]։

Դժբախտաբար հիշյալ կամ նրան մոտ ժամանակներում ապրած Սեբեոսից բացի ուրիշ հեղինակներից ոչ մեկը հարկերի չափի

[1] *Баладзори*, Книга завоевания стран, стр. 8.

[2] *Տե՛ս* Տաբարի, «Հանդես ամսօրյա», 1905, № 5, էջ 159։

[3] *Տե՛ս* Ղևոնդ, էջ 113, 128, տե՛ս Վարդան Բարձրբերդցի, էջ 103։



ու քանակի մասին այլևս ոչ մի տեղեկություն չի հաղորդում, դրա համար էլ մենք հարկադրված ենք հենվելու ուշ շրջանի հեղինակներից Սամվել Անեցու հիշատակության վրա։ Սամվել Անեցին հաստատում է, որ VII դարի կեսերին արաբները Հայաստանում յուրաքանչյուր երդից (ծխից) վերցնում էին 4 դրամ, 3 մոթ զտված հացահատիկ (1 մոթը հավասար է մոտ 29 կգ), այսինքն մոտավորապես 90 կգ, 1 կրկնապարկ (խուրջին), 1 մազի պարան և 1 զույգ ձեռնոց[1]։ Եթե հաշվի առնենք, որ այն ժամանակ մեկ երդի կամ մեկ ծխի տակ միավորվում էին փաստորեն մի քանի ընտանիք, այսինքն ընտանիքները շատ ավելի բազմամարդ էին, ապա հասկանալի է, որ հարկերի վերոհիշյալ տեսակները և նրանց չափերը հարկատուների համար իրոք որ առանձին ծանրություն չեպետք է ներկայացնեին։ Այստեղ ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ արաբները, որպես անասնապահ ու վաչկատուն ժողովուրդ, իրենց հպատակներից սկզբնական շրջանում գերադասում էին վերցնել արշավանքների ու ասպատակությունների ժամանակ իրենց համար առաջին անհրաժեշտ ապրանքները և այն էլ՝ չափավոր քանակով։ Նույն հեղինակի վկայությամբ վերոհիշյալ պարտավորություններից ազատվում էին հոգևորականները, ազատները, այսինքն՝ ազնվականները և հայկական հեծելազորի անդամները[2]։

Դժվար է ասելը, որ ծխահարկի վերոհիշյալ չափերը բացարձակորեն ճիշտ են և կամ դրանք որպես հարկային կայուն նորմ ամեն տեղ միևնույն ձևով էին կիրառվում։ Պետք է նկատենք, որ այս շրջանում հարկահավաքության կայուն սիստեմ գոյություն ունենալ չէր կարող։ Տիրողների այսպիսի մեղմությունը, իհարկե, ունեներ իր հիմնավոր պատճառները։ Ամենից կարևորը գրաված երկրներում արաբների ունեցած դեռևս թույլ հիմքերն էին և հայ ժողովրդի զինական ուժից նրանց կրած երկյուղը։ Այնուհետև, Բյուզանդական կայսրության առկայությունը նույնպես հարկադրում էր արաբներին Հայաստանի նկատմամբ լինել չափավոր՝ հայերին Բյուզանդիայի ազդեցությունից հեռացնելու և խալիֆայության կողմը թեքելու համար։ Բացի այդ, Արաբական խալիֆայությունը տերիտորիայի տեսակետից այդ ժամանակ ընդգրկում էր համեմատաբար փոքր տարածություն, հետևաբար դեռևս պետական ու ռազմական խոշոր միջոցներ ու ծախսեր չէին պահանջվում, իսկ խալիֆներն ու

[1] *Տե՛ս* Սամվել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 82, տե՛ս նաև Կիրակոս Գանձակեցի, էջ 57—58։

[2] *Տե՛ս* Սամվել Անեցի, էջ 82, Կիրակոս Գանձակեցի, էջ 57—58։

պալատական բարձրաստիճան պաշտոնյաները շատ թե քիչ պահպանում էին իրենց առաջին առաջնորդների ժուժկալության որոշ գծերը և ամբողջությամբ չէին թաղվել ցուի ու շվայտ կյանքի մեջ, չէին սկսել պետական միջոցների ու եկամուտների անհաշիվ ու անխնա վատնումն ու շռայլումը: Բայց դա ամենևին էլ չի նշանակում, թե մինչև VII դարի վերջերը և VIII դարի սկզբները Հայաստանը արաբական ներխուժումներից չէր տուժում և կամ հայ ժողովուրդը չէր հարստահարվում: Եթե նայելու լինենք վերևում մեր բերած հարկերին ու նրանց չափերին, ապա դրանից իրոք որ խիստ եղրակացություններ անել չի կարելի: Բայց իրականում Արաբական խալիֆայությունն ու արաբ պաշտոնյաները միայն վերոհիշյալ եկամուտներով չէին բավարարվում: Նրանք օրինական ճանապարհով ձեռք բերածից բացի տասնապատիկ ավելին խլում էին ուժով ու բռնությամբ: Իսկ բռնությունն ու կամայականությունն արդարացվում էր իսլամի ու խալիֆայության օրենքներով:

Այսպիսով, եթե ի մի բերենք արաբական հարկային քաղաքականության առաջին շրջանի մասին վերևում մեր ասածները, կարող ենք եղրակացնել, որ 652—699 թվականների ամբողջ ընթացքում արաբները, Հայաստանում ամուր քաղաքական հիմքեր չունենալու պատճառով, չէին կարողանում նաև այստեղ կիրառել կայուն ու սիստեմատիկ հարկային քաղաքականություն: Դրա համար էլ արաբները հիմնականում կարողանում էին գանձել ծխահարկ կամ ուղղակի ռազմատուգանք: Այնուհետև, այս շրջանում ոչ միայն հարկերն ընդհանրապես թեթև էին ու դրանց մեջ առավելությունը տրվում էր մթերային ռենտային, այլև աղգաբնակչության մի որոշակի խավը՝ աղնվականությունը, հոգևորականությունն ու հնձելազորայիններն աղատված էին հարկերից ու ճանաչված որպես արտոնյալ ու ապահարկ: Այս շրջանում Հայաստանն ավելի տուժում էր արաբա-բյուղանդական պատերազմից ու թշնամական զորքերի ներխուժումներից, քան խալիֆայության հարկային քաղաքականությունից: Այդ տեսակետից միանգամայն ճիշտ է ակադ. Հ. Մանանդյանը, երբ արաբական տիրապետության սկզբնական շրջանի ճեղմության մասին խոսելիս շեշտում է, որ «...չնայած դրան՝ արաբական տիրապետությունը, անգամ այս սկզբնական շրջանում, Հայաստանի համար եղավ աղետալի ու կորստաբեր: Նա պարբերաբար կրկնվող պատերազմների ընթացքում շարունակ հարձակման ու ավերածությունների ենթարկվեց: Եթե նա հավատարիմ էր մնում խալիֆայությանը՝ նրան անխնա պատժում էին հույները: Իսկ



եթե անցնում էր Բյուղանդիայի կողմը՝ վրեժ էին առնում արաբները»[1]:

Արաբական խալիֆայության ռազմա-տնտեսական հզորացման հետ հարաճուն կերպով մեծացող պետական և այլ ծախսերը վաղ թե ուշ պետք է արմատական բեկում մտցնեին նաև հպատակ երկրների նկատմամբ արաբների ընդհանուր վերաբերմունքի, իսկ ավելի որոշակի՝ նրանց հարկային քաղաքականության մեջ: Այդ ուղղությամբ, որոշակի միջոցներ ձեռնարկվեցին միայն 698—699 թվականներից սկսած, երբ արաբները Հայաստանում ձեռք բերելին քաղաքական իշխանություն և երկիրն ամբողջապես ենթարկեցին իրենց: Թեև այդ ժամանակներից սկսած արաբները որոշ չափով կանոնավորեցին հարկային սիստեմը, ճշգրտեցին հարկերի տեսակներն ու նրանց չափերը, սակայն դրանց մեջ առաջվա նման նախապատվությունը դարձյալ տրվում էր մթերային ռենտային, իսկ հարկային լուծն ընդհանրապես անտանելի չէր: Այս հանգամանքը ինքնըստինքյան հասկանալի էր, որովհետև արաբական նորահաստատ իշխանությունները չէին կարող անմիջապես անցնել հարկային ծանր քաղաքականության իրագործմանը: Այդպիսի քաղաքականության համար արաբներին հարկավոր էր որոշ ժամանակ, որպեսզի նրանք իրենց տիրապետության հիմքերը Հայաստանում ամրացնեին: Հարկային քաղաքականության ծանրացման ուղղությամբ առաջին լուրջ քայլերն սկսեցին կատարվել միայն քառորդ դար հետո, Հիշամ խալիֆի գահակալության տարիներին (724—743):

Հիշամը, որ Յակուբիի բնութագրմամբ ագահ, նախանձոտ, կոշտ ու կոպիտ, անիրավ, անգութ, անողորմ ու երկայնալեզու մի անձնավորություն էր[2], արաբական տիրակալների մեջ առաջինը եղավ, որ իր գահակալության հենց սկզբում խալիֆայության եկամուտները բազմապատկելու և եկամտաբեր օբյեկտների տեսակներն ու հարկերի չափերը կանոնավորելու նպատակով Հայաստանում անցկացնել տվեց աշխարհագիրը: Աշխարհագիրը կատարելու համար 725 թվականին խալիֆի կողմից Հայաստան է ուղարկվում մի բարձրաստիճան պաշտոնյա, որին արաբական աղբյուրներում Հարիթ իբն-աթ-Թային, իսկ հայկական աղբյուրներում ուղղակի Հերթ են անվանում:

Արաբագետ Հ. Նալբանդյանը ցույց է տվել, որ Բալաձորին

---

1 Հ. Մանանդյան, *ժողովրդական ապստամբությունները Հայաստանում արաբական տիրապետության դեմ*, Երևան, 1939, էջ 7:

2 Տե՛ս Յակուբի, «Բազմավեպ», 1957, №№ 9—10, էջ 211:

Հարիթին հիշատակում է որպես Եղիդ խալիֆի կողմից Հայաստանում նշանակված ոստիկան[1]: Սակայն, քանի որ նրա նշանակման տարում Եղիդը վախճանվում է, դրա համար էլ Հերթը իր պարտականությունները գործնականորեն կարողանում է կատարել միայն հաջորդ խալիֆի, այսինքն՝ Հիշամի ժամանակ: Այդ է պատճառը, որ հայ պատմիչները, տեղյակ չլինելով գործի մանրամասնություններին, Հերթի նշանակումը միաբերան կապում են Հիշամի և ոչ թե նրա նախորդի անվան հետ:

Հերթի մասին հայկական աղբյուրների վերին աստիճանի հավաստի տեղեկություններից երևում է, որ այս անձնավորությունը ոչ միայն աշխարհագիր անցկացնող լոկ մի հասարակ պաշտոնյա էր, այլև օժտված է եղել ընդարձակ իրավունքներով ու արտոնություններով և ոստիկանի լիազորություններով Հայաստան է գործուղվել հատկապես աշխարհագիրն անցկացնելու ու դրա հետ կապված այլևայլ հարցերն արագ կարգով լուծելու համար:

725 թվականին Հերթն իրեն ենթակա պաշտոնյաների միջոցով Հայաստանում հաշվառման է ենթարկում հարկատու ազգաբնակչությանը, նրանց վարելահողերը, արոտները, անասունները և հարկման ենթակա մյուս օբյեկտները: Հայ պատմիչ Մովսես Կաղանկատվացին այդ մասին վկայում է. «Իսկ ի հարիւր եօթանասուն և չորս թուականութեանն Հայոց (725)... և ի ձմերան աշխարհագիրն Հերթի, որ էարկ զմարդ զանասուն և զահման երկրի ընդ հարկաւ անթիւ ծառայութեան»[2]: Պատմիչի վերջին խոսքերից պարզ կերպով երևում է, որ աշխարհագրի միջոցով Հայաստանի եկամտաբեր միավորների ու տեսակների ճշգրտումից հետո, նախ այդ բոլորը պարտադիր կարգով ենթարկվել է հարկման և հետո հարկերն ընդհանրապես ավելացվել են: Ուրեմն Հերթի աշխարհագրի նպատակը որոշակի էր, այն է՝ հարկերի տեսակների և չափերի ավելացում: Հայ անվանի պատմիչ Ղևոնդը Հերթի աշխարհագիրն ու նրա ծանր հետևանքները գնահատում է բավականին խորաթափանցությամբ: Նա հենց սկզբից նախ Հիշամի այդ ձեռնարկումն անվանում է «խորհուրդ վատ», իսկ հետո նշում, որ աշխարհագիրն անց էր կացվում «վասն ծանրացուցանելոյ զանուր լծոյ ծառայութեան հարկատրութեան ազգի ազգի չարեօք»: Պատմիչն այնուհետև հաստատում է, որ այդ ժամանակվանից սկսած՝ հարկերը ծանրացան ու նրանց պատճառած նեղությունները այնքան մեծացան բոլորի

[1] Տե՛ս Հ. Նալբանդյան, Արաբացի ոստիկանները Հայաստանում, Հայկական ՍՍՀ ԳԱ տեղեկագիր, № 8, 1956, էջ 109—110:

[2] Մովսես Կաղանկատվացի, էջ 258:



համար, որ «ոչ գոյր ապրիլ ումեք յանհնարին վտանգիցն»: Ղևոնդը վերոհիշյալ տողերի շարունակության մեջ իր միտքն ամփոփում է նրանով, որ աշխարհագրից հետո «առաւել ծանրացաւ ձեռն նորա ի վերայ աշխարհիս Հայոց»[1]:

Հարիթը կամ Հերթը Հայաստանում երկար չի մնում: Նա, ըստ Ղևոնդի, նույն 725 թվականին էլ ավարտում է աշխարհագիրը և գնում, որովհետև Բալաձորիի և Իբն ալ-Ասիրի վկայությամբ, 725 թվականին Հիշամի կարգադրությամբ նրան, որպես ոստիկանի՝ փոխարինելու է գալիս Մասլամա իբն-Աբդ ալ-Մելիքը, որն այդ նույն պաշտոնում այստեղ նշանակվում էր երկրորդ անգամ: Մասլաման Հայաստանում իշխում է մինչև 729 թվականը[2]:

Մասլամայի ստվար շքախմբի անդամներից Սայիդ իբն-Ամր իբն-Ասվադ ալ-Ջուրաշին առաջնորդում էր զորքերի առաջապահ ստորաբաժանումներին[3]:

Այսպիսով, ամփոփելով Հերթի աշխարհագրի մասին մեր ասածները, պետք է անպայման նշենք, որ այն իր հետևանքներով հայ ժողովրդի կյանքում ունեցավ խիստ բացասական նշանակություն, որովհետև նախ՝ փաստորեն այդ աշխարհագրից հետո միայն արաբները հնարավորություն ունեցան անցնելու կայուն ու սիստեմատիկ հարկային քաղաքականության, որովհետև եթե նախքան աշխարհագիրը հարկատու շատ օբյեկտներ ու միավորներ բնականաբար կարող էին հարկադրումից դուրս մնալ, ապա աշխարհագրից հետո այդպես լինել չէր կարող: Այնուհետև՝ 725 թվականից շատ չանցած, արաբները հարկերն սկսեցին գանձել նաև դրամով:

Արաբական խալիֆայության շրջանակներում նույնպես, ֆեոդալիզմի զարգացման հետ զուգընթաց, աստիճանաբար առավելությունն սկսում է տրվել դրամական ռենտային, որն ավելի էր ծանրացնում աշխատավորության տնտեսական դրությունը:

[1] Ղևոնդ, էջ 100, 101:

[2] Տե՛ս Баладзори, Книга завоевания стран, էջ 16, Հ. Նալբանդյան, Արաբացի ոստիկանները Հայաստանում, էջ 109—110:

[3] Ըստ Յակուբիի, Սայիդ իբն-Ամր ալ-Հարաշի, որին շուտով Մասլաման հեռացնում է ու նրա փոխարեն նշանակում Աբդուլ-Մալիք իբն-Մուսլիմ ալ-Ուկայլին, որն իր պետի հրամանով բանտարկել է տալիս Հարաշիին (նույն ինքը՝ Ջուրաշի) Պարտավում: Մասլաման, հասնելով այստեղ, բանտարկյալին անասելի տանջանքների է ենթարկում: Վերջապես այդ մարդու ճակատագիրը լուծում է անձամբ խալիֆը և ազատել է տալիս նրան: Տե՛ս Յակուբի, «Հանդես ամսօրյա», 1906, № 12, էջ 359, Якуби, История, текст и перевод проф. П. К. Жузе, Баку, 1927, էջ 6—7:

Հերթի աշխարհագրից հետո, Արաբական խալիֆայության հարկային քաղաքականության երրորդ շրջանում, Հայաստանում կատարվում են երկու հիմնական և ըստ էության խիստ կարևոր փոփոխություններ։ Դրանցից առաջինն այն էր, որ այդ ժամանակվանից սկսած ծխահարկի փոխարեն մտցվում է գլխահարկը, այսինքն նրան նախկինում հարկադրման միավոր ճանաչվում էր ծուխը, ընտանիքը, անկախ նրանում եղած շնչերի քանակից, ապա այժմ հարկերը գանձվում էին ըստ ընտանիքի աշխատող շնչերի, որն էլ ավելի էր ծանրացնում հարկատուների վիճակը։

Գլխահարկը արաբներն անվանում էին ջիզե կամ ջեզա, որ բառացի նշանակում է վարձատրություն, հատուցում։ Հարկի այս տեսակի լավագույն բնորոշումը մենք գտնում ենք Ալ-Մավերդիի մոտ, որն այդ առթիվ գրում է. «Ինչ վերաբերում է գլխահարկին (ջիզե), ապա այն իջեցվում է ըստ շնչերի և անունն էլ ծագում է «ջեզա» (վարձատրություն, հատուցում) բառից, կամ զիմմիններին՝ անհավատության համար վճարման իմաստով, այնպես որ մենք այն նրանցից հավաքում ենք ի նշան նվաստացման և կամ որպես վարձատրություն նրանց կյանքը բաշխելու համար...»[1]։

Հերթի աշխարհագրից հետո արաբներն սկսեցին հարկադրման ենթարկել նաև հայ ազնվականությանը, որը ապահարկ էր ճանաչված դեռևս 652 թվականի հայ-արաբական պայմանագրով։ Հայ ազնվականության հիշյալ արտոնությունը փաստորեն պահպանվում էր մինչև 725 թվականը։ Բացի այդ, գլխահարկն սկսեցին գանձել հարկատուի սոցիալական պատկանելության և տնտեսական կարողության համապատասխան։ Ուրեմն, միանգամայն ճիշտ է, որ այս դեպքում հարկադրումից պետք է տուժեին հասարակական բոլոր խավերի ներկայացուցիչները՝ և՛ հարուստները, և՛ աղքատները։ Եվ այս հանգամանքը շատ պարզ կերպով երևում է Ստեփանոս Ասողիկի մի վկայությունից, որտեղ պատմիչը շեշտում է, որ գլխահարկի ծանրության պատճառով չքավորության ու աղքատության մեջ ընկան նույնիսկ նախարարները, մեծամեծները։ «Այլ յիշխանութեանն Աբղւայի միւսոյ,— ասում է պատմիչը,— և ի հրամանատարութեան Իզիտի յոյժ ծանրացաւ անուր լծոյ հարկապահանջութեան երկրիս Հայոց.զի ոչ ըստ երդ պահանջումն, այլ ըստ գլուխ արանցն, մինչև նախարարքն և մեծամեծքն ի չքաւորութիւն անկան»[2]։ Այստեղից միանգամայն հասկանալի է, որ եթե հարկահավաքության այս եղանակը հավասարապես կիրառվելու

[1] *Ալ-Մավերդիի*, Православный палестинский сборник, т. 17, стр. 53.

[2] *Ստ. Ասողիկ*, *էջ 133*։



լիներ հասարակական բոլոր խավերի նկատմամբ առանց նրանց եկամուտների ու դասակարգային պատկանելությունը հաշվի առնելու, այն դեպքում տնտեսապես ավելի ապահովվածները կամ, պատմիչի խոսքերով, նախարարներն ու մեծամեծները չէին աղքատանա։

Քանի որ Հերթի աշխարհագրի ժամանակ, ինչպես այդ տեսանք վերևում, Հայաստանում աղգաբնակչությունից բացի խիստ հաշվառման էին ենթարկվում նաև հողային տարածություններն ու անասունները, ուստի հասկանալի է, թե ինչու գլխահարկի հետ մեկտեղ, Հայաստանում այս շրջանում արաբները գործադրել սկսեցին նաև հարկերի երկու նոր տեսակներ ևս՝ հողահարկը կամ խարաջը և անասնահարկը[1]։

Խարաջը գանձվում էր հողերի տեսակների (վարելահող, արոտատեղի, այգի և այլն) և եկամտաբերության համապատասխան, հետևաբար այն ևս հաստատուն և կայուն չափեր ունենալ չէր կարող։

Գիտական գրականության մեջ ցույց է տրված, որ սկզբնական շրջանում ջիզեն և խարաջն ունեցել են համարյա միևնույն նշանակությունը։ Հետագայում առաջինը գլխահարկի իմաստով գանձվում էր միայն քրիստոնյա հպատակներից, իսկ երկրորդը, այսինքն խարաջը, որը թեև սկզբում սահմանված էր քրիստոնյաների համար, աստիճանաբար սկսեց տարածվել նաև մուսուլման հպատակների վրա[2]։ Այս մասին որոշակի բացատրություն տալիս է դարձյալ Ալ-Մավերդին, որի մոտ կարդում ենք հետևյալը. «...գլխահարկը գանձվում է քանի դեռ հարկատուն մնում է անհավատ և հանվում է իսլամի ընդունելուց հետո։ Իսկ խարաջը գանձվում է և՛ անհավատից, և՛ մուսուլմանից»[3]։

Միջնադարյան արաբական պատմական գրականության մեջ բարեբախտաբար պահպանվել են հարուստ ու արժեքավոր տեղեկություններ խալիֆայության ներսում գործող հարկային սիստեմի, հարկերի տեսակների ու չափերի, դրանց գանձման եղանակի և ուրիշ շատ ու շատ մանրամասնությունների վերաբերյալ։ Այդ նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արաբները ոչ միայն առանձնահատուկ ուշադրություն են դարձրել հարկերի հավաքմանը, այլև, ժամանակի ընթացքում հանդամանորեն մշակելով այդ բնագավառում գործող օրենքներն ու կանոնները, սահմանել են

[1] *Տե՛ս Я. А. Манандян*, О торговле и городах Армении, Ереван, 1954, էջ 192։

[2] *Տե՛ս P. Schwarz*, Der Islam, vol. VI, էջ 97, *ծանոթ.*։

[3] *Ալ-Մավերդիի*, стр. 1330.

իրավական որոշակի նորմեր, որոնք տեղայնացվելով՝ պարտադիր կարգով գործադրվել են բոլոր տեղերում որպես օրենք:

Արաբական խալիֆայության հարկային սիստեմի կարգավորման ուղղությամբ առաջին լուրջ փորձերը կատարվել են դեռևս 630—640-ական թվականներին՝ Օմար խալիֆի նախաձեռնությամբ: Հետագայի տիրակալները և օրենսգետները, հիմք ընդունելով Օմարի հաստատած օրենքներն ու կանոնները, մշակել և է՛լ ավելի են կատարելագործել հարկահավաքության բնագավառում կիրառվող իրավական նորմերը: Արաբական խալիֆայության հարկային օրենքների և կանոնների ուսումնասիրության տեսակետից, ինչպես ասվել է, բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում VIII—IX դարերի նշանավոր իրավագետ Աբու-Յուսուֆի հայտնի «Քիթաբ ալ-խարաջ» (Հարկերի մատյան) գիրքը:

Ըստ Աբու-Յուսուֆի սահմանած օրենքի, գլխահարկը պարտավոր էին վճարել արաբներին ենթակա քրիստոնյա, հրեա, կրակապաշտ, սաբեական և այլ դավանանքների 15—60 տարեկան արական սեռի աշխատունակ բոլոր հպատակները: Կանայք և երեխաները, որպես ֆիզիկական աշխատանքի համար թույլ էակներ, ազատվում էին հարկադրումից: Որ իսկապես գլխահարկը վերաբերում էր միայն արական սեռին, այդ երևում է նաև Ստեփանոս Ասողիկի այն վկայությունից, որտեղ ասվում է, թե արաբները 725 թվականից հետո հարկերը սկսեցին գանձել «ոչ ըստ երդ պահանջումն», «այլ ըստ գլուխ առանցն»[1] (ընդգծումը մերն է—Ս. Մ.-Բ.), այսինքն՝ ըստ արական սեռի ներկայացուցիչների: Այնուհետև՝ «Գլխահարկը չէր գանձվում աղքատ մարդուց, որին ողորմություն են տալիս, կույր մարդուց, որն ուժ չունի իր համար ոչ սնունդ ճարելու, և ոչ էլ աշխատանք, զիմմիից, որին ողորմություն են անում, և խեղանդամից»[2]: Նույն կարգով ապահարկ էին ճանաչվում նաև վանքերում բնակվող այն վանականները, որոնք խեղճ ու աղքատ էին: Սակայն այս օրենքը բացարձակ իմաստով չէր տարածվում բոլոր աղքատների, կույրերի կամ խեղանդամների վրա: Այստեղ ասվում էր. «Իսկ եթե խեղանդամը կամ աղքատը հնարավորություններ ունի, ապա նրանցից (հարկը) գանձվում է: Նույնանման կանոն գործադրվում է նաև կույրերի և վանքերում ապրող կրոնավորների նկատմամբ. եթե նրանք հնարավորություններ ունեն, նրանցից (հարկը) գանձվում է»[3]:

[1] Ստ. Ասողիկ, էջ 133:

[2] Абу-Юсуф, Китаб ал-харадж, Православный палестинский сборник, т. 17, вып. 2(4), СПб, 1897, стр. 1308—1309.

[3] Նույն տեղում:



Ուշ շրջանի հեղինակներից Ալ-Մավերդին, որը շատ բան է վերցրել Աբու-Յուսուֆից, գլխահարկին վերաբերող օրենքի հիշյալ հատվածն ավելի պարզեցնելով, ձևակերպում է այսպես. «Գլխահարկը գանձվում է միայն բանականություն ունեցող ազատ տղամարդկանցից, բայց ոչ կանանցից, ոչ երեխաներից, ոչ հոգեկան հիվանդներից և ոչ էլ ստրուկից, որովհետև այդ մարդիկ (իրենք) կախյալ են և նման նորածնի»[1]: Գլխահարկը գանձվում էր մեկ նվագով, երբ բոլորում էր հիջրայի լուսնական մեկ լրիվ տարին, այսինքն՝ տարեկան մեկ անգամ և այն էլ անպայման տարեվերջին: Եթե հարկատուն մահանում էր տարին չլրացած, ապա նրա ժառանգությունից և ժառանգներից հարկը վերցվում էր միայն տարվա այն մասի համար, որի ընթացքում հարկատուն ապրում էր[2]:

Ոչ մահմեդական հպատակների համար սահմանված գլխահարկը գանձվում էր անպայման կարգով, առանց որևէ զիջումի կամ բառացության, որովհետև, ինչպես բացատրում է Աբու-Յուսուֆը, «...նրանց կյանքն ու գույքը պահպանվում է միայն գլխահարկը վճարելու պայմանով...»[3]: Այստեղից անխուսափելիորեն բխում է այն հանգամանքը, որ արաբները դրանով աշխատում էին իրենց կողմից ոչ մահմեդական հպատակներից գլխահարկի գանձմանը տալ նաև իրավաբանական հիմնավորում, որ իբր այդ հարկը նրանք վերցնում են լոկ որպես փոխհատուցում, քանի որ իրենք պաշտպանում և ապահովում են քրիստոնյա հպատակների կյանքն ու գույքը: Աբու-Յուսուֆի հիշյալ կանոնում ասվում է. «Կառավարիչն չի թույլատրվում ոչ մի քրիստոնյայի, հրեայի, կրակապաշտի, սաբեացու և սամարացու թողնել առանց գլխահարկը գանձելու և թող նա չզիջի նրանցից ոչ մեկին, բաշխելով նրանց հասանելիքի մի մասը: Եվ չի թույլատրվում մեկին թողնել (ազատել), իսկ մյուսից գանձել. այդ չի կարելի անել, որովհետև նրանց կյանքն ու գույքը պահպանվում է միայն գլխահարկը վճարելու պայմանով»[4]:

Սկզբնական շրջանում, երբ հարկերի հիմնական տեսակները՝ գլխահարկն ու հողահարկը (խարաջը) ընկնում էին խալիֆայության ոչ մահմեդական հպատակների վրա, այդ հանգամանքը արաբները մի կողմից դիտում էին որպես իրենց հպատակներին ստորացնելու և նրանց արժանապատվությունը նվաստացնելու, իսկ մյուս կողմից իրենց՝ որպես տիրողների ուժն ու իրավունքն ընդգծելու միջոց: Այդ

[1] Ал-Мавердий, стр. 1334.

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 1338:

[3] Абу-Юсуф, Православный палестинский сборник, стр. 1311.

[4] Տե՛ս նույն տեղը:

է պատճառը, որ արաբները տիրողի իրավունքով տիրվողներից բռնությամբ գանձվող վերոհիշյալ հարկերը համարում էին նաև պատերազմական ավար: Ահա թե այդ միտքն ինչպես է ձևակերպված Ալ-Մավերդիի մոտ. «Գլխահարկի և հողահարկի միջև կա երեք նմանություն և երեք տարբերություն...

Ինչ վերաբերում է նմանություններին, ապա առաջին երկու հարկերն էլ գանձվում են հեթանոսներից ի նշան նրանց ստորացման և արհամարհանքի, երկրորդ. երկու հարկերից էլ գոյացած գումարները դիտվում են որպես պատերազմական ավար և ծախսվում նրանց վրա, ովքեր դրա նկատմամբ իրավունք ունեն, երրորդ. դրանք ենթակա են գանձման տարին վերջանալուց հետո և իրավունք չկա ավելի շուտ հավաքելու»[1]:

Հայ պատմիչները գլխահարկի չափի մասին տեղեկություններ չեն տալիս, սակայն այս բացը լրացնում են արաբական սկզբնաղբյուրները: Արաբ հեղինակների հավաստի տեղեկությունների համաձայն, խալիֆայության մեջ գլխահարկի ենթակա հպատակները բաժանվում էին երեք կարգի՝ հարուստներ, միջակ կարողության տեր անձինք և սեփական աշխատանքով ապրող կարիքավոր գյուղացիներ: Սրանք համապատասխանաբար տարեկան պարտավոր էին վճարել 48, 24, 12 դիրհեմ: «Գլխահարկին ենթակա են միայն տղամարդիկ, բայց ոչ կանայք և ոչ էլ երեխաները,—ասում է Աբու-Յուսուֆը,—և հետևյալ չափերով՝ հարուստներից 48 դիրհեմ, միջակ կարողության տեր անձանցից՝ 24, իսկ սեփական աշխատանքով ապրող կարիքավոր հողագործից 12 դիրհեմ: Այսքանը գանձվում է նրանցից յուրաքանչյուր տարի»[2]:

Մենք արդեն բազմիցս նշել ենք, որ Արաբական խալիֆայության մեջ հարկերի չափերն ու տեսակները կայուն ու անփոփոխ չեն եղել, ուստի Աբու-Յուսուֆի և մյուսների կողմից սահմանված վերոհիշյալ չափերն էլ չէին կարող անփոփոխ իմաստով հասկացվել, մանավանդ որ մեզ ծանոթ հեղինակներից Ալ-Մավերդին բացեիբաց ասում է, որ գլխահարկի բարձր չափերը թողնում են տեղերում որոշելու[3]: Մեր կարծիքով հարկերի վերոհիշյալ չափերը պետք է տերության տարբեր մասերում միայն կողմնորոշող դեր կատարեին՝ հարկահավաքներին իրավունք տալով դրանք փոփոխելու, ելնելով տվյալ երկրի ու բնակչության բնորոշ առանձնահատկություններից (կլիմա, եկամուտների ընդհանուր վիճակը, հողի արդավանդությունը, զբաղմունքի ճյուղերը, տվյալ ժողովրդի ազգային հատկանիշները և այլն): Այդ է պատճառը, որ տարբեր տեղերում և ժամանակներում հեղինակների մոտ մատնանշվում են գլխահարկի զանազան չափեր: Այսպես, IX դարի պատմիչ Յակուբին, խոսելով Իյադ իբն-Ղանըմ-Ֆիհրիի 639 թվականին դեպի Միջագետք կատարած արշավանքի մասին, նշում է, որ նա գրավված քաղաքների բնակիչների վրա հողահարկից բացի նշանակում էր նաև գլխահարկ 4,5—6 դինարի սահմաններում: Յակուբիի մոտ այդ մասին կարդում ենք. «18 թվականին (639) Աբու-Օբայդայի. Ջառահ ուղարկեց Իյադ իբն-Ղանըմ-Ֆիհրիին Միջագետք, որ անդադար պաշարմամբ նվաճեց Ռաքքա, Սրուճ, Ուռհա, Մծբին և Երկրի այլ քաղաքները առանց պատերազմի, դնելով նոցա վրա հողահարկ, իսկ յուրաքանչյուր սորուկի վրա 4,5 և 6 դինար»[1]: Իսկ Ալ-Մավերդին գլխահարկի չափը սահմանում է մեկ դինարից ոչ պակաս, այսինքն 2 ռ. 64 կ.[2]:

Աբու-Յուսուֆի մի հիշատակությունից երևում է, որ արաբները մանավանդ գլխահարկը մտցնելու սկզբնական շրջանում շատ էլ հետևողական չեն եղել այն անպայման դրամով գանձելու խնդրում և սկզբունքորեն համաձայնվել են, որպեսզի գլխահարկի դրամական վճարման դիմաց հարկատուները փոխհատուցումը կատարեն ապրանքներով՝ հեծնելու կենդանիներով, կարասիով և այլն: Աբու-Յուսուֆն այդ մասին գրում է. «Եթե նրանք (հարկատուները—Ս. Մ.-Բ.) դրամի տեղը ուրիշ բան են բերում, ապա այդ նրանցից ընդունվում է, ինչպես ասենք՝ հեծնելու կենդանիներ, տնային իրեղեններ և ուրիշ ապրանքներ, այդ նրանցից ընդունվում է գնի համեմատ...»[3]: Հասկանալի է, որ հետագայում դրամական շրջանառության մեծացման և դրամի, որպես փոխանակության միավորի, դերի աստիճանական բարձրացման հետ միասին նախապատվությունը պետք է անպայման տրվեր դրամին և ոչ թե ապրանքին, որի հետևանքով աստիճանաբար պետք է բացառվեր դրամական հարկը ապրանքով հատուցելու հնարավորությունը: Հետաքրքիր է, որ գլխահարկի ենթակա ոչ մուսուլման հպատակները գլխահարկի հետ մեկտեղ պարտավոր էին առանձնելու նաև օժանդակ այլ պարտականություններ, որոնց մի մասը, ինչպես հավաստում է աղբյուրը, կրում էր պարտադիր, իսկ մի մասը՝ իբր ցանկալի կամ ոչ պարտա-

[1] *Ալ-Մավերդիի*, стр. 1329—1330.
[2] *Աբու-Յուսուֆ*, пер. А. Э. Шмидта, стр. 97, 206, *Ալ-Մավերդիի*, стр. 1308.
[3] *Տե՛ս նույն տեղը, էջ 1335:*



[1] *Յակուբի, «Հանդես ամսօրյա», 1906, № 12, էջ 359:*
[2] *Տե՛ս Ալ-Մավերդիի, էջ* 1335—1336:
[3] *Աբու-Յուսուֆ*, Православный палестинский сборник, стр. 1308, *Աբու-Յուսուֆ*, пер. А. Э. Шмидта, стр. 206.

դիր բնույթ։ Ահա թե ինչպես է մեկնաբանվում այդ հարցը Ալ-Մավերդիի մոտ. «Գլխահարկի իջեցման մասին պայմանագրի հետ կապված են երկու կարգի պարտավորություններ, որոնց մի մասի կատարումը մենք իրավասու ենք պահանջելու, իսկ մյուսների կատարումը ցանկալի է։ Ինչ վերաբերում է այն պարտավորություններին, որոնց կատարումը պահանջվում է, ապա դրանք վեցն են. (դիմմիները պարտավոր են) նախ և առաջ չպարսավել ամենաբարձրյալ աստծո գիրքը (ղուրանը) և չանվանարկել այն, երկրորդ, չանվանել աստծո առաքյալին խաբեբա և չհավատալ նրան։ Երրորդ՝ չպախարակել և չարատավորել մուսուլմանական հավատը։ Չորրորդ՝ չշնանալ ու չամուսնանալ մուսուլմանի հետ։ Հինգերորդ՝ չգայթակղել մուսուլմանին իր հավատից հրաժարվելու և չվնասել նրա հավատին, ունեցվածքին և կյանքին։ Վեցերորդ՝ չօգնել (մուսուլմանների հետ) կռվողներին և չթաքցնել նրանց լրտեսներին...

Ինչ վերաբերում է այն պայմաններին, որոնց կատարումը ցանկալի է, ապա դրանք վեցն են. առաջին, որպեսզի դիմմիներն արտաքինով տարբերվեն հատուկ տարբերիչ նշաններով և գոտիներով։ Երկրորդ, որպեսզի նրանց շենքերը մուսուլմանականներից բարձր չլինեն և եթե դրանք ցածր չեն, ապա (հակառակ դեպքում) չեթե է ունենան հավասար բարձրություն։ Երրորդ, որպեսզի մուսուլմաններին չհասնեն ոչ նրանց կոչնակները, ոչ նրանց գրքերի ընթերցանությունը, ոչ նրանց ճառերը փրկչի մասին։ Չորրորդ, որպեսզի նրանք դիմին չխմեն (մուսուլմանների) աչքերի առաջ և չըցուցադրեն իրենց խաչը և բացահայտ կերպով խոզեր չպահեն։ Հինգերորդ, որպեսզի նրանք իրենց ննջեցյալներին հուղարկավորեն աննկատ ձևով, առանց բացահայտ լաց ու կոծի։ Վեցերորդ, որպեսզի նրանց արգելվի ցեղական ձիեր և ուղտեր հեծնելը, բայց չարգելվի ջորի և ավանակ նստելը»[1]։

Հիշյալ պարտավորությունների այն մասը, որը պատմիչը համարում է ցանկալի կամ ոչ պարտադիր, կարող էր գործադրվել միայն խալիֆայության տիրապետության սկզբնական շրջանում, երբ Արաբական խալիֆայության մեջ դեռևս ուժեղ ձևով չէր արտահայտվում կրոնական խտրականությունն ու ոչ իսլամների նկատմամբ անհանդուրժողության հանգամանքը։ Հետագայում, երբ արաբները ևս անցնում են կրոնական հալածանքների և մահմեդականացման քաղաքականության, վերոհիշյալ ոչ պարտադիր պարտավորությունները հենց ընդունում են պարտադիր պարտավորու-

[1] *Ал-Маверди*, стр. 1336—1337.



թյունների բնույթ և այդ երկուսի միջև երբեմն գոյություն ունեցող տարբերությունն աստիճանաբար անհետանում է։

Արաբական խալիֆայության հարկային քաղաքականության վերաբերյալ մեր կողմից բերված արաբ հեղինակների հիշատակությունների մեջ ուշագրավ էր նաև այն հանգամանքը, որ արաբները հարկադրման ենթարկելով իրենց հպատակներին, միաժամանակ նրանց հարկատու վիճակը վավերացնում էին գրավոր հատուկ պայմանագրերով, դրանով իսկ նրանց մեկ անգամ ևս պարտավորյալ դրության մեջ դնելով իրենցից։

VIII դարի առաջին կեսերից Հայաստանում ծխահարկի փոխարինումը գլխահարկով, ինչպես նաև հարկերի բնավճարման ձևից աստիճանաբար դրամավճարումների ձևին անցնելու հակումը ոչ թե երկրի տնտեսական զարգացման կանոնավոր ընթացքի արդյունքն էր, այլ առնչվում էր արաբական իշխանությունների վարած բռնության ու հարկադրանքի քաղաքականության հետ։ Դրա համար էլ այդ քաղաքականությունը Հայաստանում շուտով անխուսափելիորեն հանգեցնելու էր երկրի տնտեսության քայքայմանն ու անկմանը։ Կ. Մարքսը անդրադառնալով վերոհիշյալ խնդրին, այն վերլուծում է հետևյալ կերպ. «Ապրանքային արտադրության զարգացման որոշ մակարդակի և բավականաչափ լայն ծավալի պայմաններում փողի՝ որպես վճարման միջոցի ֆունկցիան դուրս է գալիս ապրանքային շրջանառության ոլորտի սահմաններից։ Փողը դառնում է պայմանագրային պարտավորությունների ընդհանրական ապրանք։ Ռենտաները, հարկերը և այլն նատուրալ մատակարարումից դառնում են փողային վճարումներ։ Թե այսպիսի փոխակերպության հնարավորությունը որքան է կախված արտադրության պրոցեսի ընդհանրությունից, ցույց է տալիս, օրինակ, Հռոմեական կայսրության բոլոր հարկերը փողով գանձելու երկու անգամ ձախողված փորձը։ Ֆրանսիական գյուղացիության սարսափելի աղքատությունը Լյուդովիկոս XIV-ի ժամանակ առաջացել էր ոչ միայն հարկերի բարձրությունից, այլև նատուրալ հարկերը փողային հարկեր դարձնելուց»[1]։ Կ. Մարքսի մոտ ուշագրավ է հատկապես այն նկատառումը, որ նա գյուղացիության թշվառության պատճառը համարում է ոչ միայն հարկերի բարձր լինելը, այլև բնահարկերը դրամահարկ դարձնելու հանգամանքը։ Սկզբնաղբյուրների մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդպիսին էր վիճակը նաև Հայաստանում Արաբական խալիֆայության տիրապե-

[1] Կ. Մարքս, Կապիտալ, հ. I, Երևան, 1954, էջ 150—151։

տության ժամանակաշրջանում. VIII դարի 20-ական թվականներից սկսած:

Տնտեսագիտական գիտությունների թեկնածու Ն. Թովմասյանը, հաջող կերպով վերլուծելով միջնադարյան հայ նշանավոր մտածող Գրիգոր Տաթևացու տնտեսագիտական հայացքները, ճիշտ է համարում նրա այն միտքը, թե արծաթն ու ոսկին, կամ փողն ընդհանրապես, սովորական ապրանքներից տարբերվում են նրանով, որ նրանք, որպես հարստության ընդհանուր ձև, ունեն հասարակական մեծ ուժ: Փողով կարգավորվում են ամենադժվարին հարցերը, փողով ձեռք է բերվում անհրաժեշտ ամեն ինչ: Դրա համար էլ նա հարստության ամենահարմար ձևն ու տեսակն է: Փողի հենց այդ հատկանիշի համար էլ, եթե միջնադարում ապրանքի կամ մբ-ռերքի կուտակումն այնուամենայնիվ որոշ սահման ուներ (վերջիններիս շուտ փչանալու, պահպանելու, ռեալիզացիայի ենթարկելու և այլ ոչ ձեռնտու հատկանիշների պատճառով), ապա փողի կուտակումը սահման չուներ, որովհետև նա իր բովանդակությունը չէր կորցնում և մյուս ապրանքներից տարբերվում էր նրանով, որ նրանից հագեցում չկար[1]: Եվ ահա հարկերը դրամով գանձելու երևույթը ծանրացնում էր հարկատուի վիճակը նաև նրա համար, որ այս դեպքում, ապրանքի նկատմամբ փողի կամ դրամի ունեցած առավելությունները գիտակցելով, արաբական հարկահավաքներն ու մյուս պաշտոնյաները իրենց գործունեության ընթացքում պետք է ավելի մեծ անարդարություններ, չարաշահումներ և անիրավություններ կատարեին:

Բնավճարումները դրամավճարումներով փոխարինելու քաղաքականությունն ամենից առաջ նյութական տեսակետից խիստ կորստաբեր հետևանքներ էր ունենում Հայաստանի տնտեսության ճնշող մեծամասնության համար որովհետև, առաջին, հարկատուն պահանջվող հարկերը դրամով վճարելու համար պետք է նախ դրամ ունենար, որը նա կարող էր ձեռք բերել միայն իր ապրանքը վաճառելու միջոցով: Եվ քանի որ երկրի բնակչության ավելի քան մեծամասնությունը գտնվում էր հարկադրյալ վիճակում, ուստի ապրանքի առաջարկը շուկայում պետք է ավելի մեծանար, քան նրա բնական պահանջարկն էր, ուրիշ խոսքով՝ վաճառողները պետք է ավելի շատ լինեին գնողներից: Երկրորդ, հարկատուն, եթե նույնիսկ մի բան ունենար վաճառելու, ապա այդ նրան հեշտ չէր հաջողվի, որովհետև նա ապրանքը ամեն տեղ վաճառել չէր կարող, ուրեմն

[1] Տե՛ս Ն. Թովմասյան, Գրիգոր Տաթևացու տնտեսագիտական հայացքները, Հայաստանի ժողովրդական տնտեսություն, ամսագիր, Երևան, 1963, № 9, էջ 77:



վաճառքն անպայման պետք է կատարվեր շուկաներում և մարզային բնակավայրերում, իսկ այդ վայրերը գնալու համար հարկատուն ոչ միայն պետք է ժամանակ կորցներ, կտրվեր իր աշխատանքից և տնտեսության կարիքները հոգալու հնարավորություններից, այլև իրեն ու իր ունեցածը ճանապարհին պետք է ենթարկեր հազար ու մի տեսակ վտանգների ու փորձությունների, քանի որ արաբների օրոք Հայաստանում անվտանգ երթևեկելու և անձի ու գույքի ապահովության երաշխիքներ ընդհանրապես գոյություն չունեին: Սակայն հարկատուն ստիպված էր ենթարկվելու իր ճակատագրին, որովհետև այլապես «Զար կատանօք, գնալոանօք և կախաղանօք և զատն տանջանօք կեղչին զկեանս մարդկան: Յորմէ փախըստեայ եղեալ բազում յայրս և ի փայտարս երկրի զօղեալ թագչէին. և ոմանք ձիւնահեղձ և գետավէժ լինէին վասն անտանելի ազետից»[1]: Եվ վերջապես, հարկերը դրամով վճարելու ժամանակ մի հանգամանք ևս անչափ դժվարացնում էր հարկատուի դրությունը, այդ դրամի ուղղակի պակասությունն էր հրապարակի վրա: Սկզբնաղբյուրների տեղեկություններից երևում է, որ այդ ժամանակ Հայաստանում եղած արծաթ դրամը համարյա ամբողջությամբ կամ կողոպտվել ու դուրս էր տարվել արաբների կողմից և կամ կենտրոնացել էր տեղի արաբ իշխանավորների, վինվորականների ու վաստակաբարո տարրերի, ապա նաև հայ շահագործող դասակարգի ներկայացուցիչների՝ հոգևոր ու աշխարհիկ ֆեոդալների, վաշխառուների և այլոց ձեռքին: Արծաթ դրամի ապարեզից անհետանալու մասին ժամանակակից պատմիչ Ղևոնդն ուղղակի ասում է. «Վախճանեաց զդիւտ արծաթոյ ի յերկրէս, և ամենայն որ տալով զպաճարանս իւրեանց ոչ գտանէին զդինս փրկանաց»[2]: Այսինքն, հարկերի դիմաց մարդիկ տալիս էին նաև իրենց անասուններ և դարձյալ չէին կարողանում ազատվել հարկահավաքի ճիրաններից: Սամվել Անեցին, խոսելով խալիֆ Ալ-Մանսուրի մասին (754—775), նշում է, որ նա այնքան էր ճնշում իր հպատակներին, որ մարդիկ այլևս տալու համար ոչինչ չունենալով՝ հարկահավաքներին գոհացնելու համար իրենց ննջեցյալների գերեզմաններն էին փորում որևէ արժեքավոր բան գտնելու հույսով: Եվ այդ սովորությունն սկսեց տարածվել նաև հարևան ժողովուրդների մոտ: Սամվել Անեցու մոտ կարդում ենք. «Այս Ջաֆարա՝ այնքան ճշդիւ ժողովեաց քրիստոնէից զոսկի և զարծաթ, մինչև զգերեզմանս մեռելոցն բանային՝ և զոս-

[1] Ղևոնդ, էջ 135:

[2] Նույն տեղում:

կին առևալ տային ի նա, ուսան և յոյնք բանալ զգերեզմանս»[1]: Այս միտքը գրեթե նույն ձևով հաստատում է նաև Միխայել Ասորին, երբ խոսում է հենց այդ ժամանակներում արաբների հարկային դաժան քաղաքականության մասին Միջագետքում և Ասորիքում: Ավելորդ չենք համարում մեջ բերելու նաև ասորի հեղինակի համապատասխան հատվածը նույնությամբ. «Եւ եղեալ Ջափրն ի Միջագետս, և կացույց երկու հարկահանս, Տաճիկ մի Սլիման անուն և Հրեայ մի Մուսէ անուն[2], որ և զադարկ արարին զաշխարհս յոսկւոյ և արծաթոյ: Եւ բազումք փորէին զգերեզմանս՝ գտանել ինչ և տալ նոցա, զի կեղծեալ լինէին ի բռնութենէ նոցա: ...Իսկ ի չարաչար ապահովենէն Ջափրի անչափ պակասեաց արծաթն...»[3]: Արծաթ դրամը հրապարակից պակասելու հանգամանքն իր հերթին բերելու էր նաև մեկ այլ և ըստ էության խիստ կարևոր երևույթ: Բանը նրանում է, որ փողի, որպես վճարելու և փոխանակության ամենալավագույն միջոցի, պակասելն ինքնըստինքյան ազդելու էր ինչպես փողի գնի, այնպես էլ ապրանքների շուկայական գների վրա: Այս դեպքում փողի գինն անխուսափելիորեն բարձրանալու էր, իսկ ապրանքինը՝ ընդհակառակը, իջնելու էր: Այս երևույթը նկատելի չափով տեղ է գտել նաև Եգիպտոսում, Բյուզանդիայում և այլ երկրներում դեռևս V—VII դարերում[4]: Ուրեմն այսպիսի պայմաններում ապրանքի շուկայական գինը ոչ թե կապվում էր նրա արտադրության վրա կատարված նյութական և աշխատանքային ծախսումների հետ և պայմանավորվում ապրանքի առաջարկի ու պահանջի հանրահայտ փոխհարաբերություններով, այլ՝ հիմնականում հարկատուների կողմից ապրանքների հարկադրական վաճառքի հետ, որը, հարկահավաքի սեղծած մահվան անմիջական սպառնալիքի պայմաններում, վերջնականապես բացառում էր վաճառողի համար ապրանքի շուկայական գնի ձևռնտվությունը հաշվի առնելը: Այդ է պատճառը, որ Հայաստանում, ինչպես նաև նրան հարևան մի քանի երկրներում, ուրիշ շատ տեղերի համեմատությամբ, հիշյալ շրջանում գյուղատնտեսական մթերքներն ու ապրանքներն ավելի էժան էին: Այսպես, Սամվել Անեցու ժամանակագրության ֆրանսերեն թարգմանության

[1] **Սամվել Անեցի**, էջ 88:

[2] *Մուսեի բնութագիրն այսպես է տալիս Ղևոնդը. «Եւ էր այր ժանտ և ապարատան և այսակիր. որ յանչափ շարժող այսոյն որ ի նմա՝ ի գբօսանել իւրում խաղս անարժան բարուցն՝ զմարդիկ կանդնէր փոխանակ մղոցի՝ նետաձիգս առնել ի նոսա ի վարժումն անձին իւրոյ, զոր առժամայն հարեալ սատակէր ի կենաց»,* **Ղևոնդ**, էջ 161—162:

[3] **Միխայել Ասորի**, էջ 352:

[4] *Տե՛ս Н. Пигулевская*, Месопотамия на рубеже 5—6 вв. н. э. М.—Л. 1940, էջ 75:



մեջ 773—775 թվականների տակ ուղղակի հիշատակվում է, որ Հայաստանում մեկ ոչխարն արժեր մեկ դրամ, մեր փողով՝ 44 կ., իսկ մեկ եզը՝ 7 դրամ, մեր փողով՝ 3 ռ. 08 կ.[1]: X դարի արաբական հեղինակներից Ալ-Իստախրին նույնպես հաստատում է, որ Հայաստանի և Աղվանքի քաղաքներում «...գներն այնքան էժան են, որ մի քանի տեղերում ոչխարների գինը հասնում է մինչև երկու դիրհեմի (մեր փողով՝ 26 կ.), իսկ մեղրի գինը մի քանի տեղերում հասնում է մինչև այնտեղ, որ երկու կամ երեք մանը[2] (այսինքն 1 կգ 600 գր.—2 կգ 400 գր.) արժե մեկ դիրհեմ (13 կմ[3]: Այնուհետև պատմիչը նշում է, որ մթերքների այդպիսի առատությունը շատերին կարող է անհավատալի թվալ: Այդպիսին էր դրությունը նաև Թիֆլիսում[4], Միջագետքում և այլ տեղերում: Մխայել Ասորին, օրինակ, խոսելով խալիֆ Ալ-Մանսուրի հարկային քաղաքականության մասին՝ 750—770-ական թվականներին, նշում է, որ ոսկու և արծաթի պակասելու պատճառով մարդիկ «...զեղն և զէշ դրամի միով վաճառէին, և զաղայն հինգ դրամի տային պահանջողացն»[5]: Ինչպես տեսնում ենք, Միջագետքում փոքրահասակ տղաներին նույնիսկ վաճառում էին հարկերը մարելու համար և այն էլ ավելի ցածր գներով, քան Հայաստանում՝ եղները:

Տնտեսագիտության մեջ հայտնի է, որ նման երևույթը կարող է առաջանալ երկու դեպքում միայն: Առաջին դեպքում՝ ապրանքների շուկայական գները կարող են իջնել ավյալ երկրի արտադրողական ուժերի և տնտեսության կանոնավոր զարգացման և համեմատաբար քիչ ջանքերով շատ մթերքներ ու ապրանքներ արտադրելու պայմաններում, երբ ապրանքի առաջարկը շուկայում եղած պահանջից բնականաբար ավելանում է և վաճառողը, հարկադրված, իր ունեցածը էժան գներով է ծախում: Մյուս դեպքում տեղի է ունենում ճիշտ հակառակ երևույթը: Այսինքն ավյալ երկրի արտադրողական ուժերի և տնտեսության անհամաչափ զարգացման հետևանքով մթերքների ու ապրանքների շուկայական գները այլևս չեն պայմանավորվում նրանց առաջարկի ու պահանջի փոխհարաբերություն-

[1] *Տե՛ս Հ. Զարյան, Արաբների հարկային քաղաքականությունը ավատական Հայաստանում, տե՛ս ՀՍՍՀ Պետական համալսարանի պատմական տեղեկագիր, №2—3, Երևան, 1927, էջ 331:*

[2] *Մեկ մանը հավասար է 2 ռիթլի, իսկ 1 ռիթլը՝ 400 գր. քիչ պակաս է, ուրեմն 1 մանը հավասար կլինի մոտ 800 գր.: Այս հաշվումները կատարել ենք՝ հիմք ընդունելով պրոֆ. Կարաուլովի տվյալները (տե՛ս* „Сборник материалов для описания местностей и племён Кавказа", т. 29, էջ 66):

[3] *Տե՛ս նույն տեղը*, էջ 27:

[4] *Տե՛ս Йон-Хаукал, տե՛ս* „Сборник материалов...", т. 38, էջ 89:

[5] **Միխայել Ասորի**, էջ 352:

ներով, այլ ենթարկվում են անկանոն գործոնների ազդեցություններին։

Հայաստանում մթերքների և ապրանքների շատության ու էժանության մասին սկզբնաղբյուրների վկայությունները դեռևս չեն նշանակում, թե դրանից կարող էին օգտվել հասարակության բոլոր անդամները։ Մի բան է շուկայի առատությունն ու էժանությունը, մեկ այլ բան՝ նրա մատչելիությունը բոլորի կամ գոնե մեծամասնության համար։ Նման դեպքում շատ կարևոր նախապայման է նաև հասարակության անդամների եկամուտների ընդհանուր վիճակը և դրանից անխուսափելիորեն բխող մարդկանց գնողունակության մակարդակը։ Եվ քանի որ Հայաստանում VIII դարից սկսած՝ այս երկուսն էլ ընթանում էին անընդհատ նվազելու ճանապարհով, ուստի միանգամայն հասկանալի է, որ խոսք լինել չէր կարող ոչ միայն շուկայի մատչելիության ու մարդկանց գնողունակության մասին, այլև, ինչպես ժամանակակիցն է ասում, շատերն անտանելի աղետի հետևանքով ձյունահղձ ու գետավեժ էին լինում և կամ տալիս էին իրենց ունեցած-չունեցածը կորստից մի կերպ փրկվելու համար[1]։

Այս բոլորից կարելի է անել այն հետևությունը, որ Հայաստանում հիշյալ շրջանում ապրանքների շուկայական գների ցածր մակարդակը ոչ թե վերագրվում է վերևում մեր կողմից մատնանշած պայմաններից առաջինին, այսինքն երկրի արտադրողական ուժերի և տնտեսական զարգացման բնականոն ընթացքին, այլ երկրորդին, քանի որ մի երկրի զարգացման բնական ընթացքի համար ամենակարևոր նախապայմանը նրա քաղաքական ամբողջության, ռազմատնտեսական հզորության և միասնության հանգամանքն է, որը մեկ ընդհանուր անունով կոչվում է անկախություն և որից զրկված էր։ Ուրեմն, տրամաբանական է, որ Հայաստանի վերևում նկարագրված վիճակը հիմնականում արաբական բռնակալական լծի առկայության պայմաններում տնտեսական անհամաչափ զարգացման հետևանքն էր։

Արաբական խալիֆայության հարկային քաղաքականության մեջ գլխահարկից բացի կարևոր տեղ էր զրավում նաև հողահարկը կամ, ինչպես իրենք էին անվանում, խարաջը։ Սկզբնաղբյուրների տեղեկություններից երևում է, որ արաբները դեռևս իրենց առաջին ներխուժումների ժամանակ, գլխահարկի հետ միասին, որոշակի ուշադրություն են դարձրել նաև հողահարկին։ Այսպես՝ Յակուբին հիշատակում է, որ 639 թվականին Ղանըմ-Ֆիհրին իր արշավանքների ընթացքում գրավելով Միջագետքի քաղաքներն ու Հայաստանի սահմանային վայրերը՝ բնակիչների վրա նշանակեց հողահարկ և գլխահարկ։ Պատմիչի մոտ այդ մասին կարդում ենք. «18 (639) թվականին Աբու-Օբայդայի ջառռահ ուղարկեց Իյադ իբն-Ղանըմ Ֆիհրին Միջագետք, որ անդադար պաշարմամբ նվաճեց Ռաքքա, Սրուճ, Ուռհա, Մծբին և այլ քաղաքներ՝ առանց պատերազմի, դնելով նոցա վերա հողահարկ, իսկ յուրաքանչյուր սորուկի վրա 4,5 և 6 դինար»[1]։ Այդ նույն ժամանակների մասին նման մի հիշատակություն ունի նաև Բալաձորին, որն ասում է. «Վակիդին, հենվելով հայտնի անձանց վրա, հաղորդում է, որ Մուհիբա իբն-Շուբան 22 թվականին (642—643) Կուֆից արշավեց Ադրբեջան։ Ներխուժելով այդ երկիրը, նա բռնի նվաճեց այն և նշանակեց նրա վրա հողահարկ (խարաջ)»[2]։ Յակուբիի և Բալաձորիի հիշատակած դեպքերը վերաբերում են արաբների առաջին ներխուժումներին, երբ նվաճողների հարկադանձումները պայմանավորված էին միայն ռազմական հաջողություններով։ Եվ եթե նման պայմաններում արաբներն այսպես թե այնպես կարող էին որոշել հպատակեցրած ժառերկրացիների թիվն ու ըստ այնմ հարկադրել, ապա նրանց ունեցած հողերի չափն ու եկամտաբերության աստիճանը որոշել չէին կարող։ Հետևաբար հողահարկի համար հաստատուն չափանիշ այդ ժամանակ գոյություն ունենալ չէր կարող։ Հավանաբար հենց այդ է պատճառը, որ վերոհիշյալ հեղինակները զերադասել են խարաջի չափը չհիշատակել։

Հայաստանից հողահարկը գանձելու վերաբերյալ կոնկրետ հիշատակություն ունի Յակուբին, որը, խոսելով 790-ական թվականների մասին, նշում է, որ Արմենիայի կառավարիչ Ալ-Ֆադըլ իբն-Յահյա իբն-Խալիդ ալ-Բարմակին (791—792) խաղարներից պարտություն կրելուց հետո, երբ քաշվում է Միջագետք, «...ղրկեց Ա-պու-Սապահը Հայաստանի հողահարկերը հավաքելու համար»[3]։

Հողահարկը, որպես Արաբական խալիֆայության մեջ գործող կարևոր հարկատեսակ, պաշտոնապես մտցվել է խալիֆ Աբդուլ-Մելիքի կողմից (685—705)[4]։ Իսկ հետագայում, զրավված երկրնե-

[1] Տե՛ս Վևեդ, էջ 135։

[1] Յակուբի, «Հանդես ամսօրյա», 1906, № 12, էջ 359։

[2] Баладзори, Книга завоевания стран, стр. 24։ Ըստ Պ. Շվարցի խարաջ տերմինը պետք է առաջացած լինի հունարեն χορτια բառից, որ նշանակում է կենսամթերք, ուտելիք։ Հետագայում այն արաբերենում ստացել է հողից, դաշտից ստացվող կենսամթերքի իմաստ։ Խարաջի գանձումը նույնպես արաբներն ընդօրինակել են պարսիկներից և բյուզանդացիներից։ Տե՛ս P. Schwarz Der Islam, էջ 97, ծանոթ. 6։

[3] Յակուբի, «Բազմավեպ», 1957, № 11—12, էջ 264։

[4] Տե՛ս А. Ю. Якубовский, Об испольных арендах в Ираке в VIII в., Советское востоковедение, т. 4, М.—Л., 1947, էջ 180։

րում Արաբական խալիֆայության քաղաքական հիմքերի ամրապնդման հետ զուգընթաց, գլխահարկի նման ոչ միայն կանոնավորվում և որոշվում են նաև հողահարկի ոլորտները, այլև հողահարկը շատ հասկանալի պատճառներով դառնում է խալիֆայության եկամուտների գլխավոր աղբյուրը[1]։

Արաբական խալիֆայության ներսում գոյություն ունեցող օրենքի համաձայն խարաջի հարկադրման ենթարկվում էին այն հողերը, որոնք թողնվում էին օգտագործման առանց պատերազմի արաբներին հպատակության ցույց տված ոչ մուսուլման ժողովուրդներին[2]։ Այդ օրենքով արաբները ոչ մուսուլման հպատակների հետ կնքում էին հատուկ պայմանագրեր, որոնցով նոր պայմաններում հողատերերը, իրենց հողերի նկատմամբ կրկին ձեռք բերելով հողօգտագործման և այն ժառանգելու իրավունքը, միաժամանակ արաբների հանդեպ ստանձնում էին խարաջի վճարման պարտավորություն։ Բալաձորիի մի հիշատակությունից երևում է, որ արաբները խստորեն հետևելիս են եղել, որպեսզի այսպես կոչվող խարաջային հողերը անպայման մշակվեն և խարաջն էլ ժամանակին վճարվի իշխանություններին։ Հակառակ դեպքում հողը ետ էր վերցվում և տրվում ուրիշի, որը հանձն կառներ կատարելու պահանջվող պարտավորությունները։ Բալաձորին այդ մասին ասում է. «Եթե որևէ մեկն իր հողն անմշակ թողնի՝ նրան կասեն՝ ցանիր և նրա խարաջը վճարիր կամ հանձնիր մեկ ուրիշի, ով այն կցանի»[3]։

Հողն իրենց հպատակներին պայմանագրով հանձնելու հանգամանքն ինքնըստինքյան ազդարարում էր, որ արաբները Հայաստանը հողով, ջրով և ընդերքով համարում էին իրենց սեփականությունը։

Գլխահարկի նման խարաջի չափերը նույնպես մշտական ու հաստատուն չեն եղել։ Արաբական աղբյուրները վկայում են, որ արաբները, հատկապես սկզբնական շրջանում, խարաջի չափերը որոշելիս հիմնականում ելնում էին իրենցից առաջ պարսկական և բյուզանդական տիրապետությունների ժամանակ գոյություն ունեցող նորմերից։ Աբու-Յուսուֆը վկայում է, որ արաբները խարաջը գանձում էին երկու հիմնական սկզբունքով։ Դրանցից առաջինը ցանքատարածության որոշակի չափն էր, ըստ որի նշանակում էին հար-

[1] *Տե՛ս Ա. Նալբանդյան*, Автореферат, էջ 9—10։
[2] *Տե՛ս Աբու-Յուսուֆ*, пер. А. Э. Шмидта, էջ 11։
[3] *Баладзори*, Книга завоевания стран, стр. 30.



կերը, դա կոչվում է վազիֆա կամ միսահա և, երկրորդ, խարաջի նշանակման ժամանակ կարող էին ելակետ ընդունել նաև բերքի որոշակի բաժինը, որն արաբներն անվանում էին մուկասամա[1]։ Պրոֆեսոր Ն. Ադոնցն իր «Армения в эпоху Юстиниана» գրքում նույնպես ճոռոմիկ կերպով անդրադառնում է արաբական տիրապետության ժամանակաշրջանում գործող հարկերի խնդրին։ Նա թեև վերևում նշած երկու սկզբունքներով հողահարկի գանձմանը տալիս է միանգամայն ճիշտ բացատրություն և վազիֆան կամ միսահան նմանեցնում է եվրոպական ցենզին, իսկ մուկասաման՝ շամպարին, բայց հետո զարմանալիորեն կատարում է սխալ ընդհանրացում և միսահան ու մուկասաման հայտարարում է որպես «հողահարկի երկու տեսակներ»[2]։

Խարաջի չափերն ու նորմերն այնքան տարբեր ու բազմազան են եղել, որ հայտնի օրենագետ Աբու-Յուսուֆն ու նրա աշակերտ Յահյա իբն-Ադամը հավիվ միայն կարողացել են առաջին Աբասյանների հանձնարարությամբ զբաղվել հին չափերի փոփոխման ու կարգավորման խնդրով[3]։

Ուսումնասիրողները խալիֆայության տարբեր վայրերի համար ենթադրում են խարաջի տարբեր չափեր՝ բերքի $^1/_5$-ից մինչև $^1/_2$-ի սահմաններում[4]։ Խարաջի չափերի մասին մենք որոշակի տեղեկությունների հանդիպում ենք հատկապես Աբու-Յուսուֆի մոտ։ Ըստ այդ հեղինակի, անջրդի հողերից, որտեղ մշակում են ցորեն և գարի, խարաջի չափը սահմանվում է բերքի $^2/_5$, իսկ ջրարբի հողերից $^3/_{10}$ մասը։ Արմավենու, խաղողի և այլ պտղատու այգիների ու բանջարանոցների համար խարաջը հավասար էր բերքի $^1/_3$-ին[5]։

Հարկահավաքության խնդիրն Արաբական խալիֆայության բազմազգ պետության մեջ այնքան բարդ ու դժվարին խնդիր էր, որ նույնիսկ Աբու-Յուսուֆի նման հեղինակը որոշ դեպքերում կորցնում է իր հաստատուն սկզբունքը և այս կամ այն հարցին տալիս է իրար միանգամայն հակասող բացատրություններ։ Այսպես, նրա մոտ մի տեղ ասվում է, որ «խարաջի ենթակա հողերից խարաջ գանձվում է ցորենից, գարուց, արմավից, կորեկից, պտուղներից, ամեն տեսակի բանջարեղեններից և մյուս բոլոր աշնանացան ու

[1] *Տե՛ս Աբու-Յուսուֆ*, пер. А. Э. Шмидта, էջ 11—13։
[2] *Н. Адонц*, Армения в эпоху Юстиниана, СПб, 1908, стр. 482.
[3] *Տե՛ս Աբու-Յուսուֆ*, пер. А. Э. Шмидта, էջ 11—13։
[4] *Տե՛ս Баладзори*, Книга завоевания стран, էջ 30, *ծանոթ.* 1, *А. Якубовский*, Об испольных арендах в Ираке в VIII в., էջ 179։
[5] *Տե՛ս Աբու-Յուսուֆ*, пер. А. Э. Шмидта, էջ 68։

գարնանացան ցորենից»[1], իսկ մեկ այլ տեղ խորհուրդ է տալիս, որպեսզի բանջարեղեններից ընդհանրապես ոչինչ չգանձեն, քանի որ բանջարեղենը երկար պահել ու վաճառել հնարավոր չէ[2]: Կամ մի անգամ նա հայտարարում է, որ միամյա բույսերից հարկ չպետք է վերցնել, մի ուրիշ անգամ պարտադրում է, որպեսզի հարկադրվի այն ամենը, ինչը հողում աճում է[3]: Այս հակասությունները, վերջին-վերջո, գալիս են մեկ անգամ ևս ապացուցելու, որ խալիֆայության մեջ հարկային կայուն սկզբունքներ գոյություն չեն ունեցել և որ եղած ընդհանուր սկզբունքները մի տեղ կարող էին ուրիշ կերպ կիրառվել, մեկ ուրիշ տեղ՝ բոլորովին այլ կերպ:

Աբու-Յուսուֆի ձևակերպած օրենքով թեև խստագույն ձևով հանձնարարվում է հարկահավաքներին, որպեսզի նրանք հարկերը հավաքելու ժամանակ անպայման առաջնորդվեն գոյություն ունեցող օրենքներով, ինչ-որ կոպեկների համար չտանջեն, չշարչարեն մարդկանց, վերցվող մթերքները գնահատեն արդարացի կերպով և կամ հարկերը դրամով կամ մթերքով հավաքելիս հաշվի առնեն հարկատուի համար ձեռնտու լինելու հանգամանքը, սակայն այս ամենը իրականում չէին կարող կենսագործվել այն պարզ պատճառով, որ հարկահավաքների և պետական պաշտոնյաների համար առաջնահերթ խնդիրը ոչ թե պետական շահը կամ հարկատուի վիճակով հետաքրքրվելն էր, այլ անձնական եկամուտների բազմապատկումը, որի համար նրանք դիմում էին ամեն տեսակի միջոցների: Աբու-Յուսուֆի այն միտքը, թե հարկերը դրամով կամ մթերքով դանձելու ժամանակ պետք է հաշվի առնել հարկատուի վիճակը, ամենևին էլ չպետք է կարծել տա, թե արաբներն անտարբեր են եղել այդ հարցի նկատմամբ: Հետաքրքիր է, որ այդ հեղինակը հենց նույն տեղում իր միտքն ու հակումները վերջնականապես պարզաբանում է այսպես. «Ինչ վերաբերում է հարկերը կենսամթերքներով գանձելուն, ապա եթե նրանց գներն անչափ ցածր են, սուլթանը չի բավարարվի նրանով, որը դրված է եղել ազգաբնակչության վրա, այլ նա կուզենա, որպեսզի գանձի նրանցից այնքան, որ դրամական էկվիվալենտով կցանկանար նրանցից ստանալ: ...Եթե կենսամթերքների գները անչափ բարձր լինեն, ապա սուլթանը չի ցանկանա թողնել հարկատուների ձեռքին խարաջի այն ավելցուկը, որն այս կապակցությամբ նրանց մոտ կստացվի...»[4]: Ուզում է ասել, որ եթե ապրանքների գները բարձր լինեն, ուրեմն հարկատուներն ավելի քիչ

[1] *Абу-Юсуф*, пер. А. Э. Шмидта, стр. 73.
[2] *Տե՛ս նույն տեղը, էջ 71—73:*
[3] *Տե՛ս նույն տեղը, էջ 73, 78 և այլն:*
[4] *Абу-Юсуф*, пер. А. Э. Шмидта, стр. 65—66.



ապրանք վաճառելով կկարողանան իրենց հարկերը վճարել և նրանց մոտ կմնա ապրանքների որոշ ավելցուկ, իսկ արաբները չեն ցանկանա, որ այդ ավելցուկը մնա նրանց մոտ: Այն ժամանակ արաբների համար, ինչ խոսք, ձեռնտու կլինի խարաջը մթերքով գանձելը: Այստեղից կարելի է անել այն հետևությունը, որ խարաջի դրամով կամ մթերքով գանձելու հանգամանքը մի խոշոր չափով էլ պայմանավորվում էր ապրանքների շուկայական գներով: Ապրանքների էժանության դեպքում արաբների համար ձեռնտու էր հարկերի դրամական գանձումը, իսկ թանկության դեպքում՝ մթերային գանձումը: Եվ քանի որ, ինչպես այդ տեսանք վերևում, Հայաստանում դյուղատնտեսական մթերքներն ու ապրանքները ավելի էժան էին, ուստի այստեղ արաբներն անպայման առաջնությունը պետք է տային դրամական գանձումներին: Կարելի է ենթադրել, որ խարաջը հիմնականում մթերային վճարումների ձևով գանձելու կարգը Հայաստանում ևս պահպանվել է մինչև VIII դարի 20-ական թվականները: Եվ միայն այդ ժամանակվանից սկսած, երբ արաբները մթերային վճարումներից անցան դրամավճարումների սիստեմին, խարաջը նույնպես սկսեցին մեծ մասամբ գանձել դրամով: Մեր այս ենթադրությանը որոշ չափով օգնում են Մ. Տոմարայի կատարած հաշվումները Աղվանից աշխարհի վերաբերյալ: Ըստ նրա, արաբներն Աղվանքում արդեն IX դարի սկզբներին խարաջն սկսել էին գանձել դրամով, որը մեկ ջիրիբից, այսինքն հեկտարի $^{1}/_{30}$-ական մասից կազմում էր 4 դիրհեմ[1]: Այսպիսով խարաջի դրամական չափը մեկ հեկտար հողային տարածության համար հավասար էր 30×4, այսինքն՝ 120 դիրհեմի: Քանի որ այդ ժամանակ Աղվանից աշխարհը պայմանապես համարվում էր Արմենիայի բաղկացուցիչ մասը և նրա ու Հայաստանի տնտեսական զարգացման միջև առանձին տարբերություններ չէին կարող լինել, ուստի սխալ չի լինի, եթե ընդունենք որ Հայաստանում նույնպես, գուցե փոքր տարբերություններով, արաբները խարաջը գանձում էին մոտավորապես այդ նույն չափով: Մ. Տոմարայի մատնանշած խարաջի դրամական համարժեքը անպայման պետք է ընդունել որպես միջին չափանիշ, որը որպես կանոն ըստ տեղի ու պայմանների, կարող էր և՛ բարձրանալ, և՛ իջնել: Ընդհանուր առմամբ այստեղ նույնպես կարելի է ասել, որ ջրովի հողատարածությունների, ինչպես նաև այդիների խարաջն ավելի բարձր պետք է լիներ, քան անջրդի հողերի ու մշակելի այլ կուլտուրաների խարաջը:

Ահևելադետների կողմից արդեն ցույց է տրվել, որ մինչև խա-

[1] *Տե՛ս M. Томара*, Бабек, М., 1936, էջ 11:

ջիճ Մուհամեդ էլ-Մեհդին (775—785) Արաբական խալիֆայության մեջ խարաջը դանձվում էր ոչ թե անհատական ձևով յուրաքանչյուր հողագործից, ըստ նրա հողային ունեցվածքի, այլ ըստ ամեն մի որոշակի հողային տարածության, որի մեջ կարող էին ընդգրկվել բազմաթիվ հողատերեր[1]: Այս կարգը գուցե կիրառվել է նաև Հայաստանում: Արաբական խալիֆայության մեջ հաստատված օրենքով՝ «Եթե բերքը դժբախտության էր ենթարկվում կամ ոչնչանում էր հեղեղից, նրա տերն ազատվում էր խարաջի պարտականությունից»[2]: Սակայն դժվար է հավատալ, որ անբերրիության համար սահմանված այս օրենքը կիրառվում էր բոլոր դեպքերում կամ տարածվում էր խալիֆայության բոլոր հպատակների վրա: Այդ օրենքը լավագույն դեպքում կարող էր կիրառվել միայն Արաբական խալիֆայության կենտրոնական շրջաններում և այն էլ իսլամ հպատակների նկատմամբ:

Արաբական խալիֆայության մեջ գործող մյուս հարկատեսակը տասանորդն էր, որին արաբներն անվանում էին հուշր:

Տասանորդի վերաբերյալ բավականին ընդարձակ տեղեկությունների մենք հանդիպում ենք գարձյալ Աբու-Յուսուֆի «Քիթաբ ալ-խարաջ» գրքում: Տասանորդի մասին խոսելիս պատմիչը, դիմելով խալիֆին, այդ հարկի առանձնահատուկ վիճակը բացատրում է այսպես. «Դու ինձ հարցնում ես, ո՞վ ուղղափառների տիրակալ, թե ինչպիսի՞ պետք է լինեն գույքերն ունեցող չափերը նվաճված երկրների այն բնակիչների վերաբերյալ, ովքեր իսլամ են ընդունել՝ անձի և նրանց պատկանող հողի պահպանության պայմանով: Այդպիսիների անձն անձեռնմխելի է և նրանց է պատկանում իրենց գույքն ու հողը, որի պահպանման պայմանով նրանք ընդունել են իսլամը և այդ հողերը ենթակա են հուշրի գանձմանը...»[3]: Սակայն իսլամի ընդունումով միայն հարցը չէր վերջանում: Ըստ Աբու-Յուսուֆի, նվաճված հողերը դիտվում էին որպես ռազմավար և խալիֆը կամ արաբների առաջնորդը որպես գերագույն սեփականատեր, ձեռք բերված շարժական ավարի նման, իրավասու էր դրանք ևս պետատորեն բաժանելու իր հետևորդներին ու զինվորներին, որոնք այնուհետև պարտավոր էին իրենց տիրոջը տասանորդ վճարել: Աբու-Յուսուֆի մոտ այդ մասին կարդում ենք. «Ամեն տեսակի հողերը, որոնք իմամը կնվաճի ռազմական ուժով, եթե նա նպատակահարմար է գտնում, կարող է բաժանել նրանց միջև, ովքեր այդ նվաճել

[1] Տե՛ս *Al. Kremer*, Culturgeschichte des Orients unter den Chalifen, erster Band, Wien, 1875, էջ 276 և հաջորդները:

[2] *Абу-Юсуф*, пер. А. Э. Шмидта, էջ 67, *Ваноцф.*, *Баладзори*, Книга завоевания стран, стр. 31.

[3] *Абу-Юсуф*, пер. А. Э. Шмидта, стр. 89.



են: Ըստ որում նա այդ հարցում օգտվում է գործողությունների լիակատար ազատությունից և նման դեպքերում այդ հողերը ենթակա են հուշրի գանձմանը[1]: Ուրեմն իսլամի ընդունումը դեռևս բավարար ու վերջնական երաշխիք չէր կարող լինել հողատիրոջ համար՝ հողն իր ձեռքում պահելու տեսակետից, թեկուզ տասանորդ վճարելու պայմանով: «Այն հողերը, որոնք պատկանում են արաբներին,— ասում է պատմիչը,— գտնվում են այլ վիճակում, քան ոչ արաբների հողերը, քանի որ արաբների դեմ կռիվ է մղվում այն բանի համար, որպեսզի նրանք իսլամ ընդունեն (և) նրանցից գլխահարկ (ջիզե) չի գանձվում, նրանցից պահանջվում է միայն իսլամի ընդունումը: Եվ եթե նրանց հողը թողնվում է իրենց, ապա այն դառնում է կալվածք, որը ենթակա է հուշրի գանձմանը: Իսկ եթե իմամն այդ հողերը բաժանում է դրանք նվաճողների միջև և չի թողնում նրանց ձեռքին, ապա միևնույնն է, այն ենթակա է հուշրի»[2]: Այսպիսով, տասանորդի բովանդակության վերջնական սահմանումը հանգում է նրան, որ այդ հարկը գանձվում էր ինչպես իսլամ ընդունած հպատակներից, այնպես էլ նրանցից, ովքեր այն ռազմավարի ձևով, իրենց կատարած զինվորական ծառայության դիմաց, ստանում էին որպես վարձատրություն:

Տասանորդն ըստ էության պատկանում էր Արաբական խալիֆայության մեջ գործող այսպես ասած ավելի թեթև հարկատեսակների շարքին: Ոմանք նույնիսկ այն նմանեցնում են դեռևս Մուհամեդի ժամանակ իսլամի ազգաբնակչությունից ազքատների օգտին հավաքվող զաքյաթին կամ սադաքյային[3]: Սակայն տասանորդն իր այդ վիճակը երկար պահպանել չէր կարող, ինչպես որ իսլամ հրպատակները չկարողացան սկզբում գլխահարկից իրենց ազատ լինելու արտոնությունը պահպանել: Դրա պատճառն այն էր, որ եթե տասանորդի թեթևությունը կամ Մուհամեդի կրոնի հետևորդներին գլխահարկից ու հողահարկից ազատելու հանգամանքն սկզբում արդարացվում էր և ծառայեցվում իբրև արաբներին խրախուսելու և դեպի իսլամը ձգելու միջոց, ապա VIII դարի վերջերին, երբ այդ գաղափարախոսությունը հաղթանակել էր շատ երկրներում և երբ նրան կամա թե ակամա հետևում էին մի շարք ժողովուրդներ, նման արտոնության պահպանումը այլևս տնտեսական տեսակետից ձեռնտու չէր խալիֆայությանը: Դրա համար էլ մահմեդականների համար նախկինում սահմանված վերոհիշյալ արտոնությունները

[1] Տե՛ս *Абу-Юсуф*, пер. А. Э. Шмидта, էջ 90:

[2] Նույն տեղը, էջ 96:

[3] Տե՛ս նույն տեղը, մասն երկրորդ, ծանոթություններ, էջ 1:

կամաց-կամաց խախտվում և իրենց դերը կորցնում էին։ Հենց այդ է պատճառը, որ, օրինակ, տասանորդի մասին այնքան շատ խոսող Աբու-Յուսուֆը նշում է, որ այդ հարկը հեշտությամբ կարող է վերածվել բերքի $^1/_5$-ական մասի և նույնիսկ խարաջի, եթե այդ ցանկանա իմամը[1]։

Տասանորդը թեև մեծ մասամբ իր անվանը համապատասխան կազմում էր բերքի $^1/_{10}$-ական մասը, սակայն, այնուամենայնիվ, գոյություն ուներ նաև բերքի նվազագույն քանակությունը, որի դեպքում միայն կարելի էր տասանորդը գանձել։ Աբու-Յուսուֆն այդ նվազագույնը սահմանում է մեկից մինչև $2^1/_2$ վասկ[2], այսինքն՝ 275—687 $^1/_2$ կգ, որը վերաբերում էր խաղողի, բրնձի, ցորենի և գարու բերքատվությանը[3]։

Տասանորդի մասին մեր այս բոլոր ասածներից հետևում է, որ հարկի այս տեսակը, գրեթե առանց բացառության, վերաբերում էր միայն իսլամ աղգաբնակչությանը։ Եթե այդպես է, ուրեմն համոզված կերպով կարելի է ասել, որ տասանորդը Հայաստանում, մանավանդ հայ աղգաբնակչության մեջ, տարածում չի ունեցել։ Մեր կարծիքով Հայաստանում տասանորդը գանձվում էր միայն այստեղ տեղափոխված և վերաբնակեցված մահմեդական ցեղերից ու ժողովուրդներից, որոնց հայկական տերիտորիաները տրվում էին որպես «ռազմական ուժով նվաճված հողեր» և որպես «ռազմավար»։

Հերթի աշխարհագրի մասին խոսելիս մենք արդեն մեկ անգամ նշել ենք, որ գլխահարկի և հողահարկի հետ միասին արաբները, այն ժամանակվանից սկսած, Հայաստանում կայունացրին անասնահարկի գանձումը։ Անասնահարկն արաբների մոտ անվանվում էր սադաքա կամ սադաքյաթ։ Այդ հարկի չափը սահմանելու համար, ինչպես հավաստում է Աբու-Յուսուֆը, պետք էր մեծ մասամբ հենվել նախկինում ձեռք բերված փորձի վրա։ Անասնահարկը, որպես կանոն, գանձվում էր խեղճերի ու աղքատների կարիքները բավարարելու համար[4]։ Այն սկզբում, մանավանդ մուսուլմանական աղգաբնակչության համար, դիտվում էր որպես ողորմության կամ նվիրատվության մի ձև, որովհետև այն տրվում էր կամավոր սկզբունքով կամ նախօրոք կնքված պայմանագրով։ Սակայն արաբական իշխանությունները երբեմն անասնահարկը գանձում էին հատուկ որոշումով՝ որպես պարտադիր հարկատեսակ[1]։ Աբու-Յուսուֆն իր գրքում սահմանում է անասնահարկի հետևյալ չափերը. 40—120 ոչխարից վերցվում էր մեկ ոչխար, 121—200 ոչխարից՝ երկուսը, 201—300 ոչխարից՝ երեքը, ապա յուրաքանչյուր հարյուր հատ ավել լինելու դեպքում մեկով ավելի և այլն։ Այնուհետև հինգ ուղտից վերցվում էր մեկ ոչխար, մինչև տասը ուղտ ունեցողներից՝ երկու ոչխար, 11—15 ուղտից՝ երեք ոչխար, 30—39 խոշոր եղջերավոր անասունից՝ մեկ հորթ, 39-ից ավել լինելու դեպքում յուրաքանչյուր երեսնյակից վերցնում էին մեկով ավելի և այլն[2]։ Այս չափերը ինչպես պատմիչն է ասում, վերաբերում էին միայն արաբներին։ Դրա համար էլ հարկատվության այդ չափերը բավականին մեղմ ու հաճելատ էին։ Թե ինչպիսին են եղել դրանք ոչ արաբների, կամ ավելի ճիշտ՝ հպատակ ոչ մուսուլմանական ժողովուրդների համար, այդ մասին դժբախտաբար Աբու-Յուսուֆը և մյուս հեղինակները գրեթե ոչինչ չեն հաղորդում։ Սակայն կարելի է առանց վարանմունքի ասել, որ հպատակ ժողովուրդների համար սահմանված անասնահարկի չափերը, վերևում նշված չափերի համեմատությամբ, անտարակույս ավելի բարձր պետք է լինեին։

Արաբներին ենթարկված քրիստոնյա հպատակների՝ զիմմիների վրա դրվում էր նաև կարողության հարկ։ Սակայն օրենքով հարկագրման էր ենթարկվում կարողության այն մասը, որը վաճառքի էր հանվում և որի արժեքը կազմում էր 200 դիրհեմից ոչ պակաս։ Այս դեպքում կարողության վրա դրվող հարկի չափը պետք է կազմեր տասանորդի կեսը։ Աբու-Յուսուֆի մոտ այդ մասին ասվում է. «զաքյաթ չի գանձվում ոչ մի ունեցվածքից, որը պատկանում է (զիմմիներին) կանանց և տղամարդկանց, բացառությամբ այն բանի, ինչը նրանք վաճառքի են հանում։ Այն ժամանակ նրանցից պետք է գանձել տասանորդի կեսը. այն չպետք է գանձել այն կապիտալից, որի արժեքը 200 դիրհեմի, կամ 20 մսխալ ոսկու չի հասնում և կամ վաճառքի հանված ապրանքը չի հասնի այդ գումարին»[3]։

Արաբները հատուկ տեղ էին հատկացնում նաև ռազմավարին, որը նրանց մոտ կոչվում էր փայ կամ զանիմա։ Սահմանված կարգի համաձայն, ռազմավարի $^1/_5$ մասը տրվում էր որբերին, աղքատներին ու թափառաշրջիկներին, իսկ $^4/_5$-ականը՝ անմիջապես կռվողներին, այսինքն ամբողջ ձեռք բերողներին։ Ըստ որում երեք բաժինը

[1] Տե՛ս Աբու-Յուսուֆ, пер. А. Э. Шмидта, էջ 81։

[2] Մեկ վասկը հավասար է 275 կգ (տե՛ս Աբու-Յուսուֆ, пер. А. Э. Шмидта, ծանոթ. 67)։

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 72։

[4] Տե՛ս Աբու-Յուսուֆ, пер. А. Э. Шмидта, էջ 112, 123։

[1] Տե՛ս „Сборник материалов для описания...“, т. 31, էջ 54, ծանոթ. 43։

[2] Տե՛ս Աբու-Յուսուֆ, пер. А. Э. Шмидта, էջ 113—115։

[3] Աբու-Յուսուֆ, Православный палестинский сборник, стр. 1311.

հասցվում էր հեծելազորայիններին, իսկ մեկը՝ հետևակայաններին։ Ավարի բաժանման ժամանակ հաշվի չէր առնվում ռազմիկի թույլ կամ ուժեղ, խիզախ կամ վախկոտ լինելու հանգամանքը։ Ավարից օգտվելու հավասար իրավունքներ ունեին ինչպես կադրային զինվորները, այնպես էլ կամավորները[1]։ Պրակտիկայում կարելի էր գործադրել նաև այլ սկզբունք. ավարի հինգ մասից մեկը հասցնել արաբների առաջնորդին, մյուս բաժինը՝ նրա բարեկամներին ու մերձավորներին, իսկ մնացած երեք բաժինը՝ աղքատներին, որբերին ու թափառաշրջիկներին։ Մասնակի դեպքերում միայն չափերի այս հարաբերակցությունը կարելի էր փոփոխել։ Այսպես պետք է բաժանվեին նաև ոսկին, արծաթը և մյուս թանկարժեք իրերը[2]։ Այս նույն կարգի համաձայն չէր թույլատրվում հիմնական հարկահավաքներին զբաղվելու ավարի բաժանումով։ Ավարի բաժանումը պետք է կատարեին հատուկ պաշտոնյաները[3]։

Աբասյանների տիրապետության ժամանակաշրջանից սկսած, վերևում հիշատակած հարկատեսակներից բացի, արաբները հարկեր նշանակեցին նաև հանքերի, աղի արտադրության, ձկնորսարանների, ջրաղացների, արհեստանոցների, մաքսատների, արոտավայրերի, հրապարակների, փողոցների, նավերի և այլ օբյեկտների վրա։ Հատուկ հարկ էր նշանակվում նաև պերճանքի առարկաների վաճառքի վրա[4]։

Արաբական խալիֆայության տիրապետության ժամանակ Հայաստանում գանձվող հիմնական հարկերից, տուրքերից, մաքսերից և բազմաթիվ առիթներով դրամական ու նյութական կորզումներից բացի բնակչության վրա դրվում էին նաև արաբական զորքերին, զինվորական ու քաղաքացիական պաշտոնյաներին և արաբական ճանապարհորդներին ձրիաբար ընդունելու, մատակարարելու և կերակրելու պարտականությունը[5], պարհակային և կոռային աշխատանքը և այլն։

Արաբների հարկային քաղաքականության մեջ որոշակի տեղ էր հատկացվում նաև հարկի փոխարեն կենդանի մարդկանց հավաքագրմանը։ Նվաճված երկրներից ու հպատակեցված ժողովուրդներից հավաքվող հարկի մի տեսակն էլ երիտասարդ տղաները, աղջիկներն ու կանայք էին, որոնց արաբները մեծամեծ խմբերով քշում-տանում էին իրենց տերության խորքերը։ Այս թշվառականները վաճառվում կամ տարբեր ճանապարհներով լցվելով մուսուլմանական հարեմները՝ դատապարտվում էին տանջանքների ու ոչնչացման։

Անդրկովկասում, դեռևս VIII դարի առաջին կեսերից, հարյուրներով ու հազարներով պատանիների, սևահեր ու մրահոն աղջիկների և կանանց հարկերի դիմաց վերցնելու մասին պերճախոս վկայություններ ունեն արաբական հեղինակներ Բալաձորին, Յակուբին, Իբն ալ-Ասիրը և մյուսները[1]։ Արաբական հարկահավաքության այս բիրտ ու վայրենի ձևը դժբախտաբար կիրառվել է նաև Հայաստանում, որի վառ արտահայտությանը մենք հանդիպում ենք հայ ժողովրդի հերոսական դյուցազներգության՝ «Սասնա ծռեր»-ի մեջ։

Աբասյանների իշխանության գլուխ անցնելուց հետո, VIII դարի երկրորդ կեսերից սկսած, խալիֆայության հարկային քաղաքականությունն է՛լ ավելի սաստկացավ։ Արաբական հարկահավաքներն ու պաշտոնյաները տեղից-տեղ շրջագայելով, ազգաբնակչության նկատմամբ գործադրում էին չտեսնված ու չլսված տանջանքներ ու խոշտանգումներ։ Նրանք հարկահավաքման նորահնար եղանակներով զերազանցում էին իրենց բոլոր նախորդներին։ Հատկապես քրիստոնյա հպատակների նկատմամբ գործադրվող տանջանքներն ու հարկադրանքներն այնքան բացահայտ էին, որ այսպիսի բռնությունները չափից ավել էին համարում նույնիսկ իսլամի ու խալիֆայության գաղափարախոսները։ Աբու-Յուսուֆը, օրինակ, կարականապես արգելում է հարկահավաքման ժամանակ քրիստոնյաներին տանջելը, շարշարելը, կիզիչ արևի տակ կանգնեցնելը, ծեծելը, ծաղրելը, հայհոյելը և այլն[2]։ Նա բազմիցս շեշտում է, որ հարկերի հավաքոմբ չպետք է դառնա մարդկանց տնտեսապես քայքայելու և թշվառության մեջ գցելու միջոց, պատվիրում և խորհուրդ է տալիս հարկահավաքին, որպեսզի նա «...վաճառել չտա (չունևորության դեպքում) ոչ նրանց (հարկատուների) հագուստը, լինի դա ամառային, թե ձմեռային, ոչ այն, ինչը նրանց անհրաժեշտ է սնվելու համար, ոչ տնային կենդանին, որից նրանք օգտվում են աշխատանքի ժամանակ։ Ոչ ոքի մարակի ոչ մի հարված մի հասցըրու ինչ-որ դիրհեմի համար։ Մի հարկադրիր դիրհեմ կորզելու հա-

[1] Տե՛ս *Баладзори*, Книга завоевания стран, էջ 7, Բալաձորի, թարգմ. Կ. Յուրյանցի, էջ 34—35, Բալաձորի, «Հանդես ամսօրյա», 1904, № 2, էջ 54, Յակուբի, «Հանդես ամսօրյա», 1906, № 12, էջ 360, Իբն ալ-Ասիր, տե՛ս նույն տեղը, 1908, № 4, էջ 107։

[2] Տե՛ս *Абу-Юсуф*, пер. А. Э. Шмидта, էջ 208, *П. К. Жузе*, Азербайджан под властью арабов (7—11 вв.), Институт истории и философии АН Азерб. ССР, фонд № 763, էջ 21։

[1] Տե՛ս *Абу-Юсуф*, пер. А. Э. Шмидта, էջ 45—46, 48։
[2] Տե՛ս նույն տեղը, էջ 50—51։
[3] Տե՛ս նույն տեղը, էջ 122։
[4] Տե՛ս Հ. Ջուրյան, Արաբների հարկային քաղաքականությունը..., էջ 343։
[5] Տե՛ս *Ал-Маверди*, էջ 133б։

մար մեկ ոտքի վրա կանգնել և վաճառքի մի հանիր շարժական ոչ մի դույլ, ինչ-որ խարաջի չվճարած մասի համար...»[1] և այլն: Սակայն այդպես միայն ասվում էր: Գործնականում հիշյալ խորհուրդներից ու պատվիրաններից և ոչ մեկը չէր կենսագործվում: Դեռ ավելին, եթե օրենքի մարդիկ, երբեմն ունկնդրելով խղճի ձայնին, անցնում էին մարդասիրության կողմը, ապա բոլորովին այլ վերաբերմունք ունեին խալիֆները և նրանց սատրապները, որոնք ոչ մի դեպքում չէին կարողանում հանդուրժել մեղմ և փոքր-ինչ խիղճ ունեցող պաշտոնյաներին: Այսպես, 760—770-ական թվականներին Արմենիայի ոստիկան Սուլեյմանն իր պաշտոնից հեռացվեց նրա համար, որ նա հարկահավաքության ժամանակ ցույց էր տալիս մեղմ ու հանդուրժող վերաբերմունք, որը հակասում էր Աբու-Ջաֆար էլ-Մանսուր խալիֆի (754—775) քաղաքականության սկզբունքներին[2]: Պահանջված չափի հարկերը վճարել չկարողանալու դեպքում արաբները խլում էին հարկատուների ունեցվածքը և երբ դրանով էլ չէին բավարարվում, այն ժամանակ նրանք այդպիսինների ընտանիքի անդամներին գերեվարում, իսկ իրենց դատապարտում էին տաժանակիր աշխատանքի[3]:

Արաբական տիրապետության ժամանակակից և հետագայի միջնադարյան հայ հեղինակները, ճշմարտացիորեն վերատադրելով Հայաստանի տխուր պատկերը և բավական մանրամասնորեն խոսելով արաբ ոստիկանների, կառավարիչների, հարկահավաքների և բազմաթիվ այլ պաշտոնյաների գործունեության մասին, ամեն անգամ շեշտում են, որ սրանք բոլորն էլ «ժանտ ու չարագործ», «աւարանշան», «ագահ և արծաթասէր», «ապարասան և ժանտաբարոյ»[4] մարդիկ էին, որոնց օրոք Հայաստանի և հայ ժողովրդի վիճակն անչափ ծանրացավ: Սակայն մեր հեղինակները չեն կարողացել բացատրել, որ արաբների այդօրինակ վարքագիծը բխում էր Արաբական խալիֆայության վարած հարկային ընդհանուր քաղաքականության ոգուց և ամեն անգամ միամտաբար կարծել են, որ այդ տառապանքների պատճառը այն է, որ «...ի տեառնէ էր պատուհաս սաստկացեալ ըստ յանցանաց մերոց»[5]: Նվաճողների չարագործություններին շատ հաճախ ավելանում էին նաև բնական աղետները ու արհավիրքները՝ սովը, համաճարակը, երաշտն ու կարկուտը[6]:

[1] *Աբու-Յուսֆ*, пер. А. Э. Шмидта, стр. 24, 40.

[2] *Տե՛ս* Մ. Օրմանյան, *Ազգապատում*, *մասն Ա*, *էջ 866*:

[3] *Տե՛ս Աբու-Յուսֆ*, пер. А. Э. Шмидта, *էջ* 98:

[4] Ղևոնդ, *էջ 166*, Ստ. Ասողիկ, *էջ 133*, Ստ. Օրբելյան, *էջ 158*:

[5] Ստ. Ասողիկ, *էջ 133*:

[6] *Տե՛ս նույն տեղը*, նաև Կիրակոս Գանձակեցի, *էջ 71*:



Հարկահավաքության ծանր ու հոգեմաշ քաղաքականության մեջ արաբներն այնքան հեռու էին գնացել, որ երբեմն կենդանի մըննացածներին հարկադրում էին վճարելու իրենց մահացած ազգականների կամ համագյուղացիների պարտքերը: Հայ հեղինակները, խոսելով արաբական շրջանի Հայաստանի կառավարիչ Աբդուլայի մասին, նշում են, որ նա հարկային լուծը ծանրացնելուց և հարկահավաքության ընթացքում ամենադաժան միջոցներ գործադրելուց բացի հարկեր էր հավաքում ոչ միայն կենդանի մարդկանցից, այլև մահացածներից[1]: Նա քահանաներին ու հոգևորականներին լկտիաբար հարկադրում էր կազմել մահացածների ու նրանց ընտանիքների կենդանի մնացած անդամների ճշգրտված ցուցակները և ապա հարկադրում, որպեսզի վերջիններս վճարեն մահացածների չվճարած հարկերը[2]: Աբդուլայի գործունեությունն ամենուրեք ուղեկցվում էր մասսայական կոտորածներով, ավերածություններով ու կողոպուտով: Նրա օրոք, ինչպես պատմիչներն են ասում՝ «հատաւ զգիւտ արծաթոյ յաշխարհէս Հայոց»: VIII դարի կեսերին արաբները այն աստիճան էին սանձարձակացել, որ պարտադրում էին հպատակ քրիստոնյա բնակիչներին՝ վճարելու ուրիշ տեղեր փախած և նույնիսկ մահմեդականություն ընդունած իրենց համազգայիների հարկերը: Արաբ հարստահարիչները, հավատարիմ մնալով Ղուրանի սկզբունքներին, հարկահավաքության քաղաքականության ընթացքում հատկապես ոչ իսլամ հպատակների նկատմամբ գործադրում էին բոլոր հնարավոր միջոցները նրանց ինքնասիրությունը արորելու, հոգեպես ընկճելու և ստորացնելու համար: Աղբյուրները հաղորդում են, որ Հայաստանում արաբներն իրենց գործը հեշտացնելու և հարկերը վճարած մարդկանց չվճարածներից հրապարակով տարբերելու համար առաջինների պարանոցներին անց էին կացնում կապարե հատուկ կնիքներ[3]: Իսկ Միջագետքում նրանք շիկացրած դրոշմներով ուղղակի խարանում էին հարկատուի ձեռքերը, կուրծքն ու թիկունքը[4]:

Գլխահարկի և ծխահարկի բնորոշումների կապակցությամբ մենք արդեն առիթ ունեցել ենք խոսելու 654—656 թվականներին

[1] Նույն ինքը՝ Աբու-Ջաֆար ալ-Մանսուրը, որը Հայաստանի ոստիկան էր նշանակվել իր եղբոր, Աբասյան առաջին խալիֆ Աբուլ-Աբաս ալ-Սաֆֆայի (750—754) կողմից: *Տե՛ս* Հ. Մանանդյան, *Ժողովրդական ապստամբությունները Հայաստանում արաբական տիրապետության դեմ*, *էջ 11—12*:

[2] *Տե՛ս* Ղևոնդ, *էջ 127*, Ստ. Ասողիկ, *էջ 131—132*, Վ. Բարձրբերդցի, *էջ 193* և այլն:

[3] *Տե՛ս* Ղևոնդ, *էջ 127*, Ստ. Ասողիկ, *էջ 134*:

[4] *Տե՛ս* Denys de Tell-Mahre, *էջ* 104:

Հարիր իրն-Մասլամայի արշավանքների և Անդրկովկասում ու Հայաստանում նրա կողմից հպատակեցված վայրերի բնակիչների հետ կնքված պայմանագրերի մասին, որոնցով պարտվողները հանձն էին առնում արաբներին հարկ վճարել։ Այն ժամանակ արաբական զորավարի կնքած պայմանագրերում նույնպես կրոնական հանգամանքը ընդգծվում էր, քանի որ այնտեղ որոշակիորեն ասվում էր, որ «...եթե դուք (այսինքն՝ քրիստոնյաները—Ս. Մ.-Բ.) ընդունեք իսլամը և կատարեք (սահմանված) աղոթքը, ապա դուք մեր կրոնական եղբայրներն եք, ապա թե ոչ՝ դուք պարտավոր եք վճարել գլխահարկ»[1]։ Ոչ իսլամ ժողովուրդների տարբական իրավունքների ոտնահարման մասին պերճախոս վկայություններ ունեն նաև Միխիթար Այրիվանեցին[2] և ասորական հեղինակ Միխայել Ասորին[3]։

VIII դարի վերջերին դրությունը Հայաստանում է՛լ ավելի է վատանում։ Այդ ժամանակ Սուլեյման ոստիկանի հանձնարարությամբ հարկերը հավաքելու համար այստեղ է ուղարկվում Իբն-Դոկը, որ «...եկեալ ի քաղաքն Դուին՝ սաստիկ դժնդակութեամբ խոշտանգէր զբնակիչս աշխարհիս հարկապահանջութեամբ»[4]։ Մայրաքաղաքի բնակիչները՝ ազնվականները, հոգևորականները և հասարակ մարդիկ հարկերի ծանրությունից նեղվելով, Եսայի I Եղիպատոշեցի կաթողիկոսի (775—788) գլխավորությամբ դիմում են Բրան՝ իրենց դրությունը թեթևացնելու համար, սակայն Իբն-Դոկը պատվիրում է իր գործակալներին, որպեսզի նրանք հարկերը հավաքեն «կրկին քան զոր ըստ ամին պահանջէին»[5]։

Արաբական շրջանում Հայաստանից գանձվող հարկերի ամբողջական քանակի մասին, եթե հաշվի չառնենք Ղևոնդի մի ակնարկը, հայկական աղբյուրներն ընդհանրապես որոշակի տեղեկություններ չեն հաղորդում։ Այդ կարգի տեղեկությունների մենք հանդիպում ենք միմիայն արաբական հեղինակների մոտ։ Սակայն պետք է նշել, որ դրանք էլ միասնական չեն և իրարից տարբերվում են։ Այնուհետև, արաբական հեղինակները հիշատակում են միայն խալիֆայության գանձարանը մուտք արվող դրամական եկամուտները, իսկ թե որքան

1 *Баладзори*, Книга завоевания стран, стр. 12, նաև „Сборник материалов для описания местностей и...“, т. 31, стр. 53, *ծանոթ.* 43, Բալաձորի, «Հանդես ամսօրյա», 1903, № 8, էջ 253, Բալաձորի, *թարգմ. Կ. Յուբյուձյանի* էջ 21։

2 *Տե՛ս* Մխիթար Այրիվանեցի, *էջ 54*։

3 *Տե՛ս* Միխայել Ասորի, *էջ 337*։

4 Ղևոնդ, *էջ 167*, Սամվել Անեցի, *էջ 89*։

5 *Նույն տեղում, էջ 167*։



էր կազմում նյութական կամ ապրանքային եկամուտների արժեքը, այդ մասին նրանք ոչինչ չեն ասում։

Ղևոնդի մոտ VII դարում Հայաստանից հավաքվող դրամական հարկը հաշվվում է 500 դահեկան[1], որը մեր փողով հավասար է 1320 ռուբ., իսկ Իբն-Ֆաքիհը, խոսելով Հայաստանի մասին, նշում է, որ VIII դարում Հայաստանը խալիֆայությանը տարեկան վճարում էր 2 միլիոն 330.985 դիրհեմ[2]։ Իբն-Խորդադբեհն Հայաստանից հավաքվող հարկերի գումարը հասցնում է չորս միլիոն դիրհեմի[3]։ Կուդամայի վկայությամբ այդ գումարը կազմում էր 9100000 դիրհեմ[4], իսկ ըստ Իբն-Հալդունի VIII—IX դարերում Հայաստանի դրամական հարկի չափը հավասար էր 13000000 դիրհեմի[5]։ Մենք, իհարկե, այն կարծիքին չենք, որ այս թվերը պատմիչների կողմից վերջնականապես ստուգված ու ճշտված են և դրանք կարելի է անվերապահ կերպով ընդունել։ Կարևորն այստեղ այն է, որ թվերի հաջորդական շարքը հենց այս դրությամբ ինքնըստինքյան ցույց է տալիս, որ արաբական շրջանում Հայաստանից գանձվող դրամական հարկերը պրոգրեսիվ կերպով անընդհատ աճել են և 500 դահեկանից հասել 13000000 դիրհեմի, այսինքն բազմապատկվել են ավելի քան 1280 անգամ։ Արաբական խալիֆայության դրամական եկամուտների այսպիսի հսկայական չափերով աճելու հանգամանքը ոչ միայն վկայում է դրամական հարաբերությունների բնորոշ հինելը խալիֆայության տիրապետության համար և այդ հարաբերությունների վերընթաց շարժումը հատկապես VIII դարից սկսած[6], այլև այն, որ արաբները գնալով սաստկացնում էին հարկային լուծը հպատակ ժողովուրդների վրա և նրանց ունեցվածքը բռնում էին ամենադաժան և ամենասոսկալի եղանակով։

Արաբ հեղինակները բնականաբար չէին կարող իմանալ, թե պետությանը տրվելիք հարկերի անվան տակ արաբ պաշտոնյաներն

1 *Տե՛ս նույն տեղը, էջ 179, ծան. 15։ Մեկ դահեկանը հավասար է 24 կառատի, իսկ մեկ կառատը պարունակում է 0,2 գր. ոսկի։*

2 *Տե՛ս Ибн-Факих*, Сборник материалов..., т. 31, էջ 39—41։

3 *Տե՛ս Al. Kremer*, Culturgeschichte ..., 11 Band, էջ 343, նաև Сборник материалов для ..., т. 32, էջ 15։

4 *Տե՛ս Al. Kremer*, Culturgeschichte ..., 11 Band, էջ 343։

5 *Տե՛ս նույն տեղը*, էջ 343, 358, նաև *J. Laurent*, l'Arménie entre Byzance et Islam depuis la conquéte Arabe jusquén 886, Paris, էջ 161։

6 *Տե՛ս* А. *Якубовский*, Об испольных арендах в Ираке в 8 в., էջ 177—178։

ու հարկահավաքները Հայաստանից ինչպիսի միջոցներ էին կարողանում կորզել: Եվ այն, ինչ տրվում էր խալիֆայության գանձարաններին, նրանց հավաքածի մի մասն էր միայն և ոչ ամբողջը: Մեր ձեռքի տակ ունեցած տվյալները վերաբերում են հենց խալիֆայության գանձարանը մուտք արվող գումարներին: Անկասկած, հարկերի անվան տակ Հայաստանից հավաքվող իրական գումարներն ու մյուս միջոցները վերևում բերվածներից կրկնակի անգամ ավել պետք է լիներին:

Երբ Հայաստանից հավաքվող հարկերը համեմատում ենք հարևան մի քանի երկրներից գանձվող հարկերի հետ, տեսնում ենք, որ համարյա բոլոր դեպքերում Հայաստանի հարկերի չափն ավելի բարձր է: Այսպես, ըստ Տաբարիի, 642—644 թվականներին Ատրպատականից հավաքվող հարկը կազմում էր ընդամենը 800000 դիրհեմ[1], որը մեր փողով հավասար է 104000 ռուբլու, իսկ Խորդադբեհ և Իրն-Ֆաքիհի վկայությամբ IX դարում Աղվանքից գանձվող հարկը հավասար էր երկու միլիոն դիրհեմի[2], որը կազմում էր այդ նույն ժամանակների Հայաստանի հարկերի կեսը: Միայն Յակուբիի մոտ է Հայաստանի ու Աղվանքի հարկը հավասար ցույց տրվում, այն է՝ 4 միլիոն դիրհեմ[3]: Կուդաման Աղվանքից և շրջակա մի քանի երկրամասերից գոյացող միջին եկամուտը հաշվում է 4500000 դիրհեմ[4]: Ամենից կարևորն այն է, որ թվերի վերոհիշյալ դրությամբ մենք հնարավորություն ունենք որոշելու, թե Արաբական խալիֆայության դրամական ընդհանուր եկամուտների մեջ Հայաստանի դրամական հարկը ինչ տոկոս էր կազմում: Ըստ Իբն-Հալդունի 775—787 թվականներին խալիֆայության դրամական եկամուտները տարեկան կազմում էին 412 020 000 դիրհեմ[5]: Իբն-Հալդունը, ինչպես քիչ առաջ տեսանք, այդ նույն ժամանակների Հայաստանից գանձվող հարկը հաշվում էր 13 000 000 դիրհեմ, որը կազմում էր խալիֆայության եկամուտի երեք տոկոսից ավելին: Իրերի այսպիսի վիճակը հսկայածավալ Արաբական խալիֆայության մեջ մտնող մասնատված, բաժան-բաժան եղած ու քաղաքական անկախությունը կորցրած փոքրիկ մի երկրի համար, ինչպիսին Հայաստանն էր, անշուշտ խիստ ծանր պետք է լիներ:

Արաբական հեղինակները, որոնք այնքան մանրամասնորեն

[1] Տե՛ս *Табари*, пер. П. К. Жузе, տե՛ս Институт истории и философии АН Азерб. ССР, фонд № 577, էջ 5:

[2] Տե՛ս Сборник материалов ..., հ. 31, էջ 11, հ. 32, էջ 11:

[3] Տե՛ս *Якуби*, Сборник материалов ..., հ. 32, էջ 59:

[4] Տե՛ս *Кудама*, Сборник материалов ..., հ. 32, էջ 29:

[5] Տե՛ս *Al. Kremer*, Culturgeschichte..., II Band, էջ 356—359:



են արտահայտվում հարկերի ու հարկային քաղաքականության մասին, երբեմն հարկադրված են լինում խոստովանելու, որ հպատակ երկրների ու ժողովուրդների համար շատ ծանր ու անտանելի էին հատկապես արաբների կողմից գանձվող ոչ պաշտոնական և օրենքով չսահմանված հարկերը: Այսպես, Ալ-Մուկադդասին խոսելով IX—X դարերում Արաբական խալիֆայության մասնատման և թուլացման շրջանում Ասորիքից, շրջակա երկրներից ու մի քանի խոշոր քաղաքներից հավաքվող հարկերի մասին, հաստատում է, որ «Հարկերը, որոնք մուսուլմանական օրենքներով չեն գրանցված՝ ծանր են»[1]: Սակայն արաբների կողմից նվաճված երկրների ոչ խալամական ժողովուրդների ճնշումն ու կեղեքումը շատ ավելի պատկերավոր ձևով արտահայտված է Յակուբիի մոտ, որն Օմար խալիֆի բերանով ուղղակի ասում է, որ «Մահմեդականներն ուտում են նրանց (նվաճվածներին), քանի իրենք կենդանի են, իսկ երբ մենք ու նրանք մեռնենք՝ մեր որդիները կուտեն նրանց (նվաճվածների) որդիներին՝ իրենց կենդանության ժամանակ»[2]: Իսկ մեկ ուրիշ հեղինակ, որի մասին խոսում է Իբն-Ֆաքիհը, հարց ու պատասխանի ձևով գուշակում է Հայաստանի ավերվելն ու մոտալուտ վախճանը, ասելով՝ «Այն երկիրը, որ բոլորից շուտ պետք է ամայացվի, դա Հայաստանն է: Նրան հարցրին՝ իսկ ինչն է նրան ամայացնելու, նա պատասխանեց. ձիերի սմբակները»[3]:

Հայաստանի ու հարևան երկրների համար Արաբական խալիֆայության տիրապետությունը և դրանից անմիջականորեն բխող բոլոր ծանր հետևանքները Իբն-Հաուքալը բացեիբաց անվանում է այդ վայրերի ազգաբնակչության «գլխին եկած թշվառություն և դժբախտություն»[4]: Արաբներն իրենց հպատակներին տանջելու, չարչարելու և խոշտանգելու համար հորինում և գործադրում էին նաև տանջանքի ու ստորացման ուրիշ ձևեր: Վերևում, օրինակ, պատմում է VIII դարի Հայաստանի կառավարիչ Մուսեի մասին, որը «...էր այր ժանտ և ապարատան և այսակիր. որ յանչափ շարժող այսոյն որ ի նմա՝ ի զբօսանել իւրում ի խաղս անարժան բարուցն՝ զմարդիկ կանգնէր փոխանակ մղղակի՝ նետաձիգս առնել ի նոսա ի վարժումն անձին իւրոյ, զոր առժամային հարեալ ոստակէր ի

[1] *Ал-Мукаддаси*, Православный палестинский сборник, стр. 835.

[2] Հ. Մանանդյան, *Ժողովրդական ապստամբությունները Հայաստանում արաբական տիրապետության դեմ*, էջ 5:

[3] *Ибн-Факих*, տե՛ս Сборник материалов ..., т, 31, стр. 9.

[4] *Ибн-Хаукал*, Сборник материалов ..., т. 38, стр. 100, Նաև Մ. Շահինյան, *Ճանապարհորդություն Սովետական Հայաստանում*, Երևան, 1952, стр. 409.

կենաց»[1]։ Իսկ նույն ժամանակների մեզ արդեն ծանոթ ոստիկան Աբու Ջաֆար ալ-Մանսուրը (Աբդուլա) իր մեկ անգամվա ասպատակությունների և հափշտակությունների ժամանակ, հենց միայն Քողինի, Մրենի և Թալինի շրջաններում սպանել էր տվել 709 և գերի տարել 1200 խեղճ ու անմեղ գյուղացիների[2]։ Արաբ հարստահարիչներն ազգաբնակչությանը մշտապես ահաբեկման ու տագնապի մեջ պահելու համար շատ հաճախ դիմում էին ամենասոսկ ու նենգամիտ գործողությունների։ Խոսելով Աբդուլ-Մելիք խալիֆի (685—705) զորավար Մահմեդի մասին, Ղևոնդը բերում է Հայաստանում նրա կատարած չարագործություններից մի դեպք։ Արաբ հրամանատարի զորամասերից մեկը գիշերելու պատրվակով հայտնվում է Բագրևանդ գյուղում և իջևանում ս. Գրիգոր վանքում։ Գիշերն արաբները խեղդամահ են անում յուրայիններից մեկին ու դյուժ փոսը։ Չարագործներն առավոտյան, այդ սպանության մեղքը բարդելով հայերի վրա, բանտարկել են տալիս բոլորին՝ փոքրից մինչև մեծ։ Այնուհետև, Մահմեդից հատուկ թույլտվություն ստանալով, արաբական հրոսակները «..ածեալ զամենեսեան արտաքս ի բանտէն տոռամբք կապանաց՝ նախ ծայրակոտոր առնէին զոտսն և զձեռս, և ապա զփայտէ կախեալ բառնային զկենդանութիւն նոցա»[3]։ Դրանից հետո նրանք հիմնահատակ ավերում են շրջակայքը և կողոպտում։

Արաբները հիմնականում հաստատվում էին Հայաստանի հարթավայրային շրջաններում, իսկ տեղացիներին աստիճանաբար քշում էին դեպի լեռները։ Այնպես որ լեռնային շրջաններն այս տեսակետից համեմատաբար քիչ էին տուժում, քան դաշտավայրերը։ Անասնապահությունը, իսկ դրա մեջ հատկապես ոչխարաբուծությունն ու ուխտապահությունը, որով ամենից շատ զբաղվում էին արաբները, ժամանակի ընթացքում խիստ կերպով քայքայեց երկրի ջրանցքների ու առուների սիստեմը, ոչնչացրեց այգիներն ու անդաստանները և զգալիորեն կրճատեց այգեգործությունն ու պտղաբուծությունը։ Երկրի այգեվեր ու ծառաստաններով հարուստ մասերը բազմահազար հոտերի անսիստեմ ու անխնա տեղաշարժերի պատճառով վեր էին ածվում անջրդի, խոպան ու անհրապույր տափաստանների։ Բուղայի արշավանքների ժամանակ հայերի հողերն արաբների կողմից բաժան-բաժան անելու մասին պատմելուց հետո, Թովմա Արծրունին ուղղակի գրում է, որ այն ժամանակ «յաւեր դարձան գեօղք եւ ագարակք եւ աւանք, ի բաց մերկացեալ զզարդ

1 Ղևոնդ, էջ 161—162։

2 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 67—68։

3 Ղևոնդ, էջ 20—21, Ստ. Տարոնեցի, էջ 123, Վարդան Բարձրբերդցի, էջ 98—99։



զբարեձեւութիւն, եւ ընդ աղզաբնակութեամբ քակեալ զանապատ բոյսք եւ տունկք որ ի վերայ երեսաց երկրի»[1]։ Այդ նույն բանը հաստատում է նաև IX—X դարերի հեղինակ Տաբարին, ասելով, որ Հայաստանի դաշտավայրերում ապրում են արաբները, իսկ հայերը քաշվում են դեպի բարձրադիր վայրերը, հետո ավելացնում է, որ արաբների՝ դեպի Հայաստան կատարած «Մշտական ներխուժումները հիմնավորապես ոչնչացրել են նրա բուսականությունը»[2]։

Երկրի անտեսությանը լուրջ կերպով վնասում էին նաև պատերազմները, որոնք ոչ միայն սահմանափակում էին առևտուրն ու փոխանակությունը, անապահով դարձնում երթևեկությունը, կասեցնում առևտրի ու արհեստների զարգացումը, այլև ամայացնում ու անմարդաբնակ էին դարձնում երկրի բերրի ու մարդաշատ ամբողջ շրջաններ։ Ասորական հեղինակ Դիոնիսիոս Թել Մահարցին 716—717 թվականներին Մասլամայի[3] գլխավորությամբ դեպի Արածանիի հովիտն ու Ներքին Հայաստան կատարած արշավանքի կապակցությամբ, անդրադառնալով ոռնատակ արված հայկական տերիտորիաներին, ասում է, որ այդ «Երկրամասերը, որոնք շատ բնակչություն ունեին, խաղողի, հացահատիկի, պտղատու այգիների ընդարձակ տարածություններ, արշավանքից հետո ամայացան ու բնակչությունից դրկվեցին»[4]։ Այս նույն միտքը հաստատում է նաև Արաբական խալիֆայության ամենանշանավոր հեղինակներից մեկը՝ Աբու-Յուսուֆը։ Խոսելով Տիգրիսի և Եփրատի հովիտներում եղած խոպան հողերի մասին, նա նշում է, որ այդ հողերն առաջներում մշակվելիս են եղել, բայց արդեն հարյուր տարի է, ինչ դրանք լքվել են ու այլևս չեն մշակվում[5]։ Բայց չէ՞ որ արաբական հրոսակախմբերը միայն Ներքին Հայաստանով չէին անցնում։ Նրանք ասպատակում էին ողջ երկիրը։ Այս երևույթի հետևանքներն ամբողջովին հասկանալի կլինեն, եթե ի նկատի ունենանք Ֆ. Էնգելսի այն միտքը, թե «Հողի արհեստական պարարտացումը, որը ջրանցքների քայքայման դեպքում ամբողջապես ընդհատվում է, բացատրում է առանց այդ էլ հետաքրքիր այն փաստը, որ երբեմնի սքանչելի մշակված ամբողջ հողամասերը (Պալմիրա, Պետրա, Եմենի ավերակները և անթիվ անհամար երկրամասեր Եգիպտոսում, Պարս-

1 Թովմա Արծրունի, էջ 170։

2 *Табари*, пер. П. К. Жузе, Институт истории и философии АН Азерб. ССР, фонд № 577, стр. 6.

3 Նույն ինքը՝ Մասլամա իբն-Աբդուլ Մելիք, որը Արմենիայի ոստիկան է եղել 725—729 թվականներին։

4 *Denys de Tell-Mahre*, p. 12։

5 Տե՛ս *Абу-Юсуф*, пер. А. Э. Шмидта, էջ 64—65։

կաստանում և Հնդկաստանում) այժմ անապատ են և ամայի, դրանով է բացատրվում նաև այն փաստը, որ բավական էր միայն մի ավերիչ պատերազմ, որի հետևանքով երկիրն ամբողջ հարյուրավոր տարիներով զրկվեր իր ազգաբնակչությունից և իր ամբողջ քաղաքակրթությունից»[1]: Իսկ Հայաստանն արաբական տիրապետության ամբողջ ընթացքում ոչ թե մեկ անգամ, այլ անընդհատ էր ենթարկվում ավերիչ հարձակումների ու տակնուվրայությունների, հետևաբար պարզ է, թե որքան ծանր և որքան կորստաբեր պետք է լինեին այդ արշավանքների ու պատերազմների հետևանքները Հայաստանի ու նրա ազգաբնակչության համար:

Այրունահեղ ու ավերիչ պատերազմները և բնակչության նկատմամբ կիրառվող անսահմանորեն դաժան բռնություններն ու երկրի տնտեսական քայքայումը զուգակցվում էին նաև բնական ու տարերային աղետներով՝ երաշտով, ջրհեղեղով, համաճարակային հիվանդություններով ու սովի արհավիրքներով, որոնց հիշատակությունները պահպանվել են միջնադարյան հայ և օտար հեղինակների մոտ[2]:

Հայաստանում ստեղծված տնտեսական և քաղաքական միանգամայն անապահով վիճակը ազնվականության և բնակչության որոշ մասին հարկադրում էր ապաստան որոնել օտար երկրներում: Մարդիկ երբեմն մեծամեծ խմբերով, թողած ամեն ինչ, հալածանքներից ու ոչնչացումից փրկվելու համար դիմում էին օտարությունս: Ղևոնդը այդ մասին ուղղակի գրում է. «Եւ բազումք ինքնակամութեամբ թողուին զհօտս և զանդեայս, և գնային փախստական վասն ոչ բերելոյ զծանրութիւն աղետիցն»[3]: Փախչողների մեջ «...էին ոմանք ի նախարարացն Հայոց, որք մերժեալք լքին զժառանգութիւնս իւրեանց և փախստեայ անկան յաշխարհն Յունաց, ապաւինեալք առ կայսրն Կոստանդին»[4]: Իսկ Մովսես Կաղանկատվացին, խոսելով Հարուն ալ-Ռաշիդի ժամանակ Հայաստանում կատարված չարագործությունների մասին, ասում է, թե «...առ նեղութիւն անչափ հասոյց աշխարհի և վասն այնր բազում գաւառք Հայոց փախեան ի Հոռոմս»[5]: Ղևոնդը մեկ այլ առիթով պատմում է օտար երկրներ գաղթող հայերի 12 000 հոգուց կազմված մի մեծ խմբի մասին, որին ա-

[1] Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Հատընտիր նամակներ, հ. 1-ին, Երևան, 1936, էջ 91—92:

[2] Տե՛ս Մ. Կաղանկատվացի, էջ 258, 267, Denys de Tell-Mahre, էջ 54, Սամվել Անեցի, էջ 91 և այլն:

[3] Ղևոնդ, էջ 168:

[4] Նույն տեղում, էջ 133:

[5] Մովսես Կաղանկատվացի, էջ 234:



ջնորդում էին Շապուհ Ամատունին և նրա որդին՝ Համամը: Ղևոնդի մոտ այդ մասին ասված է. «Իսկ ապա իբրև այնպես թափուրք ի առացուածոց մնային, մերկ և բոկք և սովամահք, և ոչ զտանէին ապրուստ անձանց դէմ եդեալ տարադէմ գնային փախստեայ յաշխարհն Յունաց. զորոց ասեն լինել մարդկանն աւելի քան ԺԲՌ արանց հանդերձ կանամբք և մանկտեաւ. որոց առաջնորդք Շապուհ ի տոհմէ Ամատունեաց և Համամ որդի նորա և այլ ի նախարարաց Հայոց և նոցին հնծելոց: Եւ անօրէն չարաշուք թշնամւոյն հետամուտ եղեալ զօրու իւրով զկնի փախստէից հասանէր ի սահմանն Վրաց ի գաւառն Կող: Ընդ որում մարտ եղեալ փախստական առնէին և զոմանս սատակէին. և ինքեանք անցանէին ընդ գետն Ակամսիս, որ ի կողմանս Տայոց բղխեալ՝ երթայր զհիւսիսոյ արևմտից, անցանելով ընդ եգեր մտանէ ի Պոնտոս»[1]: Ինչպես տեսնում ենք, հայերի մեծամեծ խմբեր արտագաղթում էին նաև դեպի Արևմտյան Վրաստան, որտեղ նրանք դեռևս VI—VII դարերից հավանաբար գաղթավայրեր ունեին: Իսկ Արևելյան Վրաստանում, Յուրտավում այդ նույն ժամանակ գոյություն ուներ հայկական առանձին եպիսկոպոսություն[2]: Հայերի արտագաղթը միայն երբեմն էր խոչընդոտվում արաբների կողմից, իսկ արաբական իշխանություններն ընդհանրապես դեմ չէին այդ երևույթին: Դեռ ավելին, հայերին իրենց երկրից արտաքսելու և նրանց տեղում արաբ վերաբնակիչների տեղավորելու ծրագիրը, ինչպես ասվել է, արաբների մոտ հղացած է եղել դեռևս VII դարի կեսերին: Հայագետ Ա. Ալպոյաճյանը, վկայակոչելով 693 թվականի արաբա-բյուզանդական հաշտության պայմանագիրը, մատնանշում է, որ այդ պայմանագրով բյուզանդացիները հանձն էին առնում արաբներին վերադարձվող հայկական շրջանների ազգաբնակչությանը գաղթեցնել արևմուտք, որպեսզի արաբները կարողանան նրանց տեղերում վերաբնակեցնել իրենց դավանակիցներին ու ցեղակիցներին[3]: Երկրից հեռացող ֆեոդալների ու ժողովրդի ունեցվածքն ամբողջապես հափշտակում էին արաբ իշխանավորներն ու զինվորականները:

Ամրապնդելով իրենց ռազմա-տնտեսական դիրքերը Հայաստանում, արաբներն սկսում էին աստիճանաբար զրկել նաև հայ

[1] Ղևոնդ, էջ 168, Ստ. Ասողիկ, էջ 134: Հ. Մանանդյանն այդ դեպքերը հավանականությամբ վերագրում է 791 թվականին (տե՛ս նրա ժողովրդական ապստամբությունները Հայաստանում..., էջ 21):

[2] Տե՛ս Ուխտանես եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, հատվ. երկրորդ, Վաղարշապատ, 1871, էջ 32—33:

[3] Տե՛ս Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ գաղթականության, հ. I, Գահիրե, 1941, էջ 288:

ֆեոդալներին իրենց ժառանգական-տիրակալական իրավունքներից։ Նրանք նոր հողամասեր և արտոնություններ տալիս էին միայն հայկական իշխող դասակարգի այն ներկայացուցիչներին, որոնք այս կամ այն կերպ համակերպվում էին ստեղծված պայմանների հետ։ Արաբներն այդ անում էին միանգամայն ինքնակամորեն, հաշվի չառնելով հնից պահպանված ժառանգական իրավունքն ու աղնվականական ծագումը։ Սակայն, վախենալով ժողովրդի ընդհանուր դժգոհությունից և օրավուր մեծացող ցասումից, արաբական իշխանությունները, մարդկանց բորբոքված կրքերը մեղմացնելու համար, երբեմն դիմում էին ձևական ու ժամանակավոր մեղմության։ Նախիջևանի ու Խրամի դեպքերից հետո, օրինակ, նույն Վալիդ I խալիֆի հրամանով, Հայաստանից հեռացվում է Մուհամեդ իբն-Օքբան, նրա փոխարեն ոստիկան է նշանակվում Աբդուլ-Ազիզը, որը միայն արտաքնապես, իր նախորդների համեմատությամբ, փոքր ինչ մեղմ ու հանդուրժող էր հանդես հայերը։ Նա իր պաշտոնին անցնելուց և երկրի հուզումնալից վիճակին ծանոթանալուց հետո ժողովրդի հետ սկսում է մեղմ ու հանգիստ վարվել։ Գուցե դրա համար է, որ Ղևոնդը նրան անվանում է խորագետ ու հեռատես անձնավորություն, որը «...իբրև հաստատեցաւ յիշխանութեանն՝ գրէր հրովարտակ առ նախարարս Հայոց, և հաւանեցուցանէր զնոսա դառնալ յիւրանցական աշխարհս. և տայր նոցա գիր երդմամբ չափ ըստ սովորութեանն իւրեանց»[1]։ Նրա այդ հրավերին, պետք է ասել, արձագանքում են շատերը, որոնք այժմ թողնելով բյուզանդական կողմը՝ կրկին վերադառնում են Արևելյան Հայաստան։ Խաղաղ աշխատանքի և շինարարության առաջին օրինակը ցույց է տալիս ինքը՝ ոստիկանը։ Նա առաջին հերթին շինարարական մեծ աշխատանքներ է սկսում Դվինում, Նախիջևանում և Հայաստանի մյուս քաղաքներում։ Նրա օրոք վերանորոգվում և է՛լ ավելի են ամրացվում Դվինի շրջապատները։ Միջնաբերդի շուրջը փորվում է մեծ խրամատ, որն անհրաժեշտության դեպքում կարող էր ջրով լցվել և ավելի ապահով դարձնել նրա պաշտպանությունը[2] և այլն։ Աբդուլ-Ազիզի նմանօրինակ աշխատանքներն ինքնըստինքյան ցույց են տալիս, որ արաբները Հայաստանում իրենց այնքան էլ ապահով չէին զգում, որովհետև այդ աշխատանքները փաստորեն կրում էին ռազմական բնույթ և արվում էին միայն և միայն արաբական իշխանությունների դիրքերը նվաճված Հայաստանում ամրապնդելու նպատակով։ Աբդուլ-Ազիզի իշխանության տարիներին Հայաստանում ստեղծված խաղաղ ժամանակաշրջանը չէր համապատասխանում Արաբական խալիֆայության վարած հարստահարման, կողոպուտի, ավերածության ու գերեվարության ընդհանուր քաղաքականությանը, դրա համար էլ այն ուներ լոկ ժամանակավոր բնույթ։

Որպես Արաբական խալիֆայությանը ենթակա երկիր, Հայաստանում անխուսափելի էր նաև արաբական լեզվի ու մշակույթի որոշ ազդեցությունը։ Այդ հանգամանքն առանձնապես նկատելի էր իշխող դասակարգի ներկայացուցիչների շրջանում։ Հայ ազնվականության որոշ տարրեր, այդ ժամանակ նույնիսկ ընդունում էին իսլամը, ամուսնական կապեր հաստատում արաբների հետ, ենթարկվում նրանց նիստուկացին, կրում արաբական անուններ, հագնում արաբական զգեստներ և այլն։ Այդպիսի երևույթներն, անշուշտ, խրախուսվում էին արաբների կողմից։ Սակայն, ինչպես երևում է սկզբնաղբյուրների վկայություններից, այդ կարգի երևույթներն այնուամենայնիվ չեն կարողացել խախտել Հայաստանի ու հայ ժողովրդի ազգային ինքնուրույնությունը և այդ ժամանակաշրջանի Հայաստանում հայերը միշտ էլ կազմել են մեծամասնություն և հարատած են մնացել ազգային լեզվին ու մշակույթին։ Հայերի ու Անդրկովկասի ժողովուրդների՝ ազգային ոդու և կեցվածքի նկատմամբ ունեցած հաստատակամության և հավատարմության մասին խոստովանություններ ունեն նաև արաբ հեղինակները[1]։ Թեև այդ ժամանակ պետական ու պաշտոնական լեզուն Հայաստանում համարվում էր արաբերենը, սակայն նրա հետ մեկտեղ գործածական էր նաև պարսկերեն լեզուն։ Այդ մասին եղած վկայություններից ամենահետաքրքիրը Իբն-Հաուքալի տեղեկություններն են։ Նա թեև Հայաստանի ու Աղվանքի բնակչության մեծամասնության լեզուն հայտարարում է արաբերենն ու պարսկերենը, բայց հենց տեղն ու տեղն էլ ժխտում է իր ասածը, հայտարարելով, որ արաբերեն խոսում են քչերը, իսկ պարսկերեն խոսողներն էլ արաբերեն չեն հասկանում։ Եվ, վերջապես, հեղինակն իր ասածներն ամփոփում է նրանով, որ արաբերեն լեզուն հիմնականում տարածված է առևտրականների ու կալվածատերերի շրջանում, մինչդեռ բնակչությունը հաղորդակցվում է մայրենի լեզվով։ Ավելորդ չենք համարում մեջ բերելու Իբն-Հաուքալի այդ խիստ ուշագրավ հաղորդումն ամբողջությամբ. «Ինչ վերաբերում է Աղվանքի բնակիչների և Հայաստանի բնակչության մեծամասնության լեզվին,—ասում է նա,—դա պարսկերենն ու արաբերենն է, բայց քչերն են խոսում արաբերեն, բացի այդ, պարսկերեն խոսողներն արաբերեն չեն հասկանում։ Ջուտ արաբերեն են

[1] Ղևոնդ, էջ 35—36։

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 36—37, Ստ. Ասողիկ, էջ 125։

[1] Տե՛ս *Ал-Мукаддаси*, Сборник материалов..., т. 38, էջ 6։

խոսում վաճառականները և կալվածատերերը, իսկ Հայաստանի և մոտիկ երկրների ծայրամասերում ագգաբնակչության շատ խմբերի համար գոյություն ունեն այլ լեզուներ, ինչպես հայերենը Դվինի և նրա շրջակայքի բնակիչների համար»[1]: Դվինում և նրա շրջակայքում հայոց լեզվի գերիշխելու հանգամանքը հաստատում են նաև Ալ-Մուկադդասին[2] և Ալ-Իստախրին[3]:

Որպես գյուղատնտեսական երկիր, Հայաստանում VII—IX դարերում նույնպես բնակչության հիմնական զբաղմունքը երկրագործությունը, այգեգործությունն ու անասնապահությունն էր:

Արաբական խալիֆայության տիրապետության ժամանակաշրջանում չնայած նյութական և իրավական ծանր պայմաններին, հայ աշխատավորության հիմնական զանգվածները չէին կորվում իրենց առօրյա զբաղմունքներից: Հայ ժողովրդի աշխատավորության տոկունության ու համբերատարության մասին հաճախ դրվատանքի խոսքեր են ասում նույնիսկ արաբ հեղինակները: Այսպես, Իբն-Հաուքալը Հայաստանի, Աղվանքի և Ատրպատականի մասին գրում է, որ «Նրանց բնակիչների մեծ մասը առողջ, անբիծ և ապրուստի միջոցներ գտնելու հետամուտ մարդիկ են: Նրանք համբերությամբ տանում են այժմ իրենց գլխին թափվող աղետներն ու դժբախտությունները»[4]: Նույն ժամանակների մեկ այլ հեղինակ՝ Ալ-Մուկադդասին Արաքսի հովտի և Մեծ ու Փոքր Մասիսների շուրջն ընկած այգիներն անվանում է դրախտային: Այնտեղ, ասում է նա, «...օգտակար ապրանքներ, մեծ քաղաքներ, ջրառատ գետեր, գեղեցիկ գյուղեր, զարմանալի առանձնահատկություններ կան: Նրա մրգերը համեղ են: Այնտեղ ապրում են ուղղափառ մարդիկ, որոնք ընդունում են ավանդությունները և պերճախոս ու պատվարժան են»: «Միրգն այդտեղ այնքան առատ է, որ այն մարդիկ տալիս էին առանց հաշվելու և առանց կշռելու»[5]:

Հայաստանում, ինչպես հայտնի է, դեռ վաղ ժամանակներից երկրագործության հիմնական ճյուղերից մեկը եղել է հացահատիկային կուլտուրաների և առանձնապես ցորենի ու գարու մշակությունը: Ինչպես երևում է սկզբնաղբյուրների տեղեկություններից, արաբական տիրապետության ժամանակաշրջանում ևս հացահատիկի արտադրությունը գրավում էր գյուղատնտեսության կարևորագույն տեղերից մեկը: Հացահատիկը կենսական անհրաժեշտություն էր ներկայացնում ոչ միայն երկրի բնակչության համար, նրա կարիքը մեծ չափով ղգում էին նաև արաբները: Այդ է պատճառը, որ, ինչպես մեկ անգամ արդեն ասվել է, 652 թվականի հայ-արաբական պայմանագրում հատուկ կետով հարկերի դիմաց հայերին պարտավորվում էր արաբներին հացահատիկ տալ[1]: Հայաստանից հացահատիկի արտահանության մասին վկայություններ ունեն նաև Դիոնեխիոս Թել Մահարցին, Բալաձորին և ուրիշները[2]:

Հայաստանի բնակլիմայական նպաստավոր պայմանները և հողի արգավանդությունը շատ մեծ հնարավորություններ են տվել բնակչությանը նաև այգեգործությամբ և պտղաբուծությամբ զբաղվելու համար: Արաբական տիրապետության ժամանակաշրջանի Հայաստանում այգեգործության և պտղաբուծության կայության մասին ամենահին տեղեկություններից մեկը ասորի պատմիչ Դիոնեխիոս Թել Մահարցու հաղորդումն է: Խոսելով 716—717 թվականների արաբական զորավար Մասլամայի արշավանքների մասին, նա հաստատում է որ Արածանիի հովիտը, Ներքին Հայաստանն ու Մելիտինեի շրջանը նախքան արաբների ներխուժումը աչքի էին ընկնում ոչ միայն խիտ բնակչությամբ, այլև հացահատիկների ցանքերով, խաղողի ընդարձակ ու հիասքանչ այգիներով, գեղեցիկ և պտղատու ծառաստաններով[3]: Ասորի հեղինակի հիշատակությունները հաստատվում են նաև արաբ հեղինակների կողմից: Ալ-Մուկադդասին, օրինակ, Հայաստանի, Ատրպատականի և Աղվանքի մասին ասում է, որ «Այդ երկրամասը մեծ ու գեղեցիկ է, այնտեղ շատ են մրգերն ու խաղողը... նրանց մրգերը համեղ են»[4]:

Գյուղատնտեսության մյուս հիմնական ճյուղը Հայաստանում անասնապահությունն էր: Հայաստանում այդ ժամանակ տարածված էր հիմնականում մանր և խոշոր եղջերավոր անասուններ պահելը, խոզաբուծությունը, ձիաբուծությունը: Հայերը պահում էին նաև ջորի և ուղտ: Իբն-Ֆաքիհը վկայում է, որ «Հայաստանի ամենամեծ կենդանիները ոչխարներն ու եղներն են..., իսկ նրանց ձիերը ցածրահասակ են: Ճիշտ այդպես փոքր են նաև ուղտերը, նրանց կրծքերը քիչ է մնում գետնին կպչեն...»[5]: Արաբ հեղինակներից Իբն-Հաուքալը մեծ գովեստով է արտահայտվում Հայաստանի ջորի-

[1] Ибн-Хаукал, Сборник материалов..., т. 38, стр. 6.
[2] Տե՛ս նույն տեղը, էջ 12:
[3] Տե՛ս Ал-Истахри, Сборник материалов..., т. 29, էջ 29, П. К. Жузе, Арабские племена в Закавказье..., фонд № 507, էջ 15:
[4] Ибн-Хаукал, Сборник материалов..., т. 38, стр. 100.
[5] Ал-Мукаддаси, Сборник..., т. 38, стр. 6.



[1] Տե՛ս Սեբեոս, էջ 140:
[2] Տե՛ս Denys de Tell-Mahre, էջ 12:
[3] Տե՛ս նույն տեղը:
[4] Ал-Мукаддаси, Сборник материалов..., т. 38, стр. 5—6.
[5] Ибн-Факих, Сборник материалов..., т. 31, стр. 33.

ների մասին, որոնք իրենց դիմացկունությամբ և ցեղական հատկանիշներով հայանի էին նաև նրա սահմաններից հեռու և բարձր էին գնահատվում արտասահմանյան շուկաներում: «Ջավազանից, Արմենիայի եկրամասերից ու Ատրպատականից,— ասում է նա,— գնալի Խորասան, Միջագետք, Ասորիք և մյուս երկրներն են արտահանվում հիանալի ջորիներ, որոնք աչքի են ընկնում իրենց ցեղականությամբ, առողջությամբ, ամրությամբ և դիմացկունությամբ: Նրանց մասին հիշատակելու անհրաժեշտություն չկա, որովհետև շատ հայտնի են»[1]: Ձիեր, ջորիներ, ուղտեր պահելն ու բազմացնելը բնակչության համար տնտեսական նշանակությունից բացի ուներ նաև պետական ու ռազմական կարևոր նշանակություն: Հեծյալ զորամասեր կազմելու, ինչպես նաև զինամթերքների, պարենամթերքների և պատերազմական սարք ու կարգի փոխադրումներն առանց հիշյալ կենդանիների հնարավոր չէր: Հայաստանում անասնապահությունը զարգացած լինելու և կենդանական աշխարհի բազմազանության մասին մենք ունենք նաև այլ տեղեկություններ: Իբն-Ֆաքիհն իր հաղորդումների մեջ վկայակոչում է Ալ-Յակուբիին, որը, երկար ժամանակ ապրելով Հայաստանում, հաստատում է, որ ինքը «...չի տեսել ուրիշ ավելի հարուստ և անասունների քանակով ավելի նշանավոր երկիր, ինչպիսին Հայաստանն է»[2]:

Սակայն արաբական տիրապետության շրջանում մեծապես տուժեց Հայաստանի անասնապահության մի շատ կարևոր ու արդյունավետ ճյուղը՝ խոզաբուծությունը, որն ըստ երևույթին նախքան արաբական նվաճումը, անասնապահության մեջ գրավում էր կարևոր տեղ: Անասնապահության այդ ճյուղը Հայաստանում արաբների օրոք զգալիորեն տուժեց ու հետ մղվեց: Խոզն իսլամի կրոնով համարվում էր պիղծ կենդանի, իսկ խոզաբուծությունը՝ անհանդուրժելի զբաղմունք: Դրա համար էլ անասնապահության հիշյալ ճյուղի մասին արաբական հեղինակներն ընդհանրապես հարկ չեն համարում խոսել: Սրանց հակառակ, խոզաբուծության առկայությունը Հայաստանում հաստատվում է հայ պատմիչների վկայություններով, որոնք, դառնությամբ արձանագրելով անասնապահության այդ խիստ օգտակար ճյուղի ոչնչացումը Եզիդ III խալիֆի կողմից (իշխել է վեց ամիս՝ 744 թ.), նրան ուղղակի անվանում են խոզապան, որը «...ի գլուխ մոլութեանն հասեալ՝ տայր հրաման խոզապանութեան և ջնջէր յերկրէ զբազմութիւն անսնոցն արօտական խոզից»[1]: Ղևոնդի վկայությունը հաստատում են նաև հայ մյուս հեղինակները[2]:

Խոզաբուծության նկատմամբ արաբների անհանդուրժողությունը չի կարելի բացատրել միայն կրոնական տեսակետից: Խոզի միսը իր հատկություններով հարավում, շոգ կլիմայի պայմաններում ապրող արաբների համար օգտակար լինել չէր կարող: Այդ է պատճառը, որ արաբներն զբաղվում էին հիմնականում ոչխարաբուծությամբ: Հայաստանում վերաբնակեցված արաբները նույնպես իրենց հետ բերել էին անասնապահության հիշյալ ճյուղը, որը նրանք ժառանգել էին իրենց նախնիներից: Հասկանալի է, որ այսպիսի պայմաններում Հայաստանում ոչխարաբուծությամբ զբաղվող արաբներին խոզաբուծության առկայությունը տնտեսապես վնասում էր: Դրա համար էլ արաբները, օգտվելով իրենց իրավունքներից, Հայաստանում ոչնչացնում էին խոզաբուծությունը:

Հայաստանի մեծ ու փոքր գետերում, բարձրադիր և վճիտ լճերում շատ էին նաև համեղ ու աննդարար ձկները: Հաճելի զբաղմունք լինելուց և երկրի բնակչության սնունդը բավարարելուց բացի ձկնորսությունն ուներ նաև տնտեսական նշանակություն: Հայաստանի ձկնատեսակներից մի քանիսը բարձր էին գնահատվում նաև հարևան երկրներում և արտահանվող մթերքների մեջ մեծ համբավ ունեին:

Կուր և Արաքս գետերում ապրող ձկնատեսակներից արաբ հեղինակները հիշատակում են թառափը (օսետրինա), ծովատառեխը (սելդ), պերկեսը (օկուն) և շամային, ապա նաև արաբական անվանումներով ազ-զերաթի և իշուբե ձկները: Արաքսի և նրա ձկնատատության մասին հետաքրքիր են Իբն-Ֆաքիհի տեղեկությունները: «Արաքսը,— ասում է նա,— հետաքրքիր գետ է: Նրանում կան ձկան տարբեր տեսակներ: Այնտեղ ապրում են շուրմախի (շամայի), որը ուրիշ ոչ մի գետում չի ապրում: Տարվա որոշակի ժամանակներում այստեղ հանդիպում են նաև ծովային ձկների խոշոր տեսակներ, որոնք երևում են պարբերաբար: Դրանք են, օրինակ, թառափը, ծովատառեխը և պերկեսը...»[3]: Իսկ Իբն-Հաուքալը, հաստատելով նախորդ հեղինակի ասածները, վկայում է, որ Արաքսի և Կուրի ձկների որոշ տեսակները շատ համեղ են և լավ ընդունելություն են գտնում դրսի շուկաներում: Իբն-Հաուքալի մոտ ասվում է այսպես. «...Կուրում կա մի ձուկ, որը հայտնի է «սերմախի» (նույն շամա-

[1] *Ибн-Хаукал*, Сборник..., т. 38, стр. 97.

[2] Նույն տեղը, հ. 31, էջ 23:

[1] Ղևոնդ, *էջ 100*:

[2] *Տե՛ս* Թովմա Արծրունի, *էջ 116—117*, Ստ. Ասողիկ, *էջ 127—128*, Սամվել Անեցի, *էջ 87*:

[3] *Ибн-Факих*, Сборник..., т. 31, стр. 37.

*յին) անունով։ Նրանից կա նաև Արաքս գետում, Վրաստանում և ուրիշ տեղերում։ Շնորհիվ իր դուրալիութեանն ու համին այդ ձուկը արտահանվում է Արղաբիլ, Միջագետք՝ Ռեյ։ Կուր և Արաքս գետերում կան նաև «ազ-պերաքի» և «իշուբե»»[1]։*

*Հայաստանի լճերում ապրող ձկնատեսակներից հիշատակվում է միայն տառեխը, որը ապր դրած վիճակում վաճառքի էր հանվում ոչ միայն տեղական, այլ նաև Միջագետքի, Ասորիքի և այլ վայրերի շուկաներում։ Վանա լճի մասին խոսելիս Իբն-Հաուքալը ասում է, որ «...այնտեղ որսում են ամենամեծ, համարյա թզաչափ, մի տեսակ ձուկ, որը կոչվում է «տառեխ»։ Այն ապն են դնում և տանում Միջագետք, Մոսուլ, Ռաքքա, Խառան, Հալեպ և սահմանամերձ այլ վայրեր»[2]։ Տառեխը, ըստ Իբն-ալ-Ասիրի, հրաշալիք է[3]։ Ձկան որսը Վանա լճում այնքան առատ ու արդյունավետ է եղել, որ այն գրավել է նաև արաբների ուշադրությունը՝ դեռևս նրանց առաջին ներխուժումների ժամանակ։ Սակայն սկզբում արաբները չէին համարձակվում դիպչելու Վանա լճից օգտվելու հանրային իրավունքին և ավանդական սովորություններին։ Բալաձորին, օրինակ, խոսելով Հաբիբ իբն-Մասլամայի 654—656 թվականների արշավանքների մասին, ասում է, որ «Ինչ վերաբերում է Տառեխի ծովին, ապա նա (Հաբիբ իբն-Մասլաման—Ս. Մ.-Բ.) ձեռք չտվեց նրան և այն մնաց ազատ, մինչև որ Միջագետքի և Արմենիայի կառավարիչ նշանակվեց Մուհամեդ իբն-Մրվան իբն-Հաքամը»[4]։ Այդ ժամանակվանից սկսած վիճակը միանգամայն փոխվում է։ Արաբական խալիֆայության տիրապետության հաստատումից հետո արաբական իշխանավորներն ու կառավարիչներն սկսեցին հատուկ հսկողություն և մենաշնորհային իրավունքներ սահմանել Վանա լճի նկատմամբ։ Այս օրենքի հիմնադիրը եղավ հենց ինքը՝ Մուհամեդ իբն-Մրվանը, որը, ինչպես այնուհետև հաստատում են Բալաձորին և Իբն-Ֆաքիհը, սեփականացնելով Վանա լճի ամբողջ որսի իրավունքը, նկատուրը վաճառում և մեծ օգուտներ էր ստանում[5]։ «Տառեխի Ծովը,—ասում է Իբն-Ֆաքիհը,—ոչ ոքի չէր պատկանում, մինչև որ Միջագետքն ու Արմենիան չնվաճեց Մուհամեդ իբն-Մրվան իբն-Հաքամը։ Նա իր ձեռքը վերցրեց նրանում կատարվող ձկան որսը, իսկ հետո այդ բանն անցավ Մրվան-իբն-Մուհամեդ իբն-Մրվանին, իսկ վերջինից*

[1] *Տե՛ս Ибн-Хаукал*, Сборник..., т. 38, էջ 87։
[2] *Նույն տեղը*, էջ 87. *Ал-Истахри*, *նույն տեղում*, հ. 29, էջ 28։
[3] *Տե՛ս* Իբն ալ-Ասիր, *թարգմ. Կ. Յուրյուձյանի*, էջ 70։
[4] *Баладзори*, Книга завоевания стран, стр. 10, Իբն Ալ-ասիր, стр. 69.
[5] *Տե՛ս նույն տեղը*։



*այդ խլվեց ուժով»*[1]։ *Հասկանալի է, որ Արմենիայի ոստիկանից այդ իրավունքը խլել կարող էին միայն վերադաս իշխանությունները։ Ուրեմն, պետք է ենթադրել, որ Վանա լիճը մի այնպիսի նկատառելի շրջան էր, որ արաբական իշխանությունները չէին կարող հանդուրժել նրա բարիքների յուրացումը միայն մեկի կողմից։*

*Արաբական սկզբնաղբյուրներին ծանոթ է նաև Ուրմիա կամ, ինչպես դրանց հեղինակները երբեմն անվանում են, Կապուտան լիճը*[2]։ *Սակայն նրանք շեշտում են միայն Ուրմիայի նշանակությունը Արմենիայի արևելյան շրջաններում նավարկության և բեռների փոխադրությունների տեսակետից, իսկ ձկնորսության համար լիճը դեր չուներ կատարելու, քանի որ նրանում կենդանություն չկա*[3]։

*VII—IX դարերին վերաբերող աղբյուրներում զարմանալիորեն ոչինչ չի հաղորդվում ձկնորսության մեկ այլ կարևոր վայրի՝ Սևանա լճի և ոչ պակաս հռչակավոր իշխան ձկան մասին։ Այդ լռությունը բացատրվում է նրանով, որ Սևանը Վանա լճի համեմատությամբ հեռու էր գտնվում Միջագետքից և արաբական շրջաններից, իսկ իշխանը, քանի որ ավելի հարգի էր թարմ վիճակում, չէր արտահանվում և դրսում նրա մասին կարող էին տեղեկություն չունենալ։*

*VII—VIII դարերից սկսած՝ Արաբական խալիֆայության ռազմա-քաղաքական հզորացման ժամանակաշրջանում արաբների վարած քաղաքականությունն ու արաբա-բյուզանդական ավերիչ պատերազմները խիստ բացասաբար ազդեցին Հայաստանի տնտեսական կյանքի վրա։ Ակադեմիկոս Հ. Մանանդյանը, անդրադառնալով ուսումնասիրվող ժամանակաշրջանի Հայաստանի տնտեսական կյանքի, առևտրի ու քաղաքների խնդրին, միանգամայն իրավացի կերպով նշում է, որ «Ծանր ցնցումների հետևանքները, որոնք ապրեց Հայաստանը VIII դարում, եղան կուլտուրայի անընդհատ անկումը, ինչպես նաև Հայաստանի տնտեսական կյանքի լճացումն ու անգամ հետադիմելը, որոնք ուղեկցվում էին դրամա-տնտեսական հարաբերությունների խիստ թուլացումով»*[4]։ *Հ. Մանանդյանը երկրի տնտեսական կյանքի թուլացումն ու անկումը, քաղաքական ցնցումներից բացի, կապում է նաև միջազգային ցամաքային առևտրական հանապարհների փոփոխվելու հետ։*

*Արաբական խալիֆայության ասպարեզ գալով միջազգային առևտուրը կատարվում էր ոչ թե Հայաստանի և Սև ծովի նավահան-*

[1] *Ибн-Факих*, *տե՛ս* Сборник материалов..., т. 31, стр. 25.
[2] *Տե՛ս Ибн-Хаукал*, *նույն տեղում*, հ. 38, էջ 96։
[3] *Տե՛ս նույն տեղը*։
[4] *А. Манандян*, О торговле и городах Армении, Ереван, 1954, стр. 192.



1287—13

դիստների, այլ Չինաստանի, Հնդկաստանի, Իսպանիայի և Եվրոպայի վրայով: Միջազգային առևտրական ճանապարհների փոփոխման և դրա հետևանքով առևտրի ընդհանուր մակարդակի անկման մասին խոսում է նաև Կ. Մարքսը, 1853 թվականի իր նամակներից մեկում: «Մուհամեդի ժամանակներից ի վեր,— ասում է նա,— Եվրոպայից դեպի Ասիա տանող առևտրական ճանապարհը զգալիորեն փոխվեց և արաբական քաղաքները, որոնք նշանակալից մասնակցություն ունեին Հնդկաստանի և այլնի հետ եղած առևտրում, այն ժամանակ գտնվում էին առևտրական տեսակետից անկման վիճակում»[1]: Մարքսի դիտողությունները նույնքան ճիշտ ու տեղին են նաև հայկական քաղաքների նկատմամբ: Հայաստանի քաղաքները, կորցնելով իրենց նախկին տեսքը, արաբական տիրապետության շրջանում վեր էին ածվում լոկ ռազմա-վարչական կենտրոնների, որտեղ անընդհատ աճում էին արաբ վերաբնակիչներն ու պատերազմի վնասները:

Սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը, սակայն, ցույց է տալիս, որ նույնիսկ այդպիսի ծանր պայմաններում Հայաստանի քաղաքներն ու քաղաքային կյանքն իսպառ չէին կորցրել իրենց դեմքը: VII—IX դարերում Հայաստանի քաղաքային բնակչությունը, եկվոր արաբներից բացի, աճում էր նաև ի հաշիվ գյուղացիների: Հարկերի ծանրության, շահագործման ուժեղացման և գյուղում ստեղծված միանգամայն անապահով վիճակի պատճառով գյուղացիության մի մասը տեղափոխվում էր քաղաք և անցնում վարձու աշխատանքի: Քաղաքային բնակչությունը որոշ չափով աճում էր նաև պատերազմների, ասպատակությունների կամ խոշոր աղետների ժամանակ, երբ քաղաքում ապաստանած գյուղացիների մի մասն այլևս ետ չէր վերադառնում, որովհետև այնտեղ նա արդեն կորցրել էր իր ունեցած-չունեցածը:

Քաղաքային բնակչությունն այդ ժամանակ հիմնականում կազմված էր առևտրականներից, արհեստավորներից, վաշխառուներից, բարձր դիրք ունեցող տեղացի և օտարերկրյա պաշտոնյաներից, զինվորականներից, հոգևորականներից և աշխատավորական մասսաների ներկայացուցիչներից:

Հայաստանի քաղաքների և քաղաքային կյանքի մասին բավականին հարուստ տեղեկություններ են հաղորդում արաբական սկզբնաղբյուրները: Արաբ հեղինակները, քաղաքական դեպքերի շարադրանքից բացի, մեծ ուշադրություն են դարձնում նաև քաղաքներին, նկարագրում են նրանց դիրքը, ամրությունները, տալիս են

[1] *К. Маркс* и *Ф. Энгельс*, Соч., т. 21, М., 1932, стр. 488.



քաղաքների ու գլխավոր բնակավայրերի հեռավորությունն իրարից, նրանց ազգային կազմը, բնակիչների զբաղմունքը, արհեստներն ու արդյունագործությունը, մի խոսքով այն ամենը, ինչ վերաբերում է քաղաքային բնակչությանն ու նրա տնտեսական կյանքին:

Երկրի ընդհանուր կյանքում քաղաքների կատարած նշանակալից դերի պատճառով է, որ արաբ հեղինակներն իրենց տեղեկությունները երբեմն հասցնում են չափազանցությունների: Այսպես, օրինակ, IX դարի հեղինակ Ալ-Յակուբին Արաբսի հովտում միայն ավերված բնակավայրերի թիվը հաշվում է 300[1], իսկ Ալ-Մուկադդասին Արաքսի և Մեծ ու Փոքր Մասիսների շրջանում եղած բնակավայրերը հասցնում է 1000-ի[2]:

Հայաստանում քաղաքային բնակչության մեծամասնությունը հիմնականում կազմում էին հայերը, սակայն հայերից բացի այնտեղ ապրում էին նաև արաբներ, պարսիկներ, հրեաներ և ասորիներ:

Հ. Զորյանն արաբական շրջանի Հայաստանի քաղաքի և գյուղի փոխհարաբերություններին նվիրված իր հոդվածում խոսելով քաղաքների այս կամ այն չափով զարգանալու մասին, մատնացույց է անում մի քանի հանգամանքներ: Դրանցից առաջինը, ըստ նրա, Հայաստանի քաղաքների մեկ պետության՝ այն է Արաբական խալիֆայության մեջ գտնվելու հանգամանքն էր, որ բացառում էր ապրանքափոխանակության ու առևտրի համար ֆեոդալական մանր իշխանությունների սահմանափակումները: Այնուհետև, քաղաքներում և խոշոր բնակավայրերում գտնվող զորքն ու զինվորականությունը, ավելացնելով անարտադրող սպառողների բանակը, աշխուժություն էր մտցնում շուկայական հարաբերությունների մեջ: Այնուհետև, Հ. Զորյանն արտաքին փոխանակության մեջ որոշ տեղ է հատկացնում նաև Հայաստանում հաստատված արաբական տարրերին: Եթե հեղինակի հիշյալ դրույթները ճիշտ են, ապա այդ երևույթների սկզբնավորումը ոչ թե կարող էր լինել VII դարից, ինչպես այդ պնդում է ինքը, այլ ավելի ուշ՝ VIII դարից, արաբական տիրապետության վերջնական հաստատումից հետո[3]: Հ. Զորյանի ասածներից ընդունելի չի կարող լինել այն թեզը, որ, իբր, Հայաստանում արաբական տիրապետության շրջանում գոյություն են ունեցել երկու կարգի քաղաքներ՝ երկրագործական և առևտրա-արհեստավորա-

[1] Տե՛ս *Ал-Якуби*, Сборник материалов..., т. 32, էջ 59:

[2] Տե՛ս *Ал-Мукаддаси*, Сборник материалов..., т. 38, էջ 15:

[3] Տե՛ս Հ. Զորյան, Արաբական շրջանի ֆեոդալական Հայաստանի քաղաքի և գյուղի միջև ստեղծված հակադրությունը, Տեղեկագիր ՀԱՍՀ Գիտությունների և արվեստի ինստիտուտի, Երևան, 1927, № 2, էջ 191:

կան[1]: Այդպիսի սահմանադրում կատարելն ընդհանրապես դիտական չէ, որովհետև ստացվում է, որ երկրագործական քաղաքներում պետք է բացակայեին առևտուրն ու արհեստները, իսկ առևտրա-արհեստավորական քաղաքներում չպետք է տեղ ունենային երկրագործական աշխատանքները: Այդ դեպքում կարող է առաջանալ մի շատ կարևոր հարց, թե ի՞նչ հատկանիշներով էր զուտ երկրագործությամբ զբաղվող բնակավայրը քաղաք կոչվում: Գիտական գրականությունից հայտնի է, որ միջնադարյան քաղաքային կյանքի գլխավոր ուղղություններից մեկը հանդիսացել է նաև գյուղատնտեսությունը, և Հայաստանի քաղաքային բնակչությունը, առևտրից ու արհեստներից բացի, մեծ չափով զբաղվում էր նաև երկրագործությամբ, այգեգործությամբ, բանջարաբուծությամբ, անասնապահությամբ և մեղվապահությամբ: Այնպես որ միայն երկրագործությամբ ու միայն առևտրով և արհեստներով զբաղվող քաղաքներ ո՛չ այդ շրջանում և ո՛չ էլ հետագայում գոյություն չեն ունեցել: Միջնադարյան քաղաքներին հատուկ են եղել և՛ երկրագործությունը, և՛ առևտուրն ու արհեստները: Այստեղ հարցը կարող է վերաբերել միայն այս կամ այն զբաղմունքի չափին կամ մասշտաբին, որն արդեն կարող էր պայմանավորվել տվյալ բնակավայրին հատուկ առանձնահատկություններով: Ինչպես ֆեոդալական մյուս քաղաքների, այնպես էլ արաբական շրջանի Հայաստանի քաղաքային բնակչության մի զգալի մասը արտադրողական ուժերի զարգացման այն ժամանակվա պայմաններում հարկադրված էր նաև երկրագործությամբ զբաղվելու:

Արաբական շրջանի Հայաստանի քաղաքներից սկզբնաղբյուրներում առանձնապես հաճախակի են հիշատակվում Դվինը, Արտաշատը, Նախիջևանը, Տրապիզոնը, Տիգրանակերտը, Արճեշը, Արզնը, Բերկրին, Կարինը, Մանազկերտը, Բաղեշը, Խլաթը, Ուրմին և Սալմաստը, որոնք բոլորն էլ, ինչպես ասում է Ալ-Մուկադդասին, բարեկարգ են, հաճելի, գեղեցիկ և մթերքներով հարուստ ու էժան[2]: Նշված քաղաքների մեջ, առաջնությունը տրվում է Դվինին: Եվ դա տեղին է: Նորագույն ուսումնասիրությունները[3] ցույց են տալիս, որ Դվինը Հայաստանի քաղաքների մեջ առաջնություն է ձեռք բերել դեռևս արաբական տիրապետության հաստատումից առաջ, մարզպանական շրջանում: Այդ ժամանակ 120—150 հազար ազգաբնակչություն ունեցող քաղաքը, իր համար ստեղծելով գյուղատնտեսության, առևտրի ու արհեստագործության վրա խարսխված տնտեսական ամուր հիմք, նվաճել էր առևտրի ու ապրանքափոխանակության ընդարձակ շրջանակներ և մեծ հեղինակություն:

V դարում, ինչպես ցույց է տվել ակադ. Հ. Մանանդյանը, պարսկա-բյուզանդական հատուկ պայմանագրով Դվինը և նրանից ոչ հեռու գտնվող Արտաշատը համարվում էին որպես Արևելքի, թերևս շատ քիչ առևտրական կարևորագույն կենտրոններից, որտեղ նշանակված հատուկ պաշտոնյաները (comites commerciorum) հետևում էին առևտրին ու առևտրական գործարքներին: VI դարում Դվինի դերն այն աստիճան է մեծանում, որ, ինչպես Պռոկոպիոս Կեսարացին է վկայում, «Հնդկաստանից, Հարևան Իբերիայից և Պարսկաստանի գերիշխանության տակ գտնվող գրեթե բոլոր ժողովուրդներից, նույնիսկ հռոմեացիներից, բերում են այստեղ իրենց ապրանքները, որոնցով առևտուր են անում»[1]: Անշուշտ այդ քաղաքի տնտեսական դերի առաջնությունն էր, որ թելադրում էր ժամանակի նույնիսկ օտար հեղինակներին այն անվանելու «Մեծ քաղաք»[2]:

Արաբական տիրապետության հաստատումից հետո, սակայն, Դվինը Հայաստանի և Արմենիայի քաղաքների մեջ իր առաջնությունը պահպանում է այնքանով, որ մինչև 789 թվականը հանդիսանում էր Արմենիայի վարչական կենտրոնը: Այդ ժամանակվանից սկսած երկրում ստեղծված ընդհանուր անբարենպաստ պայմանների, մշտական պատերազմների, ինչպես նաև առևտրական գլխավոր ճանապարհների ուղղությունների փոփոխման հետևանքով, որոնց պակասը լրացրեցին երկու անգամ տեղի ունեցած ուժեղ և ավերիչ երկրաշարժները, մասսայական սովն ու այլ աղետները, թեև Դվինը իր մշակութային ու տնտեսական նախկին մակարդակից զգալիորեն իջավ, բայց և այնպես պատմական նոր իրադրությունների պայմաններում շարունակեց գոյություն ունենալ և վճռական դեր կատարել առևտրի և արհեստագործության ասպարեզում:

Ուշ շրջանի արաբ հեղինակները միաբերան հաստատում են, որ Դվինը հանդիսանում էր առևտրի ու արհեստագործության կենտրոն: Այստեղ, ըստ նրանց, արտադրվում էին բրդյա ու մետաքսյա

[1] Տե՛ս Հ. Ջորյան, Արաբական շրջանի ֆեոդալական Հայաստանի..., էջ 194:

[2] Տե՛ս Ալ-Мукаддаси, Сборник материалов..., т. 38, էջ 12, Ал-Истахри, Сборник материалов..., т. 29, էջ 5:

[3] Տե՛ս А. Манандян, О торговле и городах Армении, А. Шахназарян, Двин, Վ. Աբրահամյան, Արհեստները և համքարական կազմակերպությունները Հայաստանում 9—13-րդ դարերում, Երևան, 1946, Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում 9—13-րդ դարերում, հ. 1—2-րդ, Երևան, 1958, 1964 և այլն:



[1] Прокопий Кесарийский, История войн римлян с персами, пер. С. Дестуниса, Петербург, 1880, кн. 2-ая, стр. 181—182:

[2] Տե՛ս История Иоанна Ефесского, Н. Пигулевская, Сирийские источники по истории народов СССР, էջ 109, 165:

գործվածքներ, հագուստներ, գորգեր, բազմոցներ, երիզներ ու հայկական արտադրության այլևայլ ապրանքներ։ Դվինում հայտնի էր նաև որդան կարմիր ներկը, որով ներկում էին զանազան տեսակի գործվածքներ[1]։ Դվինում արտադրվող ապրանքների «նմանը,—ասում է Իբն-Հաուքալը,—չկա երկրագնդի առարկաների մեջ, ուր էլ որ գնաս՝ երկրի մի ծայրից մյուս ծայրը և ամեն ուղղություններով»[2]։ Դվինում և Հայաստանի տարբեր մասերում արտադրվող ապրանքներն ու գյուղատնտեսական մթերքները մեծ չափով նաև արտահանվում էին հարևան երկրները։ Հայ առևտրականները գործուն դեր էին կատարում Պարտավի[3], Տրապիզոնի[4] և մյուս հայտնի առևտրավաճառներում։ Հայաստանից արտահանվում էին մեծ քանակությամբ գորգեր, բրդյա և մետաքսյա բազմազան գործվածքներ, ներկեր, անասուններ, ձկնեղեն, աղ, արծաթ, պղինձ և այլն[5]։ Արտահամանյան շուկաներում հատկապես հարգի են եղել հայկական գորգեն ու ուղեգորգերը[6], որոնց մասին հիշատակություններ ունեն արաբ հեղինակներ Իբն-Հաուքալը, Ալ-Իստախրին, Իբն-Հալդունը, Ալ-Մուկադդասին, Իբն-Փադլունը, Իդրիսին և ուրիշներ։ Իբն-Փադլունը, օրինակ, վկայում է, որ ինքը X դարի 20-ական թվականներին Կամայի բուլղարների թագավորի մոտ եղած ժամանակ տեսել է, թե ինչպես նրա վրանի հատակը ծածկված էր հայկական գորգերով[7]։ Ն. Մառն իր «Անի» աշխատության մեջ բերում է արաբական հեղինակներից մեկի վկայությունն այն մասին, որ 911 թվականին խալիֆ Մուխտադիրին Հայաստանից ուղարկված նվերների մեջ հատկապես փայլում էր մի գորգ, որն ուներ 28 արշին երկարություն և նույնքան էլ լայնություն և որի վրա վարպետներն աշխատել էին տասը տարի[8]։

[1] Տե՛ս *Ал-Истахри*, Сборник материалов..., т. 29, էջ 19, *Ибн-Хаукал*, Сборник материалов..., т. 38, էջ 92, 94—95։

[2] Նույն տեղում, էջ 92։

[3] Տե՛ս *Ал-Мукаддаси*, Сборник материалов..., т. 38, էջ 14—15, *Ал-Истахри*, Сборник материалов..., т. 29, էջ 9։

[4] Տե՛ս *Масуди*, Сборник материалов..., т. 38, էջ 41։

[5] Տե՛ս *Ал-Мукаддаси*, Сборник материалов..., т. 38, էջ 5, 14—15, *Ал-Истахри*, Сборник материалов..., т. 29, էջ 51, *Ибн-Хаукал*, Сборник материалов..., т. 38, էջ 97, *Ибн-Факих*, Сборник материалов..., т. 31, էջ 39, Ղևոնդ, էջ 154—155։

[6] Տե՛ս *Н. Марр*, Ани, Ереван, 1939, էջ 128, ծանոթ.։

[7] Տե՛ս Վ. Թեմուրեյան, *Պատմական ակնարկ հայկական գորգագործության մասին*, Տեղեկագիր, № 11, Երևան, 1952, էջ 106։

[8] Տե՛ս *Н. Марр*, Ани, էջ 128։



Հայկական գործվածքային արվեստը շատ մեծ համբավ ուներ Արաբական խալիֆայությունում դեռևս VIII դարում։ Դրա լավագույն ապացույցն այն է, որ, ինչպես Յակուբին է հաստատում, Հիշամ խալիֆը (724—743) «ինքը հորինել տվավ մետաքսի վրա բանվածներ, ասեղի գործեր, հայկական աշխատություններ և զգեստներու ամեն տեսակ»[1]։

Ֆեոդալական Հայաստանի առևտրական հարաբերությունների այս կամ այն չափով զարգանալուն նպաստում էին նաև առևտրական ճանապարհները։ Հենց միայն Բաղդադից դուրս եկող հինգ գլխավոր քարավանային ճանապարհներից երկուսն անցնում էին Հայաստանի վրայով։ Դրանցից մեկը Միջագետքից մտնում էր Հայաստան և անցնում Ամիդ-Արզն ուղղությամբ, որն այնուհետև բաժանվում էր նոր ուղեգծերի՝ Ոստան-Վան-Բեթկրի և Բաղեշ-Դատվան-Խլաթ-Մանազկերտ-Կարին։ Մյուսն արևելյան ճյուղավորումն էր, որը, դուրս գալով Բաղդադից, Պարսկաստանի վրայով Մարաղա-Ուրմիա-Դիլման-Խոյ-Նախիջևան գծով հասնում էր Դվին։ Ղ. Ալիշանը, հենվելով հայոց «Մշոնաշափք»-ի վրա, Դվինից դուրս եկող ճանապարհները տանում է հինգ ուղղություններով՝ Դվին-Կոլոնիա Նեոկեսարիա-Ամասիա-Կոնստանդնուպոլիս, հարավ-արևմտյան ուղղությամբ՝ Դվին-Խլաթ-Աղձնիք-Եդեսիա-Դամասկոս-Երուսաղեմ-Աղեքսանդրիա։ Երրորդ ուղղությունը դնում էր դեպի արևելք՝ Դվին-Բերդկունք-Պարտավ-Հյուսիսային Կովկաս։ Չորրորդը հարավ-արևելյան ուղեգիծն էր Դվին-Նախիջևան-Թավրիզ-Տիգրոն-Կուֆ-Բասրա-Պարսից ծոլ ուղղությամբ և վերջինը հյուսիս գնացող ճանապարհն էր, որն սկսվում էր Դվինից և Գուգարքի Կողբ ավանի վրայով մտնում էր Թիֆլիս[2]։

Արաբական խալիֆայության տնտեսական քաղաքականությունը խոշոր չափով առնչվում էր նաև դրամի ու դրամական հարաբերությունների հետ։ Մեծ ու հզոր արաբական տերության սահմաններում մինչև VII դարի վերջերը ազատ կերպով գործածության մեջ էին թողնված համարյա ամեն տեսակի դրամներ։ Սակայն Արաբական խալիֆայության հզորացման հետ մեկտեղ այլևս անհանդուրժելի պետք է համարվեր օտար դրամները շրջանառության մեջ թողնելը։ Այս բնագավառում առաջին լուրջ փոփոխությունը կատարեց Աբդուլ-Մելիք խալիֆը (685—705)։ Նրա օրոք, երբ արաբներն առաջին անգամ սկսեցին սեփական դրամներ կտրել, Հայաստանում նույնպես շրջանառության մեջ դրվեցին արծաթյա և ոսկյա դրամա-

[1] Յակուբի, «Բազմավեպ», 1957, № 9—10, էջ 211։

[2] Տե՛ս Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 413։

նիշները[1]: Սակայն դրամական ռեֆորմից հետո էլ արաբների մոտ այլևայլ անձանց կողմից բաց էին թողնվում կեղծ դրամներ, որոնք, ինչպես թանկարժեք մետաղի բաղադրությամբ, այնպես էլ քաշով, օրինական դրամներից պակաս էին: Արաբական իշխանությունները թեև այսպիսի կեղծումների պատճառով հաճախակի զգել էին տալիս շրջանառության մեջ բաց թողնվող դրամը, բայց նման երևույթներն անբնդհատ կրկնվում էին[2]:

Դրամական ռեֆորմից հետո, 720-ական թվականներին արաբները Հայաստանում կատարեցին նաև չափերի ու կշիռների փոփոխություններ և գործածության մեջ դրեցին դրանց նոր տեսակները՝ արաբականը: Չափերի ու կշիռների այս նոր փոփոխությունները Հայաստանում, ինչպես վկայում է Բալաձորին, կատարել է Արմենիայի կառավարիչ Ալ-Ջառահ իբն-Աբդուլա ալ-Հաքիմը[3], որին նշանակել էր Եզիդ իբն-Աբդուլ Մելիք խալիֆը (720—724):

Արաբները, մանավանդ սկզբնական շրջանում, գործածության մեջ էին թողել նաև պարսկական ու բյուզանդական դրամները: Եվ միայն VIII դարի սկզբներին հույն ու պարսիկ պաշտոնյաներին սկսեցին մասսայականորեն փոխարինել մահմեդականները և օտար դրամների փոխարեն շրջանառության մեջ դրվեցին նոր դրամներ՝ արաբերեն մակագրություններով: Շրջանառության մեջ մտցված արաբական դրամները հատում էին ոսկուց, արծաթից և պղնձից[4]: Սակայն, ինչպես վկայում է Ալ-Իստախրին, ինչպես Ատրպատականում ու Աղվանքում, այնպես էլ Հայաստանում ավելի տարածվածը ոսկյա և արծաթյա դրամներն էին[5]:

Արաբական խալիֆայության մեջ փողերանոցներ կային շատ վայրերում, որոնց թիվը 150-ից անցնում էր: Այդպիսի փողերանոցներ արաբներն ստեղծել էին նաև Արմենիայում ու Հայաստանում: Հայտնի են, օրինակ, Դվինի, Պարտավի, Թիֆլիսի, Ամիդի, Ուրմիի և այլ վայրերի դրամահատարանները: Սովորաբար միայն ոսկյա դրամների վրա էին խալիֆների անունները դրում: Իսկ արծաթյա և պղնձյա դրամների վրա դրվում էին տվյալ վայրի ու նրա

[1] Տե՛ս Իբն-Հաուքալ, Հ. Քյուրթյան, Հին ճանապարհորդություններ Հայաստանի և հայոց մասին, «Հայրենիք», Բոստոն, 1933, № 1, էջ 38, 100, 133:

[2] Տե՛ս Ибн-Хаукал, Сборник материалов..., էջ 36—37:

[3] Տե՛ս Баладзори, Книга завоевания стран, էջ 16, Բալաձորի, Թարգմ. Կ. Յուրթյանցի, էջ 30:

[4] Տե՛ս Իբն-Հաուքալ, Մ. Շահինյան, Ճանապարհորդություն Սովետական Հայաստանում, Երևան, 1952, էջ 409:

[5] Տե՛ս Ал-Истахри, Сборник материалов..., т. 29, էջ 29, Ибн-Хаукал, Сборник материалов..., т. 38, էջ 100:



կառավարիչի անունները: Խալիֆայության ժամանակաշրջանի դրամների հայտնի մասնագետ Վ. Տիզենհաուզենը ցույց է տվել, որ արաբական դրամների վրա հաճախ, ասենք Դվին գրելու փոխարեն, գրում էին Արմենիա, կամ Արդաբիլ գրելու փոխարեն՝ Ատրպատական, իսկ երբեմն գրում էին և՛ քաղաքի, և՛ երկրի անունները[1]:

Արաբական խալիֆայության մեջ Աբասյանների՝ իշխանության գլուխ անցնելուց ի վեր հարկերի տեսակների և չափերի ավելացումը և դրանք հիմնականում դրամով գանձելու քաղաքականությունն ստիպում էր հարկատուներին իրենց արտադրանքի ավելի շատ մասը վաճառքի հանելու: Եվ այս ճանապարհով Հայաստանում նույնպես սկսում էր զարգանալ փոխանակային առևտուրը: Այդ երևույթի սոցիալական հետևանքները առաջին հերթին ծանր էին շահագործվող դասակարգի համար: Այս երևույթն իր հերթին ոչ միայն աշխուժացնում էր առևտրական տարրերին, այլև ծնում էր վաշխառություն:

VIII դարից սկսած, ինչպես հաստատում են ուսումնասիրողները, Արաբական խալիֆայությունում արդեն առկա էին զարգացած դրամական հարաբերություններ[2]: Իսկ «Փողի, իբրև վճարամիջոցի, զարգացումն անհրաժեշտ է դարձնում դրամակուտակումներ կատարելը...»[3]: Ինչ խոսք, որ այդպիսի կուտակումներ կարող էին կատարել միայն հասարակության իշխող ու արտոնյալ դասակարգերի ներկայացուցիչները: Ղևոնդն, օրինակ, վկայում է, որ իր ժամանակներում արծաթ դրամն ամբողջությամբ կողոպտվել էր և կուտակվել հայ և օտար մեծատունների ձեռքում[4]: Դրամ կուտակելու ամենամեծ հնարավորություններն ունեին արաբ իշխանավորներն ու առաջին հերթին խալիֆները: Մենք արդեն մեկ այլ առիթով նշել ենք Աբու-Ջաֆար ալ-Մանսուրի, Մամունի և Հարուն ալ-Ռաշիդի դրամական հսկայական կուտակումների մասին և ավելորդ ենք համարում այդ բանը նորից կրկնելու: Այստեղ միայն կարելի է նշել, որ արաբական տիրակալներից ոմանք, դրամակուտակումների հետևանքով անխուսափելիորեն առաջացող տնտեսական բարդություններից ազատվելու համար, երբեմն բաց էին անում իրենց գանձարանների դռներն ու շրջանառության մեջ դնում ամբարված

[1] Տե՛ս В. Тизенгаузен, Монеты Восточного халифата, СПб, 1873, էջ 22:

[2] Տե՛ս А. Якубовский, Об испольных арендах в Ираке..., էջ 177—178:

[3] Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1-ին, Երևան, 1933, էջ 109:

[4] Տե՛ս Ղևոնդ, էջ 135:

ոսկին ու արծաթը։ Այդպես վարվեց, օրինակ, Մուհամեդ էլ-Մահդի խալիֆը (775—785), որը, ինչպես Միխայել Ասորին է վկայում, «...ցրուեաց զամենայն ինչսն որ գանձեալ էր հայրն»[1]։ Դրամի պակասը լրացնելու համար արաբներն սկսում էին նաև շահագործել իրենց տերության, այդ թվում նաև Հայաստանի արծաթահանքերը[2]։

Կ. Մարքսը «Կապիտալում» պարզ կերպով նշում է, որ «Միջնադարում շահույթի բարձր նորման պայմանավորվում էր ոչ միայն կապիտալի ցածր կազմով, կապիտալի, որում գերիշխում էր փոփոխուն, աշխատավարձի վրա ծախսվող տարրը։ Այդ բարձր նորման պայմանավորվում էր գյուղի նկատմամբ գործադրվող խաբեբայությամբ, հողի սեփականատիրոջ ռենտայի ու նրան ենթակա բնակչության եկամուտի մի մասի յուրացումով։ Եթե միջնադարում գյուղն է քաղաքականորեն շահագործում քաղաքին ամենուրեք, որտեղ ֆեոդալիզմը չի բերվել քաղաքների բացառիկ զարգացման հանգանքով ինչպես Իտալիայում, ապա անտեսապես քաղաքն է ամեն տեղ ու առանց բացառության գյուղին շահագործում իր մոնոպոլ գներով, իր հարկային սիստեմով, իր համքարային կարգով, վաճառականական անմիջական խաբեբայությամբ ու իր վաշխառությամբ»[3]։

Սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վաշխառությունը Հայաստանում տարածված է եղել դեռևս IV դարում, սակայն այն ավելի մեծ չափեր ընդունեց արաբական տիրապետության օրոք, երբ դրամական հարաբերությունների զարգացման հետևանքով հայ աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալները նույնպես, իրենց կուտակած դրամը փոխարինաբար տալով կարիքավորներին, մեծ օգուտներ ու շահ էին ստանում։ Վաշխառուներից փոխարինաբար պարտք վերցնելը պարտատիրոջ համար դառնում էր մի կատարյալ չարիք։ Նա երկար ժամանակ ոչ միայն չէր կարողանում պարտքը վճարել, այլև զրկվում էր իր ունեցած-չունեցածից՝ հողից, անասուններից և, ընկնելով աղքատության մեջ, դիմում էր պանդխտության։ VII դարի հեղինակ Հովհան Մայրավանեցին վաշխառությանը նվիրված իր ճառում այսպես է նկարագրում վաշխառության զոհ դարձած խեղճ պարտքատիրոջ վիճակը. «Վա՛ է քահանայից ի սովոյ մեռանել, քան թէ յանարժանից կերակրել... քանզի յոյժ շար են վաշխից անօրէնութիւն, և որպէս երկունք յղւոյ են ժամադրութիւնք նոցա։ Եւ եթէ աղքատ ևս իցէ փոխապարտն, ի ծուխս և ի հոգս մաշի հանապազ, անքուն և դառնաքուն ի դիշերի

[1] Միխայել Ասորի, էջ 353։

[2] Տե՛ս Ղևոնդ, էջ 155։

[3] Կ. Մարքս, Կապիտալ, հ. 3-րդ, երկրորդ մաս, Երևան, 1949, էջ 339։



ննջին նորա. տխուր և տրտում և մտահոգ ի տուընջեան շրջի, և ոչ դիտէ յո երթիւ։ Երբեմն սուղ ինչ զպահրէն կամի վաճառել, զի հատուսցէ զվաշխից տոկոսիս. և երբեմն զանօրէն գողանալն ախորժէ՝ զոգիսն կորուսանել և դիմադարձ լինել աստուծոյ վասն պահանջողի վաշխի փոխիցն. և երբեմն խորհի գաղտագնաց լինել ի տար աշխարհ. շրջի թափառական յաղագս պարտուցն բռնութեան, և ի՛ բադում խորհրդոցն վարանիցի, և մտացն շփոթելոց զաղօթսն առ աստուած մոռանայ. և յորժամ ձայն ոտիցն հարկանի, նա ի ներքս սրտաբեկ լինի յերկիւղէն. և թէ արտաքոյ տեսանէ փոխառուն զփոխատուն, փախչի և թաքչի իբրև ի տարակուսանաց աղէտիցն, և սիրտն թափեալ զդողի հարկանի, և կայ գլխարկեալ և լեզուակապ. և ամենևիմբ յերեսս նորա նայել ոչ իշխէ և ոչ համարձակի, զի տոկոսիքն վաշխից բազմացան ի վերայ նորա, և ոչ ինչ ունի հատուցանել և հաճել զփոխատուն»[1]։ Մեր հեղինակն այնուհետև իր ասածներից հանգում է այն եզրակացության, որ ամենավատ արարքը մարդու համար փողը տոկոսով պարտք տալն է, որովհետև նրանք, ովքեր «...զարծաթս իւրեանց ի վաշխու տան, և տոկոսեօք անդէն պահանջէն... անակնածելի ուտեն զմարմինս տնանկաց, և ըմպեն զարիւն նոցա անողորմ»[2] և այլն և այլն։ Հովհան Մայրավանեցու վերոհիշյալ ասածներից պետք է եզրակացնել, որ վաշխառությունն այդ ժամանակ մասնավոր գործարքից վեր էր ածվել լայն շրջաններ ունեցող հասարակական չարիքի, և հոգևորականությունն ու աշխարհիկ ֆեոդալներն այդ զբաղմունքով արատավորում էին քրիստոնեության չափավոր լինելու պատվիրանները ու գոյում եկեղեցու և հայ հոգևորականության հեղինակությունը այն աստիճան, որ այդ երևույթի դեմ հանդես էին գալիս իրենք՝ եկեղեցական գործիչներն ու գաղափարախոսները։

Տեղական և օտար հարստահարիչների կողմից ժողովրդական լայն զանգվածների ճնշման ու շահագործման պայմաններում արաբական տիրապետության շրջանում սրվում են նաև դասակարգային փոխհարաբերությունները և նպաստավոր պայմաններ ստեղծում սոցիալական շարժումների համար, որոնք այդ ժամանակ նույնպես արտաքինից ընդունում են կրոնական կերպարանք և ընթանում պավլիկյանների դրոշի տակ։

Ահա այդպիսին էր Հայաստանի սոցիալ-տնտեսական դրությունը Արաբական խալիֆայության տիրապետության ժամանակաշրջանում VII—IX դարերում, որի մասին մեր ասածները կարելի է ամփոփել այսպես.

[1] «Յովհաննու Մանդակունւոյ Ճառք», Վենետիկ, 1860, էջ 64—65։

[2] Նույն տեղը, էջ 63։

1. Ֆեոդալական հասարակական-տնտեսական հարաբերությունները, որոնք Հայաստանում IV—V դարերում դարձել էին գերիշխող հարաբերություններ, Արաբական խալիֆայության տիրապետության ժամանակ էական փոփոխությունների չենթարկվեցին։ Արաբները, հիմնականում պահպանելով հայկական ֆեոդալիզմի կարևոր գծերը, նրա մեջ մտցրեցին միայն որոշ նորություններ։ Եթե մինչև արաբները Հայաստանում ֆեոդալական շահագործման ձևերի մեջ տիրում էր արդյունավճար ռենտան, ապա արաբական տիրապետության հաստատման հետ մեկտեղ Հայաստան մուտք գործած առևտրա-վաշխառուական կապիտալը, բնատնտեսության մեջ հանապարհ հարթելով դրամական շրջանառության համար, լայն ասպարեզ է տալիս դրամական ռենտային, որն անհամեմատ ծանրացնում է աշխատավորության տնտեսական վիճակը։

2. Հայաստանը նվաճելուց հետո արաբները որոշակի փոփոխություններ մտցրին հողօգտագործման և հողային իրավունքի բնագավառում։ Սկզբնական շրջանում (մինչև VII դարի վերջերը), Հայաստանում արաբների ձեռք բերած ժամանակավոր ռազմական հաջողությունների ընթացքում, տիրողներն իրենց նվաճած հողերի նկատմամբ դեռևս լիակատար իրավունքներ չունենալով հանդերձ, այնուամենայնիվ, հայ ֆեոդալներին հարկադրում էին, որպեսզի նրանք իրենց հողային իրավունքները պահպանելու դիմաց արաբների հանդեպ հատուկ պայմանագրերով ստանձնեն հարկատվության պարտականություններ։ Արաբական նվաճումների սկզբնական շրջանում հայ ֆեոդալների՝ իրենց հողերի նկատմամբ պայմանագրով ձեռք բերվող հողատիրական ձևը ոչ այլ ինչ էր, եթե ոչ պայմանական հողատիրություն։

3. Արաբական տիրապետության հաստատումից հետո, երբ Հայաստանը նույնպես հողով, ջրով ու ընդերքով հայտարարվեց խալիֆայական սեփականություն, արաբներն իրենց նվաճած հողերն օգտագործման էին հանձնում դարձյալ պայմանական հողատիրության սկզբունքով՝ այն բաժանելով երկու կարգի։ Դրանցից առաջինի մեջ մտնում էին այն հողերը, որոնք կրկին վերադարձվում էին առանց կռվի արաբներին հպատակված քրիստոնյաներին։ Այդ կարգի հողերից օգտվողը պարձյալ գրավոր կերպով հանձն էր առնում արաբներին վճարելու հողահարկ կամ, ինչպես իրենք էին ասում, խարաջ։ Խարաջի սկզբունքով հողօգտագործման ձևը, հողատիրոջը տալով հողօգտագործման անօրինության իրավունք, փաստորեն պայմաններ էր ստեղծում հողատիրոջ սեփականատիրական ոչ լիակատար իրավունքների զարգացման համար, մի բան, որ հնարավոր էր դարձնում ինչպես հողը ժառանգելու, այնպես էլ նվիրելու



դրամ վաճառելու հանգամանքները։ Խարաջի իրավունքն իր էությամբ փաստորեն պահպանում էր դեռ նախորդ ժամանակներից կիրառվող հայկական «պարգևականք» և «քսակագինք» հողատիրության գծերը։

Հողերի մյուս բաժնից արաբներն ստեղծում էին պետական հողային ֆոնդ (կատայլի), որն այնուհետև բաժանվում էր նվաճված երկրներում պաշտոնավորող կամ այնտեղ մշտական բնակություն հաստատած արաբներին միայն։ Արաբ վերաբնակիչները պետական ֆոնդից ստացած հողերի օգտագործման դիմաց պարտավոր էին իշխանություններին վճարել տասանորդ հարկը։ Տասանորդի սկզբունքով պայմանական հողատիրության իրավունքը, այսպիսով, կիրառելի էր Հայաստանի ոչ քրիստոնյա ազգաբնակչության շրջաններում և իր բովանդակությամբ այն ևս հողօգտագործման անօրինության իրավունք էր ընձեռում։

4. Արաբական ցեղերի մասսայական վերաբնակեցումները Հայաստանում և նրանց կողմից հողային ունեցվածքի զավթումները, մի կողմից հայկական ֆեոդալական տնտեսություններին մղում էին դեպի մանրատում, որի պատճառով նախկինում գոյություն ունեցող խոշոր նախարարական տնտեսությունները բաժան-բաժան լինելով առհմի կրտսեր անդամների վրա, փոքրանում և վեր էին ածվում տնտեսապես թույլ միավորների, իսկ մյուս կողմից բարենպաստ պայմաններ էին ստեղծում Հայաստանում մեծ ու փոքր արաբական ֆեոդալական իշխանությունների (էմիրությունների) առաջացման համար, որոնք արդեն VIII—IX դարերում երկրի տնտեսական ու քաղաքական կյանքում սկսում էին որոշակի դեր կատարել։

5. Արաբական ցեղերի վերաբնակեցման և հայկական հողերի վրա մահմեդական ֆեոդալական իշխանությունների ստեղծման հետ միասին Արաբական խալիֆայությունը, իր տիրապետությունը Հայաստանում ամրապնդելու համար, VII դարի վերջերից սկսած փորձեց կիրառել նաև հայկական ազնվականական խավերի և դինվորականների առավել ականավոր տարրերի պլանավորված ոչնչացման քաղաքականությունը, որն ուղեկցվում էր կրոնական անհանդուրժողության և ազգային խտրականության ամենամոլեռանդ դրսևորություններով։

6. Համաշխարհային տիրապետության ձգտող Արաբական խալիֆայությունն իր գոյությունը պահպանում էր հպատակեցված երկրներին ու ժողովուրդներին հարստահարելու և կողոպտելու միջոցով։ Նվաճված երկրներում նույնպես արաբների վարած տնտեսական քաղաքականության մեջ հիմնական տեղը հատկացվում էր հարկահավաքությանը, և Արաբական խալիֆայությունն այս առու-

մով փաստորեն ի կատար էր ածում արևելյան կառավարություններին հատուկ երեք վարչություններից առաջինը՝ ֆինանսականը, որը Ֆ. Էնգելսի խոսքերով նշանակում էր «կեղեքում երկրի ներսում»[1]։

7. Արաբական խալիֆայության մեջ նույնպես պետական եկամուտները գոյանում էին պաշտոնական և անպաշտոն հարկերից, որոնք թեև անընդհատ լցնում էին գանձարանները մեծամեծ գումարներով, սակայն, այնուամենայնիվ, պետությունը մշտապես գտնվում էր ֆինանսական մեծ կարիքի մեջ։ Այդ երևույթի հիմնական պատճառը կայանում էր նրանում, որ արաբների մոտ եկամուտների ու ծախսումների մեջ համաձայնեցում գոյություն չուներ։ Սովորաբար ծախսում էին ավելի շատ, քան ստանում էին։ Այդ էր պատճառը, որ արաբներն իրենց ֆինանսական դեֆիցիտը ծածկելու համար աննդհատ ծանրացնում էին հարկային լուծը, բարձրացնում հարկերի չափերը, մտցնում հարկերի նոր տեսակներ և այլն։

8. Արաբական խալիֆայության կազմում Հայաստանը նույնպես նվաճողներին հետաքրքրում էր և՛ ռազմական, և՛ տնտեսական տեսակետից։ Դրանից էլ բխում էր նվաճողների վարած տնտեսական այն որոշակի քաղաքականությունը Հայաստանում, որը հանգում էր երկրի նյութական միջոցները և բարիքները առավել չափերով կողոպտելուն։ Արաբների վարած քաղաքականության կողոպտիչ բնույթի մասին հայ պատմիչներից բացի որոշակի տեղեկություններ են հաղորդում նաև իրենք՝ արաբ հեղինակները։ Այս տեսակետից շատ բնորոշ է Տաբարիի խոստովանանքն այն մասին, թե իր հայրենակիցները կողոպտում, կոտորում և գերեվարում են Հայաստանի բնակչությանը[2]։

9. Թեև հարկային քաղաքականությունը արաբական տիրապետության ամբողջ ժամանակաշրջանում ունեցել է միևնույն որոշակի նպատակը, այսինքն՝ երկրի կողոպտումը, սակայն հարկային սիստեմը, այնուամենայնիվ, միշտ հարմարեցվել է ժամանակի ու պայմանների պահանջներին։ Հայաստանում արաբների վարած հարկային քաղաքականությունը մենք բաժանել ենք չորս հիմնական շրջանների՝ 652—699, 700—725, 725—750 և 750—862 թթ.։ Հարկային քաղաքականության մեր աված բաժանման ընթացքում ակնբախ կերպով նկատվում է հարկային լծի աստիճանական ծանրացում, որը վերջիվերջո վեր է ածվում կրոնական, իրավական, սոցիալական և այլ կարգի բացահայտ բռնությունների ու հալածանքների մի քաղաքականության, որից տուժում էին սոցիալական բոլոր խավերը։ Արաբների հարկային ծանր լծից ազատագրվելու ձգտումը ժամանակի առաջնահերթ պահանջն էր։ Այս տեսանկյունից էլ ելնելով՝ միանգամայն ճիշտ պետք է համարել Մ. Աբեղյանի և Կ. Մելիք-Օհանջանյանի կարծիքը, թե՝ ««Սասնա ծռեր»-ի պատմական միջուկը IX դարու պատմական խոշորագույն դեպքերն են և հարկահանության պատճառով արաբների դեմ մղած երկարատև կռիվը»[1]։

10. Արաբական տիրապետության շրջանում Հայաստանում գործող գլխավոր և հիմնական հարկատեսակներն էին՝ ծխահարկը, գլխահարկը, հողահարկը, անասնահարկը և տասանորդը, որոնց չափերը մշտապես փոփոխվում էին՝ անընդհատ աճելու և մեծանալու տենդենցով։ Հարկահավաքության ժամանակ հաշվի էր առնվում ինչպես հարկատուի սոցիալական պատկանելությունը, այնպես էլ հողի տեսակը և նրանում մշակվող կուլտուրան։ VIII դարի սկբնեերից հարկային քաղաքականության մեջ արաբները որոշակի նշանակություն են տալիս նաև ազգային և կրոնական խտրականությանը։ Ոչ արաբ ժողովուրդները և մուսուլմանական կրոնին չպատկանողները գտնվում էին ավելի ծանր դրության մեջ։

11. VIII դարի առաջին կեսերից Հայաստանում ծխահարկի փոխարինումը գլխահարկով և հարկերի բնավճարային ձևից ասեհաճանաբար դրամավճարումների ձևին անցնելը, գյուղացիության վիճակը ծանրացնելուց բացի, խիստ բացասական աղդեցություն ունեցան նաև երկրի տնտեսական զարգացման ընթացքի վրա։ Տնտեսության քայքայման ու թուլացման հետևանքով, ինչպես վկայում են ժամանակակիցները, աղքատանում էին ոչ միայն հասարակության ստորին խավերը, այլև ազնվականներն ու նախարարները։

12. Երկրի տնտեսական քայքայումը, ավերիչ պատերազմներն ու ասպատակությունները մի կողմից, իսկ մյուս կողմից ազգաբնակչության իրավական սահմանափակումները և հալածանքները, արաբական տիրապետության շրջանում սկիզբ են դնում հայ ժողովրդի մասսայական արտագաղթին, որի հետևանքով նախկինում մարդաշատ ու ծաղկուն շատ շրջաններ վեր են ածվում ամայի, անմշակ ու անհրապույր տափաստանների, որտեղ մի ժամանակ զարգացած երկրագործությունը ղգալիորեն տուժում է քոչվորական անասնապահությունից, որով հիմնականում զբաղվում էին հա-

[1] Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Հատընտիր նամակներ, հ. 1-ին, Երևան, 1936, էջ 91։

[2] Տե՛ս Табари, пер. П. К. Жузе, Институт истории и философии АН Азерб. ССР, фонд № 577, էջ 5։

[1] Մ. Աբեղյան և Կ. Մելիք-Օհանջանյան, «Սասնա ծռեր», ներածություն, հ. Ա, Երևան, 1936, էջ 23։

յաստան ներխուժած արաբական վերաբնակիչները։ Որպես դյուղատնտեսական երկիր, Հայաստանի ազգաբնակչության հիմնական զբաղմունքը արաբական շրջանում նույնպես հանդիսանում էր երկրագործությունը, այգեգործությունն ու անասնապահությունը։ Ազգաբնակչության մի որոշակի հատվածը զբաղվում էր նաև առևտրով ու արհեստագործությամբ։ Առևտրաարհեստավորական խավերը հիմնականում տեղավորված էին երկրի քաղաքներում ու խոշոր բնակավայրերում։

13. Արաբական տիրապետության շրջանում Հայաստանում արհեստներն ու առևտուրը, ապա նաև քաղաքային կյանքը զգալիորեն թուլացան և նույնիսկ հետագիմեցին մի կողմից միջազգային գլխավոր առևտրաուղիների փոփոխման, իսկ մյուս կողմից՝ ավերիչ պատերազմների ու արաբների վարած քաղաքականության պատճառով։

Երկրի տնտեսական անկումը և օտար ու տեղական հարստահարիչների դաժան շահագործումը սրում էին նաև դասակարգային փոխհարաբերությունները։ Աշխատավորական մասսաների հեղափոխական շարժումներն այդ ժամանակ ընթանում էին պավլիկյան սոցիալական հուժկու շարժման դրոշի տակ։

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

## ՊԱՎԼԻԿՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Պավլիկյան շարժումը հանդիսացել է ֆեոդալիզմի ծագման ու զարգացման ժամանակաշրջանի ամենահզոր ու ամենահուժկու սոցիալական շարժումներից մեկը։

Միջին դարերում, ֆեոդալիզմի ճնշման ու շահագործման դեմ ուղղված մյուս հասարակական-քաղաքական շարժումների նման, պավլիկյանությունը նույնպես արտաքինից ընդունել է կրոնական կերպարանք և հանդես եկել աղանդավորական քողով ծածկված։ Այդ շարժումը սոցիալականից բացի մեծ չափով կրում էր նաև օտարերկրյա զավթիչների դեմ ուղղված ժողովրդա-ազատագրական շարժման բնույթ։

Սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պավլիկյան շարժումը, սկիզբ առնելով Հայաստանում, լայնորեն տարածվել է նաև Բյուզանդիայում, Բալկաններում, Կիևյան Ռուսիայում և եվրոպական մի շարք երկրներում։ Եվրոպայի և Ասիայի համար սոցիալական ընդհանուր պայմանների առկայության շնորհիվ պավլիկյան գաղափարախոսությունը, դուրս գալով հայկական շրջանակներից, Եվրոպայում նախորդեց հետագա դարերում ծավալված, այսպես կոչվող աղանդավորական և ռեֆորմխուսական շարժումներին։ Ահա թե ինչու հայ և օտար հեղինակների շրջանում, դեռևս XVIII դարից սկսած, անընդհատ աճող հետաքրքրության պայմաններում պավլիկյանների վերաբերյալ ստեղծվել է հարուստ ու բազմալեզու գրականություն։

Պավլիկյան անունը, պատմության մեջ հայտնի նույնանման շարժումներից շատերի անունների պես, սկզբնաղբյուրներում գործածվում է տարբեր ձևերով՝ պավղիկյանք, պայղականություն,

պողիկյանք, պայլիկյանք և այլն[1]։ Արաբ պատմիչ Կուդամայի քնարում հոլանդական արաբագետ Դե-Գուեի ընթերցանությամբ հիշատակվում է Naylakani կամ Naykalani աղանդը, որը բյուզանդագետ Ա. Վասիլևն ուղղում է Baylakani ձևով և նույնացնում պավլիկյան անվան հետ[2]։ Այդ ուղղումը միանգամայն ճիշտ է, որովհետև համարյա նույնությամբ համապատասխանում է Հովհան Օձնեցու կողմից գործածվող պայղականություն ձևին։

Պավլիկյաններն առաջին անգամ հիշատակվում են 554 թվականին Ներսես II Բագրեւանդցի կաթողիկոսի (548—557) ժամանակ Դվինի երկրորդ եկեղեցական ժողովում կազմված «Ուխտ միաբանութեան Հայոց աշխարհիս» վավերագրում, որի վրա առաջին անգամ ուշադրություն է դարձրել Կ. Տեր-Մկրտչյանը 1900 թվականին[3]։

Այն հանգամանքը, որ Դվինի 554 թվականի եկեղեցական ժողովին 18 բարձրաստիճան հոգևորականներից բացի մասնակցում էին նաև բավականին թվով աշխարհիկ իշխաններ, ցույց է տալիս, որ այն կոչված էր քննելու շատ կարևոր հարցեր, որոնք հուզում էին ինչպես հոգևոր, այնպես էլ աշխարհիկ տերերին։ Ժողովը քաղկեդոնական դավանանքը մերժելուց և հայկական եկեղեցին անկախ հռչակելուց բացի ձեռնամուխ է եղել նաև նեստորականների հարցի քննարկմանը։ «Ուխտ միաբանութեան» թղթում ասվում է, որ հայոց հոգևոր ու աշխարհիկ իշխանավորները Խոսրովի թագավորության 24-րդ տարում (Խոսրով I Անուշիրվան, 531—579), այսինքն 554 թվականին, Դվինի ժողովում միջոցներ են մշակում նեստորական աղանդավորների դեմ, որոնք նախկինում առևտրական նպատակներով Պարսկաստանից եկել ու բնակություն էին հաստատել Հայաստանում։ Այդ մասին վերոհիշյալ թղթում ասվում է. «Հասեալ (նեստորականները) յառաջագոյն յաշխարհ մեր, վաճառականութեամբ կեցին ընդ հարսն մեր և ընդ մեզ, միաբանութեամբ ի մեր եկեղեցւոջ դինքեանս միահաւասար ընդ մեզ»[4]։ Այս հիշատակության հետագա վկայություններից երևում է, որ նեստորականների

[1] Տե՛ս «Գիրք Թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 73, «Յովհաննու Իմաստասիրի Աւանեցւոյ Մատենագրութիւնք», Վենետիկ, 1833, էջ 39, «Գրիգոր Մագիստրոսի Թղթերը», Աղեքսանդրապոլ, 1910, էջ 161, Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 127, էջ բ, Կ. Կոստանյան, Դավիթ Ալավկա որդի, տես «Ազգագրական հանդես», գիրք 14, Թիֆլիս, 1906, էջ 119։

[2] Տե՛ս A. Васильев, Политические отношения Византии и арабов за время Аморийской династии, СПб, 1900, էջ 183, ծանոթ. 2։

[3] Տե՛ս Կ. Տեր-Մկրտչյան, Պավղիկյանց և բողոքակեցվոց աղանդները արդի քննադատությամբ, «Արարատ», Վաղարշապատ, 1900, հուլիս։

[4] «Գիրք Թղթոց», էջ 72։



համերաշխությունը հայոց եկեղեցու հետ շարունակվել է մինչև 547 թվականը։ Եվ միայն այդ ժամանակ, երբ նրանք, հավանաբար Դվինի մոտակայքում, իրենց համար կառուցում են Մանաճիհր Ռաժիկի անվան վանքը, հակառակվում են հայկական եկեղեցուն ու հայոց դավանանքին։

Սկզբնաղբյուրներում նեստորականների Հայաստան թափանցելու ճշգրիտ ժամանակի մասին ոչինչ չի հիշատակվում։ Նրանց գալու ժամանակը մոտավոր կերպով կարելի է դնել VI դարի առաջին տասնամյակներին, որից մինչև 540-ական թվականները նրանք հաղիվ էլ կկարողանային իրենց դիրքերը Հայաստանում այնքան ամրացնել, որ հնարավոր լիներ հայկական եկեղեցուն հակառակ ընթացք բռնել։

Նեստորականները Մանաճիհր Ռաժիկի վանքում շուտով ըստեղծում են նաև իրենց առանձին միաբանությունը և «... սկսան ներմանել զզարշելի զպիղծ աղանդն իւրեանց»[1]։ Դվինի որոշման մեջ այնուհետև ասվում է, որ նրանք հաղորդությունը կատարում էին պավլիկյանների ծիսակատարությամբ։ Այդտեղ կարդում ենք հետևյալը. «Եւ ի տասն և չեթներորդ ամի Խոսրովու արքայից արքայի (այսինքն՝ 547 թվականին), ի մարզպանութեանն Նիհորականայ. արարին (նեստորականները) իմն շինած յանուն Մանաճհրի Ռաժկի և ապա անուանեցին զնա զտեղի ժողովոյ պղծութեան իւրեանց։ Ածին և վարդապետ առաջնորդ կորստեան ինքեանց, որք եկեալ ձեռնարկեցին իւրեանց բերելով ի սուրբ և ի ճշմարիտ հաւատս մեր, և պատրեցին ի ժողովրդականաց տգիտաց զարս և զկանայս, հաղորդել հաւատոյ յաղտեղութեան աղօթից նոցա, տանել հաց ընծայի ի տեղի անաւրէնութեան նոցա. ընդունել ի ձեռաց նոցա հաղորդութիւն՝ իբրև յուղտէ նուիրաց պաւղիկեանց»[2]։ Դվինի ժողովականներն արձանագրում են նաև, որ «Եւ զդողս զպռոնիկս և զայղ վնասակարս զոր եկ արտաքոյ եկեղեցւոյ և աւրհնութեան առնեաք և համարեաք արժանի սրբոյ հաղորդութեանն, երթային առ նոսա և նոքա ընդունէին յիւրեանց ի պիղծ և յանաւրէն աւրհնութիւնն և հաղորդութիւնն ժողովարանին՝ հակառակ մեզ»[3]։

Բերված հիշատակությունները հետաքրքիր են իրենց մի քանի կողմերով։ Այդտեղից նախ և առաջ պարզվում է, որ նեստորականներն ստեղծելով իրենց հոգևոր կենտրոնը, այնտեղ սահմանել էին նաև եկեղեցական ու կրոնական միանգամայն տարբեր կարգ ու

[1] Սա. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս 1910, էջ 90։

[2] «Գիրք Թղթոց», էջ 72—73։

[3] Նույն տեղը։

ծխականություն, որոնք այնքան հակառակ էին հայկական եկեղեցու սկզբունքներին, որ մեծ չափով վտանգում էին նրա հաստատությունն ու հեղինակությունը: Երկրորդ, քանի որ նեստորականների համար որպես այսպես ասած խորթ ուսմունքի հետևորդների, հայոց եկեղեցու դեմ միայնակ պայքարելը և այն էլ օտար երկրում, իհարկե դժվար էր, դրա համար էլ նրանք, բնականաբար, պետք է միանային ու դաշնակցեին տեղական հակաեկեղեցական ուժերի հետ, ուժեր, որոնց համար նույնպես այդ դաշինքը իհարկե ձեռնտու էր: Ուխտի թղթի այն արտահայտությունը, թե նեստորականները «պատրեցին ի ժողովրդականաց տպիտաց զարս և զկանայս», ըստ երևույթին վերաբերում է հասարակության ստորին խավերի ներկայացուցիչներին, որոնք իրենց սոցիալական վիճակով ավելի մեծ շահագրգռվածություն ունեին հայկական ֆեոդալական եկեղեցու և հոգևոր դասի դեմ պայքարելու գործում: Մեզ թվում է, որ նեստորականների դաշնակիցներն ու նրանց կողմից հովանավորություն գտնողները եղել են դրանից առաջ և դուցե այդ ժամանակ էլ գոյություն ունեցող բորբորիտները, մծղնեականները և սրանց գաղափարները որոշ չափով կրող պավլիկյանները, որոնք միշտ էլ ղբրկված են եղել եկեղեցու այսպես ասած օրհնությունից և վերջինիս կողմից համարվել գողեր, պոռնիկներ ու վնասակար տարրեր: Ուրեմն հայկական եկեղեցին հանձին Մանաճիհր Ռաժիկի վանքի, տեսնում էր հակառակորդ ուժերի միավորման մի կենտրոն, որը նմանօրինակ ընթացքով կարող էր եկեղեցական վեճերը հանգեցնել է՛լ ավելի լուրջ հետևանքների: Այդ է պատճառը, որ Դվինի ժողովը, դիմելով գործնական միջոցների, կործանել տվեց նեստորականների հոգևոր կենտրոնը և ցիրուցան արեց նրա շուրջը համախմբված հակաեկեղեցական ուժերին: Դվինի որոշման մեջ հանդիսավոր ոճով ասվում էր. «Իսկ մեր, ոչ կարացեալ համբերել չար գործոց նոցա, քանդեալ աւերեցաք զտեղի ապաւինի անաւրէնութեան նոցա՝ և բարձաք ի մէնջ գիշերային զայն խաւար»[1]: Ժողովը նաև նզովում է բոլոր նրանց, ովքեր դրանից հետո կհետևեն նեստորականներին և մյուսներին:

«Ուխտ միաբանութեան Հայոց աշխարհիս» թուղթը ճիշտ կերպով համարելով պավլիկյանների անունը հիշատակող ամենահին փաստաթուղթը, Կ. Տեր-Մկրտչյանը, սակայն, ընկնում է մեկ այլ սխալանքի մեջ և եզրակացնում, որ պավլիկյանության հիմնադիրները եղել են նեստորականները: «Արարատ» ամսագրում հրատարակած իր հոդվածում այդ մասին նա ուղղակի գրում է. «Այս ամե-

[1] «Դիրք Թղթոց», էջ 72—73:



նահին հիշատակարանի մեջ ասված է, որ ազանդի (պավլիկյանների—Ս. Մ.-Բ.) բուն հիմնադիրները եղել են 547 թվին Հայաստանում Գրիգոր (նույն Մանաճիհր, որը մկրտվելուց հետո անվանվել է Գրիգոր) Ռաժիկի վանքը հիմնող խուժիկները»[1]: Վերևում մեր կողմից բերված Ուխտի թղթում, ինչպես տեսանք, ոչինչ չէր ասվում այն մասին, որ պավլիկյանության հիմնադիրները հանդիսացել են նեստորականները: Փաստաթղթում նույնիսկ այդպիսի ակնարկ չկա: Այնտեղ միայն ասվում է, որ նեստորականները հաղորդության ծեսը կատարում էին պավլիկյանների նման, որից ըստ ացվում է ճիշտ հակառակը, այսինքն այն, որ պավլիկյանների ուսմունքն որպես այդպիսին, իր որոշակի սկզբունքներով գոյություն է ունեցել նեստորականներից առաջ և երբ վերջիններս հիմնում են իրենց առանձին հոգևոր կենտրոնը, պավլիկյաններից պատրաստի կերպով ընդօրինակում են հաղորդության ծեսը: Պետք է ասել, որ հարցի այդ կողմը ավելի ճիշտ է պատկերացրել Բ. Սարգիսյանը, որն իր մի հոդվածում գրում է, թե «Վեցերորդ դարու պավլիկյաններուն, որոնք եղան ատուգիվ որպես բուն նախահայրեր և նախապապեր ոչ միայն վերոհիշյալ տաղանդներուն (կալվինականության, լութերականության, բոգոմիլների, Թոնդրակեցիների—Ս. Մ.-Բ.), այլև խուժիկ ասորիներուն կամ Խուժաստանի նեստորականներուն»[2]:

Այս բոլորից հետևում է նաև, որ եթե պավլիկյանությունը որպես առանձին մի գաղափարախոսություն, գոյություն ուներ VI դարի կեսերին, ուրեմն նրա ծագումն ու ձևավորումը պետք է տեղի ունեցած լիներ ավելի առաջ, մեր կարծիքով՝ ամենաուշը VI դարի էկզբներին: Եթե այդպես է, ուրեմն ճիշտ պետք է լինի նաև այն կռահումը, որ պավլիկյանների և հատկապես V դարում Հայաստանում բայնորեն տարածված բորբորիտների ու մծղնեականների միջև գոյություն է ունեցել անխզելի կապ, և պավլիկյան շարժման գաղափարախոսությունը ձևավորվել է հենց այդ շարժումների գաղափարական հիմքերի վրա և կազմել նրանց օրգանական շարունակությունը պատմական այլ ժամանակաշրջանում: Եվ պավլիկյանների ու մծղնեականների գաղափարական մոտիկության ու սերտ հարաբերությունների պատճառով է, որ հայկական սկզբնաղբյուրներում երբեմն մծղնեական ասելով հասկացել են պավլիկյան, և

[1] Կ. Տեր-Մկրտչյան, Պավլիկյանց և Թոնդրակեցվոց աղանդները արդի քննադատության, «Արարատ», 1900, Հուլիս, էջ 333:

[2] Բ. Սարգիսյան, Գրիգոր Մարկավագապետ, «Բազմավեպ», 1904, մարտ, էջ 124:

ընդհակառակը: Այսպես, օրինակ, Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի № 1495 ձեռագրում եղած բառգրքի մեջ գրված է՝ «Մծղնեայ-պայլիկեան»[1] և «Պայլիկ (ն)ան-մծղնի»[2]: Այնուհետև, այնպիսի մի ճանաչված անձնավորություն, ինչպիսին VIII դարի կաթողիկոս Հովհան Օձնեցին է, պավլիկյանների մասին խոսելիս, նրանց անվանում է «նախկին մծղնէութեան պայղականութեան խելերանք»[3]: Այդ մտայնությունը գոյություն է ունեցել նույնիսկ ուշ ժամանակներում: Դավիթ Ալավկա որդին, օրինակ, նշում է, որ պավլիկյանները նույն մծղնեականներն են, որ սրանց բոլորին էլ աղվեսաղրոշմում, ոտքերի չիլերը կարատում և ուրկանոց են տանում[4]:

Դվինի 554 թվականի փաստաթուղթը որպես պավլիկյանների անունն առաջին անգամ հիշատակող աղբյուր թեև հետագայում ընդունվել է համարյա բոլոր ուսումնասիրողների կողմից[5], սակայն հանդիպել է նաև առարկությունների[6]: Առարկության հիմնական դավաններից մեկն էլ այն է, որ Ուխտի թղթում հիշատակվողները չէին կարող պավլիկյանները լինել, որովհետև վերջիններս հաղորդության ծեսը ընդհանրապես ժխտում էին: Եվ այդ առարկությունը հիմնավորելու համար առաջարկվում է Ուխտի թղթի համապատասխան տեղում «պաւղիկեանց» բառի փոխարեն կարդալ «պաւլիան» և առաջին ձևը համարել գրչական աղավաղում, որ թույլ են տվել

[1] Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 1495, էջ 53 ա:
[2] Նույն տեղում, էջ 60 բ:
[3] Հովհան Օձնեցի, էջ 39:
[4] Տե՛ս Կ. Կոստանյան, Դավիթ վարդապետ Ալավկա որդի, էջ 119:
[5] Տե՛ս Ս. Մելիք-Բախշյան, Պավլիկյան շարժումը Հայաստանում, Երևան, 1953, էջ 130, *C. Мелик-Бахшян*, Павликианское движение в Армении, Ереван, 1955, էջ 17, Ս. Պողոսյան, Գյուղացիների հորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում IX—XIII դարերում, Երևան, 1956, էջ 355, Հ. Թաբրիելյան, Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, հ. I, Երևան, 1956, էջ 459, *К. Юзбашян*, К истории павликианского движения в Византии, в IX веке, „Вопросы истории религии и атеизма", № 4, 1956, էջ 254, Նույնի՝ Թոնդրակյան շարժումը Հայաստանում և պավլիկյանները, ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, հասարակական գիտություններ, № 9, 1956, էջ 44, Ա. Հովհաննիսյան, Թրվռաններ հայ պատմագրական մտքի պատմության, գիրք Ա, Երևան, 1957, էջ 361, Ս. Մելիք-Բախշյան, Հայաստանը VII—IX դարերում, պրակ 3, Երևան, 1958, էջ 46, Հ. Ժամկոչյան, Ա. Աբրահամյան, Ս. Մելիք-Բախշյան, Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Երևան, 1963, էջ 394 և այլն:
[6] Տե՛ս *H.Gre'goire*, Pour LHistoire des églises Pauliciennes, „Orientalia christiana periodica", vol. XIII, de Jerphanion, II, Roma, 1947, էջ 509, *Д. Ангелов*, Богомильство в Болгарии, Москва, 1954, էջ 50:



հետագա ժամանակներում արտագրողները[1]: Մեզ թվում է, որ այս առթիվ վկայակոչվող Պետրոս Սիցիլացու հայտնի հիշատակությունն այն մասին, թե պավլիկյանները ժխտում էին սուրբ հաղորդության խորհուրդը, բացարձակ ու վերջնական իմաստով չպետք է հասկանալ: Այդ, ինչպես նաև մյուս հեղինակների վկայություններից երևում է, որ պավլիկյանները ոչ թե ամբողջովին մերժում և մեկընդմիշտ հրաժարվում էին եկեղեցական այդ խորհրդից, այլ դրան տալիս էին միանգամայն այլ իմաստ, որը և՛ ձևով, և՛ մանավանդ բովանդակությամբ պաշտոնական հաղորդության հակապատկերն էր: Պարզության համար մեջ ենք բերում տարբեր հեղինակների ասույթներն այդ մասին: «(Պավլիկյանները) հրաժարվում են աստվածային ահեղ սուրբ հաղորդության խորհրդից մեր աստծու՝ տիրոջ հացով ու արյամբ: Ոչ միայն նրանք իրենք (չեն հաղորդվում), այլ նույնիսկ ձգտում են մյուսներին էլ համոզել դրանում, ասելով, որ (խորհրդավոր) երեկոյին տերը իր աշակերտներին հաց ու գինի չի տվել, այլ իր ասույթը սիմվոլիկ է հացի և գինու ձևով»[2]: «Նույն ձևով (պավլիկյանները) կշտամբում են հաղորդությունը մեր աստծո՝ Քրիստոսի պատվելի մարմնով ու արյամբ, ասելով, որ (հաղորդությունը) մարմնով և արյամբ ընդունում են, (դրա տակ) հասկանալով Տիրոջ խոսքերը, որոնք նա հաղորդելով առաքյալներին, ասաց «առեք կերեք ու խմեք», բայց ո՛չ հաց և ո՛չ գինի»[3]: «Ներանք նույնպես անարգում են սուրբ հաղորդության խորհուրդը մեր տեր Հիսուս Քրիստոսի մարմնով և արյամբ կատարելը, ասելով, որ տերն իր ասույթը հաղորդելով առաքյալներին, ասել է. «առեք կերեք և խմեք» ո՛չ հաց և գինի, նրանք ասում են՝ պետք չէ հացն ու գինին ընդունել»[4]: «Եվ հայհոյում են (պավլիկյանները) մեր տեր Հիսուս Քրիստոսի սուրբ մարմինը և արյան սուրբ հաղորդությունը, ասելով, որ տերն իր պատգամները տալով առաքյալներին, ասում էր՝ «առեք կերեք և խմեք» բայց ո՛չ հաց և գինի, և որ պետք չէ ընդունել հացն ու գինին»[5]:

[1] Տե՛ս *Р. Бартикян*, Источники для изучения истории павликианского движения, Ереван, 1961, էջ 26—31:
[2] „Полезная история Петра Сицилийского", Р. Бартикян, Источники для изучения истории павликианского движения, стр. 124—125.
[3] „Его же святейшего Фотия Повествование о вторичном произрастании манихеев", *Р. Бартикян*, Источники для изучения истории павликианского движения, стр. 171.
[4] „Хроника Георгия Монаха", *Р. Бартикян*, Источники для изучения..., стр. 199.
[5] *Georgius Cedrenus*, tomus prior, Bonnae, 1838, p. 759:

Կրոնական խորհրդի համաձայն, իբր, հաղորդությունը փոխադարձաբար իրար էր մոտեցնում Քրիստոսին ու հավատացյալներին։ Ըստ այդ խորհրդի, գինին ընդունվում էր որպես Քրիստոսի արյուն, իսկ հացը՝ մարմինը, որը, ըստ քրիստոնեության, ճշմարիտ կերակուր է, իսկ արյունը՝ ճշմարիտ ըմպելիք, հետևաբար ովքեր ճաշակում են ալյուրից և գինուց պատրաստված թխվածքը, նրանք իբր ճաշակում էին Քրիստոսի մարմինն ու արյունը, որովհետև Քրիստոսն իր աստվածային զորության շնորհիվ գինին ու հացը հեշտությամբ փոխարինում է իր մարմնով ու արյամբ։

Քրիստոնեական եկեղեցին, օգտագործելով մարդկանց տգիտությունն ու հետամնացությունը, ոչ միայն հաղորդության միջոցով ձգտում էր նրանց մեջ ջերմեռանդություն բորբոքել, այլև այդ ծիսակատարության շնորհիվ մեծ օգուտներ և եկամուտներ էր ստանում։ Ուրեմն, եկեղեցական մյուս ծեսերի նման, հաղորդությունը նույնպես ստեղծվել էր մասսաներին կողոպտելու և շահագործելու համար։ Եվ եթե պավլիկյանները հաղորդության ծեսն ընդունում էին միայն խոսքով և գոնում, որ, երբ Քրիստոսը մատնացույց էր անում հացն ու գինին և ասում՝ «այս է մարմին իմ, և այս է արիւն իմ», «եթէ ոք ուտիցէ ի հացէս յայսմանէ, կեցցէ յաւիտեան», ոչ թե պահանջում էր իր պատվիրանը տառացիորեն կատարել, այլ դրանով նա ցանկանում էր իր հետևորդներին այլաբանորեն հասկացնել, որ նրանք ամուր պահեն իր աստվածային ուսմունքը և հանձին հացի ու գինու միշտ զգան նրա ներկայությունը ու չշեղվեն իր ճանապարհից։ Սակայն, եթե հարցը վերաբերեր քրիստոնեական և պավլիկյան հաղորդության ծիսականության միայն արտաքին ձևին, այն դեպքում հայոց եկեղեցու և պավլիկյանների ու նեստորականների միջև վեճերը դժվար թե այդքան սուր կերպարանք ընդունեին։ Բանն այն է, որ հաղորդությունը լոկ խոսքով ընդունելն ուներ նաև սոցիալական բովանդակություն, որովհետև այդ դեպքում ժխտվում էր նրա առարկայական կատարումը և փաստորեն ո՛չ հաղորդում էր տեղի ունենում, և ո՛չ էլ, մանավանդ, նյութական զոհաբերություն։ Եվ քանի որ պավլիկյանների կողմից հաղորդության հետ առնչվող հացի ու գինու ասույթն ընդունվում էր լոկ խոսքով ու ազատում էր մարդկանց նյութական ծախսերից, ուստի այն շատ հարմար ու ձեռնտու էր ժողովրդի աղքատ կամ, ինչպես «Գիրք Թղթոց»-ում էր ասվում, ագետ խավերի ներկայացուցիչների համար։ Ահա այդ էր պատճառը, որ Դվինի ժողովի մասնակիցներն այդքան բորբոքված էին նեստորականների դեմ և իրենց որոշման մեջ հատկապես նշում էին նրանց կողմից պավլիկյանների հաղորդության ձևն ընդօրինակելու հանգամանքը։ Հաղորդությունը



հացով և գինով կատարելուց պավլիկյանների հրաժարումը սերտորեն կապվում էր նաև նրանց այն սկզբունքի հետ, որ, իբր, նյութն ընդհանրապես չարության աստծու կամ սատանայի ստեղծագործությունն է։ Պարզ է, որ, եթե նյութի ստեղծումը թեկուզ և արտաքնապես նրանք վերագրում էին սատանային, ուստի այդ նույն նյութը, տվյալ դեպքում հացն ու գինին նրանց մոտ չէր կարող խորհրդանշել իրենց կողմից նույնպես պաշտվող Քրիստոսին։ Եվ այդ ծեսերի էական տարբերությունն էր, որ հարկադրում էր հայկական եկեղեցուն ու հոգևոր դասին, իր նյութական եկամուտների աղբյուրներից մեկը մշտապես հոսուն պահելու համար, ամենախիստ միջոցներով ոչնչացնել նեստորականներին և նրանց համախոհներին։ Այս բոլորից հետո, թվում է, որ այլևս կասկածներ չեն կարող լինել Ուխտի Թղթի հիշատակության վավերականության նկատմամբ։ Այնուհետև, պավլիան և պավլիկյան անունների շփոթումը բյուզանդական ընկերընաղբյուրներում, որը շեշտում է պատմական գիտ. թեկնածու Հ. Բարթիկյանը, դեռևս չի նշանակում, որ նույնը պարտադիր էր նաև հայկական սկզբնաղբյուրների, ի թիվս դրանց նաև Ուխտի Թղթի համար։ Եվ հետո, եթե պավլիկյանությունը հայկական մատենագրությանը ծանոթ լիներ, ապա որևէ ժամանակ այդ մասին նույնպես հայկական աղբյուրներում կհիշատակվեր։

Պատմագիտական գրականության մեջ պավլիկյան անվան ծագման մասին արտահայտվել են տարբեր տեսակետներ։ Ոմանք այդ անունը կապում են Պողոս առաքյալի հետ, ոմանք՝ Պողոս Սամոսատցու, ոմանք՝ մի ինչ-որ սամոսատցի կնոջ՝ մանիքեական Կալինիկեի որդու՝ Պողոսի հետ, որը, ըստ սկզբնաղբյուրների, ծագումով հայ է եղել։ Արտահայտվել են նաև տեսակետներ, որ իբր թե պավլիկյան անունը առաջացել է նույն Կալինիկեի երկու որդիների՝ Պավղոսի և Հովհանի անունների միացումից և այլն։ Այսպես, անգլիացի պատմաբան Էդուարդ Գիբոնն այդ մասին գրում է. «Պավլիկյանների թշնամիները կարծում են, որ նրանց անունը ծագում է նրանց մեջ երևան եկած մի ինչ-որ անհայտ քարոզչից, բայց ես հավատացած եմ, որ նրանք այդ անունն ընդունել են ի նշան իրենց հոգևոր աղգակցության հեթանոսների առաքյալի հետ (Պողոս առաքյալին ի նկատի ունի—Ս. Մ.-Բ.)։ Կոնստանդինը (պավլիկյանների առաջնորդը—Ս. Մ.-Բ.) և նրա գործակիցները ներկայացնում էին ս. Պողոսի հետևորդներին՝ Տիտին, Տիմոթեոսին, Սիլվանին, Տիխիկին...»[1]։ Անցյալ դարի գերմանական ուսումնասիրողնե-

[1] *Էդ. Գիբբոն*, История упадка и разрушения Римской империи, ч. 6, Москва, 1885, стр. 251.

րից Գիրղևերը նույնպես նշում է, որ պավլիկյաններն իրենց անունն առացել են Պողոս առաքյալից[1]: Այդ կարծիքի կողմնակիցների մենք հանդիպում ենք նաև հայ ուսումնասիրողների շրջանում: Այսպես, Մխիթարյան միաբանության անդամ Բ. Սարգիսյանը գրում է. «Արդ՝ իմ կարծիքովս նոր մանիքեություն 7-րդ դարուն պավղիկյան կոչված է ոչ թե Սամոսատցվույն կամ հայաղգի Պավղոսի մը անվամբ, այլ նույն ինքն հեթանոսաց առաքելույն Պողոսի անունով»[2]: Բ. Սարգիսյանին հետևում է նաև Ա. Ջամինյանը, ասելով. «Հավանական է մնում այն կարծիքը, թե այն աղանդավորներն (պավլիկյանները) այսպես են կոչվել Պողոս առաքյալի անունով, որին շատ էին հարգում»[3] և այլն և այլն:

Պավլիկյան անվան առաջացումը Պողոս առաքյալի անվան հետ կապելը պատճառաբանվում էր մի քանի հանգամանքներով: Առաջին, որ պավլիկյանները, Ավետարանի հետ մեկտեղ, նախ և առաջ ընդունում էին Պողոս առաքյալի թղթերը և, երկրորդ, մեզ հայտնի պավլիկյան բոլոր առաջնորդներն իրենց հիմնական անուններից բացի կրում էին նաև երկրորդական անուններ՝ Պողոս առաքյալի աշակերտների անունները, ինչպես՝ Սիլվան, Տիմոթեոս, Տիխիկ և այլն: Պողոս առաքյալի թղթերը պավլիկյանների կողմից օգտագործելու մասին որոշակիորեն հիշատակվում է Պետրոս Սիցիլացու մոտ: Նա VII դարի պավլիկյանների առաջնորդներից մեկի՝ Կոնստանդին-Սիլվանի առնչությամբ պատմում է նաև Ասորիքից գերությունից վերադարձող մի անձնավորության մասին, որը Հռոմապարհին կանգ է առնում Կոնստանդինի մոտ և բավական երկար մնում այնտեղ: Այդ մարդը գնալուց առաջ, ի նշան շնորհակալության, Կոնստանդինին է նվիրում իր գրքերից երկուսը՝ Ավետարանն ու Պողոս առաքյալի թղթերը: Պետրոս Սիցիլացու մոտ այդ մասին կարդում ենք հետևյալը. «Այդ գերին Ասորիքից բերելով երկու գիրք, մեկը ս. Ավետարանը, իսկ մյուսը Առաքյալը, դրանք նվիրում է Կոնստանդինին որպես իրեն ցույց տված հյուրընկալության հատուցում: Իսկ նա վերցրեց այդ երկուսը, և՛ Ավետարանը, և՛ Առաքյալը...»[4]: Այնուհետև Կոնստանդինն իր վերցրած գրքերի յուրաքանչյուր հատվածը կարդում և վերախմբագրում է այնպես, որ

[1] Տե՛ս *Dr. Gieseler*, Untersuchungen über die Geschichte der Paulicianer... „Theol. Studien und kritiken", 1 Heft, Hamburg, 1829, էջ 83:

[2] Բ. Սարգիսյան, *Ռամնասիրություն...*, էջ 37:

[3] Ա. Ջամինյան, *Հայոց եկեղեցու պատմություն, հ. 1-ին, նոր-Նախիջևան, 1908, էջ 146:*

[4] *Petri Siculi*, Historia Manichaeorum, Gottingae, 1846, p. 30—31.



դրանք իրենց նոր մեկնաբանությամբ համապատասխաններին իր և իր հետևորդների դաղափարական սկզբունքներին:

Պավլիկյանների կողմից Ավետարանի և Պողոս առաքյալի թղթերը որպես հեղինակավոր աղբյուրներ ընդունելու մասին կան նաև ուրիշ վկայություններ: Իսկ ինչ վերաբերում է պավլիկյանների առաջնորդներին, ապա նրանք գրեթե միշտ հիշատակվում են կրկնակի անուններով, այսինքն իրենց իսկական անունների հետ միասին կրում են նաև երկրորդական անուններ՝ Պողոս առաքյալի աշակերտների անունները: Սակայն աղբյուրներում ոչինչ չի ասվում այն մասին, թե պավլիկյաններն այդպես էին վարվում, որովհետև նրանք հետևում էին Պողոս առաքյալին:

Հայտնի է, որ Պողոս առաքյալը, ըստ քրիստոնեական պատմության, սկզբում քրիստոնեության հակառակորդը և Ստեփանոս Նախավկայի հալածողներից մեկն էր: Սակայն այդ նրա գործունեության մեջ քիչ տեղ է գրավում, որովհետև նա շուտով արմատական շրջադարձ է կատարում և դառնում Մերձավոր Արևելքի ու Եվրոպայի մի զգալի մասի քրիստոնեության ամենաակտիվ քարոզիչը: Այսպես կոչվող հեթանոսների մեջ իր կատարած քարոզչության համար է, որ նրան տվել են «հեթանոսների առաքյալ» մականունը: Ահա դա է Պողոս առաքյալի գործունեության կարևոր կողմը և դրա համար է, որ եկեղեցին նրան մեծարում է: Եթե այդպես է, ուրեմն Պողոս առաքյալի հետ պավլիկյանների ունեցած առնչությունը դառնում է կասկածելի: Սակայն այդ դեպքում ինչո՞վ բացատրել պավլիկյանների կողմից նրա աշակերտների անունների ընդօրինակությունը: Մենք կարծում ենք, որ պավլիկյաններն այդպես են վարվել, որպեսզի նախ հետապնդումներից ազատ լինեն և, երկրորդ, իրենց պրոպագանդային ավելի մեծ հեղինակություն տան, մանավանդ որ նրանք իրենց ոչ թե աթեիստներ, այլ ուղղափառ քրիստոնյաներ էին անվանում: Որ պավլիկյաններն իրենց քրիստոնյաներ էին համարում և առիթն եղած տեղ ստիպված քողարկում էին նաև իրենց իսկական համոզմունքները, այդ երևում է սկզբնաղբյուրների որոշակի հաղորդումներից: Փոտը, օրինակ, ասում է, որ («Իսկական քրիստոնյաներին—Ս. Մ.-Բ.) այդ նույն փշացածներն անվանում են հռոմեացիներ, իսկ իրենց կոչում են քրիստոնյաներ, Թեպետև այդ (անվանը նրանք) միանգամայն օտար են»[2]: Իսկ Գեորգ Վանականն ուղղակի ասում է, որ պավլիկյաններն «...իրենց քրիս-

[1] Տե՛ս „Полезная история Петра Сицилийского", *Р. Бартикян*, Источники для изучения истории павликианского движения, էջ 132, Cedrenus, էջ 757:

[2] „Его же святейшего Фотия Повествование", стр. 171.

ոնյա են անվանում, իսկ մեզ հռոմեացի»[1]: Նույնն է հաստատում նաև Գրիգոր Մագիստրոսն ասորիների կաթողիկոսին գրած իր թղթում. «Աւադիկ պօղիկեանքդ,— ասվում է այնտեղ,— որք ի Պօղոսէ Սամոսատացւոյ դեղեալ. յորժամ ձեռնարկեալ հարցանեմք, ասեն եթէ քրիստոնեայք եմք, զաւետարանն և զառաքեալն սաղմոսեն յամենայն ժամ»[2]: Պավլիկյաններն ուժեղ հալածանքներից խուսափելու և իրենց գաղափարները տարածել կարողանալու համար ստիպված էին ոչ միայն հանդես գալու Պողոս առաքյալի ու նրա աշակերտների անունից, այլև երբեմն քողարկում էին իրենց իսկական համոզմունքները, խաբում հակառակորդներին և այլն:

Պավլիկյանների ծագման մասին արտահայտվել է նաև մեկ այլ, բոլորովին ոչ հիմնավոր ու սխալ կարծիք. իբր նրանք նույն մանիքեականներն են և իրարից տարբերվում են միմիայն անուններով: Այսպես, օրինակ, անցյալ դարի ուսումնասիրողներից Ադ. Երիցյանը «Փորձում» հրատարակած իր մի հոդվածում ասում է, որ մանիքեականները VIII դարի կեսերին երևալով Հայաստանում, իրենց գլխավորի՝ Պավղոսի անունով կոչվեցին պավլիկյաններ[3], իսկ վիպասան Մուրացանն ուղղակի գրում է. «Պավլիկեաններ աղանդը ոչ այլ ինչ էր, եթե ոչ հին մանիքեցոց աղանդը: Այս մոլորութիւնն երիք և կես դար Հայաստանից դուրս ապրելով՝ մուտք գործեց մեր երկիրը միայն յոթներորդ դարի կիսում»[4]: Այս տեսակետի համար, անշուշտ, հիմք են ծառայել բյուզանդական մի քանի սկզբնաղբյուրների տեղեկությունները, որտեղ պավլիկյան և մանիքեական անունները գործ են ածվում առանց դրանց միջև տարբերություն դնելու: Սակայն այս դեպքում մոռացվել կամ հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ պավլիկյանները մանիքեականության հիմնադիր Մանիին ոչ միայն չեն ընդունել, այլև նզովել ու արհամարհել են: Պետրոս Սիցիլիացին, օրինակ, խոսելով մանիքեականների հաջորդների մասին, որոնք, նրա կարծիքով, պավլիկյաններն էին, միաժամանակ ասում է, որ այդ «Մանիքեցիների զավակները... եռանդագին նզովում են Սկյութիանոս Բուդդային և Մանիին»[5]: Այդ նույնը հաստատում են նաև Փոտը[6], Գեորգ Վանականը[7] և Կեդրենուսը[8]:

[1] „Хроника Георга Монаха", стр. 199.
[2] «Գրիգոր Մագիստրոսի Թղթերը», էջ 161:
[3] Տե՛ս Ադ. Երիցյան, Թոնդրակեցի հայք մեր օրերում, «Փորձ», Տփղիս, 1889, № X, էջ 94:
[4] Մուրացան, Թոնդրակեցիների աղանդը և էջմիածնի մի միաբանի այդ աղանդի մասին արած ակնարկները, «Նոր դար», 1892, № 35, էջ 1:
[5] P. Siculi, էջ 32:
[6] Տե՛ս „Его же святейшего Фотия Повествование", էջ 170:
[7] Տե՛ս „Хроника Георга Монаха", էջ 198:
[8] Տե՛ս Cedrenus, էջ 757:



Մինչդեռ, դարձյալ նույն հեղինակների վկայությամբ, պավլիկյաններն իրենց անմիջական ուսուցիչներին այնքան էին փառաբանում, որ նրանց համարում էին Քրիստոսի առաքյալներ: Այս բոլորից հետևում է, որ պավլիկյաններին մանիքեականներ անվանելը սխալ է, որովհետև եթե այդպես լիներ, նրանք ամենից առաջ պետք է ընդունեին Մանիի հեղինակությունը և ոչ թե նզովեին նրան: Այս հանգամանքը, սակայն, չի կարող ժխտել մանիքեության և պավլիկյանության գաղափարական աղերսը: Բյուզանդական սկզբնաղբյուրներում մանիքեականներին ու պավլիկյաններին նույնացնելու պատճառը կայանում է նրանում, որ մանիքեությունը վաղուց արդեն ծանոթ էր բյուզանդացիներին և իր ժամանակին մեծ իրարանցում էր առաջացրել եկեղեցական բնագավառում, և որպես սովորություն հետագայում էլ հույն հեղինակները կայսրության և քաղկեդոնական եկեղեցու բոլոր հակառակորդներին երբեմն ուղղակի մանիքեականներ էին անվանում: Որ իսկապես բյուզանդական միջնադարյան պատմագրության մեջ պավլիկյանները սովորության ուժով էին միայն մանիքեականներ կոչվում, այդ երևում է դարձյալ բյուզանդական սկզբնաղբյուրներից, որոնց հեղինակները միաժամանակ նշում են, որ այդ մանիքեցիները գյուղական գռեհիկ ձևով կոչվում են պավլիկյաններ: Օրինակ XII դարի բյուզանդական պատմիչ Զոնարան գրում է, որ մանիքեականները՝ «...գռեհկորեն պատմիչ Զոնարան գրում է, որ մանիքեականները՝ «...գռեհկորեն նաև պավլիկյաններ են կոչվում հասարակ ժողովրդի կողմից»[1], իսկ նույն ժամանակների մեկ այլ հեղինակ, խոսելով Մակեդոնիայի Ֆիլիպոպոլիս քաղաքի պավլիկյանների մասին, նրանց կոչում է մանիքեականներ և նշում, որ նրանց «Հասարակ ժողովուրդն անվանում է պավլիկյաններ»[2]:

Պավլիկյաններին ու մանիքեականներին նույնացնելն իր ժամանակին մերժել է անգլիացի հայագետ Կոնիբերը: Նա այդ մասին գրում է. «Այս ամենը, ինչ գրված է նրանց (պավլիկյանների) մասին, մոլորության մեջ է գցված Փոտի, Պետրոս Սիցիլացու և հունական այլ հեղինակների խարդավանքով, որոնք նրանց նկարագրել են իբրև մանիքեականների»[3]: Նույն տեղում Կոնիբերը վերջնականապես եզրակացնում է, որ պավլիկյաններն ու մանիքեականներն իրարից տարբեր են և նրանց չի կարելի շփոթել[4]:

Վերևում սկզբնաղբյուրներից բերված հիշատակություններից մենք տեսանք, որ պավլիկյանները պահպանում կամ դաստա-

[1] J. Zonarae, Epitome Historiarum, v. IV, Lipsiae, 1871, p. 6:
[2] M. Glycae, Annales, Bonnae, 1836, էջ 623:
[3] Fred. Conybeare, The Key of truth. Oxford, 1898, P. 6.
[4] Տե՛ս Fr. Conybeare, Ներածություն, p. 44:

պարտում էին ոչ միայն Մանիին, այլև Պավղոսին ու Հովհաննին։ Ուրեմն նրանք այս վերջին երկուսին էլ չէին ճանաչում որպես իրենց առաջնորդների։ Ուսումնասիրողներից ոմանք, հավանաբար հաշվի չառնելով այդ հիշատակությունները և հենվելով միայն Պետրոս Սիցիլացու վրա, գտել են, որ պավլիկյաններն իրենց ուսմունքի հիմնադիրներ էին համարում նաև Պավղոսին ու Հովհաննին[1]։ Այստեղից էլ նրանք բխեցնում են իրենց այն կարծիքը, թե Պավղոս և Հովհան անունների միացումից էլ առաջացել է պավլիկյան անունը։ «Սկզբում,— գրում է Բ. Սարգիսյանը,— հույները պավլիկյան աղանդը կոչում էին παυλοιωα'νοι —Պավղ-Հովհաննյան, սամոսատցի զույգ հարազատների անվամբ, իսկ հետո՝ παυλικιανοι պավլիկյանք»[2]։ Բ. Սարգիսյանը և մյուսները (Մ. Ջամչյան, Ն. Տաղավարյան) իրենց այս ենթադրության համար, անշուշտ, հիմք են ընդունել Կոնստանդնուպոլսի պատրիարք Փոտի ասածները, որ իբր παυλικια'ν բառը ծագել է Կալինիկեի երկու որդիների՝ Պավղոսի և Հովհաննի անուններից, որ այս աղանդավորներն սկզբնական շրջանում կոչվում էին παυλοιωα'νοι, իսկ հետագայում՝ ուղղակի παυλικιανοι[3]։ Պավլիկյանների անվան ծագումը այսպիսի բացատրությամբ, պետք է ասել, հավանական չէ հենց թեկուզ այն պատճառով, որ παυλοιωα'νοι և παυλικια'νοι բառերն իրարից տարբեր են և՛ ձևով, և՛ կառուցվածքով, ուստի իրար հետ կապ ունեցած չեն կարող։

Պավլիկյանների ծագումնաբանության հարցերով զբաղվող ուսումնասիրողների մի մասն էլ, հիմք ընդունելով դարձյալ բյուզանդական սկզբնաղբյուրները, պավլիկյան անունը կապում է միայն սամոսատցի Կալինիկեի որդի Պավղոսի անվան հետ, նրան վերագրելով նաև հայկական ծագում։ Այս տեսակետին է, օրինակ, Հիլֆերդինգը, որը դեռևս իր ժամանակին քննադատության է ենթարկվել ռուս ուսումնասիրողներից վ. Լևիցկու կողմից[4]։ Նույն կարծիքն ունի նաև Ֆր. Կոնիբերը, որը հատկապես շեշտելով պավլիկ բառի «իկ» մասնիկը, որ հայերենում ունի փաղաքշական, փոքրացուցիչ իմաստ, գտնում է որ պավլիկյանները հենց դիտա-

[1] Տե՛ս *J. Friedrich*, Der ursprüngliche bei Georgios Monachos nur teilweise erhaltene Bericht über die Paulikianer, „Sitzungsberichte der philosophisch-philologischen und der historischen Klasse", der K. b. Akademii der Wissenschaften zu München, 1896, I Heft, s. 91.

[2] Բ. Սարգիսյան, *Ուսումնասիրություն...*, էջ 37։

[3] Տե՛ս *K. Ter-Mkrttschian*, Die Paulikianer..., s. 9.

[4] Տե՛ս *В. Левицкий*, Богомильство-болгарская ересь, „Христианское чтение", № 1, СПб, 1870, էջ 28, ծանոթ. 1։



վորյալ կերպով էլ օգտագործել են այդ ձևը, որպեսզի ցույց տան, որ իրենք ոչ թե Պողոս առաքյալի, այլ փոքր Պողոսի, այսինքն սամոսատցի Պողոսի հետևորդներն են. «Եան կամ իան վերջավորությունը,— գտնում է Կոնիբերը,— պետք է նշանակի հետևորդ կամ որդի բշվառ, փոքրիկ Պողոսի»[1]։

Բյուզանդական պատմիչներից նրանք, ովքեր խոսում են պավլիկյանների մասին, համարյա բոլորն էլ այդ շարժման հիմնադիր են համարում ոմն Պավղոսի, որը Հայաստան էր եկել Սամոսատից։ Այդ պատմիչներից ոմանք էլ հիշյալ Պավղոսին հայ են համարում։ Այսպես՝ Պետրոս Սիցիլացին նշում է, որ պավլիկյաններն իրենց անունն ստացել են սամոսատցի Կալինիկեի որդուց՝ Պավղոսից, որն իր Գեննեսիոս և Թեոդորոս որդիների և եղբոր՝ Հովհանի հետ անցնելով Հայաստան, սկսեց իր ուսմունքը քարոզել։ Պետրոս Սիցիլացու մոտ կարդում ենք. «Սամոսատցի մի կին Կալինիկե անունով ուներ երկու որդի՝ Պավղոս և Հովհաննես։ Եվ ահա այդ երկու իժերի ծնող էխիդնան դաստիարակելով և սովորեցնելով պիղծ աղանդին, նրանց Սամոսատից ուղարկեց որպես այդ մոլորության քարոզիչներ։ Նրանք հասնելով Ֆանարեա շրջանը, եկան մի գյուղ և գտնելով (որ) բնակիչները ագետ ու անհաստատակամ են (հավատի մեջ) այնտեղ սերմանեցին չարության թույնն ու թշնամանքի դառն որոմը։ Դրա համար էլ այդ գյուղը մինչև օրս կոչվում է Եպիսպարիս, իսկ աղանդը՝ քարոզիչների անունով։ Հենց այդ ժամանակվանից նրանք մանիքեականների փոխարեն (սկսեցին) պավլիկյաններ կոչվել»[2]։ Նույն աշխատության մեջ պատմիչն իր մտքերը շարունակում է այսպես. «Պավղոսը, ծագումով հայ, որն ուներ երկու որդի, որոնց անուններն էին Գեննեսիոս և Թեոդորոս, որոնց հետ և նա ծածուկ փախչում գալիս է Եպիսպարիս ...Այդ Պավղոսից էլ, մանիքեականների փոխարեն, պավլիկյաններն ստացել են իրենց անունը»[3]։ Իր աշխատության վերջում Փոտը նույնպես հանդում է Պետրոս Սիցիլացու եզրակացությանը[4]։

Սարաբոնի հիշատակություններից մենք իմանում ենք, որ Ֆանարիա շրջանը հնում մտնում էր Պոնտոսի մեջ[5]։ Քանի որ ըստ Սարաբոնի նրա միջով էին հոսում Լիկոս և Իրիս գետերը, ուրեմն Ֆանարեան պետք է ընդգրկեր այդ գետերի միջին հոսանքի՝ հավանաբար Ամասիա, Եվպատորիա և Նեոկեսարիա քաղաքների շրջան-

[1] *Fr. Conybeare*, էջ 4։

[2] *P. Siculi*, էջ 27—28։

[3] Նույն տեղում, էջ 36։

[4] Տե՛ս „Его же святейшего Фотия Повествование", էջ 181։

[5] Տե՛ս Սարաբոն, քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Երևան, 1940, էջ 73, 77, 79։

ները, որոնք անմիջապես սահմանակից էին Փոքր Հայքին նրա հյուսիս-արևմտյան կողմից։ Ֆանարիայի տեղադրությունը վերջնական ու ճիշտ պետք է լինի, որովհետև Սատաբոնը, լինելով Ամասիա քաղաքից, իր հայրենի վայրերի նկարագրության մեջ չէր կարող սխալվել։ Մնում է Եպիսպարխի հարցը, որի ճշգրիտ տեղադրությունը թեև հնարավոր չէ, բայց կարելի է ենթադրել, որ այն գտնվում էր Ֆանարիայում, Փոքր Հայքին մոտիկ մի վայրում[1]։

Պավլիկյաններին մանիքեական Կալինիկեի որդու՝ Պավղոսի անվան հետ է կապում նաև Գեորգիոս Կեդրենուսը, որը գրում է. «Եվ մանիքեականները պավլիկյաններ վերանվանվեցին ոմն Պողոս Սամոսատացուց՝ մանիքեական Կալինիկե կոչված կնոջ որդուց, որը (Կալինիկեն) երկու որդիներ ունեցավ՝ այդ Պողոսին և Հովհաննեսին։ Սրանց նա մանիքեական աղանդն ուսուցանելով, Սամոսատից Արմենական (թեմը) ուղարկեց որպես աղանդի քարոզիչներ։ Սրանք գալով Ֆանարիայի մի գյուղը, այդտեղից (սկսեցին) իրենց աղանդը սերմանել։ Դրանից հետո գյուղը վերանվանվեց Եպիսպարխ, իսկ նրանց աշակերտներն էլ՝ պավլիկյաններ»[2]։

Պետրոս Սիցիլացու ժամանակակից Փոտը նույնպես, Պավղոսի մասին խոսելիս, նրան վերագրում է հայկական ծագում, այն տարբերությամբ միայն, որ նա ընդունում է երկու Պավղոսների, մեկը Կալինիկեի որդուն, մյուսը՝ հայազգի Պավղոսին, որից և ըստ նրա առաջացել են պավլիկյանները։

Սկզբնաղբյուրների ոչ այնքան էլ պարզ հիշատակությունների պատճառով դժվար է, իհարկե, որոշակիորեն պարզել, թե պավլիկյան շարժման ծագման և նրա անվան առաջացման հարցը Կալինիկեի որդի Պողոսի՞, թե մյուս Պողոսի հետ է կապված, որը նույնպես հայ էր և ուներ նույնանուն որդիներ, ինչ որ Կալինիկեի որդի Պողոսը։

Պավլիկյան շարժման սկզբնավորման և նրա անվան առաջացման մասին վերևում ասածները կարելի է ամփոփել այսպես. մեզ հայտնի գրավոր հիշատակություններից ամենահինը, որտեղ խոսում է պավլիկյանների մասին, առայժմ անհերքելի կերպով մնում է Դվինի 554 թվականի «Ուխտ միաբանության Հայոց աշխարհին» խոսքը։ Ծանոթ բոլոր կարևոր սկզբնաղբյուրները պավլիկյան շարժման հիմնադիր են համարում Պավղոսին, որը կապ չունի ո՛չ Պողոս առաքյալի և ո՛չ էլ Պողոս Սամոսատացու հետ, և երրորդ, պավլիկյանության հիմնադիր Պավղոսն ազգությամբ հայ էր և ըստ կրոնքում կապված էր մանիքեականների հետ։ Այնուհետև, պարզվում է նաև, որ նախքան Պողոս-պավլիկյանի հանդես գալը Հայաստանի մոտիկ շրջաններում, այնտեղ բնակվում էին մանիքեականներ, որոնք դրանից հետո, միանալով պավլիկյաններին, սկսեցին կոչվել նրանց անունով։

Կեդրենուսի մի վկայությունից, մեզ թվում է, հնարավոր է նաև որոշել Պողոս-պավլիկյանի ասպարեզ գալու մոտավոր ժամանակը։ Խոսելով պավլիկյանների մեկ այլ առաջնորդի՝ Կոնստանդին-Սիլվանի մասին, Կեդրենուսը նշում է, որ նա սկսել է գործել Կոնստանդին Ռոմանոսի (642—668) թագավորության 13-րդ տարում, այսինքն՝ 654 թվականին, իսկ հետո, պատմելով մեզ արդեն ծանոթ Կալինիկեի որդու՝ Պավղոսի մասին, ավելացնում է. «Երկար ժամանակ անց, այդ Պավղոսից հետո, սրանք (պավլիկյանները) ունեցան այլ ուսուցիչ Կոնստանդին կոչվածին, վերոհիշյալ Սիլվանին»[1]։ Թեև պատմիչի այս տողերն ունեն շատ ընդհանուր բնույթ, սակայն մեզ թվում է, սխալ չի լինի, եթե Պողոսի հանդես գալու ժամանակը վերագրենք V դարի վերջերին և VI դարի ընկզբներին, այսինքն՝ Կոնստանդին Սիլվանից մոտ մեկուկես դար առաջ, մի ժամանակաշրջան, որը կարծեք արդարացնում է Կեդրենուսի «Երկար ժամանակ անց այդ Պավղոսից...» և այլն արտահայտությունը։ Ուրեմն հավանական է երևում, որ պավլիկյան շարժման հիմնադիրը եղած լինի Պավղոս հայը, որի անունով էլ այդ շարժումը կոչվել է պավղիկյան կամ պավլիկյան։ Մեր այս ենթադրության ընդունման դեպքում ավելի է ամրապնդվում վստահությունը Դվինի 554 թվականի Ուխտի թղթում պավլիկյանների անվան առաջին հիշատակության նկատմամբ։

Սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկություններից երևում է, որ պավլիկյանների ուսմունքի աստվածաբանական և փիլիսոփայական կողմը հիմնված է եղել երկվության սկզբունքի վրա։ Նրանք լինելությունը պայմանավորում էին բարության և չարության աստվածությունների գոյությամբ, որոնց հատուկ էր հարատև պայքարն ու հակասությունը։ Բուլղարիայի արքեպիսկոպոսին գրած իր թղթում Պետրոս Սիցիլացին այդ մասին ուղղակի ասում է հետևյալ

[1] Նախկինում ծանոթ չլինելով Սատաբոնի հիշատակությանը Ֆանարիա շրջանի մասին, մենք սխալ կերպով ենթադրել ենք, որ ինչպես Ֆանարիան, այնպես էլ Եպիսպարխը պետք է գտնվելիս լինեին Փոքր Հայքում (տե՛ս մեր «Պավլիկյան շարժումը Հայաստանում», էջ 145, նույնը ռուսերեն, էջ 173)։ Հ. Բարթիկյանը հնարավոր է համարում Եպիսպարխը նույնացնել Բարձր Հայքի Սպերի հետ (տե՛ս նրա՝ «Источники для изучения..», էջ 157—158)։ Ռ. Գե Երֆանիոնը Ֆանարիան նույնացնում է Թուրքիայի Տաշ-Օվայի շրջանի հետ, որի գլխավոր կենտրոնը Հեբեքն է՝ Եշիլ-Իրմակի հարավային կողմում, Կելկիտ-Իրմակի մոտ, տե՛ս Р. Бартикян, Источники...., էջ 157։

[2] *Gedrenus*, էջ 756—757։



[1] *Cedrenus*, էջ 757։

լը. «Ես ցանկանում եմ գրել, այսպես կոչված, մանիքեականների կամ պավլիկյանների աղանդի մասին ...նախ և առաջ, համաձայն նրանց աշխարհայացքի, ճանաչվում է երկու սկզբունք՝ չարության աստված և բարության աստված: Մեկը հանդիսանում է այս աշխարհի արարիչն ու նրա տիրակալը, մյուսը՝ հանդերձյալ աշխարհի»[1]: Նման արժեքավոր հիշատակությունների մենք հանդիպում ենք նաև ուշ շրջանի բյուզանդական հեղինակների մոտ: Այսպես՝ Եվթիմիոս Զիգաբենոսը, խոսելով սատանային վերագրվող տեսանելի, նյութական աշխարհի արարչության մասին, նշում է, որ այդ գաղափարը Բուլղարիայի բոգոմիլները վերցրել էին պավլիկյաններից: Այնուհետև, շարունակում է Զիգաբենոսը, պավլիկյաններն ասում էին, որ երկնքի, երկրի և վերջինում գոյություն ունեցող ամեն ինչի ստեղծողը սատանան է: «Այն ուսմունքը,— ասում է Զիգաբենոսը,— թե սատանան ստեղծեց երկնային հաստատությունը և, որ նա ջրերը հավաքեց նրանց համար պատրաստված տեղերում ու զարդարեց երկնային հաստատությունը և երկիրը, և մնացյալ ամենը ընդհուպ մինչև այն, որ նա շունչ փչեց նախաստեղծին, վերցված էր Մովսեսի կոսմոգոնիայից. բոգոմիլներն այս արարչությունը վերագրում էին սատանային՝ հետևելով պավլիկյանների ուսմունքին: Չէ՞ որ նրանք (պավլիկյանները) այս չար էակին վերագրում են ոչ միայն այս արարչությունը, այլև առաջին երկնքի և երկրի և, պարզ ասած, ամբողջ երկրայինի ստեղծումը»[2]: Պավլիկյան գաղափարախոսությունը ճիշտ նույն ձևով է մեկնաբանում նաև Նեդրենուսը, որի մոտ կարդում ենք. «Պավլիկյանները երկու ըսկըզբունք են ընդունում, ինչպես և նրանք (մանիքեականները): Նրանք ասում են, որ մի բան է միայն մեզ բաժանում հույներից, այն, որ մենք ընդունում ենք, թե կա այլ աստված՝ երկնային հայրը, որն այս աշխարհում իշխանություն չունի, այլ ապագայում, և այլ աստված՝ աշխարհի արարիչը, որն ունի հենց այս աշխարհի իշխանությունը»[3]:

Պավլիկյանները բարության աստծուն անվանում էին «Տեր երկնից» կամ «Երկնային աստված», իսկ չարությանը՝ «Զորություն» կամ «արարիչ աշխարհի»: Պավլիկյանները գտնում էին, որ այն, ինչը հոգևոր է և վերաբերում է հանդերձյալ կյանքին, պատկանում է բարության աստծու թագավորությանը, իսկ զգայականի, տեսանելիի ու նյութականի տերը չարության աստվածն է, որին նրանք

[1] *Пётр Сицилийский*, Сборник документов по социально-экономической истории Византии, Москва, 1951, стр. 122.

[2] *Eut. Zigadeni*, Narratio de Bogomilis, Cottingae, 1842, p. 14.

[3] *Cedrenus*, էջ 758:



Երեմն կոչում էին նաև սատանա: Այս երկու իրար հակառակ ուժերը կռվում էին մարդ արարածի վրա իշխանություն ձեռք բերելու համար: Նյութականի ու զգայականի արարչությունը պավլիկյանների կողմից չարության աստծուն վերագրելու մասին, բյուզանդացիից բացի, վկայում են նաև հայկական աղբյուրները: Այսպես՝ Գրիգոր Մագիստրոսի «Առ կաթողիկոսն Ասորւոց» թղթում կարդում ենք. «Եւ ասեն (պավլիկյանները) արարիչ երկնի և երկրի զսատանայ և ամենայն մարդկային սեռի և ամենայն ստեղծուածոց»[1]: Պավլիկյանների մոտ բարության աստվածն անծանոթ է մնում մարդկանց այնքան ժամանակ, մինչև որ հանդես է գալիս Քրիստոսի կերպարանքով:

Հայտնի է, որ երկվության սկզբունքը և չարի ու բարու գոյության հանգամանքը ընդունելի է եղել հին կրոնական ուսմունքներից շատերի համար (զրադաշտություն, մանիքեություն և այլն), որոնց մոտ նյութի և հոգու կամ չարի ու բարու պայքարը վերջիվերջո հանգեցվում էր աշխարհի ճանաչողության իդեալիստական ըմբռնմանը, այսինքն նյութի նկատմամբ հոգու հաղթանակին: Ուրեմն, պավլիկյանների գաղափարախոսության մեջ նույնպես երկվությունը, որպես փիլիսոփայական ըմբռնողություն, նորություն չէր:

Եթե մեզ հայտնի չլիներին պավլիկյանների գաղափարախոսության մյուս կողմերն ու նրանց քաղաքական պատմության մանրամասնությունները, գուցե պավլիկյան ուսմունքի երկվությունը նույնպես առանձին ու նոր հետաքրքրություն չառաջացներ:

Պավլիկյան շարժման պատմությունը, ինչպես այդ կտեսնենք հետո, ցույց է տալիս, որ այն ուղղված էր սոցիալական անհավասարության և դասակարգային հասարակության դեմ: Եթե այդպես է, ուրեմն պավլիկյան գաղափարախոսության մեջ եղած դուալիզմը չի կարող սովորական ձևով մեկնաբանվել, այսինքն՝ հանգեցվել նյութականի ժխտմանը և հոգեկանի հաղթանակին: Եթե այդպես լիներ, այն դեպքում պավլիկյան շարժումն ամբողջությամբ իմաստազրկվում է և անհասկանալի դարձնում նրա մասսայականությունն ու հարատևումը և այն էլ ոչ միայն հայկական շրջանակներում: Այս բոլորն ասելու հետ մեկտեղ մենք, այնուամենայնիվ, չենք կարող անուշադրության մատնել սկզբնաղբյուրների որոշակի տվյալները:

Պավլիկյանների գործնական պայքարի ու նպատակների և գաղափարախոսության մեջ գոյություն ունեցող այս հակասությունը լիովին հասկանալի կլինի, եթե մենք ի նկատի ունենանք, որ այդ շարժման հիմնական կրողները հանդիսանում էին գյուղացիներն ու

[1] «Գրիգոր Մագիստրոսի Թղթերը», էջ 161:

ճնշվող, հարստահարվող մյուս խավերի ներկայացուցիչները, որոնք այն ժամանակվա պայմաններում հիմնավորապես չըմբռնելով հասարակության զարգացման օրենքներն ու օրինաչափությունները, ի վիճակի չէին նաև գիտականորեն բացատրելու հասարակական հարաբերությունների մեջ գոյություն ունեցող հակասությունները և դրանց անմիջական հետևանքները հանդիսացող սոցիալական անհավասարությունը, ճնշումն ու շահագործումը և նրանք ակամայից պետք է մի տեսակ չարությամբ լցվեին, բայց ոչ թե նյութականի, այլ այն նյութական աշխարհի կառավարման եղանակի և մարդկության քախտն անարդար կերպով տնօրինող չար ուժերի դեմ, որոնց խտացված պատկերը նրանք տեսնում էին սատանայի մեջ։ Ուրեմն, պավլիկյանները ոչ թե նյութն ու զգայական աշխարհը, այլ նյութականի վրա իշխանության իրավունք ձեռք բերած ուժերին էին համարում չարության կամ սատանայի ծնունդ և իրենց ամբողջ պայքարը գործադրում էին այդ ուժերը խորտակելու և ոչնչացնելու համար, հանուն այն բանի, որպեսզի հասարակության բոլոր անդամները կարողանային հավասարապես վայելել նյութական աշխարհի բարիքները։

Այսպիսով, թեև պավլիկյանները գաղափարապես ընդունում էին երկվության սկզբունքը, բայց այդ հարցում հետևողական չէին, որովհետև նրանք չարի ու բարու կամ նյութականի և հոգեկանի պայքարը չէին հանգեցնում հոգու հաղթանակին ու նյութականի ժխտմանը, ինչպես այդ անում էին երկվության սկզբունքն ընդունող մյուս բոլոր ուսմունքները, այլ ընդհակառակն, այդ պայքարում տեսնում էին նյութական ու զգայական աշխարհն այնպես, ինչպես այն գոյություն ուներ և ձգտում էին տիրել ու ղեկավարել այդ աշխարհը հասարակության մեծամասնության համար ընդունելի եղանակով։

Պավլիկյանների գաղափարախոսության հիշյալ կողմի տրամաբանական հաստատումը մենք գտնում ենք նաև մեկ այլ կարևոր դրույթի մեջ, այդ այն էր, որ նրանք հիմնավորապես ժխտում էին նյութականի համար անդրշիրիմյան կյանքի գոյությունը։ Նրանք պարզ կերպով ասում էին, որ քայքայման ենթակա մարմինը չի կարող այլևս վերակենդանանալ կամ հարություն առնել, որովհետև մահվանից հետո մարմինը քայքայվում և դադարում է որպես այդպիսին գոյություն ունենալուց։

Մեսրոպ Մաշտոցի անվան Երևանի Մատենադարանի № 687 (809) ձեռագրում այդ մասին ուղղակի ասվում է. «Եւ սոքա (պավլիկյանները) վասն մեռելոյ պատարագս ոչ ընդունին և ոչ կատարեն, զի ապականացու և հողեղէն բնութիւնս նորոգութիւն ոչ խոստովանին»[1]։

Մարմնականի համար հանդերձյալ կյանքի ժխտումից էր բխում նաև պավլիկյանների կողմից պատարագի մերժումը, որը քրիստոնեությունը հորինել էր իբր ննջեցյալներին մեղքերից մաքրելու և դրախտին արժանացնելու համար։

Մարմնի կամ նյութի անդրշիրիմային գոյության ժխտումը դեռևս չի նշանակում, թե պավլիկյաններն ընդհանրապես մերժում էին հանդերձյալ կյանքի հասկացողությունը։ Հենց այն հանգամանքը, ինչպես վերևում ասվել է, որ պավլիկյաններն ընդունում էին երկնային աստծու և հոգեկանի վրա նրա թագավորությունը հանդերձյալ կյանքում, հաստատում է, որ նրանք չէին հրաժարվում հոգու համար անդրերկրային կյանքն ընդունելուց։ Եվ դա հասկանալի է, որովհետև պավլիկյանները նույնպես աստվածապաշտներ էին և ոչ թե աստծու գոյությունն ընդհանրապես մերժող աթեիստներ։

Պավլիկյանների գաղափարախոսության մեջ հետաքրքիր ձևով է դրվում նաև Քրիստոսի նկատմամբ ունեցած վերաբերմունքի հարցը։ Ժխտելով Քրիստոսի մարդեղությունը, այսինքն նրա մարդկային հատկանիշները և ընդունելով միայն աստվածայինը, պավլիկյանները փաստորեն պաշտպանում էին հայոց միաբնակ եկեղեցուն՝ ընդդեմ բյուզանդական երկաբնակ եկեղեցու։ Ուրեմն, պավլիկյանների հակադրությունը բյուզանդական եկեղեցուն ուներ նաև քաղաքական բովանդակություն, որովհետև հայ ժողովրդին և առանձնապես պավլիկյաններին ճնշելու ու շահագործելու մեջ այդ եկեղեցին խիստ վճռական դեր էր կատարում։ Այնուամենայնիվ պավլիկյանները տեսականորեն ընդունում էին Քրիստոսի մարդկային կերպարը և ասում, որ նա միայն երևույթով էր մարդկային, իրականության մեջ նա մարդկային ու նյութական չէ։ Պավլիկյանները Քրիստոսին մարդկային ու նյութական հատկանիշներ չէին կարող վերագրել, որովհետև, ինչպես վերևում արդեն ասվել է, նրանք նյութականի ստեղծողը կամ, ավելի ճիշտ, նրա վրա իրավունք ունեցողը համարում էին չարության աստծուն։ Եթե այդպես է, ուրեմն պետք է փոխվեր նաև Քրիստոսի ու Մարիամ Աստվածածնի փոխհարաբերությունը։ Պավլիկյանները գտնում էին, որ Քրիստոսը ոչ թե ծնվել է Մարիամից, այլ, գալով երկնքից, նա անցել է Մարիամի

[1] Ձեռ. № 687 (809), էջ 385 բ։

միջով՝ որպես խաղովակի[1]։ Ուրեմն, Մարիամը լոկ միջնորդ օղակի դեր է կատարել և ոչ թե աստվածածնի։ Ժխտելով Մարիամի աստվածածնությունը, պավլիկյանները միաժամանակ ժխտում էին նաև նրա պաշտամունքը։ «Նրանք (պավլիկյանները),— կարդում ենք Պետրոս Սիցիլացու մոտ,— հարգված բարի մարդկանց շարքից հանում են հավերժական կույսին (Աստվածածնին)»[2]։ Այստեղից նրանք եզրակացնում էին, որ Քրիստոսի մայրը ոչ թե Մարիամն է, այլ երկինքը, որին կոչում էին Վերին Երուսաղեմ։ Դեռ ավելին, պավլիկյանները Մարիամին այնքան մարդկային էին պատկերացնում, որ ասում էին, թե նա Քրիստոսից հետո Հովսեփից ուրիշ զավակներ էլ է ունեցել[3]։

Պավլիկյանները Քրիստոսին անվանում էին անսկիզբ և ժխտում նրա հարությունը։ Եվ որովհետև նրա մարմինը համարում էին ոչ իրական, այլ երևութական, դրա համար էլ պավլիկյանները Քրիստոսի անձի հետ կապված բոլոր այսպես ասած տանջանքներն ու չարչարանքները մերժում էին։ Քրիստոսի ու Մարիամի հետ կապված քրիստոնեական դոգմաները մերժելուց հետո պավլիկյանները հետևողականորեն մերժում էին նաև եկեղեցական բազմաթիվ ծեսերն ու խորհուրդները, որոնք մեծ մասամբ կապված էին Քրիստոսի անձնավորության հետ։ Այդ ծեսերից հաղորդության և պատարագի մասին արդեն խոսվել է։

Հետաքրքիր է պավլիկյանների տված բացատրությունը իրենց կողմից խաչի պաշտամունքի ժխտմանը։ Նրանք գտնում էին, որ խաչին ոչ թե պետք է երկրպագել, այլ՝ նզովել, որովհետև նա խորհրդանշում է Քրիստոսի չարչարանքներն ու տանջանքները։ Պավլիկյանների կողմից խաչը չընդունելու և այն հայհոյելու մասին Պետրոս Սիցիլացին որոշակիորեն գրում է. «Նրանց (պավլիկյաններ) կողմից մեծարելի և կենարար խաչի գործունեությունն ու ուժը չի ընդունվում, և նրանք ենթարկում են նրան ամեն տեսակի հայհոյանքների»[4]։ Խաչի հետ կապված էր նաև խաչակնքելու արարողությունը, որից պավլիկյանները նույնպես հրաժարվում էին։ Սակայն սկզբնաղբյուրներից երևում է, որ պավլիկյաններից ոմանք խաչի

[1] Տե՛ս „Его же святейшего Фотия Повествование...“, էջ 171։

[2] *Пётр Сицилийский*, Сборник документов по социально-экономической истории Византии, стр. 122.

[3] Տե՛ս „Полезная история Петра Сицилийского“, էջ 121, նաև „Его же святейшего фотия Повествование“, էջ 171, *Michaelis Glycae*, p. 387.

[4] *Пётр Сицилийский*, Сборник документов..., стр. 122, „Полезная история Петра сицилийского“, стр. 125, „Его же святейшего Фотия Повествование“, стр. 171, *Cedrenus*, p. 759—760։



պաշտամունքի ժխտման մեջ այնքան էլ հետևողական չէին և երբեմն, հիվանդության ժամանակ, դիմում էին խաչի օգնությանը։ «Երբ նրանք հիվանդանում են մարմնական ծանր հիվանդությամբ,— ասում է Փոտը,— իրենց վրա դնում են պաշտելի, կենարար փայտե խաչը, և այն բանից հետո, երբ առողջանում են, ջարդում են այն, կոխկրտում և դեն են նետում»[1]։ Այդ նույնը հաստատում են նաև Գեորգ Վանականը[2] և Կեդրենուսը[3]։

Եկեղեցական ծեսերից մկրտությունը նույնպես պավլիկյանները մերժում էին։ Մկրտությունը, որը կատարվում էր ջրով ու մեռոնով, իբր հավատացյալներին մաքրում էր սկզբնական մեղքերից և կրկին ծնունդ տալով՝ արժանացնում հավիտենականության։ Մեռոնի օծումն ընդունելով, իբր, սուրբ հոգու ներգործությամբ մկրտվողն ազատվում էր ամեն տեսակի մոլորություններից և անխախտ պահում իր հավատը։ Գրիգոր Մագիստրոսը պավլիկյանների կողմից մկրտությունը մերժելու մասին գրում է. «Եւ յորժամ հարցանեմք եթէ ընդէր ոչ մկրտիք, զոր հրամայեաց Քրիստոս և առաքեալն. ասեն, ոչ գիտէք զխորհուրդ մկրտութեան. մեզ ոչ է փոյթ մկրտել, քանզի մկրտելն մահն է»[4]։

Պավլիկյանների կողմից խաչի, ս. Մարիամի, հաղորդության, մկրտության ու խաչակնքելու ժխտումը երևում է նաև պատրիարք Գերմանի կողմից Կոնստանդնուպոլսում նրանց առաջնորդ Գեննեսիոս-Տիմոթեոսի հարցաքննությունից։ Ճիշտ է, այդ ժամանակ, պավլիկյանների առաջնորդը թեև բյուզանդական դավանանքին հակառակ պատասխաններ չի տալիս, որի համար էլ նրան արդարացնում և ազատ են արձակում, սակայն իր պատասխանների մեջ Գեննեսիոսն այլաբանորեն բոլորովին ուրիշ միտք էր տեսնում, որն ամբողջովին հակառակ էր բյուզանդական եկեղեցուն։ Ահա այսպես է ներկայացնում Պետրոս Սիցիլացին պատրիարքի և Գեննեսիոս-Տիմոթեոսի հարց ու պատասխանը. «Տեսնելով նրան, պատրիարքը հարցնում է. «Ինչո՞ւ դու հրաժարվեցիր ուղղափառ հավատից»։ Նա պատասխանում է. «Նզովք ուղղափառ հավատից հրաժարվողին», (նա ուղղափառ հավատը իր սեփական աղանդն էր համարում)։ Պատրիարքը նրան հարց է տալիս. «Ինչո՞ւ (դու) չես հավատում ու չես երկրպագում հարգարժան խաչին»։ Նա պատասխանում է. «Նզովք նրան, ով չի երկրպագում ու կենարար խաչը հարգարժան չի

[1] „Его же святейшего Фотия Повествование“, стр. 173.

[2] Տե՛ս „Хроника Георгия Монаха“, էջ 201։

[3] Տե՛ս *Cedrenus*, էջ 761։

[4] «Գրիգոր Մագիստրոսի Թղթերը», էջ *161*։

համարում»: Նա Քրիստոսին էր խաչ համարում, որն իր պարզած բազուկներով ստեղծել էր խաչի կերպարը: Նորից հարցնում է նրան. «Ինչու՞ դու չես երկրպագում սուրբ Աստվածածնին ու չես խոնարհվում նրա առաջ»: Նա պատասխանում է. «Նզովք նրան, ով չի խոնարհվում սրբազնագույն Աստվածածնին, մեր բոլորի մորը, ուր մուտք գործեց տեր մեր Հիսուս Քրիստոսը»: Նա այդպիսին համարում էր վերին Երուսաղեմը, ուր հանուն մեզ մուտք գործեց նախակարապետ Քրիստոսը: Պատրիարքը նորից հարցնում է նրան. «Ինչու դու չես հաղորդվում տեր մեր Հիսուս Քրիստոսի անապական մարմնով և պատվելի արյամբ, և ընդհակառակը, անարգում ես այդ (խորհուրդը)»: Ֆիմոֆեոսը[1] պատասխանում է. «Նզովք նրան, ով չի հաղորդվում տեր մեր Հիսուս Քրիստոսի մարմնով ու արյամբ և անարգում է նրան»: Նա ի նկատի ուներ նրա (Քրիստոսի) խմասուալից խոսքերը: ...Այդպիսով Ֆիմոֆեոսն աղավաղելով ամեն ինչ և յուրաքանչյուր անգամ նզովք կարդալով, ճանաչվից չարին անհաղորդակից և, կայսրից սիգելներ ստանալով, կրկին եկավ Եպիսպարիս»[2]: Բելգիական բյուզանդագետ Հ. Գրեգուարը Գոնեսիոս-Տիմոթեոսի Կոնստանդնուպոլիս դնալը, արդարանալն ու վերադարձը վերագրում է Լևոն III Իսավրացու (717—741) գահակալության առաջին տարվան, այսինքն՝ 717 թվականին[3]:

Այնուհետև, պատարագի ժխտումից հետո, պավլիկյանները ժխտում էին նաև հոգեհանգստի արարողությունն ու հոդու հացի անհրաժեշտությունը: Նրանք մերժում էին նաև զոհաբերությունը (մատաղ), խնկարկումը, թաղման ու ամուսնության, և բազմաթիվ ու բազմապիսի ուրիշ ծեսեր և արարողություններ, որոնք ըստ էության ծառայում էին ժողովրդի եկամուտների մի մասն անուղղակի ճանապարհով կորզելուն:

Պավլիկյան շարժումը, որպես դեմոկրատական և հեղափոխական շարժում, չէր կարող իր վերաբերմունքը ցույց չտալ նաև կնոջ, սիրո և ամուսնության հարցերին: Պավլիկյանները, ինչպես քիչ հետո կտեսնենք, առաջ քաշելով եկեղեցական հաստատությունների և հոգևոր դասի ոչնչացման հարցերը, փաստորեն ամուսնությունը նույնպես ազատում էին եկեղեցու կաշկանդիչ կապանքներից ու դրնում ազատ ընտրության ու ազատ սիրո սկզբունքների վրա: Հակառակ եկեղեցու սկզբունքներին, սիրո և ամուսնության հարցերի այդպիսի դրվածքը պավլիկյանների կողմից ոչ միայն ամուսնության բնագավառն ազատում էր եկեղեցու միջամտությունից, այլև եկեղեցուն ու հոգևորականությանը զրկում էր հսկայական եկամուտներից: Դրա համար էլ պավլիկյանների դասակարգային թշնամիներն ըստ էության ոչինչ չունենալով պավլիկյաններին հակադրվելու, սկսում էին զրպարտել ու կեղտոտ հերյուրանքներ տարածել նրանց հասցեին: Կնոջը հատարակության ակտիվ անդամների շարքը դասելու պավլիկյան գաղափարները, ինչպես ճիշտ կերպով նկատել է բանասիրական գիտությունների դոկտ. Գր. Գրիգորյանը, խորացնել են նաև հայկական ժողովրդական դյուցազներգության՝ «Սասնա ծռեր»-ի վրա[1]: Ջմշկիկ սուլթանը, Խանդութը, Շովինարը, Գոհարը վեպում այդ նոր գաղափարները մարմնացնող հերոսներն են: Հայ աշխատավորության կողմից պավլիկյան գաղափարների ազդեցության, եկեղեցական որոշ ծեսերի ու խորհուրդների նկատմամբ թերահավատության վերաբերվելու և դրանք ամբողջապես ժխտելու գաղափարը նույնպես իր արտացոլումն է գտել «Սասնա ծռեր»-ում: Սանատարի ու Բաղդասարի կնունքը Թոնրի կրակի վրա և Դավթինը երինջների արյամբ՝ պավլիկյան գաղափարախոսության հետևողական արտահայտություններն են դյուցազներգության մեջ[2]:

Մի կողմ թողնելով այն, որ պավլիկյանների ուսմունքի մեջ այնուամենայնիվ կրոնական-աստվածաբանական կողմը չէր անտեսվում և պավլիկյանները չէին դնում կրոնի ու պաշտամունքի իսպառ վերացման հարցը, մեզ համար ամենակարևորը այդ շարժման ներքին սոցիալական էությունն էր: Ժխտելով քրիստոնեական ծեսերն ու խորհուրդները, պավլիկյանները դրանով իսկ կարում էին հոգևորականության ու եկեղեցու հարստացման մի ամենակարևոր աղբյուրը և առաջարկում էին պաշտամունքի ավելի պարզ ձևեր, որոնք մարդկանցից նյութական զոհողություններ չէին պահանջում:

Պավլիկյանների գաղափարախոսության մեջ առանձին հետաքրքրություն է ներկայացնում նաև եկեղեցական պաշտոնական գրականության նկատմամբ նրանց ունեցած վերաբերմունքի հարցը: Պավլիկյաններին ժամանակակից և հետագա հեղինակների վկայություններից երևում է, որ նրանք ամենից առաջ մերժում էին Հին Կտակարանը և գտնում, որ այդ աշխատությունը հորինված է

[1] Պետրոս Սիցիլացին, բառախաղի տալով, Տիմոթեոսի փոխարեն որպես արհամարհանք գործածում է Ֆիմոֆեոս ձևը:

[2] „Полезная история Петра Сицилийского", стр. 139.

[3] Տե՛ս H. Gre'goire, Pour lHistoire des églises Pauliciennes, Roma, 1947, էջ 511:



[1] Տե՛ս Գր. Գրիգորյան, Ներքին հարստահարիչների դեմ հայ ժողովրդի մղած սոցիալական պայքարի արտացոլումը «Սասնա ծռեր» էպոսում, ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, № 2, 1954, էջ 42:

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 37, 41:

չարության աստծու՝ սատանայի կողմից։ «Նրանք,— ասում է Պետրոս Սիցիլացին,— չեն ճանաչում Հին Կտակարանը՝ մարգարեներին անվանելով հիմարներ և խաբեբաներ»[1]։ Պետրոս Սիցիլացու ասածները նույն ձևով հաստատում է նաև Փոտ պատրիարքը[2]։ Պավլիկյանների կողմից Հին Կտակարանի մերժման մասին տեղեկություններ կան նաև հայկական աղբյուրներում։ Այսպես, օրինակ, Բողբենի հայերեն ձեռագրերից մեկում ասվում է. «Վասն մանիքեցոցն, որ են Պոլէականք։ Զի չիմար մանիքեցիքն ասեն թէ սատանայ Աստուած և ստեղծող էր Հին Կտակարանին...»[3]։

Հին Կտակարանի, որպես հեղինակավոր աղբյուրի, մերժման մեջ, կարելի է ասել, պավլիկյանները ռեալ հիմքեր ունեին։ Ամենից առաջ պետք է ի նկատի ունենալ, որ եկեղեցական այդ գրքում արհեստականորեն միացվել են տարբեր հեղինակների ձեռքով և տարբեր ժամանակներում գրված պատմություններ, որոնք մեծ մասամբ չունեն նաև ներքին կապ։ Եվ, երկրորդ, Հին Կտակարանի մեջ ներկայացվող այսպես ասած սրբերն ու մարգարենները, որոնք իրենց կենցաղով և բարոյական հատկանիշներով պետք է շատ բարձր կանգնած լինեին մյուսներից, հանդես են գալիս որպես ոչ պարկեշտ անձինք։ Դրա համար էլ նրանք համակրանքի ու պատկառանքի փոխարեն մարդկանց մեջ ավելի շատ հակակրանք են առաջացնում և իրենց վարքագծով չեն կարող դրական օրինակ ծառայել մյուսներին։ Այդ պատճառով էլ պավլիկյաններն արդարացի կերպով նրանց բոլորին անվանում էին խաբեբաներ ու չարության աստծու ծառաներ։

Պավլիկյանները, Հին Կտակարանին հակառակ, որոշ չափով հանդուրժում էին Նոր Կտակարանը, սակայն նրանից ընդունում էին միայն Ղուկաս Ավետարանիչի բաժինը, իսկ մյուսներին վերաբերվում էին քննադատորեն։ Պավլիկյանները Ղուկասի Ավետարանին համահավասար արժեք էին տալիս նաև Պողոս առաքյալի Թղթերին և իրենց հետևորդներին հանձնարարում էին կարդալ միայն այս երկու գրքերը[4]։ Հետաքրքիրն այն է, որ, ինչպես Կեդրենուսն է վկայում, պավլիկյանները Նոր Կտակարանի համապատասխան բաժինն ու Պողոսի Թղթերը փոփոխում, հարմարեցնում էին իրենց պահանջներին և հետո օգտագործում[1]։

Սրբերին համարելով նյութական աշխարհի վրա իշխող չարության աստծու ծառաներ, պավլիկյանները միաժամանակ մերժում էին սրբավայրերի, այսինքն վանքերի, եկեղեցիների, ուխտատեղիների և սրբապատկերների պաշտամունքը։ Պավլիկյանների կողմից սրբերի գոյությունը մերժելու մասին Մատենադարանի № 687 (809) ձեռագրում ասվում է. «Սոքա (պավլիկյանները) զբարեխօսութիւն սրբոցն ոչ ընկալան»[2]։ Հայտնի է, որ այսպես ասած հրաշագործ սրբապատկերների պաշտամունքի ստեղծման նպատակը էր՝ մեծացնել եկեղեցու ազդեցությունը մասսաների վրա և նրանց մեջ բորբոքել կրոնական ջերմեռանդություն։ Դրա համար էլ պայքարը սրբապատկերների դեմ փաստորեն նշանակում էր պայքար եկեղեցու հեղինակության ու ազդեցության դեմ[3]։ Փիլիսոփայական գիտությունների դոկտոր Վ. Զալոյանը, անդրադառնալով պավլիկյանների կողմից սրբապատկերների մերժմանը, իրավացիորեն գտնում է, որ պավլիկյանները դրանով փաստորեն հանդում էին աստծու ճանաչողության ռացիոնալիստական ըմբռնողությանը, մի հանգամանք, որը կարևոր նշանակություն ունի եվրոպական վերածննդի ուսումնասիրության համար[4]։ Սակայն պետք է նշել, որ սրբապատկերների մերժումը թեև գաղափարական որոշ ընդհանրություն էր ստեղծում պավլիկյանների և պատկերամարտիկների միջև, միաժամանակ, տակայն, ընդգծում էր նաև դրանց արմատական ու գաղափարագային տարբերությունը։

Պատմագիտական նորագույն ուսումնասիրություններում ցույց է տրված, որ պատկերամարտությունը, որպես խոշոր չափի հասարական շարժում, կոչված էր նպաստելու ստրկատիրական կարգերի կործանմանը Բյուզանդիայում։ Այդ շարժումը չէր օգնում խոշոր հողատիրության զարգացմանը և արդեն VIII դարում Բյուզանդիայում բավականին ամրապնդվել էր մանր հողատիրությունը, որի տերը ազատ գյուղացին էր։ Եվ եթե պատկերամարտիկները սրբապատկերների ժխտումով ձգտում էին, եկեղեցական հաստատության

[1] *Пётр Сицилийский*, Сборник документов ..., стр. 122, „Полезная история Петра Сицилийского", стр. 125.

[2] *Տե՛ս* „Его же святейшего Фотия Повествование", էջ 172։

[3] „General Catalogue of the Armenian Manuscripts in Bodlein Librari of Oxford"։

*Կազմել է Տիրայր Վարդապետը, Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, Արխիվային բաժին, Տիրայր վարդապետի արխիվը, թղթապանակ № 119, էջ 110 վ։*

[4] *Տե՛ս* „Его же святейшего Фотия Повествование", էջ 169, „Полезная история Петра Сицилийского", էջ 132։



[1] *Տե՛ս Cedrenus*, էջ 757։

[2] *Ձեռ. № 687 (809)*, էջ 385 բ։

[3] *Տե՛ս М. Сюзумов*, Проблемы иконоборчества в Византии, „Учёные записки" Свердловского государственного педагогического института, вып. 4, Свердловск, 1948, стр. 79.

[4] *Տե՛ս В. Чалоян*, Основные вехи развития философской мысли в Армении (V—XIII вв.), *տե՛ս ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայության բաժնի աշխատություններ, հ. I, Երևան*, 1950, էջ 124—125։

պահպանմամբ, սահմանափակել միայն հոգևոր առաջնորդների իրավունքները և ընդհանրապես չէին ժխտում եկեղեցական ունեցվածքը, և այդքանով էլ վայելում էին մասսաների պաշտպանությունն ու հովանավորությունը, ապա պավլիկյաններն առաջարկում էին անհամեմատ արմատական պահանջներ. նրանք դնում էին եկեղեցական սոորակարգության (հիերարխիայի) և եկեղեցիների ընդհանրապես ոչնչացման խնդիրը[1]:

Պավլիկյան շարժման սկզբնավորման և զարգացման ժամանակաշրջանում եկեղեցին և եկեղեցական մյուս հաստատությունները ինչպես Հայաստանում, այնպես էլ Բյուզանդիայում ու նրան ենթակա հայկական շրջաններում գտնվում էին բացառիկ արտոնյալ վիճակում: Նրանք կալվածատիրական խոշոր հաստատություններ էին և տիրում էին հսկայական հարստությունների: Այս տեսակետից շատ բնորոշ է Պրոկոպիոս Կեսարացու վկայությունը Հուստինիանոս I-ի (527—565) կողմից մի վանքի արած առանձնաշնորհումների մասին: «Պատմել ամենայն ճշգրտությամբ վանքի այն դանձերի մասին, որոնք Հուստինիանոս կայսրը նվիրեց՝ ոսկյա սպասների, արծաթյա իրերի և թանկարժեք քարերի մասին, հնարավոր չէ,— ասում է պատմիչը,— ...Այն տեղը, որը հանդիսանում է ավելի սրբազան և որը կոչում են բեմ, ունի մի գահ 40.000 ֆունտ արծաթի (արժողությամբ)»[2]: Ականավոր բյուզանդագետ Ե. Լիպշիցը բերում է Հուստինիանոս II-ի (685—695) կողմից 687 թվականին հրավիրված Տրուլլի եկեղեցական ժողովի կանոններից հատվածներ, որոնք բացահայտում են այն ժամանակվա հոգևորականության իսկական պատկերը: Այդ կանոնները ցույց են տալիս, որ բյուզանդական հոգևորականությունն այնքան էր հարստացել ու ուռճացել, որ զբաղվում էր վաշխառությամբ, ձիարշավներով, խաղում էր մոլի խաղեր և այլն: Իսկ կույսերը հագնվում էին շքեղ, զարդարված ոսկով և թանկարժեք քարերով, գիշերում էին վանքերից դուրս և նույնիսկ չէին բարեհաճում մասնակցելու եկեղեցական ժողովներին[3]: Այդպիսի տեղեկությունների մենք հանդիպում ենք նաև հետագայում: Հովհան Երուսաղեմացին, օրինակ, ասում է, որ «Եպիսկոպոսները ոչինչի մասին հոգ չէին տանում բացի ձիերից, ոչխարներից, երամակներից ու դաշտերից...: Նրանք միայն մտահոգված

[1] Տե՛ս Е. Липшиц, Павликианское движение в Византии в 8-ом и в первой половине 9-го вв., „Византийский временник", т. 5, Москва, 1952, էջ 71, М. Сюзумов, Проблемы иконоборчества в Византии, էջ 85, 96:

[2] Նույն տեղում, էջ 104:

[3] Տե՛ս Е. Липшиц, Павликианское движение в Византии..., էջ 68:



էին փողի հարցով»[1]: VIII և հետագա դարերում Բյուզանդիայում հողային սեփականության մեծ մասը գտնվում էր վանքերի, եկեղեցիների և հոգևորականների ձեռքին[2]:

Վանական և եկեղեցական կյանքի զարգացումը Բյուզանդիայում զնալով էլ ավելի մեծ չափեր էր ընդունում: Եկեղեցական կալվածատիրության ընդարձակումը, հոգևորականության հարստությունների օրըստօրե մեծացումն ու եկեղեցական դասի քանակական աճը, պետության ներսում եկեղեցու և հոգևորականության քաղաքական ու տնտեսական աղդեցության ընդարձակման հետ մեկտեղ, ուժեղացնում էր նաև մասսաների շահագործումը, որովհետև այդ բոլորը կատարվում էր ի հաշիվ աշխատավորության:

Պավլիկյանները գտնում էին, որ աստծուն երկրպագելն ավելորդություն է, որովհետև աստված դրա կարիքը չի զգում, իսկ ինչ վերաբերվում է մարդկանց, ապա նրանք, եթե հավատում են աստծու գոյությանը, կարող են առանց եկեղեցու և եկեղեցական սպասավորների միջնորդության կապվել նրա հետ ու աղոթել որտեղ որ ցանկանան և երբ կարողանան, որովհետև աստված ամենաղոր է և ամեն տեղ: Դրա համար էլ պավլիկյանները «...չէին ընդունում եկեղեցական պաշտամունքը»[3]: Հենց դրանից էլ պավլիկյանները բխեցնում էին իրենց ամենակարևոր դրույթը եկեղեցական նվիրապետության և հոգևոր դասի վերաբերյալ: Պետրոս Սիցիլացին հաստատում է, որ պավլիկյաններն ամբողջությամբ մերժում էին եկեղեցական նվիրապետության և հոգևոր դասի գոյությունը[4]: Եվ դա հասկանալի է, որովհետև սրբավայրերի և եկեղեցական այլ հաստատությունների մերժումից հետո, երբ դրանց սպասավորական կազմն այլևս անելիք չպետք է ունենար, բնականաբար պետք է զրկվեր նաև իր նախկին զբաղմունքից: Եկեղեցական դասի գոյության մերժման մասին, Պետրոս Սիցիլացուց բացի, հիշատակում է նաև Գեորգ Վանականը[5]: Ըստ Փոտի, պավլիկյաններն իրենց կողմից հոգևորականության մերժումը մեկնաբանում էին նրանով, որ հենց այդ դասի ներկայացուցիչների դավաճանության ու մատնության պատճառով էր Քրիստոսը հալածանքների ու տանջանքների ենթարկվել[6]: Սակայն դա հարցի միայն արտաքին և ձևական կողմն էր: Եկեղեցական նվիրապետության ժխտումը փաստորեն պավլիկ-

[1] Е. Липшиц, Павликианское движение в Византии..., стр. 68—69.

[2] Տե՛ս Ш. Диль, История Византийской империи, Москва, 1948, էջ 93:

[3] Пётр Сицилийский, տե՛ս Сборник документов..., стр. 122.

[4] Տե՛ս „Полезная история Петра Сицилийского", էջ 126:

[5] Տե՛ս „Хроника Георгия Монаха", էջ 201:

[6] Տե՛ս „Его же святейшего Фотия Повествование", էջ 173:

յանների կողմից առաջ քաշված հարցերից ամենակարևորն էր, որովհետև այն իրականում ուներ շատ ավելի խոր ու սոցիալական մեծ բովանդակություն և բխում էր այդ շարժման հիմնական՝ այսինքն հակաֆեոդալական էությունից։

Մերժելով դարերով սրբագործված եկեղեցական հիերարխիան, պավլիկյաններն իրականում ոչ միայն ցանկանում էին բոլոր հավատացյալների համար ստեղծել ձևական ու արտաքին հավասարություն, այլև այդ ճանապարհով ոչնչացնում էին եկեղեցու սպասավորների իրավական և գույքային բոլոր արտոնություններն ու առանձնաշնորհումներն այն հաշվով, որպեսզի իրենց հետևորդներից և ոչ ոք նույնիսկ արտաքինով, հագուստներով ու ապրելակերպով մյուսներից չտարբերվի։ Այս հավասարեցումը, որն անշուշտ պետք է ունենար վաղ քրիստոնեական ժամանակաշրջանի բովանդակությունը, պավլիկյանների պայքարի ծրագրային ամենահիմնական կետն էր հանդիսանում։ Եվ հավասարեցման պավլիկյան գրույթը նույնիսկ այդպիսի շրջանակներում, ինչ խոսք, ֆեոդալիզմի պայմաններում, առաջադիմական երևույթ էր։

Ժխտելով եկեղեցական նվիրապետությունը և հոգևորականության հիերարխիան, պավլիկյանները փաստորեն հակադրվում էին նաև աշխարհիկ ֆեոդալական հիերարխիային և ֆեոդալական սիստեմին ընդհանրապես, որովհետև, ինչպես Ֆ. Էնգելսն է նշում՝ «Միջին դարերում, հենց այն չափով, ինչ չափով ֆեոդալիզմն էր զարգանում, քրիստոնեությունն ընդունում էր նրան համապատասխանող կրոնի կերպարանք՝ համապատասխան ֆեոդալական հիերարխիայով»[1]։ Մեկ ուրիշ առիթով Ֆ. Էնգելսն ասում է, որ քրիստոնեական եկեղեցին «Գոյություն ունեցող ֆեոդալական հասարակարգի ամենից ընդհանուր սինթեզն ու սանկցիան էր հանդիսանում»[2], ուստի «Այն բոլոր ընդհանուր բնույթ կրող հարձակումները, որ կատարվում էին ֆեոդալիզմի և ամենից առաջ եկեղեցու դեմ, ինչպես նաև ռևոլյուցիոն, հասարակական և քաղաքական բոլոր ուսմունքները միաժամանակ նաև աստվածաբանական հերետիկոսություններ պիտի լինեին։ Տիրող հասարակական հարաբերությունների վրա հարձակումը հնարավոր դարձնելու համար անհրաժեշտ էր հեռացնել սրբության այն շղարշը, որով սքողված էին այդ հարաբերությունները»[3]։

1 Ֆ. Էնգելս, Լյուդվիկ Ֆոյերբախը և գերմանական կլասիկ փիլիսոփայության վախճանը, տե՛ս Կ. Մարքս, Ընտիր երկեր, հ. Ա, Երևան, 1941, էջ 519։

2 Ֆ. Էնգելս, Գյուղացիական պատերազմը Գերմանիայում, Երևան, 1940, էջ 46։

3 Նույն տեղում։



Եկեղեցու և եկեղեցական դասի դեմ ուղղված պավլիկյան գաղափարների անմիջական ազդեցությունն իր ժամանակի ժողովրդական ստեղծագործությունների վրա մենք դարձյալ զգում ենք «Սասնա ծռեր»-ում։ Բնորոշն այն է, որ դյուցազներգության մեջ թագավորի կամ հոգևորականի դրական կերպարներ ընդհանրապես չկան, իսկ եղածներն էլ թույլ ու անհամակրելի անձինք են, որ բացատրվում է վիպասանողների դասակարգային կողմնորոշումով ու թշնամությամբ հանդեպ շահագործումն ու բոլոր տեսակի շահագործողները։ Դյուցազներգության մեջ ուժեղ է արտահայտված ժողովրդի ծաղրն ու երգիծանքը թագավորների և նրանց ժառանգների հասցեին՝ որպես պորտաբույծ դասակարգի ներկայացուցիչների։ Վեպում վարդապետներն ու տերտերները պատահականորեն չեն «քոսա» ու «շիլ» մականուններով կոչվում։ Եկեղեցու դեմ ակտիվ պայքարի մի դրվագ է Մատղավանքի վանականների սպանությունը Մհերի կողմից և այլն։ Աղատ սիրո գաղափարի պավլիկյան ազդեցությունը «Սասնա ծռեր»-ում արտահայտվում է Խանդութ խաթունի Դավթին սիրելու և վերջինիս հրաժարումը Ջմշկիկ սուլթանի հետ հարկադրական ամուսնությունից։ Վերլուծելով Փոքր Մհերի հետ կապված ճյուղը «Սասնա ծռեր»-ում, Գր. Գրիգորյանը գրում է. «Այսպիսով, թուլացած հողը ոչ թե չար աշխարհն է, այլ տիրողների դեմ ապստամբած և նրանց կողմից դաժանորեն ճնշված ժողովուրդն է, որն իր ուժերի թուլացման պահին, չկարողանալով զորավիգ լինել իր հերոսին, պատճառ է դառնում նրա քարայրում փակվելուն»[1]։

Պավլիկյաններն իրենց հակաեկեղեցական ու հակաֆեոդալական համոզմունքների մեջ այնքան հաստատակամ ու վճռական էին, որ պատրաստ էին ենթարկվելու ամեն տեսակի վտանգների, միայն թե կարողանային իրենց գաղափարները տարածել մասսաների մեջ[2]։ Պավլիկյանները հմտորեն էին տիրապետում զրուցակիցների վրա ներգործելու, համոզելու և իրենց գաղափարներին հաղորդակից դարձնելու եղանակներին։ Իրենց գաղափարների տարածման համար գրավոր ու բանավոր պրոպագանդայից բացի պավլիկյանները որոշակի տեղ էին տալիս նաև մնջախաղին, մնջակատակին (pantomimos), որի ընթացքում նրանք իրենց մտքերն ու ձգտումները հաղորդում էին դիմային շարժումներով, պարերով ու դերասանական հնարանքներով, որն բստ երևույթին շատ մեծ ու անմիջական ներգործություն էր առաջացնում ունկնդիրների վրա։ Դրա

1 Գր. Գրիգորյան, Ներքին հարստահարիչների դեմ հայ ժողովրդի մղած սոցիալական պայքարի արտացոլումը «Սասնա ծռեր» էպոսում, ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, № 2, 1954, էջ 48։

2 Տե՛ս „Полезная история Петра Сицилийского“, էջ 118։

համար էլ պավլիկյաններին պատժելու ամենատարածված միջոցը նրանց սրունքներից վեր գտնվող աքիլեսյան ջիլի կտրատումն էր, որի հետևանքով պատժվողը ոչ միայն զրկվում էր պարելու, այլև ոտքերի վրա կանգնելու հնարավորությունից: Սա միաժամանակ պայքար էր թատերական ներկայացումների դեմ, որովհետև թատրոնի մեջ եկեղեցին իրավացիորեն տեսնում էր մարդկանց կողմից աշխարհիկ կյանքը ճանաչելու մի բնագավառը: Դրա համար էլ Պետրոս Սիցիլացին, որ ապրել էր պավլիկյանների մեջ ու մոտիկից գիտեր նրանց հատկությունները, Բուլղարիայի արքեպիսկոպոսին հղած իր թղթում խորհուրդ է տալիս նրան «ճանաչել (պավլիկյաններին), բայց երբեք չզրուցել նրանց հետ, որովհետև նրանց հետ զրուցողները, փորձ չունենալով, կարող են վտանգի ենթարկվել, և դժվար թե պարզամիտները չընկնեն նրանց ճանկը»[1]:

Ժխտելով գոյություն ունեցող եկեղեցական ու աշխարհիկ ֆեոդալական կազմակերպությունը, պավլիկյանները նրա փոխարեն ստեղծում էին նորը, որի մասին թեև աղբյուրները համեմատաբար քիչ տեղեկություններ են հաղորդում, սակայն այդ էլ բավական է պատկերացնելու համար, թե ինչպիսի կազմակերպության կողմնակիցներ էին պավլիկյանները և ինչ էին կարողացել նրանք ստեղծել իրենց ենթակա վայրերում:

Սկզբնաղբյուրների տեղեկություններից երևում է, որ պավլիկյաններն իրենց շրջանում կազմակերպական խոշոր վերակառուցումներ են կատարել հատկապես Սերգիյ-Տիխիկի ժամանակ (801—835)[2], որը, ինչպես Փոտն է բնութագրում, եղել է «...երբևէ հանդես եկած ուրացողներից ամեն ինչով ամենաընդունակը և հեղուսիությամբ համոզողը»[3]:

Սերգիյ-Տիխիկի ժամանակ պավլիկյանների մոտ ստեղծվեցին իրենց գաղափարախոսությունը տարածող հատուկ ուսուցիչների խմբեր, որոնք հունական ձևով կոչվում էին συνεκδημοι — սինեկդեմներ, այսինքն՝ ուղեկիցներ: Ուղեկիցները համարվում էին պավլիկյան համայնքի ղեկավար կորիզի անդամները գաղափարական գծով և իրենց հետևորդների մեջ կատարում էին վերահսկիչների դեր: Սինեկդեմներն իրենց հերթին ընտրում և նշանակում էին նոտարներին (νοτάριοι): Սինեկդեմներն ու նոտարները պրոպագանդում էին պավլիկյանների գաղափարների մասսաների մեջ[1]: Նոտարների վրա էր դրվում նաև պավլիկյանների կողմից ընդունելի գրականության արտագրությունն ու տարածումը: Սկզբնաղբյուրների վկայություններից երևում է, որ Ավետարանից ու Պողոս առաքյալի թղթերից բացի պավլիկյաններն ունեցել են նաև իրենց սեփական ստեղծագործությունները, որտեղ հավանաբար շարադրված էին նրանց գաղափարների հիմնական դրույթները: Պետրոս Սիցիլացին, օրինակ, ոչ միայն վկայում է, որ պավլիկյաններն առաջնորդվում էին Սերգիյի հակաաստվածային ուղերձներով[2], այլև դրանցից որոշ քաղվածքներ անելուց հետո, հաճույքով նշում է, որ կայսրերի հաստատած օրենքներով դրանք բոլորը ենթակա են այրելու[3]:

Պավլիկյան հասարակության մեջ հաջորդ աստիճանը կազմում էին աստատները (ἀστατοι), որոնք սպառազեն էին անընդհատ շրջագայել ժողովրդի մեջ ու պայքարի կոչել նրան: Կարևորն այն է, որ պավլիկյանների մոտ սինեկդեմների, նոտարների և աստատների ներկայացուցիչները շարքայիններից տարբերվում էին միմիայն անվանապես: Նրանք ոչ մի ուրիշ արտոնություններ կամ հատուկ իրավունքներ չունեին, ուրեմն նրանք ոչ միայն անվանապես, այլև ըստ էության բոլորովին նման չէին քրիստոնեական եկեղեցու ներսում ֆեոդալական ասպիճանավորներին: Սինեկդեմներն ու նոտարները մնացածներից չէին տարբերվում անգամ հագուստով և ապրելակերպով[4]: Փոտի վկայություններից երևում է, որ սինեկդեմները հանդիսանում էին Սերգիյի անմիջական աշակերտները: Ենթադրվում է, որ պավլիկյանների գաղափարական ղեկավար ընտրվում էր մեկ հոգի: Նրա ընտրություններին մասնակցում էին պավլիկյանների ղեկավար կորիզի անդամները, այսինքն սինեկդեմները[5]: Որ պավլիկյանների գաղափարական առաջնորդների գլխավորն ընտրովի էր և այդ գործում վճռական դերը պատկանում էր սինեկդեմներին, այդ երևում է նաև Փոտի այն հիշատակությունից, թե Սերգիյի մահվանից հետո սինեկդեմները «Աստվածամարտության ուսուցչի կոչումը չտվեցին մեկին կամ երկուսին, այլ գլխավորեցին մոլորված ժողովուրդը բոլորը՝ համահավասար

---

[1] „Полезная история Петра Сицилийского", стр. 118.

[2] *Տե՛ս H. Gre'goire,* Les sources de lHistoire des Pauliciens, t. XXII, 1936—4, Bruxelles, 1936, էջ 512:

[3] „Его же святейшего Фотия Повествование", стр. 186.

[1] *Տե՛ս* Հ. Բարթիկյան, *Պավլիկյան համայնքի կազմակերպության հարցի շուրջը,* «Պատմա-բանասիրական հանդես» № 3, Երևան, 1958, էջ 186:

[2] *Տե՛ս* „Полезная история Петра Сицилийского", էջ 125:

[3] *Տե՛ս Пётр Сицилийский,* „Византийский временник", т. 5, 1952, էջ 52:

[4] *Տե՛ս* „Его же святейшего Фотия Повествование", էջ 173:

[5] *Տե՛ս* Հ. Բարթիկյան, *Պավլիկյան համայնքի կազմակերպության հարցի շուրջը, էջ 184:*





1287—16

իրավունքներով»[1]: Նույն միտքը հաստատում է նաև Պետրոս Սիցիլացին[2]: Չի՞ կարելի, արդյոք, այստեղից ենթադրել, որ Սերգիյն իր իշխանության տարիներին, որը տևել է բավական երկար՝ 35 տարի, պավլիկյան համայնքի հավատարության և կոլեկտիվ ղեկավարության սկզբունքներից շեղվել էր, որը և դուր չի եկել նրա աշակերտներին, որոնք նրա մահվանից հետո այլևս ոչ ոքի ղեկավար չեն դարձրել, այլ իրենք են սկսել կառավարել իրենց հետևորդներին՝ «համահավասար իրավունքներով»:

Փոտի աշխատությունից մենք իմանում ենք, որ արդեն Սերգիյի ժամանակ պավլիկյաններն ունեին կանոնավոր զինված ուժեր, որոնց կազմակերպումն ու վարժեցումը ոչ թե կատարում էր աղանդապետը, այլ այդ նպատակի համար հատկապես ընտրված պաշտոնյան, այսինքն՝ զորահրամանատարը, որին, ինչպես ցույց է տրված մանանագիտական գրականության մեջ, ընտրում էր շարքային ժողովուրդը[3]: Ուրեմն պավլիկյան համայնքների ղեկավարման գործում, գոնե IX դարից սկսած, գոյություն ուներ աշխատանքի որոշակի բաժանում. գաղափարական պայքարի ու նրա սկզբունքների բնագավառը ղեկավարում էր աղանդապետը, իսկ ռազմական բնագավառը՝ զորահրամանատարը: Պարտականությունների այսպիսի խիստ անջատումը ելնում էր իրական պայմաններից: IX դարում, ինչպես այդ կտեսնենք, պավլիկյանները գաղափարականի հետ մեկտեղ անցել էին նաև զինված կանոնավոր պայքարի տակտիկային, նրանք ունեին իրենց տերիտորիան, զորքը, քաղաքներն ու բերդերը: Պարզ է, որ նման պայմաններում մեկ մարդու համար դժվար պետք է լիներ տնօրինելու և՛ գաղափարական, և՛ ռազմական բնագավառները: Միանգամայն ընդունելի պետք է համարել Հ. Բարթիկյանի այն կարծիքը, թե պավլիկյանների մոտ տիպիկ ռազմական գործիչներ են եղել Կարբեասն ու Խրիսոխիրը, որոնք պայմանների բերումով թեպետ ստանձնել էին ընդհանուր ղեկավարությունը, բայց ավելի շատ որպես պատերազմի մարդիկ՝ դավանանքի ու գաղափարական խնդիրներին շատ էլ չէին միջամտում և այդ հարցում ավելի հանդուրժող էին: Այդ է պատճառը, որ պավլիկյան առաջնորդներին վերաբերող անեծքի ֆորմուլաներ պարունակող պաշտոնական գրականության մեջ Կարբեասի ու Խրիսոխիրի

[1] Հ. Բարթիկյան, Պավլիկյան համայնքի կազմակերպության հարցի շուրջը, էջ 184:

[2] Տե՛ս „Полезная история Петра Сицилийского", էջ 149:

[3] Տե՛ս Հ. Բարթիկյան, Պավլիկյան համայնքի կազմակերպության հարցի շուրջը, էջ 186—187, Р. Бартикян, Источники для изучения истории павликианского движения, էջ 90:



անունները չեն տրվում, մինչդեռ մյուս բոլոր ղեկավարները մեկ առ մեկ թվարկվում են[1]: Ճիշտ կլինի, եթե դրան ավելացնենք նաև այն, որ Կարբեասի ու Խրիսոխիրի ժամանակներում իրադարձությունները այնպիսին էին, որ պավլիկյանները հազիվ կռվում էին Բյուզանդական կայսրության նման ահռելի ուժեր ունեցող մի պետության դեմ և ժամանակ չունեին գաղափարական հարցերով շատ զբաղվելու: Այդ ժամանակ առաջնահերթ խնդիրը հակառակորդի զինված ուժերից պաշտպանվելն ու նրան հակահարված տալն էր: Այս պայմաններում արդեն լիովին պատճառաբանվում էր նաև Կարբեասի ու Խրիսոխիրի կողմից պավլիկյանների ընդհանուր ղեկավար գառնալու հանգամանքը: Ճիշտ է նաև այն, որ այս երկու առաջնորդների ժամանակ պավլիկյանների գաղափարախոսության սկզբունքներն արդեն հիմնականում մշակվել-ավարտվել էին ու նորերի ավելացման հրատապ կարիքը չկար, և, իրենց գաղափարապես ամուր զգալով, պավլիկյանները հիմնական ուշադրությունը դարձրել էին զինված պայքարի խնդիրներին: Գաղափարական խնդրում ինքնավստահության, հաստատակամության և այլադավանների նկատմամբ հանդուրժողության հետևանքը չէ՞ր արդյոք, որ Պետրոս Սիցիլացին պավլիկյանների կենտրոն Տևրիկում եղած ժամանակ այնտեղ հանդիպել էր «բազմաթիվ ուղղափառների»[2], այսինքն՝ ոչ պավլիկյանների:

Պավլիկյաններն ունեին հատուկ հավաքատեղիներ (προσευκαί), որտեղ նրանք ընթերցում էին իրենց գրքերը, վիճում էին և կամ քննում այս ու այն խնդիրն և ընդունում համապատասխան որոշումներ: Մասսայական հավաքույթները երբեմն տեղի էին ունենում նաև թատրոնի շենքերում: Փոտը, օրինակ, հիշատակում է, որ Սերգիյի և Վահանի վեճը տեղի էր ունենում «ժողովրդական թատրոնում»[3]:

Պավլիկյանների գաղափարախոսության և նրանց ներքին կազմակերպության հարցերի մասին սկզբնաղբյուրների ընձեռած հնարավորությունների սահմաններում շատ թե քիչ պատկերացում կազմելուց հետո մնում է նաև պարզել այն հարցը, թե ինչ վերաբերմունք ունեին պավլիկյանները սեփականության նկատմամբ և ինչ սկզբունքներով էին արտադրում ու բաժանում նյութական բա-

[1] Տե՛ս Հ. Բարթիկյան, Պավլիկյան համայնքի կազմակերպության հարցի շուրջը, էջ 186:

[2] Տե՛ս *Petri Siculi*, Historia utilis et refutatio atque eversio haereseos Manichaeorum qui et Pauliciani dicuntur Bulgariae Archiepiscopo nuncupata, Migne, Patrologia graeca, t. 104, էջ 1241.

[3] „Его же святейшего Фотия Повествование", стр. 191.

րիքները։ Թեև սկզբնաղբյուրներն այդ հարցերի մասին համարյա ոչինչ չեն հաղորդում, սակայն, ելնելով նրանից, որ այդ շարժումը կրում էր հակաֆեոդալական և հակաեկեղեցական բնույթ ու բացառում էր շահագործման ամեն մի դրսևորում, ուրեմն կարելի է ենթադրել, որ պավլիկյանները կողմնակից էին գույքային հավասարության և նյութական բարիքներից օգտվելու համահավասար իրավունքների սկզբունքներին, սկզբունքներ, որոնք գործնականում հավանաբար կիրառվում էին նրանց ենթակա երկրամասերում։ Պետրոս Սիցիլացու վկայությունը, թե Սերգիյը «հարուստներին աղքատացրեց»[1], գուցե մի ակնարկ է այն մասին, որ պավլիկյանները հարուստների ունեցվածքը բռնագրավում ու բաժանում էին կարիքավորներին։ Եթե պավլիկյան համայնքների ղեկավար կորիզը, իր վիճակով չէր տարբերվում մյուսներից, ուրեմն հավասարության սկզբունքը շարքայինների շրջանում ավելի ընդգծված պետք է լիներ։ Նրանք աշխատում և ապրում էին՝ առաջնորդվելով իրենց կողմից ընդունելի Պողոս առաքյալի «Որ գործիցէ ոչ՝ և կերիցէ մի» իմաստալից խոսքերով։

Պավլիկյաններն իրենց երջանկությունը փնտրում էին այս աշխարհում։ Նրանք ձգտում էին ոչնչացնել առաջին հերթին հենց նրանց, ովքեր կեղեքում էին մարդկանց ու բռնությամբ կամ խաբեությամբ խլում նրանց ձեռքով իսկ ստեղծված բարիքները, իրենց թողնելով միայն հանդերձյալ կյանքի «հրաշալիքները» և «հոգեկան երանությունները»։

Պավլիկյան շարժումը միայն արտաքինից էր կրոնական, աղանդավորական բնույթ կրում։ Նա իր բովանդակությամբ սոցիալական պահանջներով հագեցված շարժում էր, որն ուղղված էր ոչ միայն եկեղեցու, այլև տիրապետող դասակարգերի ու ֆեոդալական շահագործման դեմ։ Ուրեմն պավլիկյանների պայքարը նաև քաղաքական պայքար էր ընդդեմ ֆեոդալիզմի քաղաքական տիրապետության։ Պավլիկյան շարժումը մի կողմից էլ լայն դեմոկրատական շարժում էր, որովհետև նա իր մեջ ընդգրկում էր հիմնականում գյուղացիներին, կոլոններին, ստրուկներին ու արհեստավորներին։ Շարժման հիմնական առաջատար ուժը հանդիսանում էր գյուղացիությունը, սակայն, ինչպես երևում է, նրա հուժկու հեղափոխական ալիքը երբեմն իր հետ քշում տանում էր նաև տիրապետող դասակարգի ներկայացուցիչներին, որոնք, անշուշտ, պավլիկյաններին էին միանում լոկ որպես նրա ժամանակավոր ուղեկիցները, փորձելով օգտագործել այդ շարժումը՝ լուծելու համար իրենց նեղ,

[1] „Полезная история Петра Сицилийского", стр. 148.



անձնական կամ դասային շահերին վերաբերող խնդիրները։ Օրինակ, հոգևորականության ներկայացուցիչների՝ պավլիկյան շարժմանը մասնակցելու մասին Պետրոս Սիցիլացին որոշակիորեն գրում է. «Շատ վանականներ ու կույսեր վանքերից հեռացան... շատ քահանաների նա (Սերգիյը) բաժանեց ուղղափառ եկեղեցուց և ոչխարներից (նրանց) վեր ածեց վայրենի գազանների ու մարդակերների...»[1]։

Պավլիկյան շարժումը մի կողմով էլ կրում էր ինտերնացիոնալ բնույթ, որովհետև նա ընդգրկում էր մի այնպիսի տերիտորիա, որտեղ, հայերից բացի, ապրում էին նաև հույներ, ասորիներ, արաբներ, հրեաներ և այլն, որոնց ստորին խավերն ու դասակարգերը նույնպես ենթարկվում էին տեղական և օտար շահագործողների ճնշմանն ու հալածանքներին։ Տարբեր ազգերի ու ժողովուրդների ներկայացուցիչներին պավլիկյանների դրոշի տակ համախմբողը այդ բոլորի համար ընդհանուր սոցիալական և տնտեսական ծանր վիճակն էր։ Պավլիկյան շարժման հերոսական ու հեղափոխական բնույթը և այն ժամանակվա շրջաններում խոր դեմոկրատիզմը նրա համար ստեղծել էին մեծ հեղինակություն ժողովրդական լայն մասսաների շրջանում։ Այդ է պատճառը, որ պավլիկյանների գաղափարների արտացոլումը մենք գտնում ենք ժողովրդական վեպերում ու ստեղծագործություններում, որի լավագույն արտահայտությունը «Սասնա ծռերն» են։ Սակայն հետաքրքիր է, որ պավլիկյանությունը որպես ֆեոդալիզմի դարաշրջանի ամենահզոր շարժումներից մեկը, իր որոշակի ներգործությունն է ունեցել նաև ֆեոդալական-արիստոկրատական միջավայրում ձևավորված ստեղծագործությունների վրա։ IX դարի պավլիկյանների խիզախ ու քաջ որդիների առաջնորդների կերպարներին օրինակ, մենք հանդիպում ենք բյուզանդական հայտնի դյուցազներգության՝ «Դիգենիս Ակրիտա»-ի մեջ, որը ձևավորվել է X դարում[2]։

Ահա սրանք էին պավլիկյան շարժման գաղափարախոսության այն հիմնական դրույթները, որոնց համար պավլիկյանները Հայաստանում ավելի քան երեք դար հերոսական պայքար էին մղում։

554 թվականի Դվինի եկեղեցական ժողովի որոշմամբ սկսված հալածանքներից հետո պավլիկյանների և հայկական եկեղեցու մյուս հակառակորդների գործունեության մասին սկզբնաղբյուրները մի երկար ժամանակ որոշակի տեղեկություններ չեն հաղորդում։

[1] *Petri Siculi*, Migne, Patrologia graeca, t. 104, p. 1293.

[2] *Տե՛ս Ե. Լիպարիտ*, Павликианское движение в Византии в 8-ом и в первой половине 9-го вв. էջ 61, *А. Каждан*, Крестьянские движения в Византии в 10-ом в., „Византийский временник", т. 5, 1952, Москва, էջ 86։

Հավանական է, որ գրավոր շատ հիշատակարանների հետ պավլիկյանների մասին եղածները նույնպես ժամանակի ընթացքում չեն պահպանվել կամ ուղղակի ոչնչացվել են նրանց գաղափարական հակառակորդների կողմից։ Հնարավոր է նաև, որ Դվինի ժողովից հետո պավլիկյանների դեմ սկսած հալածանքները թույլ չէին տալիս նրանց բացահայտ ու ակտիվ գործելու։ Սակայն մի բան պարզ է, որ Ներսես Բագրեւանդցու ձեռնարկած միջոցները, այնուամենայնիվ, չկարողացան վերջնականապես ոչնչացնել պավլիկյաններին, որովհետև հայոց եկեղեցին և հոգևորականությունը 554 թվականից հետո էլ հարկադրված էր զբաղվելու հերձվածողների ու աղանդավորների հարցերով, որոնց մեջ, անշուշտ, կարևոր դեր էին կատարում նաև պավլիկյանները։

VI դարի հեղինակ Գրիգոր Սարկավագապետն իր «Խօսք ի սուրբն Գրիգոր Լուսաւորիչն Հայոց, ասացեալ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ» աշխատության մեջ ընդդիմախոսում է իր ապրած ժամանակներում քրիստոնյաների մեջ առաջացած մի ինչ-որ մոլորության դեմ, որի հետևորդները, ըստ նրա, ժխտում էին մեղքերը քավելը և գտնում, որ հավատացյալների համար «չիք տանջանս», թեկուզ մեղավոր լինեն, որ փրկվելու համար բավական է միայն մարդու հավատքը և այլն[1]։ Ուրիշ կերպ ասած, այդ «մոլորյալները» ժխտում էին քրիստոնեական եկեղեցու կողմից սահմանված այն ծեսերն ու խորհուրդները, որոնք իբր մարդուն ազատում էին իր կատարած մեղքերի համար կրելիք տանջանքներից, ինչպես զոհաբերությունը եկեղեցու օգտին բարեգործություններ անելը, հաղորդությունը և այլն։ Աշխատության հեղինակը թեև այդ «մոլորյալների» անունները չի տալիս, սակայն համոզված կերպով կարելի է ասել, որ խոսքը հիմնականում վերաբերվում է պավլիկյաններին, որովհետև, ինչպես տեսանք, այն ժամանակ եկեղեցական ծեսերի ամենակրքոտ մերժողները նրանք էին։

Գրիգոր Սարկավագապետից հետո, VII դարից մեզ է հասել Կոմիտաս I կաթողիկոսի (615—628) հավատքի մասին գրած թուղթը, որտեղ հեղինակի կողմից նզովքի են ենթարկվում մի շարք աղանդներ[2]։ Ճիշտ է, հիշյալ թղթում նույնպես պավլիկյանները որոշակիորեն չեն հիշատակվում, սակայն մեզ թվում է, որ թղթի այն մասում, որտեղ հեղինակը նզովում է աղանդավորներին, այսպես ասած Քրիստոսին չծառայելու համար, այդտեղ նա նկատի ունի նաև պավլիկյաններին։

[1] Տե՛ս Բ. Սարգիսյան, Գրիգոր Սարկավագապետ, «Բազմավեպ», Վենետիկ, 1904, մարտ, էջ 124։

[2] Տե՛ս «Գիրք Թղթոց», էջ 216—217։



Հայկական սկզբնաղբյուրներում պավլիկյանների մասին պահպանված ամենահին տեղեկություններից մեկն էլ, ինչպես հաջողությամբ ցույց է տվել Հ. Բարթիկյանը, 702—705 թվականների ատրպանեում Պարտավում տեղի ունեցած Աղվանից եկեղեցական ժողովի որոշման մեջ եղած հիշատակությունն է[1]։ Հիշյալ որոշումը պահպանվել է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի №№ 2966 և 3062 ձեռագրերում և առաջին անգամ հրատարակվել է Սամվել Անեցու «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց» աշխատության ծանոթագրությունների բաժնում։ Որոշման մեջ ժողովի մասնակիցները հավաստիացնում են եկեղեցուն՝ «...թէ յորժամ դուք ձեռնարկեք յաղագս քաղկեդոնական աղանդոյն, և կամ Մայրագոմեցւոյն, եթէ վասն պայլիկենաց, և թէ վասն խառն ամուսնութեան, և թէ զինչ և իցէ՝ ոչ ոք կարէ ելանել ըստ ձեր հրամանէ...»[2]։ Այստեղ, ինչպես տեսնում ենք, Աղվանից եկեղեցու հակառակորդների թվում հիշատակվում են նաև պավլիկյանները, որից կարելի է եզրակացնել, որ VII—VIII դարերում պավլիկյան գաղափարները որոշակի տարածում են գտել նաև Հայաստանի անմիջական հարևան Աղվանից երկրում և եկեղեցական ժողովը, ի թիվս մյուս հակառակորդների, հիշատակում էր նաև հատկապես պավլիկյաններին։

Արևելյան Հայաստանում ու արաբներին ենթակա Արմենիայում VII դարի վերջերին և VIII դարի սկզբներին պավլիկյան շարժման որոշ աշխուժացումը կապված էր նաև ընդհանուր քաղաքական իրադարձությունների հետ։ Արաբական իշխանությունները, որոնք թեև հիմնավորապես հաստատվել էին Արմենիայում, պավլիկյաններով զբաղվելու հնարավորություն չունեին, որովհետև այդ ժամանակ, ինչպես արդեն ասվել է, հասունանում էր արաբա-բյուզանդական պատերազմը և արաբներն ամբողջությամբ մտահոգված էին պատերազմական նախապատրաստություններ խնդրով։ Այս պայմաններում, ինչպես երևում է, հայերի նկատմամբ արաբները դրծադրում էին երկակի քաղաքականություն։ Նրանք եթե հայկական նախարարական դասից և զինվորական վերնախավից երկնչում էին և ծրագրում նրա ոչնչացումը, ապա պավլիկյաններին հանդուրժում էին որպես իրենց թշնամու՝ Բյուզանդիայի գաղափարական հակառակորդների։ Դուցե հենց այդ հողի վրա էին 703 թվականին Արևմտյան Հայաստանում հայերի նկատմամբ սկսվել հալածանքները, որից ազատվածներին, ինչպես Միխայել Ասորին է վկայում,

[1] Տե՛ս Р. Бартикян, Источники для изучения..., էջ 31—33։

[2] Սամվել Անեցի, էջ 286։

«...խնդութեամբ ընկալան... Տաճիկք ի Մելտինի և ի Միջագետս»: Բյուզանդիայի արևելյան պրովինցիաներում հայերի նկատմամբ հալածանքները շարունակվում էին նաև Ֆիլիպիկոս կայսեր գահակալության տարիներին (711—713): Այդ ժամանակ նույնպես հայերից շատերը տեղափոխվում են Մելիտինե և Զորրորդ Հայք, որոնք գտնվում էին Արաբական խալիֆայության տիրապետության տակ: Այդ վայրերում հաստատված հայերը, դաշնակցած արաբների հետ, հանդես էին գալիս Բյուզանդիայի դեմ[2]:

Պավլիկյաններն այդ ժամանակ ազատ էին նաև հայկական եկեղեցու հետապնդումներից, որովհետև հայոց եկեղեցին առայժմ զբաղված էր Աղվանքի եկեղեցու հարցերով և Քաղկեդոնի ժողովի հետևանքով առաջացած վեճերը լուծելով:

Սակայն այսպես երկար շարունակվել չէր կարող: 719 թվականին կաթողիկոս Հովհան Օձնեցու նախաձեռնությամբ հրավիրվեց Դվինի եկեղեցական ժողովը, որտեղ քննարկման ենթակա ամենակարևոր հարցերից մեկն էլ պավլիկյանների դեմ պայքարի կազմակերպման հարցն էր:

Դվինի ժողովը հաստատել է 32 կանոն, որոնց մեծ մասը վերաբերում է հոգևորականության վարք ու բարքին, եկեղեցական ծեսերի ճիշտ ու անշեղ կատարմանը և ապա՝ պավլիկյանների ու նրանց հետ շփում ունեցողների նկատմամբ գործադրվելիք միջոցառումներին: Դվինի ժողովի հաստատած կանոնները բոլորն էլ արժեքավոր ու հետաքրքիր են: Արժեքավոր է մանավանդ եկեղեցական ծեսերի կատարմանը վերաբերող կանոններից XXIX-ը, որը պահանջում է պաշտել և երկրպագել խաչը, ինչ էլ որ պատահելու լինի[3]: Այստեղից կարելի է ենթադրել, որ հավատացյալների ջերմեռանդությունը խաչի նկատմամբ խախտվել էր, որ մարդիկ այլևս նրա ղորությանը չէին հավատում և այլն, մի բան, որն անառարկելիորեն ընդգծում է պավլիկյանների դաղափարական ազդեցության տարածումը Հայաստանում:

Դվինի ժողովի կանոններից XXXII-ը ամբողջությամբ վերաբերում է պավլիկյաններին ու նրանց հետ համագործակցողներին: Այս կանոնը պատվիրում է հավատացյալներին, որպեսզի նրանք օրհնան չտան պավլիկյաններին, չխոսեն, հաղորդակցություն չունենան նրանց հետ և խուսափեն նրանցից, որովհետև նրանք «սատանայի որդիներ» են և այլն: Այս կանոնը պատվիրում էր նաև օրհնա-

[1] Միխայել Ասորի, էջ 332:

[2] Տե՛ս Р. Бартикян, Источники для изучения..., էջ 34:

[3] Տե՛ս «Կանոնագիրք հայոց», էջ 147:



պանցներին ենթարկել ծանր խոշտանգումների, իսկ երկրորդ անգամ մեղադրվելիս՝ հեռացնել եկեղեցու հովանավորությունից: «Ոչ է պարտ չարաղանդ մծղնէիցն, որ կոչին պաւլիկեանք,— ասվում է վերոհիշյալ կանոնում,— տեղի, օթևել ոմանք և կամ յարիլ և խօսակից լինել և երթևեկութիւնս առնել. այլ ամենևին հեռանալ ի սոցանէ, զարշիլ և առել զնոսա, զի որդիք սատանայի են և լուցկիք յաւիտենական հրոյն և օտարացեալ են ի սիրոյ կամաց արարչին. եթէ ոք իցէ, որ յարիցէ ի նոսա, և ի սիրելութեան և բարեկամութեան իջեալ է, պարտ է զայնպիսին խոշտանգել և ծանր պատուհաս ի վերայ ածել, մինչև զգաստասցին և առողջասցեն, և ի հաւատս: Ապա թէ վերստին ի նմին գացին, այնպիսին հրամայեմք ամենևին հատանել և արտաքս ընկենուլ իբրև զժանտախտս յանդամոց եկեցեցւոյ Քրիստոսի»[1]:

Պավլիկյանների և նրանց հետ շփում ունեցողների նկատմամբ հայոց եկեղեցու կողմից հալածանքների կիրառումը չէր կարող կատարվել ինքնագլուխ կերպով, առանց արաբական իշխանությունների համաձայնության: Դրա համար էլ մեզ թվում է, որ Հովհան Օձնեցին իր այդ գործողությունները համաձայնեցրել էր արաբների և առաջին հերթին՝ ոստիկան Վլիթի հետ: Դվինի ժողովից շատ չանցած, 720 թվականին Հովհան Օձնեցին մեկնում է Դամասկոս Օմար II խալիֆի մոտ (717—720): Շատ հավանական է, որ ուրիշ հարցերի հետ մեկտեղ, հայոց կաթողիկոսն այնտեղ խալիֆին է ներկայացրել նաև իր դիրքորոշումը պավլիկյանների և եկեղեցու մյուս հակառակորդների դեմ ու հավանության արժանացել: Հավանական է նաև, որ Դվինի ժողովի որոշումները գործողության մեջ դրվեցին կաթողիկոսի Դամասկոսից վերադառնալուց հետո միայն: Այդ բանի լավագույն օրինակը նրա «Ընդդէմ պաւղիկեանց» աշխատությունն է, որը հավանաբար հրապարակ է եկել հենց 710-ական թվականներին, Դվինի ժողովի որոշումներին զուգընթաց: Հնարավոր է, որ միշտ լինի նաև այն ենթադրությունը, թե Հովհան Օձնեցու աշխատության հանդես գալու շարժառիթներից մեկն էլ Ֆիլիպիկոս կայսեր հալածանքների հետևանքով հայ պավլիկյանների մասսայական տեղափոխությունն էր դեպի արաբներին ենթակա հայկական շրջանները, մի հանգամանք, որն իրոք պետք է մտահոգություն պատճառեր ինչպես կաթողիկոսին, այնպես էլ հայոց եկեղեցուն ընդհանրապես[2]: Այս աշխատությունը, սակայն, գրված լինելով պավլիկյանների դաղափարական հակառակորդի ձեռքով, տառապում է խիստ

[1] «Կանոնագիրք հայոց», էջ 148—149:

[2] Տե՛ս Р. Бартикян, Источники для изучения..., էջ 34:

միակողմանիությամբ ու թշնամանքով և հստակ պատկերացում չի տալիս պավլիկյանների պատմության ու նրանց գաղափարների մասին: Սակայն այդ գրքի ասպարեզ գալու հանգամանքը ինքնըստինքյան խոսում է այն մասին, որ արդեն VIII դարի սկզբներին հայկական ֆեոդալական եկեղեցին հանձին պավլիկյանների տեսնում էր իր ամենավտանգավոր հակառակորդին, որի դեմ անհրաժեշտ էր համարում մղել նաև գաղափարական պայքար:

Պավլիկյան շարժման մասին եղած տեղեկությունները Արևելյան Հայաստանում ընդհանրապես քիչ են ու կցկտուր, դրա համար էլ մենք, օրինակ, չգիտենք թե այդ շարժումն այնտեղ ինչ ընթացք կամ ինչ ծավալ է ունեցել: Հայտնի չէ նաև, թե Հովհան Օձնեցու միջոցառումներն ինչ հետևանքներ ունեցան: Սակայն մի բան պարզ է, որ VIII դարի սկզբներին Դվինի ժողովում և Հովհան Օձնեցու աշխատության մեջ հիշատակվող պավլիկյանները հետագայում այլևս վտանգավոր դեր չեն կատարել Արևելյան Հայաստանի տիրող դասակարգերի համար: Այդ է պատճառը, որ 710-ական թվականներից հետո Արմենիայում ու Արևելյան Հայաստանում պավլիկյանները կամ շատ քիչ են հիշատակվում և կամ ակնարկվում են ոչ անվանապես: Մեզ թվում է, որ այս տեսակետից ուշադրության արժանի է Ղևոնդի մի հատվածը Արմենիայի ոստիկան Մրվանի գործունեության մասին 730-ական թվականներին: Պատմիչն այնտեղ գրում է, որ Մրվանը «...տիրեալ ի վերայ աշխարհիս՝ խաղաղացոյց զամենայն յարձակմունս բռնութեան. և զգործողս անիրաւութեան, զաւազակսն և զգողսն և զբռնամիսն բարեկարգութեան ծայրակոտոր արարեալ ոտիւք և ձեռօք, փայտին պատապարտէր ի մահ»[1]: Չի՞ կարելի, արդյոք, բարեկարգության թշնամի ու անիրավության գործող ավազակների ու գողերի տակ հասկանալ հենց նույն պավլիկյաններին:

Վերևում բերված հատվածի համեմատությամբ ավելի որոշակի է Ղևոնդի մեկ այլ հիշատակությունը, որը պատմիչը բերում է 744—754 թվականներին Հայաստանում արաբական լծի դեմ ծագած ժողովրդական ապստամբության առնչությամբ: Պատմիչը հավաստում է, որ հայ ապստամբների և կայսր Կոնստանդին V Կոպրոնիմի (741—775) միջև նախօրոք կնքված համերաշխության դաշինքի համաձայն հայ ապստամբները Գրիգոր Մամիկոնյանի առաջնորդությամբ Արևելյան Հայաստանից շարժվում են դեպի Պոնտոս՝ բյուզանդական զորքերին միանալու և համատեղ կերպով արաբների դեմ կռվելու համար: Հայկական զորքերի շարժման լուրն առնե-

[1] Ղևոնդ, էջ 114:



լուն պես, ինչպես ճիշտ կերպով եզրակացնում է Հ. Բարթիկյանը[1], Հայաստանի արևմտյան շրջաններում և առաջին հերթին Եպիսպարիսում գտնվող պավլիկյանները նույնպես, չդիմանալով արաբների հնշումներին, տեղափոխվում են Պոնտոս՝ Գրիգոր Մամիկոնյանին միանալու համար: Սակայն դեռ Պոնտոս չհասած՝ Գրիգոր Մամիկոնյանի հետևորդների մեջ պառակտում է տեղի ունենում, որի հիմնական պատճառներից մեկն այն էր, որ այստեղ գալիս ու ապրստամբներին են միանում սոցիալական ցածր խավերի շատ ներկայացուցիչներ, որոնք օտարերկրյա զավթիչների դեմ կռվելու հետ մեկտեղ առաջ էին քաշում նաև ներքին շահագործողների դեմ պայքարի խնդիրներ: Սոցիալական այս խավերի մասին պատմիչի մոտ կարդում ենք հետևյալը. «Եւ ամենայն որդիք յանցանաց երթեալք խառնէին ի գունդ ապստամբութեանն, որք ոչ ճանաչէին զերկիւղն Աստուծոյ և ոչ զահ իշխանաց և ոչ զպատիւ ծերոց, այլ իբրև այլազգի և օտարացեալ՝ ասպատակ սփռեալ գերէին զեղբարս և զազգակիցս իւրեանց, և բազում աւարառութիւնս առնէին, խոշտանգանաւ և գանիւք տանջանս ածեալ ի վերայ եղբարց իւրեանց:

Յաղագս որոյ ստրջացեալ ներողութիւնն Աստուծոյ՝ քակնաց զմիաբանութիւն նոցա...»[2]:

«Հանցագործների որդիներ», «այլազգիներ» և «օտարացածներ» ասելով Ղևոնդն անշուշտ ի նկատի ունի այն ժամանակ սոցիալական պայքարի առաջին շարքերում գտնվող պավլիկյաններին: Ժողովրդական շարժման հեռանկարից առաջինը վախեցան ապրստամբության մասնակից անվճռական ու տատանվող ազնվականները, որոնք սպարապետ Աշոտ Բագրատունու գլխավորությամբ դրժեցին իրենց երդումը և, լքելով զինակիցներին, դավաճանաբար ետ փախան Բագրեւանդ, որպեսզի ապավինեն արաբների հովանավորությանը: Այս դեպքում նրանք արաբների տիրապետությունը դիրադասում էին պավլիկյանների հետ դաշնակցելուց:

Աշոտ Բագրատունու հեռանալուց հետո Գրիգոր Մամիկոնյանն անմիջապես սկսում է հետապնդել փախստականներին: Ճանապարհին նա բռնում և կուրացնել է տալիս Աշոտին: Նա հավանաբար նույնպիսի խստությամբ է վարվում նաև մյուսների հետ: Իսկ թե ինչ վերաբերմունք ուներ ապստամբության պարագլուխը պավլիկյանների նկատմամբ, այդ մասին որոշակի արտահայտվելը դժվար է: Սկզբնաղբյուրներից հայտնի է, որ Եպիսպարիսից Պոնտոս տեղափոխված պավլիկյաններին թեև բնակիչները ցնծությամբ են դի-

[1] Տե՛ս Р. Бартикян, Источники для изучения..., էջ 42—43:

[2] Ղևոնդ, էջ 123:

վորում, բայց նրանց առաջնորդ Հովսեփ էպաֆրոդիտին տեղական իշխանությունները չեն հանդուրժում և փորձում են ձերբակալել, որից նա մի կերպ խուսափում ու փախչում է Պիզիդայի Անտիոք քաղաքը: Հովսեփի դեմ այդ գործողություններն անմիջականորեն ղեկավարում էր արխոնտ Կրիխորախասը, որը, Հ. Բարթիկյանի ենթադրությամբ, նույն Գրիգոր Մամիկոնյանը պետք է լինի[1]: Իսկ թե ինչ ընթացք են ունեցել դրանից հետո Գրիգոր Մամիկոնյանի ու նրա հետևորդների փոխհարաբերությունները պավլիկյանների հետ, մենք այդ մասին որոշակի ոչինչ չգիտենք: Հայտնի է միայն, որ պավլիկյանները, որպես բյուզանդացիների դաշնակիցներ, արդեն 752 թվականին կռվում էին արաբների դեմ[2]:

Պավլիկյան շարժման պատմության ուսումնասիրության համար, մեր կարծիքով, նույնպես կարևոր արժեք են ներկայացնում 768 թվականի Պարտավի եկեղեցական ժողովի կանոնները: Այդ ժողովին մասնակցում էին նաև Հայաստանի բարձրաստիճան հոգևորականներն ու նշանավոր աշխարհականները[3]: Թեև այստեղ նույնպես պավլիկյանների անունը որոշակիորեն չի տրվում, բայց ժողովի մշակած կանոններից մի քանիսի բովանդակությունից անկասկած երևում է, որ դրանք ուղղված էին նաև պավլիկյանների դեմ:

Պարտավի եկեղեցական ժողովի VI կանոնում, օրինակ, ասվում էր. «Եւ վարդապետք կարգեսցին անխափան յեկեղեցիս, ղի մի շնորհ աստուածգիտութեան խափանեսցի և ճարակող աղանդք հերձուածոցն ի ներքս մտցին»[4]: Իսկ VIII կանոնում ակնարկվում է այն մասին, որ տեղ-տեղ տգետ քահանաները մկրտության ավազանը անարգում և նրա ջուրը դուրս են թափում որպես ավելորդություն: «Եւ տեսանեմք ի տեղիս տեղիս անարգեալ զսուրբ աւազանն մկրտութեան,—ասվում է կանոնում,—ի չգէտս համարեալ ի տգետ և յանմիտ քահանայից և ղջուր լուացման հանեն արտաքս հեղուն ի կոխումն և յապականութիւն»[5]: Մկրտության ավազանի ջուրը թափելը, իհարկե, միայն տգիտության հետևանք չէր: Ընդհակառակը, տգետ հոգևորականները, թվում է, ավելի աստվածավախ ու սոսկաթափաշաշ պետք է լինեին: Այստեղ մենք պարզապես գործ ունենք պավլիկյան գաղափարների ազդեցության տակ գտնվող շարքային եկեղեցականների հետ, որոնք կողմնակից էին քրիստոնեական պաշտամունքի հին ու պարզ ձևերի ստեղծմանը և ավելորդ ծիսա-

[1] *Տե՛ս Р. Бартикян*, Источники для изучения..., էջ 48:

[2] *Տե՛ս նույն տեղը:*

[3] *Տե՛ս* **Մ. Օրմանյան**, *Ազգապատում, հ. Ա, էջ 882:*

[4] *«Կանոնագիրք հայոց», էջ 167:*

[5] *Նույն տեղում, էջ 168:*



կանության վերացմանը: Այնուհետև, XXIV կանոնում հիշատակվում են աշխարհիկ և հոգևոր մարդկանց ընթերցանության համար հանձնարարվող գրքերը, իսկ XVII-ը արգելում էր ցածր խավերի ներկայացուցիչներին եկեղեցու թշնամիների կողմն անցնելը: Բերված կանոններն իրենց բովանդակությամբ ոչ մի կասկած չեն թողնում, որ դրանք ուղղված էին պավլիկյանների դեմ: Այս հանգամանքը մեկ անգամ ևս հաստատում է այն իրողությունը, որ պավլիկյան շարժման գաղափարները, Պարտավի 702—705 թվականների ժողովից հետո, Աղվանքում շարունակում էին տարածվել ու ապառնալ եկեղեցու անվտանգությանը[1]:

Պավլիկյանների՝ ավելի քան երկուհարյուրամյա պատմության սկզբնաղբյուրների տեղեկությունների հիման վրա կատարած շարադրանքը ցույց տվեց, որ այդ շարժումը, սկզբնավորվելով Արևելյան Հայաստանում, հետագայում տարածվեց նաև Աղվանից աշխարհում: VIII դարում պավլիկյանները, միանալով արաբական լծի դեմ ծագած ժողովրդա-ազատագրական ապստամբությանը, հավանաբար իրենց արժանի լուման մտցրին ընդհանուր գործի մեջ: Սակայն, ինչպես երևում է, պավլիկյան շարժումն Արևելյան Հայաստանում դրանից ավելի ընդարձակվելու և ծավալվելու հնարավորություններ չունեցավ: Այդ շարժումն իր զարգացման բուռն ընթացքի մեջ մտավ միայն Արևմտյան Հայաստանում, Փոքր Հայքում ու նրանց սահմանակից այլ շրջաններում: Այստեղ, ինչպես կտեսնենք, պավլիկյան շարժումը, ընդգրկելով հսկայական տերիտորիաներ, կարճ ժամանակամիջոցում իր դրոշի տակ համախմբեց տեղական և օտար հարստահարիչների կողմից կեղեքվող ժողովրդական լայն զանգվածներին ու պայքարի դուրս եկավ ֆեոդալական շահագործման դեմ:

Արևմտյան Հայաստանում պավլիկյան շարժման առաջին խոշոր կազմակերպիչն ու ղեկավարը դառնում է Կոնստանդին-Սիլվանը: Կոնստանդինը ծագումով հայ էր: Նա ծնվել էր Հայաստանի Սամոսատի[2] Մանանաղ գյուղում, որն, անկասկած, գտնվում էր Ծոփաց աշխարհում:

Պետրոս Սիցիլացու մոտ Կոնստանդին-Սիլվանի մասին կար-

[1] *Տե՛ս Р. Бартикян*, Источники для изучения.., էջ 51—52:

[2] *Մասնագետների ենթադրությամբ հայկական Սամոսատը նույն Արշամաշատն է, որը, ինչպես հայտնի է, գտնվում էր Խարբերդից արևելք, Արածանիի ձախ ափին: Արշամաշատը հունարեն արտասանությամբ հնչել է* Ար-Σαμο'σατον-'Αρμεν'ας-Σαμο'σατον *ձևով: Տե՛ս* Ernest Honigmann, Die ostgrenze des Byzantinischen Reiches, t. III, Bruxelles, 1935, էջ 78, *H. Gre'goire*, Les Sources de l'Histoire des Pauliciens, էջ 101:

դում ենք հետևյալը. «Հերակլի թոռ Կոնստանդին թագավորի ժամանակ հանդես եկավ ոմն հայ Կոնստանդին անունով, Հայաստանի Սամոսատ (քաղաքի) Մանանաղ կոչված գյուղում, որը մինչև օրս մանիքեականներ է անուցանում»[1]: Նույն բանը հաստատում է նաև Փոտը[2]: Կոնստանդին-Սիլվանը, ծնված լինելով 630—631 թվականներին[3], իր քաղաքական գործունեությունն սկսել է տակավին երիտասարդ հասակում՝ 654 թվականին[4] կամ, ինչպես աղբյուրներն են ասում, Կոնստանդ II Հռոմանոսի թագավորության XIII տարում (իշխել է 642—668 թվականներին): Նա իր սկզբնական կրթությունն ստանում է հայրենի գյուղում՝ Մանանաղում: Այստեղ ձեռք բերելով Ավետարանն ու Պողոս առաքյալի թղթերը, նա սկսում է ծանոթանալ նրանց բովանդակությանը և միաժամանակ մշակել իր նոր դավանքը: Հետագայում թողնելով Մանանաղը, Կոնստանդինը տեղափոխվում է բյուզանդական մասն ու հաստատվում Փոքր Հայքի Առաջին Հայք գավառի Կոլոնիա[5] քաղաքի մոտ գտնվող Կիբոսա բերդում: Պետրոս Սիցիլացին ահա թե ինչ է ասում այդ մասին. «Այդ Կոնստանդինը, որը և Սիլվանոս էլ է կոչվում, Մանանաղին թողնելով, եկավ բնակվեց Կիբոսա բերդում՝ Կոլոնիայի մոտ»[6]: Կիբոսայում պավլիկյանների ղեկավարն իրեն հայտարարում է Պողոս առաքյալի թղթերում հիշատակվող Սիլվանը, որին իբր ուղարկել էր ինքը՝ առաքյալը որպես ճշմարիտ աշակերտի:

Աղբյուրների հաղորդումից երևում է, որ Կոնստանդին-Սիլվանն իր մտքերն ու դաղափարները գրավոր կերպով չէր շարադրում և հիմնականում հենվում էր բանավոր պրոպագանդայի վրա[7] ու մեծ հաջողություններ ուներ: Նրան բոլորը համարում էին իրենց շարժման պարագլուխը և մատուցում անհրաժեշտ հարգանք:

Նոր բնակավայրում Կոնստանդին-Սիլվանն աստիճանաբար կարողանում է շատացնել իր հետևորդների թիվը: Նա անգամ գրա-

[1] *Petri Siculi*, p. 30.

[2] *Տե՛ս* «Его же святейшего Фотия Повествование», էջ 178:

[3] *Տե՛ս* Ս. Մելիք-Բախշյան, *Պավլիկյան շարժումը Հայաստանում*, էջ 157:

[4] *Տե՛ս Ed. de Muralt*, Essai de Chronographie Byzantine pour serphir a léxamen des annales du Bas-empire et particulierement des Chronographes slavons, de 395 a 1057, St-Péters-bourg, 1855, էջ 300:

[5] Կոլոնիան (այժմ Կոյուլիսար) գտնվում է Գայլ գետի (Լիկոս) աջ ափին, Նեոկեսարիայից հարավ-արևելք: Հին ժամանակներում Կոլոնիան ամրոց էր: Մեր թվականությունից առաջ I դարում, երբ Պոմպեոսը նվաճեց Պոնտոսը, այդ ամրոցը դարձվեց քաղաք և վերանվանվեց Կոլոնիա (*տե՛ս Н. Адонц*, Армения в эпоху Юстиниана, էջ 60, 62 *և այլն*):

[6] *Petri Siculi*, p. 32:

[7] *Տե՛ս* „Его же святейшего Фотия Повествование", էջ 169:



վում է ուղղափառ քահանաների և հաջողությամբ հանդես է գալիս նաև Պոնտոսում, Կապադովկիայում և ուրիշ տեղերում: Ըստ տեղեկությունների Կոնստանդինի հաջողություններն այնքան մեծ էին, որ նրան էին միանում նաև հակաեկեղեցական բնույթի մյուս շարժումների ներկայացուցիչները: Կոնստանդին-Սիլվանի հաշողությունները Բյուզանդիայի արևելյան շրջաններում մի խոշոր չափով էլ կապվում էին Բյուզանդական կայսրության այն ժամանակվա ընդհանուր դրության հետ: Կոնստանդ II կայսրն իր գահակալության տարիներին հսկայական միջոցներ էր վատնում Հռոմեական կայսրության սահմաններին տիրելու և իր տերությունը մեծացնելու համար: Այս ծրագրի առանցքը Իտալիայի գրավումն էր լոնգոբարդներից: Սակայն Կոնստանդ կայսեր այդ ուղղությամբ ձեռնարկած միջոցառումներն ապարդյուն անցան: Բյուզանդացիները կարողացան միայն հաստատվել Սիրակուզում: Իսկ այստեղից ահաբեկման ու կողոպուտի համար դեպի Աֆրիկա ուղարկվող նավատորմիղի մեծ մասը դարձավ արաբների ու փոթորիկների զոհը: Այս խոշոր արշավանքների ու պատերազմների հասցրած նյութական ու մարդկային կորուստները մի կողմից, հսկայական ծախսերը հոգալու համար մտցված նոր ու ծանր հարկերը մյուս կողմից՝ երկրում տեղիք տվեցին լուրջ դժգոհությունների: Այդ դժգոհությունների արտահայտությունն էր նաև Հայաստանում ու նրա հարևան երկրներում պավլիկյան շարժման վերելքը:

Սակայն պավլիկյան շարժման տարածումն ու աշխուժացումը Հայաստանում, Պոնտոսում, Կապադովկիայում և այլուր սկսեց լուրջ անհանգստություն առաջացնել կայսրության բարձր շրջաններում: Պավլիկյանների դեմ վճռական գործողություններ, սակայն, սկսեցին ձեռնարկվել միայն Կոնստանդ II-ի հաջորդ Կոնստանդին IV-ի (668—685) ժամանակ: Նոր կայսեր հրամանով պավլիկյաններին ճնշելու համար Հայաստան է ուղարկվում Սիմեոն զորավարը, որին մի կերպ հաջողվում է իր ձեռքը գցել Կոնստանդին-Սիլվանին ու նրա մերձավոր զինակիցներին: Սիմեոնը պարտադրում է, որպեսզի վերջիններս իրենց ձեռքով դատաստան տեսնեն իրենց առաջնորդի հետ: Միայն այդ պայմանը կատարելով նրանք կարող էին կայսրի կողմից ներման արժանանալ: Որոշ ժամանակ հերոսաբար տանելով բոլոր տանջանքներն ու խոշտանգումները, Կոնստանդին-Սիլվանի համախոհները հրաժարվում են Սիմեոն զորավարի ստոր առաջարկությունը կատարելուց: Վերջապես նրանց մեջ գտնվում է միայն մեկը, որը սպանում է իր ղեկավարին: Այդ մար-

դու անունը Յուստ էր[1]: Առաջնորդի սպանությունից հետո խոշտանգումների ու հալածանքների են ենթարկվում նաև շարքայինները: Նրանք, ովքեր կենդանի էին մնացել, իշխանությունների կողմից մասսայաբար հանձնվում էին եկեղեցիներին և հոգևորականությանը՝ այսպես ասած վերադաստիարակելու համար: Սակայն պավլիկյաններն իրենց համոզմունքների մեջ անհողդողդ ու աննկուն էին, և այդ զգացմունքը նրանց մեջ ոչ մի կերպ չոչնչացվեց: Քաջաբար տանելով բոլոր տեսակի տանջանքներն ու անարգանքները, պավլիկյանները հավատարիմ մնացին իրենց համոզմունքներին: Փոտ պատրիարքը հենց այս առթիվ դառնացած խոստովանում է, թե «(Աղանդավորների) մեծ մասը, որ հանձնվել էր աստծու եկեղեցիներին խոստովանելու համար, մնաց անուղղելի»[2]:

Պետրոս Սիցիլացին վկայում է, որ Կիբոսայում Կոնստանդին-Սիլվանն ապրել ու գործել է 27 տարի[3]: Եվ քանի որ Կոնստանդին-Սիլվանի գործունեության սկիզբը մենք ընդունեցինք 654 թվականը, ուրեմն նրա մահը պետք է տեղի ունեցած լինի 680—681-ին:

Կոնստանդինի սպանվելուց և նրա հետևորդների այս կամ այն չափով հալածանքից ու ճնշումից հետո Սիմեոնը կրկին վերադառնում է Կոնստանդնուպոլիս: Սակայն նա մայրաքաղաքում հաղիվ մնում է երեք տարի[4], այսինքն՝ մինչև 683—684 թվականները: Այդ ժամանակ նա գաղտնի կերպով կրկին վերադառնում է Կիբոսա, պավլիկյանների մոտ: Սակայն այս անգամ արդեն նա եկել էր ոչ որպես թշնամի, այլ որպես բարեկամ: Սիմեոնը Կիբոսայում առանձնում է պավլիկյանների առաջնորդի պաշտոնը, այսինքն փոխարինում է Կոնստանդին-Սիլվանին: Այս բոլոր դեպքերը մանրամասնորեն պատմող հեղինակները զարմանալիորեն ոչինչ չեն ասում այն մասին, թե ինչ հանգամանքներում պավլիկյանների մի ժամանակվա հակառակորդն ու թշնամին զարձավ նրանց առաջնորդը: Մեզ մնում է ենթադրել, որ Սիմեոնն առաջին անգամ Կիբոսայում եղած ժամանակ ականատես լինելով պավլիկյանների խիղախությանն ու իրենց համոզմունքների մեջ հաստատակամ լինելուն, խորապես ազդվել էր նրանցից: Ըստ երևույթին երեք տարիների ընթացքում Սիմեոնի աշխարհայացքն այնքան է փոխվում, որ այն վերջնականապես ձևավորվում է պավլիկյան գաղափարների ակզբունքներով,

1 Տե՛ս „Полезная история Петра Сицилийского", էջ 137, „Его же святейшего Фотия...", էջ 180:

2 Նույն տեղում:

3 Տե՛ս նույն տեղը, էջ 136:

4 Տե՛ս նույն տեղը, էջ 137, „Его же святейшего Фотия...", էջ 180:



և, գալով Կիբոսա, նա իր ճակատագիրը վերջնականապես կապում է պավլիկյանների հետ ու դառնում նրանց առաջնորդն ու ղեկավարը:

Սիմեոնն իր նախորդի օրինակով նույնպես կրկնանուն ուներ. նա կոչվում էր Սիմեոն-Տիտ[1]: Պավլիկյանների այս առաջնորդի պաշտոնավարությունը խիստ կարճ է տևում: Պետրոս Սիցիլացու և Փոտի վկայությամբ նա պավլիկյաններին ղեկավարել է ընդամենը երեք տարի[2], այսինքն՝ մինչև 686—687 թվականները: Սիմեոն-Տիտի այդ կարճատև ղեկավարությունն ընթանում է ներքին տարաձայնությունների, բուռն վեճերի ու պայքարի մթնոլորտում: Պավլիկյանների նոր առաջնորդի դեմ հատկապես անհաշտ դիրք էր բռնել Կոնստանդին-Սիլվանին վատաբար սպանող, մեզ արդեն ծանոթ Յուստը: Յուստի պայքարը Սիմեոն-Տիտի դեմ հավանաբար կրում էր անձնապաշտական բնույթ: Գուցե Կոնստանդին-Սիլվանի պաշտոնի ամենահարմար թեկնածուն նա համարում էր իրեն: Սակայն, ինչպես երևում է, մեծամասնությունը պաշտպանում էր Սիմեոնին: Եվ Յուստն իր փոքր ուժերով չկարողանալով հաղթանակի հասնել՝ երկրորդ անգամ է դիմում դավաճանության: Անցնելով Կոլոնիայի եպիսկոպոսի մոտ, նա բոլորին մատնում է: Եպիսկոպոսի խնդրանքով շուտով գործին միջամտում է կայսրը՝ Հուստինիանոս II-ը (685—695 և 704—711), որին հաջողվում է ուժով բռնել ու ոչնչացնել Սիմեոնին ու նրա հետևորդներից շատերին[3]: Այդ հալածանքներից ազատվողները փախչում են այս ու այն կողմ: Իշխանությունների կողմից հալածվողների մի մասն էլ վերադառնում է Եպիսպարիս: Դրանց մեջ էր նաև Պավղոս Հայը[4] իր Թեոդորոս և Գեննեսիոս որդիների հետ միասին:

Եպիսպարիսում Պավղոսն իր Գեննեսիոս որդուն նշանակում է «աստվածության ուսումնարանի նախագահ» և տալիս է նրան Տիմոթեոս մականունը[5]: Գեննեսիոսի այդ նշանակումը զրդռում է եղբոր՝ Թեոդորոսի նախանձը և այդ հողի վրա երկուսի միջև սկսում են տեղի ունենալ վեճեր ու կռիվներ, որոնք շարունակվում են շատ երկար[6], մինչև Լևոն III Իսավրացու գահակալությունը (717—741): Բյուզանդական նոր կայսրը, իմանալով Եպիսպարիսի պավլիկյան-

1 Տե՛ս „Его же святейшего Фотия Повествование", էջ 138, 181—182:

2 Տե՛ս „Полезная история Петра Сицилийского", էջ 138, „Его же святейшего Фотия Повествование", էջ 180:

3 Տե՛ս նույն տեղը:

4 Տե՛ս նույն տեղը, էջ 169:

5 Տե՛ս նույն տեղը, էջ 181:

6 Տե՛ս նույն տեղը, էջ 182:

ների և նրանց ղեկավար Գեննեսիոս-Տիմոթեոսի մասին, վերջինիս շտապ կանչում է իր մոտ և ուղարկում Կոնստանդնուպոլիս, որպեսզի պատրիարքն անձամբ քննի ու պարզի նրա դաղափարների էությունը: Սակայն, ինչպես արդեն ասվել է, այդ հարցաքննությունն անցնում է շատ հաջող և Գեննեսիոսը, արդարացվելով, կրկին վերադառնում է Եպիսպարիս: Գեննեսիոսի արդարացումը որոշ չափով էլ կապվում էր Լևոն III Իսավրացու պատկերամարտության քաղաքականության հետ:

Գեննեսիոս-Տիմոթեոսը, սակայն, Եպիսպարիսում իրեն ապահով զգալ չէր կարող, որովհետև բյուզանդական իշխանությունները վերջիվերջո պետք է նրանից հաշիվ պահանջեին: Դրա համար էլ նա շուտով թողնում է Եպիսպարիսն և, անցնելով արաբական կողմը, հաստատվում է Մանանաղ գյուղում[1]: Պավլիկյանների մասսայական տեղափոխությունը Բյուզանդիայից դեպի արաբական տերիտորիան Հ. Գրեգուարը հաստատում է նաև Հովհան Օձնեցու «Ընդդէմ պաւղիկեանց» աշխատության հանդես գալով: Նա գտնում է, որ հայոց կաթողիկոսը, խիստ կերպով անհանգստանալով արաբական մասում պավլիկյանների քանակական աճից, շտապեց նրանց դեմ հանդես գալ նաև գրավոր աշխատանքով[2]: Գեննեսիոս-Տիմոթեոսի գործունեության հիմնական կենտրոնն այնուհետև դառնում է Մանանաղն ու նրա շրջակայքը: Այստեղ նա ապրում և գործում է երեսուն տարի[3]: Գեննեսիոսի կառավարման սկիզբը համարելով Լևոն III Իսավրացու գահակալման առաջին տարին, այսինքն 717 թվականը, Հ. Գրեգուարը նրա մահվան թվականը միանգամայն ընդունելի կերպով վերագրում է 747-ին: Գեննեսիոս-Տիմոթեոսը մեռնում է համաճարակից[4], որը հիշյալ տարիներին Հայաստանի այդ կողմերում և նրան հարևան երկրամասերում առանձնապես մեծ չարիք էր դարձել[5]:

Գեննեսիոս-Տիմոթեոսի մահվանից հետո Մանանաղի պավլիկյանները նորից պառակտվում ու բաժանվում են երկու խմբի. նրանցից մի մասը համախմբվում է Զաքարիայի, իսկ մյուս մասը՝ Հովսեփի շուրջը. նրանք երկուսն էլ Գեննեսիոսի որդիներն էին: Խմբերի այդ երկու առաջնորդների միջև իշխանամանքն ու խռովությունը

[1] Տե՛ս „Его же святейшего Фотия Повествование", էջ 183:

[2] Տե՛ս H. Gre'goire, Pour lHistoire des églises Pauliciennes, Roma, 1947, էջ 511:

[3] Տե՛ս „Полезная история Петра Сицилийского", էջ 139, „Его же святейшего Фотия Повествование", էջ 183:

[4] Տե՛ս „Полезная история Петра Сицилийского", էջ 139:

[5] Տե՛ս H. Gre'goire, Pour lHistoire..., էջ 511:



գնալով ավելի է սրվում ու խորանում: Նրանցից յուրաքանչյուրն աշխատում էր դառնալ միանձնյա առաջնորդ ու ղեկավար: Այդ հողի վրա առաջացած վեճերից ու գժտություններից մեկի ժամանակ Հովսեփը քիչ է մնում դառնա չարացած Զաքարիայի նետած քարի զոհը[1]:

Պավլիկյանների մեջ այս վեճն ու անհամաձայնությունը, ղեկավարների անձնական հակումներից բացի, ուներ նաև ավելի խոր պատճառներ: Կարելի է ենթադրել, որ այդ հակամարտությունը շարժման արմատական և ավելի չափավոր թևերի միջև գոյություն ունեցող հակասությունների դրսևորումն էր: Որոշ ժամանակ հետո, երբ Զաքարիայի և Հովսեփի վեճը մեղմանում է, նրանց հետևորդները բոլորը միասին որոշում են Մանանաղից գաղտնի հեռանալ: Սակայն արաբները, իմանալով, որ նրանք միտք ունեն բյուզանդական կողմն անցնելու, սկսում են հետապնդել նրանց: Տեսնելով այդ, Զաքարիան թողնում է իր մարդկանց ու փախչում, դրա համար էլ պավլիկյանները նրան չեն ընդունում որպես առաջնորդ, այլ համարում են դավաճան ու ծախված անձնավորություն[2]: Իսկ Հովսեփը, որի երկրորդական անունը էպաֆրոդիտ էր, փոխում է իր ընթացքը և ձևացնում, որ իբր իրենք ոչ թե արաբներից են փախչում, այլ գործով Ասորիք են գնում[3]: Դրանից հետո արաբները հեռանում են, իսկ Հովսեփը որոշ ժամանակ անց, իր հետևորդների հետ միասին, կրկին թողնում է Մանանաղը ու տեղափոխվում Եպիսպարիս՝ բյուզանդացիների մոտ: Այս դեպքերը տեղի են ունեցել 748 թվականին[4]:

Այդ ժամանակներում արաբական կողմից պավլիկյանների և մյուսների դեպի Բյուզանդիա անցնելու պատճառը, ինչպես մենք արդեն նշել ենք[5], հետևանք էր Արաբական խալիֆայության՝ Հայաստանում վարած ճնշման ու հարստահարման քաղաքականության, որն առանձնապես սկսել էր ծանրանալ 725 թվականի Հերթի աշխարհագրից հետո: Հենց այս քաղաքականության ալիքներն էին, որ հասել էին Մանանաղ և բյուզանդական սահմանին մոտ գտնվող հայկական շրջաններին: Մեզ թվում է, որ ճիշտ պետք է լինի Հ. Բարթիկյանի այն կռահումը, թե Մանանաղի պավլիկյաններին ոգևորել էին նաև 744—754 թվականներին դեպի Պոնտոս շարժվող Գրիգոր

[1] Տե՛ս „Полезная история Петра Сицилийского", էջ 140:

[2] Տե՛ս նույն տեղը:

[3] Տե՛ս նույն տեղը:

[4] Տե՛ս P. Бартикян, К вопросу о павликианском движении в Византии в первой половине 8-го века, „Византийский временник", т. 8, 1956 էջ 129:

[5] Տե՛ս Ս. Մելիք-Բախշյան, Պավլիկյան շարժումը Հայաստանում, էջ 166:

Մամիկոնյանի ու նրա հետևորդների գործողությունները[1], որոնց, ինչպես արդեն ասվել է, եկան միացան նաև պավլիկյանների խմբերը: Շատ հնարավոր է, որ հենց Մանանաղի պավլիկյաններն էլ ցանկանային Պոնտոս գնալ, որի համար էլ նրանք խստորեն հետապնդվում էին արաբական իշխանությունների կողմից:

Հովսեփ-էպաֆրոդիտի գործունեությունն Եպիսպարիսում, ինչպես ասվել է, շատ կարճ է տևում: Տեղի բյուզանդական կառավարիչ Կրիխորախաի հետապնդումից նա մի կերպ ազատվում ու փախչում է սկզբում Փոյուգիա, իսկ ապա հաստատվում է Պիսիդայի Անտիոք քաղաքում, որտեղ երեսուն տարի հաջողությամբ գործելուց հետո վախճանվում է Խորտոկոպիոն վայրում, որն, ըստ Փոտի, գտնվում էր վերոհիշյալ քաղաքի մոտակայքում[2]: Քանի որ Հովսեփ-էպաֆրոդիտի Մանանաղից վերջնական փախուստը տեղի է ունեցել 748 թվականին, որից հետո նա Հայաստանից դուրս շարունակել է գործել ևս երեսուն տարի, ուրեմն նրա մահը պետք է տեղի ունեցած լինի 778 թվականին:

Հովսեփ-էպաֆրոդիտի հեռանալուց հետո Հայաստանում նրա գործը շարունակում է նրա աշակերտը՝ Վահանը, որին հաջողվում է արմատախիլ անել տարաձայնություններն ու գժտությունը և պավլիկյանների մեջ որոշ ժամանակ համերաշխություն ստեղծել: Նախորդների օրինակով, Վահանը նույնպես կարողանում է իր կողմը գրավել նորանոր համակիրների և աստիճանաբար ամրապնդել պավլիկյանների շարքերը[3]: Նրա հեղինակությունն այնքան է մեծանում, որ նա շուտով դառնում է աղանդապետ ու առաջնորդ:

Վահանի միանձնյա գործունեության հետագա մանրամասնությունների, ինչպես նաև ուսուցության մասին սկզբնաղբյուրներն ուրիշ ոչ մի տեղեկություն չեն հաղորդում, որի պատճառով էլ Վահանի ժամանակագրությունը հայտնի չէ:

Վահանի մասին վերևում բերված համառոտ տեղեկություններից հետո Պետրոս Սիցիլացին անցնում է պավլիկյանների ամենանշանավոր առաջնորդներից մեկի՝ Սերգիյի պատմությանը և դարձյալ անորոշ ձևով նշում, որ նա հանդես է եկել Վահանի աղանդապետ դառնալուց «մի որոշ ժամանակ հետո»[4]: Սերգիյի երկրորդ անունը Տիխիկ էր: Ըստ Պետրոս Սիցիլացու, նա ծնվել է Անկարայի շրջանի Տավիա քաղաքի մոտ գտնվող Անիա գյուղում, Դրիինի հա-

1 Տե՛ս *Р. Бартикян*, Источники для изучения..., էջ 42—43:
2 Տե՛ս նույն տեղը, էջ 161, ծանոթ. 54:
3 Տե՛ս „Полезная история Петра Сицилийского", էջ 141:
4 Նույն տեղում:



սարակ ընտանիքում[1]: Սերգիյ-Տիխիկը հիանալի հյուսն էր «և հաճախ զբաղվում էր այդ արհեստով»[2]: Պետրոս Սիցիլացու և Փոտի հետագա հաղորդումներից պարզվում է, որ Սերգիյն ասպարեզ է մտել դեռևս Վահանի կենդանության ժամանակ և, իր շուրջը հավաքելով համակրողների մի խումբ, սկսել է բացահայտ կերպով դեմ դուրս գալ Վահանին[3]: Այնուհետև «(Սերգիյը) սկսում է բոլորի ներկայությամբ դատապարտել նրան (Վահանին) ոչ թե դավանանքի համար, այլ նրա անօրինական գործունեության ոչ տեղին լինելու համար»[4]: Ուրեմն Սերգիյը դեմ էր ոչ միայն Վահանի անձնավորությանը, այլև նրա դրույթներին ու գործելակերպին ընդհանրապես[5]: Այս բանավեճերն ու հակասությունները, որոնց ակունքները գալիս էին դեռևս պավլիկյանների նախորդ ղեկավարների ժամանակներից, իվերջո պավլիկյաններին բաժանում են երկու խմբի՝ վահանականների և սերգիյականների, որոնց անջատ գոյությունը շարունակվում է բավականին երկար, ընդհուպ մինչև Սերգիյի մահը[6]: Վահանականների և սերգիյականների պայքարը պավլիկյան շարժման մեջ տակավին գոյություն ունեցող արմատական և չափավոր թևերի միջև մղվող պայքարն էր: Պետրոս Սիցիլացու վկայություններից երևում է, որ ոչ մի ժամանակ պավլիկյան շարժման մեջ չէին ընդգրկվել տարբեր դասերի ու դասակարգերի այնքան շատ ներկայացուցիչներ, որքան Սերգիյի ժամանակ: Եվ հասարակական տարբեր խավերի ընդգրկվելը շարժման մեջ անխուսափելիորեն պետք է սրբեր նաև նրանում եղած ներքին պայքարը: Պետրոս Սիցիլացին, որը Սերգիյի մասին եղած ամենամանրամասն սկզբնաղբյուրն է և ժամանակով էլ շատ հեռու չէ նրանից, իր հաղորդած տեղեկություններով կասկած չի թողնում, որ Սերգիյը հանդիսանում էր պավլիկյան շարժման առաջադիմական, դեմոկրատական, հետևաբար նաև ավելի արմատական թևի առաջնորդն ու ղեկավարը: Դրա համար էլ այդ հեղինակն իր ամբողջ շարադրանքն ու ոճը հյուսում է նրա շուրջը և ամենից շատ նրան է պախարակում և ոչ թե Վահանին: Մեր այս ասածները հիմնավորելու համար, տեղին ենք համարում մեջբերելու Պետրոս Սիցիլացու՝ Սերգիյի մասին հաղորդած և մեր կար-

1 Տե՛ս „Полезная история Петра Сицилийского", էջ 141:
2 „Его же святейшего Фотия Повествование", стр. 194.
3 Տե՛ս „Полезная история Петра Сицилийского", էջ 147—148:
4 Նույն տեղում:
5 Տե՛ս *Р. Бартикян*, Источники для изучения..., էջ 163—164, ծան. 129:
6 Տե՛ս „Полезная история Петра Сицилийского", էջ 148, „Его же святейшего Фотия Повествование", էջ 170:

ծիքով առավել արժեքավոր հատվածները. «Նա (Սերգիյի հայրը) մի տղա ուներ, որ կոչվում էր Սերգիյ, սատանայի պաշտպան. Սերգիյ, որը շատ մարդկանց ոչխարներից գայլեր դարձրեց և նրանց օգնությամբ ցրիվ տվեց Քրիստոսի հոտը. Սերգիյ՝ ահավոր ոչխարանման գայլ, որը նենգորեն առաքինի էր ձևանում և այդ ճանապարհով խաբել էր շատ մարդկանց. Սերգիյ՝ Քրիստոսի խաչի թշնամի, որը դարձել էր անաստվածության բերան, Աստվածամորն ու բոլոր սրբերին վիրավորող. Սերգիյ՝ Քրիստոսի առաքյալների թշնամի, մարգարեներին ատողը, որը կեղծում էր Սուրբ գիրքը և դիմել էր առասպելներին ու ստին. Սերգիյ՝ Քրիստոսին ատողը, եկեղեցու թշնամին, որն արհամարհեց աստծու որդուն, պղծեց պատգամի արյունը և չարախոսում էր հոգու շնորհը. Սերգիյ՝ իրեն Պարակլիտ համարող, իրեն Տիխիկ կոչող... Սերգիյ՝ խավարի սիրեցյալ, իրեն լուսավոր աստղ կոչող»[1]։

«Նա (Սերգիյը) անդադրում շրջում էր (այն) բոլոր քաղաքները և երկրները, ուր ութ հարյուր տարվա ընթացքում առաքյալը քարոզել էր (ի նկատի ունի Պողոս առաքյալին—Ս. Մ.-Բ.) ճշմարտության խոսքը։ Եվ հեռացնելով շատերին ուղղափառ հավատից, հանձնեց սատանային... Նա գործում էր ամբողջ 34 տարի, Իրինա Օգոստոսի ժամանակներից մինչև Թեոֆիլ կայսեր (ժամանակները) և նախապատրաստեց իսկական ապստամբություն... և որով վարակվեց Քրիստոսի եկեղեցու մեծ մասը։ Ոմանց նա գրկում էր անցավոր կյանքից, գույքից և վաղաժամ սպանում... Շատ վանականների և կույսերի, որոնք իրենց կուսությունը նվիրաբերել էին աստծուն՝ փչացրեց իր աշակերտների օգնությամբ և օտարելով նրանց վանական կյանքից, հեռացրեց աստծուց։ Շատ քահանաների և լեվիտների պոկեց ուղղափառ հավատից և գառներից նրանց դարձնելով վայրի գազաններ՝ պատրաստեց մարդակերներ։ Շատերին նա սպանեց կապանքների մեջ ու զնդաններում, իսկ ուրիշներին՝ հարուստներից դարձրեց աղքատներ»[2]։

Պետրոս Սիցիլացու կողմից Սերգիյին տված այս բնութագիրը նրան մի քանի գլխով վեր է բարձրացնում պավլիկյանների մինչ այդ ունեցած ղեկավարներից ու առաջնորդներից։ Այստեղից մենք իմանում ենք, որ Սերգիյ-Տիխիկն իր եռևից տանում էր «շատ մարդկանց»։ Նրա ուսմունքով «վարակվեց Քրիստոսի եկեղեցու մեծ մասը», որ հասարակ ժողովրդից բացի Սերգիյին հետևում էին նաև քահանաներ ու լեվիտներ և այլն։ Պավլիկյանների այս առաջնորդը

[1] „Полезная история Петра Сицилийского", էջ 141։

[2] Նույն տեղը, էջ 144—145։



խիստ գործունյա անձնավորություն էր։ Իր կենտրոնը դարձնելով Փոքր Հայքի Արգաուս բերդը[1], նա անընդհատ շրջագայում էր և գրավոր ու բանավոր պրոպագանդայով կարողանում էր ոտքի հանել շատ շատերին։ Սերգիյն իր նվիրված աշխատանքով կարողացավ պավլիկյան շարժման մասնակիցների թիվը հարյուր հազարների հասցնել։ Սերգիյը, «...Որպես պղծության ամենաբոցաշունչ քարոզիչ, ճանապարհորդելով շատ երկրներում ու քաղաքներում, շատ-շատերին իր հետևորդը դարձրեց»[2]։ Պետրոս Սիցիլացու այն խոսքերը, թե Սերգիյը մարդկանց զրկում էր կյանքից ու գույքից և հարուստներին աղքատացնում էր, անշուշտ վերաբերում էր միայն տիրող դասակարգի ներկայացուցիչներին և այստեղ մենք անմիջապես գործ ունենք պավլիկյան շարժման սոցիալական ու գույքային հավասարեցման և հասարակության տիրող դասակարգերի ներկայացուցիչների իրավունքների խստորեն սահմանափակման հեղափոխական ծրագրի գործնական կիրառության հետ։ Այսպիսի մի ծրագրի կենսագործումն ու իրականացումը, իհարկե, չէր կարող կատարվել հաշտ ու խաղաղ եղանակով։ Նա անխուսափելիորեն պետք է իրար դեմ հաներ սոցիալական տարբեր խավերի ներկայացուցիչներին։ Եվ պավլիկյան շարժման պատմության ընթացքում մինչև այժմ մենք առաջին անգամ Սերգիյի ղեկավարության ու նրա կազմակերպական մեծ աշխատանքի շնորհիվ ենք ականատես լինում «իսկական ապստամբության» և հեղափոխական միջոցառումների կենսագործման։ Սերգիյի ժամանակներից սկսած, պավլիկյան շարժումն սկսում է թևակոխել իր նոր, է՛լ ավելի բարձր շրջանը։ Եթե մինչև Սերգիյը պավլիկյանությունը հանդես էր գալիս մեծ մասամբ լոկ որպես տիրող հասարակական հարաբերությունները գաղափարապես ժխտող մի ուսմունք, ապա VIII դարի վերջերից սկսած պավլիկյան շարժումը վերածվեց ժողովրդական հուժկու ապստամբական շարժման, որը մի քանի տասնամյակ շարունակ ժողովրդական մասսաներին զանգվածաբար պայքարի էր տանում տեղական և օտարերկրյա շահագործողների դեմ։ Պավլիկյան շարժման նմանօրինակ որակական փոփոխությունը չպետք է, իհարկե, վերագրել միմիայն Սերգիյի անհատական ձիրքերին։ Դրա պատճա-

[1] Արգաուսը (Ἀργαοῦς) գտնվում էր Տերեկի և Մելիտենեի միջև։ Ուսումնասիրողներն այն նույնացնում են այժմյան Մալաթիայից հյուսիս գտնվող Արգովանի հետ։ (Տե՛ս A. Васильев, Политические отношения Византии и арабов за время Аморийской династии, СПб, 1900, էջ 182, *Ծանոթ.* 3, *Н. Адонц*, Армения в эпоху Юстиниана, էջ 80—81, *Ernest Honigmann*, Die ostgrenze des Byzantinischen Reiches, 1935, էջ 60)։

[2] „Его же святейшего Фотия Повествование", стр. 189.

որ հիմնականում Արաբական խալիֆայության և Բյուզանդական կայսրության դաժան ու հարատահարող քաղաքականության մեջ էր, որի հետևանքով հայ ժողովրդի դրությունն էլ ավելի ծանրացավ։ Ֆեոդալական հարաբերությունների զարգացման հետևանքով արդեն IX դարում ոչ միայն ուժեղանում էր գյուղացիների ճորտացման պրոցեսը, այլև լուրջ վտանգ էր ստեղծվում գյուղական ազատ համայնքների գոյության համար Բյուզանդիայում և վերջինիս հնթակա հայկական շրջաններում։

Սերգիյի ժամանակ հոգևոր դասի ներկայացուցիչների՝ վանականների, կույսերի, քահանաների և լեվիտների ավելի մեծ չափերով շարժման մեջ ընդգրկվելը բոլորովին էլ չէր փոխում նրա բուն էությունը։ Հոգևորականության այն հատվածները, որոնք ներգրավվում էին պավլիկյան շարժման մեջ, անշուշտ, հետապնդում էին իրենց նեղ դասակարգային շահերի իրականացման նպատակները և ոչ մի կապ չունեին պավլիկյանության արմատական ու հեղափոխական բովանդակության հետ։

Պավլիկյան շարժման ղեկավարի՝ Սերգիյի հաջողությունների մեջ բաժին ունեին նաև նրա հավատարիմ օգնականներն ու աշակերտները։ Սերգիյին առանձնապես նվիրված էր պավլիկյանների զորահրամանատարը[1] և ուրիշներ։ Սերգիյի ամենամոտիկ աշակերտներն էին նաև Միքայելը, Կանակարեսը, Հովհան Ասրատը, Թեոդոտը, Բարսեղը և Զոսիմը[2]։

VIII դարի վերջերից սկսած պավլիկյան շարժման աշխուժացումն ու հաջողությամբ տարածվելը որոշ չափով էլ կապվում էր Իրինա կայսրուհու (797—802) և Նիկեֆոր I-ի (802—811) ժամանակաշրջանում Բյուզանդիայում տեղի ունեցող քաղաքական որոշ դեպքերի հետ։ Սովետական բյուզանդագետ Ե. Լիպշիցը բերում է Կոնստանդնուպոլսի պատրիարք Նիկեֆորի (806—815) վկայությունն այն մասին, թե ինչպես Իրինա կայսրուհու կողմից մայրաքաղաքից հեռացված պատկերամարտ տրամադրություններ ունեցող զինվորականները գնում-միանում էին պավլիկյաններին. «Մոլորակի նման թափառելով,— ասում է հեղինակը,— նրանք փընտրում էին մի աղանդ, որի մեջ չլինեին սրբապատկերներ և քրիստոնեական տնաշինարարության հուշարձաններ։ Այդպես նրանք գրաված հին ժամանակից իրենց դուր եկող մանիքեցիների անաստվածությունն ու անհավատությունը, համաձայն լինելով նրանց ուսմունքի հետ, խրախուսվելով նրանց ինքնագլխությամբ և քարոզելով այն, ինչն իրենց վաղուց ընդունելի և ցանկալի էր։ Այդ պատճառով նրանցից շատերը երդմամբ կատարելապես ուրացան մեր հավատը և ամբողջապես կանգնեցին նրանց խելացնորության կողմում»[1]։ Բյուզանդական զինվորականների ու ռազմական գործիչների՝ պավլիկյաններին միանալն ուներ այն նշանակությունը, որ նրանք, որպես պատերազմի փորձ ունեցողներ, կարող էին վարժեցնել պավլիկյաններին ու ղեկավարել նրանց ռազմական գործողությունները։ Եվ պատահական չէ, որ Սերգիյի ժամանակ պավլիկյան շարժման կատարյալ ապստամբության վերածվելը համընկնում էր Կոնստանդնուպոլսից քաղաքական անվստահելի զինվորականներին արտաքսելու և նրանց՝ պավլիկյաններին միանալու դեպքերի հետ։ Բացի այդ, Իրինայի և Նիկեֆոր I-ի ժամանակ գործերը վատ էին գնում նաև արաբների հետ։

Պավլիկյանների գործունեության ծավալման համար նպաստավոր պայմաններ էին ստեղծվել նաև Իրինայի հաջորդ Նիկեֆոր I-ի ժամանակ։ Բյուզանդական ժամանակագիր Թեոֆանը, խոսելով պավլիկյանների նկատմամբ Նիկեֆորի ցուցաբերած հանդուրժողության մասին, ասում է, որ նա «Եղել է (Փոյուգիայում և Լիկաոնիայում, իր հայրենիքին մոտ ապրող) մանիքեականների, որոնք այժմ անվանվում են պավլիկյաններ, և աթինգանների բոցաշունչ բարեկամը։ Մանիքեականները մայրամաղամում ապրելու և անարգել կերպով բոլոր իրավունքներից օգտվելու թույլտվություն ստացան։ Եվ առավել թեթևամիտներից շատերը վարակվեցին նրանց անօրինական ուսմունքով։ ...Նրանք հայհոյում էին ուղղափառ ուսմունքն ու սրբապատկերները...»[2]։ Թեոֆանի հիշյալ վկայությունը արժեքավոր է նաև նրանով, որ այստեղից մենք հաստատ կերպով տեղեկանում ենք Փոյուգիայում և Լիկաոնիայում պավլիկյան շարժման տարածվածության մասին։

Պավլիկյան զինած ապստամբությունը, որ այդ ժամանակ ընդգրկում էր հսկայական տարածություն՝ Կոնստանդնուպոլսից սկսած մինչև Փոյուգիա, Լիկաոնիա ու Արևմտյան Հայաստան, շատ արագությամբ դառնում էր վտանգավոր երևույթ՝ կայսրության և բյուզանդական հոգևոր ու աշխարհիկ ֆեոդալների համար։ Այդ է պատճառը, որ Նիկեֆոր I-ից հետո, նրա հաջորդների՝ Միքայել I Ռանդաբի (811—813) և Լևոն V Հայկազնի (813—820) գահակալության

[1] Տե՛ս „Его же святейшего Фотия Повествование", էջ 192։
[2] Տե՛ս „Полезная история Петра Сицилийского", էջ 149։



[1] *Е. Липшиц*, Павликианское движение в Византии в 8-ом и в первой половине 9-го вв., „Византийский временник", т. 5, М., 1952, էջ 56։
[2] Նույն տեղում։

տարիներին նախկին հանդուրժողության վերաբերմունքը շատ շուտով տեղի տվեց պավլիկյանների դեմ ձեռնարկված կատաղի հալածանքների ու ոչնչացման քաղաքականությանը: Կայսրության կողմից ձեռնարկված առաջին հարվածներն ուղղվեցին հենց Փոյուգիայի և Լիկաոնիայի պավլիկյանների դեմ: Միքայել I Ռանգաբեն իր գահակալության սկզբում՝ 812 թվականին, պատրիարքի խորհրդով, խոշոր ուժեր նետելով իր հակառակորդների դեմ, կարողացավ ռազմական միջոցներով ոչնչացնել տալ շատ պավլիկյանների և աթինգանների[1]: Կայսերական հրահանգներն իրականացնելու համար հատուկ հանձնարարություններ տրվեցին նաև Նեոկեսարիայի Թովմաս եպիսկոպոսին ու Փոքր Հայքի կառավարիչ Պարակոնդասին: Սակայն տեղի ունեցած արյունահեղ կռիվներում ցուցադրելով իրենց կազմակերպվածությունն ու համախմբվածությունը, պավլիկյանները ոչ միայն պարտության մատնեցին բյուզանդական ուժերին, այլև կռիվներում սպանեցին նաև Թովմասին ու Պարակոնդասին: Դրանից հետո, սակայն, պավլիկյանները, զգալով, որ թշնամու ուժերը գերակշռում են իրենցից, սկսեցին ընդհարումների ասպարեզ դարձած շրջաններից կանոնավոր կերպով նահանջել դեպի ավելի ապահով վայրեր: Այդ ժամանակ պավլիկյանների զինված խմբերը մեծ մասամբ անցան Մելիտինեի աթաբական էմիրության տերիտորիան ու, արժանանալով էմիր Մոնոքերարի բարյացակամ ընդունելությանը, հաստատվեցին Արգաուսում ու նրա շրջակայքում և այստեղից շարունակեցին իրենց պայքարը Բյուզանդիայի դեմ: Հավանական է, որ հենց այդ ժամանակվանից պավլիկյանները տեղավորվեցին նաև Կուտակիա (κουτακια) և Ստեփանա (Στεφα'να) բերդերում, որոնք է. Հոնիգմանի կարծիքով գտնվում էին Արգաուսի մոտակայքում, Տևրիկից հարավ[2]:

Արաբական կողմում պավլիկյաններն առայժմ իրենց ապահով էին զգում: Կարելի է ենթադրել, որ այստեղ նրանք ոչ միայն վայելում էին արաբների հովանավորությունը, այլև պահպանում էին իրենց ներքին ինքնուրույնությունը: Պավլիկյաններն արաբա-բյուզանդական սահմանագլխում, երկու ախոյան պետությունների միջև ստեղծել էին մի տեսակ ռազմականացված գոտի: Այստեղ նրանք զբաղվում էին երկրագործությամբ ու անասնապահությամբ և, որպես ռազմիկներ, պահպանում իրենց սահմանները: Եվ արաբները, հաշվի առնելով պավլիկյանների քաջությունն ու ռազմատենչությունը, առայժմ նրանց ուժերն օգտագործում էին իրենց ամենավտանգավոր թշնամու՝ Բյուզանդական կայսրության դեմ:

Արգաուսի ու նրա շրջակայքի պավլիկյաններն այսուհետև իրենց պինված ջոկատներով կանոնավոր հարձակումներ էին գործում սահմանամերձ բյուզանդական շրջանների վրա և ահաբեկում ու լուրջ կորուստներ պատճառում հակառակորդին: Պավլիկյանների նման օրինակ համարձակ գործողությունները խրախուսվում և կազմակերպվում էին Սերգիյ-Տիխիկի ու նրա հավատարիմ զինակիցների կողմից: Դրա համար է, որ Պետրոս Սիցիլացին Սերգիյի համար, որպես տարբերիչ հատկություն իր նախորդների համեմատությամբ, նշում է այն, որ նա կարողանում էր իր հետևից տանել մասսաներին:

Հենվելով Պետրոս Սիցիլացու այն հիշատակության վրա, թե Սերգիյը, իր գործունեությունն սկսելով Իրինայի ժամանակներից, պավլիկյաններին առաջնորդել է 34 տարի շարունակ, ուսումնասիրողները նրա մահվան թվականը համարում են 835-ը[1]: Սկզբնաղբյուրների տեղեկություններից երևում է, որ պավլիկյանների այս ականավոր առաջնորդը զոհվել է եղերական մահով: Նա հասարակականից բացի ուներ նաև իր անձնական հոգսերը: Արգաուսում, ինչպես երևում է, Սերգիյը չէր թողել իր սիրած արհեստը՝ հյուսնությունը: Եվ մի անգամ, երբ նա տախտակի համար փայտ կտրելու նպատակով գնում է քաղաքի մոտակա անտառը, այլևս չի վերադառնում: Անտառում գաղտագողի նրա վրա է հարձակվում մի նիկոպոլսեցի ծան (լազ) ու իր իսկ կացինով սպանում նրան[2]:

Սերգիյի նման տաղանդավոր առաջնորդի կորստից հետո, թվում է, պավլիկյանները պետք է հուսահատվեին ու թուլացնեին իրենց պայքարը: Սակայն այդպես չեղավ: Ճիշտ է, առաջնորդի մահվանից հետո սերգիյականների և վահանականների միջև եղած վեճերը նորից սկսեցին բորբոքվել, որոնք որոշ դեպքերում վեր էին ածվում արյունահեղ կռիվների, սակայն, բարեբախտաբար դրանք շատ կարճ տևեցին և Սերգիյի հավատարիմ աշակերտները կարողացան անմիջապես վերացնել ներքին պատակոտումն ու պավլիկյանների համայնքը դարձնել միասնական ու անբաժան: Այս գործում առանձնապես վճռական դեր է կատարում Թեոդոտը, որի «ընդհանուրի օգտի համար»[3] արած կոչից հետո բոլորը միավորվում

[1] Տե՛ս *Eduard de Muralt*, էջ 398:
[2] Տե՛ս *Ernest Honigmann*, էջ 60:

[1] Տե՛ս *H. Gre'goire*, Pour lHistoire..., էջ 512:
[2] Տե՛ս „Полезная история Петра Сицилийского", էջ 148, „Его же святейшего Фотия Повествование", էջ 194:
[3] „Полезная история Петра Сицилийского", стр. 148, „Его же святейшего Фотия Повествование", стр. 192.

և վերջ են տալիս ներքին տարաձայնություններին[1]։ Սերգիյի մահվանից հետո, ինչպես մեկ առիթով արդեն նշել ենք, պավլիկյան համայնքի ղեկավարությունն անցնում է ոչ թե մեկին, այլ նրա ամենահավատարիմ աշակերտներին, որոնք իրենց գաղափարակիցներին սկսում են կառավարել միասին ու կոլեկտիվ սկզբունքներով[2]։

Պավլիկյանների պայքարի գործն առանձնապես սուր բնույթ ստացավ հայկական Մամիկոնյան տոհմի երկու ներկայացուցիչների՝ Թեոֆիլ (829—842) և Միքայել III (842—867) կայսրերի գահակալության ժամանակներում։ Ասորական պատմիչ Միխայել Ասորու հիշատակությունների համաձայն, պավլիկյանների դեմ ձեռնարկված հալածանքն անձամբ գլխավորում էր Թեոֆիլը։ Բյուզանդացիները, ինչպես երևում է, այդ արշավանքների ընթացքում կարողանում են որոշ հաջողություններ ունենալ։ Բյուզանդական զորքերը հասնում են մինչև Փոքր Հայքի շրջանները՝ Զապետրա, պարտության մատնում արաբներին ու պավլիկյաններին և, Մելիտինեն գրավել չկարողանալով, ներխուժում են Անձիտ ու Արշամաշատի մոտից ետ վերադառնում՝ տանելով շատ գերիներ ու ավար։ Ահա թե ինչպես է նկարագրում Միխայել Ասորին Թեոֆիլի այդ արշավանքը. «Եւ Թէոփիլոս,—ասում է նա,—...առեալ զօր եկն ի Զուպատրա և քակեաց զնա, և կոտորեաց հաւասարապէս զՏաճիկսն և զքրիստոնեայսն. և ապա գնաց ի Մելտենի և գերեաց. և ելաւ յԱշմուշատ և ի Հանձիթ և գերեաց զբազումս և գնաց»[3]։ Բյուզանդացիներն իրենց անցած ճանապարհին ամեն ինչ սրի ու հրի էին մատնում։ Պետրոս Սիցիլացին այդ առիթով գոհունակությամբ նշում է, որ «...կայսերը իրենց շատ բարի գործերի թվում, հրամայում էին նաև սրով գլխատել մանիքեցիներին ու մոնտանիստներին, իսկ նրանց մոտ հայտնաբերված գրքերը՝ այրել։ Եվ եթե որևէ մեկը թաքնված տեղից կհայտնաբերվի, ապա նա մահվան է դատապարտվում, իսկ նրա ունեցվածքն անցնում է պետական գանձարանին»[4]։

Պավլիկյաններին հալածելու և ոչնչացնելու գործում շատ ակտիվ դեր է կատարել նաև Թեոֆիլի կինը, բյուզանդիայի ռազմական և քաղաքական կյանքում բավականաչափ հռչակ ձեռք բերած, հայկական Մամիկոնյան իշխանական տան ներկայացուցիչ[1], կայսրուհի Թեոդորան։ Թեոֆիլ և Միքայել III կայսրերի ժամանակ պավլիկյանների դեմ ռազմական գործողությունները գլխավորում էին Թեոդորայի երկու եղբայրները՝ Վարդ (Բարդաս) ու Պետրոն կամ Պետրոնասը, ապա նաև կայսրուհու հորեղբայր Մանվել Մամիկոնյանը։ Մանվել և Վարդ Մամիկոնյաններն արքունիքում այնքան մեծ հեղինակություն ունեին, որ Թեոֆիլը իր կենդանության ժամանակ նրանց, ներքինի Թեոկտիստի ու Թեոդորայի հետ միասին, նշանակել էր դահաժառանգ Միքայելի խնամակալներ։

Թեոֆիլի մահվանից հետո պավլիկյանների դեմ պայքարի գործն անմիջապես իր ձեռքն է վերցնում Թեոդորան։ Այդ ծրագիրն առավել հաջող ընթացքի մեջ դնելու նպատակով նա կարողանում է ճարպկորեն օգտագործել պատկերապաշտության խնդիրը։ Արմատապես հրաժարվելով Լևոն Հայկազնի վերսկսած և հետո Ամորյան դահակալների կողմից շարունակվող պատկերամարտության քաղաքականությունից, նա կրկին բռնեց պատկերապաշտների կողմը։ Երկրի ներքին կյանքում կայսրուհու սկսած վերոհիշյալ քաղաքականությունը մեծ չափով խրախուսվում և հովանավորվում էր պատրիարք Մեթոդիոս I-ի (843—847), Լոգոթետ Թեոկտիստի և Վարդ Մամիկոնյանի կողմից։ 843 թվականին Թեոդորայի նախաձեռնությամբ գումարված հատուկ եկեղեցական ժողովը պատկերապաշտությունը նորից հռչակելով որպես հունական եկեղեցու հիմնական ուղղությունը՝ լայն ճակատով պայքար սկսեց պատկերամարտության ու պավլիկյանության դեմ։ Բյուզանդիայում սկսված այդ նոր քաղաքականության հետևանքով երկրի թեմերի վերնախավերի դրժդոհ ներկայացուցիչներն ու պատկերամարտ հոգևորականության մի մասն անմիջապես անցավ պավլիկյանների կողմն ու նրանց հետ շարունակեց պայքարը կայսրության դեմ[2]։ Թեոդորան իր նշված ձեռնարկումների իրականացումն արագացնում էր, որովհետև այդ ժամանակ արաբներն ու պավլիկյանները, համատեղ ուժերով պարտության մատնելով բյուզանդացիներին, արդեն ներխուժել էին հակառակորդի տերիտորիան։ Պավլիկյաններին ու արաբներին ետ մղելու համար, Թեոդորայի հրամանով, հավանաբար 843—844 թվականներին, արևելք է շարժվում Լոգոթետ Թեոկտիստը։ Սակայն առաջին իսկ ճակատամարտում, որը տեղի է ունենում Փոքր Հայքի

1 *Տե՛ս* „Полезная история Петра Сицилийского", էջ 148, „Его же святейшего Фотия Повествование", էջ 195։

2 *Տե՛ս* „Полезная история Петра Сицилийского", էջ 148—149, „Его же святейшего Фотия Повествование", էջ 195։

3 **Միխայել Ասորի**, *էջ 371։*

4 *Е. Липшиц*, Павликианское движение в Византии в 8-ом и в первой половине 9-го вв., стр. 52.



1 *Տե՛ս* Ն. Ադոնց, *Մամիկոնյան իշխանուհին բյուզանդական գահի վրա, նրա «Պատմական ուսումնասիրություններ», Փարիզ, 1948։*

2 *Տե՛ս М. Сюзумов*, Проблемы иконоборчества в Византии, „Учёные записки" Свердловского Государственного педагогического института, вып. 4-ый, Свердловск, 1948, էջ 75։

սահմանագլխում, Կեսարիայից հյուսիս Մավրոպոտամոն (Սև Ջուր)[1] վայրում, արաբներն ու պավլիկյանները, գլխովին ջախջախելով Բշնամու մեծաքանակ ուժերը, հսկայական կորուստներ են պատճառում նրան: Բյուզանդական քառասուն հազարանոց բանակից շատերը սպանվում, իսկ շատերն էլ արաբների հարկադրանքով դավանափոխ են լինում: Իսկ Թեոկտիստը մի կերպ փրկվում է փախուստով:

Պավլիկյանների ձեռք բերած այս փառավոր հաղթանակը, այնուամենայնիվ, նրանց չազատեց Թեոդորայի ձեռնարկած հետագա է՛լ ավելի սպառնալից գործողություններից, գործողություններ, որոնց հետևանքով բազմահազար անմեղ մարդիկ զոհվեցին, իսկ շատերն էլ մնացին անօթևան:

Առաջին ամոթաբեր պարտությունից հետո Թեոդորան ձեռնարկեց երկրորդ արշավանքը: Այս անգամ հարձակումը պավլիկյաններ դեմ գլխավորում էին երեք նշանավոր մագիստրոսներ՝ Արգիրը, Դուկը և Սուդալիսը, որոնց հանձնարարվել էր Բշնամու նկատմամբ լինել անողոք և խտրություն չդնել նրանց ոչնչացնելու եղանակների մեջ: Բյուզանդական հիշյալ զինվորականները կետ առ կետ կատարեցին Թեոդորայի հանձնարարությունները: Այս անգամ, դժբախտաբար, հաջողություններ ձեռք բերելով, բյուզանդացիները դաժան դատաստան տեսան նաև բազմահազար անմեղ մարդկանց հետ: Կռիվներում և ասպատակությունների ընթացքում սպանված պավլիկյանների թիվը հասնում էր հարյուր հազար մարդու: Սպանվածների ու փախուստով փրկվածների ամբողջ գույքն ու ունեցվածքը եննթարկվում էր թալանի ու կողոպուտի: Թեոֆանի Պատմությունը շարունակողի մոտ վերոհիշյալ դեպքերի մասին պահպանվել են հետևյալ արժեքավոր տեղեկությունները. «(Ունենալով նման հաջողություններ Արևմուտքում, Թեոդորան) մեծ ցանկություն ուներ ուղիղ հավատի բերելու պավլիկյաններին Արևելքում կամ արմատախիլ անելու և հեռացնելու նրանց կենդանի մնացածներից: (Եվ այդ բանը) մեր երկրին բերեց բազում աղետներ: Ընդ որում նա ուղարկել էր մագիստրոսներից մի քանիսին (Արգիրին, Դուկին և Սուդալիսին՝ այդպես էին կոչվում նրա կողմից ուղարկվածները). նրանք ոմանց խաչեցին փայտի վրա, մյուսներին սրախողխող արին, երրորդներին նետեցին ծովի անդունդը: Այդպիսով, ինչպես հաշվվում է, զոհվեց հարյուր հազար մարդ: Նրանց կարողությունը տարվեց և հանձնվեց կայսերական գանձարանին»[1]:

Պավլիկյանների նկատմամբ գործադրվող այս դաժան հալածանքներն ու նրանց ոչնչացումը, ինչպես երևում է, խիստ թանկ է նստել Բյուզանդիայի վրա, որովհետև հույն պատմիչն անգամ խոստովանում է, որ այդ կոտորածներն ու տանկնուվբայությունները Բյուզանդիային բերեցին բազում աղետներ: Թեոդորայի դաժանություններն ամեն չափ ու սահման անցնում էին: Նրա մարդիկ շրջագայում և ամենուրեք փնտրում ու ոչնչացնում էին պավլիկյաններին՝ ոմանց գենքով, ոմանց կախաղանով, ոմանց էլ այլևայլ ձևերով տանջամահ անելով: Թեոդորան այդպես էր վարվում ոչ միայն իր գաղափարական հակառակորդների հետ, այլև բոլոր նրանց հետ, ում նկատմամբ փոքր ինչ կասկածներ ուներ: Իշխելու տենչը նրան շուտով դրդեցին ասպարեզից հեռացնելու նույնիսկ իր հարազատներին՝ Մանվել և Վարդ Մամիկոնյաններին[2]: Բյուզանդական եկեղեցին ըստ արժանվույն է գնահատել իր հովանավորին ու պաշտպանին: Այդ արյունոտուշտ միապետը դեռևս այն ժամանակ դասվել է սրբերի շարքը և հավերժացվել կրոնական տոների մեջ[3]: Միջնադարյան հետամնաց ու խավարամիտ հոգևորականության օրինակով, այժմ նույնպես արտասահմանյան բուրժուական պատմագրության մեջ կան մարդիկ, որոնք հանգիստ խղճով Թեոդորայի ու նրա որդու՝ Միքայել III-ի ժամանակաշրջանը հայտարարելով որպես Բյուզանդիայի պատմության փառավոր էջեր, նրանց գլխավոր ու դրական ծառայությունն իրենց երկրին համարում են «ուղղափառության վերականգնումն ու պատկերամարտիկների և պավլիկյան աղանդի ճնշումը»: Պատմական նման մի երևույթի նկատմամբ այսպիսի խիստ անարդար ու ոչ գիտական վերաբերմունքի հեղինակներից է նաև բելգիական բուրժուական ոչ անհայտ բյուզանդագետ Հանրի Գրեգուարը, որի համապատասխան գործերը ժամանակին արժանի քննադատության են ենթարկվել սովետական մասնագետների կողմից[4]:

Սակայն պավլիկյանների դեմ գործադրված արյունալի դատաստանները նույնպես գործին չօգնեցին, ընդհակառակը, Բշնամու կողմից ձեռնարկված արշավանքները, ավերածություններն ու կո-

[1] Մավրոպոտամոնը պատկանում է Ալիս գետի ավազանին և հոսում է Կեսարիայի հյուսիսային կողմով (Ն. Ադոնց, Վարդ Մամիկոնյան, տե՛ս նրա «Պատմական ուսումնասիրություններ»):

[1] „Продолжатель Феофана". Сборник документов по социально-экономической истории Византии, 1951, էջ 122—123:

[2] Տե՛ս Ն. Ադոնց, Մամիկոնյան իշխանուհին բյուզանդական գահի վրա:

[3] Տե՛ս նույն տեղը:

[4] Տե՛ս М. Левченко, А. Грегуар и его работы по византиноведению, „Византийский временник", т. 3, М., 1950:

տորածները, ավելի կոփեցին պավլիկյաններին ու ամրապնդեցին նրանց մեջ պայքարի վճռականությունը։ Պավլիկյանները հենց այդ ժամանակներում համախմբվեցին իրենց մեկ ուրիշ տաղանդավոր առաջնորդի շուրջը և շարունակեցին հերոսական պայքարը Բյուզանդական կայսրության կանոնավոր բանակների դեմ։ Այդ անձնավորությունը Կարբեասն էր, որի գործունեության մասին բարեբախտաբար արժեքավոր տեղեկություններ են պահպանվել մեզ արդեն ծանոթ Թեոֆան Խոստովանողի Պատմության շարունակողի մոտ։ Այդ հաղորդումներից մենք իմանում ենք, որ Կարբեասը, նախքան պավլիկյանների գլուխ անցնելը, ծառայում էր Անատոլական թեմի կուսակալ Թեոդոս Մելիսինի մոտ որպես գրագիր։ Նա միաժամանակ զինվորական էր և ուներ սպայական աստիճան։ Կարբեասը, ինչպես երևում է, Փոքր Հայքից կամ Արևմտյան Հայաստանից էր, որովհետև Արգիրի, Դուկի և Սուգալիսի արշավանքների ժամանակ այնտեղ տպանվում է նաև նրա ավետր հայրը։ Եվ Կարբեասը, որ «հպարտանում և պարծենում էր այդ նույն պավլիկյանների հավատով», իմանալով իր հոր սպանության մասին, որոշում է վրեժխնդիր լինել պավլիկյանների հակառակորդներից։ Ինչպես երևում է, բյուզանդական զինվորական ծառայության մեջ գտնվող Կարբեասը միակը չէր, որ համակրում և հետևում էր պավլիկյաններին։ Անատոլական թեմի զինվորականության մեջ շատերն էին հակված դեպի պավլիկյանները։ Թեոֆանի շարունակողի հիշատակություններից երևում է, որ այնտեղ, պավլիկյանների շրջանում, Կարբեասը վայելում էր առանձին հեղինակություն ու համբավ, որովհետև բյուզանդացիների՝ Հայաստանում կատարած արյունալի գործողությունների լուրն առնելուն պես նա կարողանում է անմիջապես իր շուրջը համախմբել հինգ հազար գաղափարակիցների և անցնել Մելիտինեի արաբական էմիր Օմար իբն-Աբդուլա ալ-Ակտայի մոտ՝ նրա օգնությամբ իր հայրենակիցներին պաշտպանելու և բյուզանդական զավթիչների դեմ պայքարելու համար։ Ահա թե ինչ է ասված այդ մասին Թեոֆանի շարունակողի աշխատության մեջ. «Անատոլական ստրատեգի մոտ (դա Թեոդոս Մելիսենն էր) ծառայության մեջ էր գտնվում մի մարդ Կարբեաս անունով, որը կատարում էր պրոտոմանդատորի պարտականություն։ Սա հպարտանում և պարծենում էր այդ նույն պավլիկյանների հավատով։ Երբ նա լսեց, որ իր հայրը խաչվել է փայտին, այդ դժբախտության ազդեցության տակ և իր շրջահայեցությամբ, իր աղանդի գծով մյուս 5000 համախոհների հետ փախավ այն ժամանակվա Մելիտինեի էմիրի մոտ։ Այն-



տեղից ներկայացավ ամիրամունին (խալիֆին)»[1]։ Գիտական գրականության մեջ ցույց է տրված, որ Կարբեասն իր գործունեությունն սկսել էր ծավալել դեռևս 830-ական թվականների վերջերից Կալոնիայի շրջանում[2]։ Սակայն այդ ժամանակ, ինչպես երևում է, նրան չի հաջողվում անցնել պավլիկյանների գլուխը։ Կարբեասը 830-ական թվականների վերջերին և 840-ականի սկզբներին հավանաբար կանչվում է զինվորական ծառայության և ուղարկվում Անատոլական թեմը։ Դրանից հետո, ինչպես արդեն ասվել է, 843—844 թվականներին տեղի է ունենում Լոգոթետ Թեոկտիստի անհաջող արշավանքը պավլիկյանների դեմ, որին հաջորդում են Արգիրի, Դուկի և Սուգալիսի տակնուվրայությունները և Կարբեասի ու նրա ստվար զորախմբի գալուստը Հայաստան։ Եթե ընդունենք, որ Թեոդորայի կազմակերպած այս երկրորդ ավերիչ արշավանքը ամենաշուտը կարող էր տեղի ունենալ առաջինից մեկ տարի հետո, ուրեմն Հայաստանում Կարբեասի՝ պավլիկյանների գլուխ անցնելու տարեթիվն ամենայն հավանականությամբ կլինի 844 կամ 845 թվականը։

Հասկանալի է, որ բյուզանդացիների դեմ կռվող արաբներին 5000-անոց պավլիկյան ընտիր զորաբանակի օգնությունը կարող էր մի այն ուրախություն պատճառել, դրա համար էլ, ինչպես տեսանք, էմիր Օմար իբն-Աբդուլա ալ-Ակտան այդ զորախմբի առաջնորդ Կարբեասին ոչ միայն լավ ընդունելության արժանացրեց, այլև փառք ու պատվով ուղարկեց խալիֆի մոտ։ Վերջինս իր հերթին, գնահատելով Կարբեասին ու նրա ուժը, թույլ տվեց նրան իր մարդկանցով բնակություն հաստատելու Արգաուսում և նրանից հյուսիս գտնվող Ամարայում[3]։ Պավլիկյանների կողմից արաբներին օգնելու մասին հիշատակում է նաև արաբական պատմիչ Կուդաման, որն ասում է. «Պավլիկյանները մուսուլմաններին օգնում էին նրանց՝ բյուզանդացիների դեմ պայքարելու ժամանակ և շատ գնահատված էին առաջիններից»[4]։

---

[1] „Продолжатель Феофана", Сборник документов..., стр. 123.

[2] *Տե՛ս Р. Бартикян*, Источники для изучения истории павликианского движения, էջ 68—69։

[3] Ա. Վասիլևն Ամարան տեղադրում է Արգաուսից հյուսիս (*տե՛ս* նրա «Политические отношения Византии и арабов...», *էջ 182, ծան. 3*)։ Է. Հոնիգմանը Ամարան („Αμαρα") կամ Աբարան („Αβαρα") տեղավորում է Փոքր Հայքում՝ Տևրիկի և Տարանտայի միջև և նույնացնում հետագայի էմիրքյուի հետ, Արգովանից արևելք։ Նա գտնում է, որ ինքը առաջ սխալմամբ Ամարան նույնացրել է Յարփուզի մոտի էմիրլիի հետ (*տե՛ս* «Die Ostgrenze...», *էջ 56, ծան. 3*)։

[4] *А. Васильев*, Политические отношения Византии..., стр. 183.



1287—18

Կարբեասը, որպես հմուտ զինվորական, շուտով պավլիկյանների շրջանում ձեռք է բերում մեծ հեղինակություն և ընտրվում է աղանդապետ ու զորավար: Որպես զինվորականի, նրա ընդունակությունները շատ բարձր է գնահատում նույնիսկ Փոտը: Փոտը նրա մասին ասում է. «Նա եղել է շատ հմուտ մարտիկ: Եվ երբ իսովարար ամբոխն արդեն ամբացավ (որպես) ռազմական մեծ ուժ, ժողովուրդը նրան ընտրեց առաջնորդ»[1]: Կարբեասը ստեղծված բարդ ու ծանր իրապայմաններում ստանձնելով պավլիկյանների գաղափարական և զինվորական առաջնորդի պաշտոնը, ամբողջ գործունեության ընթացքում պատվով կատարեց իր վրա դրված բոլոր պարտավորությունները: Նա կարողացավ կարճ ժամանակում համախմբել պավլիկյաններին Արգաուսի և Ամարայի շրջաններում և ստվարացնել կռվող զորքերի շարքերը: Արդեն 850-ական թվականներին Կարբեասի շուրջը համախմբված պավլիկյաններն այնքան էին շատացել, որ, Արգաուսից ու Ամարայից բացի, նրանք կարիք զգացին մի նոր, էլ ավելի ամուր ու ապահով բնակավայրի կառուցման: 855 թվականին[2] Կարբեասը Փոքր Հայքի և Բարձր Հայքի սահմանագլխում, Եփրատի աջ կողմում հիմնում է մի նոր բնակավայր Տևրիկ անունով: «Կարբեասը,—ասում է Պետրոս Սիցիլացին,—հանդես գալով այդ ժամանակներում (և) գլխավորելով այդ կործանիչ ժողովրդին, այնքան շատացրեց նրա քանակը, որ Արգաուսում այլևս տեղ չգտնելով, նա եկավ և կառուցեց Տևրիկը, որտեղ և տեղավորեց իր (ժողովրդին)»[3]:

Տևրիկի դիրքը շատ առավելություններ ուներ Արգաուսի և Ամարայի համեմատությամբ: Այդ քաղաքը կարծես մի միջանկյալ օղակ էր Հայաստանի և Բյուզանդիայի սահմանագլխում, որտեղ կայսրությունից դժգոհ ամեն ոք կարող էր ազատ ապաստան գտնել: Այդ միտքը հաստատվում է նաև Պետրոս Սիցիլացու հետևյալ, բավականին ուշագրավ տողերով. «Նա (Կարբեասը—Ս. Մ.-Բ.) մի կողմից հեռանալով նրանից ոչ հեռու գտնվող Մելիտինեի հագարացիների տերիտորիայից, իսկ մյուս կողմից շփվելով մարդկանց հետ, սկսեց կատարելապես դևի նմանվել: Նա ուղում էր մոտենալ և՛ Հայաստանին, և՛ Ռոմանիային: Նրանց, ովքեր հպատակվում էին նրան, նա զարձնում էր իր գաշնակիցները և օգտագործում գերեվարության գործում: Իսկ նրանց, ովքեր չէին հպատակվում (նրան)՝ ուղարկում էր սարակինոսների մոտ: Եվ նա կողոպտում էր Ռոմանիայի սահմանամերձ շրջանները, որոնք ընկած էին մերձպոնտոսյան կողմերում: Այդ բոլորի հետ միասին, տեղանքի հարմարանքներից ելնելով, նա պատրաստեց հարմար ապաստարան նրանց համար, ում Ռոմանիայում սպառնում էին այն բանի համար, որ նրանք պատկանում էին այդ աղանդին: Եվ ոչ միայն այդ, այլև անկայուն, ունառակ և անխելք մարդկանց, որոնք ապրում էին այդ վայրերում. Տևրիկի մոտ, անամոթագույն կրքերի ազատության համար, հրավիրում էր իր մոտ այդ (ապաստարանը)»[1]: Դժվար չէ հասկանալ, որ բյուզանդական պատմագրության պաշտոնական ներկայացուցիչ Պետրոս Սիցիլացու հիշատակած «անկայուն», «անառակ» և «անխելք» մարդիկ հենց նրանք էին, ովքեր, չհանդուրժելով ճնշումն ու հարստահարությունները, դալիս, համախմբվում էին Կարբեասի շուրջը և կռվի ելնում իրենց իրավունքները ոտնահարողների դեմ: Տևրիկի հիմնադրման ու նրա ռազմա-քաղաքական դերի բարձրացման գործում Կարբեասի ավանդն այնքան մեծ է եղել, որ արաբական պատմիչ Տաբարին այն ուղղակի անվանում է «Կարբեասի քաղաքը»[2]:

Տևրիկը դարձնելով իր գլխավոր ու հիմնական կենտրոնը՝ Կարբեասն ստեղծեց ուժեղ ու կազմակերպված բանակ և այստեղից սկսեց կանոնավոր արշավանքներ բյուզանդական սահմանի ամբողջ երկայնքով: Բյուզանդիայի դեմ առաջին լուրջ գործողությունները Կարբեասը ձեռնարկեց 855 թվականին[3]: Այդ ժամանակ պավլիկյան ղորագնդերին միացան նաև Տարսոնի և Հայաստանի սահմանագլխային քաղաքների արաբական կառավարիչ Ալի իբն-Յահյա ալ-

[1] „Его же святейшего Фотия Повествование“, стр. 195.

[2] *Տե՛ս Muralt*, էջ 734:

[3] „Полезная история Петра Сицилийского“, стр. 149, *Petri Sicuali*, p. 53.

[1] „Полезная история Петра Сицилийского“, стр. 149, *Petri Sicuali*, p. 54:

[2] *A. Васильев*, Политические отношения Византии и арабов, стр. 184 ծանոթ. 3:

[3] Ն. Ադոնցը սխալվում է՝ այս դեպքերը վերագրելով 856 թվականին, երբ, իբր, Կարբեասը գերի է վերցրել բյուզանդական հարյուր բարձրաստիճան զինվորականներ, որոնց թվում նաև Աբեսալոմ (Աբիսողոմ) Զոնգոթուբասին և Թիոն Պալատինոսին: Մինչդեռ, ինչպես կտեսնենք քիչ հետո, Կարբեասի հետ կապված այդ գործողությունները վերաբերում են 859 թվականի Սամոսատի ճակատամարտին (Ն. Ադոնց, Վարդ Մամիկոնյան, տե՛ս նրա «Պատմական ուսումնասիրություններ», էջ 325):

Արմանին իր զորքերով[1]։ Հայ-արաբական այս միացյալ արշավանքի մասին հիշատակում է նաև Իբն-ալ-Ասիրը[2]։

855 թվականի հայ-արաբական զորքերի արշավանքների հետագա մանրամասնությունները մեզ հայտնի չեն։ Սկզբնաղբյուրները տեղեկացնում են, որ Բյուզանդիան միայն 856 թվականին հնարավորություն ունեցավ հակառակ գործողություններ ձեռնարկել։ Այդ ժամանակ բյուզանդացիների արշավանքը գլխավորում էր Պետրոնաս Մամիկոնյանը։ Այս անգամ, ինչպես երևում է, թշնամու զորքերը թվով գերազանցում էին հայ-արաբական ուժերին, որովհետև վերջիններս հարկադրված անընդհատ նահանջում էին, իսկ բյուզանդացիները խորանում էին նրանց տերիտորիան։ Օգտագործելով իրենց նախաձեռնությունը, արդեն 857 թվականի գարնանը բյուզանդական բանակները գրեթե անարգել կերպով ներխուժեցին նաև Սամոսատի ու Ամիդի շրջանները, իսկ այնուհետև շարժվեցին Տևրիկի ուղղությամբ։ Եվ այն ժամանակ, երբ բյուզանդացիները Տևրիկի մոտից ձեռնունայն էին քաշվում, պավլիկյան և արաբական զորաբանակներն սկսեցին հետապնդել նրանց։ Սակայն, ինչպես երևում է Տաբարիի վկայությունից, դաշնակիցները չեն կարողանում հասնել թշնամուն։ Արաբ հեղինակի մոտ հիշյալ դեպքերի մասին կարդում ենք հետևյալը. «Այդ թվականին հույները մտան Սամոսատի շրջանը, Ալի Իբն-Յահյա ալ-Արմանիի ամառային արշավանքից վերադառնալուց հետո և մոտեցան Ամիդին։ Հետո նրանք հեռացան Միջագետքի սահմանից, կողոպտեցին մեծ քանակությամբ գյուղեր և գերի վերցրին մոտ տասը հազար մարդ և նրանք մտան Տևրիկի շրջանը, Կարբեասի քաղաքը, ապա վերադառնալով՝ ուղղվեցին դեպի իրենց շրջանը։ Եվ հարձակվեց Կարբեասը, Օմար Իբն-Աբդըլա ալ-Ակտան, և կամավորների ամբոխը՝ նրանց ետևից, բայց նրանցից ոչ մեկին չհասան»[1]։ Ինչպես միշտ, այս անգամ նույնպես, բյուզանդացիների արևելյան արշավանքը կրում էր ավազակային բնույթ, որի նպատակն էր կողոպտել Հյուսիսային Միջագետքի և Փոքր Հայքի շրջանները, գերեվարել ու ահաբեկել ազգաբնակչությանը։

Նախորդ հաջողություններից խրախուսված, 859 թվականին Միքայել III-ը ձեռնարկեց մի նոր արշավանք։ Այս անգամ նա վարվեց ավելի ուխտադրուժ և ավելի նենգամիտ ձևով։ Բյուզանդական բանակների այս նոր արշավանքը, որն անձամբ գլխավորում էր ինքը՝ կայսրը, սկսվեց այն պահին, երբ երկու կողմերի միջև տեղի էին ունենում խաղաղ բանակցություններ գերիների փոխանակման համար։ Այս արշավանքի ժամանակ բյուզանդական բանակները նորից ընտրեցին 856—857 թվականների արշավանքի ուղղությունը և գրեթե առանց նշանակալի դիմադրության հասան մինչև Սամոսատ ու պաշարեցին քաղաքը։ Այս հաջողություններից արբեցած՝ գոռոզամիտ բյուզանդացիներն այլևս հաշվի չէին առնում հակառակորդի գոյությունը։ Նրանք նույնիսկ անտեսում էին պատերազմական ժամանակներում անհրաժեշտ նախազգուշական միջոցները, որից հաջողությամբ կարողացան օգտվել պավլիկյաններն ու արաբները։ Պաշարումից ընդամենը երեք օր հետո, երբ բյուզանդական զորքերն իրենց կատարյալ ապահով զգալով, տարվել էին կերուխումով, քաղաքում պաշարված պավլիկյան ու արաբական զորախմբերը, հանկարծակի բաց անելով պարիսպների դռները, անակնկալ հարձակում գործեցին թշնամու վրա։ Այս հարձակումն այնքան անսպասելի ու այնքան սրընթաց էր, որ հույները չկարողացան այլևս ուշքի գալ և խուճապի մատնված՝ սկսեցին փախչել։

Սամոսատի ճակատամարտում ծանր կորուստներ կրելուց հետո հույները փախան մինչև սահմանագլուխ։ Թշնամին քաղաքի պատերի տակ թողեց մեծ թվով սպանվածներ, գերիներ, վիրավորներ ու պատերազմական ավար։ Իսկ կայսր Միքայել III-ը միայն դիպվածով փրկվեց գերի ընկնելուց։ Սամոսատի ճակատամարտում միայն Կարբեասի զորաբանակը հակառակորդից գերի էր վերցրել հարյուրի չափ տրիբուններ՝ բարձրաստիճան զինվորականներ։

Դրանից մեկ տարի հետո, երկու կողմերի միջև կայացած հաշտության համաձայն, պատերազմական գործողություններն ուժա-

[1] *Տե՛ս* Յակուբի, «Բազմավեպ» 1958, № 3—5, էջ 103։ Ալի Իբն-Յահյա Աբուլ Հասան ալ-Արմանին ծագումով եգիպտահայ է։ Նա երկու անգամ (841 և 849—850 թվականներին) վարել է Եգիպտոսի էմիրի պաշտոնը։ Արաբական պատմիչ Ջամալ-էդ-դին Թաղրիբիրդին նրա մասին գրում է. «Ալի Իբն-Յահյան կարճ, քաշասիրտ, առատաձեռնությամբ ներբողված, պատերազմի և ճակատամարտերի համար, տրնօրինող, վարչագետ և կառավարչության պաշտոնի մեջ բարի վարք ունեցող էմիր էր։ Նա հայ էր ծագումով» (*տե՛ս* Գ. Մսերլյան, Ականավոր հայեր եգիպտոսի մեջ, Կահիրե, 1947, էջ 18)։ Տաբարիի վկայությամբ Ալի Իբն-Յահյա ալ-Արմանին 862—863 թվականներին նշանակվել է Արմենիայի և Ատրպատականի կառավարիչ (*տե՛ս* Տաբարի, «Հանդես ամսօրյա», 1906, № 6, էջ 277)։ Նույնը հաստատում է նաև Յակուբին, միայն նրա նշանակման տարեթվերը վերագրելով 863—864 թվականներին (*տե՛ս* П. К. Жузе, Азербайджан под властью арабов (7—11 вв.), Институт истории и философии Азерб. ССР, фонд № 763, էջ 2, Յակուբի, «Բազմավեպ», 1958, № 3—5, էջ 103։

[2] *Տե՛ս* Յակուբի, «Բազմավեպ», № 3—5, էջ 103։



[1] *А. Васильев*, Политические отношения Византии и арабов, стр. 54—55։

մանակ դադարեցվեցին և կատարվեց գերիների փոխանակություն։ Սակայն այս հաշտությունը ևս կրում էր ձևական բնույթ, որովհետև բանակցությունները դեռ վերջնականապես չէին ավարտվել, երբ կռիվները նորից սկսվեցին։

Իր խայտառակ պարտության վրեժը լուծելու համար Միքայել III-ը, ամբողջ մեկ տարի ուժեղ նախապատրաստվելուց հետո, 860 թվականին արշավանքի դուրս եկավ դեպի արևելք։ Նրա զորքերի թիվը հասնում էր 40 000 մարդու։ Բյուզանդացիների դեմ այս անգամ նույնպես պավլիկյաններն ու արաբները հանդես եկան միասնաբար։ Բյուզանդացիները, հաշվի առնելով նախորդ պարտությյան դասերը, փոխել էին իրենց հարձակման ուղղությունը։ Նրանք արևելք էին շարժվում Փոքր Հայքի հյուսիս-արևմտյան ուղղությամբ։ Բյուզանդական զորքերին առաջնորդում էր կայսրն անձամբ, սակայն փաստական զեկավարը Վարդ Մամիկոնյանն էր։ Հասնելով Դալիմոնի մոտ (այժմ՝ Թոկատ), բյուզանդացիները դիրքեր են գրավում Կելլարիոն կոչվող դաշտում, որտեղով պետք է անցնեին իրենց հակառակորդները։ Արաբական և պավլիկյան զորքերը, տեսնելով այդ, ամրացված կանգ են առնում։ Օմար իբն-Աբդուլա ալ-Ակտան իր զորքերը տեղավորում է Ամասիայից հարավ՝ Զելա քաղաքի մոտ, Խոնարիոն վայրում։ Եվ հենց Կելլարիոնի ու Խոնարիոնի շրջանում էլ տեղի է ունենում առաջին ճակատամարտը, որի ժամանակ, պավլիկյանների ու արաբների ճնշման տակ, բյուզանդացիները հարկադրված իրենց դիրքերը լքում և վեց մղոն ետ քաշվելով, հաստատվում են Անզես կամ Անզեն բլուրի շրջանում, որտեղ օդն ավելի զով էր։ Արաբներն ու պավլիկյաններն, օգտվելով իրենց սկզբնական հաջողությունից և չթուլացնելով ճնշումը, հետապնդելով թշնամուն, բոլոր կողմերից շրջապատում են նրա զորքերի դասավորության վայրը։ Այս դեպքերը տեղի էին ունենում ամռանը, շոգ եղանակին։ Հույների վիճակը շրջապատված դրության մեջ շատ ծանր էր։ Սակայն լավ չէր նաև արաբների ու պավլիկյանների վիճակը, որովհետև դաշտավայրում շատ շոգ էր և հետո նրանք շուտով սկսեցին նաև պարենի պակասություն զգալ։ Իվերջո պավլիկյան-արաբական զորաբանակները, այլևս չդիմանալով՝ վերացնում են թշնամու ճամբարի պաշարումը և Անզեսից հեռանում են դեպի Դորա մարգագետինը[1], որն ամենայն հավանականությամբ հեռու չպետք է գտնվեր նրանց սկզբնական տեղադրավայրից։

Այս կռիվները, որոնք սկսվել էին 860 թվականի մարտի 28-ից, շարունակվեցին մինչև 861 թվականի մարտի 16-ը։ Օմար իբն-Աբ-

[1] Տե՛ս Ն. Ադոնց, Վարդ Մամիկոնյան, էջ 321 և այլն։



դուլա ալ-Ակտայից բացի կռիվներին մասնակցում էին նաև Կարբեասն ու Ալի իբն-Յահյա ալ-Արմանին իրենց զորաբանակներով։ Բյուզանդիայի դեմ 860—861 թվականների մեկ տարի տևած պատերազմները նշանավորվեցին պավլիկյանների ու արաբների փայլուն հաղթանակներով։ Այդ կռիվների ընթացքում Օմար իբն-Աբդուլա ալ-Ակտան վերցրեց 7 000, իսկ Կարբեասը 5 000 գերի։ Դրանց նույնքան գերիներ ու 10 000 դրաստ էլ բաժին էր ընկել Ալի իբն-Յահյա ալ-Արմանիին։ Այդ ժամանակ բյուզանդացիներին ծանր կորուստներ պատճառեցին նաև հայ-պավլիկյան և արաբական միասպատակող զինված խմբերը, որոնք սփռվել էին ամբողջ սահմանի երկայնքով և ահ ու սարսափ էին տարածում հակառակորդի վրա։

Բյուզանդացիներին ջախջախելուց և իրենց սահմաններից հեռու քշելուց հետո պավլիկյաններն ու արաբները մեծ ոգևորությամբ մեկ տարի անընդհատ նախապատրաստվում էին հակահարձակման անցնելու և թշնամուն իր տերիտորիայում վերջնական պարտության մատնելու համար։ 863 թվականի ամռանը միացյալ բանակները, որոնց կազմում հաշվվում էր 40 000 մարդ, Կարբեասի և Օմար իբն-Աբդուլա ալ-Ակտայի գլխավորությամբ հարձակման անցան Սև ծովի ուղղությամբ և, ինչպես վկայում են Թեոֆանն ու Գենեսիոսը, շուտով հասան մինչև ծովափնյա Ամիսոս քաղաքը, որը մտնում էր Արմենիակ թեմի մեջ։ Դաշնակիցներն Ամիսոսն անմիջապես գրավեցին։ Սակայն շուտով բյուզանդացիները նույնպես համախմբելով իրենց ուժերը, ընդառաջ ելան հակառակորդին։ Արաբներն ու պավլիկյանները, որոնք շատ էին հեռացել իրենց թիկունքից, նպատակահարմար գտան թողնել Ամիսոսն ու ետ քաշվել։ Քաղաքը թողնելով՝ նրանք հեռացան դեպի Պաֆլագոնիայի ու Արմենիակ թեմի սահմանագլուխը և դիրքեր գրավեցին Պոսոն կամ Պոսոնտա վայրում[1]։ Բյուզանդացիները նույնպես, առաջ շարժվելով, համապատասխան դիրքեր գրավեցին պավլիկյաններից ու արաբներից ոչ հեռու։ Երկու հակառակորդներին իրարից բաժանում էր մի բլուր միայն, որի դիրքը չափազանց կարևոր էր երկու կողմերի համար էլ։ Այդ բլուրը գիշերով գրավվեց բյուզանդացիների կողմից։ Բյուզանդացիները, որոնց առաջնորդում էր Պետրոնաս Մամիկոնյանը, երեք կողմից արդեն շրջապատել էին դաշնակիցներին։ Վերջիններիս դեմ հյուսիսից դիրքեր էին գրավել արմենական[2], բուկելարյան, կոլո-

[1] Պոսոնը գտնվում էր Ալիս գետի ավազանում, նրա ձախ ափին (տե՛ս Ն. Ադոնց, Վարդ Մամիկոնյան, էջ 323—324)։

[2] Արմենիակ թեմը մոտավորապես ընդգրկում էր Կեսարիայի շրջանը։ Նրա մեջ մտնում էին Տրապիզոն, Ամասիա և Կեսարիա գլխավոր քաղաքները (տե՛ս Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ Կեսարիո, հ. Ա, էջ 357)։

նիական և պաֆլագոնիական գնդերը, հարավից կանգնած էին Օփսիկյան և Կապադովկիական թեմերի զորավարները և Սելևկիայի ու Խարսիանայի[1] կլեսուրարխները, արևմտյան դիրքերը պահում էր անձամբ ինքը՝ Պետրոնասը, Բրակեսյան և մակեդոնական զորքերով, որոնք կազմում էին կայսերական չորս գնդերը: Չորրորդ կողմից շրջանցում էր Ալիս գետը: Շրջապատման հիշյալ մանրամասնությունները, որոնք պահպանվել են սկզբնաղբյուրներում, ցույց են տալիս, որ բյուզանդացիների զորքերի թիվը գերազանցում էր պավլիկյան և արաբական բանակին: Այլապես Պետրոնասը չէր կարող շրջապատման իր ծրագիրը քիչ թվով ուժերով իրականացնել: Դրա համար էլ ամբողջապես սխալ պետք է համարել Ն. Ադոնցի այն միտքը, որ, իբր, Պետրոնաս Մամիկոնյանը ծրագրել էր սակավաթիվ և ընտիր ուժերով ջախջախել հակառակորդին[2]: Մանավանդ այն ժամանակվա պայմաններում փոքրաթիվ ուժերով մեծ բանակի շրջապատումը գրեթե անհնար էր գործնականում կենսագործել: Թե ինչ պատրաստություններ և ռազմական ինչպիսի ծրագրեր կամ զորքերի դասավորություն ունեին պավլիկյաններն ու արաբները, մեզ ոչինչ հայտնի չէ: Սակայն, ինչպես երևում է, ճակատամարտը վարելու տակտիկական առավելությունները պատկանում էին բյուզանդացիներին և հաղթանակի ակնկալությունները՝ նույնպես նրանց: Ահա այսպիսի պայմաններում էր, որ 863 թվականի սեպտեմբերի 3-ին տեղի ունեցավ Պոսոնի ճակատամարտը, որտեղ և հաղթեցին բյուզանդացիները: Պոսոնի ճակատամարտում պավլիկյաններն ու արաբներն ունեցան կենդանի ուժի մեծ կորուստներ և հնարավորություն տվեցին թշնամուն շարունակելու հարձակումը դեպի երկրի խորքերը: Այս ճակատամարտում զոհվեց նաև Օմար իբն-Աբդուլա ալ-Ակտան: Նրա զոհվելու մասին Յակուբին ուղղակի գրում է. «Ալ-Մուտադին 249-ին (863) ճաֆար դերձակը ղրկեց ամառնային արշավանքին համար: Հետը կար Օմար իբն-Աբդուլա Ալ-Ագթա՝ Մալաթիո կուսակալը: Երբ հույներու երկիրը մտավ, Օմար իրմեն հրաման խնդրեց որ մտնե: Հետը կային ութ հազար զինվոր. թշնամիները զինքը շրջապատեցին ու ձերբակալեցին իր զինվորներուն հետ 249-ին բաճապ ամսույն»[3]:

Այս հաղթանակից մեկ ու կես ամիս հետո բյուզանդական զորքերին մենք հանդիպում ենք արդեն Նփրկերտի շրջանում: Եվ այն

1 Խարսիանան գտնվում էր Կեսարիայի հյուսիսային մասում, Արմենիակ թեմի հարավ-արևմուտքում (տե՛ս Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ կեսարիո, հ. Ա, էջ 306):

2 Տե՛ս Ն. Ադոնց, Վարդ Մամիկոնյան, էջ 330, 333:

3 Յակուբի, «Բազմավեպ», 1958, № 3—5, էջ 103:



ժամանակ, երբ բյուզանդացիներն ահագին տերիտորիաներ գրավելուց հետո մոտենում էին Նփրկերտ քաղաքին, արաբները, համախմբվելով Արմենիայի ոստիկան նշանակված Ալի իբն-Յահյա ալ-Արմանիի շուրջը, խնդրում են նրան պատերազմել թշնամու դեմ: Կատարելով նրանց ցանկությունը, ոստիկանը իր փոքրաթիվ զորքերով հարձակման է անցնում բյուզանդացիների դեմ և դիմադրում նրանց մինչև նոյեմբեր ամիսը: Սակայն կռիվներից մեկում, անհավասար պայքարում, Ալի իբն-Յահյա ալ-Արմանին պարտվում և ինքն էլ սպանվում է: Ավելորդ չենք համարում մեջ բերելու Յակուբիի համապատասխան հիշատակությունները վերոհիշյալ դեպքերի մասին. «...Ալ-Մուտադին անոր (Հայաստանի) վրա կառավարիչ կարգեց Ալի Իպն Յահյա Ալ-Արմանի՝ նույն տարիին մեջ (863): Ալի գնաց Նփրկերտ և հույները հարձակեցան, տիրելով Իսլամներու երկրին կեսին: Այն ատեն (Իսլամներու) երկրին բնակիչները ժողովեցան Ալի Իպն Յահյա ալ-Արմանիի շուրջը, անոր խոսեցան և խնդրեցին իրմե, որ պատերազմի ելլե Հույներուն դեմ: Ելավ անոնց հետ, ճակատեցավ հույն բանակին դեմ, պատերազմը սաստկացավ ու Ալի սպանվեցավ: Հույներն առին անոր մարմինը իբր հաղթության նշան, որովհետև շատ նեղած էր զիրենք»[1]: Տաբարին, որ նույնպես այս դեպքերի նկատմամբ անտարբեր չէ, Յակուբիի ասածներին ավելացնում է միայն Ալի իբն-Յահյա ալ-Արմանիի զոհվելու ամիսը, այն է՝ **ռամադանը, որը համապատասխանում է** ներկա տոմարի հոկտեմբերին[2]:

Քանի որ Պոսոնի (կամ Գուրինի)[3] ճակատամարտին ակտիվորեն մասնակցում էին նաև պավլիկյանները, ուրեմն ավելի հավանական պետք է լինի այն ենթադրությունը, որ Օմար իբն-Աբդուլա ալ-Ակտայի և մյուսների հետ այդտեղ զոհվել է նաև Կարբեասը, մանավանդ որ Մասուդին նրա մահը վերագրում է 863 թվականին[4], իսկ Պետրոս Սիցիլացին լրացնում է, ասելով, թե Կարբեասի մահը հանկարծահաս, անակնկալ էր[5]:

Այսպիսով, թեև Միքայել III-ին հաջողվեց երկարատև պայքարից ու մեծ զոհողություններից հետո հաղթանակի հասնել, սակայն պավլիկյան շարժումը նա չկարողացավ ընդհանրապես ճնշել: Դրան

1 Յակուբի, «Բազմավեպ», 1958, № 3—5, էջ 103:

2 Տե՛ս Տաբարի, «Հանդես ամսօրյա», 1906, № 9, էջ 277:

3 Գուրինը կարող է ներկայիս Գյուրունը լինել, Մալաթիայից (Մելիտինե) արևմուտք:

4 Տե՛ս A. Васильев, Политические отношения..., էջ 202, ծանոթ. 1:

5 Տե՛ս Petri Siculi, էջ 54:

հասնելու համար Բյուզանդական կայսրությունը պետք է դեռ մեկ ուսնամյակ էլ պայքարեր։

Կարբեասի «Մահվանից անմիջապես հետո... իշխանությունը նրա կործանարար ժողովրդի վրա ժառանգում է նրա ազգականն ու փեսան՝ Խրիսոխիրը»[1]։ Խրիսոխիրը նույնպես, ինչպես Կարբեասը, ստանձնել էր պավլիկյանների դաղափարական և ռազմական առաջնորդի պարտականությունները։ Նրա օրոք, ինչպես հաստատում է Պետրոս Սիցիլացին, դեռևս ապրում էին Սերգիյ-Տիխիկի աշակերտներից Բարսեղն ու Զոսիմը, որոնք այժմ նույնպես կարևոր դեր էին կատարում որպես պավլիկյանների համայնքի նշանավոր սինեկդեմներ։

Խրիսոխիրի ժամանակ, չնայած Բյուզանդիայի կողմից շարունակաբար մեծացող ճնշմանը, պավլիկյան շարժումն սկսել էր ավելի ծավալվել ու հզորանալ։ Խրիսոխիրի ղեկավարության ընթացքում այդ շարժումը մեկ ուսնամյակ շարունակ ապրեց իր վերելքի շրջանը և, հասնելով զարգացման ամենաբարձր աստիճանին, իվերջո տեղի տվեց և ապրեց իր անկումը։

Խրիսոխիրը, Կարբեասի օրինակով, իր կանոնավոր բանակներով ոչ միայն դիմադրում էր Բշնամուն, այլև օգտագործելով նպաստավոր հանգամանքները, խիզախ հարձակումներ էր գործում նրա սահմանամերձ ու հեռավոր շրջանների վրա, ահաբեկում ու լուրջ վնասներ պատճառում բոլորին։ Թե որքան մեծ էին Խրիսոխիրի պատճառած աղետները Բյուզանդիայի համար, այդ երևում է նաև Թեոֆանի Պատմության շարունակողի հետևյալ տողերից. «Այդ ժամանակ,—գրում է նա,—Տևրիկի կառավարիչը, որին անվանում են Խրիսոխիր, քաջությամբ և ընդունակությամբ գերազանցելով մյուսներին, դաժանությամբ ոչնչացրել էր ռոմեական տերիտորիան ու բնակչությանը, յուրաքանչյուր հարձակման ժամանակ գերի տանելով շատ գյուղացիների»[2]։

Պավլիկյանների նոր առաջնորդի գործունեության շրջանը համընկնում էր Բյուզանդիայում Մակեդոնական-հայկական դինաստիայի հիմնադիր Բարսեղ I-ի (867—886) ժամանակներին, որը, ինչպես նշում է բյուզանդագետ Մ. Վ. Լևչենկոն, «Իր գործունեությունն սկսեց պավլիկյանների հեղափոխական աղանդի դեմ համառորեն պայքարելով»[3]։

Բարսեղ I-ի գահակալության շրջանում պավլիկյանների դրությունը ծանրացավ նաև այն պատճառով, որ բյուզանդացիները, ընկճելով արաբների հզորությունը կայսրության արևելյան սահմաններում և ներխուժելով Միջագետք, փաստորեն պավլիկյաններին անջատեցին իրենց դաշնակիցներից և թողեցին միայնակ։ Սակայն, այսուհանդերձ, մի երկար ժամանակ բյուզանդացիներին չհաջողվեց պավլիկյանների նկատմամբ անմիջապես հաղթանակի հասնել։ Նրանք այդ բանին հասնելու համար դեռ շատ ջանքեր պետք է գործադրեին։

Անձամբ Բարսեղ I-ի պավլիկյանների դեմ ձեռնարկած առաջին արշավանքները վերջացան նրա խայտառակ պարտությամբ։ Կայսրը նույնիսկ մի քանի անգամ հազիվ կարողացավ փրկվել գերի ընկնելուց։ Բյուզանդական կայսեր անհաջողություններն այնքան ակներև էին, որ դրանց մասին վկայում են նույնիսկ բյուզանդական հեղինակները։ Սկզբնաղբյուրները հաստատում են, որ Խրիսոխիրը, Տևրիկն ամրացնելուց հետո, ռազմագիտական նպատակներով ըստ երևույթին, կրկին է նահանջել և թշնամուն քաշել երկրի խորքերը, իսկ Բարսեղը, ոգևորված, կողոպտելով և ավերելով իր ճանապարհի վրա ընկած բնակավայրերը, անարգել կերպով շարունակում էր առաջ գնալ։ Բյուզանդական զորքերը, հասնելով Տևրիկ, շրջապատում են այն, սակայն չեն կարողանում գրավել և պաշարումը վերացնելով՝ բավարարվում են միայն Տևրիկի մոտի Ավարա և Սպաթե ամրոցներն ավերելով։ Դրանից հետո, բյուզանդական զորքերը հարուստ ավարով ու գերիներով են են գնում։ Թեոֆանի Պատմության շարունակողը այսպես է նկարագրում Բարսեղի արշավանքները դեպի Հայաստան. «Եվ քանի որ նա (Խրիսոխիրը) նահանջում էր և հոգ էր տանում միայն այն մասին, որ պահի և ամրացնի քաղաքը (Տևրիկը), (կայսրը) հարձակվում էր առանց որևէ արգելքի, վերցնելով ավարը (կողոպուտը), ավերելով, ծառերը կտրատելով։ Նա կրակի տվեց Խրիսոխիրի ամբողջ տիրապետությունը՝ քաղաքներն ու գյուղերը, իր հետ տանելով հսկայական ավար և բազմաթիվ գերիներ։ Նա մոտեցավ ընդհուպ Տևրիկ քաղաքին և աշխատեց վերցնել գրոհով և ոչ թե երկարատև պաշարումով, սակայն տեսնելով պարիսպների ամրությունը, բարբարոսների շատությունը, մթերքների առատությունը, տեղանքի անմատչելիությունը և առանձնապես այն հանգամանքը, որ ողջ շրջանն ամենակարճ ժամանակամիջոցում մեծաքանակ զորքերի կողմից ավերվել ու ամայացվել էր, իսկ ուտեստի պաշարները համարյա ծախսվել էին, նա հրաժարվեց երկարատև պաշարումից, բայց միանգամայն ավերելով մոտակայքում եղած Ավարա, Սպաթե և մի քանի այլ ամրություններ, նա այնտեղից

[1] „Полезная история Петра Сицилийского", стр. 149, *P. Siculi*, p. 54.
[2] „Продолжатель Феофана", стр. 141.
[3] *М. Левченко*, История Византии, краткий очерк, М., 1940 стр. 138.

զորքերն անվտանգ դուրս տարավ և վերադարձավ մեծ ավարով ու գերիներով»[1]: Կայսրն իր այս արշավանքից այնքան դժգոհ էր, որ հասնելով մայրաքաղաք, «Եվ մտնելով սրբապան ու աստվածային տաճարը, նա մշտապես և ամենօրյա աղոթքով դիմում էր տիրոջը..., որպեսզի ինքը վաղաժամ չթողնի այս աշխարհը, քանի չի տեսել Խրիսոխիրի կործանումն ու նրա պիղծ գլխի մեջ չի ցցել երեք նիզակ...»[2]: Կրկնելով Թեոֆանի շարունակողին, Գենեսիոսը ավելացնում է միայն այն, որ բյուզանդացիներն իրենց նահանջի ճանապարհին անխնա կերպով ավերում էին բնակավայրերն ու կողոպտում խաղաղ բնակչությանը[3]: Բարսեղ I-ի այս ավերիչ արշավանքի մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում նաև Զոնարան, որը մեջ ենք բերում ստորև. «Բարսեղ կայսրը արշավանք սկսեց հագարացիների դեմ, որոնք ապրում էին արևելյան պրովինցիաներում և մանիքեցիների դեմ, որոնց գլուխ կանգնել էր Խրիսոխիր կոչվածը: Եվ գրավելով մի քանի ամրոցներ ու ավար վերցնելով, նա ձեռնարկեց նաև Տևրիկի՝ նրանց մայրաքաղաքի պաշարմանը, բայց հասկանալով, որ այդ քաղաքը պահանջում է տևական պաշարում և ընդհանրապես անմատչելի է, նա, վերացնելով պաշարումը, այնտեղից հեռացավ: Եփրատը հորդացած տեսնելով, նավերի օգնությամբ կամուրջ դցելով, անցավ գետը և կողոպտեց այնտեղ եղած շատ (վայրեր): Գրավելով ուրիշ բերդեր, բարբարոսներից ոմանց հետ հաշտության պայմանագիր կնքեց, իր կողմն անցածներին ընդունեց: Վերադառնալով Կոնստանդնուպոլիս, քաղաքի միջով շքերթ կատարեց և մտավ արքունիք»[4]:

Բյուզանդացիների հիշյալ արշավանքները ամենայն հավանականությամբ տեղի պետք է ունեցած լինեին 869 թվականի վերջերին կամ 870 թվականի սկզբներին, այսինքն այն ժամանակ, երբ Տևրիկում գերիների փոխանակության համար երկու կողմերի միջև իններ ամիս տևող բանակցությունները դեռևս չէին ավարտվել: Բանակցությունների համար կայացված դինադադարը խախտողները հավանաբար բյուզանդացիներն էին: Եվ գուցե պավլիկյանների կրած սկզբնական անհաջողությունների պատճառը հենց Թշնամու անակնկալ և ուխտադրուժ հարձակումն էր:

Միայն բյուզանդական զորքերի նահանջելուց հետո Խրիսոխիրը կարողացավ կրկին վերախմբավորել իր զորքերն ու անցնել հարձակման: Խրիսոխիրը, որն ինչպես երևում է, մեծ խնամքով էր

[1] „Продолжатель Феофана...", стр. 141.
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս Genesius, Bonnae, 1834, էջ 120—121:
[4] Zonarae, v. IV, p. 25:



նախապատրաստվել պատերազմին, կարողանում է Թշնամու ետևից կրնկակոխ ներխուժել նրա տերիտորիան ու կարճ ժամանակում հասնել հաջողությունների: Նա իր արշավանքի ընթացքում գրավեց ահագին տերիտորիաներ ու հասավ մինչև Նիկիա ու Նիկոմեդիա քաղաքները: Իսկ Եփեսոսը գրավելուց հետո, նա Թշնամու օրինակով կողոպտեց ու ավերեց այն, իսկ ս. Հովհաննեսի հայտնի եկեղեցին ախոռի վերածեց:

Խոսելով Կարբեասի, Խրիսոխիրի և պավլիկյան մեկ այլ գործչի՝ Կալիստի մասին, Գենեսիոսը գրում է, որ հատկապես Խրիսոխիրը, «Անցնելով Նիկիայի և Նիկոմեդիայի միջով, Թրակեսիոն Թեմի վրայով հասավ մինչև Հովհան աստվածաբանի շրջանը և նրա հետ եղած մարդիկ վերջինիս տաճարը մոտրին իրենց ձիերը և մնացած իրերը, վատաբար հայհոյելով»[1]:

Այդ արշավանքներին ակտիվորեն մասնակցում էին նաև արաբները Մուհամեդ իբն-Ալի իբն-Յահյա ալ-Արմանիի գլխավորությամբ, որն ամենայն հավանականությամբ մեզ արդեն ծանոթ Ալի իբն-Յահյա ալ-Արմանիի որդին էր, մանավանդ որ Յակուբին նրան նույնպես հայ է համարում[2]:

Խրիսոխիրի 870 թվականի արշավանքը պավլիկյան շարժման ամբողջ պատմության ընթացքում նախադեպը չունեցող երևույթ էր: Այդ արշավանքի ազդեցությունն ու առաջացրած խուճապն այնքան մեծ էր, որ այն համակել էր նույնիսկ բյուզանդական մայրաքաղաքի բնակիչներին: Իսկ գոռող կայսրն այս դեպքերի ազդեցության տակ շտապում էր հաշտություն կնքել իր հակառակորդի հետ և այդ նպատակով մի հատուկ նամակ է գրում Խրիսոխիրին, որի բովանդակությունը Գենեսիոսը մեկնաբանում է այսպես. «Թագավորը գրում է Խրիսոխիրին՝ առաջարկելով նրան խաղաղություն կնքել և լինել խաղաղասեր ու ողորմած... բավական համարել մղած պայքարը և ստանալ իրենից ոսկի, արծաթ և հագուստներ ու դադարեցնել քրիստոնյաների գերեվարումն ու ջարդը»[3]: Բարսեղ I-ը, ինչպես տեսնում ենք, պավլիկյանների քաջարի առաջնորդին փորձում էր ոսկով ու արծաթով կաշառել: Սակայն Խրիսոխիրը ոչ միայն չի համաձայնվում նրա առաջարկին, այլև նրան է ներկայացնում իր համարձակ պահանջները: Պավլիկյանների առաջնորդը պատասխան նամակի մեջ պահանջում է Բարսեղից, որպեսզի նա հրաժարվի Ա-

[1] Genesius, p. 121:
[2] Տե՛ս Յակուբի, «Բազմավեպ», 1958, № 3—5, էջ 104:
[3] Genesius, p. 121—122:

*գևելքում ունեցած տիրապետություններից և իր ձեռքին պահի միայն արևմտյանը, հակառակ դեպքում ինքը ոչ միայն չի համաձայնվի կայսեր հետ, այլև ուժով կվռնդի նրան Փոքր Ասիայի արևելյան մասերից։ Խրիսոխիրի նամակի մեջ ասված էր այսպես. «Եթե դու, թագավոր, ցանկանում ես մեզ հետ խաղաղություն կնքել, հրաժարվիր քո իշխանությունից Արևելքի վրա և տիրիր Արևմուտքին, այն ժամանակ և մենք քեզ հետ կապրենք խաղաղության մեջ, եթե ոչ, մենք կշտապենք, որպեսզի քեզ իսպառ վտարենք քո թագավորությունից»[1]։ Խրիսոխիրի այս սպառնագին պատասխանը ուղղակի կատաղության է հասցնում Բարսեղին։ Եվ պավլիկյանների առաջնորդի հետ հաշտության բոլոր ուղիները փակված տեսնելով՝ նա իր հերթին սկսում է պատերազմի պատրաստվել։*

*Բարսեղ I-ը, անձամբ իր զորքերի գլուխն անցած, 871 թվականին հարձակման անցավ պավլիկյանների դեմ։ Ճիշտ է այս պատերազմում Խրիսոխիրը գրեթե պարտվեց և, ամրանալով Տևրիկում, սկսեց պաշտպանողական կռիվներ մղել հակառակորդի դեմ, սակայն հույներին ևս չհաջողվեց վերջնական հաղթանակի հասնել։ Բյուզանդացիները Տևրիկը պաշարեցին, սակայն քաղաքում ամրացած պավլիկյան զորապնդերի հերոսական դիմադրությունը և բյուզանդացիների մեջ սկսված համաճարակը հարկադրեցին Բարսեղին թողնելու Տևրիկն ու հեռանալու։ Կայսրը Տևրիկի ճանապարհը նորից բռնեց 872 թվականին։ Այս անգամ նա անցնում էր Եփրատի հովտի հին ռազմուղիով՝ Դորիլայոն-Սեբաստիա ուղղությամբ։ Տևրիկը գրավելու համար Բարսեղի գործադրած բոլոր ջանքերն այս անգամ նույնպես ապարդյուն անցան։ Բյուզանդացիները բավարարվեցին միայն Տևրիկի շրջակայքը կողոպտելով ու ավերելով։ Նրանց ձեռքն ընկան, օրինակ, Արարա, Սպաթե և Կոպատոս ամրոցները, Տարաս (Թարաս) ավանը և Տարանտա քաղաքը[2], որը պավլիկյանների կենտրոնական բնակավայրերից մեկն էր և կոչվում էր նաև Սարացեն։ Դրանից հետո բյուզանդական բանակը շարունակում է իր հարձակումը Մելիտինեի ուղղությամբ։ Ճանապարհին Բարսեղին հպատակություն են ցույց տալիս մի քանի քաղաքներ ու ամրոցներ։ Այդպիսիներից էր, օրինակ, Լոկանա քաղաքը, որտեղ իշխում էր հայազգի*

[1] *Genesius*, p. 122։

[2] Պրոֆ. Ռամզեյի կարծիքով Տարանտան այժմյան Դարանդա-Գալանդա, Դեբինգե բնակավայրն է (տե՛ս *J. G. Anderson*, The campaign of Basil I. against the paulicians in 872 A. D., „The Classical Review", 1896, 3, London, p. 137).



*Քուրդիկը (Հունարեն Կուրտերիոս)*[1]։ *Այդ ժամանակ բյուզանդական զորամասերից մեկը, դուրս գալով Մելիտենե-Սամոսատ ճանապարհը, գրավում է Զապետրա ամրոցը, իսկ հետո նաև՝ Սամոսատը։ Այս բոլորից հետո Բարսեղը, գրոհելով Մելիտինեի վրա, ստիպում է նրա էմիրին փակվել քաղաքի ամրություններում։ Սակայն Մելիտինեն գրավել չկարողանալով՝ կայսրը հետ է քաշում իր զորքերը և ամբողջ ուժերով հարձակվում պավլիկյանների վրա։ Բարսեղի այս բոլոր արշավանքներն ու ասպատակություններն ուղեկցվում էին մասսայական ավերածություններով ու կոտորածներով։ Բյուզանդացիներին հաջողվում է մեկը մյուսի հետևից գրավել Արգաուս (Արգաս, Արկա) բնակավայրը և Ռախաթ, Խախոն*[2], *Ամեր*[3], *Մուրինիքս (Մուրեքս)*[4] *և Աբդելա ամրությունները։ Դրանից հետո բյուզանդական զորքերը չմնացին իրենց գրաված վայրերում, այլ եկած ճանապարհով կրկին ետ դնացին։*

*Հենվելով Բարսեղ I-ի կողմից վերոհիշյալ վայրերի գրավման մասին սկզբնաղբյուրների տեղեկությունների վրա, Անդերսոնը*[5] *ճիշտ կերպով գտնում է, որ պավլիկյանների տիրապետության սահմանները ձգվում էին Տևրիկից մինչև Մելիտինեի մոտ, Մելաս գետը (այժմ՝ Թոխմա-սու)։ Եթե ճիշտ է Հյուբշմանի և Հոնիգմանի կողմից մատնանշված Մուրինիքսի տեղադրությունը, ապա ուրեմն Անդերսոնի ասածին, որպես պավլիկյանների տիրապետության հարավային սահմանագիծ, պետք է ավելացնել նաև Արածանիի ստորին հոսանքի շրջանը, Մելիտինեից դեպի արևելք։*

*872 թվականի արշավանքը նույնպես Բարսեղին չտվեց այն, ինչին տարիներ շարունակ ձգտում էր նա։ Պավլիկյանների տաղանդավոր ղեկավար Խրիսոխիրը շարունակում էր հերոսական դիմադրություն ցույց տալ թշնամու գերակշիռ ուժերին։ Բյուզանդական կայսրին չէին օգնում նաև զոհաբերություններն ու երկնային ոգի-*

[1] *Քուրդիկը 872 թվականին տիրում էր Եփրատի ավազանին պատկանող Թոխմա-սուի վերին մասերին (տե՛ս Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ կեսարիո, հ. Ա, էջ 310, ծան. 1)։ Նրա մասին հիշատակում է նաև Կեդրենոսը։ Է. Հոնիգմանի կարծիքով Քուրդիկի անունը պահպանվել է մուշից հարավ գտնվող Կուրթիկ գյուղի վրա (տե՛ս Ernest Honigmann, էջ 59)։*

[2] *Խախոնը (χαχον) ըստ Է. Հոնիգմանի այժմյան* Chöch (Ušaghy-Höh)-*ն է Խարպուտից հարավ։ Տե՛ս նույն տեղը, էջ 59—60։*

[3] *Ամերը (Ἀμερ) ըստ Է. Հոնիգմանի կալվածք կամ գյուղ էր (Landgut), որը պատկանում էր արաբներին։ Գտնվում էր Եփրատից հարավ, Արածանիի խառնարանի մոտ։ Տե՛ս նույն տեղը, էջ 60։*

[4] *Մուրինիքսը (μουρινιζ) ըստ Հյուբշմանի և Հոնիգմանի այժմյան Մուրենիքն է կամ Մորենիքը Խարպուտի մոտ։ Տե՛ս նույն տեղը։*

[5] *Տե՛ս J. Anderson*, էջ 137։

ներին ուղղած աղերսանքները։ Բյուզանդացիների, մանավանդ վերջին երկու, արշավանքները թեև նախորդների համեմատությամբ ավելի մեծ ու սարսափելի էին, այնուամենայնիվ նրանց քաջարի հակառակորդները չէին ընկճվում ու իրենց զենքերը ցած չէին դնում։ Ամոքելով պատերազմի ժամանակ առացած վերքերը, Խրիսոխերը, 873 թվականին իր զորքերով հարձակման անցնելով, մտավ Փոքր Ասիայի բյուզանդական տիրապետությունների սահմանները։ Պավլիկյաններն իրենց զորագնդերով հասան մինչև Կապադովկիայի խորքերը, իսկ հյուսիսում գրավեցին Անկարա քաղաքը։ Պավլիկյանների զորագնդերը բյուզանդացիների օրինակով ավերում էին գրաված վայրերը, կողոպտում ու գերեվարում ազգաբնակչությանը։ Խրիսոխերի ժամանակ սա պավլիկյանների երկրորդ խոշոր հարձակումն էր Բյուզանդական կայսրության արևելյան պրովինցիաների վրա։

Խրիսոխերի դեմ այս անգամ Բարսեղն ուղարկեց իր գվարդիական զորքերի հրամանատար Քրիստոֆին, որին որոշ ուսումնասիրողներ հայ են համարում[1]։ Բյուզանդական սկզբնաղբյուրները հաստատում են, որ բյուզանդական այս զորաբանակի հիմնական կազմը հայկական էր (Գենեսիոս, Կոնստանդին Միրանածին)։ Բյուզանդացիները, վախենալով պավլիկյանների դեմ բացեիբաց կռվելուց, դիմեցին խորամանկության։ Թեոֆանի Պատմության շարունակողը Քրիստոֆի վախկոտության և անհամարձակության մասին ուղղակի գրում է. «Երբ նշված Խրիսոխերը ներխուժեց հռոմեական սահմանները և ավերեց դրանք, կեսարը, ըստ սովորության, նրա դեմ ուղարկեց սքոլների դոմեստիկին։ Դուրս գալով և հավաքելով ողջ հռոմեական զորքը ու չհամարձակվելով բացեիբաց պատերազմել նրա հետ, նա հետապնդում էր որոշ տարածության վրա և խանգարում նրան երկրով մեկ առանձին ասպատակություններով ու անպատիժ հարձակումներով»[2]։ Խրիսոխերը, ինչպես հետո շարունակում է պատմիչը, որոշ չափով իրագործելով, իսկ որոշ չափով անկատար թողնելով իր մտադրությունները, բռնում է նահանջի ճանապարհը։ Իսկ Քրիստոֆը, գաղտագողի հետապնդելով նրան, սպասում էր հարձակման համար բարեպատեհ առիթի։ Սքոլների դոմեստիկի, Խարսիանայի և Արմենիայի ստրատեգներն իրենց զորախմբերով գնում էին անմիջապես պավլիկյանների հետից և նրանց բոլոր շարժումների մասին տեղեկություններ հաղորդում գլխավոր հրամանատարին։ Խրիսոխերը վերջապես կանգ է առնում Խարսիանա թեմի Ագրանե վայրում, իսկ բյուզանդական զորքերը ճամբարում են Սիբորայում։

Քրիստոֆի բանակում եղած հայկական զորամասերը, որոնց մասին, ինչպես ասացինք, հիշատակում են բյուզանդական հեղինակները, մեր կարծիքով հայ ազնվականության և հոգևոր ֆեոդալների ուժերն էին, որոնք իրենց շահերն ու արտոնությունները պահպանելու համար դաշնակցել էին հայ ժողովրդի հարստահարիչների՝ բյուզանդացիների հետ։ Եվ հայկական այս զորամասերը բավականին մեծ դեր կատարեցին պավլիկյանների դեմ մղված վճռական կռիվներում։ Երկու ձշնամական բանակների կանգ առնելուց հետո, բյուզանդացիներն անմիջապես անցան նախապատրաստական աշխատանքների։ Նրանցից երկու ավանգարդային հետախուզական զորամասեր, բաղկացած 600 հոգուց, իրենց հրամանատարների առաջնորդությամբ գրավեցին Զագոլոեն վայրը և սպասեցին նոր առաջադրանքի։ Նույն գիշերը բյուզանդացիները գաղտագողի սկսեցին մոտենալ Խրիսոխերի զորքերի դասավորությանը և լուսաբացին դուրս եկան պավլիկյանների դեմ հանդիման ու հանկարծակի հարձակվեցին նրանց վրա։ Այդ նույն ժամանակ մյուս զորամասերը, նույնպես մոնելով կովի մեջ, սկսեցին ձիշ ու աղաղակով, թմբուկների ու փողերի նվագակցությամբ հարձակվել բոլոր կողմերից։ Լուսաբացին, երբ սկսվեցին վերոհիշյալ գործողությունները, պավլիկյաններից շատերը դեռևս քնած էին և հարձակման չէին սպասում։ Դրա համար էլ, կռվի համար բոլորովին պատրաստ չլինելով, նրանք չկարողացան նաև որևէ լուրջ գործողության դիմել և, խուճապի մատնվելով, սկսեցին դիմել փախուստի։ Օգտվելով հակառակորդի բանակում առաջացած խառնաշփոթությունից, ձշնամին սկսեց կրկնակի հետապնդել փախչողներին։ Պավլիկյան ցաքուցրիվ զորախմբերը, ընկնելով բյուզանդացիների օղակումների մեջ, հսկայական կորուստներ էին կրում։ Որ իսկապես այդ հարձակումը Խրիսոխերի զորքերի համար խիստ անսպասելի է եղել և պավլիկյանները ոչ թե պարտությունից, այլ խուճապից են սկսել նահանջել, այդ երևում է նաև Թեոֆանի Պատմությունը շարունակողի հետևյալ տողերից. «Բարբարոսներն անսպասելիությունից զարհուրած, հնարավորություն չունենալով ոչ կենարոնանալ, ոչ նկատել, թե ինչ քանակությամբ ձշնամի է իրենց վրա հարձակվում, ոչ կարողանալով ընդհանրապես արագ փրկության որևէ բան մտածել, փախուստի մատնվեցին»[1]։ Այս թոհ ու բոհում անելանելի դրության մեջ ընկավ նաև Խրիսոխերը։ Եվ երբ պավլիկյանների այս փառաբանված առաջ-

[1] Տե՛ս Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ կեսարիո, հ. Ա, էջ 310։

[2] „Продолжатель Феофана“, стр. 141—142.



[1] „Продолжатель Феофана“, стр. 142.

նորդը ուզում էր ձիով ցատկել ինչ-որ փոսի վրայից, Տևրիկի շրջապատի նախկին պետերից մեկը՝ Պուլլադը, որն այդ ժամանակ գրանցվում էր բյուզանդական բանակում, նկատեց նրան ու նիզակով հարվածեց: Խրիսոխերը ծանր վիրավորվեց և գերի ընկավ թշնամու ձեռքը: «Պուլլադը,—կարդում ենք Թեոֆանի Պատմությունը շարունակողի մոտ,—նիզակով հարվածեց նրա կողքին, նա ցավից ուժասպառ, նույն րոպեին վայր ընկավ ձիուց: Այն ժամանակ նրա հետ եղածներից մեկը, որի անունը Դիակոնիցա էր, չատկելով սեփական ձիուց, սկսեց խնամել ընկած տիրոջը և նրա գլուխը դրեց իր ծնկներին ու սգաց իրողությունը»[1]: Այդ դեպքը գրեթե նույնությամբ նկարագրում է նաև Գենեսիոսը, ավելացնելով միայն հիշյալ ճակատամարտի անմիջական վայրի անունը՝ Վաֆիրիակ գյուղը[2]: Սակայն կատաղած թշնամու ձեռքից այլևս ոչինչ չէր կարող փրկել Խրիսոխերին: Վիրավորված քաջի գլուխն անմիջապես կտրում և որպես նվեր ուղարկում են Բարսեղ I-ին, որը ցնծության մեջ այնքան էր կորցրել իր կերպարը, որ վրեժը լուծեց կարած մարդկային գլխից՝ նրա մեջ երեք նիզակ մխրճելով[3]: Բյուզանդական պատմիչն ստիպված խոստովանում է, որ իր հայրենակիցների համար էլ այդ հաղթանակն անսպասելի էր. «Այսպես,—գրում է նա,—հակառակ բոլոր սպասածին՝ հակառակորդները պարտվեցին»[4]: Այս արյունոտ դեպքերը հիշատակող բյուզանդական հեղինակը միաժամանակ խոստովանում է Տևրիկի ծագկած լինելն ու երբեմնի հզորությունը: Նա ասում է. «Այսպիսի վախճան ունեցած Խրիսոխերի գործերը, այդպես կորավ երբեմնի ծաղկած Տևրիկի հզորությունը»[5]:

Վերոհիշյալ դեպքերից և Խրիսոխերի ողբերգական սպանությունից հետո Քրիստոֆը, ոգևորված իր հաջողություններով, հարձակվեց Տևրիկի վրա, որը նույն թվականին տեղի ունեցած սաստիկ երկրաշարժից շատ էր տուժել, պարիսպները վնասվել էին, իսկ բնակիչների մի մասը լքել էր քաղաքը և ապաստանել շրջակայքի անտառներում և լեռներում[6]: Դրա համար էլ բյուզանդացիները մի առանձին դժվարության չհանդիպեցին և հեշտությամբ գրավեցին գրեթե անպաշտպան քաղաքը: Բյուզանդացիները քաղաքը գրավելուց հետո, ավերեցին այն ու սրի քաշեցին այնտեղ կենդանի մնացած բնակչությանը: Դրանից հետո Քրիստոֆի զորքերը կրկին հետ քաշվեցին իրենց տերիտորիան:

[1] „Продолжатель Феофана“, стр. 143.
[2] Տե՛ս *Genesius*, էջ 125:
[3] Տե՛ս „Продолжатель Феофана“, էջ 143, *Genesius*, էջ 125—126:
[4] „Продолжатель Феофана“, стр. 143.
[5] Նույն տեղում:
[6] Տե՛ս Ա. Ալպոյաճյան, *Պատմություն հայ կեսարիո*, հ. Ա, էջ 319:



Բարսեղ I-ը այժմ արդեն կարող էր պարծենալ, որ իր տարիների երազած իղձը կատարվեց: Նա վերջիվերջո կարողացավ պարտության մատնել Թշնամուն և քարուքանդ անել նրա կենտրոնը՝ Տևրիկը: Այժմ այլևս Տևրիկը չկար, չկային նաև պավլիկյանների քաջարի առաջնորդներն ու խիզախ գնդերը: Այդ բոլորի փոխարեն մնացել էին միայն պավլիկյանների բնակավայրերի փլատակները և ցաքուցրիվ մարդկային խմբեր, որոնք Բյուզանդական կայսրության համար այլևս վտանգ ներկայացնել չէին կարող:

Այսպիսով, պավլիկյան շարժումը, IX դարում թևակոխելով իր վերելքի ու հզորության շրջանը, նույն դարի 70-ական թվականներին ճնշվեց: Պավլիկյան շարժումը ճնշվեց ուժերի անհավասար պայմաններում: Պավլիկյանների դեմ միավորվել էին տեղական և օտար ֆեոդալական ուժերը, որոնց գլխավորում էր այդ ժամանակ կրկին հզորացող Բյուզանդական կայսրությունը: Միանգամայն տեղին է Ն. Մառի այն դիտողությունը, թե «Հայկական նկեղեցու հայրերը, չնայած հույների հետ իրենց ունեցած վեճերին, քաղկեդոնի ժողովի պատճառով, միշտ պատրաստ էին համագործակցել նրանց հետ, երբ առիթ էր ներկայանում ճնշելու և իրենց սեփական հայկական հերետիկոսներին»[1]:

Որպես միջնադարի ֆեոդալական շահագործման դեմ ուղղված շահագործվող մասսաների շարժում, պավլիկյան շարժումը նույնպես, վերջիվերջո, դատապարտված էր պարտության, որովհետև պավլիկյանությանը նույնպես հատուկ էր մասնատվածությունը, ուժերի անջատ-անջատ լինելը, ծայրահեղ հետամնացությունն ու հասարակական հարաբերությունների զարգացման օրինաչափությունները չըմբռնելը[2]: Դրա համար էլ պավլիկյանները թեև հերոսաբար պայքարում էին տիրող հասարակարգի դեմ, սակայն նրանք միայն իրենց սեփական ուժերով նոր հասարակարգ ստեղծել չէին կարող: Եվ թեև ավելի քան երեք հարյուրամյակ հայկական հողի վրա մրցվող պավլիկյան շարժումը ճնշվեց, մոխրակույտերի ու փլատակների միջից նրանց կայծերը վերստին առկայծելով, նոր, է՛լ ավելի հուժկու հրդեհներ բորբոքեցին Հայաստանից սկսած մինչև Բալկաններ և դեռ է՛լ ավելի հեռավոր վայրեր:

Թեև պավլիկյան շարժումը, որպես միասնական մի շարժում, IX դարի 70-ական թվականներից սկսած դադարեց գոյություն ու-

[1] *Н. Марр*, Ани, Ереван, 1939, стр. 56—57.
[2] Տե՛ս *К. Маркс* и *Ф. Энгельс*, Немецкая идеология, Соч., т. 4, էջ 42:

նենալուց և նրա քաջարի հետևորդները ոչնչացվեցին կամ զանգվածաբար աքսորվեցին դեպի արևմուտք, սակայն նրա գաղափարները դեռ երկար ժամանակ շարունակում էին գոյություն ունենալ հայ ժողովրդի աշխատավորական մասսաների սրտերում:

Պավլիկյանները հատկապես որոշակի հետքեր են թողել ժողովրդական ասացվածքների ու դարձվածքների մեջ: XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին, օրինակ, Բարձր Հայքից եկած գաղթականներն իրենց չարաճճի երեխաներին փաղաքշական ձևով սատանա Պուլիկ էին անվանում[1], որ անշուշտ ուներ դրական իմաստ՝ խելացի, խորամանկ նշանակությամբ: Հայկական առածների ու ասացվածքների հմուտ մասնագետ, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Ա. Ղանալանյանը «նալլաթ Սլիկին էլ Պլիկին էլ» ասացվածքը գնահատելով որպես եկեղեցու կողմից պավլիկյաններին ուղղված անեծքի բանաձևի մի տեսակ, «երկու հավասարապես վատ ու այպանելի մարդկանց մասին», միաժամանակ նկատում է, որ պավլիկյանների արձագանքը պահպանվել է «Պլիկ» անվան մեջ, որը, «Պուլիկ»-ի ժողովրդական այլաձևակն է, իսկ «Սլիկ»-ն ամենայն հավանականությամբ Սիլվանի արձագանքն է՝ ենթարկված որոշ տառադարձման: Պավլիկյանների հիշատակությունը պահպանվել է նաև մեկ այլ ստեղծագործության մեջ. «Ինչ ուլիկը, ինչ Պուլուլիկը, ինչ սատանեն, ինչ ուր կնիկը»: Այստեղ նույն մակարդակի վրա են դասված քրիստոնեության Քշնամի սատանան իր կնոջ հետ միասին, պավլիկյանների առաջնորդ Պավղոսը և Ուլուլիկը, այսինքն IV դարի հռոմեական կայսր Հուլիանոսը, որը ձգտում էր վերականգնել հեթանոսությունը[2]:

Պավլիկյան սոցիալական շարժման մասին մեր ասածներից կարելի է անել այսպիսի եզրակացություններ.

1. Պավլիկյան շարժումը, որպես ֆեոդալական ճնշման ու շահագործման դեմ ուղղված հուժկու սոցիալական շարժում, նույնպես արտաքինից կրում էր կրոնական կերպարանք և հանդես էր գալիս աղանդավորության անվան տակ: Պավլիկյանությունը, քանի որ ուղղված էր նաև օտարերկրյա զավթիչների դեմ, ուներ նաև ժողովրդա-ազատագրական շարժման բնույթ:

2. Եվրոպայի և Ասիայի համար սոցիալական ընդհանուր պայմանների առկայության շնորհիվ պավլիկյան գաղափարախոսությունը, դուրս գալով Հայաստանից, տարածվեց նաև մոտիկ ու հեռավոր երկրներում: Պավլիկյան գաղափարները Եվրոպայում նախորդեցին գրեթե բոլոր այսպես կոչված աղանդավորական և ռեֆորմիստական շարժումներին:

3. Պավլիկյան շարժման մասին թվական ունեցող առաջին հավաստի հիշատակությունը պահպանվել է Դվինի 554 թվականի եկեղեցական ժողովի որոշումների մեջ, որից երևում է, որ այդ ժամանակ պավլիկյանությունն այնքան հանրահայտ երևույթ էր հայկական իրականության մեջ, որ Հայաստանում հաստատված և հակաեկեղեցական ընթացք ունեցող նեստորականները միանում էին պավլիկյաններին և ընդօրինակում նրանց հաղորդության ծիսակատարության ձևը:

4. Հայտնի և կարևոր բոլոր սկզբնաղբյուրները պավլիկյան շարժման հիմնադիր են համարում ազգությամբ հայ Պավղոսին, որն, ըստ երևույթին, ապրել է V դարի վերջերին և VI սկզբներին:

5. Պավլիկյանների գաղափարախոսության կրոնա-փիլիսոփայական հիմքը նույնպես կազմում էր երկվության սկզբունքը: Սակայն պավլիկյաններն այդ խնդրում հետևողական չէին, այսինքն նրանք չարի ու բարու կամ նյութականի և հոգևկանի պայքարը չէին հանգեցնում հոգու հաղթանակին և նյութականի ժխտմանը, ինչպես վարվում էին երկվությունն ընդունող մյուս բոլոր ուսմունքները: Պավլիկյանները ոչ թե նյութն ու զգայական աշխարհն էին համարում չարության աստծու կամ սատանայի ստեղծագործություն, այլ նյութականի վրա իշխանություն ձեռք բերած չար ուժերին: Դրա համար էլ պավլիկյաններն իրենց գործնական պայքարով ձգտում էին խորտակել, ոչնչացնել այդ ուժերը, հանուն այն բանի, որպեսզի հասարակության բոլոր անդամները կարողանան հավասարապես վայելել նյութական աշխարհի բարիքները:

6. Քրիստոնեական եկեղեցու մեջ գոյություն ունեցող բազմաթիվ ծեսերն ու խորհուրդները, որոնք մեծ մասամբ կապվում էին Քրիստոսի և Մարիամ Աստվածածնի անձնավորությունների հետ, ծառայում էին մասսաների անտիապաշտությունն ու այսպես ասած կրոնական ջերմեռանդությունը բորբոքելու, և, որ ամենակարևորն է, հավատացյալների նյութական միջոցները կորզելու և եկեղեցու ու հոգևոր դասի եկամուտների հավելյալ աղբյուր ստեղծելու համար: Ամբողջապես ժխտելով քրիստոնեական ծեսերն ու խորհուրդները և առաջարկելով պաշտամունքի ավելի պարզ ձևեր, պավլիկյանները ոչ միայն հարվածում էին եկեղեցու և հոգևորականության տնտեսական հիմքերին, այլև դրանով հավատացյալներին ազատում էին նյութական զոհողություններից:

7. Պավլիկյաններն միևնույն ժխտողական վերաբերմունքն ու-

[1] *Տե՛ս* Գ. Տեր-Մկրտչյան, Հայկականք, Վաղարշապատ, 1903, էջ 73:

[2] *Տե՛ս* Ա. Ղանալանյան, Հայկական առածանի, Երևան, 1951, էջ 17:

ներին նաև քրիստոնեական պաշտոնական գրականության մեծ մասի նկատմամբ: Նրանք հերքում էին նաև բոլոր տեսակի սրբերի, սրբավայրերի, վանքերի, եկեղեցիների, ուխտատեղիների և սրբապատկերների պաշտամունքը: Անդրկովկասում և մանավանդ Բյուզանդական կայսրությունում լայն ծավալում ստացած պատկերամարտիկների համեմատությամբ պավլիկյանությունը շատ ավելի արմատական և հեղափոխական բնույթ ուներ, որովհետև եթե առաջինները ձգտում էին եկեղեցական հաստատության և եկեղեցական ունեցվածքի պահպանումով սահմանափակել միայն հոգևոր առաջնորդների իրավունքները, ապա պավլիկյանները դնում էին եկեղեցիները և եկեղեցական դասը ամբողջությամբ ոչնչացնելու պահանջ: Եկեղեցական ստորակարգության ժխտումով պավլիկյանները փաստորեն ժխտում էին նաև ողջ ֆեոդալականը և հասարակության բոլոր անդամների համար առաջարկում հավասարության այնպիսի սկզբունքներ, որոնց կիրառության պայմաններում պիտք է ոչնչացվեին գույքային ու դասային բոլոր արտոնությունները և ոչ ոք նույնիսկ արտաքինով, հագուստներով և ապրելակերպով, մյուսներից չպետք է տարբերվեր: Ֆեոդալիզմի պայմաններում հավասարեցման պավլիկյան այս սկզբունքը վերին աստիճանի առաջադիմական երևույթ էր և այն ամբողջությամբ համապատասխանում էր ճնշվող դասակարգերի շահերին:

8. Պավլիկյանները ոչ միայն մշակել էին իրենց հակաֆեոդալական գաղափարների սկզբունքները, այլև ստեղծել էին նաև որոշակի կազմակերպություն: Այդ կարգի խոշոր վերափոխությունները կատարվեցին հատկապես պավլիկյանների առաջնորդ Սերգիյ-Տիխիկի ժամանակ 801—835 թվականներին: Պավլիկյանների գաղափարները տարածող հատուկ ուսուցիչները՝ սինեկդեմները, ընդունելի գրականությունն արտագրող ու տարածող նոտարները և մասաններին ղեկավարող պայքարի կոչող քարոզիչները՝ աստատները շարքային պավլիկյաններից տարբերվում էին միմիայն անվանապես և գոյություն ունեցող եկեղեցական ու ֆեոդալական ստորակարգության հակապատկերն էին կազմում: Մյուսներից ոչնչով չէին տարբերվում նաև պավլիկյանների գաղափարական առաջնորդներն ու զորահրամանատարները, որոնց պաշտոններն ընտրովի էին:

9. IX դարը պավլիկյան շարժման պատմության մեջ Հայաստանում շրջադարձային ժամանակաշրջան էր, որովհետև այդ ժամանակ պավլիկյանությունը լոկ գաղափարական ուսմունք լինելուց վերածվեց մասսայական զինված ու կանոնավոր ապստամբական շարժման ընդդեմ տեղական շահագործողների և Բյուզանդական



կայսրության: Զբաղեցնելով արաբա-բյուզանդական շրջանները, պավլիկյանները հիմնել էին նաև իրենց բերդերն ու ամրոցները և, ըստ երևույթին, ունենալով նաև ներքին ինքնուրույնություն, մի քանի տասնամյակ շարունակ հերոսական պայքար մղեցին Բյուզանդական կայսրության կանոնավոր բանակների դեմ և IX դարի 70-ական թվականներին այդ շարժումը հասցրին իր զարգացման ամենաբարձր աստիճանին: Սակայն պավլիկյան շարժումը նույնպես, միջնադարյան գյուղացիական մյուս շարժումների նման, դատապարտված էր պարտության, որովհետև նրա հիմնական շարժիչ ուժերը գյուղացիներն էին, որոնք ցաքուցրիվ ու անկազմակերպ լինելուց բացի նաև հետամնաց էին և քաղաքականապես ոչ այնքան հասուն, որպեսզի միայն իրենց սեփական ուժերով կարողանային կործանել տիրող հասարակարգը և նրա փոխարեն նոր հասարակարգ ստեղծել:

10. Հայաստանի արևմտյան շրջաններում պավլիկյան շարժման զարգացումն ու հզորացումը որոշակիորեն կապվում էր նաև արաբա-բյուզանդական փոխհարաբերությունների հետ: Արևմտյան սահմաններում, մանավանդ IX դարից սկսած, Բյուզանդական կայսրության օրավուր մեծացող սպառնալիքը արաբական տեղական իշխանություններին հարկադրում էր իրենց դիրքերը պաշտպանելու համար ոչ միայն գնահատել ու հովանավորել պավլիկյանների ռազմատենչ հայացքները, այլև դաշնակցել նրանց հետ՝ ընդդեմ բյուզանդացիների: Սրան հակառակ, Հայաստանի կենտրոնական շրջաններում պավլիկյան շարժման գոյության ամբողջ ընթացքում Արաբական խալիֆայության վարած քաղաքականությունը ոչ միայն չմեղմացավ, այլև, ընդհակառակը, սկսեց անընդհատ ծանրանալ: Այդ է պատճառը, որ Արաբական խալիֆայության տիրապետության ամբողջ ժամանակաշրջանում հայ ժողովուրդը անդադրում ազատագրական պայքար էր մղում, որը շարունակվեց մինչև IX դարի կեսերը և ավարտվեց հաղթանակով՝ Հայաստանի քաղաքական ու պետական անկախության վերականգնումով:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

## ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐԱԲԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ

*VII դարի վերջերին և VIII դարի սկզբներին թեև Հայաստանը վարչական և իրավական ձևով ընկավ Արաբական խալիֆայության տիրապետության տակ և հայ ազնվականությունը վասալական կախման մեջ դրվեց տիրողներից, սակայն ներքին կյանքի որոշ հարցերում հայկական նախարարական դասը դեռևս պահպանում էր իր իրավունքները, որոնց մեջ ամենակարևորը սեփական զորք ունենալն էր։*

*Հայ ազնվականության և նրա ռազմական ուժերի առկայությունը հենց սկզբից լուրջ մտահոգություն էր պատճառում արաբական իշխանություններին։ Դրա համար էլ, երբ Մուհամեդ իբն-Մրվանը իր գործն ավարտելով ետ գնաց, Հայաստանի կառավարիչ Աբդուլան անմիջապես ձեռնամուխ եղավ հայ ազնվականներին միջտեղից վերացնելու գործին։ «Եւ իբրև գնաց Մահմետ զօրավարն յԱսորիս,— ասում է Ղևոնդը,— եթող յաշխարհիս Հայոց իշխան փոխանակ իւր յԻսմայէլացւոցն։ Որոյ խորհուրդ վատ ի մէջ առեալ բառնալ զազատախումբ տոհմն յաշխարհէս Հայոց հանդերձ նոցին հնծելովք»[1]։ Ուրեմն Աբդուլայի ծրագրի նպատակն առաջին հերթին հայ ազնվականության և նրա ուժերի ոչնչացումն էր։*

*Հայկական ավագանին, որին այդ ժամանակ գլխավորում էր սպարապետ Սմբատ Բագրատունին, ուշադրությամբ հետևում էր Աբդուլայի գործողություններին ու փորձում խորամուխ լինել նաև նրա գաղտնի դիտավորությունների մեջ։ Ազնվականության և ժողովրդի քաղաքական ակտիվությունը որոշ չափով էլ կապվում էր*

[1] Ղևոնդ, էջ 23, տե՛ս նաև Ստ. Ասողիկ, էջ 123։



*Արաբական խալիֆայության ներսում տիրող ընդհանուր և ոչ շատ կայուն վիճակի հետ։*

*VII դարում Հայաստանից ոչ հեռու, Միջագետքում բռնկվել էին շիաների ապստամբական խոշոր շարժումները, որոնց 685—687 թվականներին գլխավորում էր Ալ-Մուխտարը։ Շիաների ապստամբությանը հաջորդեց 696 թվականի Շաբիբի գլխավորած խարիջիդների հայտնի շարժումը։ Իսկ Աբդ ար-Ռահման իբն-Աշասի ապստամբությունը, որը հազիվ ճնշվեց 701 թվականին, թողել էր շատ թարմ տպավորություններ։ Եվ ինչպես երևում է, հայ մեծամեծները, օգտագործելով մի կողմից նորահաստատ արաբական իշխանությունների հիմքերի թուլությունը Հայաստանում և, մյուս կողմից, արաբների զբաղվածությունը Միջագետքում, Աբդուլայի իշխանության հենց առաջին տարիներին ապստամբեցին և փորձեցին տապալել արաբական տիրապետությունը։ Այս դեպքերի մասին պահպանված մատենագրական հիշատակություններից ամենակարևորն ու արժեքավորը Ղևոնդի և իբն ալ-Ասիրի տեղեկություններն են, որոնց ուշադիր քննությունը հնարավորություն է տալիս որոշակի ուղղումներ մտցնելու դեպքերի հերթականության և նրանց ժամանակագրության մեջ։*

*Իբն ալ-Ասիրն այդ մասին գրում է հետևյալը. «Հինգերեքի 8-ի (701 թ.) թվին Մերվանի որդի Մուհամեդ Հայաստան արշավեց։ Հայերը հաղթվելով՝ հաշտություն խնդրեցին, Մուհամմեդն ալ շնորհեց և Ապտուլլայի որդի Ապու Շեյխն երկրի ոստիկան անվանեց. բայց հայերը դավաճանությամբ սպաննեցին զայն 82-ին (701—702 թթ.) կամ 83-ին (702 թ.)»[1]։ Այստեղից երևում է, որ 701 թվականին Աբդ ար-Ռահման իբն-Աշասի ապստամբությունը ճնշելուց հետո, երբ արաբները տեղեկանում են հայերի ելույթների մասին, անմիջապես զորքեր են ուղարկում և ճնշում նաև հայերի ըմբոստությունները։ Սակայն Իբն ալ-Ասիրը սխալվում է, երբ արաբների այդ արշավանքի գլխավոր է համարում Մուհամեդ իբն-Մրվանին, որովհետև վերջինս, ինչպես հայտնի է, 699—700 թվականներին հեռանալով Հայաստանից, այլևս նրա հետ առնչություն չունեցավ։ Խոսքն այստեղ, անշուշտ, Մուհամեդ իբն-Օքբայի մասին է և այդ երկու անունների նույնությունն է պատմիչի մոտ շփոթություն առաջացրել։*

*Մուհամեդ իբն-Օքբայի գնալուց հետո դրությունը Հայաստանում կրկին փոխվում է, որովհետև արաբական իշխանությունները, շարունակելով միջոցներ ձեռնարկել հայ ազնվականությանը և նրա*

[1] Իբն ալ-Ասիր, տե՛ս «Հատվածք պատմության Հայաստանի», էջ 70—71։

ռազմական ուժերը ոչնչացնելու ուղղությամբ, արդեն դիմում էին գործնական քայլերի։ Եվ, երբ ոստիկան Աբդուլայի այդ խարդախ դիտավորությունները հայտնի են դառնում հայերին, այն ժամանակ Սմբատ Բագրատունին մի գաղտնի խորհրդակցություն է հրավիրում, որպեսզի բոլորի հետ միասին քննի արաբների սարքած դավերից խուսափելու միջոցները։ Այդ խորհրդակցությանը մասնակցում էին Սմբատ Բագրատունու զինակիցներն ու բարեկամները՝ Աշոտի որդի Սմբատ իշխանը (Վասպուրականից), Թեոդորոս Ռշտունու որդին՝ Վարդը, սպարապետի եղբայրը՝ Աշոտ Բագրատունին և ուրիշներ[1]։ Խորհրդակցության մասնակիցները, մանրամասնորեն քննելով ստեղծված դրությունը, հանգում են այն եզրակացության, որ իրենց տրամադրության տակ եղած ուժերն այժմ այլևս հնարավորություն չեն ընձեռում հակառակորդի դեմ ակտիվ գործողություններ ձեռնարկելու, որովհետև վերջինս Մուհամեդ իբն Օքբայից նոր օգնություն էր ստացել։ Դրա համար էլ որոշվում է խուսափել թշնամու հետ ընդհարվելուց և հեռանալ դեպի Բյուզանդիա, որտեղ գուցե հնարավոր լիներ նոր ուժեր համախմբել իրենց շուրջը։ Այդ խորհրդակցությունից հետո, Վասպուրականի նախարարներից մի քանիսը Սմբատի գլխավորությամբ մեկնում են իրենց տեղերը, իսկ սպարապետն իր 2000 հեծյալներով Ուղես գյուղի մոտակայքով գալիս հասնում է Մասսի ստորոտներում գտնվող Ակոռի մեծ ավանը։ Սակայն հայկական զորախմբի տեղաշարժն անկատ չի մնում արաբներից։ Արդուլան, որ ինչպես երևում է ուշադրությամբ հետևում էր հայերի գործողություններին, 5000 հոգուց բաղկացած մի կանոնավոր զորաբանակով սկսում է անձամբ հետապնդել նրանց։ Արաբները, վստահ իրենց թվական գերակշռության վրա, ձգտում էին ինչ գնով էլ լինի ճակատամարտի բռնվել հայերի հետ, իսկ վերջիններս ամեն ջանք գործադրում էին որպեսզի խուսափեն այդ պարտադրանքից։ Այդ է պատճառը, որ, երբ Սմբատ Բագրատունին նկատեց թշնամու առաջանալը, արագացրեց իր ընթացքն և, անցնելով Արաքսը, կանգ առավ նրա ձախ կողմում գտնվող Վարդանակերտ գյուղում։ Այստեղ իր դիրքերն ամրացնելու հետ մեկտեղ, հայոց սպարապետը փորձ արեց ընդհարումից խուսափել և այդ նպատակով արաբների մոտ ուղարկեց հատուկ բանագնացներ, որոնք հայերի անունից խաղաղասիրական այսպիսի հայտարարություն արեցին նրանց. «Ընդէր, ասէ, պնդեալ գայք զկնի մեր. զինչ ինչ մեղաք ձեզ. ահաւադիկ երկիրդ մեր առաջի ձեր է. ձեզ տուեալ եմք զբնակութիւնս մեր, զայգիս և զանտառս և զան-

[1] Տե՛ս Ղևոնդ, էջ 13, նաև Ստ. Ասողիկ, էջ 123։



դաստանս մեր. արդ ընդէր և զանձինս մեր խնդրէք։ Թոյլ տուր գնալ ի սահմանաց մերոց»[1]։ Արաբները նույնիսկ չէին ուզում լսել հայերին. նրանք չէին հանդուրժում հայկական մի այսպիսի զորագնդի գոյությունը նույնիսկ Բյուզանդիա անցնելու պայմանով։ Եվ երբ երկու կողմերի ընդհարումը դառնում է անխուսափելի, հայ զինվորներն սկսում են մեծ եռանդով ամրացնել գյուղի փողոցները, դիրքեր գրավել նրա շրջակայքում և կարևոր կետերում պահակներ նշանակել։

702—703 թվականի Արարատյան դաշտի խստաշունչ ձմեռն էր։ Եվ այդ ցուրտ եղանակին արաբները հարկադրաբար ամբողջ կիշերը մնացել էին դրսում, բաց երկնքի տակ ու միանգամայն անպաշտպան վիճակում։ Սմբատ Բագրատունին, տեղյակ լինելով հակառակորդի աննախանձելի դրությանը և իմանալով, որ հարավային կլիմային սովոր արաբ զինվորների համար կովելու տեսակետից ստեղծվել էին խիստ աննպաստ պայմաններ, հաջորդ օրն իսկ, վաղ առավոտյան իր հեծյալներով անմիջապես դիմում է հարձակման։ Արաբները, որ այդ բանին չէին սպասում, այլևս չկարողացան հայկական հեծելազորի շեշտակի գրոհը կանգնեցնել և, խուճապի մատնվելով, դիմեցին փախուստի։ Ջախջախված ու մարտերում մեծ կորուստներ կրած արաբական զնդերը միանգամայն ցաքուցրիվ վիճակում շտապում էին անցնել Արաքսի հակառակ կողմը, որպեսզի մի կերպ ազատվեն հետապնդումից։ Երբ նրանք հախուռն բազմությամբ գտնվում էին սառցակալած գետի վրա, այն ժամանակ այդ հսկայական ծանրության տակ սառույցները կոտրվեցին ու թշնամու հոծ բազմությունը, ձիերի հետ միասին, անմիջապես ջրասույզ եղավ։ Արաբական 5000 զինվորներից հազիվ կարողացան փրկվել միայն 300 հոգի։ Այս թշվառականները նույնպես անխուսափելիորեն կոչնչացվեին զայրացած հայ զինվորների կողմից, եթե գործին չմիջամտեր հայ կանանցից Շուշանը, որի խնդրանքով Սմբատ Բագրատունին դադարեցնում է նրանց հետապնդումը և թույլ տալիս, որպեսզի կոտորածից փրկվածները ապաստանեն տիկնոջ կալվածքում։ Իսկ վերջինս «...առեալ պատէր զվէրսն և առողջացուցանէր և զգեցուցանէր հանդերձիւք։ Տայր և զրաստս յիւրոց երամակաց և առաքէր առ իշխանն Իսմայելի»[2]։

Արաբական ջախջախված զորաբանակի ամբողջ հանդիրձանքը, զենքերն ու ձիերն ընկան հաղթողների ձեռքը։ Գրաված հարուստ ռազմավարից Սմբատ Բագրատունին որոշ բաժին ուղարկեց

[1] Ղևոնդ, էջ 24։

[2] Նույն տեղը, էջ 25։

քյուղանդական կայսր Տիբերիոս III-ին (698—705), որը ոչ միայն շնորհակալությամբ ընդունեց ընծաները, այլև իր հերթին հայոց սպարապետին շնորհեց կյուրապաղատության պատվավոր կոչումը։ Հավանաբար հենց Վարդանակերտի ճակատամարտում էլ, շատերի հետ, զոհվում է նաև ինքը՝ արաբական ոստիկան Աբդուլան, որի մասին, ինչպես քիչ առաջ տեսանք, հիշատակում էր Իբն ալ-Աթիրը։

Ղևոնդը, վերոհիշյալ դեպքերի պատմությունը տալուց հետո, իր խոսքն ավարտում է այսպես. «Իսկ Մահմետ զօրավարն երկրորդ անգամ ելեալ յաշխարհս Հայոց զօրու ծանու յութուտասաներորդ ամի Աբդլ-Մելիք իշխանի և զամս Գ հանդարտեալ դադարէր. և ոչ ինչ չարեաց յուշ լինէր վասն անցիցն, որ էանց ընդ զօրն Տաճկաց ի Վարդանակերտն աւանի. այլ հաստատուն պահէր զերդումն գրոյն զոր տուեալ էր իւր, և միայն ընդ ակամբ հայէր նախարարացն Հայոց»[1]։ Բերված հատվածի բովանդակությունից պարզվում է, որ Վարդանակերտի մոտ արաբական զորքերի կրած պարտությունից հետո Աբդլ-Մելիք խալիֆի գահակալության 18-րդ տարում (նա գահակալել է 685—705 թվականներին), այսինքն 703 թվականին, զորքով Հայաստան է արշավում Մուհամեդը (խոսքը Մուհամեդ իբն-Օքբայի մասին է), որին հաջողվում է երեք տարի տևող հուզումներն ու ապստամբությունները խաղաղեցնել, չհիշելով նույնիսկ Վարդանակերտի դառն դեպքերը։ Եվ արաբ զորավարը «միայն ընդ ակամբ հայէր նախարարացն Հայոց»։ Մեր կարծիքով այստեղ, Ղևոնդի հիշատակության մեջ շատ կարևոր են մի քանի հանգամանքներ. առաջինը Մուհամեդ իբն-Օքբայի երկրորդ անգամ Հայաստան արշավելու հիշատակությունը, երկրորդն այն, որ նա հիշում է, թե երեք տարում երկիրը հանդարտվեց և հետո, արաբ զորավարը մոռացության տալով նախկինը, բավարարվում է միայն հայ նախարարների վրա հսկողություն սահմանելով։ Եթե հիշենք, թե ինչպիսի խարդախ ու խորամանկ եղանակով արաբները կարողացան 705 թվականին Նախիջևանում և Խրամում ոչնչացնել հայ աղնվականության և զինվորականների մի մեծ խմբի, ապա ուրեմն պարզ կլինի, որ Մուհամեդ իբն-Օքբայի երկրորդ արշավանքը պետք է տեղի ունեցած լիներ 702—703 թվականներից հետո և 705 թվականից առաջ, այն է՝ 704 թվականին։ Եվ այդ իրոք այդպես է, որովհետև Իբն ալ-Ասիրը նույնպես Մուհամեդ իբն-Օքբայի 701—702 թվականների առաջին արշավանքից հետո, նրա հաջորդ արշավանքը Հայաստան ճիշտ և ճիշտ վերագրում է 704 թվականին, ասելով՝ «Հիճրեթի 85 (704 թ.) թվին Մուհամետ որդի Մրվանի Հայաստանի

[1] Ղևոնդ, էջ 31։



վրա պատերազմի գնաց, որ ամառն ու ձմեռը տևեց»[1]։ Արաբ զորավարի այսպես ասած վրեժխնդիր չլինելն ու մեղմությունը պետք է շարունակված լիներ մինչև 705 թվականի եղեռնի տարին։ Եվ արաբները հայերից անմիջապես վրեժխնդիր չեղան հենց նրա համար, որ, նախ, վախենում էին նրանց դեմ բացահայտ կռվի ելնելուց և հետո՝ հայերի զգոնությունը բթացնելով, նրանք ծրագրում էին իրենց հակառակորդներին դավադրաբար և անաղմուկ ոչնչացնել։ Արաբական զորավարի հանդարտությունն ու այսպես ասած անվրեժխնդրությունը արյունալի դեպքերին նախորդող մի սովորական լռություն էր, որը նման պայմաններում վերջանում էր ողբերգական հետևանքներով։ Ղևոնդի մոտ ճիշտ է նաև այն, որ հայերի ապստամբությունը երեք տարի տևելուց հետո է հանդարտվել։ Եթե ապստամբության վերջին պահը համարենք 704—705 թվականները, ուրեմն նրա սկիզբը պետք է լինի 701—702 թվականները, այսինքն Մուհամեդ իբն-Օքբայի առաջին արշավանքի ժամանակը, որի մասին պարզ կերպով հիշատակում էր Իբն ալ-Ասիրը։

Վարդանակերտի ու նրան նախորդած դեպքերի արձագանքները հասան նաև Հայաստանի մյուս շրջանները։ Հայերի փառավոր հաղթանակները և արաբական ոստիկանի սպանությունը մեծ ոգևորություն էր առաջացրել շատերի մեջ, որոնք այնուհետև խումբ-խումբ գալիս միանում էին հայկական զինված ջոկատներին։ Հիշյալ դեպքերին զուգընթաց, հենց նույն 702—703 թվականի ձմռանը ոտքի ելան նաև Ռշտունյաց գավառի բնակիչները, որոնց առաջնորդում էր Վասպուրականի Սմբատ իշխանը՝ հայոց սպարապետի զինակիցը։ Արաբական զորամասերն այդ ժամանակ ներխուժելով Ռշտունիք՝ հասել էին մինչև Գուկանք գյուղը։ Սմբատ իշխանը, որն աչալուրջ կերպով հսկում էր իր երկրամասին, շուտով իր զորքերով հասնում է արաբներին ու տեսնելով, որ նրանք այնքան էլ շատ չեն, հարձակվում և ծանր պարտության է մատնում թշնամուն։ Արաբներից փրկվում են միայն 280 հոգի, որոնք հաղիվ իրենց գյում են գյուղի եկեղեցին ու ներսումն խնդրում։ Արաբների հրամանատարը, դիմելով հայերին, ասում է. «Մեր լուեալ է, եթէ ազգ քրիստոնէից ողորմած է. իբրև տեսանէ զոք ի վիշաս՝ զթայ և ողորմի. արդ ողորմեցարուք մեզ և տուք ջանձինս մեր պարգև», իսկ Սմբատ իշխանը նրան պատասխանում է հետևյալ խոսքերով. «Մեք, ասէ, ուսաք ի տեառնէ մերմէ, եթէ ողորմութիւն ողորմածաց արժան է առնել. իսկ դուք ազգ անողորմ եք և ոչ արժանի ողորմութեան, և ոչ արաս-

[1] Իբն ալ-Ասիր, տե՛ս «Հատվածք պատմության Հայաստանի», էջ 71։

ցուք»[1]: Դրանից հետո հայ ռազմիկները եկեղեցին շրջապատում և սպասում են այնքան ժամանակ, մինչև բոլորը հարկադրաբար այնտեղից դուրս են գալիս և այնուհետև տեղն ու տեղը ոչնչանում մինչև վերջին զինվորը:

Վարդանակերտում ձեռք բերած փայլուն հաղթանակից հետո Սմբատ Բագրատունին անցնում է Վանանդ, միանում Կամսարականների ուժերին և շարունակում պայքարն արաբների դեմ: Սակայն այդտեղ նրա հաջողությունները երկար չեն տևում, որովհետև շուտով նա տեղեկանում է, որ արաբները մեծ ուժեր են պատրաստում իր վրա հարձակվելու համար: Սմբատ Բագրատունին, այս վիճակից դուրս գալու համար, մի նամակով դիմում է բյուզանդական կայսրին և օգնություն խնդրում նրանից: Կայսրն անմիջապես կատարում է հայերի խնդրանքը և մի հատուկ զորագունդ է ուղարկում Հայաստան: Դրանից հետո Սմբատ Բագրատունին, միանգամայն ապահով զգալով, իրեն տրված օգնական ուժերի հետ միասին ամրանում է Վանանդի Դրաշպետ գյուղում: Եվ այն ժամանակ, երբ արաբական զորքերը Մուհամեդ իբն-Օքբայի գլխավորությամբ հասնելով իրենց հակառակորդի ճամբարին, պատրաստվում էին ճակատամարտ տալու, հունական զորքերը վախկոտաբար լքում են իրենց դաշնակիցներին և հեռանալով նրանցից, գնում ամրանում են իրենց ամրոցում: Հայերի ու հույների միջև առաջացած այդ պառակտումից անմիջապես օգտվում են արաբները, որոնք այլևս թույլ չեն տալիս Սմբատ Բագրատունուն խուսափելու ճակատամարտից և իրենց ամբողջ ուժերով հարձակվում են հայկական զորքերի վրա ու ծանր պարտության մատնում նրանց: Ղևոնդն ասում է, որ Դրաշպետի ճակատամարտում հայերից «...զսակաւ մնացորդսն առնէր փախստական յաշխարհէս»[2]: Ճակատամարտից մի կերպ խույս տվեց նաև Սմբատ Բագրատունին, որն իր զինակիցներով հեռացավ Տայոց աշխարհն ու հաստատվեց Թուխարք ամրոցում: Հայոց սպարապետն այստեղ երկար չմնաց: 705 թվականին նախիջևանում ու Խրամում հայ մեծամեծների եղեռնից հետո Սմբատ Բագրատունին իր հետ եղած նախարարների հետ միասին, ապահովության համար, քաշվեց Արևմտյան Վրաստան և անձամբ կայսրից ստանալով ծովափնյա Փոթի քաղաքը, միաժամանակ մնաց այնտեղ: Ղևոնդն այդ մասին գրում է. «Իսկ Սմբատ կիւրապաղատան և նախարարքն որ ընդ նմա գնացեալ մեկնեցան յաշխարհէս, և անցեալ խնդրեցէն ի թագաւորէն Յունաց քաղաք բնակութեան և դա-

[1] Ղևոնդ, էջ 27:

[2] Նույն տեղում, էջ 32, տե՛ս նաև Հովհ. Դրասխանակերտցի, էջ 95:



դարս խաշանց իւրեանց. և նա տայր նոցա զքաղաքն որ անուանեալ կոչի Փոյթ ի կողմանս եգեր աշխարհին. և բնակեցան ի նմա ամո Զ»[1]: Ուրեմն Սմբատ Բագրատունին Վրաստանում մնում է մինչև 710—711 թվականները, դրանից հետո նա իր կողմնակիցներով նորից հայրենիք է վերադառնում Արդուլ-Ազիզի ոստիկանության տարիներին; երբ, ինչպես իր տեղում ասվել է, արաբները հայերի նկատմամբ սկսել էին մի փոքր մեղմ քաղաքականություն վարել: Հայաստանում Սմբատ Բագրատունին վերականգնելով իր դիրքերը, նորից ստանձնում է սպարապետության պարտականությունները և պաշտոնավարում մինչև իր մահը, որը տեղի պետք է ունեցած լինի 715 թվականին[2]:

702—704 թվականներին արաբական լծի դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական ապստամբությունները թեև վերջիվերջո պարտություն կրեցին, սակայն նրանք ունեցան նաև դրական շատ կարևոր հետևանքներ, որովհետև այդ ապստամբությունները բարձրացրին հայ ժողովրդի մարտական ոգին, վստահություն ստեղծեցին սեփական ուժերի նկատմամբ և զարթեցրին պայքարի ու հաղթանակի ձգտումը, որը կարող էր նպաստավոր պայմաններում նոր և էլ ավելի ուժեղ բռնկումներ ունենալ:

725 թվականից սկսած, երբ արաբները նոր աշխարհագրով էլ ավելի ծանրացրին հարկային լուծը Հայաստանում, և երբ խալիֆայության ներսում նորից սկսվեցին ներքին կռիվներն ու ապստամբությունները, Հայաստանում նույնպես տեղի էին ունենում լուրջ խմորումներ, որոնք ուղղված էին արաբական ծանր լծի դեմ:

Արմենիայում և Հայաստանում իր իշխանության հիմքերն ամրապնդելու համար Հիշամ խալիֆը (724—743) Մասլամային պաշտոնանկ անելուց հետո նրա փոխարեն ոստիկան է նշանակում Մրվան իբն-Մուհամեդին: Յակուբիի վկայությամբ Արմենիայի նոր կառավարիչը իր նոր պաշտոնավայրն է մեկնում հիջրայի 122, այսինքն՝ ներկա թվականով 739—740 թվականին: «122-ին,—ասում է պատմիչը,—Մրվան իբն-Մուհամմեդ արշավեց դեպի Հայաստան, և Սուլեյման իբն-Հիշամ դեպի Մալաթիա»[3]: Մրվանի նշանակման մասին հիշատակում է նաև Ղևոնդը, որի մոտ կարդում ենք հետևյալը. «Յայնմ ժամանակի առաքէ իշխանն Իսմայէլի Հեշմ ի վերայ ազգիս Հայոց զՄրուան որդի Մահմեդի... իբրև հասանէր Մրուան ի քաղաքն Դուին՝ յանդիման լինէին նմա նախարարք Հայոց: Եւ խո-

[1] Ղևոնդ, էջ 35, տե՛ս նաև Վարդան Բաբերդցի, էջ 100:

[2] Տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, էջ 820:

[3] Յակուբի, «Բազմավեպ», 1957, № 9—10, էջ 211:

սի ընդ նոսա բանիւք խաղաղութեան, և կոչէ առ ինքն զԱշոտ որպէս վասակայ ի տանէ Բագրատունւոյ, և տայ նմա իշխանութիւն պատրկութեան ի վերայ աշխարհիս Հայոց հրամանաւ Հեշմայ, և բազում պատուով պատուէր զնա»[1]: Ուրեմն Մրվանը ոչ միայն հայերի նկատմամբ սկսում է վարել համերաշխ քաղաքականություն, այլև, հայ ազնվականությանը շոյած լինելու համար, խալիֆի համաձայնությամբ հենց նույն 739—740 թվականներին Վասակի որդի Աշոտ Բագրատունուն նշանակում է իշխանաց իշխան և հայոց պատրիկ:

Հայաստանում իր գործերը կարգավորելուց հետո, 740—741 թվականին Հիշամի դեպի բյուզանդական սահմանները կատարած ամառային արշավանքներին զուգընթաց, Մրվանը Հայաստանից ներխուժում է Գիլան ու Մուղան և այդ եկրամասերը նորից հպատակեցնում իրեն[2]: Սակայն արաբների գործերն ընդհանրապես վատ էին մի քանի հպատակ երկրներում: Այդ ժամանակ հակաարաբական ելույթներն ու ապստամբություններն ամենից սուր բնույթ էին ստացել Պաղեստինում: Տաբարին և Իբն ալ-Ասիրը հաստատում են, որ 743—744 թվականներին Պաղեստինի ժողովուրդների ապըստամբությունն այնքան սուր բնույթ էր ստացել, որ արաբները նրանցից լուրջ պարտություն էին կրում: Պաղեստինի ապստամբները կոիվներից մեկում սպանել էին արաբական կառավարչին[3]: Պաղեստինում և հարակից շրջաններում ապստամբությունները շարունակվում են նաև հետագա տարիներում, երբ ապստամբության գլուխ էին անցնում նույնիսկ խալիֆի հավատարիմ պաշտոնյաները[4]:

Յակուբիի հիշատակություններից երևում է, որ արաբների մեջ գոյություն ունեցող պատակտման ու ներքին կոիվների պատճառով Մրվանի վիճակը նույնպես վտանգի էր ենթարկվում ոչ միայն Արմենիայի բնակչության, այլև արաբ պաշտոնյաների ու զինվորականների ելույթների հետևանքով: 743—744 թվականներին Մրվանի դեմ այդպիսի մի անհաջող պայքար սկսեց Թաբետ իբն-Նայիմ ալ-Ջուդհամին[5]: Հայաստանի կառավարիչը Ջուդհամիի ելույթը ճնշելուց հետո իր տեղում փոխանորդ նշանակելով Իբն-Աբդուլա

[1] Ղևոնդ, էջ 112:

[2] Տե՛ս Յակուբի, «Բազմավեպ», 1957, № 9—10, էջ 211:

[3] Տե՛ս Ал-Табари, „Православный палестинский сборник", т. 17, вып 2(4), СПб, 1897, էջ 217, Ибн-ал-Асир, տե՛ս նույն տեղը, էջ 464:

[4] Տե՛ս նույն տեղը, էջ 465:

[5] Տե՛ս Յակուբի, «Բազմավեպ», 1957, № 9—10, էջ 211:



իրն-Եզիդ ալ-Հիլալիին, ինքը շտապեց մայրաքաղաք՝ կենտրոնում սկսված գահակալական պայքարին մասնակցելու համար:

730—740-ական թվականներից սկսած Հայաստանի քաղաքական ու տնտեսական կյանքում գնալով ավելի էր ընդգծվում Մամիկոնյան ու Բագրատունի նախարարությունների դերի բարձրացումը: Հայկական ֆեոդալական մյուս տոհմերը փաստորեն գտնվում էին սրանց ազդեցության տակ և գործում էին մեկի կամ մյուսի գլխավորությամբ: Սակայն Արաբական խալիֆայության դեմ պայքարի գործում Բագրատունիների և Մամիկոնյանների քաղաքական դիրքորոշումը տարբեր էր: Եթե առաջիններն իրենց դիրքերն ամրապնդելու համար մեծ մասամբ փորձում էին համակերպվել արաբներին, ապա Մամիկոնյանները, դեռևս որոշ հույսեր կապելով Բյուզանդիայի հետ, հակադրվում էին արաբներին և փորձում երկրի ներքին կյանքում գրավել առաջատար դիրքեր: Դեպքերի հետագա ընթացքը ցույց է տալիս, որ Մամիկոնյանների հետ համամիտ էին նաև հայ ազնվականության մյուս ներկայացուցիչները: Հասկանալի է, որ Հայաստանում միջֆեոդալական պայքարի պայմաններում ուժեղ հենարան որոնող արաբները նախապատվությունը պետք է տային Բագրատունիներին և ոչ թե Մամիկոնյաններին: Այդ է պատճառը, որ Բագրատունիների ամեն մի քայլը դեպի առաջ խիստ մեծ դժգոհությամբ էր ընդունվում Մամիկոնյանների կողմից, որոնց անհաշտվողականությունը չէին հանդուրժում նաև արաբական իշխանությունները:

Մամիկոնյանների և նրանց խմբակցության անդամների դեմ Մրվան ոստիկանի ձեռնարկած առաջին գործը եղավ այն, որ նա կալանավորեց ու խալիֆի մոտ ուղարկեց Սմբատ Մամիկոնյանի երկու որդիներին՝ Գրիգորին ու Դավթին: Սրանց վերաբերյալ Արմենիայի ոստիկանն ուղարկել էր նաև հատուկ ամբաստանագրեր, որոնցում նրանք մեղադրվում էին որպես խռովարարներ և օրինական իշխանության թշնամիներ: Խալիֆն իր հերթին, հիմք ընդունելով ոստիկանի զեկուցագրերը, Գրիգոր և Դավիթ Մամիկոնյաններին դատապարտեց ցմահ բանտարկության և ուղարկեց Եմենի առնապատները: Ավելորդ չենք համարում մեջ բերելու Ղևոնդի այդ մասին թողած արժեքավոր տեղեկությունները. «Իսկ իմացեալ որդւոցն Սմբատայ զպատիւն Աշոտոյ, զի մեծացաւ անձն նորա յաչս Հեշմայ և զօրավարին Մրուանայ՝ և յոյժ խեռութեամբ կէին ընդ նմա մինչև հասանէր գժտութիւն նոցա յականջս որդւոյն Մահմետի: Եւ վաղվաղակի հրամայէ ունել զնոսա, և առաքէ առ իշխանն Իսմայէլի զԳրիգոր և զԴաւիթ, որք էին ի տոհմէ Մամիկոնեան. և գրէր ամբաստանութիւն զնոցանէն, թէ հակառակք և խռովարարք են իշ-

խանութեանս Աշոտոյ։ Եւ հրամայէր տանել զնոսա չեմանն կոչեցեալ, որ է անապատ և դնել զնոսա ի կալանս բանտի մինչև ցվախճան կենաց իւրոց»[1]։

Այս դեպքերից հետո Աշոտ Բագրատունին անձամբ մեկնում է խալիֆի մոտ՝ նորանոր արտոնություններ ստանալու և իր շնորհակալությունը նրան հայտնելու։ Խալիֆը հայոց սպարապետի և իշխանաց իշխանի հավատարմությունն է՛լ ավելի շահած լինելու համար ոչ միայն նրան լավ է ընդունում, այլև վերականգնել է տալիս հայկական հեծելազորին տրվելիք պետական նպաստը և կարգադրում անմիջապես վճարել անցած երեք տարիների համար չվճարած երեք հարյուր հազար դահեկան գումարը։

740-ական թվականների կեսերից Արաբական խալիֆայության կենտրոնական շրջաններում տեղի ունեցող գահակալական կռիվները հասան ծայր աստիճանի լարվածության։ Այս կռիվներում Օմայանների դեմ գործող ուժերին գլխավորում էին գահի ամենաուժեղ հակառակորդները՝ Աբասյանները։ Այսպիսի պայմաններում էր, որ Հիշամ խալիֆի մահվանից հետո մի կերպ գահ բարձրացած Վալիդ II-ը կարճ ժամանակ անց դավադրաբար սպանվեց, իսկ 744 թվականին նրան փոխարինած Եզիդ III-ի դեմ խռովությունները շարունակվեցին է՛լ ավելի սուր բնույթ ստանալ։ Այս խառն իրադրություններից օգտվելու համար Եզիդի դեմ դուրս եկավ նաև Արմինիայի ոստիկան Մրվանը։ Սակայն նա հաղթել էր Դամասկոս հասել, երբ հենց նույն 744 թվականին Եզիդը մեռավ և նրան փոխարինած Իբրահիմն ապստամբ Մրվանի դեմ ուղարկեց Սուլեյման զորավարին։ Երկու կողմերի միջև վճռական ճակատամարտը վերջացավ Մրվանի հաղթանակով, որը նոյեմբերին հռչակվեց խալիֆ[2] և կառավարեց մինչև 750 թվականը։ Ղևոնդը, որին հիշյալ դեպքերը ծանոթ են մանրամասնությամբ, այսպես է գրում. «Իսկ Մրուանն իբրև լուաւ զմահ իշխանին իւրեանց Վլիդի՝ վաղվաղակի կազմեալ զզօրս իւր... և ինքն հանդերձ ամենայն բազմութեամբ զօրացն երթեալ պատերազմէր ընդ ազգին իւրում... և մարտ պատերազմին յերկարեալ ի մէջ նոցա։ Եւ յաղթահարէր Մրուանն զմիւս կողմն և սպան զՍուլէյման, և կալաւ ինքն զիշխանութիւնն ամս Ջ»[3]։

Դեռևս Վալիդ II-ի կարճատև գահակալության ժամանակ զգալի թվով բանտարկյալներ ազատ էին արձակվել։ Այդ բախտին էին արժանացել նաև Գրիգոր և Դավիթ Մամիկոնյանները, որոնց հա-

[1] Ղևոնդ, էջ 112—113։
[2] Տե՛ս Յակուբի, «Բազմավեպ», 1957, № 9—10, էջ 212։
[3] Ղևոնդ, էջ 116։



ջողվել էր հայրենիք վերադառնալ, թեև մի քիչ ուշացումով և մեծ դժվարություններով։

Մամիկոնյան եղբայրները, գալով Հայաստան, նախ կանգ են առնում Վասպուրականում և հենց այստեղ էլ անմիջապես սկսում են իրենց շուրջը համախմբել արաբական լծից ու Աշոտ Բագրատունու հաշտվողական քաղաքականությունից դժգոհ նախարարներին։ Մամիկոնյանները որպես քաղաքական իրադարձություններին և խալիֆայության ներսում տիրող խառը վիճակին մոտիկից ծանոթ մարդիկ, գտնում էին, որ իրենք անհապաղ պետք է օգտվեն առիթից ու զենքի դիմեն։ Երկու եղբայրների հորդորներն իզուր չեն անցնում։ Շուտով նրանց շուրջն են համախմբվում հայ նախարարներն իրենց զորքերով։ Ապստամբության կողմնակիցների թվի արագությամբ աճելու հետևանքով, կարճ ժամանակ անց, գերակշռությունն անցնում է Մամիկոնյանների կողմը։ Դրա համար էլ Աշոտ Բագրատունին, որ ապստամբության և մանավանդ Մամիկոնյաններին խիստ հակառակ էր, ելնելով դրության լրջությունից, ընտանիքը տեղավորում է Դարույնքի բերդում, իսկ ինքը շտապում է Ասորիք՝ Մրվանի մոտ։ Այդ մասին Ղևոնդի մոտ ասված է հետևյալը. «Եւ ինքն (Աշոտը) անցեալ գնայր յաշխարհն յԱսորւոց առ իշխանն Իսմայէլի Մրուան առ ի զկուցանել զիրս աղմկին որ ի մէջ նորա և նախարարաց իւրոց։ Եւ իբրև հաս պատրիկն զօրօք իւրովք ի տեղի մարտին՝ բաղում յաղթութիւն լինէր զօրացն Մրուանայ և խորտակումն հակառակորդաց նորին. քանզի լուան զհամբաւ գալըստեան նորա, եթէ հաս պատրիկն Հայոց ի թիկունս օգնականութեան և ունի ընդ իւր ընտիրս հեծելոց ժեռ արանց վառելոց։ Եւ զայս լուեալ հակառակորդացն Մրուանայ՝ լքան ի պատերազմէն, հառաւածք մեծամեծք եղեն յաւուր յայնմիկ. և պարտասեալք ի պատերազմէն՝ առ փոքր մի դադարեցին»[1]։ Պետք է ասել, որ Ղևոնդի վերհիշյալ խոսքերը ամբողջությամբ չէ, որ վստահություն են ներշնչում։ Ճիշտն այն է, որ Աշոտ Բագրատունին, չկարողանալով դիմագրավել ապստամբության կողմնակիցների ուժերին, շտապ կերպով մեկնել էր Մրվանի մոտ՝ օգնություն բերելու հույսով։ Իսկ այն, որ հայոց իշխանաց իշխանը 15000-անոց հայկական հեծելազորով իր կարևոր դեր է կատարել Մրվանի թշնամիների շարքերում շփոթություն առաջացնելու և նրա համար հաղթանակն ապահովելու, գործում, անհավատալի է այն պարզ պատճառով, որ եթե Աշոտն իրոք իր տրամադրության տակ այդպիսի պատկառելի ուժ ունենար, այն ժամանակ նա կարող էր իր հակառակորդների դեմ ինքնուրույն

[1] Ղևոնդ, էջ 119—120։

գործել և ոչ թե կգնար Ասորիք ու կմիջամտեր մի այնպիսի խաոր պատերազմի, որի հաջող ելքի նկատմամբ ոչ ոք հաստատ երաշխիք ունենալ չէր կարող։ Ուրեմն, մնում է ենթադրել, որ Մամիկոնյանների խմբակցության մեջ, աղնվականությունից բացի, մասնակցում էին նաև հայկական հեծելազորի զգալի թիվ կազմող անդամները։

Արաբական տիրապետության դեմ Հայաստանում ծագած երկրորդ ապստամբության սկզբի մասին թեև սկզբնաղբյուրները որոշակի տեղեկություններ չեն հաղորդում, սակայն հայ ժողովրդի պատմության հիշյալ շրջանին վերաբերող աշխատություններում մեծ մասամբ ապստամբության սկիզբը համարվել է 748 թվականը, որը, սակայն, ճիշտ չէ և ուղղման կարիք է զգում։ Իսկ այդպիսի ուղղում կատարելու համար ամենից առաջ անհրաժեշտ է ճշգրիտ կերպով որոշել Գրիգոր և Դավիթ Մամիկոնյանների գերությունից վերադառնալու թվականը և հայկական աղբյուրների տվյալներն ուշադիր կերպով համադրել արաբական աղբյուրների հետ։

Խոսելով Մամիկոնյան իշխանների կալանքից ազատվելու մասին, Ղևոնդը գրում է հետևյալը. «Եւ մինչդեռ ամբոխ ազգին զօրացեալ յաճախէր ի մէջ որդւոցն Իսմայելի վասն անհաւատ պատերազմին, յայնժամ զերծեալ որդիքն Սմբատայ ի կալանաւոր պատանդէն. քանզի արձակեցան հրամանաւ Վլիթի ի բանտէն։ Բայց յառաջ քան զգալ նոցա յաշխարհէն Ասորւոց սպանաւ Վլիթ, և արգելան անդէն յաշխարհին, զի ոչ ոք համարձակեաց նոցա հլանել յաշխարհէն։ Ապա իբրև յաճախեաց պատերազմն ի մէջ նոցա, յայնժամ զերծեալք անկան ի Հայս»[1]։ Այստեղից պարզ կերպով երևում է, որ թեև Գրիգոր և Դավիթ Մամիկոնյանները աքսորից ազատվել էին Հիշամին փոխարինած Վալիդ II-ի կողմից, սակայն վերջինիս սպանության և գահակալական կռիվները շարունակվելու պատճառով նրանք չեն կարողանում անմիջապես հայրենիք վերադառնալ և առժամանակ հարկադրված են լինում մնալու արաբների մոտ։ Նրանք կարողանում են Հայաստան գալ միայն մի փոքր ուշ, հավանաբար այն ժամանակ, երբ գահ է բարձրանում Եզիդ III-ը, այսինքն 744 թվականին։ Մի կողմից Ղևոնդի վերոհիշյալ վկայությունները, մյուս կողմից այն հանգամանքը, որ Մամիկոնյան իշխանազունները հանդիսանում էին այդ ժամանակ գահակալական կռիվներին ակտիվորեն մասնակցող Արմենիայի ոստիկան Մրվանի կողմից ամբաստանված անձինք, թույլ են տալիս ասելու, որ այդ երկուսի գերությունից վերադառնալը պետք է տեղի ունեցած լիներ անպայման Մրվանի կողմից խալիֆայական գահը ձեռք գցելուց ա-

[1] Ղևոնդ, էջ 118։



ռաջ, այսինքն՝ մինչև 744 թվականի նոյեմբերը։ Մեր այս ենթադրությունը մյուս կողմից էլ հաստատվում է արաբական պատմիչ Յակուբիի այն վկայությամբ, թե Մրվանի Հայաստանից հեռանալուց անմիջապես հետո հայերն ապստամբում և սպանում են ոստիկանի կողմից փոխանորդ նշանակված Իբն-Աբդուլա Իբն-Եզիդ ալ-Հիլալիին[1]։ Ուրեմն Մրվանի Հայաստանից հեռանալն ու Մամիկոնյան եղբայրների վերադարձը տեղի է ունենում գրեթե միաժամանակ։ Եվ որովհետև 740—750-ական թվականներին Գրիգոր և Դավիթ Մամիկոնյանների գլխավորած ապստամբությունից բացի այլ ապստամբություն Հայաստանում տեղի չի ունեցել, ուրեմն մնում է մի եզրակացություն անել՝ Գրիգոր և Դավիթ Մամիկոնյանները, 744 թվականի կեսերին վերադառնալով Հայաստան և տեսնելով, որ Մրվանը ոստիկանական հիմնական ուժերով մեկնել է Ասորիք և մասնակցում է գահակալական կռիվներին, անմիջապես գործի են անցնում, կազմակերպում ապստամբական ուժերին և հարձակվելով ոստիկանի փոխանորդի վրա, սպանում են նրան։ Շատ հավանական է նաև, որ Եզիդ ալ-Հիլալիի կողմում հանդես եկած լիներ հայոց իշխանաց իշխանը, որն իր դաշնակցի պարտությունից ու սպանությունից հետո այլևս հակառակորդներին առանց դրսի օգնության դսպելու հույսը կորցրած, հեռանում է Ասորիք՝ Մրվանի մոտ։

Մամիկոնյան իշխանների վերադարձը հայրենիք, նրանց կողմից ապստամբության կազմակերպումն ու Արմենիայում նշանակված արաբ տեղապահին սպանելը և, վերջապես, այնպիսի մի վըտանգելի անձնավորության, ինչպիսին Աշոտ Բագրատունին էր, փախուստը Ասորիք՝ այնպիսի երևույթներ էին, որոնց վրա խալիֆայական գահին նոր տիրած Մրվանը չէր կարող ուշադրություն չդարձնել։ Եվ ելնելով նրանից, որ Աշոտ Բագրատունու բացակայության ժամանակ ապստամբության ուժերն այնուամենայնիվ չեն կարողանում իրենց գործերն ընթացքի մեջ դնել և դանդաղում են, Մրվանը կարողանում է առիթից օգտվել և Հայաստան է ուղարկում նոր ոստիկան՝ Իսակ իբն-Մուսլիմին։ Ղևոնդի հիշատակություններից երևում է, որ այս նոր պաշտոնյային կարգադրված է եղել որոշ ժամանակ հետևել և ուսումնասիրել ապստամբներին և հետո միայն անցնել վճռական միջոցների գործադրման։ Մուսլիմն այնքան է մոտենում ապստամբներին, որ Աշոտի բացակայության ժամանակ նույնիսկ Գրիգոր Մամիկոնյանին նշանակում է նրա պաշտոնում։ «Եւ զայն ժամանակ,— ասում է Ղևոնդը,— յորում էր իշխանն Աշոտ յերկրին Ասորւոց՝ կացոյց որդին Մուսլիմի ի վերայ զօրացն Հայոց

[1] Տե՛ս Յակուբի, «Բազմավեպ», 1957, № 9—10, էջ 212։

իշխան՝ զԳրիգոր ի տանէն Մամիկոնեան փոխանակ Աշոտոյ»[1]։ Սակայն այդ վերաբերմունքը արաբների համար սովորական մի շողոքորթություն էր, որը հարմար պահերին կարող էր անմիջապես վերածվել նողկալի հետապնդումների ու հալածանքների։ Եվ այդպես էլ եղավ։ Գրիգոր Մամիկոնյանին սիրաշահելուց և նրա զգոնությունը որոշ ժամանակ թուլացնելուց հետո Իբն-Մուսլիմը, խալիֆից ստացած հատուկ կարգադրության համաձայն, անմիջապես ձերբակալում և Մրվանի կողմից Հայաստան ուղարկած դահիճներին է հանձնում Գրիգոր Մամիկոնյանի եղբորը՝ Դավթին։ «Եւ նա (Մուսլիմը—Ս. Մ.-Բ.),—ասում է Ղևոնդը,—իբրև ընկալաւ զհրամանն ոչ կարաց յապաղել, այլ նոյն ժամայն կոչեաց նենգութեամբ ունել զնա, և տայր ի ձեռս անողորմ, զոր առեալ կապէր զառն կապանօք և դնէր ի կալանս բանտի աւուրս ինչ»[2]։ Դրանից հետո Մրվանի հրամանով Դավթի ձեռքերն ու ոտքերը կապում և չարաչար կերպով սպանում են։ Եվ միայն այդպիսի դաժան գործողությունների շնորհիվ արաբները կարողանում են որոշ ժամանակ զսպել հայերին ու հեռու պահել նրանց ակտիվ գործողություններ ձեռնարկելուց։ Գրիգոր Մամիկոնյանը այժմ հարկադրված էր տեղի տալ արաբների գերակշռությանը և իր պաշտոնը կրկին ղիջնել Ասորիքից վերադարձած Աշոտ Բագրատունուն։ Նա «ունէր խաղաղութիւն ընդ Աշոտոյ բանիւք միայն» և «սպասէր հասանել ժամու, յորում հասանէր կամացն խորհրդի»[3]։

Արաբ ժողովրդի մեջ նախկին տոհմական կապերի աստիճանական թուլացումը և ֆեոդալ-հողատերերի ռազմա-տնտեսական դերի բարձրացումը ներքին միջֆեոդալական պայքարի համար նոր ասպարեզ էին բաց անում։ Եվ Մրվանի գահակալությունից շատ չանցած, 747 թվականին արաբական պետության ներսում նորից ծայր առան ներքին արյունահեղ պատերազմները։ Այս անգամ նույնպես Օմայանների դեմ մղվող պայքարի առաջին գծի վրա էին գտնվում Մուհամեդի հորեղբոր՝ Աբասի սերնդի ներկայացուցիչները, որոնք ամենից շատ հավակնություններ ունեին գահին տիրանալու համար։

Արաբական խալիֆայության ներսում սկսված այս խառնաշփոթությունները, արաբներից բացի, լուրջ կերպով հետաքրքրում էին նաև Արմենիայի ժողովուրդներին, որոնք ինչպես ուրիշ դեպքերում, այժմ նույնպես փորձում էին զինված պայքարի միջոցով թոթափել օտարների ծանր լուծը։

[1] Ղևոնդ, էջ 120։

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում, էջ 121։



748 թվականին Աղվանից աշխարհի Պարտավ ու Բայլական քաղաքներում և նրանց շրջակայքում բռնկված ապստամբությունը շատ շուտով տարածվեց նաև Արաքսի աջ կողմում՝ Արդարիլի շրջանում։ Աղվանից ապստամբները, մի ընդհարման ժամանակ ջարդ ու փշուր անելով արաբական զորքերին, կռվում սպանեցին նաև Պարտավի էմիր Իբն-Եզիդին։ Նույնանման բախտի արժանացան նաև խալիֆայության այն սատրապաժանումները, որոնք շտապ կարգով եկել էին իրենց հայրենակիցներին օգնելու։ Աղվանքի ապստամբությունն առանձնապես լայն տարածում գտավ Շամախիի շրջանում, որտեղ, ինչպես Բալաձորին է ասում, արաբների դեմ պայքարը ղեկավարում էր հայազգի Միքայելը[1]։ Արաբները շամախեցիներին ապստամբությունը հազիվ կարողացան ճնշել 753—754 թվականներին, Հասան իբն-Կահթաբա ոստիկանի ժամանակ։ Վերջին կռիվներում սպանվեց նաև Միքայելը։ Հիշյալ ապստամբությունները շատ նուրբ թելերով կապված էին նաև հայկական շարժումների հետ, որոնք պատմական այս նոր իրադարձությունների ընթացքում նոր կերպարանք ստացան։

Ղևոնդ պատմիչը հայերի նախապատրաստությունների մասին հետևյալն է գրում. «Եւ մինչդեռ տակաւին յերկարէր մարտ պատերազմին ի մէջ նոցա, յայնժամ խորհեցան ամենայն նախարարք աշխարհիս ընկենուլ զլուծ հնազանդութեանն և ապստամբեալ և ի բաց կալ ի հնազանդութենէն Իսմայելի։ Յոր խորհուրդ հորդորեցաւ զնոսա Գրիգոր որ ի Մամիկոնեան տոհմէ։ ...Եւ եկեալ ամենայն նախարարք Հայոց առ իշխանն Աշոտ՝ հարկեցուցանէին զնա կամակցել և միաբանել անօգուտ խորհրդին»[2]։ Այստեղ ուշագրավ են պատմիչի «ամենայն նախարարք աշխարհիս» կամ «ամենայն նախարարք Հայոց» արտահայտությունները, որոնք եթե ոչ ամբողջ հայկական նախարարական դասը, ապա նրա պարզ մեծամասնությունը մատնանշելու իմաստն ունեն։ Որ իսկապես ապստամբության կողմնակիցները մեծամասնություն էին կազմում, այդ երևում է նաև նրանից, որ Աշոտը, տեղի տալով նախարարների ուժին ու համախմբվածությանը, ստիպված է լինում մեկ-մեկ դիմելու յուրաքանչյուրին, որպեսզի նրանց ևս կանգնեցնի ապստամբության մտքից՝ որպես «անօգուտ խորհուրդ»-ից։ «Եւ տեսեալ իշխանին զմիաբանութիւն նախարարացն և նոցին հեծելոց,—ասում է պատմիչը,—ղի առհասարակ չեղեալք էին զհետ անօգուտ խորհրդին՝ վարանէր յանձն. և կոչեցեալ զմի մի ի նախարարացն խրոց՝ բա-

[1] Տե՛ս Բալաձոռի (արաբերեն բնագիրը), Բեռլին, 1866, էջ 209—210։

[2] Ղևոնդ, էջ 121։

զում բանիւք թախանձէր ոչ մտանել ի գործ ապիրատութեան և ասէր. «Ով եղբայրք, ոչ տեսանեմ խոհական մտաց զգործ անզգայութեանդ, այլ անուղղայ խորհուրդ և բանս տարապարտս. քանզի ահա նուաղումք են մեր ի մէջ բռնութեանն Իսմայելի, և ոչ կարեմք զգէմ ունել զօրաց նոցա, և ոչ զերկիր մեր հանել ի բիրանոյ վիշապացն»[1]: Աշոտ Բագրատունին այնուհետև կրկին խորհուրդ է տալիս իր հայրենակիցներին եւ կանգնել ապստամբության մտքից և շարունակել առաջվա նման հարկ տալ խալիֆայությանը և այդ ձևով պահպանել իրենց ունեցվածքն ու արտոնությունները: Սակայն ապստամբության կողմնակիցները հավատարիմ են մնում իրենց որոշմանը և հարկադրում, որպեսզի հայոց իշխանը նույնպես միանա իրենց, հակառակ դեպքում նրանք սպառնում էին, որ «ոչ մնասցէ առ քեզ և ոչ մի ոք ի զօրաց քոց»: Դրանից հետո միայն «...հաւանեալ ակամայութեամբ իշխանին Աշոտոյ՝ առնէր միաբանութիւն ընդ Գրիգորի և ընդ այլոց նախարարացն, և դնէին դաշինս ուխտ առ միմեանս միջնորդութեամբ տէրունեան նշանին՝ աննենգ պահել զսէր միաբանութեանն»[2]: Այսպիսով, երկար տատանումներից հետո, ապստամբ նախարարների միասնական ճնշման տակ, հայոց իշխանաց իշխանը նույնպես միանում է ընդհանուր գործին:

Այդ համաձայնությունը ձեռք բերելուց հետո ապստամբության մասնակիցներն իրենց ընտանիքներով ու կողմնակիցներով հեռանում են Տայոց աշխարհը՝ Պոնտոսում եղած բյուզանդական ուժերին մոտ լինելու և նրանց հետ միասին արաբների դեմ համատեղ գործողություններ ձեռնարկելու համար: Ղևոնդի վկայություններից երևում է, որ հայ ապստամբների և բյուզանդական կայսր Կոնստանդին V Կոպրոնիմի (741—775) միջև նախօրոք համաձայնություն է կայացված եղել արաբների դեմ միասնաբար կռվելու համար[3]: Սակայն, ինչպես արդեն ասվել է, Տայքում ապստամբները պառակտվում են, որովհետև այդ ժամանակ Արևմտյան Հայաստանից գալիս ու նրանց են միանում նաև պավլիկյանների ղեկաված խմբերը: Պավլիկյանների առնչությամբ Գրիգոր Մամիկոնյանի հետևորդների մեջ առաջացած խառնաշփոթությունից օգտվելով՝ առաջինը երդումը դրժում է Աշոտ Բագրատունին, որն իր սակավաթիվ կողմնակիցներով լքում է զինակիցներին և գալով Բագրևանդ, ապաստանում է Հազր գյուղում: Ղևոնդը հաստատում է, որ հայոց իշխանաց իշխանը միտք ուներ այնուհետև անցնելու արաբների կողմը:

[1] Ղևոնդ, էջ 122:

[2] Նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 123:



Աշոտ Բագրատունու և նրա հետ եղածների դասալքությունը արդարացի զայրույթ է առաջացնում ապստամբների մեջ: Դրա համար էլ, երբ ապստամբության ղեկավարը՝ Գրիգոր Մամիկոնյանն իմանում է գործի եղելությունը, ինքն անձամբ սկսում է անմիջապես հետապնդել փախստականներին և գիշերով հասնում ու շրջապատում է Հազրը, գերի վերցնում Աշոտին ու կարգադրում կուրացնել նրան: Դրանից հետո Աշոտ Բագրատունին ազատ է արձակվում, բայց զրկվում է երկրի քաղաքական կյանքում որևէ դեր կատարելու հնարավորությունից: Ղևոնդի վկայությամբ դրանից հետո Աշոտ Բագրատունին ապրում է ևս 13 տարի և մահնում խոր ծերության հասակում: Նրա մարմինը նույնպես ամփոփվում է Դարույնքում: Ահա թե ինչ է գրում պատմիչն այդ մասին. «Իսկ Աշոտոյ կալեալ զիշխանութիւնն ամս ԺԷ փառաւորապէս պատուով քան զամենայն առաջին իշխանսն՝ հանդիպէր դաւող նենգութեանն. և կացեալ յետ այնորիկ ամս ԺԳ՝ վախճանէր բարւոք ծերութեամբ, և եղեալ ի տապանի փառաւորապէս ի կայս հանգստեան իւրոյ ի գիւղն Դարիւնս»[1]:

Վերևում մենք արդեն նշել ենք, որ Աշոտ Բագրատունին իր պաշտոնում նշանակվել էր 739—740 թվականներին, Մրվանի՝ Արմենիայում ոստիկան նշանակվելու ժամանակ: Եթե այդ թվականին ավելացնելու լինենք ևս 17 տարի, ինչպես Ղևոնդն է ասում, ուրեմն ստացվում է, որ Աշոտի կուրացումը տեղի պետք է ունեցած լինի 756—757, իսկ մահը՝ 769—770 թվականներին, որը ակնհայտ սխալ է: Այդ սխալը, սակայն, հեշտությամբ կարելի է ուղղել, եթե Ղևոնդի մոտ հիշատակվող Աշոտի իշխանության տարիների մեջ կատարենք մի փոքր ուղղում և ԺԷ-ի փոխարեն, այն կարդանք ուղղակի՝ Ժ: Այն դեպքում Աշոտ Բագրատունու կուրացման թվականը կլինի 749—750, իսկ մահվան թվականը՝ 762—763-ը, որը ճշտությամբ համապատասխանում է նաև ապստամբության ժամանակներին:

Այս իրադարձություններից հետո Գրիգոր Մամիկոնյանն իր կողմնակիցներով շարժվում է դեպի Բարձր Հայք ու հաստատվում Կարինում կամ նրա շրջակայքում: Սկզբնաղբյուրները թեև դրանից հետո ոչինչ չեն ասում Գրիգոր Մամիկոնյանի նոր անելիքների ու ծրագրերի մասին, սակայն, ելնելով դեպքերի հետագա ընթացքից, պետք է ենթադրել, որ ապստամբական ուժերի Կարինում կենտրոնանալը նախօրոք համաձայնեցված է եղել Բյուզանդիայի հետ, որը, ինչպես քիչ հետո կտեսնենք, իր հարձակումը Արաբական խալիֆայության դեմ սկսեց զարգացնել նաև այդ ուղղությամբ: Սակայն Գրիգոր Մամիկոնյանին վիճակված չէր ապրելու մինչև այդ պահը:

[1] Ղևոնդ, էջ 124:

Նա Կարինում էլ անսպասելիորեն հիվանդանում և մահանում է, հավանաբար 750—751 թվականներին։ Գրիգոր Մամիկոնյանի մահվանից հետո ապստամբության մասնակիցներն իրենց ղեկավար են ընտրում նրա մյուս եղբորը՝ Մուշեղին, որը նույնպես կարճ է ապրում։

750 թվականը Արաբական խալիֆայության պատմության մեջ նշանավորվեց նախ և առաջ նրանով, որ այդ ժամանակ դահակալական երկարատև կռիվներից հետո հաղթանակով դուրս եկած Աբբասյանները, գահընկեց անելով Օմայան վերջին խալիֆ Մրվանին, իշխանությունը հանձնեցին Աբուլ-Աբասին (750—754), որը և հանդիսացավ արաբական նոր դինաստիայի՝ Աբբասյան դինաստիայի հիմնադիրը։

Աբուլ-Աբասի և նրա մի քանի հաջորդների ժամանակ արաբները վճռական հարձակումներով կարողացան ճնշել կամ ժամանակավորապես զսպել երկրի այս ու այն կողմերում տեղի ունեցող ազատագրական ապստամբություններն ու ֆեոդալական խռովությունները։ Այսպես, 751—752 թվականներին հաջողվեց ճնշել Օմանի խարիջիդների ապստամբությունը։ Խուզեյմը նույնպիսի հաջողություն ունեցավ նաև Միջագետքում, որտեղ նա պարտության մատնեց ապստամբ Մուլաբբադին։ Այնուհետև մինչև 760-ական թվականների կեսերը Աբբասյանները մեկը մյուսի հետևից ճնշեցին Խորասանի Աբդալ-Ջեբարի, Պարսկաստանի Ուստադսիսի և ուրիշ ապստամբություններ[1]։ Աբբասյան առաջին խալիֆի ուշադրությունից չէր կարող վրիպել նաև Արմենիան, որտեղ նույնպես տեղի էին ունենում հուզումներ և ապստամբություններ։ Դա բարձրանալուց անմիջապես հետո Աբուլ-Աբասը 750 թվականին Արմենիա է ուղարկում հատուկ զորամասեր, որոնց առաջնորդում էր անձամբ խալիֆի եղբայրը՝ Աբու-Ջաֆար էլ-Մանսուրը։ Սա իր հրոսակախմբերով երկու տարի շարունակ քար ու քանդ է անում երկիրը, կողոպտում ու կեղեքում ժողովրդին, պահանջելով նրանից վճարելու նույնիսկ 748—750 թվականներին մահացածների հարկերը։ Աբու-Ջաֆարին համեմատաբար ուժեղ դիմադրություն են ցույց տալիս Կովկասյան լեռների շրջանում ապրող ծանարները և Վրաստանը։ Արաբները միայն մեծ զոհողությունների գնով են կարողանում գրավել Թիֆլիսը[2]։

[1] *Տե՛ս* Ղ. Ֆասմեր, *Հայաստանի ոստիկաններու ժամանակագրությունը առաջին Աբբասյանց օրով*, Թարգմ. Հ. Վ. Ինգլիզյանի, «Հանդես ամսօրյա», 1928, № 3—4, էջ 164։

[2] *Տե՛ս* П. К. Жузе, Азербайджан под властью арабов (VII—XI вв.), Институт истории и философии АН Азерб. ССР, фонд № 763, էջ 8—9։



Արաբների վայրագություններն այդ ժամանակ ամեն չափ ու սահման անցնում էին։ Պատմիչն ասում է, որ մարդիկ կամա թե ակամա կեղեքիչներին էին տալիս ամեն ինչ, սակայն, դարձյալ չէին կարողանում հետապնդումներից ու բռնություններից ազատվել։ Աննկարագրելի նեղություններից փրկվելու համար շատերն էլ փախչում էին օտար երկրներ։

Աբուլ-Ջաֆար էլ-Մանսուրի հեռանալուց հետո Արմենիան փոփոխաբար սկսում են կառավարել եղիդ իբն-Ուսայդ աս-Սուլամին (751/52—752/53) և Ալ-Հասան իբն-Կահթաբը (753—754)[1], որոնց կարճատև իշխանության տարիներին հայ ապստամբներն իրենց պայքարը շարունակում էին։

VIII դարի 40—50-ական թվականներին արաբական տիրապետության դեմ ուղղված ազատագրական ապստամբությունները չեն սահմանափակվել միայն Արևելյան Հայաստանով։ Այդ ապստամբության մեջ իրենց ակտիվ մասնակցությունն են ցույց տվել նաև Արևմտյան Հայաստանի և Փոքր Հայքի մի քանի շրջանների աշխատավորները, որոնց պայքարի ու սխրանքների հերոսական դրվագներին մենք հանդիպում ենք ասորի ու արաբ հեղինակների գործերում։

Արևմտյան Հայաստանի բնակչության հաջող պայքարն արաբների դեմ կապված էր նաև ռազմական այն ընդհանուր հաջողությունների հետ, որ այդ ժամանակ ձեռք էին բերել բյուզանդացիները արաբների նկատմամբ։ 746 թվականին բյուզանդացիները, Կիպրոսի մոտ արաբական նավատորմիղը գլխովին ջախջախելուց և պատերազմի հիմնական գործողությունները ցամաք տեղափոխելուց հետո, սկսեցին քայլ առ քայլ ետ մղել դեպի արևելք[2]։

Կոնստանդին V Կոպրոնիմն անձամբ իր զորքերով հարձակումը տանում էր Մելիտինե-Կարին ուղղությամբ և ձգտում որքան հնարավոր է կարինը շուտ գրավել, մի հանգամանք, որը մեկ անգամ ևս հաստատում է Կարինում կամ նրա շրջակայքում գտնվող հայկական ապստամբական ուժերի և բյուզանդացիների միջև նախօրոք գոյություն ունեցող պայմանավորվածությունը։ Բալաձորին, որ իր իսկ հավաստմամբ այս տեղեկությունները հավաքել է վերհիշյալ դեպքերի անմիջական ականատես ծերունիներից, ասում է, որ Կոնստանդին կայսրը, 750—751 թվականներին գրավելով Մելիտինեն, անհապաղ պատերազմական գործողություններ է ձեռնար-

[1] *Տե՛ս* П. К. Жузе, Азербайджан под властью арабов, էջ 8, *տե՛ս նաև* Յակուբի, «Բազմավեպ», 1957, № 11—12, էջ 262։

[2] *Տե՛ս* В. Бенешевич, Очерки по истории Византии, вып. 1, СПб, 1912, էջ 66—67։

կում նաև Կարինի ուղղությամբ։ Դեպի Կարին շարժվող զորքերին առաջնորդում էր կայսեր հայազգի զորավար Կուսանը։ Մուշեղ Մամիկոնյանի գլխավորած հայկական աղատագրական զորքերը այդ ժամանակ, հավանաբար, անմիջապես քաղաքում չէին գտնվում, որովհետև արաբ պատմիչը հիշատակում է, որ Կարինում իշխում էր Աբու-Քարիմը։

Կարինի հայ բնակիչները քաղաքը շրջապատած Կուսանի զորքերի նկատմամբ չափազանց բարյացակամ էին տրամադրված և հնարավոր ամեն ինչ անում էին նրանց հաղթանակն ապահովելու համար։ Քաղաքի դեմ ձեռնարկված ռազմական գործողությունների ընթացքում առանձնապես նշանակալից էր երկու հայ եղբայրների սխրագործությունը։ Իրենց կյանքը վտանգի ենթարկելով, նրանք կարողանում են պարիսպների մեջ խորշ բաց անել և հնարավորություն տալ Կուսանի զորքերին անարգել կերպով ներս մտնելու և պարտության մատնելու արաբներին։ Բալաձորիի մոտ հիշյալ դեպքերին նվիրված հատվածում կարդում ենք հետևյալը. «Անհավատների թագավորը պաշարեց Մելիտինե քաղաքի բնակիչներին, ավելից նրա պարիսպները և այնտեղ ապրող մուսուլմաններին գաղթեցրեց Միջագետք... Նա հայազգի Կուսանին ուղարկեց Կարինի դեմ, որը և նա պաշարեց։ Այն ժամանակ քաղաքում քիչ բնակիչներ կային, իսկ կառավարիչն էր Աբու-Քարիմը։ Կարինի բնակիչներից երկու հայ եղբայրներ պարսպի մեջ անցք բաց արին, դուրս եկան քաղաքից և այնտեղից բաց թողեցին Կուսանին, որը քաղաքը գրավեց, կոտորեց և գերի վերցրեց (բնակիչներից շատերին), քանդեց նրա պարիսպը...»[1]։

Կուսանը Կարինը գրավելուց հետո այնտեղից տանում է շատ ավար ու գերիներ։ Արաբների վրեժխնդրությունից վախենալով՝ բյուզանդական զորքերի հետ արևմուտք են գաղթում նաև մեծ թվով հայեր[2]։ Կուսանի մասին, Բալաձորիից բացի, հիշատակում է նաև Դիոնիսիոս Թել Մահարցին և Իբն ալ-Ասիրը[3]։ Համաձայն այդ հիշատակությունների, նա եղել է Չորրորդ Հայքի իշխանը և Կոնստանդին V Կոպրոնիմի արշավանքի ժամանակ մտել է բյուզանդական զորքերի շարքը ու գործել զորավար։ Դիոնիսիոս Թել Մահարցին, Կարինի դեպքերից բացի, Կուսանի գործունեության մեջ հիշատակում է նաև 754—755 թվականներին դեպի Անձիտ կատարած

[1] *Баладзори*, Книга завоевания стран, էջ 9—10, *տե՛ս նաև* Բալաձորի. «Հանդես ամսօրյա», 1903, № 6, էջ 179։

[2] *Տե՛ս* Դևոնդ, *էջ 129—130։*

[3] *Տե՛ս* Իբն ալ-Ասիր, *«Հանդես ամսօրյա», 1908, № 4, էջ 108։*



արշավանքների և Միջագետքի արաբական էմիր Ակիի դեմ նրա մղած կռիվների մասին[1]։

Բյուզանդական զորքերի հետ քաշվելուց մեկ տարի հետո միայն արաբները եղիդի ոստիկանության ժամանակ կրկին տիրանում են Կարին քաղաքին և բնակչության վրա դրված դլխահարկի ու պարհակային աշխատանքների միջոցով վերականգնում նրա ամրությունները։ Քաղաքի պաշտպանությունն ամրացնելու, ապա նաև մահմեդական բնակչության թիվն ավելացնելու համար արաբները հենց այդ ժամանակ բերում և քաղաքում վերաբնակեցնում են արաբ նոր վերաբնակիչներ իրենց ընտանիքներով[2]։ Կարինի պարիսպների ամրացումը շարունակվում է նաև հետագայում, իսկ 756—757 թվականներին արաբներն սկսում են փողով հետ գնել Կարինից և մյուս վայրերից բյուզանդացիների կողմից գերի տարված շատ արաբների ու վերադարձնել իրենց տեղերը[3]։

Արաբական երկարամյա տիրապետության ընթացքում Հայաստանը ոչ միայն ավերվում ու կողոպտվում էր այսպես ասած պաշտոնական անձանց կողմից, որոնց իշխանությունները տրամադրում էին զորք և տալիս հատուկ լիազորություններ, այլև իրենց գործըն էին տեսնում նաև առանձին անձինք, որոնք, անցնելով ջարդարարական մեծ ու փոքր հրոսակախմբերի գլուխ և օգտագործելով հարմար առիթները, ներխուժում էին Հայաստան, կողոպտում, ավերում էին երկիրը և գերիներով ու ավարով հետ գնում կրկին իրենց տեղերը։ Քանի որ նման երևույթները կանխելու ուղղությամբ արաբական իշխանությունները մեծ մասամբ ոչ մի միջոց ձեռք չէին առնում, այլ, ընդհակառակը, կողոպտիչներին քաջալերում և հովանավորում էին, դրա համար էլ ինքնապաշտպանական անհավասար պայքարում հայերը մնում էին մենակ ու անօգնական։

Այս տեսակետից անչափ ծանր վիճակի մեջ ընկավ Վասպուրականը, որը 760-ական թվականներից սկսած բազմիցս հարձակումների էր ենթարկվում Ատրպատականի արաբների կողմից։

Ատրպատականի արաբների առաջին ներխուժումը Վասպուրական տեղի ունեցավ 762 թվականին։ Հանկարծակի և ավազակային հարձակումով արաբական հրոսակախմբերը սկզբում որոշ հաջողություններ ունեցան և, գրավելով մի քանի շրջաններ, սկսեցին

[1] *Տե՛ս Denys de Tell-Mahre, էջ 56—57։*

[2] *Տե՛ս* Դևոնդ, *էջ 130։*

[3] *Տե՛ս Баладзори*, Книга завоевания стран, էջ 10։

անխնա կերպով կոտորել բնակիչներին, կողոպտել նրանց ունեցվածքն ու ավերել բնակավայրերը: Արաբական հրոսակախմբերին առաջնորդում էր Սուլեյման զորապետը:

Թշնամու կատարած չարագործությունները շատ շուտով խոր զայրույթ առաջացրին ոչ միայն ազետին անմիջապես ենթակա վայրերի, այլև Վասպուրականի հեռավոր շրջանների բնակիչների մեջ: Սուլեյմանի բանդայի դեմ առաջին լուրջ դիմադրությունը կազմակերպեցին Վասպուրականի նախարարներից Վահան Արծրունու երկու որդիները՝ Սահակ և Համազասպ Արծրունիները: Ղևոնդը վկայում է, որ թեև հայերի ուժերը թվական տեսակետից զիջում էին թշնամուն, բայց, այնուամենայնիվ, նրանք համարձակորեն գրոհի էին նետվում: Անհավասար ու արյունահեղ կռիվը գնալով թեժանում էր: Հայ մարտիկներն իրենց սիրած զորավարների օրինակով անընդհատ հարվածի տակ էին պահում թշնամիներին, իրենք էլ կրելով մեծ կորուստներ: Հայերի շարքերն արագությամբ նոսրանում էին: Թշնամին արդեն շրջապատում էր այն ջոկատը, որը Սահակի և Համազասպի գլխավորությամբ դեռ շարունակում էր կռվել: Սակայն շուտով Համազասպը, մահացու վերք ստանալով, ընկնում է ճակատամարտում: Սահակ Արծրունին, տեսնելով հարազատ հղբոր հերոսական մահը, այլևս ոչինչ հաշվի չառնելով՝ նետվում է արաբների ամենախիտ շարքերի մեջ ու ոչնչացնելով թշնամու զինվորներից շատերին, սուրը ձեռքին ընկնում է մարտադաշտում: Ավելորդ չենք համարում մեջ բերելու Ղևոնդի վկայությունը. «Իսկ նոքա,— ասում է պատմիչը,— իբրև տեսին զի նուազունք էին, ի մէջ արկեալք կամէին սպանանել: Իբրև տեսին Սահակ և Համազասպ զէհէնն զարթուցեալ ի վերայ, և զի ոչ ուստեք փախուստ գտանէր՝ սուր ի գործ արարեալ զբազմութիւն թշնամեացն խողխողէին, և ինքեանք դիմեալ ընդ տեղի մի ամբոխին զերծեալ ջանային:

Անդ կարելէր խոցեալ Համազասպ՝ անկանէր յերիվարէն. և պատեալ զնովաւ թշնամեացն սպանին: Եւ Սահակ իբրև եհաս զլսպանումն եղբօրն, յաղագս յաճախ սիրոյն զոր ունէր առ եղբայրն մատնէր զանձն ի մահ. և ի խոնարհ անկեալ յերիվարէն՝ կառփակոտոր առնէր. և ինքն զայրագին անձամբ մենամարտէր և զբազումս դիաթաւալ կացուցանէր, մինչև խնդրել զվրէժ արեան եղբօր իւրոյ: Եւ ապա պարտեալ ի մարտին վախճանէր: Եւ այնպէս վճարէին ի կենաց ընտիր նախարարքն, որք էին որդիք Վահանայ Արծրունւոյ»[1]:

[1] Ղևոնդ, էջ 130—131:



Համազասպի և Սահակի անօրինակ սխրագործությունները և նրանց հերոսական մահը ոտքի է հանում նաև Վասպուրականի մյուս նախարարություններին: Պայքարի այս երկրորդ շրջանում հայկական զորքերի հրամանատարությունն իր ձեռքն է վերցնում Համազասպի ու Սահակի մյուս եղբայրը՝ Գագիկ Արծրունին: Գագիկը, սակայն, այս անգամ չի կարողանում հասնել թշնամու արագությամբ ետ քաշվող հրոսակախմբերին և ձեռնունայն ետ է վերադառնում՝ սրտում պահելով սիրելի եղբայրների ծանր կորստի վրեժը: Գագիկի և Սուլեյմանի հանդիպումը տեղի է ունենում մի փոքր հետո և վերջանում արաբների ջախջախումով: Այս հանդիպումն ավարտվում է նաև գլխավոր չարագործ Սուլեյմանի սպանությամբ[1]:

Վասպուրականում կրած ծանր պարտություններից ու անհաջողություններից զայրացած՝ արաբները դեռ շարունակում էին նորանոր ուժեր նետել Գագիկի դեմ: Սկսված անհավասար ու արյունահեղ կռիվների ժամանակ «էին ոմանք ի նախարարացն Հայոց, որք մերժեալ լքին զժառանգութիւնս իւրեանց և փախստեայ անկան յաշխարհն Յունաց, ապաւինեալք առ կայսրն Կոստանդին»[2]: Իսկ Գագիկն իր զինակից նախարարների ու նրանց հեծելազորի հետ, կենտրոն ունենալով Վասպուրականի հայտնի Նկան ամրոցը, ոչ միայն շարունակում էր դիմադրել, այլև, ծանր պարտության մատնելով հակառակորդին, նրա մնացորդներին կարողանում է ետ շպրտել ու ներխուժելով Ատրպատական, սկսում է թշնամու ջախջախված զորախմբերին հարվածել իր իսկ բնում: Վասպուրականի զորքերն այս կռիվների ընթացքում ավերում ու ասպատակում են մի շարք գավառներ, հասնելով մինչև Հեր ու Ջարևանդ: Ամենուրեք, ուր մտնում էին հայ զինվորները, թշնամու հետ վարվում էին «ակն ընդ ական և ատամն ընդ ատաման» ձևով, նրան հատուցելով այն բոլոր աղետների փոխարեն, որ պատճառել էին անցած ժամանակներում: «Իսկ Գագիկ,— ասում է Ղևոնդը,— ժողովեալ առ ինքն զնախարարս աշխարհին նոցին հեծելովք, և ելեալ ասպատակ սփուռէր զկողմամբք Ատրպատական աշխարհին ի Ջարևանդ գաւառ, ի Բուատակս և Զիդռոյ, ի Տասուկ, ի Գազնակ, ի Յոմի, ի Սուրենապատ և յայլ ևս մերձակայ գաւառսն... պահանջէր և հարկս յաշխարհէն բազում տագնապաւ խոշտանգեալ. և զայր հասանէր ի գաւառն Հեր...»[3]:

Գագիկ Արծրունու հիշյալ արշավանքները որքան էլ հաղթական

[1] Տե՛ս Ղևոնդ էջ 131:
[2] Նույն տեղում, էջ 133:
[3] Ղևոնդ, էջ 133—134:

լինեին, այնուամենայնիվ ծանր էին նստում նաև հայերի վրա։ Հայերի դրությունն Ատրպատականում վտանգվում էր նաև նրա համար, որ նրանք, հեռանալով իրենց սահմաններից և կտրվելով թիկունքից, ենթակա էին թշնամու ուժերի մշտական հարձակմանը։ Եվ այդ հարձակումը չուշացավ։ Շուտով ուշքի գալով, արաբները կրկին համախմբում են իրենց ուժերը և հարձակվում Դագիկ Արծրունու վրա։ Այդ հարձակումը գլխավորում էր արաբական զորավար Ռահը։ Գլխավոր ճակատամարտը, որ տեղի է ունենում Հեր գավառում, ավարտվում է հայերի պարտությամբ և նահանջով։ Իսկ արաբները, ոգևորված իրենց հաղթանակով, առաջ են շարժվում ու ներխուժում Վասպուրական։ Նրանք իրենց ուժերն անընդհատ ավելացնում էին և ծանր դրության մեջ դնում Դագիկին։ Վասպուրականի հերոսամարտերը գնալով ավելի էին բորբոքվում։ Արաբների անընդհատ աճող ուժերի դեմ հայերը հարկադրված են լինում անցնելու պաշտպանողական և պարտիզանական կռիվների։ Ռահին շուտով փոխարինած Մուսա զորապետը կռվելու հետ միասին, հակառակորդին պարտության մատնելու համար, սկսում է գործադրել նաև խորամանկ ու խարդախ միջոցներ։ Կռիվների հիմնական ասպարեզը շուտով փոխադրվում է Նկանի շրջանը։ Մուսան, ելնելով իր ուժերի գերազանցությունից, կարողանում է շրջապատել Նկանը, որտեղ ամրացել էր Դագիկ Արծրունին։ Եվ այն, ինչին մեկ տարվա ապարդյուն պաշարումով չկարողացավ Մուսան հասնել, հեշտությամբ ձեռք բերեց խաբեությամբ ու սուտ խոստումներով։ Նա հաշտություն կնքելու պատրվակով կարողանում է իր մոտ հրավիրել Դագիկին, ձերբակալում է նրան իր երկու որդիների՝ Համազասպի ու Սահակի հետ միասին և ուղարկում խալիֆի մոտ։ Աքսորում Դագիկ Արծրունին մահանում է, իսկ նրա որդիներին մի կերպ հաջողվում է ազատվել գերությունից ու վերադառնալ հայրենիք։

Աբուլ-Աբասի մահվանից հետո, 754 թվականին խալիֆայական գահն անցավ Աբու-Ջաֆար էլ-Մանսուրին (754—775), որն իր գահակալությունը նշանավորելու և արքունիքի անվտանգությունն ավելի ապահով դարձնելու համար 762 թվականին Արաբական խալիֆայության մայրաքաղաքը Դամասկոսից տեղափոխեց Տիգրիսի գետափնյա ափը՝ Բաղդադ։

էլ-Մանսուրն առաջինն էր, որ արաբական զինված ուժերի կազմում ստեղծեց վարձու զորամասեր՝ կազմված Միջին Ասիայի ավազակաբարո թուրքական ցեղերից, որոնք հետագայում ճանապարհ բաց արեցին նաև իրենց ցեղակիցների մասսայական տեղափոխության համար դեպի Մերձավոր Արևելք։ էլ-Մանսուրից սկսած պա-



լատի, Բագավորի ու նրա ընտանիքի անդամների, ինչպես նաև բարձր պաշտոնավայրերի ու պաշտոնյանների ապահովությունը հանձնարարվում էր հիմնականում թուրքական վարձկաններին։

Նոր ու շքեղ մայրաքաղաքի կառուցումն ու վարձու զորքերի ստեղծումը խալիֆայության վրա նստում էին հսկայական ծախսեր, իսկ այդ ծախսերը կատարվում էին մեծ մասամբ հպատակ ժողովուրդների ու երկրների կեղեքման հաշվին։

Այդ ժամանակվանից սկսած արաբների քաղաքականության ծանրությունը առանձնապես զգալի էր նաև Արմենիայում ու Վասպուրականում, որտեղից եկած բողոքներն ու ահազանգումները հաշվի չէին առնվում խալիֆի ու նրա բարձրաստիճան պաշտոնյաների կողմից։ Արմենիայում ու Վասպուրականում հաճախակի մեկը մյուսին փոխարինող ոստիկաններն ու պաշտոնյաներն իրարից տարբերվում էին լոկ միայն նրանով, որ նրանք անընդհատ ծանրացնում էին հարկային լուծը և գործադրում կեղեքելու, կողոպտելու է՛լ ավելի վայրագ միջոցներ ու ձևեր։

Հայ ժողովրդի դրությունը հատկապես ծանրացավ VIII դարի երկրորդ կեսերին եզիդ իբն-Ուսայդ, Բեքիր (կամ Բակկար, Բագար) և Հասան իբն-Քահթաբա ոստիկանների ժամանակ։ Յակուբիի հիշատակություններից երևում է, որ 770-ական թվականներին արաբական իշխանությունների վիճակն Արմենիայում անշափ վտանգված էր ոչ միայն տեղի ժողովուրդների գրգռվածության, այլև խարների և ծանարների՝ արաբների դեմ ձեռնարկած բավականին ակտիվ գործողությունների, ապա նաև Արմենիայի արաբական զորքերի մեջ տեղի ունեցող խլրտումների պատճառով։ Արաբական զորքերի անկարգությունների լավագույն օրինակը նրանց կողմից պետական գանձարանի կողոպտումն էր, որի մասին Տաբարին մոտ ուղղակի ասվում է. «158 թ. (774—775 թթ.) Հայաստանի կառավարիչը գրեց Մանսուրին, որ զորքը խռովել է նրա դեմ, ջարդել գանձարանի դրանց փականքները և հափշտակել, ինչ որ այնտեղ կար»[1]։ Եվ ոստիկանը, միայն օգնական ուժերի շնորհիվ վերականգնելով կարգ ու կանոնը զորքի մեջ, կարողանում է փոխհատուցել իր պարտությունը և Անդրկովկասից դուրս քշել խաղարների հրոսակախմբերին։ Արմենիայի ոստիկանին նույն ձևով էլ հաջողվում է պարտության մատնել նաև ծանարներին ու գրավել Թիֆլիսը։ Խալիֆի կողմից Հասան իբն-Քահթաբային օգնության համար ուղարկված 20000-անոց բանակին առաջնորդում էր Ամբր իբն-Իս-

1 Տաբարի, «Հանդես ամսօրյա», 1906, № 9, էջ 274։



1287—21

մայիլ ալ-Հարիսին[1]։ Արմենիայում ու Հայաստանում արաբական իշխանություններին պաշտպանելու համար ուղարկված զորքերը, որոնց կազմում, աղբյուրների վկայությամբ, կային նաև թուրքական վարձկաններ, իրենց զազանություններով մեծամեծ աղետների, սովի ու ավերածության պատճառ դարձան ժողովրդի համար։ Արաբների նորանոր ճնշումներին ու հարստահարություններին ի պատասխան, հայ ժողովուրդը նույնպես զենքի դիմեց՝ քաջությամբ մեռնելը գերադասելով վտանգներով լեցուն ապրելուց։

Եզիդին փոխարինած Բեքիրի ոստիկանության ծանր ժամանակաշրջանի մասին խոսելիս Ղևոնդը հայերի ապստամբելու մտադրությունների մասին գրում է. «Յայսմ վայրի ճառեցից զվայրենամիտ ազգին Իսմայելի զխստասիրտ դառնութիւնն ի զլուխ ելեալ. քանզի իբրև տեսին նախարարք Հայոց զվտանգ տարակուսանացն հասեալ ի վերայ ինքեանց՝ եդին զոգի ի ձեռին իւրեանց և ձեռնամուխ եղեն չիրս, որ ոչ կարէին վճարել, վասնզի նուազունք էին։ Այլ սակայն լաւ համարեալ զմահ քաջութեամբ քան զկեանս վտանգաւոր՝ ձեռնամուխ եղեն չիրս ապստամբութեան, և ի բաց կացին ի հնազանդութենէն Իսմայելի»[2]։ Ղևոնդը պատմում է, թե ինչպես ապստամբության առաջին ազդանշանը տալիս է Հմայակ Մամիկոնյանի որդի Արտավազդ Մամիկոնյանը, որը 774 թվականին[3] իր սեփական զորագնդի հետ միասին գալով Դվին՝ ձևանում է իբրև արաբներին նվիրված անձնավորություն և այդ ճանապարհով իշխանությունների հաշվին պինդ իր մարդկանց։ Դրանից հետո Արտավազդն իր զորականներով հեռանում է Դվինից ու գնում Շիրակի Կումայրի գյուղը։ Այստեղ ականատես լինելով արաբների վայրագություններին, նա անմիջապես գործի է անցնում և շնշատակի հարձակումով ջարդում ժողովրդին կեղեքող ու հարստահարող հարկահավաքներին ու սպանում նրանց հրամանատարին։ Այդ հաղթանակից հետո Արտավազդ Մամիկոնյանը, հաշվի առնելով, որ իր ուժերը չեն նների արաբների դեմ հետագա պայքարը շարունակելու համար, վերցնում է ջախջախված արաբների թողած զենքն ու ունեցվածքը և յուրայիններով շարժվում դեպի Արևմտյան Վրաստան, որն այդ ժամանակ գտնվում էր Բյուզանդիայի տիրապետության տակ։ Արտավազդը այնուհետև Վրաստանից գնում է Բյուզանդիա և նշա-

[1] Տե՛ս Յակուբի, «Բազմավեպ», 1957, № 11—12, էջ 262—263, նաև Ռ. Թասմեր, Հայաստանի ոստիկաններու ժամանակագրությունը, էջ 158։

[2] Ղևոնդ, էջ 137—138։

[3] Ղ. Ալիշանը վերագրում է 770—771 թթ., տե՛ս նրա «Այրարատ», էջ 409, Ն. Ադոնցը՝ 771 թվականին, տե՛ս նրա «Վասիլ Հայազն», տե՛ս «Պատմական ուսումնասիրություններ», էջ 489։



նակվում Անատոլական թեմի ստրատեգ։ Այստեղ նա իր շուրջն է համախմբում նոր ուժեր և բյուզանդական զորքերի հետ մասնակցում արաբա-բյուզանդական կռիվներին[1]։

Երբ Կումայրիի դեպքերի լուրը հասնում է Դվին, ոստիկանն անհապաղ զինված ուժեր է ուղարկում Արտավազդի հետևից։ Այդ ուժերին գլխավորում էր արաբ զինվորականներից Մուհամեդը։ Ոստիկանի հարկադրանքով արաբական պատժիչ արշավախմբին է միանում նաև սպարապետ Սմբատ Բագրատունին՝ մի քանի հայ նախարարների հետ միասին։ Արաբները, հետապնդելով հայերին, կարողանում են նրանց հասնել Ախալցխայի դաշտում և, կոլի բռնվելով Արտավազդ Մամիկոնյանի ռազմիկների հետ մի կիրճում, հաղիվ կարողանում են նրանցից հետ խլել ավարի մի մասը։ Այս անհաջողությունից հետո ոստիկան Հասան իբն-Կահբաան ավելի է կատաղում և իր բարկության թաթը թափում խաղաղ բնակչության վրա։ Նա ամեն կողմ ուղարկում է ասպատակներ ու հատուկ զինված խմբեր, որպեսզի ժողովրդին ահաբեկեն ու հարկադրեն նորանոր հարկեր վճարել, որն էլ ավելի է զրդռում ժողովրդի զայրույթը արաբ կեղեքիչների դեմ։

Երբ Արտավազդ Մամիկոնյանի խիզախ գործողությունների լուրը տարածվում է երկրում, ամեն տեղ մարդիկ սկսում են մասսայաբար զենք վերցնել՝ արաբ հարստահարիչների դեմ կռվելու համար։ Շուտով երկրում մեկ սկսվում է հակաարաբական մի նոր շարժում, որը վեր է ածվում բացահայտ զինված ապստամբության։ Այս նոր ապստամբության կազմակերպման ու ղեկավարման գործում կենտրոնական դեմքը դառնում է Հրահատ կոմսի որդի Մուշեղ Մամիկոնյանը, որն աչքի էր ընկնում իր քաջությամբ ու խիզախությամբ և մեծ հեղինակություն էր վայելում։

Մուշեղ Մամիկոնյանը, իր շուրջը համախմբելով ապստամբության կողմնակից մյուս նախարարներին, անմիջապես անցնում է գործնական պայքարի։ Նա նախ իրեն ու իր կողմնակիցներին ազատ է համարում արաբների հանդեպ ունեցած որևէ կախվածությունից և ապա, հարձակվելով նրանց վրա, անխնա սկսում է ոչնչացնել։ Նա նույն կերպ է վարվում նաև նրանց հետ, ովքեր հանդգնել էին ներկայանալ իրեն ու պահանջել նրանից սպանված արաբների արյան գինը։

Իր ընտանիքը տեղափոխելով Արշարունյաց գավառի Հայւանի Արտագերս բերդը, Մուշեղ Մամիկոնյանն սկսում է իր մարդկանցով հարձակումներ գործել արաբական կայազորների ու հարկահավաք-

[1] Տե՛ս նույն տեղը։

ների վրա, ահաբեկել ու ոչնչացնել շատերին: Մուշեղ Մամիկոնյանի գործողություններն արդեն անհանգստություն էին պատճառում ոչ միայն Արշարունիքի ու նրան մոտիկ գտնվող, այլև հեռավոր շրջաններում ապրող արաբներին: Դրա համար էլ նրա դեմ շուտով սկսում են մարտական գործողություններ ձեռնարկել անգամ Կարինի արաբները: Ղևոնդը պատմում է, թե ինչպես Կարինից 200 հոգուց բաղկացած ընտիր մի ջոկատ, արհամարհելով հակառակորդին, խրոխտաբար շարժվում է դեպի ապստամբները: Մուշեղը վաղօրոք իմանալով թշնամու շարժման մասին, սկսում է աննկատ կերպով հետապնդել նրան: Եվ երբ արաբական ջոկատն իջևանում է Խարս գյուղի այգիներում, Մուշեղ Մամիկոնյանի զինվորները, անակնկալորեն մոտենալով նրան, զիշերով սկսում են փլցնել այգիների շրջապարիսպները, որոնք շարված էին առանց շաղախի և հեշտությամբ քանդվում էին: Փլուզման դղրդյունը և հայերի ազմուկ աղաղակը զիշերային խավարի մեջ սարսափ են ձգում արաբների վրա: Օգտվելով հանգամանքից, հայերն անմիջապես ներխուժում են թշնամու ճամբարը և սկսում մասսայական կոտորածը: Մեծ կրակատներ կրելով, արաբները զիմում են փախուստի: Մուշեղ Մամիկոնյանի զինվորները, գրավելով հակառակորդի ձիերը, զենքերն ու հանդերձանքը, արագությամբ հեռանում են գյուղից: Ձևոք բերված ամբողջ ավարը Մուշեղը բաժանում է իր մարտիկներին և այնուհետև շարժվում դեպի Բագրևանդ: Բագրևանդում նա ընդամենը 260 հոգով արաբներին մի այնպիսի ջարդ է տալիս, որ նրանց մնացորդները, հրաժարվելով հարկերը հավաքելուց, հապիվ փախչում են Դվին: Մուշեղ Մամիկոնյանի այս խիզախ ու հաղթական կռիվները ոչ միայն ոգևորում, այլև պայքարի են մղում հուսահատ ու անհամարձակ մարդկանց, որոնք, արագությամբ համախմբվելով նրա շուրջը, սուվարացնում են ապստամբների շարքերը: Պատմելով Բագրևանդի կռիվների մասին, Ղևոնդը գրում է. «Եւ իբրև այս այսպէս վճարէր՝ ժողովէին առ նա ամենայն վշտատեսք և վտանգեալ հոգւով»[1] մարդիկ: Պետք է ենթադրել, որ այդ «վշտատեսք» և «վտանգեալ հոգւով»-ները հիմնականում օտարի տիրապետության դառնության ամենամեծ բաժինը ճաշակող հասարակ ժողովրդի ներկայացուցիչներն էին:

Մուշեղ Մամիկոնյանի ապստամբության արձագանքները ժողովրդի մեջ, նրա համախոհների ու կողմնակիցների թվական աճը մի կողմից, իսկ մյուս կողմից արաբների խայտառակ պարտությունները մեծ իրարանցում էին առաջացրել Դվինում: Այդ ժամանակ արաբները տագնապով ոտքի են հանում Դվինի ամբողջ ուժերը, թվով 4000 մարդ և Ապունճիպի (Աբու-Նեջիբ) հրամանատարությամբ անմիջապես ուղարկում Բագրևանդ, որոնք, հասնելով այնտեղ, կանգ են առնում Բագավան գյուղում: Մուշեղ Մամիկոնյանը, որ հավանաբար տեղյակ էր թշնամու մտադրություններին, որոշում է թույլ չտալ նրան նախահարձակ լինելու: Նա կռիվն սկսում է 200 հոգով և զրոհելով արաբների վրա՝ շփոթեցնում է նրանց: Սակայն քանի դեռ հայերը հարվածում էին հակառակորդին ճակատ առ ճակատ, արաբները կարողանում էին ուժեղ կերպով դիմադրել, բայց երբ Մուշեղ Մամիկոնյանին օգնության եկած նոր ու թարմ ուժերը նույնպես կռվի մեջ մտան ու բազմապատկեցին իրենց համազորժակցված հարվածները, այն ժամանակ արաբները, նեղն ընկնելով, ոչ միայն կամաց-կամաց դադարեցրեցին իրենց դիմադրությունը, այլև խուճապահար սկսեցին փախչել: Մուշեղ Մամիկոնյանը, օգտվելով այս հանգամանքից, այլևս թույլ չտվեց հակառակորդին ուշքի գալու և իր հաղթական ջոկատներով սկսեց կրնկակոխ հետապնդել նրան: Հասնելով Կոգովիտ գավառի Արուճ ավանը, նա երկրորդ և էլ ավելի ջախջախիչ հարվածը տվեց արաբներին: Արուճի ճակատամարտում շատերի հետ արաբները կորցրեցին նաև իրենց զորապետին:

Բագրևանդի ու Արուճի ճակատամարտերը ապստամբների շարքերը խտացնելու և ազատագրական պայքարի մասնակիցների մարտական տրամադրությունները բարձրացնելու տեսակետից հսկայական նշանակություն ունեցան: Դրանից հետո ապստամբների ահ ու սարսափ համակել էր նույնիսկ Դվինի արաբներին, որոնք չէին համարձակվում մայրաքաղաքի ամրություններից դուրս գալ:

Արաբների կրած վերջին պարտությունների ազդեցությունը Դվինի արաբների վրա այսպիսի պատկերավոր ձևով է նկարագրում Ղևոնդը. «Եւ փախստեայքն անկան ի քաղաքն Դուին սակաւք ի բազմաց: Որոց ընդ առաջ լինէին համազգիքն արք և կանայք վայիւք և ճչօք, հող ի գլուխ լինելով, զճակատ հարկանէին և զօձիս պատառէին, և ողբովք և աշխարանօք լնուին ամենայն փողոցք լայնահիաս քաղաքին: Եւ ահ մեծ անկանէր ի վերայ Սառակինոս գնդին. և ոչ լինել նոցա համարձակ ելանել քան զքաղաքն, այլ անձնապահ լինէին յամրութեան քաղաքին»[1]:

Մուշեղ Մամիկոնյանի ապստամբությունը և նրա կողմից արաբներին հասցված հարվածներն այնքան մեծ ազդեցություն էին թողել, որ այդ դեպքերին արձագանքել են նաև արաբական հեղի-

[1] Ղևոնդ, էջ 139:



[1] Ղևոնդ, էջ 141:

նակները։ Բալաձորիի մոտ, օրինակ, այդ մասին կարդում ենք. «Ինձ ավանդել է Մուհամեդ իբն-Իսմայիլ ծերերի զրույցով, թե հայերը ապստամբեցան Հասան իբն-Քահթաբա Ալթայի կառավարության ժամանակ (Իբն Ուսայդ և Բակկար իբն-Մուսլիմ Օքայլի հետանալուց հետո) հայ Մուշեղի առաջնորդությամբ»[1]։ Նույնը հաստատում է նաև X դարի պատմիչ Իբն-Ֆաքիհը[2]։

Եթե Մուշեղ Մամիկոնյանի իրար հետևից ձեռք բերած մի քանի փայլուն հաղթանակները և արաբների ահաբեկումը մի կողմից ոգևորում էին ժողովրդին ու ազնվականներին, որոնք անընդհատ աոավարացնում էին ապստամբների շարքերը, ապա մյուս կողմից էլ ոմանց մեջ ստեղծում էին սեփական ուժերի գերագնահատման և հակառակորդինը թերագնահատելու անհեռատես տրամադրություն, որը, ինչպես հետո կտեսնենք, ապստամբության պարտության վճռական պատճառներից մեկը դարձավ։ Ապստամբության մասնակիցների շրջանում այդօրինակ խիստ վնասակար մտայնությունը դժբախտաբար տիրում էր նաև ղեկավարության մեջ, ներառյալ Մուշեղ Մամիկոնյանը։ Ղևոնդը, որ հիշյալ իրադարձություններին շատ լավ ծանոթ է, միանգամայն տեղին ասում է, որ հայ նախարարները սխալվում էին, երբ կարծում էին, թե իրենք այլևս անելիք չունեն, որովհետև արաբական տիրապետության օրերը հաշվված են։ «Ապա իբրև զայս յաջողուած գործոյ տեսանէին նախարարք Հայոց,— ասում է պատմիչը,— ամենեքեան միամտեալ ընթանային ըստ անմիտ խորհրդին. զի կարծէին լցեալ ժամանակ իշխանութեանն Իսմայելի»[3]։

Ապստամբության հաջող ընթացքն ու հաղթանակի հույսը ոգևորել և համակել էր շատ-շատերին։ Ղևոնդը պատմում է, որ այդ օրերին ապստամբության մասնակից ազնվականները սրբազան երդում էին տալիս «կենալ և մեռանել ընդ միմեանս» (ապրել և մեռնել միասին)։ Հաղթանակի և արաբական լծից ազատվելու հույսը մեծ խանդավառություն էր առաջացրել նաև աշխատավորական մասսաների՝ գյուղացիության մեջ, որոնք խումբ-խումբ գալիս միանում էին նախարարական կանոնավոր զորաբանակներին։ Պետք է ենթադրել, որ աշխատավորության դերը 774 թվականին սկսված ապստամբության մեջ շատ կարևոր է եղել, դրա համար էլ Ղևոնդն այդ երևույթն արձանագրել է հատուկ շեշտվածությամբ։ Վերոհիշյալ դեպքերի մասին պատմիչն ասում է. «Եւ ժողովեալ ամենայն

[1] Բալաձորի, «Հանդես ամսօրյա», 1904, № 2, էջ 55, Բալաձորի, թարգմ. Կ. Յուրյուճյանի, էջ 39, Баладзори, Книга завоевания стран, էջ 20։

[2] Տե՛ս Ибн-Факих, „Сборник материалов...“, т. 31, էջ 31։

[3] Ղևոնդ, էջ 141։



նախարարք Հայոց ի մի վայր՝ առնէին առ միմեանս երդմունս և դաշինս ուխտի՝ կեալ և մեռանել ընդ միմեանս։ Եւ այսպէս միաբանս առ միմեանս՝ արք իբրև Ր (5000) զի բազումք ի ռամիկ ժողովոց եկեալ խառնէին ի գունդն նոցա...»[1]։

Մինչև 774 թվականը Արաբական խալիֆայության դեմ Հայաստանում ծագած ապստամբություններից և ոչ մեկը չի ունեցել այն ժողովրդականությունն ու մասսայականությունը, ինչպիսին որ ուներ 774—776 թվականների ապստամբությունը։ Եթե նախորդ շրջաններում տիրողների դեմ պայքարը հիմնականում մղում էին նախարարներն իրենց դինված ուժերով, ապա այժմ, այդ բոլորի հետ միասին, պայքարին ակտիվորեն մասնակցում էին նաև ժողովրդական մասսաները։ Դրա համար էլ մենք նույնպես համամիտ ենք այն կարծիքին, թե 774—776 թվականների ապստամբությունը հանդիսանում էր համաժողովրդական բնույթի ապստամբություն[2]։

Արաբական լուծը թոթափելու օգտին բնակչության մեջ տարվում էր նաև բանավոր պրոպագանդա։ Ժողովրդի մարտական տրամադրությունը բարձրացնելու տեսակետից շատ կարևոր նշանակություն պետք է ունեցած լինեն, օրինակ, կրոնավորներից մեկի այն խոսքերը, թե «ահա մերձեալ է ժամանակ փրկութեան ձերոյ. զի այժմ ընդ հուսկ դարձցի գաւազան թագաւորութեանն ի տուն Թորգոմայ, առնուլ ձեօք զվրէժ յապղէն Իսմայելի. և դուք մի զանգիտիք յերեսաց նոցա, թե նուազունք իցէք, զի մի այր ի ձէնջ հալածեսցէ զհազարան, և երկուքն զբիւրսն...»[3]։

Ինչպես 744—754, այնպես էլ 774—776 թվականներին հայ նախարարական դասի ոչ բոլոր ներկայացուցիչներն էին հետևում ապստամբությանը։ Նրանց մեջ կային նաև այնպիսիները, որոնք կամ սկզբունքորեն դեմ էին ապստամբությանը և կամ, չկարողանալով վերջնականապես կողմնորոշվել, դեռևս տատանվում էին։ Ապստամբության նկատմամբ այսպիսի ոչ կայուն վերաբերմունք էին ցույց տալիս նաև Բագրատունիներից մի քանի հայտնի անձնավորություններ։

Եթե Բագավանի, Խարսի և Արուճի ճակատամարտերում ապրատամբների տարած հաղթանակներից հետո, հասարակական կարծիքի ճնշման տակ, Մուշեղ Մամիկոնյանին են միանում նաև սկզբում նույնիսկ հակառակ դիրք բռնած սպարապետ Սմբատ Բագրատունին

[1] Ղևոնդ, էջ 141։

[2] Տե՛ս Լ. Մելիքսեթ-Բեկ, Չորրորդ Հայքի 774—775 ԹԹ. գյուղացիական ապրատամբության պատմության շուրջը, ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, 1948, № 2, էջ 50։

[3] Ղևոնդ, էջ 141։

և նրա եղբայրը՝ Վասակը[1], ապա նրանց հայրը՝ Սահակի որդի Աշոտ Բագրատունին, հայոց իշխանաց իշխանն ու պատրիկը «ոչ միաբանեաց ի գործ վնասակար աղէտին. այլ և զնոսա ևս խրատէր ի բաց թողուլ զվնասակար կարծիսն...»[2]: Աշոտ Բագրատունու ինչպես նաև նրա հետ համամիտ մյուս հայ նախարարների հակառակությունը Մուշեղ Մամիկոնյանի ու նրա հետևորդների քաղաքական գծին չէր բխում նրանից, որ առաջինները չէին ցանկանում աղատագրվել արաբական լծից: Քաղաքական ինչպիսի համոզմունքներ էլ որ ունենային հայ աղնվականները, որ տոհմին էլ որ պատկանելու լինեին, նրանց համար բոլոր պայմաններում անկախ լինելը գերադասելի էր օտարի տիրապետությունից: Այստեղ հարցը միայն վերաբերում էր այդ լուծը թոթափելու եղանակներին ու ժամանակին: Ահա այս հարցում պետք է ասել, որ Բագրատունիները, կարծես, նույնպես հանգես էին գալիս ճիշտ կողմնորոշմամբ: Եվ եթե Մամիկոնյանները ամեն ինչ մի կողմ դրած, ուզում էին բոլոր հարցերը լուծել զենքի ու զինված պայքարի միջոցով, ապա Բագրատունիների մի մասը և նրանց հետևող հայ աղնվականներից ոմանք դեմ էին բռնի միջոցների կիրառմանը: Եվ այն ժամանակվա իրադրության պայմաններում չի կարելի մի կողմին պախարակել, իսկ մյուսին գովաբանել: Փաստորեն երկուսն էլ իրենց ծրագրերի մեջ չէին սխալվում: Բագրատունիների տատանվելն ու զգուշավորությունը եթե մի կողմից կանխում էր այսպես ասած անտեղի արյունահեղություններն ու ավերածությունները և ամեն ինչ թողնում էր ինչ-որ անորոշ ժամանակում լուծելու, ապա Մամիկոնյաններն ու նրանց կողմնակիցները, համարձակորեն նետվելով անհավասար պայքարի ասպարեզը, թեև մեծ զոհողությունների պատճառ էին դառնում, բայց դրանով նախ ժողովրդի մեջ բորբոքում էին հայրենասիրություն ու բարձրացնում նրա ազգային ինքնագիտակցությունը, որը ուրիշ պայմաններում կարող էր խամրել և, երկրորդ, այդ ապրատամբությունները, ինչպիսի արդյունքով էլ վերջանային կամ ինչ ուժգնություն էլ որ ունենային, Արաբական Տոհմ խալիֆայության տիրապետության հիմքերից ամեն անգամ մի-մի քար պակասեցնելով՝ մոտեցնում էին նրա վերջնական կործանումը, ապա ուրեմն բազմաթիվ ճնշված ու ստրկացված ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի, ազատագրության ժամը: Եվ որովհետև արաբական լծի դեմ ուղղված ապստամբություններն իրենց նպատակներով շատ առաջադիմական ու ժողովրդական լայն խավերի շահերից ելնող երևույթներ էին, դրա համար էլ այդ շարժումները, մանավանդ 774—776 թվականներին, Հայաստանում արժանանում էին մեծամասնության համակրանքին ու հովանավորությանը: Այդ երևում է բնկուզ նրանից, որ երբ Աշոտ Բագրատունին, դիմելով ապստամբներին, խորհուրդ էր տալիս նրանց հրաժարվել զինված պայքարից, ոչ ոք չհետևեց նրա խորհրդին, իսկ խորհրդատուն իր վարվելակերպով այսուհետև դիտվեց որպես կասկածելի և անհավատարիմ անձնավորություն:

Հայոց իշխանաց իշխանի այս խորհուրդները մերժելուց հետո ապստամբներն այնուամենայնիվ թույլ են տալիս մի շատ կարևոր սխալ: Ինքնավստահությունն ու անտեղի ինքնահանգստացումն այնքան ուժեղ էր նրանց մեջ, որ նրանք իրենց ուժերը միավորելու և երկրում մնացած արաբների դեմ բուռն հարձակման անցնելու փոխարեն մեծամտաբար անջատվեցին իրարից, ցրիվ եկան և, մեկնելով իրենց տեղերը, սկսեցին գործել առանձին-առանձին: Ղևոնդի տեղեկություններից երևում է, որ ապստամբության ուժերի ջլատումը մեծ չափով կապված էր նաև զեկավարության մեջ գոյություն ունեցող տարաձայնությունների և անմիաբանության հետ: Եվ այսպես, շուտով ապստամբության հիմնական ուժերից անջատվում և **Վասպուրական** են վերադառնում Համազասպ Արծրունին իր եղբայրների ու նրանց զորքերի հետ միասին, Աշոտ պատրիկի որդի **Վասակ Բագրատունին Ամատունի և Տրունի նախարարների հետ** քաշվեցին Դարույնքի և Մակուի կողմերը և այլն:

Հայերի շարքերում սկսված տարաձայնություններից փորձեցին անմիջապես օգտվել նրանց թշնամիները: Արաբները, տեսնելով, որ ապստամբները հանգստացած՝ ետ են գնում յուրաքանչյուրն իր տեղը, համարձակություն ստանալով, դուրս եկան Դվինից և սկսեցին ասպատակներ սփռել մայրաքաղաքի մոտակա գավառները և ահաբեկել, ոչնչացնել ու կողոպտել խաղաղ բնակչությանը: Այս ասպատակություններից հատկապես տուժում են Արարատյան հովտի Պաղնի, Թալին և Կողբ գյուղերը[1]:

Արաբների նշված արշավանքների ու ասպատակությունների մասին Ղևոնդից բացի հիշատակում են նաև ուշ շրջանի հեղինակները: Թե ինչպիսի աղետաբեր հետևանքներ են ունեցել այդ արշավանքները հայ աշխատավոր գյուղացիների համար, երևում է նրանից, որ այդ երեք գյուղերում հենց միայն սպանվածները կազմում էին 700 և գերի ընկածները՝ 1 200 հոգի[2]:

[1] Տե՛ս Ղևոնդ, էջ 142, 146:

[2] Նույն տեղում, էջ 142:

[1] Տե՛ս Ղևոնդ, էջ 144:

[2] Տե՛ս Հով. Դրասխանակերտցի, էջ 107, Ս. Անեցի, էջ 89, Մ. Այրիվանեցի, էջ 52:

Անհոգության և կազմակերպչական ոչ խիստ կարգ ու կանոնի հետևանքով ապստամբությանը մասնակից մի քանի նախարարների հետանալը, ապա նաև Դվինի արաբական ուժերի հետզհետե ակտիվանալը, լուրջ մտահոգություն էր պատճառում Մուշեղ Մամիկոնյանին և ստիպում նրան հետագա պայքարի համար նորանոր ուղիներ որոնել։ Ելնելով ստեղծված իրադրությունից՝ ապստամբներն իրենց ուժերի մեծ մասով սկսում են շարժվել դեպի Կարին։ Ինչպես երևում է, Մուշեղը նպատակ ուներ արևմտյան սահմանադլխին գտնվող այդ ամուր քաղաքը զարձնել իր կենտրոնը և կապ հաստատել Բյուզանդիայի հետ ու ստանալ նրա օգնությունը։ Սակայն ապստամբների այդ ծրագիրը չիրականացավ և քաղաքի պաշարումը երկարեց։ Կարինի պաշարումը և նրա համար մղվող կռիվները այսպիսի պատկերավորությամբ է նկարագրում Ղևոնդը. «...և համբարձեալ գնացին ի կողմանցն այնոցիկ պաշարել զքաղաքն Թէոդոսուպոլիս որ է Կարնոյ քաղաք։ Եւ պաշարէին զնա պատնիշօք, և զամենայն ժամանակս ձմերայնւոյն մարտ եդեալ կռուէին ընդ նմա, կանգնեալ զնովաւ մահարձան, և հատանէին վէտս ծակուց արտաքուստ ի քաղաքն. այլ ոչ ինչ կարացին ստանալ, բայց որչափ սակաւ ինչ ի քարէ մեքենայիցն, որովք սատակէին ի քաղաքէն»[1]։ Կարինի շրջապատումը տեղի է ունեցել 774—775 թվականի ձմռանը։

Մինչդեռ Հայաստանում դեպքերն ընթանում էին այսպիսի հաջորդականությամբ. Բաղդադում կենտրոնացվում էին խոշոր ուժեր՝ ապստամբների դեմ ուղարկելու համար։ Եվ միայն 776 թվականի սկզբներին արաբական 30000-անոց խորասանյան ընտիր զորքերը, կազմված մեծ մասամբ հեծելազորային գնդերից, արշավանքի դուրս եկան դեպի Հայաստան։ Արաբական այդ ստվար զորաբանակին առաջնորդում էր Ամիր իբն-Իսմայիլը։ Արաբական զորքերի գարնանային արշավանքի մասին Ղևոնդը գրում է. «Իսկ ի գալ գարնանայնոյն գունդ կազմէր իշխանն Իսմայելի ի վերայ երկրիս Հայոց, և գումարէր զընտիրս հեծելոց իբրև արս ԼՌ ընտիր երիվարաւ և կուռ սպառազինութեամբ ի տոհմէ Խորասան գնդին, և տայր ի ձեռս զօրավարի միոյ որում անունն էր Ամր»[2]։ Ղևոնդի հիշյալ վկայությունները հաստատում են նաև արաբական աղբյուրների տվյալները։ Բալաձորին, օրինակ, ասում է. «(Խալիֆ) Մանսուրը (754—775)... ուղարկեց նրան (Հասանին) օգնական ուժեր Ամրր իբն-Իսմայիլի գլխավորությամբ»[3]։

[1] Ղևոնդ, էջ 142։

[2] Նույն տեղը, էջ 145։

[3] *Баладзори*, Книга завоевания стран, էջ 20, տե՛ս նաև Բալաձորի, Թարգմ. Կ. Յուբելյանի, էջ 39, Բալաձորի, «Հանդես ամսօրյա», 1904, № 2, էջ 55, *Ибн-Факих*, „Сборник материалов...“, т. 31, էջ 31։



Արաբական զորքերի հրամանատարը, ռազմական գործի մեջ հմուտ լինելուց բացի, բծախնդիր և ամեն մի մանրուքի վրա ուշադրություն դարձնող մարդ էր։ Նա բացի այն, որ ամենայն մանրամասնությամբ հոգ էր տարել իր զորքի սպառազինության ու մարզվածության նկատմամբ, գալով Հայաստան, սկսեց անմիջապես մանրամասն տեղեկություններ հավաքել նաև հակառակորդի զորքերի քանակի, զորավարների ու մարտիկների միաբանության, նրանց սպառազինության և նման հարցերի մասին։ Այդ տեղեկությունների համաձայն էլ Ամիրն սկսեց դասավորել իր ուժերը և կազմել մարտական ծրագրեր։

Արաբական զորքերը, ներխուժելով Հայաստան, կանգ առան Վանա լճի հյուսիսում գտնվող խլաթ քաղաքում։ Աշոտ Բագրատունուն, որ հավանաբար խլաթ էր եկել ի պաշտոնե՝ արաբական զորավարին դիմավորելու համար, տեսնելով նրա ուժն ու պատրաստությունը, իր պարտքը համարեց ապստամբներին գաղտնի տեղեկացնելու նրա ձեռնարկումների ու մտադրությունների մասին և զգուշացնելու, որպեսզի նրանք հաշվի առնեն թշնամու գերազանցությունը և մի տեղում կենտրոնացնեն իրենց բոլոր ուժերը, զգույշ լինեն և խուսափեն որևէ անակնկալից։ Ղևոնդը վկայում է, որ հայոց իշխանաց իշխանը այդ բոլորի մասին ապստամբներին ուղարկել էր նաև գրավոր հատուկ բացատրություն։ Սակայն հայ նախարարներն Աշոտ Բագրատունու այդ միանգամայն անկեղծ, օգտակար և կարևոր աղդարարությունն անտեսեցին, մտածելով, որ նա ապըստամբության նկատմամբ հենց սկզբից ունեցած թերահավատության պատճառով ուզում է արաբական զորքերին փրկել հայերի հարձակման վտանգից և համակրանք շահել իշխանությունների մոտ։ «Իսկ Աշոտ որդի Սահակայ,—գրում է այդ մասին Ղևոնդը,—ոչ էր ի քաղաքին յայնմիկ՝ զկուցանէր զգալուստ թշնամեացն նախարարացն Հայոց, զի ուր ուրեք իցեն, ի մի վայր գումարեսցին կռել և մեռանել ի վերայ միմեանց։ Իսկ նոցա անհաւատալի թուեալ իրք հրովարտակին՝ համարէին, (թէ) դաւոց խորամանկութեամբ կամի փրկել զքաղաքն ի պաշարմանէ անտի, իբր մտերիմ զինքն ցուցանել Իսմայելացւոցն. և զայս առեալք ի միտ՝ անընկալք եղեն բանից նորա, այլ տակաւին զառաջի արկեալն իւրեանց խոկային կատարել»[1]։

[1] Ղևոնդ, էջ 145—146։

Արծրունին և նրա եղբայրները, որոնց հետ էին նաև Ամատունիների զորքերը։ Սրանք իրենց հերթին օգնության են կանչում նաև Սմբատ սպարապետի եղբորը՝ Վասակ Բագրատունուն և ուրիշների ու որոշում առաջին հարվածն ուղղել Արճեշի արաբների դեմ։ Հայ ավերվականության մի մասի ուժերը Վանա լճի արևելյան կողմով շարժվելով՝ հասնում են Առբերան և կանգ առնում Բերկրի գյուղում, ըսպասելով ուշացած զորագնդերին։ Ղևոնդի այն խոսքերը, թե «եւ զբազումս յաշխարհականացն հրապուրեալ զկնի ինքեանց՝ ի հետոռս տանէին ի մարտ պատերազմի»[1], ցույց են տալիս, որ Բերկրիում հայ նախարարներն ու զինվորականները դիմել են ժողովրդին՝ կոչ անելով նրան, միանալու իրենց հիմնական ուժերին և մասնակցելու Բշնամու դեմ մղվող ազատագրական պայքարին։ Այդ կոչը ջերմ արձագանք է գտնում բնակչության լայն խավերի մեջ և շուտով այս ու այն տեղերում կազմված ժողովրդական աշխարհազորային գնդերը, միանալով հիմնական զորքերին, սկսում են ակտիվորեն մասնակցել իրենց հարստահարողների դեմ մղվող հիմնական ճակատամարտերին, ամեն անգամ ցուցադրելով հայրենիքի ազատագրության ու ժողովրդի անկախության նկատմամբ իրենց անսահման սերն ու նվիրվածությունը։ Սակայն դեռ Արճեշին չհասած, հայկական ապստամբական բանակի հրամանատարությունը թույլ է տալիս երկրորդ և փաստորեն բախտորոշ նշանակություն ունեցող սխալը։ Ճանապարհին ինչ-որ մեկը զորքի հրամանատարությանը տեղեկացնում է, որ արաբները, հավանաբար նախօրոք իմանալով հայերի մտադրությունները, մեծ ուժեր են բերել Արճեշ և կազմ ու պատրաստ սպասում են նրանց, ուստի հետագա առաջշարժումը ընդհանրապես վտանգավոր է և անհրաժեշտ է ձեռք առնել նախազգուշական միջոցներ։ Ղևոնդն ասում է, որ Համազասպ Արծրունին ոչ միայն այդ լուրը բերողին չի հավատում, այլև նրան ծեծում ու տանջում է որպես ստախոսի և շարունակում է առաջ շարժվել դեպի Արճեշ։

Մինչև Համազասպ Արծրունու Արճեշ հասնելը արաբական պրավար Ամիրը իր զորքերով նախօրոք եկել և դարանակալել էր քաղաքի շրջակայքում։ Մինչդեռ հայերը գործից միանգամայն անտեղյակ՝ սկսեցին գրոհել քաղաքի ամրություններ վրա, այն ժամանակ անսպասելիորեն արաբները թաքստոցից դուրս եկան և հարձակվեցին հայերի վրա։

Հայկական զորքերի դրությունը սկսեց վատանալ հենց սկզբից, որովհետև նրանք փաստորեն ընկել էին Ամիրի և քաղաքում գըտ-

[1] Ղևոնդ, էջ 146։



նվող զորքերի արանքում ու հարձակման էին ենթարկվում մի քանի կողմերից։ Առաջին հարվածն իր վրա ընդունեց հայոց այրուձին, որը կարճատև դիմադրությունից հետո հարկադրված եղավ նահանջել։ Այդ բանն էլ ավելի ոգևորեց արաբներին, որոնք, ուժեղացնելով իրենց ճնշումը, շատ նեղ դրության մեջ գցեցին հայկական հեռահար զորամասերին, որոնք մեծ մասամբ կազմված լինելով համարյա անզեն կամ վատ զինված և անվարժ գյուղացիական աշխարհազորայիններից՝ չկարողացան այլևս դիմադրությունը շարունակել և, պարտվելով ու մեծ կորուստներ տալով, սկսեցին անկանոն կերպով նահանջել։ Արաբներն այնուհետև սկսեցին հետապնդել ցաքուցրիվ նահանջող հայկական զորամասերին մինչև Տայ գյուղը։ Արճեշի ճակատամարտը շատ պատկերավոր է նկարագրված Ղևոնդի մոտ, որը և անհրաժեշտ ենք համարում մեջ բերելու ամբողջությամբ։ Խոսելով Ամիր իբն-Իսմայելի Արճեշի իրենց հայրենակիցներին օգնության գալու մասին, պատմիչը գրում է. «Եւ նոյա խաղացեալ բազմութեամբ զօրացն՝ գայր և դարանամուտ լինէր մերձ ի գիւղն Արճէշ։ Եւ մինչդեռ մարտնչէին զունդն Հայոց ընդ ամբոխին՝ վազվազակի յարեան դարանամուտքն ի թագստենէն և պիղան ի վերայ զօրացն Հայոց, և ի փախուստ դարձուցեալ՝ կոտորեցին զմեծ մասն հետևակ զօրուն որ յաշխարհաբնակ մարդկանէն էին. քանզի էին մերկք և առանց զինուց և անհմուտք պատերազմի. որք միանգամ հանդիպեալք դառն լուսոյ աւուրն այնորիկ, ի սուր անողորմ մաշեցին զնոսա. և ոմանք առ վտանդի տարակուսացան գետավէժ և ծովահեղձ լինէին»[1]։

Անզգուշությունից և տակտիկական որոշ սխալներից բացի Ճակատամարտում հայերի պարտության մեջ որոշակի դեր է խաղացել նաև Բշնամու ուժերի զգալի գերազանցությունը, որը հատկապես շեշտված է Ղևոնդի մոտ։ Որ իսկապես Արճեշի ճակատամարտում ազատագրական բանակի կազմում աշխարհազորայինները զգալի տոկոս են կազմել, այդ երևում է նաև Ղևոնդի կողմից նրանց կորուստների հիշատակությունից. միայն սպանվածների թիվը 1500 էր։ Այս ճակատամարտում զոհվում են նախարարներից չորս հոգի՝ երեքը Տրունյաց տոհմից, իսկ մեկը՝ Ուրծից։ Անշուշտ, հայերի ընդհանուր կորուստներն ավելի շատ պետք է եղած լինեին։ Պատմիչը հիշատակում է միայն դրա մի մասը։ Այստեղ արաբները նույնպես կորուստներ են ունեցել և գուցե ավելի շատ, սակայն նրանց կորուստները, որքան էլ ծանր լինեին, թվապես մի քանի անգամ մեծ բանակի համար էական նշանակություն ունենալ չէին

[1] Ղևոնդ, էջ 147։

կարող, մանավանդ, որ այդ բանակը ճակատամարտից դուրս էր եկել որպես հաղթող կողմ: Դրա համար էլ Ամիրը հայկական ապըստամբական մեկ խմբավորումը լիկվիդացնելուց հետո անմիջապես ձեռնամուխ եղավ պատերազմական նոր գործողությունների՝ ընդդեմ Կարինը շրջապատող հայկական ուժերի:

Արաբական զորքերի հրամանատարը այս արշավանքը նույնպես նախապատրաստում էր շատ մեծ խնամքով: Երբ նա իր զորքերը Արճեշից դուրս է բերում գլխավոր ճանապարհի վրա և, անցնելով Ապահունիք գավառը, մտնում է Բագրևանդ, այստեղ, Արձնի դյուղում նա զինվորներին դադար է տալիս և բազմաթիվ արհեստավորների, մասնագետների ու զինագործների միջոցով բուռն կերպով սկսում է բանակի սպառազինությունն ու մարտական պատրաստությունը մի վերջին անգամ էլ կարգի բերել: «...քանզի նոյն ժամայն շունչ կլեալք՝ դարձեալ յարձակէին,— ասում է այդ մասին Ղևոնդը,— ուշ եղեալ ելանել յառաջին պողոտայն արքունեաց ընդ գաւառն Ապահունեաց: Հասանէին ի գաւառն Բագրեւանդ ի գիւղն Արձնի. անդ հարկանէին զբանակս իւրեանց առ եզերբ դետոյն որ ընդ նա անցանէ. և ընդ նոսա ամենայն արուեստականք և յարդարիչք զինուց, որք պատրաստէին զէնս և անօթս պատերազմի»[1]: Ուրեմն «արքունի պողոտան», որով շարժվում էին արաբները, անցնում էր Արճեշ—Ապահունիք—Արձնի հայտնի ուղեգծով: Այստեղ դժվարը Արձնիի ճշգրիտ տեղադրությունն է, մանավանդ որ նրա մասին այլ հիշատակություններ չեն պահպանվել: Դրա համար էլ առայժմ ընդունելի է Ղ. Ալիշանի այն ենթադրությունը, թե այդ գյուղը պետք է գտնվելիս լիներ Բագրևանդի արևելյան կողմում, Բագավանի սահմանի մոտ, Արածանիից հարավ, նրա ձախակողմյան վտակներից մեկն ու մեկի ափին[2]:

Արճեշի մոտ հայերի կրած պարտությունը որոշակիորեն աղդեց նաև Կարինը պաշարող մյուս զորամասերի ճակատագրի վրա և փոխեց ապստամբության ընթացքն ընդհանրապես: Արաբները, որ մի քանի ամսվա շրջապատումից շատ նեղն ընկնելով՝ պատրաստվում էին անձնատուր լինել, փրկվեցին միայն այն ժամանակ, երբ Մուշեղ Մամիկոնյանը, լսելով Արճեշի դեպքերի մասին, անսպասելիորեն վերացրեց քաղաքի շրջապատումը, շտապեց իր զինակիցներին օգնելու և դեպի արևմուտք շարժվող արաբներին հակահարված տալու: Թե որքան մեծ է եղել Մուշեղ Մամիկոնյանի հետևորդների անձնուրացությունն ու նվիրվածությունը ազատագրական պայքարի սրբազան սկզբունքներին, այդ երևում է նրանից, որ նրանք,

[1] Ղևոնդ, էջ 147—148:

[2] Տե՛ս Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 525:



ինչպես Ղևոնդն է ասում, թեպետև կարող էին դրանից հետո հեշտությամբ հեռանալ դեպի բյուզանդական տերիտորիան և փրկվել, բայց այդպես չարեցին, որովհետև մեռնելը գերադասում էին անպատիվ ապրելուց: Դրա համար էլ նրանք, նույնիսկ իմանալով, որ հակառակորդը մի քանի անգամ գերազանցում է իրենց, ջերմորեն արձագանքելով Մուշեղ Մամիկոնյանի որոշմանը, մեկ մարդու նման դուրս եկան թշնամուն ընդառաջ: Պատմիչներից Ղևոնդն է միայն, որ հիշյալ դեպքերը նկարագրում է մեծ ջերմությամբ և, միաժամանակ, անկողմնակալությամբ. «Եւ իբրև եհաս զրոյց պարտութեան գնդին ի քաղաքն Կարնոյ՝ յայնժամ լքաւ սիրտ արանց պատերազմողաց զօրացն Հայոց. և թոյլ եառն պաշարման քաղաքին: Եւ թէպէտ կարօղ էին մեկնել ի կողմն Յունաց և ապրեցուցանել զանձինս ի չարաչար ապիրատութենէ զրպարտողացն՝ սակայն լաւ համարեցան զմահ անձանց քան տեսանել զկորուստ աշխարհիս և զանպատուութիւն...: Եւ զայս զմտաւ ածեալ՝ թէպէտև նուազունք էին քան զթիւ թշնամեացն՝ ինքնակամ յօժարութեամբ դիմեցին ի վիշտն»[1]:

Մուշեղ Մամիկոնյանի զորքի տակ կային ընդամենը 5000 ոազմիկներ: Հայկական այդ զորաբանակը ապրիլի սկզբներին, Կարինից անցնելով Բասեն և մտնելով Բագրևանդ, հասնում է Արձնի և, բաժանվելով երկու մասի, վաղ առավոտյան հենց երթից անմիջապես դիմում է հարձակման: Հայկական զորաբանակի համարձակ ու շեշտակի զրոհը թշնամու խիտ ու բազմամարդ գնդերի մեջ մեծ խուճապ է առաջացնում և արաբները, չդիմանալով ճնշմանը, բռկըսում են փախչել, իսկ «...զօրացեալ գունդն Հայոց՝ հարկանէին բազում հարուածս, և ի փախուստ դարձուցեալ զթշնամիսն սատակէին զբազումս»: Հայ զինվորները «...մինչ ի սպառ գումարեալք ոգւով չափ՝ մարզէին զմիմեանս բանիւք ասելով. «քաջութեամբ մեռցուք ի վերայ աշխարհիս մեր և ի վերայ ազգիս, և մի տեսցեն աչք մեր կոխան ոտից լեալ պղծալից արանց զսրբարանս մեր... այլ նախ՝ ընդդէմ մեր լիցի սուր թշնամեացն. և ապա լիցի զոր կամիցին. փոխանակեսցին անձինք մեր ընդ ճշմարտութեան հաւատոյս և մի ընդ երկրաւոր զբաղմունս. զի այս մահ՝ ժամանակական և կեանքն՝ յաւիտենական»[2]:

Ճակատամարտի ամենավճռական պահին, սակայն, դոռթյունը փոխվում է ի վնաս հայերի: Արաբները, որ մինչ այդ նեղվելով՝ սկսել էին նահանջել, հանկարծակի կանգ են առնում, արագությամբ լարելով իրենց բոլոր ուժերը, անցնում հակահարձակման և,

[1] Ղևոնդ, էջ 148:

[2] Նույն տեղում, էջ 149:

հենվելով իրենց թվական խիստ մեծ գերակշռության վրա, սկսում են հաջողությամբ եւ մղել հայերի գրոհները ու ծանր կորուստներ պատճառել նրանց: Ճակատամարտն Արձնիում վերջանում է միայն հայկական հեծելազորային ու հետեւակային զորագնդերի լիակատար պարտությունից հետո, հավանաբար օրվա վերջում: Այդ պարտությունը կրկնակի ծանր էր, քան Արճեշինը և այն հայերի վրա նստեց 3000 քաջերի կյանք: Արձնիի ճակատամարտում նույնպես մեծ ակտիվությամբ հանդես եկան ժողովրդական աշխարհազորային հետեւակային գնդերը: Այստեղ կորուստների հիմնական բաժինը թեև ընկնում էր նրանց վրա, սակայն մեծ էր նաև սպանվածների թիվը նախարարական զորքերի մեջ և հենց իրենց՝ հայ ազնվականության շարքերում: Ղևոնդը բարեբախտաբար պահպանել է այդ տեղ հերոսի մահով ընկած հայոց նախարարներից ու իշխաններից մի քանիսի անունները: Սպանվածների թվում էին սպարապետ Սմբատ Բագրատունին և նրա նիզակակից Սահակ Բագրատունին, Մուշեղ և Սամվել Մամիկոնյանները, Վահան Գնունին և ուրիշներ, որոնց բոլորի անունները պատմիչի համար մեկ առ մեկ թվարկելը դժվար էր: Եվ, վերջապես, այս ճակատամարտում իր զինակիցների հետ ընկավ նաև ապստամբության գլխավոր հրամանատար, քաջարի զորավար Մուշեղ Մամիկոնյանը: Մուշեղի մահն այնքան կարևոր իրադարձություն էր, որ այդ հատկապես հիշատակվում է նաև արաբական աղյուսակներում[1]:

Արճեշի և Արձնիի կռիվների մանրամասն նկարագրություններին հետ միասին Ղևոնդը նրանց թվականները թեև չի հիշատակում, բայց նա առաջինն է, որ նշում է այդ ճակատամարտերի օրերը: Ըստ նրա, Արճեշի ճակատամարտը տեղի է ունեցել «...յամսեանն հրոտից, որ օր չորրորդ էր ամսոյն յաւուր շաբաթու»[2], իսկ Արձնինը՝ «...ի նոյն ամսեանն ի հրոտից ԺԴ յաւուր երկուշաբթուջ»[3]: Այսինքն՝ երկրորդ ճակատամարտը տեղի է ունեցել առաջինից տասը օր ուշացումով: Ստորև մեր հաշվումները ցույց կտան, որ Ղևոնդի մատնանշած օրերն ընդհանրապես սխալ են, իսկ ամսաթվերը՝ ճիշտ:

Մուշեղ Մամիկոնյանի և նրա զինակիցների հերոսական պայքարի ու նահատակության արձագանքները մենք գտնում ենք նաև ուշ շրջանի հայ հեղինակների մոտ, որոնք, հակառակ Ղևոնդի, նույնիսկ փորձում են որոշել նաև հիշյալ դեպքերի թվականները: Սամվել Անեցին, օրինակ, դրանք շարադրում է 775, իսկ Մխիթար Այրիվանեցին՝ 771 թվականի տակ: Հիշյալ ճակատամարտերի թվականների և օրերի հարցում խիստ հակասական կարծիքի են նաև հետագա ուսումնասիրողները[1]:

Հարցի ճիշտ լուծումը, սակայն, հնարավոր է գտնում գտնել Սամվել Անեցու և Մխիթար Այրիվանեցու այն հիշատակության օգնությամբ, որ Մուշեղի ու նրա զինակիցների նահատակությունը տեղի է ունեցել զատկի օրը: Եվ սա շատ կարևոր հանգամանք է այն առումով, որ եթե ժամանակի ընթացքում ճակատամարտերի օրերն ու տարեթվերը կարող էին մոռացվել կամ շփոթվել, ապա դրանք զատկով հիշելը ավելի հեշտ կլիներ: Սամվել Անեցու մոտ այդ մասին կարդում ենք. «Մուշեղ Մամիկոնեան՝ և Սամուէլ այլովք ազատագունդ զօրօքն Հայոց՝ կոտորեցան յաւուրս զատկին, յԻսմայելացւոցն»[2]: Իսկ Մխիթար Այրիվանեցին ուղղակի ասում է, որ «զՄուշեղ, զՍամուէլ և զայլ ազատագունդս հայոց կոտորեցին ի զատկին»[3]: Եվ քանի որ զատիկն անպայման ընկնում է կիրակի օրը, ուրեմն ճակատամարտի համար Ղևոնդի մատնանշած շաբաթ և երկուշաբթի օրերի սխալ լինելն ավելի ակնառու է դառնում: Այս բոլոր հիշատակություններից, սակայն, մի բան պարզ է. Արճեշի և Արձնիի կռիվները տեղի են ունեցել 770-ական թվականների կեսերին և ճակատամարտերից մեկն էլ համընկել է զատկին: Եթե կարողանանք որոշել, թե 770-ական թվականների կեսերին կոնկրետ որ տարվա զատիկն է ընկնում հրոտիցի 4-ին կամ 14-ին, ուրեմն կորոշվեն նաև այդ ճակատամարտերի ճշգրիտ թվականն ու ամսաթվերը:

Ըստ Ֆ. Գինցելի և Բ. Թումանյանի՝ հուլյան տոմարով 773—776 թվականներին զատկի օրերը հետեւյալներն են. 773 թվականին՝ ապրիլի 18-ը, 774 թվականին՝ ապրիլի 3-ը, 775 թվականին՝ մարտի 25-ը և, վերջապես, 776 թվականին՝ ապրիլի 14-ը[4]: Այնուհետև՝ 773, 774, 775 թվականների հրոտիցի 4-ը համընկնում է ապրիլի 15-ին, այսինքն՝ ոչ զատկի օրերին, մինչդեռ 776 թվականին ճիշտ

[1] Տե՛ս Ղ. Ալիշան, Յուշիկք հայրենեաց Հայոց, հ. Ա, Վենետիկ, 1869, էջ 211, Մ. Օրմանյան, Ազգապատում, մասն Ա, էջ 889, Հ. Մանանդյան, Ժողովրդական ապստամբությունները Հայաստանում արաբական տիրապետության դեմ, էջ 18, Ն. Ադոնց, Վասիլ Հայազն, էջ 489 և այլն:

[2] Սամվել Անեցի, էջ 89:

[3] Մխիթար Այրիվանեցի, էջ 52:

[4] Տե՛ս F. K. Ginzel, Handbuch der mathematischen und technischen Chronologie, Leipzig, 1914, III Band, էջ 413, Բ. Թումանյան, Հայ աստղագիտության պատմություն, Երևան, 1964, էջ 125—126:

[1] Տե՛ս Баладзори, Книга завоевания стран, էջ 20, Բալաձորի, Թարգմ. Կ. Յուբյուճյանի, էջ 39, Բալաձորի, «Հանդես ամսօրյա», 1904, № 2, էջ 55, Ибн-Факих, „Сборник материалов...“, т. 31, էջ 31:

[2] Ղևոնդ, էջ 147:

[3] Նույն տեղում, էջ 151:

և Հիշտ ընկնում է ապրիլի 14-ի, կիրակի օրը: Ուրեմն Սամվել Անեցու և Մխիթար Այրիվանեցու ակնարկը փաստորեն վերաբերում է ոչ թե Արձնիի, այլ Արճեշի ճակատամարտին:

776 թվականի ապրիլի 14-ի կամ հայոց ՄԻԴ թվականի հրոտիցի 4-ի Հիշտ լինելը կարելի է ստուգել նաև այլ եղանակով: Հայոց ՄԻԴ թվականի նավասարդի 1-ն ընկնում է հուլյան տոմարով 775 թվականի մայիսի 17-ին[1], որին գումարելով նավասարդի 1-ից մինչև հրոտիցի 4-ն եղած օրերի քանակը, որը հավասար է 333-ի, կստանանք 776 թվականի ապրիլի 14-ը[2]: Իսկ հրոտիցի 14-ը համապատասխանաբար կլինի 776 թվականի ապրիլի 24-ը, որը ոչ թե երկուշաբթի, այլ չորեքշաբթի օր է: Ուրեմն Արճեշի ճակատամարտը տեղի է ունեցել 776 թվականի ապրիլի 14-ին կիրակի, պատկի օրը, իսկ Արձնիինը՝ նույն թվականի ապրիլի 24-ի չորեքշաբթի օրը:

Արճեշի և մանավանդ Արձնիի ճակատամարտն ուղղակի ճակատագրական նշանակություն ունեցավ հայկական մի քանի նախարարական տոհմերի և առանձնապես Մամիկոնյանների ու Կամսարականների համար: Այդ ժամանակներից հետո Մամիկոնյանները փաստորեն, իրենց երկարամյա ու բազմավաստակ գործունեությունից հետո, դուրս մղվեցին Հայաստանի պատմության թատերաբեմից, իսկ նրանց շառավիղները, անցնելով Բյուզանդիա, իրենց ռազմական ու քաղաքական եռանդուն գործունեությունն ըստ կրսեցին ծավալել օտարների համար: Թեև նրանց ներկայացուցիչները Բյուզանդիայում հասան շատ բարձր դիրքի, ձեռք բերեցին մեծ պաշտոններ և գահ, սակայն նրանք իրենց ժողովրդի և հայրենիքի համար այլևս օգտակար չեղան և փաստորեն մեկընդմիշտ օտարացան:

Հայ ժողովրդի կրած ծանր կորուստներն այդ երկու ճակատամարտերում Ղևոնդը այսպես է նկարագրում. «Եւ յայնժամ սասանկապէս յաճախէին ողբք և աշխարանք աշխարհիս Հայոց. վասնի առաջնորդք մեծք և զօրագլուխք պատուականք բարձան ի միջոյ ի միում վայրկենի ժամու. և երկիրս առհասարակ ի խոր տիրութեան ըմբռնեալ՝ կոծէին կոծ մեծ և աւաղէն զվախճան նախամարդկացն հզօրաց և քաջաց. քանզի մնացին թափուր յօդնականութենէ նոցա, և մատնեցան ի ձեռս զազանաբարոյ և անհամբոյր թշնամեացն»[3]:

[1] Տե՛ս F. Ginzel, էջ 409, Խ. Սյուզմելյան, Տոմարագիտության ընդհանուր եկեղեցական և քաղաքական, Վենետիկ, 1818, էջ 21:

[2] Տե՛ս Բ. Թումանյան, Տոմարական հաշվումներ, ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, Հասարակական գիտություններ, № 5, 1964, էջ 56:

[3] Ղևոնդ, էջ 151:



Արձնիի ճակատամարտում հայերի պարտության գլխավոր պատճառները մի քանիսն էին: Դրանցից առաջինն ուժերի այն մեծ թվական տարբերությունն էր, որ գոյություն ուներ երկու կողմերի միջև: Արաբները փաստորեն վեց անգամ գերազանցում էին հայերին: Նույնը պետք է ասել նաև զորքերի սպառազինության և մարտվածության աստիճանի մասին: Եվ, վերջապես, մեկ հանգամանք ևս բացասաբար անդրադարձավ հայկական բանակի վրա. դա հոգնածությունն էր, որովհետև փաստորեն Մուշեղ Մամիկոնյանը հենց ուղղակի երթից իր զինվորներին գրոհի տարավ թշնամու վրա:

774—776 թվականների ապստամբությունը մասսայական, ժողովրդական ապստամբություն էր, որի նմանը, ինչպես ճիշտ կերպով նշել է Ղ. Ալիշանը, 451 թվականից հետո հայ ժողովրդի պատմության մեջ չէր եղել[1]:

774—776 թվականներին արաբական բռնակալական լծի դեմ ոտքի ելան նաև Հայաստանի հարավ, հարավ-արևմտյան մասերի լեռնային շրջանների բնակիչները: Այդ վայրերի բնակչության ծանր պրպտության, ապա նաև արաբական տիրապետության դեմ բռնկված ապստամբության մասին, դժբախտաբար, հայ և արաբ հեղինակները ոչինչ չեն հաղորդում: Այդ դեպքերի արձագանքները մենք գտնում ենք միայն VIII դարի ասորական պատմիչ Դիոնիսիոս Թել Մահարցու մոտ, որի տեղեկություններին անդրադարձել է պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը[2]:

Այդ ապստամբության հիմնական թատերաբեմը համարելով Ջորրորդ Հայքը, ասորական հեղինակը միաժամանակ գրում է, որ «այն վայրը, ուր ծագեց ապստամբությունը, գտնվում էր լեռնեբում, հյուսիսային շրջանում, որ կոչվում էր Տուտիս, որի ազգաբնակությունը բաղկացած էր ասորիներից և ուրտիացիներից, որոնք բաժանած ունեին այդ շրջանը»[3]:

Հայտնի է, որ Ջորրորդ Հայքը, որպես բյուզանդական պրովինցիա, կազմվել է Հուստինիանոս I կայսեր 536 թվականի վարչական վերափոխությունների ժամանակ: Այդ երկրամասը, որ համարյա համապատասխանում էր հին Ծուփաց աշխարհին, տարածվում էր Արևմտյան Տիգրիսի վերին և Արածանիի ստորին հոսանքների շրջանում: Հյուսիսում նրան սահմանակից էր Բարձր Հայքը, արևելքում Տուրուբերանը, արևմուտքում Փոքր Հայքը և հարավում՝ Մի-

[1] Տե՛ս Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 525:

[2] Տե՛ս Լ. Մելիքսեթ-Բեկ, Ջորրորդ Հայքի 774—775 թթ. գյուղացիական ապստամբության պատմության շուրջը, ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, № 2, 1948:

[3] Նույն տեղում, էջ 51:

ջագետքը[1]։ 702 թվականից սկսած Չորրորդ Հայքն անջատվեց Բյուզանդիայից և մտցվեց Արաբական խալիֆայության Արմենիա երկրամասի մեջ[2], որպես վերջինիս Չորրորդ Հայքի բաղկացուցիչ մասը։ Եթե Չորրորդ Հայքի տեղադրությունն ու պատմական ճակատագիրը որոշակիորեն մեզ հայտնի է, ապա նույնը չի կարելի ասել ասորական հեղինակի մոտ նույն առիթով հիշատակվող Տուտիսի շրջանի մասին։ Չորրորդ Հայքում հայերից բացի, հին ժամանակներից սկսած, ապրում էին նաև ասորիներ, հույներ, հրեաներ, կապադովկիացիներ և մասամբ նաև պարսիկներ։ Թեև VIII դարում այստեղ մուտք են գործում արաբները, իսկ այնուհետև՝ սելջուկ-թուրքերը, թաթար-մոնղոլները, ապա նաև՝ թուրքերը, սակայն բնակչության մեծամասնությունը մինչև վերջերս էլ կազմում էին հայերը[3]։ Ուրեմն, քանի որ այդ բոլորը վերաբերում են Չորրորդ Հայքին, մենք ոչ մի հիմք չունենք, ինչպես այդ արել է պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը, անքննադատ կերպով ընդունել Դիոնիսիոս Թել Մահարցու այն հիշատակությունը, թե, իբր, VIII դարում Տուտիսի «ազգաբնակությունը բաղկացած էր ասորիներից և ուրտիացիներից»[4]։

Ասորական «Ժամանակագրության» մեջ հիշատակվող Տուտիսի ևոթադրական տեղադրությանը, մեր կարծիքով, կարող են օգնել երկու հանգամանք։ Դրանցից մեկն այն է, որ այդ վայրը «գտնվում էր լեռներում, հյուսիսային շրջանում» մյուսն այն, որ նրա բնակիչները ապրում էին տնտեսական ծանր դրության մեջ, որովհետև հողազուրկ էին և ևթակա կալվածատերերի ու արաբ հարստահարիչների կեղեքումներին[5]։ Այս երկու հիշատակություններից դուրս հնարավոր լինի Տուտիսի անվան տակ հասկանալ պատմական Խութեի շրջանը, որը թեև Չորրորդ Հայքի մեջ չէր մտնում, բայց հարմարյա նրան սահմանակից էր արևելքից և որի բնակիչները բնակլիմայական պայմանների պատճառով իրոք որ խստակյաց էին ու աղքատ։ Խութեցիների առանձնացած լինելն իրենց շրջապատից նրանց մեջ դարերի ընթացքում կերտել էր կենցաղի, սովորույթների ու բարքաոի մի այնպիսի ընդգծված տարբերություն, որ ուսումնասիրողները նույնիսկ հակվել են խութեցիների մեջ տեսնելու հին

1 Տե՛ս Թ. Հակոբյան, Ուրվագծեր Հայաստանի պատմական աշխարհագրության, Երևան, 1960, էջ 225։

2 Տե՛ս Լ. Մելիքսեթ-Բեկ, Չորրորդ Հայքի..., էջ 49։

3 Տե՛ս Թ. Հակոբյան, Ուրվագծեր Հայաստանի պատմական աշխարհագրության, էջ 227—228։

4 Լ. Մելիքսեթ-Բեկ, Չորրորդ Հայքի..., էջ 51։

5 Տե՛ս նույն տեղը, էջ 53։



ուրարտացիների հետնորդներին։ Եվ եթե խութեցիների տարբերությունը շրջակա մյուս վայրերի հայերից շատ ուժեղ կերպով պահպանվել էր նույնիսկ XIX դարում, ապա պարզ է, որ նրանց այդ հատկանիշները ավելի ընդգծված ձևով պետք է դրսևորված լինեին ասորի հեղինակի ապրած ժամանակներում, որի հիման վրա էլ գուցե նա այդ լեռնաբնակներին անվանել է ուրտիացիներ, այսինքն՝ ուրարտացիներ։ Այսպիսով, մեր եզրակացությունները հանգում են նրան, որ Դիոնիսիոս Թել Մահարցու կողմից հյուսիսի լեռնային շրջանում հիշատակվող Տուտիսը հավանաբար նույն Խութն է։

«Ժամանակագրության» հեղինակի ցուցմունքներից երևում է, որ Հայաստանի այդ լեռնային շրջանի աշխատավորության ապրուստամբության հիմնական պատճառը նույնպես արաբների հարկային ծանր քաղաքականությունն է եղել, ժողովրդի դաժան կեղեքումներն ու հարստահարումը, մի բան, որին ևթակա էր ամբողջ Հայաստանի և Արմենիայի բնակչությունը հիշյալ ժամանակշրջանում։ «...Երբ խղճուկները տեսան, որ այս բացահայտ թալանը չի դադարում,— ասվում է այդտեղ,—որ (այս հարկահավաքները) չունեին ոչ ամոթ և ոչ երկյուղ աստծուց, որ բոլոր թշվառությունների նախապատճառը հաշիվ չէր պահանջում նրանցից այն չարագործությունների մասին, որ նրանք շարունակ կատարում էին երկրում, ապստամբեցին»։ «Մենք տալիս ենք,—ասում էին նրանք,—և՛ մեզ, և՛ մեր հարևանների համար. մենք վճարում ենք մեր հարկը և նույնիսկ այն, որ մենք չպիտի մուծեինք։ Ախր երբ պիտի կշտանան նրանք մեր մասով։ Մենք այլևս ոչինչ չենք տա, քանի որ չգիտենք որտեղից վերցնենք, որպեսզի տանք»[1]։ Այնուհետև ժամանակագիրը պատմում է, որ արաբական կառավարիչը ապստամբ գյուղացիներին հնազանդեցնելու համար հավաքագրելով բաղաքաբնակ բոլոր ոճրագործներին ու մարդասպաններին՝ իր տեղակալի առաջնորդությամբ ուղարկում է նրանց դեմ։ Արաբների առաջին հարձակումը, սակայն, ձախողվում է, որովհետև «գյուղացիները իրենց կողմից մեծ վնաս պատճառեցին բոլոր մարդասպաններին և գողերին, որոնք նրանց մեջ էին գտնվում, և նրանց հարազատներին այնպիսի չարիք հասցրին, որ լեզուն ի վիճակի չէ այն նկարագրելու»[2]։ Դրանից հետո կռիվների հիմնական թատերաբեմը դառնում է այն վայրը, որտեղ արդյունահանվում էր կապար, երկաթ և արծաթ։ Գյուղացիական ջոկատները թեև կռվում էին քաջաբար, բայց իվերջո նրանք պարտվում և տեղի են տալիս թշնամիների արնախում ոհմակներին։ Արաբները հաղ-

1 Լ. Մելիքսեթ-Բեկ, Չորրորդ Հայքի..., էջ 54։

2 Նույն տեղում։

թելուց հետո շատ դաժան վարվեցին իրենց զոհերի հետ, որի նկարագրությունը մենք բերում ենք օտար հեղինակի իսկ խոսքերով. «Այսպես, ուրեմն, նրանք շարժվեցին խզճուկների դեմ, և մեծ ձյան շնորհիվ, որը ծածկել էր հողը, վերջիններս ի վիճակի չէին փախչելու։ Իսկ եթե այդ նրանց հաջողվում էր, հետամտողները վրա էին հասնում և ձյան մեջ գցում թե՛ նրանց, և թե՛ նրանց գույքը, կանանց և երեխաներին։ ...Այս ավազակները ոչնչացրեցին մարդկանց անասնության բոլոր առարկաները. այրեցին ամբողջ փայտեղենը, ջարդեցին կավե բոլոր ամանները... Նրանք չխնայեցին ո՛չ անկողին, ո՛չ գոներ, ո՛չ աթոռներ, ո՛չ լագաններ... Նրանք փշրեցին սափորները, գինու ամանները, կաթսաները, կուժերը։ Խնելով այս անոթներից որքան կարելի էր, ապա մնացածը նրանք ամբողջովին թափում էին հողի վրա։ Իսկ եթե ամանը հողումն էր թաղված և հնարավոր չէր այն կոտրել, նրանցից մեկը՝ վերցնելով նիզակը՝ տակը ծակում էր և գինին թափվում էր հողի մեջ։ Նույնը նրանք կատարեցին և մեղրի նկատմամբ. ուտում էին որքան կարող էին, իսկ մնացածը դետնի վրա էին թափում։ Նրանք ջարդեցին մեղվափեթակները...

Նրանք համարձակվեցին նույնիսկ ոտնձգություններ անել եկեղեցու նկատմամբ, որը նրանք կողոպտեցին. նրանք հափշտակեցին եկեղեցական գրքերը և աստվածապաշտության բոլոր իրեղենները...

Նկարագրված աղետները տեղի ունեցան այս վայրում։ Նրանք քշեցին կանանց, որոնք մարդասպանների պես շղթայված էին, հավաքեցին ամբողջ տավար-ոչխարը և հետը տարան։ Նրանք այսպիսով անցան բազմաթիվ գյուղերով, քշելով գյուղացիներին, կողոպտելով և իրենց հետ տանելով բնակիչներին»[1]։ Ուրեմն արաբները չեն բավարարվում միայն ավերածություններ գործելով, կողոպտելով ու կոտորելով խաղաղ բնակչությանը։ Նրանք, իրենց սովորության համաձայն, գերեվարում են նաև կենդանի մնացածներից շատերին, որպեսզի հետո վաճառեն որպես ստրուկների։

774—776 թվականների հայկական ապստամբական շարժումները ճնշելուց հետո արաբական իշխանություններն ավելի մեծ եռանդով սկսեցին ամրացնել իրենց դիրքերը Հայաստանում։ Այս ուղղությամբ ձեռնարկված առաջին և ամենակարևոր միջոցառումն արաբական նորանոր ցեղերի տեղափոխումն ու վերաբնակեցումն էր Հայաստանում։

Հայաստանում հաստատված արաբական ցեղերի առաջնորդներն ու զինվորական գործիչները, անցնելով նստակեցության, շուտով յուրացրին նաև տեղական ֆեոդալական հարաբերությունները։ Թեև Հայաստանում ստեղծված արաբական ֆեոդալական էմիրությունների պարագլուխներից ոմանք հարմար առիթների դեպքում երբեմն միանում էին հայ նախարարներին և կռվում խալիֆայական կենտրոնական իշխանության դեմ, սակայն դա կրում էր մեծ մասամբ ժամանակավոր և թուլցիկ բնույթ։ Այդ էմիրությունները, որպես խալիֆայության վասալական իշխանություններ, ամբողջ պես արտահայտում էին նրա շահերը, համատեղ կողոպտում հայ ժողովրդին, աջակցում ոչնչացնելու հայկական նախարարությունները։

VIII դարի երկրորդ կեսերին Արաբական խալիֆայության ռազմա-քաղաքական դիրքերը սպառնալիքի տակ էին նաև Արմենիայի մյուս մասերում։ Արաբական պատմիչ Յակուբին վկայում է, որ VIII դարի վերջերին ծանր հարկերի պատճառով ամբողջ Արմենիան բռնկված էր ապստամբական շարժումներով[1]։ Քաղաքական դրության լարվածության արդյունք էր նաև այն, որ հենց միայն Հարուն ալ-Ռաշիդ խալիֆի օրոք (786—809) Արմենիայում իրար հաջից փոխվել էին 15-ից ավելի կառավարիչներ։ 790-ական թվականներին ոստիկաններ Ֆադլ իբն-Յահյա ալ-Բարմակիի (790—792) և Օմար իբն-էլյութ ալ-Կինանիի (793—794) ժամանակ արաբական տիրապետության դեմ ապստամբության նոր փորձեր կատարեցին Աղվանքի ու Ատրպատականի Շիրվանի, Պարտավի, Բայլականի և Արդաբիլի շրջաններում։ Յակուբին այս մասին ասում է, որ ապստամբությունների ժամանակ Պարտավի բնակիչները, հաղթելով արաբներին, նույնիսկ կռվում կարողանում են սպանել հարկահավաք Աբու-Սահաբին[2]։ Այնուհետև նույն հեղինակը հաստատում է, որ պարտավցիների ելույթներից հետո խալիֆայական կենտրոնական իշխանության դեմ խռովություն են բարձրացնում Հայաստանի և Վրաստանի բնակիչները[3]։

VIII դարի վերջին տասնամյակների ամենախոշոր ապստամբություններից էր նաև Փայտակարանում ծագած ապստամբությունը 793—794 թվականներին։ Փայտակարանի ապստամբությունը ղեկավորում էր Աթա էլ-Մուկաննան։ Մուկաննան իր հետևորդներով, Փայտակարանի վարդանակերտ քաղաքի մոտ ջախջա-

[1] Լ. Մելիքսեթ-Բեկ. *Ջորրորդ Հայքի...*, էջ 56—57։

[1] *Տե՛ս Якуби, П. К. Жуже*, Азербайджан под властью арабов (7—11 вв.), Институт истории и философии АН Азерб. ССР, фонд № 763, էջ 32։

[2] *Տե՛ս* Յակուբի, «*Բազմավեպ*», *1957, № 11—12, էջ 264*։

[3] *Տե՛ս նույն տեղը, էջ 264, 266*։

խելով արաբական ուժերին, շարժվեց նաև դեպի Հայաստան և գրավեց Սյունիքի Կիլաբ բերդը[1]։ Փայտակարանի ապստամբներին միացան նաև հայերը և նրանք, համատեղ ուժերով մանելով Արաբատյան հովիտը, հասան Դվին ու չորս ամիս շարունակ շրջապատված պահելով արաբական իշխանությունների այդ կարևոր կենտրոնը, ետ գնացին առանց քաղաքը գրավելու։

Ժողովրդական ապստամբությունները քսան տարի շարունակ չէին դադարում նաև Աղվանքից հարավ-արևելք՝ Դեյլեմում և Տաբարիստանում։ Այստեղի լեռնականները 779, 783—785, ապա 797—798 թվականներին հերոսական պայքար էին մղում արաբ հարստահարիչների դեմ՝ նրանց հասցնելով ծանր հարվածներ։

VIII դարում Աղվանքում, Ատրպատականում և Հարևան շրջաններում արաբական տիրապետության դեմ բռնկված ապստամբությունները շուտով հիմք դրեցին համաժողովրդական մի այնպիսի հուժկու շարժման, որի դեմ տասնամյակներ շարունակ համառ պայքար մղելով, խալիֆայությունը հազիվ կարողացավ փրկվել կործանումից։ Այդ շարժումը պատմության մեջ հայտնի դարձավ խուրամիդյան, իսկ հետո՝ բաբեկյան շարժում անունով։ Ենթագրվում է, որ խուրամիդ անունն առաջացել է պարսկերեն խուրամ բառից, որ նշանակում է լուսավոր, փայլուն։

Խուրամիդների շարժումն սկսվել է 808—809 թվականներին Աղվանքում և Թալիշի լեռներում[2]։ Ապստամբության մեջ շուտով ընդգրկվեցին Աղվանքի ու Թալիշի լեռնականները, զարադաղցիները, դեյլեմիդները, գիլանցիները և այլն։ Շարժումը հենց սկզբից ընդունեց նաև դասակարգային բնույթ, քանի որ խուրամիդներն իրենց զենքն ուղղում էին արաբ ու տեղական շահագործողների դեմ ևս[3]։ Խուրամիդների կենտրոնը քաղաք-ամրոց Բալն էր իսկ ղեկավարը՝ Շահրակի որդի Ջավիդանը, որն ուներ մանր-ազնվականական ծագում։ Աղվանքում Ջավիդանից բացի խուրամիդյան շարժման մեջ կարևոր դեր էր կատարում նաև Իմրանը։

Խուրամիդները չէին ընդունում միապետական ստածու գոյությունը։ Նրանք գտնում էին, որ աշխարհը հավերժական է, հավերժ է նաև մարդկանց հոգին։ Ընդունում էին հոգեփոխությունը։ Նրանք

[1] Տե՛ս Ն. Ադոնց, *Բագրատունյաց փառքը*, «Պատմական ուսումնասիրություններ», Փարիզ, 1948, էջ 61։

[2] Տե՛ս *З. И. Ямпольский*, Восстание Бабека, Баку, 1941, էջ 12։

[3] Տե՛ս „Очерки по истории Азербайджана", „Известия" АН Азерб. ССР (отделение общественных наук), вып. 1, № 1, 1946, Баку, էջ 51։



հիմնավորապես ժխտում էին կրոնական ծեսերը, աղոթքներն ու հոգևորական դասի գոյությունը[1]։

816 թվականին Ջավիդանի սպանությունից հետո շարժման առաջնորդը դարձավ Բաբեկը[2], որը հսկայական դեր կատարեց այդ շարժման տարածման, ապստամբական խոշոր և կազմակերպված ուժերի ստեղծման ու արաբների դեմ կանոնավոր ու հերոսական պայքար մղելու բնագավառում։ Խուրամիդյան շարժումը, Բաբեկից սկսած, կոչվեց նրա անունով։ Բաբեկի հետևորդներն սկզբում խուրամիդյան շարժման ամենահետևողական ու համարձակ ներկայացուցիչներն էին։ Բաբեկի ուժն ու հաջողությունները պայմանավորվում էին նրանով, որ նա ամենից առաջ հենվում էր գյուղացիական աշխատավորական ու շահագործվող դասակարգի վրա, որոնց արաբական պաշտոնական պատմագրության ներկայացուցիչները, որպես կանոն, անվանում են ավազակներ, կուլարաներ, խառնակիչներ, մարդասպաններ ու պիղծ ուսմունքի հետևորդներ[3]։

Ապստամբություններով բռնկված շրջաններում մանր ու միջակ հողատերերից ու ազնվականներից շատերը նույնպես միանում էին Բաբեկին, հույս ունենալով, որ հաղթանակից հետո Բաբեկը կվերականգնի նրանց ազնվականական իրավունքները և ետ կվերադարձնի արաբների կողմից գրավված հողերը։

IX դարի 20-ական թվականներին Բաբեկը, մեկը մյուսի հետևից ջախջախելով արաբական զորագնդերին, գրավել էր համարյա ամբողջ Ատրպատականը և Աղվանքի մի մասը ու շեշտակի հարվածներով հասել մինչև Պարսկաստանի խորքերը՝ Խորասան։

821 թվականին արդեն Մամուն խալիֆի ժամանակ (810—833) Խորասանում ստեղծվեց այսպես կոչված զավառական անկախություն, որտեղ գերիշխելու էին Թահիրյանները։ Իսկ 825 թվականին Համադանում, Սպահանում և Նեհավենդում հիմնվեց Դուլեֆյան դինաստիան։ Պարսկաստանում, Սպահանի շրջանում Բաբեկի օրինակով, արաբների դեմ ոտքի ելան աշխատավորական նորանոր զանգվածներ, որոնց առաջնորդում էր Ալին, որը մի քանի կռիվներում պարտության մատնելով արաբներին՝ իր 25000-անոց զորա-

[1] Տե՛ս *М. Томара*, Бабек, Москва, 1936, էջ 23, *Сиасет-Намэ*, Книга о правлении вазира 11-ого столетия Низам ал-Мулька, пер. проф. Б. Н. Заходера, Л.—М., 1949, էջ 228—229։

[2] Տե՛ս *З. И. Ямпольский*, էջ 12։

[3] Տե՛ս *Абул-Фарадж*, пер. П. К. Жузе и Тер-Григоряна, տե՛ս Институт истории и философии АН Азерб. ССР, фонд № 578—579, էջ 1, фонд № 1088, էջ 1, *Абу-Тахир ал-Макдиси*, пер. П. К. Жузе и Тер-Григоряна, фонд № 1088, էջ 84։

բանակով եկավ ու միացավ Բաբեկին[1]: Բաբեկի հետևորդների թիվն աճում էր օրըստօրե: Արաբական պատմիչ Աբուլ-Ֆարաջը խոստովանում է, որ «նրա մարդկանց թիվն այն աստիճան շատացել էր, որ հենց միայն հետևակայինները»[2]: Ուրիշները խոստովանում են, որ Բաբեկի հզորությունն անընդհատ մեծանում էր, իսկ շարժումն ընդունում մեծ չափեր[3]: Իսկ Մասուդին Բաբեկի մասին ուղղակի գրում է, որ նա մի մարդ էր, որը «Քիչ էր մնում ոչնչացներ (Աբասյաններին) թագավորությունը և հողագնդի երեսից ջնջեր ամբողջ կրոնական ուսմունքներ»[4]:

Բաբեկի շարժումը շուտով ընդգրկում է նաև Պարսկաստանի արևմտյան-կենտրոնական շրջանները, Համադանը և Հայաստանի արևելյան մասերը: Շարժումն իր ծաղկման շրջանում զբաղեցնում էր մոտավորապես չորս հարյուր հազար քառակուսի կիլոմետր տարածություն, այսինքն՝ մի տերիտորիա, որն ավելի մեծ էր, քան Իտալիան ու Լեհաստանը միասին վերցրած[5]:

Բաբեկի ապստամբությանն ակտիվորեն մասնակցում էին Հայաստանի Սյունյաց աշխարհի գյուղացիներն ու նախարարների մի մասը: Ապստամբության հաղթական վերելքի ժամանակ ազնվականները երբեմն վախից, իսկ երբեմն էլ իրենց իրավունքների ու արտոնությունների վերականգնման ակնկալություններով, օգնում և աջակցում էին շարժման ղեկավարին: Սակայն երբ շահագործող դասակարգերի համար հայտնի դարձավ բաբեկյան շարժման սոցիալական էությունը, նրանք սկսեցին աստիճանաբար հեռանալ և, իվերջո, բացահայտ թշնամական դիրք բռնել Բաբեկի նկատմամբ:

Բաբեկյանները, օտարերկրյա հարստահարիչների դեմ կռվելու հետ միասին, պայքարում էին նաև սոցիալական անհավասարության և շահագործման դեմ ընդհանրապես: Նրանք պահանջում էին գույքի և հարստությունների հավասար բաշխում հասարակության բոլոր անդամների միջև: Վերջին հանգամանքը բավական էր, որպեսզի բաբեկյանների դեմ արաբական իշխանությունների հետ միասին, հանդես գային նաև տեղական ֆեոդալները, այդ թվում նաև հայ նախարարները: Որպես գյուղացիական շարժում, Բաբեկի

[1] Տե՛ս *Сиасет-Намэ*, էջ 225:

[2] *Абул-Фарадж*, фонд № 1088, стр. 1.

[3] Տե՛ս *Ахмед ибн-Дауд ад-Динавари*, пер. П. К. Жузе и Тер-Григоряна, Институт истории и философии АН Азерб. ССР, фонд № 1088, էջ 3:

[4] *Масуди*, տե՛ս П. К. Жузе, Азербайджан под властью арабов, стр. 36.

[5] Տե՛ս *М. Томара*, Бабек, էջ 164:



շարժումը նույնպես հասարակությունը վերափոխող հսկայական ծրագիր չուներ: Այդ է պատճառը, որ Բաբեկի ապստամբությունը վերջին վերջո դատապարտված էր պարտության: Երկարատև կռիվներում բավական մեծ կորուստներ կրելուց հետո ապստամբների շարքերն աստիճանաբար նոսրանում էին, իսկ 837 թվականին, այլևս չկարողանալով դիմադրությունը շարունակել թշնամու հսկայական ուժերի դեմ, Բաբեկը, հարկադրված, տեղի է տալիս և փորձում անցնել Բյուզանդիա, սակայն բռնվում ու հանձնվում է արաբական իշխանություններին: Աղատագրական ու սոցիալական շարժման առաջնորդական հերոսին տանում են Բաղդադ և ծանր խոշտանգումներից հետո, 838 թվականի հունվարին գլխատում:

Բաբեկի ապստամբությունը թեև խեղդվեց արյան մեջ, բայց Արաբական խալիֆայությանը նրա հասցրած հարվածները ծանր ու խորտակիչ եղան: Արաբական պատմիչները հաստատում են, որ ավելի քան քսանամյա կռիվների ընթացքում Բաբեկն արաբներից սպանել էր 250 000 մարդ[1]: Իսկ Մասուդին անգամ այդ թիվը նվազագույն հաշվումներով հասցնում է կես միլիոնի[2]: Էլ չենք ասում, որ սկզբնաղբյուրներում չի խոսվում նյութական ու տեխնիկական այն հսկայական կորուստների մասին, որ ունեցել էին արաբներն այդ կռիվների ընթացքում:

Բաբեկի հերոսական ապստամբության արձագանքները տարածվել էին խալիֆայության ամբողջ տիրապետության մեջ ու տարբեր հանել մյուս ժողովուրդներին: 829—832 թվականներին, Բաբեկի օրինակով, գյուղացիական խոշոր ապստամբություն ծագեց Եգիպտոսում, իսկ 840-ական թվականներին Սպահանի շրջանում Բաբեկի և խուրամիդների ազդեցությամբ բռնկված ապստամբությունները շարունակվեցին մինչև 912—913 թվականները[3]: Արաբական խալիֆայության հիմքերը լուրջ կերպով ցնցվում էին նաև IX դարում բորբոքված արաբա-բյուզանդական և արաբա-խազարական պատերազմներից:

Երկրին սպառնացող արտաքին վտանգի և ներքին խռովահույզ պայմաններում արաբները, հարկադրված, իրենց ռազմական ուժերը ցրել էին ամբողջ տիրապետության մեջ: Արաբական խալիֆայության հիշյալ վիճակն է՛լ ավելի մեծ հնարավորություններ էր ստեղծում հպատակ երկրների ժողովուրդների համար արաբական

[1] Տե՛ս *Абул-Фарадж*, фонд № 1088, էջ 1, *Абу-Тахир ал-Макдиси*, фонд № 1088, էջ 84:

[2] Տե՛ս *Масуди*, фонд № 578—579, էջ 59, *Масуди*, Сборник материалов, для описания..., т. 38, էջ 36—37:

[3] Տե՛ս *Сиасет-Намэ*, էջ 228:

լուծը մեկընդմիշտ թոթափելու տեսակետից նոր և համարձակ գործողություններ ձեռնարկելու։ Խալիֆայության ներսում ստեղծված նոր իրադարձությունները բավականին նպաստավոր պայմաններ էին ստեղծում նաև հայ ազնվականների համար, որոնք, ստանալով գործունեության լայն ասպարեզ և ձեռք բերելով նոր կալվածքներ և իրավունքներ, սկսեցին բոլոր միջոցները գործադրել արաբական լուծը թոթափելու և երկրի անկախությունը վերականգնելու համար։ Թեև, ինչպես ակադ. Հ. Մանանդյանն է ասում, այդ շրջանում հայկական ֆեոդալիզմն ապրում էր ավերումների, փախուստի, մեծ գաղթերի ու երկրի ամայացման խռովահույզ շրջանը, սակայն IX դարի հենց առաջին կեսում նրա վերակենդանացման համար ըստեղծվեցին քաղաքական բավականին նպաստավոր պայմաններ։ «Իններորդ դարում,—ասում է Հ. Մանանդյանը,—նա հետզհետե ոչ միայն նորից ուժեղացավ, այլև ապրեց Բագրատունյաց թագավորության շրջանում տնտեսական ու քաղաքական բուռն ու անհնախընթաց վերելքի շրջան»[1]։

Իններորդ դարից սկսած, երբ Արաբական խալիֆայությունը բռնել էր իր թուլացման ճանապարհը և երբ մի կողմից խալիֆայության դեմ ճնշված ժողովուրդների պայքարն օրըստօրե ընդունում էր ավելի համառ ու կազմակերպված բնույթ, իսկ մյուս կողմից ծայրամասային արաբական ֆեոդալական իշխանությունները բորբոքում էին ներքին պառակտողական կռիվներ, արաբական իշխանությունները, ելնելով իրենց դիրքերի ամրողջական կորուստի վտանգից, սկսեցին հաճախակի հովանավորել տեղական ազնվականության առավել ակտիվ ներկայացուցիչներին, որոնք իրենց հերթին ձգտում էին արաբներից ստացած դիջումների միջոցով ամրապնդել սեփական դիրքերը։ Այս տեսակետից արաբները շատ կարևոր նշանակություն էին տալիս Բյուզանդիային մոտիկ գտնվող Սպերի, Տայքի, Կղարջքի շրջաններում հաստատված Բագրատունիներին։ Հարուն ալ-Ռաշիդի ժամանակ Բագրատունիների կալվածքներն էլ ավելի ընդարձակվեցին՝ ընդգրկելով նաև Արշարունիքը, Շիրակն ու Աշոցքը։ Իսկ 806 թվականին խալիֆը Աշոտ Բագրատունուն հաստատեց որպես Հայաստանի իշխանաց իշխան[2]։ Բագրատունիները, օգտագործելով արաբական կենտրոնական իշխանությունների հետ իրենց ունեցած այսպես ասած մտերմական կապերը, սկսեցին ակտիվ պայքար ծավալել Հայաստանում բուն դրած արաբական էմիրությունների դեմ, որոնք իրենց հերթին փորձում

[1] Հ. Մանանդյան, *Ժողովրդական ապստամբությունները Հայաստանում արաբական տիրապետության դեմ*, էջ 22։

[2] *Տե՛ս նույն տեղը*, էջ 22—23։



էին հանգամանքից օգտվել, ընդարձակել իրենց կալվածքները հայ ֆեոդալների հաշվին և ձեռք բերել լրիվ անկախություն Արաբական խալիֆայությունից։

Դեռևս VIII դարի վերջերին, ինչպես արդեն ասվել է, քաղաքական ասպարեզից հեռացած Մամիկոնյանների և Կամսարականների կալվածքներն անցան Բագրատունիներին։ Բագրատունիների ուժեղացմանը խանգարելու և նոր տերիտորիաներ ձեռք բերելու նպատակով 820 թվականին Մանազկերտի կայսրիկ էմիր Ջահապը, որն ամուսնացած էր Մուշեղ Մամիկոնյանի դստեր հետ, հանդես եկավ որպես Մամիկոնյանների ունեցվածքի այսպես ասած օրինական ժառանգորդ և կռիվ սկսեց Բագրատունիների դեմ։ Աշոտ Մսակեր Բագրատունին, ընդունելով հակառակորդի մարտահրավերը, իր եղբոր՝ Շապուհի հետ միասին հարձակվում է Ջահապի վրա, պարտության մատնում նրան ու ետ խլում Արշարունիքը։ Ջահապին վերջնական պարտության են մատնում արաբական զորքերը, որոնք հարկադրում են նրան վերջնականապես հրաժարվել իր մտադրություններից։ Հայաստանում տեղի ունեցող այս ներքին կռիվներին խալիֆայությունը շատ էլ չէր կարողանում ակտիվորեն միջամտել, որովհետև նա զբաղված էր Բաբեկի դեմ կռվելու ավելի ծանր հոգսերով։

Հայաստանում Բագրատունիների քաղաքական դերի և հեղինակության բարձրացման համար որոշակի նշանակություն ունեցավ նաև այն հանգամանքը, որ Աշոտ Մսակերի հորեղբայր, վասակի թոռ Աշոտը, խալիֆից ստանալով Վրաստանի իշխանությունը, հյուսիսից ապահով վիճակ ստեղծեց Հայաստանի համար։ Այսպիսով, IX դարի 20-ական թվականներից սկսած, հայ Բագրատունիները, իրենց կալվածքներից բացի, փաստորեն տիրում էին նաև համարյա ամբողջ Արևմտյան Անդրկովկասին[1]։

Հայաստանում գոյություն ունեցող բազմաթիվ մեծ ու փոքր նախարարությունների փոխարեն այժմ մնացել էին մի քանիսը՝ Բագրատունիները, Արծրունիները և Սյունյաց նախարարները, որոնք, ժամանակի ընթացքում յուրացնելով նաև ասպարեզից դուրս եկած նախարարությունների կամ մահմեդական էմիրությունների հողերը, դարձել էին տնտեսական ու ռազմական ծանրակշիռ միավորներ։ Օգտվելով արաբների թուլությունից, նրանք արդեն լուրջ հերոսով միջամտում էին նաև երկրի կառավարման ներքին գործերին։ Այսպես, օրինակ, 840 թվականին սպարապետ Սմբատ Բագ-

[1] *Տե՛ս* Հ. Մանանդյան, *Ժողովրդական ապստամբությունները Հայաստանում արաբական տիրապետության դեմ*, էջ 24։

ղատունին կարողացավ խալիֆ ալ-Մութասիմի (833—842) միջոցով Հայաստանից եւ կանչել տալ ոստիկան Խալիդին և նրա փոխարեն նշանակել Ալիին։ Իսկ արաբական պատմիչները վկայում են, որ Աբու-Ջաֆար Հարուն ալ-Վաթեկի ժամանակ (842—847) ամբողջ Հայաստանը գտնվում էր խռովահույզ ու ապստամբած վիճակում[1]։

Բաբեկի ապստամբության ճնշումը և դեկավարին մահվան դատապարտելը, ճիշտ է, խալիֆայության հաղթանակն էր, բայց այդ հաղթանակը, ինչպես ասվել է, ձեռք էր բերվել շատ թանկ գնով։ Դրա համար էլ ինչպես ապստամբության ընթացքում, այնպես էլ նրա պարտությունից հետո Արաբական խալիֆայության դիրքերն Արմենիայում և Հայաստանում զգալիորեն թուլացել էին։ Երկրի տարբեր մասերում տեղական ֆեոդալները, միավորելով իրենց ուժերը, օր-օրի ամրապնդում էին իրենց դիրքերը և հարմար պահերին նույնիսկ զենքի դիմում ու փորձում մեկընդմիշտ թոթափել արաբական ծանր լուծը։ Այդ մասին հայկական աղբյուրներից բացի խիստ արժեքավոր տեղեկություններ են հաղորդում նաև արաբ հեղինակները։ Բալաձորին, օրինակ, Արմենիայի ու Հայաստանի դրությունը բնութագրում է այսպես. «Գործերը Արմենիայում (Նորից) խառնվել են. այնտեղ պատրիկներից և մյուսներից ոմանք ապստամբել և խլել են իշխանությունն իրենց տիրույթների վրա, ...Հայ պատրիկները շարունակում էին ապրել իրենց կալվածքներում՝ պաշտպանելով յուրաքանչյուրն իր երկիրը»[2]։ Արմենիայի ու Հայաստանի ֆեոդալներն իրենց այնքան ապահով էին զգում, որ երբեմն էլ թույլ ու անկայուն հարկահավաքներին կաշառելով կամ նվերներ տալով երկիրն ազատում էին կողոպուտից և ավերածություններից։ Այդ մասին Բալաձորիի մոտ գարձյալ նույն տեղում ասված է. «Երբ փոխարքայի կողմից այդ երկիրն էր գալիս որևէ կառավարիչ, (պատրիկները) աշխատում էին նրան անտեսել։ Եթե նրանք նկատում էին, որ կառավարիչը խիստ ու անկաշառ է և իր տրամադրության տակ ունի ռազմական ուժեր և պատրաստություն, նրանք հարկերը տալիս էին և հպատակվում։ Հակառակ դեպքում նրանք աշխատում էին զրպարտել նրան և անհարգալից վերաբերվել։ Այսպես, օրինակ, Մամունի խալիֆայության ժամանակ (813—833) (Արմենիայի) կառավարիչ նշանակվեց Խալիդ իբն-Եզիդ իբն-Մազյադը, որը նրանցից (Արմենիայի բնակիչներից) նվերներ էր ընդունում և մոտիկություն ցույց տալիս, որով նա ծայրահեղորեն

[1] Տե՛ս Հ. Մանանդյան, Ժողովրդական ապստամբությունները Հայաստանում արաբական տիրապետության դեմ, էջ 25։

[2] *Баладзори*, Книга завоевания стран, стр. 20—21.



փչացրեց նրանց և կատաղեցրեց մյուս կառավարիչների դեմ...»[1]։ Նույն բանը հաստատում է նաև Յակուբին՝ ըմբոստ իշխանների ու պատրիկների շարքը դասելով նաև տեղական արաբ ֆեոդալներին ու լեռնային շրջանների թագավորիկներին, որոնք «զրավել էին հարևան շրջանները և թուլացրել սուլթանի (խալիֆի) իշխանությունը»[2]։

Պրոֆ. Պ. Կ. Ժուզեն, հենվելով արաբական սկզբնաղբյուրների վրա, ճիշտ կերպով հանգում է այն եզրակացության, որ IX դարի կեսերից Արմենիայում հաստատված արաբական ֆեոդալները, ելնելով իրենց կենտրոնախույս ձգտումներից, հաճախ թողնում էին իրար միջև եղած թշնամանքը և նույնիսկ մոտիկության հաստումներ ցույց տալիս բնիկ տեղական ազնվականների նկատմամբ, միանում նրանց հետ և համատեղ ուժերով կռվում Արաբական խալիֆայության դեմ։ Յակուբին, օրինակ, նշում է, որ Մամունի գահակալության տարիներին (810—833) Հայաստանի կայսրիկ ֆեոդալները մասնակցում էին Վրաստանի և ծանարների ապստամբությանն ընդդեմ Արմենիայի կառավարիչ Խալիդ իբն-Եզիդ իբն-Մազյադի[3]։ Նույն ծանարները գործում էին նաև Վրաստանի արաբ իշխանավորների հետ միասին[4]։ Այնուհետև, Բալաձորին և Յակուբին, պատմելով Սյունիքի Սահալ իշխանի մասին, նշում են, որ Բաբեկի անկումից հետո, երբ արաբական զորավար Ավշինը եկավ Արմենիա ու տեղի կառավարիչ նշանակեց Մուհամեդ իբն-Սուլեյման ալ-Ազդի ալ-Սամարկանդիին, Սահալն ապստամբեց արաբների դեմ և իշխանությունը վերցրեց իր ձեռքը։ Եվ երբ Մուհամեդ ալ-Սամարկանդին փորձեց զորքերով ճնշել Սյունյաց իշխանի ըմբոստությունը, այն ժամանակ Սահալը զիշերով հարձակվեց նրա վրա և պարտության մատնելով՝ դուրս քշեց իր սահմաններից։ Սահալի օրինակին շուտով հետևում են նաև արաբ ֆեոդալներ Մուհամեդ իբն-Իբրահիմ ալ-Վարսանին և Ալի իբն-Յահյա ալ-Արմանին[5]։

Արաբական խալիֆայության դեմ ուղղված այս ապստամբությունները ու խլրտումները ավելցին բավականին զգալի դրական արդյունք այն իմաստով, որ «Դրանից հետո Արմենիան սկսեցին կառավարել այնպիսի անձինք, որոնք զիջողաբար էին վերաբերվում

[1] *Баладзори*, Книга завоевания стран, стр. 20—21, Բալաձորի, «Հանդես ամսօրյա», 1904, № 2, էջ 55։

[2] *Якуби*, տե՛ս П. К. Жузе, Азербайджан под властью арабов, фонд № 763, стр. 38։ Յակուբի, «Բազմավեպ», 1958, № 3—5, էջ 101—102.

[3] Տե՛ս П. К. Жузе, Арабские племена в Азербайджане, фонд № 508, էջ 14։

[4] Տե՛ս նույն տեղը։

[5] Տե՛ս *Якуби*, П. К. Жузе, Арабские племена в Азербайджане, фонд № 508, էջ 18։

Նրա բնակիչների նկատմամբ և բավարարվում էին ամենաանհրաժեշտ (չափի) հարկերով»[1]։

Այսպես շարունակվեց մինչև IX դարի 40-ական թվականների վերջերը, երբ Արմենիայում նույնպես քաղաքական իրադրությունը խիստ փոխվեց։ Մութավաքիլ խալիֆի իր պահակալության հենց առաջին տարիներին (847—861), լարելով խալիֆայության բոլոր ուժերը, փորձեց բռնի միջոցներով վերականգնել թուլացած իշխանության երբեմնի հզորությունը հպատակ երկրներում։ Ուրեմն 840-ական թվականներից սկսած, Արմենիայի ու Հայաստանի ժողովուրդների և ֆեոդալական միավորների համար ևս լիակատար անկախության ուղղությամբ մղվող պայքարում ստեղծվում էին հարմեմատաբար դժվարին ժամանակներ։ Թովմա Արծրունին, ինչպես ինքն է ասում, հենվելով ժողովրդի բերանում դեռ իր օրերում պահպանվող հիշողությունների վրա, այսպես է բնութագրում Մութավաքիլին. «Բայց մեզ կայ առաջի ասել վասն Ջաֆրայ (նույն ինքը Մութավաքիլը,—Ս. Մ.-Բ.) եւ չար գործոց նորա, անգիրս մնացեալ յայլոց... Այր ոմն Ջաֆր խրոխտ եւ անբարհաւաճ. եւ սկսաւ եղջիւր ածել անօրէնութեամբ. և զոռալով սգորէր ընդ չորս կողմանս երկրին. եւ նեղեալ տագնապէր զխաղաղասէրս կենօք. քանզի կարի սիրելի էր նմա խռովութիւն եւ արիւնհեղութիւն. եւ հանապազ յանձրն իւր տարակուսանօք տարուբերէր, թէ յով, եւ կամ յոյր կողմանս թափիցէ զդառնութիւն մահաբեր թունից իւրոց. եւ կամ ուր վատնիցէ ցանիցէ թափիցէ զբազմութիւն նետից ի կապարճից խորհրդանոցին... իբրեւ զգազան մի կատաղեալ սկսաւ յարձակել ի վերայ աշխարհիս հայոց. եւ ըստ հնարագէտ ազգի իւրեանց խորամանկ կեղծաւորութեամբ, խաղաղասէր դիմօք առ սակաւ սակաւ ջանայր կատարել զկամս չարութեան իւրոյ»[2]։

Հայաստանը հպատակեցնելու, երկրի առավել աշքի ընկնող ու ակտիվ գործիչներին մեջտեղից վերացնելու և հարկերը կրկնապատիկ հավաքելու հանձնարարություններով Մութավաքիլը 849 թվականին ահագին զորքերով Հայաստան է ուղարկում իր պաշտոնյաներից ու զորավարներից Աբուսեթին (արաբական աղբյուրներում՝ Աբու-Սաիդ Մուհամեդ իբն-Յուսուֆ)[3]։ Աբուսեթի ուշադրության կենտրոնում պետք է լինեին հատկապես Հայաստանի իշխանաց իշխան Բագարատ Բագրատունին և Վասպուրականի զահերից

[1] *Баладзори*, Книга завоевания стран, стр. 21.

[2] Թովմա Արծրունի, էջ 117—118։

[3] Տե՛ս *Баладзори*, Книга завоевания стран, էջ 20։



իշխան Աշոտ Արծրունին, որոնք ուրիշների համեմատությամբ աչքի էին ընկնում իրենց քաջությամբ, ռազմական ուժով, համախմբվածությամբ և մեծ հեղինակությամբ[1]։ Բագարատ Բագրատունին և Աշոտ Արծրունին, հայոց սպարապետ Սմբատ Բագրատունու հետ միասին, այն ժամանակ փաստորեն երկրի ամենաազդեցիկ ու ամենահեղինակավոր ռազմական ու քաղաքական գործիչներն էին, որոնց հետևում էին հայոց նախարարական դասի մի զգալի մասի ներկայացուցիչները։

849 թվականին Աբուսեթը «զօրօք բազմօք» մոտեցավ Տարոնի սահմաններին։ Բագարատը նրա գալստյան լուրն առնելուն պես որոշում է անտեղի արյունհեղություններից ու ավերածություններից խուսափելու համար, մանավանդ որ արաբները մեծ ուժեր ու պատրաստություն ունեին, հարցը լուծել խաղաղ ճանապարհով։ Այդ նպատակով Բագարատը հայոց մեծամեծներից կազմում է մի պատգամավորություն և անմիջապես ուղարկում թշնամուն ընդառաջ։ Երկու կողմերի հանդիպումը տեղի է ունենում սահմանագլխում։ Բագարատի մարդիկ հայոց իշխանաց իշխանի և մյուսների անունից Աբուսեթին ոսկի, արծաթ և թանկարժեք նվերներ մատուցելով միևնույն ժամանակ խոստանում են վճարել նաև արքունի հարկերը, եթե արաբները հանձն առնեն առանց պատերազմի հեռանալ Հայաստանի սահմաններից։ Թովմա Արծրունին հետևյալ կերպ է նկարագրում վերոհիշյալ դեպքերը. «Իշխան Տարօնոյ Բագարատ, վասնզի ունէր յայնժամ զգլխաւորութիւն բարձակցութիւն իշխանաց հայոց, որ էր ի տոհմէն Բագրատունեաց, առաքէ զոմանս ի մեծամեծաց իւրոց ընդ առաջ նորա պատարագօք ոսկոյ և արծաթոյ եւ պատուական հանդերձից, համոզեալ մի ելանել յերկիրս հայոց։ Բայց նոքա ի մտի եդեալ էին, թերեւս պատիր խարէութեամբ կարասցեն բառնալ զնոսա յիւրաքանչիւր տէրութենէ։ Իսկ իբրեւ ծանուցաւ նմա անլոյծ միաբանութիւն ուխտի ընդ միմեանս Աշոտոյ և Բագարատայ, որ ինչ յայտնեաց զխորհուրդս չարութեանն զոր խորհեալ էին ի վերայ նոցա. բայց միայն զհարկաց եւ զայլ հոգաբարձութենէ ծանուցանէ զպատճառ գալստեանն. եւ նոքա տան տանել նմա զհարկս և զհասս արքունի»[2]։ Այստեղ ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ արաբները, իրենց սովորության համաձայն, թեև որոշել էին դավադրության և խարեության միջոցով պատակել հայերի ուժերը և մեկ-մեկ ձեռք դնել աշքի ընկնող գործիչներին, տեսնելով նրանց համախմբվածությունն ու ուժը, ստիպված են լինում կեղ-

[1] Տե՛ս Թովմա Արծրունի, էջ 118 և այլն։

[2] Նույն տեղում, էջ 119։

ծելու և քաղաքակելու իրենց իսկական մտադրությունները։ Աբուսաիթը ոչ այնքան իրեն տրված նվերներից շլացած, որքան հայ նախարարների համախմբված ուժերից վախենալով, խորամանկորեն վերցնում է տրված հարկերը և շտապ վերադառնում Բաղդադ։ Դրանով նա միայն ուզում էր իր վրայից պատասխանատվությունը դցել։ Իսկ ինչ վերաբերում է պայմանի այն կետին, որ արաբները հարկերն ստանալուց հետո պետք է ետ դնային առանց Հայաստան մտնելու, ապա այդ կետը Աբուսաիթի կողմից բնավ չկատարվեց։ Ընդհակառակը, արաբ զորավարն իր գնալուց առաջ զորքերը բաժանեց երկու մասի. մի մասը հանձնելով Աղձնիքի և Արզնի էմիր, Բագարատ Բագրատունու քրոջ ամուսին Մուսա իբն-Զուրարին, նրան միաժամանակ նշանակեց Հայաստանի կառավարիչ և ուղարկեց Տարոն՝ հարկերը հավաքելու և իր աներոջ որդուն շարքից հանելու համար, իսկ մյուս մասը տվեց Մանազկերտի կայսրկնիրից Ալա-Ծովափիին, հանձնարարելով նրան ասպատակել Վասպուրականը, կողոպտել, ահաբեկել ու կոտորել բնակչությանը[1]։

Թովմա Արծրունու հետագա տեղեկությունները ցույց են տալիս, որ Բաղդադ վերադարձած Աբուսաիթը խալիֆին է ներկայացնում նաև Հայաստանի արաբ ֆեոդալներից մի քանիսի գրավոր ամբաստանագրերը՝ ուղղված Բագարատի դեմ։ Այդ գրություններից մեջ հայոց իշխանաց իշխանը մեղադրվում էր խալիֆի նկատմամբ ունեցած առանձնահատուկ բշնամությամբ և պահանջվում, որպեսզի գործնական միջոցներ ձեռնարկվեն նրան մեջտեղից վերացնելու ուղղությամբ[2]։

Մինչդեռ Աբուսաիթը խալիֆների մայրաքաղաքում նստած՝ դավեր էր լարում Բագարատ Բագրատունու և նրա մերձավորագույն զինակիցների դեմ, արաբական զորքերը, Ալա-Ծովափիի առաջնորդությամբ ներխուժելով Վասպուրական, սկսեցին տակնուվրա անել Աղբակ ու Անձևացյաց գավառները։ Ալա-Ծովափին «...գերփէր, աւերէր, յափշտակէր, կապուտ կողոպուտ գործէր ընչից եւ սատցուածոց։ Յափշտակէին զայր եւ զկին, եւ զժառանգութիւն նոցա։ Առնէր ասպատակ եւ ի կողմն Անձաւացեաց տէրութեանն։ Եւ անտի եւս առնուին աւար եւ պատճառս առնկաց պիտոյից այլուձիոյ»[3]։

Արաբական այս հրոսակախմբերը միաժամանակ իրենց հիմնական հարվածն ուղղում էին Արծրունիների ոստան Հադամակերտի դեմ։ Երբ Աշոտ Արծրունին տեղեկացավ Բշնամու կատարած

[1] Տե՛ս Թովմա Արծրունի, էջ 123։
[2] Տե՛ս նույն տեղը, էջ 119։
[3] Նույն տեղում, էջ 123։



խժդժությունների մասին, մի նամակով դիմեց Ալա-Ծովափիին և պահանջեց, որպեսզի նա վերջ տա իր չարագործություններին ու հանգիստ սպասի, մինչև ինքը հավաքի պահանջված հարկերն ու հանձնի նրան։ «Ելեր դու յաշխարհս հայոց հրամանաւ արքունի առնուլ զհարկս արքունի,— ասում էր Աշոտն իր նամակում,— մինչ եւ հրաման ունիս յարքունուստ, զերել զերիվել յաւեր դարձուցանել զաշխարհս մեր։ Բայց մեք քանզի ոչ երբեք ստունդանեցաք հրամանի թագաւորին. եւ ոչ խափանիչ գտաք հարկաց արքունի, իբրեւ պապստամբս եւ զանհնազանդս եւ զստահակս ի ծառայութենէ տեառանց. արդ դու յարուցեալ գնացեր ի մի քաղաքացդ հայոց, որպէս օրէն է աշխարհակալաց, եւ մեք տացուք քեզ զհաստս հարկացն, եւ հաճեցուք զմիտս քո, եւ մի յանխնայ ասպատակելով յաւեր դարձուցանես զերկիր իմ»[1]։ Սակայն արաբական զորավարը ոչ միայն չի բարեհաճում պատասխանել հայոց դահերեց իշխանի նամակին, այլև լիտիաբար շարունակում է ասպատակել երկիրն ու գալիս կանգ է առնում Արճուճ գյուղում։ Դրանից հետո Աշոտը, տեսնելով, որ Բշնամու հետ հնարավոր չէ լեզու գտնել, համարձակ կերպով զենքի է դիմում՝ նրան սանձահարելու համար։ Իր զորքերով հետապնդելով Բշնամուն, Աշոտ Արծրունին հասնում է Արճուճ և սրընթաց հարձակումով այնպիսի ջարդ տալիս արաբներին, որ Ալա-Ծովափին հազիվ կարողանում է կովի դաշտից ողջ և առողջ դուրս պրծնել՝ իր զինվորներից շատերի դիակների հետ մարտադաշտում թողնելով նաև հսկայական հարստություն և ռազմական հանդերձանք, որ նրանք մեծ մասամբ կողոպտել էին հայերից։ Թովմա Արծրունին Բշնամու այդ ջախջախման պատմությունն ավարտում է խիստ պատկերավոր խոսքերով, ասելով, որ «...եւ զբոյոր ուխտն լնուլ դիկամբք կոտորելոցն. եւ քամուանք ջրոյն որ ի ծործորացն ի վայր զեղուին յարիւն դառնային ի բաղմութենէ սպանելոցն»[2]։ Հայերի կորուստներն այս կռիվներում, Բշնամու հետ համեմատած, շատ չնչին էին։ Արճուճի կռիվներում իրենց քաջությամբ ու հերոսությամբ աչքի ընկան շատ-շատերը, որոնց մեջ առանձնապես՝ Աշոտի եղբայր Գուրգեն Արծրունին, Վահան Հավնունին և ուրիշներ։

Ալա-Ծովափիի հետ գրեթե միաժամանակ գործի անցավ նաև Մուսա իբն-Զուրարը, որն իր զորքերով ներխուժելով Տարոն, հասավ Բագարատի ձմեռանոցը՝ Մուշ ու բռնեց նրա մոտակա ամբողջ դաշտավայրը։ Բշնամու զորքերն անհամեմատ ավել էին հայերից։ Դրա համար էլ հայոց իշխանաց իշխանը բարվոք համարից օգնու-

[1] Թովմա Արծրունի, էջ 123—124։
[2] Նույն տեղում, էջ 125։

Բյան կանչել Աշոտ Արծրունուն։ Աշոտը, որ Բագարատի ամենահավատարիմ դինակիցը լինելուց բացի նրա քրոջ որդին էր, տեղեկանալով քեռու ծանր դրության մասին և ոգևորված քիչ առաջ իր տարած հաղթանակով, շտապ կարգով «համագունդ ժողով առնէր ամենայն ուշխարհին, և ամենայն նախարարօք Վասպուրական տէրութեանն. փութանակի եւ վազվազակի իւրաքանչիւր զօրօք անդր հասանէին»[1]։ Աշոտը հետը վերցրել էր իր երկու եղբայրներին՝ Գուրգենին ու Դրիդորին և քսանի չափ ուրիշ նախարարների՝ Վասպուրականից։ Բացի այդ, նրան էին միացել նաև Բագրատունի, Ամատունի, Ընտրունի, Ապահունի, Քաջբերունի, Հավնունի, Գագրիկյան, Ակեացի, Գաբեղյան ու Անձևացի և այլ նախարարությունների ներկայացուցիչներն իրենց զորքերով ու մարտական կատարյալ պատրաստությամբ։ Հենց այս հանդամանքը ցույց է տալիս, թե որքան մեծ էր հայ ազնվականության մեծամասնության միասնությունն ու թշնամու դեմ համատեղ հանդես գալու պատրաստակամությունը։ Հայ ազնվականության միասնական ելույթը ավեց դրական արդյունք։

Մինչդեռ Բագարատ Բագրատունու հեծյալ, հետիոտն, վահանավոր, նիզակավոր և կապարճակիր աղեղնավորները հարկադրաբար գունդ առ գունդ փողեր հնչեցնելով ու դրոշներ ծածանելով, անհավասար զոտեմարտի մեջ էին մտել թշնամու բազմամարդ բանակների դեմ, «յանկարծակի հասանէր քաջն մեր Աշոտ. եւ միախառն յանդուգն յարձակմամբ դիմեցին ի վերայ այլազգեացն... զոչեաց (Աշոտը) առիւծաբար, յարձակեցաւ ի վերայ ընտիր այրուձիոյն, եւ զաջ թեւն բեկեալ զձախոյ կողմամբն արկանէր, եւ սրոյ ճարակ զամենեսեան տային խիզախելով իբրեւ զքաջ նահատակս. իբրեւ զարծուիս կռնչելով, իբրեւ վկորիւն առիւծուց ի վերայ որսոյ հասեալ բեկանէին... Եւ ոչ ոք գտանէր ամենեւին ի կողմանէ թշնամեացն որ կարէր կալ ընդ դէմ նոցա, եւ ոչ մի ոք. այլ մնացեալքն սրոյն փախստական էին յամուրս մայրեացն։ Եւ կէսքն հասանէին մինչ ի շահաստան Բաղէշ, թողեալ անդէն զրուն բանակն»[2]։ Փայլուն կերպով վարելով հարձակումը, Աշոտը յուրայիններով մխրճվեց թշնամու խիտ շարքերի մեջ, մեծ ջարդ տվեց նրան ու փախուստի մատնեց դեպի Բաղեշ։

Բաղեշի մոտ հայկական հաղթող բանակի դեմ դուրս եկավ Մուսա իբն-Զուրարի կինը և խնդրեց եղբորը՝ դադարեցնել կոտորածը։ Հայերը, մեծահոգաբար կատարելով տիկնոջ խնդրանքը,

[1] Թովմա Արծրունի, էջ 120—121։

[2] Նույն տեղում, էջ 121—122։



քաղաքի մոտից ետ վերադարձան ու վերցնելով արաբների ձողած հարուստ ավարը, քաշվեցին իրենց տեղերը։

Արճուճի և Մուշի ճակատամարտերը գործնականորեն ապացուցեցին արաբական բռնակալական լծի դեմ հայ ժողովրդի մղած միասնական պայքարի արդյունավետ լինելը։ Դրա համար էլ այդ հաղթանակները մեծ ոգևորություն էին առաջացրել շատ-շատերի մեջ և կրկնապատկել ազատագրական պայքարի մարտիկների ուժն ու եռանդը։ Ահա դրանում էր կայանում հայ ժողովրդի տարած հաղթանակների քաղաքական մեծ նշանակությունը։ Եվ այդ բանը գիտակցում էին նաև արաբները։ Նրանք վախենում էին, որ համաժողովրդական ապստամբության ալիքը կարող է Հայաստանից տարածվել նաև մյուս երկրները։ Դրա համար էլ Տարոնի ու Վասպուրականի ապստամբությունները վերջնականապես ճնշելու և արաբների կրած խայտառակ պարտության վրեժը լուծելու համար Մութավաքիլը, նոր զորքեր տալով Աբուսեթին, նրան երկրորդ անգամ ուղարկեց Հայաստան։ Սակայն Աբուսեթը ճանապարհին անսպասելիորեն մահացավ և զորքերի հրամանատարությունը խալիֆի հրամանով տրվեց նրա որդուն՝ որի անունն էր Յուսուֆ իբն-Աբուսեթ[1]։ Բալաձորին Յուսուֆի նշանակումը վերագրում է Մութավաքիլի գահակալության երկրորդ տարվան, այսինքն 849 թվականին[2]։ Սակայն, ինչպես երևում է, Յուսուֆը փոքր ինչ հապաղում է հավանաբար խալիֆից նոր հանձնարարություններ ստանալու պատճառով և Հայաստան է հասնում միայն 851 թվականին[3]։

Յուսուֆին տրված ամենակարևոր հանձնարարությունն այն էր, որ նա պետք է աշխատեր, ինչ գնով էլ լինի, մի կերպ ձեռք գցել ապստամբության ամենաերևելի դեմքերին՝ Բագարատ Բագրատունուն և Աշոտ Արծրունուն[4]։

Յուսուֆը Հայաստան է ներխուժում Ատրպատականից։ Նա սկզբում հաստատվում է Վասպուրականի Աղբակ գավառի Հադամակերտ քաղաքում՝ Արծրունիների ոստանում։ Աշոտ Արծրունին այդ ժամանակ չկարողանալով կանգնեցնել թշնամու հսկայական ուժերի առաջխաղացումը՝ քաշվել էր Մարդաստանի կողմերը։ Եղած հրահանգի համաձայն, Յուսուֆն սկզբում փորձում է խորամանկորեն ծուղակի մեջ գցել Աշոտին և այդ ուղղությամբ նրան հրավիրում է իր մոտ։ Սակայն, ինչպես Թովմա Արծրունին է նկարագրում, Յու-

[1] Տե՛ս Баладзори, Книга завоевания стран, էջ 20, Թովմա Արծրունի, էջ 128—129։

[2] Տե՛ս Баладзори, Книга завоевания стран, էջ 21։

[3] Տե՛ս Թովմա Արծրունի, էջ 128։

[4] Տե՛ս նույն տեղը, էջ 129։

սուֆի ննդամիտ դիտավորությունների մասին հենց Յուսուֆի մերձավորները բարեհոգաբար զգաստնի տեղեկացնում են Աշոտ Արծրունուն և զգուշացնում նրան։ Ավելորդ չենք համարում արաբների ճարտասիրական այս փոքրիկ դրվագը մեջ բերելու պատմիչի իսկ խոսքերով. «Բայց ազդ լինէր իշխանին ի նոյն գնդէն տաճկաց մի տեսանել զերեսս նորա, ծանուցանելով նմա զոր ինչ խորհեալ էր վասն նորա»[1]։ Արաբական զորավարը նույնանման հրավերներ էր ուղարկել նաև մյուս նախարարներին, որի մասին հիշատակում են նաև արաբական հեղինակները։

Աշոտ Արծրունին, տեղեկանալով Յուսուֆի ծրագրերի մասին՝ իր հերթին սկսում է պատերազմական լուրջ նախապատրաստություններ տեսնել։ Նա միաժամանակ հատուկ նամակով հիշեցնում է Յուսուֆին, որ «Թագաւորաց աշխարհակալաց օրէնք են մեծաւ հոգաբարձութեամբ խնամ տանել վասն շինութեան աշխարհի, եւ թեթեւացուցանել զլուծ բռնութեան ծանրակ բեռանցն, թուլացուցանելով զասատկութիւն հարկապահանջ խոշտանգանաց»[2]։ Դրա հետ մեկտեղ նա պատրաստակամություն էր հայտնում կատարելու պահական բոլոր պարտականությունները և մեծամեծ նվերներով Յուսուֆի մոտ է ուղարկում իր մորը՝ Արծրունյաց Հռիփսիմե տիկնոջը։ Յուսուֆը, այսպես ասած, հարգելով կնոջ խնդրանքը, ընդունում է նվերները և վերցնելով մի քանի պատանդներ, գնում է Բղնունիք ու կանգ առնում Խլաթում։ Այսպիսով, Վասպուրականն առայժմ փոքր ինչ ազատվում է նորանոր ավերածություններից, իսկ Աշոտ Արծրունին, որպես գահերեց իշխան, կրկին մնում է իր տեղում։

Խլաթում Յուսուֆն սկսում է նոր որոգայթներ լարել հայոց իշխանաց իշխան Բագարատ Բագրատունու դեմ։ Այստեղից նա Բագարատին լուր է ուղարկում, թե իբր ինքը եռ է վերադառնում Արաբիա, բայց գնալուց առաջ ցանկանում է Հայաստանի իշխանությունը պաշտոնապես նրան հանձնել։ Բագարատ Բագրատունին, միամտորեն հավատալով թշնամուն, գնաց նրա մոտ։ Սակայն այստեղ իշխանություն տալու փոխարեն նրան իր երկու որդիների՝ Աշոտի և Դավթի հետ անմիջապես ձերբակալում և շղթայակապ ուղարկում են Բաղդադ։ Յուսուֆի այս ննդամիտ վարմունքը դրժկամությամբ են արձանագրում նույնիսկ արաբական հեղինակները։ «(Յուսուֆը) ժամանելով (Հայաստան), զրագրություն սկսեց պատրիկների հետ,—գրում է Յակուբին,—մի քանիսը նրան պատասխանեցին, իսկ Բագարատը, Աշոտի որդին, նույնիսկ ներկայացավ

[1] Թովմա Արծրունի, էջ 129։
[2] Նույն տեղում, էջ 130։



նրան ներման (աման) պայմանով, սակայն նա նրան ուղարկեց Ալ-Մութավաքիլի մոտ»[1]։ Նույնը հաստատում է նաև Բալաձորին, ասելով, որ «...Մութավաքիլ Ալ-ալլահը (847—861) իր խալիֆայության երկրորդ տարում Արմենիայի կառավարիչ նշանակեց Յուսուֆ իբն-Մուհամմեդ իբն-Յուսուֆ ալ-Մարվազիին (Մերվցուն), որը գալով Խութ, ձերբակալեց այնտեղի պատրիկ Բագարատին, Աշոտի որդուն և ուղարկեց նրան (խալիֆի ռեզիդենցիան) Սուրա-ման-ռայ (Սամառա)»[2]։ Այդ մասին հիշատակում են նաև հայկական աղբյուրները և երկու կողմերի տեղեկությունները համարյա առանց տարբերության համընկնում են[3]։

Բագարատ Բագրատունուն ձերբակալելուց հետո Յուսուֆն իր զորքերով սկսեց համարձակորեն ասպատակել ու տակնուվրա անել Տուրուբերանի և Աղձնիքի շրջանները։ Արաբների բռնություններից ու հարստահարություններից առանձնապես տուժում էին այդ վայրերի լեռնային շրջանների գյուղացիները, որոնք առանց այն էլ ապրում էին սուղ պայմաններում և հագիվ էին պահպանում իրենց գոյությունը։ Բարեբախտաբար վրա հասած ձմեռն ու ցուրտ եղանակները հնարավորություն չտվեցին արաբներին ավելի ծավալվելու և նրանք առայժմ բավարարվելով իրենց ձեռք բերած հարստություններով ու գերիներով, անցան Մուշ՝ ձմեռն այնտեղ անցկացնելու համար։ Յուսուֆի վերցրած գերիներն այնքան շատ էին, որ նրանց մի մասը նա ուղարկեց տերության զանազան կողմերը՝ վաճառելու, իսկ մի մասին էլ պահում էր Մուշում և տաժանելի պայմաններում օգտագործում նրանց ծանր աշխատանքների մեջ։

851 թվականի Յուսուֆի աշնանային արշավանքների ժամանակ համեմատաբար անվնաս էին մնացել Սասունի բնականից անառիկ դիրք ունեցող լեռնային մի քանի շրջաններ։ Արաբները Հայաստանի այդ մասերի գրավումը սխալված հետաձգել էին հաջորդ տարվան։ Եվ Յուսուֆը պատրաստվում ու անհամբեր կերպով սպասում էր գարնանը՝ ավերածություններն ու կողոպուտը երկրում շարունակելու համար։ Արաբական զորավարի դիտավորությունների և ծրագրերի մասին տեղեկություններն անընդհատ հասցվում էին լեռնականներին Մուշից փախած հայ գերիների միջոցով։

[1] Յակուբի, տե՛ս П. К. Жузе, Азербайджан под властью арабов, фонд № 763, էջ 20—21, Յակուբի, «Բազմավեպ», 1958, № 3—5, էջ 102։
[2] Баладзори, Книга завоевания стран, էջ 21, Բալաձորի, «Հանդես ամսօրյա», 1904, № 2, էջ 55։
[3] Տե՛ս Թ. Արծրունի, էջ 131, Հ. Դրասխանակերտցի, էջ 117, Ս. Անեցի, էջ 92, Սմ. Օրբելյան, էջ 169, Վ. Բարձրբերդցի, էջ 110, Կ. Գանձակեցի, էջ 73։

851 թվականից սկսած արաբական զորքերի ավերածությունները ու բռնություններն ու սպասվող է՛լ ավելի սոսկալի գործողությունները շուտով համաժողովրդական խոր ցասում առաջացրին բնակչության մեջ։ Հայրենի հողն օտար հարստահարողներից մաքրելու համար ոտքի ելան ամբողջ շրջաններ ու գավառներ։ Արաբների դեմ հայ ժողովրդի այս արդարացի պայքարը անգամ շատ նպաստավոր ձևով են պատճառաբանում արաբ հեղինակները։ Բալաձորին, օրինակ, կոնկրետ մեկ առ մեկ պատմելով Յուսուֆի բոլոր արարքների՝ բռնատարկությունների, բռնությունների և կողոպուտի մասին, հետևցնում է, որ հենց այդ էլ եղավ հայերի ապստամբության պատճառը[1]։ Իսկ Իբն ալ-Ասիրը Բագարատ Բագրատունու և մյուսների ձերբակալությունն ու աքսորումը ուղղակի որակում է որպես տմարդի գործողություններ[2]։

Թեև այդ ժամանակ ապստամբության առաջին ազդանշանը տվեցին Սասունի լեռնային շրջանի՝ Խութի գյուղացիները, սակայն աղբյուրների հիշատակություններից երևում է, որ ընդհանուր գործի համար լուրջ նախապատրաստություններ էին տեսնվում նաև Տարոնում, Վասպուրականում, Արզնում, Նախիջևանում, Աղբակում և ուրիշ տեղերում[3]։ Դա հաստատվում է մեկ այլ հեղինակի՝ Իբն ալ-Ասիրի այն հիշատակությամբ, որտեղ նա ասում է, որ հայերը այդ ժամանակ սկսեցին առանձին-առանձին ոչնչացնել այն զորամասերը, որոնք իրենց հրամանատարի կարգադրությամբ ցրվել էին այս ու այնտեղ կողոպուտ ձեռք բերելու համար[4]։ Այսպիսի ասպատակող ու ավարառու զորախմբերից մեկն էլ Ալ-Ալա իբն-Ահմադի առաջնորդությամբ հայտնվում է Սասունում և կողոպտում ու ավերում Աբթահ վանքը[5]։ Յուսուֆի դեմ եղած դժգոհությունն ու վրիժառության զգացումն ավելի էր մեծանում այն ժամանակ, երբ մարդիկ ոտնահարված էին տեսնում նաև իրենց կրոնական զգացմունքները։ «Դրանով նա (Յուսուֆը),—ասում է պատմիչը,—պատ-

[1] Տե՛ս Բալաձորի, Կ. Յուբյուձյանի թարգմ., էջ 41։

[2] Տե՛ս Ибн ал-Асир, Институт истории и философии АН Азерб. ССР, фонд № 295, էջ 76։

[3] Տե՛ս Табари, տե՛ս նույն տեղը, фонд № 577, էջ 47—48։

[4] Տե՛ս Տաբարի, «Հանդես ամսօրյա», 1906, № 9, էջ 275—276, տե՛ս նաև Ибн ал-Асир, фонд № 295, էջ 76։

[5] Մ. Աբեղյանը և Կ. Մելիք-Օհանջանյանը բնագրի Սիսական անունը միանգամայն ճիշտ կերպով ուղղում են Սանասուն կամ Սասուն ձևով, որը համապատասխանում է «Սասնա ծռեր»-ի բովանդակությանը, իսկ Աբթահը նույնացնում են Մարութա ս. Աստվածածին վանքի հետ։ Այդ նկատառումներով էլ մենք այստեղ մեջ բերեցինք արաբական տեքստի վերոհիշյալ հեղինակների թարգմանությունը (տե՛ս «Սասնա ծռեր», հ. Ա, էջ 17—19)։



րիկների մեջ առաջ բերեց ծայրաստիճան զայրույթ և զրգռություն և նրանք սկսեցին թղթակցել իրար հետ և հրահրել իրար ապստամբելու և անկախանալու։ Հենց նրանք էլ զրդեցին խութեցիներին—դրանք (գյուղացի) մշակներ են, որոնք հայտնի են Արթուն անունով,—ապստամբելու Յուսուֆի դեմ և զրգռեցին նրանց դեմ... Ինչպես պատրիկները, այնպես էլ բոլոր խռովարարները (խութեցիներին) օգնելու համար ձիավոր և հետևակ մարդիկ ուղարկեցին. և նրանք հարձակվեցին նրա (Յուսուֆի) վրա Տարոնում այն ժամանակ, երբ նա իր մարդկանց ցրել էր գյուղերում...»[1]։ Այստեղ արաբ հեղինակի մոտ ուշագրավ է այն հանգամանքը, որ Խութի լեռնականների ապստամբությունը ինչ-որ կրքերի ու վրեժխնդրության վայրկենական բռնկման հետևանք չէր, այլ վաղօրոք պայմանավորված և առանձին նախարարների միջև գրավոր կապերի շնորհիվ նախապատրաստված ապստամբություն, որին Խութի գյուղացիական և հետիոտն ջոկատներից բացի մասնակցում էին նաև հայ ազնվականների հնձյալ և հետևակային գնդերը։ Խոսելով խութեցիների մասին, Թովմա Արծրունին նշում է, որ երբ թշնամին հարձակվում էր իրենց հայրենիքի վրա, նրանք անմիջապես օգնության էին գալիս իշխաններին և նրանց հետ միասին կռվում օտարերկրյա զավթիչների դեմ[2]։ Սա ինքնին վկայում է այն մասին, որ Խութի հայությունը ազատագրական պայքարի մեծ փորձ ուներ դեռ անցյալից և այժմ, երբ գրությունը նորից էր վատացել, հայ ազնվականները մեծ վստահությամբ հենվում էին խութեցիների վրա և փորձում նրանց օգնությամբ ձեռնարկել թշնամուն խորտակիչ հարված հասցնելու գործը։ Խութեցիները քաջ էին ու կորովի, ինչպես իրենց նախնիները։ Նրանք հյուրասեր ու պատվով լինելու հետ միաժամանակ խիստ անողոք էին թշնամու և, նույնիսկ, հարազատի նկատմամբ։ Խութեցիների վերոհիշյալ հատկանիշները, որոնց մասին գրել և մեզ է թողել նրանց ժամանակակից Թովմա Արծրունին, նկատելիորեն ընդհանրանում են «Սասնա ծռեր»-ի որոշ դրվագների հետ։ Այդ նույն հատկանիշներով չէ՞ր օժտված, արդյոք, Սասնա Դավիթը, որը խրոխտաբար պահանջում էր հորեղբայր Զենով Օհանից անմիջապես իրեն հանձնել հոր նժույգն ու զենքերը՝ չարության ու շահագործման ուժերի դեմ կռվի գնալու համար։

Խութի գյուղացիները լրիվ զինված ու հաղթանակի մեծ հավատով խիստ ցրտաշունչ ու ձյունառատ ձմռանը փոթորկի նման լեռներից սլանում են դեպի դաշտավայր ու հարձակվում Մուշի վրա։

[1] Баладзори, Книга завоевания стран, стр. 18—19, տե՛ս նաև Բալաձորի, թարգմ. Կ. Յուբյուձյանի, «Հանդես ամսօրյա», 1904, № 2, էջ 55—56։

[2] Տե՛ս Թովմա Արծրունի, էջ 134։

Հայերի այս համարձակ հարձակումը գլխավորում էր ժողովրդի ծոցից դուրս եկած Խութեցի Հովնանը։ Խութեցիներին կազմակերպելու ու ղեկավարելու գործում վճռական դեր էին կատարում նաև աքսորից փախած և Սասունի լեռներում ապաստանած Բագարատ Բագրատունու որդիները՝ Աշոտն ու Դավիթը։

Արաբները, Մուշում հանկարծակիի գալով, ընկան ծուղակը և այլևս դուրս գալ չկարողացան։ Խութի լեռնականների հարձակումը Մուշում որջացած թշնամու հրոսակների վրա այսպես է նկարագրում Թովմա Արծրունին, որը, ինչպես ինքն է հավաստում, իր տեղեկությունները քաղել է այդ գործողություններին անմիջապես մասնակցած հերոսներից։ «Իբրև ձմեռն ընդմիջեցաւ և օդն խստացեալ թանձրացաւ միգախառն մրրկալից, եւ թանձրութիւն ձեանն հարթայատակ դիզաւ շուրջ զտորոտով լերինն, յորում տեղւոջ քաղաքն Տարօնայ շինեալ էր... Յայնժամ բնակիչք լերինն իբրեւ տեսին թէ վարեցաւ իշխանն ի գերութիւն, ինքեանք պատրաստեալ են զնոյն փարշմանն կրել զոր դաշտայինքն կրեցին։ Հասին միաբան բազմութիւնն մեկնագէնքն Խութայ ի հնարս արուեստագիտութեանն իւրեանց, զոր ի պէտս օժանդակութեան ձմերայնոյ հնարաւորեալ էին։ Եւ բարձեալ շտեայս հանապազակիրս... Եւ եկեալ ի վերայ քաղաքին պաշարն դնա, եւ զդօրան մատնեն ի սատակումն սրոյ, եւ զպատանդսն Վասպուրականի հանեն յարգելանէն, զկապուտ նոցա բաժանեն. եւ զերեացն ընդարձակեն, զկապուտ նոցա բաժանեն յինքեանս»[1]։

Կոտորածի ժամանակ ասպարեզից փախել ու քաղաքի ս. Փրկիչ եկեղեցում էր թաքնվել գլխավոր շարադործ Յուսուֆը, որը, սակայն, չկարողացավ ազատվել զայրացած լեռնականների ձեռքից։ Հովնանի մարդիկ հենց եկեղեցում էլ սպանեցին Յուսուֆին ու արաբական զորքերին հասցրին վերջնական պարտության։ Քաղաքում տեղի ունեցող կռիվների ժամանակ արաբներից շատ քչերը միայն կարողացան ազատվել ու խույս տալ ոչնչացումից։ Հաղթանակած լեռնականներն անմիջապես ազատում են բոլոր գերիներին, իսկ արաբների կուտակած հարստությունը բաժանում իրար մեջ։ Յուսուֆի սպանության և նրա կողոպտած հարստությունը բաժան-բաժան անելու մասին հիշատակում է նաև Բալաձորին[2]։ Մուշի հիշյալ դեպքերը տեղի են ունեցել 851—852 թվականի ձմռանը, որի մասին որոշակիորեն հիշատակում են արաբական պատմիչներ Տա-

[1] Թովմա Արծրունի, էջ 132—133։

[2] Տե՛ս Բալաձորի, «Սասնա ծռեր», հ. Ա, էջ 19, Բալաձորի, «Հանդես ամսօրյա», 1904, № 2, էջ 56։



բարին ու Իբն-ալ Ասիրը[1]։ Իբն ալ-Ասիրը նույնիսկ ասում է, որ այդ չոլորը կատարվել է հունվար ամսին։ Տաբարիի հաղորդումներից երևում է նաև մեկ այլ հետաքրքիր փաստ։ Մուշի ու նրա շրջակայքի արաբների դեմ հայերի ձեռնարկած հարձակմանն ակտիվորեն մասնակցում էր նաև Բաղեշի էմիր Մուսա իբն-Զուրարը։ Այս հանգամանքը զուցե իրավունք տա ենթադրելու, որ Մուսան հայերի կողմից անցյալում պարտություն կրելուց հետո ըստ երևույթին հանձն էր առել հրաժարվելու արաբական կողմնորոշումից և անցնելու հայոց իշխանների կողմը։ Բաղեշի էմիրի քաղաքական այդպիսի կարուկ շրջադարձի պատճառներից մեկն էլ այն էր, որ նա ուղղակի վախենում էր հայերից պարտություն կրելու համար արաբների կողմից պատասխանատվության ենթարկվելուց և իր փրկությունը գտնում էր հայերի հետ դաշնակցելու մեջ։

Խութեցիների հաղթանակը մեծ ոգևորություն էր առաջացրել նաև Հայաստանի մյուս շրջանների աշխատավորների մեջ։ Ամենուրեք ոտքի ելնելով, ժողովուրդը դուրս էր վռնդում արաբական զավթիչներին իր երկրի սահմաններից։ Այս դեպքերն, իհարկե, չէին կարող հաշվի չառնվել նաև արաբական իշխանությունների կողմից։ Մութավաքիլ խալիֆը, Հայաստանը վերստին հպատակեցնելու համար, շուտով այստեղ է ուղարկում թուրքական զորքերի գլխավոր հրամանատար Բուղա Շարաբիին։ Նրա տրամադրության տակ գրված էր մի հսկայական բանակ, որի կազմը, ըստ Թովմա Արծրունու չափազանցված տեղեկության, հասնում էր 200 000 մարդու։ Բուղայի բանակը կազմված ու համալրված էր արաբներից ու պարսիկներից բացի նաև ուրիշ ժողովուրդներից ու ցեղերից[2]։

Բուղան ծագումով թուրք էր[3]։ Ընդօրինակած լինելով խալիֆայական պալատոնյաների բնավորության գծերը, նա միաժամանակ աչքի էր ընկնում իր բիրտ, վայրագ, դաժան, անողոք ու արյունախում հատկանիշներով, որի համար էլ հենց ստացել էր իր Բուղա մականունը, որ նշանակում է ցուլ[4]։

Խալիֆն իր զորավարին հանձնարարել էր, որպեսզի նա Հայաստանը հպատակեցնելու, ազատագրական պայքարի ակտիվ գործիչներին միջոցներից վերացնելու և ժողովրդին ահաբեկելու ու ընկր-

[1] Տե՛ս Ибн ал-Асир, фонд № 295, էջ 76, այնուհետև՝ фонд № 577, էջ 46, Իբն ալ-Ասիր, «Հանդես ամսօրյա», 1909, № 3, էջ 89։

[2] Տե՛ս Թովմա Արծրունի, էջ 139—140։

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 140, Якуби, История, Баку, 1927, էջ 19, Անանուն (11-րդ դար), Վրաց (Քարթլիսի) մատյանը, տե՛ս Լ. Մելիխսեթ-Բեկ, Վրաց տարբերները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, Երևան, 1934, էջ 200, Կիրակոս Գանձակեցի, էջ 73։

[4] Տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, մասն Ա, էջ 938։

ճելու համար գործադրի խստագույն և ամենադաժան միջոցներ։ Բուղայի կերպարն այսպես է ներկայացնում Թովմա Արծրունին. «Սա էր իշխան հրամանատար ամենայն ոտրութեանն տաճկաց, եւ ոչ ոք ամենեւին իշխէր ելանել արտաքոյ կամաց ձեռին նորա ի մեծամեծաց մինչեւ ի փոքունս. այլ եւ ինքն թագաւորն հրամանի նորա անսայր։ Որ եւ զապիրատ եւ զլի հնարիւք սատանայական իմաստից, չարահնար խորհրդոց բուռն հարեալ մեծամեծս փքայր փունքտալով, եւ վիշապաձայն որոտալով ահ արկանել հեռաւորաց եւ մերձաւորաց։... յորում որջացեալ բունեալ էր սատանայ զօրութեամբ իւրով։ Որոյ չօժարութիւն կամաց ախորժակաց իւրոց էր մարմին եւ արիւն անմեղ մարդկան, առ ի յագումն անհնարին գազանաբարոյ կատաղութեանն»[1]։ Հայ պատմիչի այս տողերը թշնամու հանդեպ ունեցած արդարացի ատելության արդյունքը չեն միայն, դրանց հիմքում ընկած են արաբական զորավարի արյունոտ ու դավադիր գործունեության դրվագները ընդհանրապես։

Բուղայի արշավանքը դեպի Հայաստան ու Արմենիա սկսվեց 852 թվականի կեսերին[2]։ Արաբական զորքերը Հայաստան ներխուժեցին հարավից և, գրավելով Բաղեշը, առայժմ հաստատվեցին այստեղ։

Պետք է ասել, որ Բուղայի ահռելի բանակների ներխուժումը Հայաստան մեծ իրարանցում ու խուճապ առաջացրեց հայ ազատամարտների շարքերում։ Թշնամու հսկայական ուժերից ունեցած վախը և նրա դեմ համատեղ ու միասնական պայքարի կազմակերպման բացակայությունը հենց սկզբից նախաձեռնությունը տվեցին արաբներին։ Հայերի մեջ սկսված վարանումը, անհամաձայնությունը, վախն ու անմիաբանությունն իվերջո նրանց ուժերը քայքայեցին և թուլացրին։ Այդ ժամանակ ամեն ոք մտածում էր իր քաղաքի, իր բերդի ու ամրոցի մասին և, պարփակվելով նրա շրջանակներում, թշնամու նկատմամբ բռնում էր մեծ մասամբ պասսիվ դիրք։ Դա դեռ բավական չէր. ոմանք, հավատալով արաբների կեղծ խոստումներին, սկսել էին իրար դեմ դավեր լարել ու ամբաստանել միմյանց։ Նախկինում եղած փոխադարձ վստահությունը և սերը տեղի տվեց անվստահության ու անհավատարմության մթնոլորտին, որը հետևյալ ձևով է նկարագրում պատմիչ Թովմա Արծրունին. «Այսպէս տակաւին ի բազումս քայքայեալ լինէր միաբանութիւն աշխարհիս, եւ իւրաքանչիւր ոք այր զընկերէ եւ զեղբօրէ իւրմէ ի չարիս խոկային։ Եւ թուղթս եւ դեսպանս առ թագաւորն յղէին ծածուկս ի

[1] Թովմա Արծրունի, էջ 141։

[2] Տե՛ս Табари, фонд № 577, էջ 46։



միմեանց։ Այլ եւ ընդ միմեանս արկանէին բանս քաութեան, եւ ոչ ոք մնայր գէթ երկու ի միասին»[1]։ Բուղայի արշավանքների ժամանակաշրջանի Հայաստանի պատմությունը ցույց է տալիս, թե հայրենասեր պատմիչը որքան ճշմարտացի կերպով է պատկերացնում այն ժամանակվա հայկական իրականությունը։ Հայերի մեջ սկսված այս իրարանցումից վարպետորեն օգտվում էին միայն արաբները, որոնք գործադրում էին իրենց բոլոր հնարքները հայերի ուժերն էլ ավելի մասնատելու և ազնվականության մեջ պառակտումն ու անհամաձայնությունը խորացնելու համար։

Բաղեշում Բուղայի առաջին զոհը դարձավ արաբ էմիր Մուսա իբն-Զուրարը, որին Բուղան խաբեությամբ իր մոտ հրավիրեց նեղրումն շնորհելու պատրվակով, իսկ հետո ձերբակալեց և կապանքների մեջ Բաղդադ ուղարկեց[2]։ Բալաձորին Բուղայի այս ամարդի արարքը արդարացնում է նրանով, որ Մուսան հայերի հետ գործուն մասնակցություն էր ունեցել Յուսուֆի դեմ մղված պայքարի ու նրա ապստամբության գործում[3]։ Բուղայի զորքերը դրանից հետո իրենց ամբողջ կատաղությունը թափեցին Սասունի և Խութի բնակչության վրա։ Բազմաթիվ բնակավայրեր հողին հավասարվեցին և բնակիչներից շատերն ապանվեցին կամ դերեվարվեցին դեպի Արաբիա ու այլ երկրներ[4]։ 852 թվականի Խութի տակնուվրայությունների ժամանակ արաբների ձեռքն ընկան նաև Սասունի հերոսամարտերի աչքի ընկնող զինվարները՝ Խութեցի Հովնանը, Աշոտ, Դավիթ Բագրատունիները և ուրիշներ, որոնք, աքսորվելով Արաբիա, տանջամահ եղան։ Այսպիսով Բուղան, իրագործելով խալիֆի հանձնարարությունները և քայլ առ քայլ հետապնդելով հայերին, ջլատում ու ոչնչացնում էր նրանց ուժերը։ Արաբ զինվորներն ու պաշտոնյաները այդ ընթացքում սեփականացնում էին հայերի հողամասերն ու հաստատվում նրանց վրա։ Հայերից գատարկված կամ բնակչությունից նոսրացած վայրերում անմիջապես տեղավորվում էին արաբ վերաբնակիչները, որոնք հախուռն բազմությամբ հետևում էին արշավող զորքերին[5]։

852 թվականի կեսերից արաբական զորքերն արագությամբ սկսում են տարածվել նաև Վանա լճի հյուսիսային կողմերում։ Խլա-

[1] Թովմա Արծրունի, էջ 137։

[2] Տե՛ս Յակուբի, «Բազմավեպ», 1958, № 3—5, էջ 102—103, Якуби, История..., Баку, 1927, էջ 20—21, Բալաձորի, «Հանդես ամսօրյա», 1904, № 2, էջ 55—56, Ибн ал-Факих, пер. П. К. Жузе, фонд № 295, էջ 76։

[3] Տե՛ս Բալաձորի, «Հանդես ամսօրյա», 1904, № 2, էջ 55—56։

[4] Տե՛ս նույն տեղը։

[5] Տե՛ս Թովմա Արծրունի, էջ 170։

թում Բուղան, զորքերի մի մասը տալով իր զորավար Ժիրաբին, նրան ուղարկում է դեպի Ռշտունիք ու Տոսպ, իսկ ինքը, շարունակելով արշավանքը, ներխուժում է Ապահունիք։ Ժիրաբը իրեն տրված հանձնարարությունները կատարում է կետ առ կետ։ Նա բնակչությանը մասսայաբար կոտորելուց և աքսորելուց բացի «ղշէնս եւ պատանս եւ զազարակս հրձիգ արարեալ, անապատ կացուցանէն ի մարդոյ եւ յանասնոյ»[1]։ Ուրեմն արաբների վարած ամայացման ու ոչնչացման քաղաքականությունը չէր սահմանափակվում որոշակի շրջանակներով միայն, այլ ամենաչնչին հնարավորության դեպքում գործադրվում էր ամեն տեղ։ Որոշ տեղերում, իհարկե, Ժիրաբի հրոսակախմբերին դիմադրում են, սակայն, քանի որ այդ դիմադրությունը թույլ ու անկազմակերպ էր, դրա համար էլ արաբների կողմից հեշտությամբ ճնշվում և խեղդվում էր արյան մեջ։

Ապահունիքից հետո Բուղան, տեղում հաստատված արաբների առաջնորդությամբ, սկսում է Աշոտ Արծրունու հետապնդումը։

Յակուբին ու Բալաձորին վկայում են, որ Սասունը, Տարոնն ու Բաղեշն իրեն ենթարկելուց հետո Բուղան իր զորքերի մի մասով շարժվում է դեպի Աղբակ, Աշոտ Արծրունու դեմ[2]։ Սակայն չնայած ստեղծված ծանր դրությանը, Աշոտ՝ Մուշեղ Վահևունու, Վահրամ սեպուհի, Վահրամ Տրունու, Հասանի և իրեն հավատարիմ մյուս զինակիցների հետ միասին, ամրանալով Թոռնավան գավառի նշանավոր Նկան ամրոցում, պատրաստվում էր մինչև վերջ դիմադրել ննջգամիտ և ուժեղ թշնամուն։ Աշոտ Արծրունին միաժամանակ իր Գուրգեն եղբորն ուղարկել էր մյուս շրջաններից օգնական նոր ուժեր բերելու։ Արաբներն ամեն ինչ տակնուվրա անելով և գերիների հսկայական խմբեր իրենց հետ վերցրած, շուտով եկան ու պաշարեցին Նկանը։ Հարձակումը Աշոտի ամրոցի վրա անձամբ ղեկավարում էր Բուղան։ Նա զրոհայինների առաջին շարքերում դասավորել էր էլամացիների բնաիր աղեղնավորներին և հեծյալների գնդերին։ Թե ինչպիսի ուժ ու պատրաստություն էր դուրս բերել Բուղան Նկանի դեմ, այդ երևում է Թովմա Արծրունու հետևյալ նկարագրությունից. «Եւ զայլս ազգի ազգի զինուորք ունէին վաղերք եւ վակուրք, սուսերք եւ սուինք. տապարք եւ վիրգահանք, մեքենայք եւ ռմբաքարք, վահանք եւ նիզակք։ Այլ հուր եւ ծծումբ նաւթիւ բարձեալ ի գործ պատերազմին, եւ ղոյժ բնութիւնս յանօթս ապակեղէնս եդեալ, եւ մանր զծծումբն ընդ նմին խառնեալ, եդեալ ի պարսատիկ մեքենայից. եւ զհուրն առ ընթեր նմին հնարաւորեալ արկանել զամրոցսն»[1]։ Պաշարվածներն իրենց հերթին թշնամու դեմ գործադրում էին հնարավոր բոլոր միջոցները նրանց պարիսպներից հեռու քշելու համար։ Արաբները, պարիսպների վրայից թափվող հրահեղուկ և բռնկվող նյութերից պաշտպանվելու համար, հարկադրված, կրում էին թաղիքե հատուկ հագուստներ ու թրջած ծածկոցներ։ Արաբ զորքերի զրոհներն ուղեկցվում էին փողերի, թմբուկների և երաժշտական այլ գործիքների հնչեղ նվագակցության տակ։ Թշնամու այս մեծ պատրաստությունը թեև չէր ահաբեկում Աշոտ Արծրունուն, բայց նա իր զինակիցների՝ Վահան և Մուշեղ Արծրունիների հետ խորհրդակցելով՝ նպատակահարմար է գտնում գուցե որոշ զիջումներով կանխել ընդհարումը և թշնամու հետ հաշտվել։ Մինչդեռ Աշոտ Արծրունին այդ խորհրդածությունների մեջ էր, պաշարվածների մեկ այլ խումբ գաղտագողի բունում է կատարյալ դավադրության ճանապարհը։ Այդ խմբի ղեկավարները, կապ հաստատելով Բուղայի հետ, գաղտնի կերպով խոստանում են իրենց ղեկավարին նրան հանձնել այն պայմանով, որպեսզի իրենք ազատ արձակվեն և պահպանեն բոլոր իրավունքները։ Դավադիրները չեն մոռանում արաբական զորավարին տեղեկացնելու նաև այն մասին, որ Աշոտի եղբայրը մի խումբ զորականների հետ անցել է Աբբասյանների կողմերը ռազմական նոր պատրաստություններ տեսնելու և ժողովրդական աշխարհազորային գնդեր կազմելու համար։ Նրանք իրենց թշնամուն հասկացնել են տալիս, որ «...եթէ չերկարիցի գործոյս այսորիկ հանդէս, եւ մարտիցն հանգամանք ոչ փութանակի վարիցին, գուցէ օգնականութեամբ պիշերոյ եկեսցէ ի վերայ քո, եւ մեծամեծ աւերիս ի վերայ քո եւ զօրացդ արքունի հասուցանէ»[2]։ Աշոտի հակառակորդները Բուղային զգուշացնում էին նաև, որ Աշոտը «...քաջ է եւ պատերազմօղ, եւ միաբանք են որք ընդ նմա են զօրքն. եւ զանձինս ի մահ դիցեն ի վերայ տանց եւ աշխարհաց եւ ազանց եւ տոհմից իւրեանց»[3], որոնց ձեռքում են զրահներում Ջլմար, Սրինդ և ճախուկ բերդերը և նրանցից տասի դեմ արաբներից հարյուրն անգամ կռվել չեն կարող և անպայման կպարտվեն, ինչպես պարտվել էր նրա նախորդը։ Բուղան առանց վարանելու իրեն զրած նամակին տալիս է միանգամայն դրական պատասխան։ Դրանից հետո, երբ դավաճանները երես առ երես հրաժարվում են Աշոտին ենթարկվելուց, այն ժամանակ նա ինքնակամ անձնատուր է լինում արաբներին։ Բուղան ոչ միայն Աշոտ

1 Թովմա Արծրունի, էջ 142։

2 Տե՛ս Յակուբի, «Բազմավեպ», 1958, № 3—5, էջ 102, Якубш, История, էջ 20, Բալաձորի, «Հանդես ամսօրյա», 1904, № 2, էջ 56։



1 Թովմա Արծրունի, էջ 147։

2 Նույն տեղում, էջ 150։

3 Նույն տեղում, էջ 151։

Արծրունուն, այլև նրանցից շատերին, ում ազատություն էր խոստացել մատնության համար, նույնպես ծանր կապանքների մեջ դնելով՝ աքսորում է Արաբիա։ Ճանապարհին գերյալների խմբին ուղեկցող արաբները մի կիրճի մեջ հարձակման են ենթարկվում Գևորգ Ակռացու և Խոսրով Գարաեղյանի զինված խմբի կողմից և թեև սրանց հաջողվում է գերիների մի մասին ազատել, բայց իրենք էլ բռնվում ու ծանր խոշտանգումների ենթարկվելով՝ սպանվում են։ Աշոտի ձերբակալության և աքսորվելու մասին Թովմա Արծրունուց բացի հիշատակում են նաև արաբ պատմիչներ Յակուբին[1] ու Բալաձորին[2]։ Ըստ որում դրանցից առաջինը նույնիսկ բացեիբաց խոստովանում է, որ Բուղան հայոց իշխանին խարեությամբ էր ձերբակալել։

Աշոտին ու նրա զինակիցներին դավադրաբար մեջտեղից վերացնելուց հետո Բուղան իր ավելի քան 15000-անոց զորքով շարժվում է նրա եղբոր՝ Գուրգեն Արծրունու դեմ։ Գուրգենը, որ հապճեպ կարողացել էր իր շուրջը համախմբել 900 մարտիկներ, այդ ժամանակ ամրացել էր Կորճեք աշխարհի Որսիրանք գավառի Թվա (Թու) գյուղի լեռներում, որից ներքև տարածվում էր Արյան լիճ-աշտավայրը։ Թովմա Արծրունին վկայում է, որ այստեղ հայոց քաջերին ապավինել էին Աղբակի, Զարհևանի և շրջակա մյուս գավառների բազմաթիվ գաղթականներ։ Ուրեմն հայկական կողող բանակի դրությունն ավելի ծանր էր, որովհետև նրանք, թշնամուց պաշտպանվելու հետ միասին, պետք է պաշտպաներին նաև անզեն ու անպաշտպան հաղարավոր մարդկանց։

Հասնելով այստեղ, Բուղան, իր սովորության համաձայն, սկզբում Գուրգենին մի քանի անգամ հրավիրում է իր մոտ բանակցելու։ Վերջապես Արծրունյաց իշխանը, զորքերի հրամանատարությունը հանձնելով Ապուսահլճի եղբայր Մուշեղին, ինքն անձամբ, հակառակ մյուսների ցանկության, մեկնում է թշնամու զորակայանը, սակայն դեռ չէր հասել տեղ, երբ նրա մարդիկ, նկատելով, որ արաբները հարձակման են անցել, անմիջապես ետ են կանչում իրենց առաջնորդին և զաղթականության առնելով զինվորների ամուր պաշտպանության տակ՝ պատրաստվում են դիմադրելու։ Արծրունիների զորքերի հետ միասին, թշնամու դեմ ամուր պատնեշ էին կազմել նաև Գնունի, Գազրիկյան, Ամատունի, Վարաժնունի, Ընտրունի, Ակեացի, Վահևունի և Անձևացի նախարարությունների

[1] Տե՛ս Յակուբի, «Բազմավեպ», 1958, № 3—5, էջ 102, Якуби, История, էջ 20։

[2] Տե՛ս Բալաձորի, «Հանդես ամսօրյա», 1904, № 2, էջ 56։



ուժերը։ Հայոց զորքերի ձախ թևն անմիջապես գլխավորում էր ինքը Գուրգենը, իսկ աջը՝ Ապումկդեմ Արծրունին։ Կռվին ակտիվորեն մասնակցում էին նաև հոգևորականները, ծերերն ու դեռատիները։ 852 թվականի ամռանը ուժերի չափազանց անհավասար պայմաններում սկսվեց Արյան լճի հայտնի ճակատամարտը հայերի և արաբների միջև։ Ինչպես դրանից առաջ, այժմ նույնպես կռվին արաբների դեմ կրում էր ժողովրդական պայքարի բնույթ, որովհետև նախարարական կանոնավոր զորքերի հետ ուս-ուսի տված, ամուր պատնեշ էին կազմել գյուղացիական, ժողովրդական աշխարհազորայինները, որոնք «...դիմեցին խուռն յանդուգն յարձակմամբ, եւ բախեցին զգունդն եւ պատառեցին զռազմն, եւ զարձուցին պայլազգիսն»[1]։ Հայ մարտիկների համարձակ գրոհները մինչև վերջ անընդհատ հարվածի ու ճնշման տակ էին պահում թշնամուն։ Նրանք «...գոչէին վիշապաձայն, եւ բնկանէին առիւծաբար, եւ հարկանէին վարազաբար, եւ մատնեցին ի սատակումն եւ ի պարտուխիւն, եւ իւրաքանչիւր այլ գախուչան իւր յերկիր յարեալ, եւ ինքն զկնի միւսոյն ճեպէր, եւ ի սաստիկ բախմանէ խուռն նիզակացն եւ ի զինուց փայլելոյ եւ շողալոյ սուսերացն եւ սրընդելոյ աղեղանցն լարելոյ՝ հրաձգութիւն իմն արտաքս ելանէր իբրեւ յամպոց ճայթմանէ, եւ լեառնն իբրեւ ի հրոյ վառեալ երեւէր»[2]։ Յոթը ժամ տևող լարված ու կատաղի պայքարից հետո աշխարհազորայիններին հաջողվում է ճեղքել թշնամու ճակատը և խուճապի մատնել նրան։ Արյան լճի ճակատամարտն ավարտվեց հայերի փառավոր հաղթանակով։ Այդ ճակատամարտը արաբների վրա նստեց 1800 մարդկային կյանք[3], չհաշված վիրավորներն ու գերիները։ Հաղթողները թշնամու փախչող զորքերի հետապնդումը շարունակելով մինչև ուշ գիշեր, նրանց բոլորին արտաքսեցին իրենց սահմաններից հեռու։ Արաբական զորքերի արյունարբու զորավարը, չկարողանալով դրսևորել իր կատաղությունը, միջոցներ էր որոնում Գուրգենին նույնպես որոգայթի մեջ գցելու համար։

Բուղայի առաջին գործը եղավ այն, որ նա ամբողջ երկրով մեկ սկսեց հրովարտակներ տարածել և ազդարարել, որ, իբր, այսուհետև չպետք է տեղահան արվի կամ աքսորվի ժողովուրդը, որ բոլորն ազատ ու համարձակ կարող են ապրել իրենց տեղերում, իսկ իշխանությունները երաշխավորում են նրանց կյանքն ու գույքը։ Նույնանման բովանդակությամբ մի գրություն էլ նա հասցեագրեց Գուրգեն Արծրունուն և տալով իր զինակիցներին՝ Համիդին ու Եղի-

[1] Թովմա Արծրունի, էջ 165։

[2] Նույն տեղում։

[3] Տե՛ս նույն տեղը։

մին, 10 000 զինվորների ուղեկցությամբ ուղարկեց նրա մոտ: Գուրգենը, հավատալով Բուղային, գնում է նրա մոտ և իրոք արժանանում փառավոր ընդունելության: Իսկ մի քանի օր հետո, երբ նա եկել էր վերադարձել, Բուղան խալիֆի անունից կազմում է մի կեղծ նամակ և ուղարկում նրան: Այդ նամակի մեջ իբր խալիֆը նրան հարմար էր գտնում նշանակելու եղբոր՝ Աշոտի փոխարեն Վասպուրականի գահերեց իշխան և առաջարկում է համապատասխան կարգադրություններ ստանալ անձամբ Բուղայից: Եվ երբ այդ առիթով Գուրգենն Արծրունին երկրորդ անգամ մեկնում է Բուղայի մոտ, նրան ձերբակալում և աքսորում են Բազդադ[1]:

Գուրգենի անկումը որոշակի ազդեցություն է ունենում Վասպուրականի ազատագրական շարժումների վրա: Դրանից հետո հայերը զգալիորեն թուլացան, հուսահատվեցին, իսկ նրանց ուժերը չլատվեցին ու բաժան-բաժան եղան, մի հանգամանք, որը հնարավորություն ավեց արաբական հրոսակախմբերին նորանոր ավերածություններ գործելու Հայաստանի այդ շրջաններում:

Թե Արյան լճի ճակատամարտից հետո Վասպուրականի ու հարակից շրջանների հայկական ապստամբական շարժումն ինչպիսի ծանր ժամանակներ էր ապրում, այդ երևում է պատմիչի հետևյալ խոսքերից. «Յայնժամ սկսան,—ասում է նա,—ամենայն նախարարքն հայոց ցրուեալ ի միմեանց. եւ զնացին կալան զամրական տեղիս ով ոք եւ փութացաւ մտանել յամուրս ի բերդսն որ ի Վասպուրականի. եւ զօրքն ցրուեցան, քայքայեցան ընդ ամենայն երեսս երկրին... եւ եբարձ զամենայն արս զօրութեանց եւ ոչ ոք էր այնուհետեւ որ կարէր կալ ի կայի իւրում ունել զդեմ նորա...»[2]:

Վասպուրականի արյունալի դեպքերից հետո Բուղայի դիվային ծրագրերը բացահայտվեցին է՛լ ավելի ուժգնությամբ: Նա «...հրաման տուեալ ելանել յերկիրն Վասպուրական, ողողել գերել գերփել դաշխարհն. աւերել եւ բնաջինջ առնել եւ մաշել ի սուր սուսերի: Զթագմամարդի գեօղս եւ աւանս առնել անմարդիս, եւ գմնացեալսն վարել ի գերութիւն, գկանայս հանդերձ մանկտով»[3]: Ուրեմն Բուղայի ծրագրի իմաստը կայանում էր հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման, բնակավայրերի մասսայական ավերման և ազգաբնակչությանը զանգվածաբար հեռավոր աքսորավայրեր քշելու մեջ, որին պետք է հաջորդեր արաբական ցեղերի մասսայական վերաբնակեցումն ամայացված տերիտորիաների վրա:

Բուղան Հայաստանի հարավային նահանգներն ու գավառները

1 Տե՛ս Թովմա Արծրունի, էջ 166—169:
2 Նույն տեղում, էջ 169—170:
3 Նույն տեղում, էջ 142:



ավերելուց և բնակիչներին հետապնդելուց հետո, 852 թվականի վերջերին, իր զորքերի հիմնական մասով շարժվում է դեպի հյուսիս՝ ձմեռը Դվինում անցկացնելու համար: Այդ ժամանակ արաբներն ասպատակներ էին սփռել նաև շրջակա գավառները նույն գործը շարունակելու և ժողովրդի հաշվին մինչև գարուն գլուխ պահելու համար[1]: Արաբներն առանձնապես հետապնդում ու ոչնչացնում էին հայ ազնվականներին ու զինվորականներին[2]:

Հասնելով Դվին, Բուղան սկսում է դատաստան տեսնել Վասպուրականից ու Տարոնից բերված գերիների հետ և, անասելի տանջանքերի ենթարկելով նրանց, սպիտել, որպեսզի դավանափոխ լինեն: Արաբ դահիճները հասել էին այնտեղ, որ մերկացրած սրերով ու սուսերներով, արյունարբու գազանների նման, հարձակվում էին իրենց անպաշտպան ու անզեն զոհերի վրա «եւ ծեծէին սրովն իբրեւ զի հատանիցէ փայտ ի մայրս անտառախիտս»[3]: Այս եղանակով արաբները նահատակեցին 150 նշանավոր անձանց, որոնց հիշատակն այնուհետև մշտապես նշվում էր մեհենի 25-ին[4]: Սկզբնաղբյուրներում Դվինում տանջամահ արվածներից հիշատակվում են Աւոմ Անձևացին, Մլեհ Վարաժնունին, Գևորգ Բազկացին, Վասակը և ուրիշներ: Հայ գերյալները նույնիսկ մահվան նախադռանը չէին կորցնում իրենց ֆիզիկական ու հոգեկան արիությունը և գլուխ չէին խոնարհում անարգ թշնամու առաջ: Գևորգ Բազկացու մասին, օրինակ, պատմվում է մի դիպված, թե ինչպես նա, դահճի ձեռքից խլելով սուսերը, տեղն ու տեղը սրախողխող է անում նրան և հետո ինքն էլ մյուսների հետ սպանվում: Այս դեպքերը տեղի են ունենում 853 թվականի սկզբներին[5]:

Նույն թվականի գարունը բացվելուն պես Բուղան հատուկ հրովարտակներ է ուղարկում երկրով մեկ սփռված իր հրոսակախմբերի առաջնորդներին ու ենթակա իշխանավորներին՝ արշավանքը դեպի Հայաստանի ու Արմենիայի մյուս շրջանները շարունակելու մասին: Այս հրամանը վերաբերում էր նաև հայ նախարարներից ու ազնվականներից նրանց, ովքեր անվնաս էին մնացել և համարվում էին արաբների այսպես ասած հավատարիմ ու վստահելի մարդիկ: Սակայն, ինչպես երևում է, նրա ենթականերից բոլորը չէին, որ հակված էին կատարելու այդ հրամանը: Այդպիսիները «...խոյս առեալ յերեսաց նորա, հատուն տեղի, ելին կալան զամրական տե-

1 Տե՛ս Թովմա Արծրունի, էջ 189:
2 Տե՛ս Հովհ. Դրասխանակերտցի, էջ 121:
3 Թովմա Արծրունի, էջ 191:
4 Տե՛ս նույն տեղը, էջ 124:
5 Տե՛ս նույն տեղը, էջ 192—193:

ղիս, ի բերդս եւ ի քաղաքս եւ լերինս ընդ ինքեանս գումարել զզօրս, եւ զբնակիչս աշխարհաց իւրեանց ամենայն պատրաստութեամբ»[1]: Սակայն անկախ դրանից Բուղան իր արշավանքը ձեռնարկեց: Նա առաջինը հարձակվում է Սյունիքի վրա և սկսում հետապնդել ու հալածել Սյունյաց նշանավոր գործիչներին: Հայաստանի լեռնային այս շրջանի զինված ուժերի մի մասը թեև քաշվում է Բաղքի անմատչելի վայրերը ու պատրաստվում դիմադրելու, բայց Բուղայի մարդիկ, այնուամենայնիվ, կարողանում են դարձյալ դավով ու պավադրությամբ ձեռք գցել մեծ իշխան Վասակ Գաբուռին, նրա եղբորը՝ Աշոտին և մորը ուրիշ շատ մարդկանց հետ միասին, որոնց բոլորին աքսորում են Արաբիա[2]: Դրանից հետո արաբները նույն կերպ իրենց են ենթարկում նաև Խաչենը, Արցախը, Գարդմանը, Ուտիքն ու Աղվանքը: Արաբների արշավանքներն ամենուրեք ուղեկցվում էին սոսկալի ավերածություններով ու մասսայական կոտորածներով: Այդ վայրերից նույնպես Բուղան վերցրեց մեծ քանակությամբ գերիներ ու աքսորեց[3]: Հետաքրքիր է, որ իր այս արշավանքների ընթացքում Բուղան միևնույն ձևով էր վարվում նաև նրանց նկատմամբ, ովքեր թշնամանքի ոչ մի առիթ չէին տվել նրան: Բուղայի այդ տմարդի վարմունքը չի թաքցնում նույնիսկ արաբ պատմիչ Յակուբին, որն ասում է, թե Բուղան «...սկսեց հետապնդել նրանց, որոնց ինքն էր ներումն շնորհել: Սակայն ամանդ հաջողվեց նրանից թաքնվել և դրագրություններ սկսել բյուզանդացիների, խազարների և սլավոնների թագավորների հետ»[4]: Տաբարիի և Իբն ալ-Ասիրի վկայությամբ Հայաստանում Բուղայի արշավանքների ժամանակ միայն սպանվածների թիվն անցնում էր 30000-ից[5]:

853 թվականի կեսերին Բուղան Հայաստանից անցնում է Վրաստան, դրավում Թիֆլիսն ու պատերազմական գործողություններ ձեռնարկում Կովկասյան նախալեռների շրջանում բնակվող ժողովուրդների՝ ծանարների դեմ, սակայն այստեղ նա հաջողություն չի ունենում և, մեծ ջարդ կրելով, նա է գալիս Պարտավ՝ նոր արշավանքների պատրաստվելու համար:

Բուղայի՝ ծանարներից կրած պարտությունը այնպիսի ոգևորություն էր առաջացրել Արմենիայի ու Հայաստանի ժողովուրդների

[1] Թովմա Արծրունի, էջ 194:

[2] Տե՛ս Հովհ. Դրասխանակերտցի, էջ 125—126, Ստ. Օրբելյան, էջ 170—171:

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 127—128, Վարդան Բարձրբերդցի, էջ 111:

[4] Якуби, История, стр. 20—21.

[5] Տե՛ս Табари, фонд № 577, էջ 49, Տաբարի, «Հանդես ամսօրյա», 1906, № 9, էջ 275—276, Ибн ал-Асир, фонд № 295, էջ 76:



մեջ, որ այդ դեպքերից հետո արաբների դեմ ակտիվ գործողությունների են անցնում նաև մյուսները: Ծանարների հաղթանակն առանձնապես մեծ ոգևորություն էր առաջացրել Հայաստանի Արցախի բնակչության մեջ: Արցախցիները, համախմբվելով իրենց առաջնորդ քաջ զորավար Ապումուսեի շուրջը, արժանի ջարդ են տալիս արաբներին: Ապումուսեն, դիմելով իր հետևորդներին, ասում էր. «Ոչ է ասէ վաստակոյն մեք քան զծանարան եղիցուք. զի եւ ամուրս հզօրագոյնս եւ բարձրագոյնս քան զնոսա ունիմք, եւ զիւրաքանչառ ի յունել զմուտս կրճիցն: Միայն միաբանութեամբ սրտիւ կացցուք ապաւինեալ յօգնականութիւնն Աստուծոյ. եւ թէ մեռանիլ եւս ումեք հասցէ, ի պարծանս անձին եւ ազգին իւրոյ համարեալ է»: Նա «...ժողովեալ զբնակիչս աշխարհին համօրէն զարս եւ զկանայս. եւ զայլս յերկրէն աղուանից բազմութիւն ռամիկ շինականաց, եւ լեզհոնս զօրականաց»[1]: Արցախցիները շուտով իրենց կենտրոնը դարձնում են Քիշ անմատչելի բերդը և անհավասար կռիվ սկսում անհամեմատ ուժեղ թշնամու դեմ: Կատաղած Բուղան մեկ ամբողջ տարի միանդամայն ապարդյուն ջանքեր էր թափում բերդը գրավելու համար, բայց ամեն անգամ ջախջախվում ու ետ էր շպրտվում: Մեկ տարվա ընթացքում Բուղան Քիշի դեմ ձեռնարկել էր 23 գրոհ և ամեն անգամ էլ մեծ կորուստներ կրելով, ամոթապարտ ու գլխիկոր ետ էր շպրտվել նրա պարիսպների մոտից: Ապումուսեն և նրա կտրիչները իվերջո զոհ են գնում արաբների արյունոտ դավադրությանը:

Բուղայի իշխանության տարիներին հայ ժողովրդի դեմ սկսված տեռորն ու կոտորածը զգալի հարված հասցրին նաև հայկական նախարարական դասին: Բագրատունի, Արծրունյաց, Սյունյաց և մյուս շատ տոհմերի ներկայացուցիչներ անարգ թշնամու դեմ մղված անհավասար կռիվներում զոհվեցին, իսկ կենդանի մնացածներից շատերը քշվեցին Արաբիա: 850-ական թվականներին մատների վրա կարելի էր հաշվել նրանց, ովքեր այս կամ այն կերպ ազատվել էին թշնամու որոգայթներից: Այդ փրկվածների մեջ էին, օրինակ, աքսորված Սմբատ Բագրատունի սպարապետի երեք որդիները՝ Աշոտը, Մուշեղն ու Սմբատը: Մատների վրա կարելի էր հաշվել նաև Արծրունիների և մյուս նախարարական տոհմերի ներկայացուցիչներին, որոնք, ազատ լինելով հանդերձ, առայժմ հպիվ պրազված էին իրար մեջ եղած ներքին վեճերն ու հաշիվները մաքրելով: Թովմա Արծրունին, որ մշտապես հանդես է գալիս որպես իր տոհմի ջատագովը, այս անգամ, սակայն, նրա ներկայացուցիչներին

[1] Թովմա Արծրունի, էջ 199:

պահարակում է այն բանի համար, որ նրանք ժողովրդի ուժերը միավորելու և ընդհանուր թշնամու դեմ համատեղ պայքար մղելու փոխարեն սկսել էին ներքին կռիվներ բորբոքել, կռիվներ, որոնց ընթացքում «...նուաղագոյնքն եւ տկարք թափառեալք, աղքատութեամբ վտանգէին. իսկ կարողագոյնքն եւ բռնաւորք ըստ բնութեան գաղանաց վայրենամիտք լեալ, անամօթ եւ անարգել յափշտակութեամբ վրդովէին զբոլոր երկիրս»[1]: Սակայն այս ներքին անմիաբանությունն ու անհամաձայնությունը բարեբախտաբար շուտով տեղի է տալիս ժողովրդի ուժերի համախմբման բուռն ցանկությանը, մի զգացում, որը մանավանդ ծանրների երկրում ու Արցախում Բուղայի կրած խայտառակ պարտությունից հետո շատերին էր ապատագրվելու հույս ներշնչում:

Ազատագրական պայքարի դրոշն այս անգամ առաջինը բարձրացնում են վասպուրականցիները: Որ իսկապես Վասպուրականում այդ օրերին տեղի ունեցող խմորումներն անմիջականորեն արդյունք էին Բուղայի պարտության, այդ պարզ կերպով երևում է նաև Թովմա Արծրունու հետևյալ տողերից. «Ի սոյն աւուրս՝ որք մնացեալ էին ի տանէն Արծրունեաց՝ իբրեւ լուան զպարտումն զօրացն արքունի ի Ծանարացն, ի մի վայր եկեալ գունդ կազմեալ հետեւազօրքն մարտակցօք, հանդերձ խառնաղանջ ամբոխիւ լինին թուեալ արք 8»[2]: Պատմիչի հիշատակած «խառնաղանջ ամբոխ»-ը ժողովրդական զինված ուժերն էին, որոնք, ինչպես տեսանք, 850-ական թվականի սկզբին նույնպես օտարերկրյա զավթիչների դեմ մղվող ազատագրական պայքարում կատարում էին վճռական դեր: Վասպուրականում հավաքված 4000 կորիճների զեկավար է ընտրվում Ապու-Ջաֆր Արծրունին, իսկ նրա օգնական՝ նրա քրոջ որդին՝ Սահակ Ապու-Մկդեմը, Արյան լճի հայտնի ճակատամարտի հերոս Գուրգեն Արծրունու զինակիցը: Ապստամբներն իրենց առաջին գործողությունները ձեռնարկում են Ճուաշ և Թոռնավան գավառներում ծվարած արաբ պաշտոնյաների, զինվորականների ու վերաբնակիչների դեմ: Բուղան Վասպուրականի ապստամբներին ճնշելու գործը հանձնարարում է Նախիջևանի արաբ կառավարիչ Իբրահիմին: Ճանապարհին արաբական կանոնավոր զորքերին են միանում նաև Բերկրիի արաբական ութմանիկ ցեղերի ուժերը: Սակայն առաջին իսկ ընդհարման ժամանակ, որ տեղի ունեցավ Վասպուրականի հողաղերքը գյուղի մոտ, հայերը կարողացան ջախջախել թշնամուն ու փախուստի մատնել նրա ցաքուցրիվ զորամասերին: Սակայն

[1] Թովմա Արծրունի, էջ 216:
[2] Նույն տեղում, էջ 219:



այս հաղթանակը մեծ վիշտ բերեց նաև հաղթողներին, որովհետև այդ ժամանակ բոլորովին անսպասելիորեն զոհվեց նաև հաղթանակի գլխավոր կազմակերպիչներից ու զեկավարներից մեկը՝ Ապու-Մկդեմը: Քաջ զորավարի մահը միայն մի պահ շփոթեցրեց նրա զինվորներին: Բազմամարդ թշնամու դեմ տարած հաղթանակը և սիրած զորավարի զոհվելը նորանոր սխրանքների էին մղում հայոց քաջերին:

Խոզաղբերքի ճակատամարտից հետո Ապու-Ջաֆրը, անցնելով Աղբակ գավառը, համալրեց իր շարքերը նոր ու թարմ ուժերով, շեշտակի հարձակումով արաբներին դուրս քշեց Ոստան քաղաքից և ազատագրեց այն: Ապու-Ջաֆրին շուտով փոխարինում է Արծրունի Ապուսելճի որդի Գուրգենը, որը Բուղայի արշավանքների սկզբում թողել-հեռացել էր արևմուտք, բայց այստեղ սաստիկ գժտվելով բյուզանդացիների հետ և նրանցից շատերին ոչնչացնելով՝ ստիպված եղ էր եկել ու միացել սպարապետ Սմբատ Բագրատունու շքախմբին: Բուղայի վերաբերմունքը Գուրգենի նկատմամբ առայժմ դրական էր, որովհետև բյուզանդացիների դեմ կռվելով նա փաստորեն աջակցել էր արաբներին:

Գալով Վասպուրական, Գուրգենն անմիջապես իր ձեռքն է վերցնում Ջլմար և Սրինգ անառիկ բերդերը և սկսում հարձակումը Վասպուրականում տեղավորված այլազգի վերաբնակիչների դեմ: Գուրգենի ձեռնարկած այդ համարձակ գործողությունները շատ շուտով ավարտվում են հաղթանակով: Կարճ ժամանակ անց «...նա առնէր հարուածս մեծամեծս այլազգեացն. եւ սատակէր զնոսա սրով եւ աղեղամբ, եւ երբարձ զամենայն աղգս տաճկաց որ բնակեալ էին ի Վասպուրական տէրութեանն»[1]: Գուրգենի ու նրա զինակիցների հռչակը գնալով մեծանում էր: Վասպուրականի ապստամբները նույն հաջողությամբ ջախջախում էին նաև Բուղայի ուղարկած նոր ու թարմ ուժերին: Հայերի հաղթանակներն այնպիսի ահ ու սարսափ էին տարածել արաբների վրա, որ «եւ ոչ եւս այնուհետեւ համարձակ ելանէին եւ մտանէին յաշխարհս Վասպուրական զօրքն տաճկաց. զի անկաւ ահ սաստիկ ի վերայ նոցա»[2]:

Բուղան, որ ծանրների երկրում և Արցախում կրած պարտությունից հետո առանց այն էլ Արմենիայում և խալիֆայական արքունիքում բավական գցել էր իր հեղինակությունը, այլևս չէր հանդգնում համարձակ գործողություններ ձեռնարկել Վասպուրականի դեմ, վախենալով նոր պարտությունից: Այդ պատճառով էլ նա, իր

[1] Թովմա Արծրունի, էջ 221:
[2] Նույն տեղում, էջ 222:

համար ավելորդ անախորժություններ չստեղծելու նպատակով, ստիպված եղավ անցնելու պիջումների քաղաքականության: Նա Գուրգեն Արծրունուն ճանաչից Վասպուրականի դահերեց իշխան և որպես համերաշխության նշան նրան ուղարկեց թանկարժեք նվերներ, նժույգ, զենքեր և այլն: Այս բոլոր դեպքերը տեղի էին ունենում Բուղայի վերադարձի նախօրեին՝ 850-ական թվականների կեսերին: Բալաձորին Բուղայի հեռանալը Արմենիայից վերագրում է հիջրայի 241, այսինքն, մեր թվականությամբ 855—856 թվականներին[1]: Արաբ պատմիչի հետ համաբայա համընկնում է նաև Մովսես Կաղանկատվացու հիշատակությունը, ըստ որի Բուղայի արշավանքն սկսվել է 852 թվականին և տևել է երեք տարի[2]:

Բուղան Արմենիայից հեռանալուց առաջ տեղում իշխանությունը ժամանակավորապես հանձնում է Նախիջևանի էմիր Իբրահիմին, որին շուտով փոխարինում է ոստիկանի պաշտոնով Բաղդադից ժամանած Մուհամեդ իբն-Խալիդ իբն-Եզիդ իբն-Մազյադ աշ-Շայբանին[3], որի օրոք, ինչպես հաստատում է Յակուբին, Հայաստանում սիրում էր հանդարտություն, հալածանքների ու հետապնդումների քաղաքականությունը տեղի էր տվել դիջելու և սիրաշահելու քաղաքականությանը[4]:

Հայաստանի և հպատակ մյուս երկրների նկատմամբ արաբների դիջումներն ու մեղմ քաղաքականությունը կապված էր 850-ական թվականների կեսերից Արաբական խալիֆայության համար ստեղծված ռազմա-քաղաքական ընդհանուր իրավիճակի հետ:

Արաբական պետության ներսում ֆեոդալական հարաբերությունների բուռն զարգացման շնորհիվ կենտրոնախույս ուժերի դեբակշռությունն արդեն IX դարի կեսերին հասել էր մի այնպիսի աստիճանի, որ ոչ միայն վերջնականապես բացառվում էր նախկին ռազմա-ֆեոդալական միասնական ու կենտրոնացված պետության գոյությունը, այլև ուղենշվում էր այդ պետության արագ թուլացումը, մասնատումն ու վերջնական կործանումը: Արաբական միահեծան խալիֆայության կործանման առաջին նշանները երևացին դեռ այն ժամանակ, երբ արաբ դահակալները, վստահություն չունենալով սեփական ժողովրդից կազմված զորքի նկատմամբ, սկսեցին իրենց նեցուկը դարձնել օտարերկրյա թուրքական վարձկաններին: Երկրի ներսում տասնամյակներ շարունակ տեղի ունեցող պատե-

[1] Տե՛ս *Баладзори*, Книга завоевания стран, էջ 22:
[2] Տե՛ս Մովսես Կաղանկատվացի, էջ 267:
[3] Տե՛ս Յակուբի, «Բազմավեպ», 1958, № 3—5, էջ 103, Անանուն (11-րդ դ.), Վրաց (Քարթլիի) մատյանը, էջ 200—201:
[4] Տե՛ս *Якуби*, История...., էջ 21:



տական անկարգությունները, ներքին կռիվներն ու միջֆեոդալական պայքարն ինքնըստինքյան ուժեղացնում էին նաև աշխատավորական մասսաների շահագործումն ու ճնշումը, ուրեմն և նոր ուժով բորբոքում ներքին դասակարգային պայքարը, որի լավագույն օրինակը հանդիսացավ 860—880-ական թվականներին բռնկված գեներների ապստամբությունը: Եթե այս բոլորին ավելացնելու լինենք նաև դարի կեսերից սկսած ու սպառնալից ձևով մեծ արագությամբ աճող Բյուզանդական կայսրության ճնշումն ու հպատակ ժողովուրդների ազգային-ազատագրական հուժկու շարժումները, ապա լրովին հասկանալի պետք է լինի, թե ինչու Արաբական խալիֆայությունն իր գոյության օրհասական պահին պետք է աշխատեր սիրելու փոխարեն դոնե իր ազդեցության որոշակի շրջանակների մեջ պահել նաև Հայաստանը:

Մի ժամանակ արաբներն ուրիշ երկրների և ուրիշ ժողովուրդների սիրում էին կամ իրենց ազդեցության տակ էին գցում բռնի ուժով: Այժմ այդ ժամանակներն անցել էին և արաբներն այլևս ուրիշներին ստրկացնելու համապատասխան ուժեր չունեին: Նրանց ձեռքին մնացել էր միայն մշտապես կեղծ ու խաբուսիկ բովանդակություն ունեցող սիրաշահելու քաղաքականությունը, որը Հայաստանում գործնականորեն արտահայտվում էր հայ աքսորյալների հայրենադարձությամբ և նրանցից նշանավորների պաշտոնների և ժառանգական ու սեփականատիրական իրավունքների վերականգնումով, մասսայական հալածանքների ու հետապնդումների դադարեցումով և երկրի ներքին կառավարման ասպարեզում հայ նախարարների մասնակցության ակտիվացումով: Այս բոլորը հայ ժողովրդի միջին դարերի պատմության մեջ դարագլուխ կազմող երեվույթներ էին, դրանց իրականացումը հետևանք էր այն հերոսական պայքարի ու մեծ զոհողությունների, որին ժողովուրդը դիմեց արաբական ծանր ու արյունոտ սիրապետության ամբողջ ժամանակաշրջանում: Ահա այդ ժամանակ էր, որ Մութավաքիլ խալիֆի կարգադրությամբ գերության տարավեցին ու հայրենիք վերադարձան Վասակ Գաբուռն իր եղբոր՝ Աշոտի և մոր հետ միասին[1], Վասպուրականի Աշոտ Արծրունին և նրա որդի Գրիգորը[2]: Մեկ տարի հետո, 857 թվականին հայրենիք վերադարձան նաև Աշոտ Արծրունու եղբայր՝ Գուրգենը[3] և շատ ուրիշներ: Գերեզարձվածները խալիֆայական հրամանով կրկին հաստատվում էին իրենց տիրույթներում և առայ-

[1] Տե՛ս Հովհ. Դրասխանակերտցի, էջ 135, Ստ. Օրբելյան, էջ 172:
[2] Տե՛ս Թովմա Արծրունի, էջ 226—227:
[3] Տե՛ս նույն տեղը, էջ 228—229:

ժրմ մնում որպես խալիֆի վասալներ։ Այս քաղաքականության անմիջական հետևանքը պետք է համարել նաև այն, որ արաբները 850-ական թվականների վերջին սպարապետ Սմբատ Բագրատունու որդուն՝ Աշոտ Բագրատունուն նշանակեցին Հայաստանի կառավարիչ, իսկ ապա նաև իշխանաց իշխան։ Դրանից հետո Արաբական խալիֆայությունը, հարկադրված, ստիճանաբար լուծարքի էր ենթարկում կամ բոլորովին վերացնում նաև կառավարման այլևայլ ֆունկցիաներ կատարող հաստատությունները ու պաշտոնեությունները և նրանց լիազորությունները հանձնում տեղական ազնվականությանը։ 862 թվականին Հայաստանի վերջին ոստիկան Ալի իբն-Յահյա ալ-Արմանին ինքնակամ կերպով Աշոտ Բագրատունուն ղիջեց նաև ոստիկանի պարտականությունները, որից հետո երկիրը կառավարելու բնագավառում Աշոտ Բագրատունու իրավական և փաստական լիազորություններն էլ ավելի ընդարձակվեցին և հնարավորություն տվին նրան հայ ֆեոդալների ու ժողովրդի ուժերը համախմբելու և նոր ջանքեր գործադրելու երկրի լիակատար անկախությանը հասնելու համար, որն իրականություն դարձավ մի փոքր ուշ՝ 887 թվականին և որի գլուխ անցան Բագրատունիները։

Արաբական լծի դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական ապստամբությունների մասին որպես ամփոփում կարելի է ասել հետևյալը.

1. Ինչպես նվաճված մյուս երկրներում, այնպես էլ Հայաստանում արաբական տիրապետության դեմ բռնկված ապստամբական շարժումները հետևանք էին սոցիալական դաժան շահագործման և կրոնական ու ազգային ճնշման։ Այդ շարժումները սերտորեն կապված էին Արմենիայի և Արաբական խալիֆայության մյուս վայրերի ճնշված ժողովուրդների պայքարի հետ։

2. 702—704 թվականներին Հայաստանում բռնկված ելույթները, որպես Արաբական խալիֆայության դեմ ուղղված զինված ապստամբության առաջին փորձեր, թեև պարտություն կրեցին, սակայն գրանք խոշոր նշանակություն ունեցան հայ ժողովրդի մարտական ոգին բարձրացնելու և պայքարի ձգտումն ամրապնդելու տեսակետից, որը նպաստավոր պայմաններում կարող էր նոր և էլ ավելի ուժեղ բռնկումներ ունենալ։

3. 740-ական թվականներին Արաբական խալիֆայության ներսում սկսված գահակալական կռիվները Արմենիայի ժողովուրդների համար ստեղծում են պայքարի նոր հնարավորություններ։ 744 թվականին Մամիկոնյանների նախաձեռնությամբ Հայաստանում կազմակերպված երկրորդ ապստամբությունն իր լայն արձագանքներն ունեցավ նաև Արևմտյան Հայաստանում, Աղվանքում ու Ատրպատականում և որոշ ընդհատումներով տևեց տասը տարի։



4. 774—776 թվականներից սկսած հայկական ապստամբական շարժումների մեջ կատարվում է լուրջ և որակական բեկում։ Եթե նախկինում արաբական լծի դեմ Հայաստանում տեղի ունեցող ապստամբությունները կազմակերպվում և ընթացքի մեջ էին դրվում հիմնականում ազնվականների ու նրանց պինված ուժերի միջոցով, իսկ գյուղացիական և աշխատավորական լայն խավերի ակտիվությունը համարյա չէր նկատվում, ապա 774—776 թվականների ապստամբության հիմնական շարժիչ ուժերն են դառնում նաև ժողովրդական լայն զանգվածները, որոնց աշխարհազորային գնդերի գործուն մասնակցությունը ազատագրական կռիվներին ապստամբությանը տալիս են մասսայական և համաժողովրդական բնույթ։

5. 774—776 թվականներին ապստամբների ձեռք բերած սկզբնական հաղթանակները և արաբների ահաբեկումը եթե մի կողմից ոգևորում, ապա մյուս կողմից էլ ապստամբների շարքերում ստեղծում էին սեփական ուժերի գերագնահատման և հակառակորդին թերագնահատելու տրամադրություններ, որոնք զումարվելով ղեկավարության մեջ պայքարի տակտիկական հարցերի շուրջ եղած տարաձայնություններին և ապստամբության ուժերը միավորելու փոխարեն բաժան-բաժան անելու սխալ գծին, պայքարի հետագա հաջողությունները դնում էին մեծ վտանգի տակ և ուրվագծում նրա մոտալուտ պարտությունը, որը տեղի ունեցավ 776 թվականի գարնանը։

6. VIII դարում արաբական տիրապետության դեմ Հայաստանում բռնկված ապստամբությունների պարտության գլխավոր պատճառներից մեկն էլ այն էր, որ այդ ապստամբությունները տեղի էին ունենում Արաբական խալիֆայության ռազմա-տնտեսական հզորացման ժամանակաշրջանում, երբ արաբները դեռևս հսկայական միջոցներ ունեին նման գործողությունները վնասազերծելու համար։ Սակայն թեև այդ ապստամբությունները վերջանում էին անհաջողությամբ, բայց նրանց նշանակությունը կայանում էր նրանում, որ դրանք, նախ, բարձրացնում էին ժողովրդի ազգային ինքնագիտակցությունն ու հայրենասիրության զգացումը և, ամեն անգամ մի-մի քար պակասեցնելով Արաբական խալիֆայության տիրապետության հիմքից, մոտեցնում էին նրա վերջնական կործանման ժամը։

7. VIII դարի վերջերին և IX դարի սկզբներին Արաբական խալիֆայության ամբողջ տերիտորիայում տեղի ունեցող սոցիալական և ազատագրական հուժկու շարժումները վերջնականապես թուլաց-

բին խալիֆայության միասնությունը և ճանապարհ հարթեցին հպատակ երկրների տեղական ֆեոդալական իշխանությունների ռազմա-քաղաքական ու տնտեսական դերի ակտիվացման համար։

Արաբական խալիֆայությունն իր թուլացած դիրքերը Հայաստանում չկարողացավ ամրապնդել նաև 849—855 թվականների խոշոր արշավանքների ժամանակ։ Աբուսեթի, Յուսուֆի և, մանավանդ, Բուղայի հրոսակախմբերի դեմ մեծագույն զոհողությունների գնով Հայաստանում և Արմենիայում ծավալված համաժողովրդական, մասսայական պայքարը ոչ միայն վերջնականապես ձախողեց արաբների պլանները, այլև հարկադրեց նրանց հաշվի առնելու տեղական ֆեոդալական իշխանությունների ուժը և կամաց-կամաց դիրքերը զիջելու նրանց, իշխանություններ, որոնք IX դարի երկրորդ կեսերից սկսած, համախմբելով իրենց ամբողջ ուժերը և անցնելով ժողովրդի գլուխը, գործադրում էին բոլոր հնարավոր միջոցները լիակատար անկախության հասնելու համար։

8. 849—855 թվականների արշավանքները դեպի Հայաստան Արաբական խալիֆայության ռազմական ուժերի վերջին ցուցադրումն էր, նրա գոյության վերջին ջղաձգությունը։ Դրանից հետո արաբական իշխանությունների հիմքերն այստեղ արագությամբ սկսեցին թուլանալ և իրենց տեղը զիջել մեծագույն փորձությունների բովից անցած հայկական նախարարություններին, որոնցից Բագրատունիներին էր վիճակվելու, երկարատև ընդհատումից հետո, ստեղծել հայկական անկախ թագավորություն։

С. Т. МЕЛИК-БАХШЯН

# АРМЕНИЯ В VII—IX ВЕКАХ

*(Резюме)*

История политических, социально-экономических отношений, социального и освободительного движения Армении периода арабского владычества богата и разнообразна. Однако, до настоящего времени она не была предметом специального исследования.

Целью настоящей работы, написанной на основе изучения первоисточников и научной литературы, явилось изложение истории Армении исследуемого периода, разработка основных социально-экономических и политических проблем, имеющих огромное значение для освещения истории прошлого Армении в целом.

Работа состоит из введения и четырех глав.

**В введении** рассмотрены вопросы источников и литературы, а также коротко изложена история вопроса и её освещение в исторической литературе.

**Первая глава**—«Установление арабского владычества в Армении»—освещает вопросы истории Армении со времени первых походов арабов до 700 года.

Исследовав историю установления арабского владычества в Армении, автор приходит к следующим выводам.

Ослабленная в экономическом и военном отношениях Армения, потеряв политическую независимость, подпала под владычество Сасанидского Ирана и Византии. Завоевав Армению, иранцы и византийцы продолжали грабить страну, разрушать её города и села, внося разлад в военные силы,

расшатывая основы феодального господства армянских нахараров.

Вследствие этого накануне арабских нашествий Армения была настолько ослаблена, что не смогла противостоять превосходящим силам врагов.

Нанося сокрушительные удары по Сасанидскому Ирану и Византии, арабские полчища в течение 640 и 643—646 годов проникли в Армению, подвергли ограблению и разрушению ряд городов и областей. В условиях усиления Арабского халифата в Армении победило течение, возглавляемое Теодоросом Рштуни, который, видя ослабление Византии и растущее могущество халифата, переходит на сторону арабов и пытается найти с ними общий язык для спасения страны от разрушений. Этой же политической ориентации придерживались грузинские и албанские феодалы.

Результатом победы политики Теодороса Рштуни явился заключенный в 652 году армяно-арабский договор. Поэтому армяне, приняв покровительство халифата, добились сохранения внутренней самостоятельности и собственных вооруженных сил.

Но в 654—656 годах арабы, нарушив договор 652 года, вторглись в Армению.

Походы арабов в Армению в 40—50-е годы VII века носили в основном разведывательный характер, но сопровождались грабежом ряда областей и разрушением городов.

Практические шаги по окончательному завоеванию Армении были предприняты арабами лишь в конце VII века. Они окончательно укрепились в Армении в 699 году.

В начале VIII века халифат образовал новую административную единицу из завоеванных армянских и закавказских областей, Иберии (Картлии) и Албании (Арран), которая была названа Арменией. Административное управление арабов не только нанесло вред территориально-владельческим правам армянских нахараров, но значительно расшатало основы их экономики. Подобными административными реорганизациями арабы подготовили массовое переселение арабских племен на плодородные земли Армении и Закавказья.

**Вторая глава** посвящена вопросам социально-экономических отношений.



Феодальные общественные отношения, которые в IV—V веках стали преобладающими, в период арабского владычества в основном не подверглись существенным изменениям. Если до арабов в феодальной эксплуатации преобладала натуральная рента, то с установлением арабского владычества в Армении господствующей становится денежная рента. Вследствие этого торгово-ростовщический капитал начал прокладывать себе дорогу, Экономическое положение трудящихся масс еще более ухудшалось.

После завоевания Армении, арабы внесли значительные изменения в земельные отношения.

